

ISSN 2738-2915

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հումանիտար և հասարակական գիտություններ

1

ՎԱՆԱԶՈՐ – 2023

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հումանիտար և հասարակական գիտություններ

1

ՎԱՆԱԶՈՐ – 2023

**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА**

**ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА**

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ

**ВАНАДЗОРСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Гуманитарные и социальные науки

1

ВАНАДЗОР – 2023

**RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT**

**VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TUMANYAN**

**SCIENTIFIC PROCEEDINGS OF
VANADZOR STATE UNIVERSITY**

Humanities and Social Sciences

1

VANADZOR – 2023

Տպագրվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Շահվերդյան Թ. Ս., բ. գ. դ. (խմբագրական խորհրդի նախագահ, գլխավոր
խմբագիր)

Փիլոյան Վ. Ա., բ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ)

Թաղևոսյան Թ. Վ., բ. գ. թ. (պատասխանատու քարտուղար)

Խմբագրական խորհրդի անդամներ

Հովհաննիսյան Լ. Շ., բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ

Մկրտչյան Գ. Մ., տնտ. գ. դ.

Ադաբեկյան Ռ. Լ., տնտ. գ. դ.

Սավլենկո Ի. Ա., սոց. գ. դ.

Նիկոնովա Ն. Ե., բ. գ. դ.

Ազարյան Ռ. Ն., մ. գ. դ.

Կարապետյան Ի. Կ., մ. գ. դ.

Մկրտումյան Մ. Պ., հ. գ. դ.

Զաքարյան Ս. Ա., փ. գ. դ.

Քեռյան Գ. Մ., քաղ. գ. դ.

Վիրաբյան Ա. Ս., պ. գ. դ.

Գևորգյան Պ. Հ., մ. գ. դ.

Սովսիսյան Ֆ. Վ., պ. գ. դ.

Առուստամյան Կ. Ս., բ. գ. թ.

Բարսեղյան Ա. Ա., մ. գ. թ.

Ղազարյան Զ. Ս., իրավ. գ. թ.

Սալումյան Գ. Մ., բ. գ. թ.

Նազարյան Վ. Ռ., մ. գ. թ.

Պապոյան Հ. Մ., տնտ. գ. թ.

Զաղինյան Ն. Ա., բ. գ. թ.

Վարդանյան Լ. Յու., բ. գ. թ.

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

/ Հումանիտար և հասարակական գիտություններ, 1 // ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան/
Խմբ. խորհուրդ՝ Թ. Շահվերդյան և այլք. – Վանաձոր: 2023. – 572 էջ:

Ժողովածուն ամփոփում է հումանիտար և հասարակական գիտություն-
ների տարաբնույթ հարցերին վերաբերող գիտական և գիտամեթոդական հոդ-
վածներ, որոնք խմբագրական խորհրդի անդամները գրախոսել, խմբագրել և
երաշխավորել են տպագրության:

ISSN 2738-2915

© Հեղինակային խումբ, 2023

© Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, 2023

Печатается по решению Ученого совета
Ванадзорского государственного университета имени О. Туманяна

Редакционный совет

- Т. С. Шахвердян**, д. ф. н. (председатель редакционного совета, главный редактор)
В. А. Пилоян, к. ф. н. (заместитель председателя редакционного совета)
Т. В. Тадевосян, к. ф. н. (ответственный секретарь)

Члены редакционного совета

- Л. Ш. Оганисян**, д. ф. н., член-корр. НАН РА
Г. М. Мкртчян, д. экон. н.
Р. Л. Агабекян, д. экон. н.
И. А. Савченко, д. соц. н.
Н. Е. Никонова, д. ф. н.
Р. Н. Азарян, д. пед. н.
И. К. Карапетян, д. пед. н.
М. П. Мкртумян, д. псих. н.
С. А. Закарян, д. филос. н.
Г. М. Керян, д. пол. н.
А. С. Вирабян, д. и. н.
П. О. Геворкян, д. пед. н.
Ф. В. Мовсисян, д. и. н.
К. С. Арустамян, к. ф. н.
А. А. Барсегиан, к. пед. н.
К. С. Казарян, к. ю. н.
Г. М. Малумян, к. ф. н.
В. Р. Назарян, к. пед. н.
Г. М. Папоян, к. экон. н.
Н. А. Джагинян, к. ф. н.
Л. Ю. Варданян, к. ф. н.

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ ВАНАДЗОРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
УНИВЕРСИТЕТА / Гуманитарные и социальные науки, 1 // Министерство
образования, науки, культуры и спорта РА, Ванадзорский государственный
университет/. Ред. совет – Т. Шахвердян и др. – Ванадзор, 2023.– 572 с.

В сборнике представлены научные и научно-методические статьи, относящиеся
к различным вопросам гуманитарных и социальных наук, которые после
рецензирования и редактирования были рекомендованы к печати по решению
редакционного совета.

ISSN 2738-2915

© Авторская группа, 2023

© Ванадзорский государственный университет имени О. Туманяна, 2023

Printed by the Resolution of the Academic Council of
Vanadzor State University after H. Tumanyan

Editorial Board

T. S. Shahverdyan, Doctor of Philological Sciences (Chairman of the Editorial Board,
Chief Editor)

V. A. Piloyan, Candidate of Philological Sciences (Deputy Chairman of the Editorial
Board)

T. V. Tadevosyan, Candidate of Philological Sciences (Secretary-in-Charge)

Editorial Board Members

L. Sh. Hovhannisyan, Doctor of Philological Sciences, Member of RA NAS

G. M. Mkrtchyan, Doctor of Economic Sciences

R. L. Agabekyan, Doctor of Economic Sciences

I. A. Savchenko, Doctor of Social Sciences

N. E. Nikonova, Doctor of Philological Sciences

R. N. Azaryan, Doctor of Pedagogical Sciences

I. K. Karapetyan, Doctor of Pedagogical Sciences

M. P. Mktrumyan, Doctor of Psychological Sciences

S. A. Zakaryan, Doctor of Philosophical Sciences

G. M. Keryan, Doctor of Political Sciences

A. S. Virabyan, Doctor of Historical Sciences

P. H. Gevorgyan, Doctor of Pedagogical Sciences

F. V. Movsisyan, Doctor of Historical Sciences

K. S. Arustamyan, Candidate of Philological Sciences

A. A. Barseghyan, Candidate of Pedagogical Sciences

Ch. S. Ghazaryan, Candidate of Juridical Sciences

G. M. Malumyan, Candidate of Philological Sciences

V. R. Nazaryan, Candidate of Pedagogical Sciences

H. M. Papoyan, Candidate of Economic Sciences

N. A. Jaghinyan, Candidate of Philological Sciences

L. Yu. Vardanyan, Candidate of Philological Sciences

SCIENTIFIC PROCEEDINGS OF VANADZOR STATE UNIVERSITY / Humanities
and Social Sciences, 1 / RA Ministry of Education, Science, Culture and Sport,
Vanadzor State University/. Editorial Board: T. Shahverdyan, etc. – Vanadzor.
2023. – 572 p.

The collection summarizes various issues on Humanities and Social Sciences, as
well as the scientific, scientific and methodological articles, which have been
reviewed, edited and recommended for publication by the members of the Editorial
Board.

ISSN 2738-2915

©Authors' group, 2023

©Vanadzor State University after H. Tumanyan, 2023

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫКОЗНАНИЕ

LINGUISTICS

**Լեզվառճային շերտավորումները Սրբուհի Տյուսարի
«Մայտա» և «Արաքսիա կամ Վարժուհի» վեպերում¹**

*Նաիրա Համբարձումյան
Միրանուշ Փարսադանյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-8>

Հանգուցային բառեր. Սրբուհի Տյուսար, Միայիլ, կանացի դիսկուրս, տրոպ, ինտերտեքստ, էլիպսիս, օքսիմորոն

Նախաբան

Ուշագրավ են սոցիալական գործոններն ու գործընթացները ուսումնասիրող բոլոր այն գիտությունները, որոնք դիտարկում են կին-տղամարդ փոխհարաբերությունները և սեռով պայմանավորված վարքագծերը: Այս առումով, հետազոտողների տեսադաշտում են հասարակության մեջ կանանց և տղամարդկանց անձնական որակների շուրջ հասարակության տարբեր անդամների ցուցաբերած կարծրատիպային պատկերացումները: Նմանօրինակ հարցերի ուսումնասիրությունը հումանիտար գիտություններում իրականացվում է հաշվի առնելով ոչ թե անձի կենսաբանական, այլ սոցիալական կյանքի և մշակույթի հետ փոխառնչությունների չափանիշները: Այս հանգամանքը գիտության մեջ ձևավորում է *կին-տղամարդ փոխհարաբերությունների տիրույթը*, որն իր արտահայտությունն է գտնում հումանիտար որոշ գիտություններում՝ լեզվաբանություն, գրականագիտություն, փիլիսոփայություն, մարդաբանություն, մշակութաբանություն, սոցիոլոգիա, հերմենևտիկա ևն: Ընդհանրապես, հասարակական գիտություններում գործածվելով՝ սեռը մեծապես արտացոլում է ոչ միայն անձի *սեռային*, այլև *սոցիալ-մշակութային* հատկանիշները: Սեռը սոցիալական (համակարգ) է, որը ամփոփում է *վարքագծի և սոցիալական ռազմավարությունների առանձնահատկությունները*: Հասարակության մեջ այն մարդու *սոցիալականացմանը* համապատասխանող արդյունք է, քանի որ ընկալվում է որպես *պայմանական սուբյեկտ*, որը հատկանշում է իր հիմնական տարբերությունը *կենսաբանական կարգ* ընկալվող սեռից (գենդերից)²: Հետևաբար, կին-տղամարդ փոխհարաբե-

¹ Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

² Այս համատեքստում *գենդեր* հասկացությունը ներառում է փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ոչ միանշանակ կարգեր, որոնց միջոցով իրացվում է սոցիալական փոխհարաբերությունների հիմնարար բաղադրիչը:

րությունների սոցիալական բնույթը հասարակության զարգացման գործոններից մեկն է: Կարևոր է ընդգծել, որ հասարակության աշխարհ-պատկերը ներկայացնում է սեռային վարքագիծը, չափանիշներն ու կարծրատիպերը, ավանդույթները, օրենքը և բարոյականությունը: Երկու սեռերի տարբերակումը լեզվի գործնականության տիրույթում տարաբնու է, քանի որ ուսումնասիրվում են ոչ միայն ընդհանուր լեզվաբանական, այլև սոցիալ-լեզվաբանական, հոգելեզվաբանական, նյարդալեզվաբանական, լեզվամշակութաբանական հիմնախնդիրները: Մեռի կամ սեռերի երկխոսության և լեզվական դրսևորումների տեսանկյուններից Սրբուհի Տյուսաբի «Մայտա» և «Արաքսիա կամ վարժուհի» վեպերը պահանջում են լուրջ ուսումնասիրություն: Տյուսաբի արձակում լեզվաոճային շերտավորումները երկու սեռերի տարբերակումների գիտակցումն է գրական տեքստում՝ որոշակի գրավոր միջոցներով: Ընդհանրապես, մարդու խոսքային վարքագծի տարբերությունները որոշվում են սեռային գործոնով և դրսևորվում լեզվում:

Լեզվաոճային շերտավորումները որպես գրի տեխնիկա

Գրական տեքստը համարժեք է կյանքի որոշակի իրավիճակների նույնականացմանը և դրանց իրականացմանը (խոսքի իրագործմանը), քանի որ յուրաքանչյուր գրական տեքստի հիմքում ոչ միայն իրականության մասին դատողությունն է, այլև հաղորդակցական որոշակի նպատակադրումը, որը որոշվում է փոխհաղորդակցության միջոցով և այն խնդիրներով, որոնք հեղինակը դնում է իր առջև: Հաղորդակցական որոշակի մտադրության շրջանակներում առաջադրված թեմայի գեղագիտական խնդիրները լուծելու նպատակին Տյուսաբը ծառայեցնում է ոչ միայն հաղորդակցության առարկան, այլև լեզվի միջոցով իրականացվող տեխնիկայի որոշ գործիքներ: Գեղարվեստական երկի էությունը գեղագիտական է իր բնույթով, ուստի և՛ արտահայտվում է հեղինակի գնահատականի միջոցով, ընդհանրապես:

Աշխարհի ներկայացումը և մարդու ներկայությունը գեղարվեստի տիրույթում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ, իրականացվում է գեղագիտական հղումների միջոցով: Այս առումով, գրականությունը մշակութային որոշակի տիրույթ է, որում Սրբուհի Տյուսաբը հնարավորություն է ստանում՝ բացահայտելու կնոջ ներաշխարհը՝ դրանով արտահայտելով սեփական վերաբերմունքը կյանքին:

Սրբուհի Տյուսաբի «Մայտա» [9] և «Արաքսիա կամ Վարժուհի» [10] արձակ երկերի գեղագիտությունը, նախ և առաջ, աշխարհի հին և նոր երկսեռ պատկերի բովանդակությունն է, որում էական նշանակություն և դերակատարություն ունի կանանց և տղամարդկանց կերպարների միաբնեռությունը, որը ընկած է երկու սեռերի միջև սիրային փոխհարաբերությունների, ընտանեկան կյանքի, աշխատանքի, զբաղմունքների և այլ հանգամանքների ներքին տիրույթներում: Այս համատեքստում կարևոր են կին-տղամարդ հիմնա-

խնդիրների գեղարվեստական պատկերավորման երկու կողմերը՝ ա. կին հեղինակների կողմից *կնոջ ներաշխարհի սեռային առաջնայնության ապահովումը*, *կնոջ հոգեբանության* պատկերումը, ընդգծումը և դրա իրացումը *գլխավոր կերպարի զգայական ռոբոտի գեղագիտության* և *վարքագծի առանձնահատկությունների* գերակշռության միջոցով, բ. տղամարդ կերպարների պատկերումը, նրանց *հոգեկան աշխարհը* և *վարքագիծը*՝ կնոջ ընկալման տեսանկյունից:

Կին-տղամարդ ռազմավարությունների վերլուծության համար արդիական է կանանց արձակի՝ վեպերի, պատմվածքների, էսսեների լեզուն ուսումնասիրելը, որոնցում, լեզվական գործոններով պայմանավորված, տարբեր մակարդակներում գոյություն ունեն հաղորդակցական տարբերություններ: Արևմտահայ լեզվական մշակույթում կարևոր են դրանց դրսևորման առանձնահատկությունները, սեռից կախված լեզվական միավորների քերականական, բառային և ռճական տարբերակների նպատակադրված ընտրության ուսումնասիրությունները, որոնցում սեռը հասկացվում է որպես մշակույթի և սոցիալական հարաբերությունների արդյունք, որը իրականացվում է լեզվի միջոցով: Սրբուհի Տյուսաբի արձակի լեզվական հատկանիշների վերլուծությունից պարզում ենք, որ սեռով պայմանավորված ֆեմինիզմի դրսևորումները լեզվում անուղղակիորեն արդիացնում են դրանց գործնականությունը և իմաստը, թեպետ՝ միայն կանացի տրամաբանությունը բացահայտորեն ընդգծող կառույցներում հեղինակները կիրառել են տարբեր գործիքներ՝ *համեմատություն, փոխաբերություն, մակդիր, մետաֆոր, առօրյա-խոսակցական բառապաշար, ինտերտեքստ, մետատեքստ* ևն:

Շարահյուսական մակարդակում Տյուսաբի վեպերի լեզվաքերականական դասավորության բարդ եղանակների ընտրությունը պայմանավորված է կերպարների ներքին մտավոր հնարավորությունների, նրբությունների մանրամասն փոխանցման ցանկությամբ, մտքերի իրական տեղաշարժերով, տարաբևեռությամբ և բարդությամբ, ինչը **մտքի լեզվից** անցում է **բառերի լեզվին**: Սրբուհի Տյուսաբի վեպերը առանձնանում են անմիջականությամբ, զգայականությամբ և միամիտ բանականությամբ և խարդավանքներով: Ոչ միայն կին-կին, այլև կին-տղամարդ երկխոսություններում ակտիվորեն գործածվում են *հնարքներ*, որոնք արտահայտում են՝

ա. հաղորդվող նյութի (տեքստի) տրամաբանական իրական գնահատականը, ճշմարտացիությունը և անվերապահությունը՝ **անկասկած, իհարկե, ակնհայտորեն** ևն բառերի միջոցով,

բ. հաղորդվող նյութի (տեքստի) հավանականությունը, հնարավոր գոյությունը, ենթադրությունը կամ կասկածը դրա հավաստիության առիթով՝

գուցե, հավանաբար, հնարավոր է, ըստ երևույթին, ակնհայտորեն, կարծես թե, թվում է, իմ կարծիքով նև:

Հմմտ՝ «**Գուցե**, ըսաւ արտամտեալ կինը, ձեզ նման անձանց համար վարձկանի վիճակը հրապոյր մ'ունենայ, իսկ իմ մասիս կը խոստովանիմ, որ մեծութեանց և ճիշտութեանց մէջ ապրելու վարժ անձինք պարզապէս կարեկցութիւն կրնան զգալ, և պատառ մի հաց հայթայթել անոնց՝ որպէս զի անոթութենէ չի մեռնին» [10, 60], «Ըսէ՛, գիտե՛ս ինչ կամիս, **կարծես թե** գիտես, բայց որքա՛ն կը սխալիս, կը դիմես միշտ դէպի անկարելին, երբ նպատակիդ հասնիս աչքերդ կը դարձնես անտարբերութեամբ, և նորանոր իղձերով կը համակուիս, որք արժէք մ'ունին քեզ համար ցորչափ անգործադրելի են և հեռաւորութեան մէջ կը տեսնես զանոնք, զի ի մօտուստ իրենց հսկայաձէւ չափերը կը կորսնցնեն» [9, 23-24]:

Բայերի, մակբայների, կապերի և շաղկապների [1] տարածվածությունը կանանց խոսքում ընդհանրապես բացատրելի է նրանց խոսքի անվստահությունամբ, անորոշությամբ և անվճռակաճությամբ: Տյուսաբի վեպերում հաճախ գործածվում են նաև հեղինակի վերաբերմունքը արտահայտող բառեր և արտահայտություններ, հղումներ սեփական կամ որևէ այլ կարծիքի: Դրանք արտահայտություններ են, որոնց միջոցով Տյուսաբը գոյություն ունեցող որոշակի փաստերի հանդեպ արտահայտում է իր հուզականությունը կամ վերաբերմունքը: Դրանց միջոցով են բացահայտվում «Մայտա» և «Արաքսիա կամ Վարժուհի» վեպերի ներքին իմաստային փոխհարաբերությունները, որոնք ընդգծվում են, մասնավորապես, ներկայացման կարգը, ձևը և պատճառը, համադասությունը մատնանշող կապերով, շաղկապներով և մակբայներով՝ **ուստի, վերջապես, ընդհակառակը, սակայն, և, բայց, որ, այսպես, հետևաբար, եթե, մինչև, մինչև որ, որովհետև** նև:

Հմմտ՝ «**Ուստի**, օրուան մնացորդ մասն անցաւ ծառոց ներքեւ հանգչելով, աստ և անդ շրջելով, խոսելով, երգելով, **մինչև որ** հասաւ վերջապէս ժամն վերադարձի պատրաստութիւններն ընելու համար» [10, 65], «**Բայց**, բարեկամուհի՛ դ իմ, փառք քու խրատուցոյ, դատաքննութիւնը պիտի արհամարհեմ, բարոյական ոյժս պատուասիրութեանս **և** կենացս մաքրութեան մէջ պիտի գտնեմ» [9, 32]:

Տյուսաբի արձակի լեզվին բնորոշ են նաև **դարձվածքների և ստորոգյալների** կիրառությունները: Նրա երկերի լեզվի և ոճի գործառականությունը նշյալ վեպերում արտահայտվում է բառապաշարային նորամուծությունների գերակշռությամբ, որոնց համատեքստում, որպես ամենաբարդ և ամենագործառական մաս, առանձնացել ենք *բայը*, որը ունի հսկայական ներուժ, քանի որ հնարավորություն է ընձեռել հեղինակին՝ նկարագրելու կյանքը իր *գարգացման և ընթացքի* մեջ՝ «Իւր արիւնը **կ'եռար**, գլուխը **կ'այրէր**, արժանապատվութիւնը բողոք կը բառնար, կ'ուզէր նոյն պահուն թողուլ զամեն ինչ,

հեռանալ, վերադառնալ ընտանեացը գոգը» [10, 65], «**Դամոկղէսի սուրն** անընդհատ գլխուն վրայ կը շողայ», «Երբ սիրտը կը գործէ, երբ միտքը կ'զբաղի, մին կը ծնանի գգացումն, եւ միւսն իմաստը» [9, 40]:

Բառապաշարի առավել գործուն, կենսունակ և կենսական շերտը «Ժամանակակից հայոց լեզվի» ակադեմիական հրատարակության մեջ, առանց հավելյալ բնութագրումների, անվանվում է **բառային հիմնական ֆոնդ** [4, 220-221]: Ըստ այդմ՝ բառային հիմնական ֆոնդը բառային կազմի կենսականորեն անհրաժեշտ շերտն է, մեր լեզվի բառային կազմի հիմքը, փոփոխության ենթարկվում է դանդաղ [4, 220-221]: Այս բնորոշմամբ նկատի են առնվում նախ՝ լեզվի պատմական զարգացման բոլոր շրջափուլերում գործածվող ընդհանուր հայերեն բառերը, ապա՝ տվյալ շրջափուլում որոշակի փոփոխություններ կրած գործածական բառաշերտը: Այսպես, Սրբուհի Տյուսաբի վեպերում բայահենք բառապաշարի միջոցով հիմնովին արտահայտվում են կնոջ հուզական և հոգեբանական վիճակները, գերակշռում են պարզ և բարդ ածականները, դերանունները, մակբայները, որոնք արտացոլում են կերպարների տրամադրությունը, նրանց հուզական և հոգեբանական վիճակները և ներքին ապրումները: Հմմտ.՝ «Բայց յանկարծ անոնց **թշուառ** վիճակն աչացն առջեւ ներկայանալով՝ կը տեսներ անոնց զրկումներն, անոնց **յուսահաստեցուցիչ** վիճակը, կը յիշէր մօրն հակառակութիւնն աշխատելու սկզբան դէմ, կը մտածէր, թէ ոյժ պիտի տար այդ հակառակութեան, կը խորհէր ստանձնած **փրկարար** պաշտոնին վրայ, ու ձեռնթափ կը լինէր, կը մաշէր ընդ մէջ իւր **սրտմտութեան և որդիական** պարտականութեանց» [10, 65-66], «Գուցէ այս վշտահար տողերս տխուր գաղափար մի ներշնչեն քեզ պարտուցս անկատար և անգոր գործադրութեան մասին, ո՛վ ծանրաբեռնի երբեմն որ եթէ չորդէ մերթ ընդ մերթ՝ կրնայ պայթիլ աստուր և վճռողական թմբիրով» [9, 43]: Ուշագրավ է Ֆ. Խլղաթյանի անդրադարձը հայերենի բառապաշարի գործածական բառաշերտին, որը նա համարում է **բառային կազմ**, առանձնացնում է գործառական ակտիվություն ունեցող բառաշերտը և նույնպես անվանում է **բառային հիմնական ֆոնդ**, որում ներգրավված բառապաշարը, ոլորտային սահմանափակություններ չունենալու պատճառով, համարում է **համազոր-ծածական** կամ **չեզոք** [6, 177]:

Կանանց երկխոսություններում փաղաքշական մասնիկների, սիրավիրջերմ արտահայտությունների, դիրքորոշումների և վարքագիծը ներկայացնող արտահայտությունների կիրառությունները ևս բացահայտում են կին հեղինակների վերաբերմունքը այս կամ այն կին կամ տղամարդ կերպարի (ամուսին, ընկեր(ուհի)ներ, հայր, մայր ևն) նկատմամբ՝ խոսքում արտացոլելով համակրանքի, հակակրանքի, անտեսման, հեզմանքի, պարսավանքի և այլ հուզական երանգներ և արտահայտություններ: Տյուսաբի վեպերում դիրքո-

րոշումները, վարքագծային դրսևորումները, դրանց նկատմամբ վերաբերմունքը և կիրառությունները արտահայտված են հստակ, առանց փառաբանական մասնիկների և արտահայտությունների: Չնայած ուղղվածությանը և հակվածությանը ռոմանտիկ բառապաշարին՝ Տյուսաբի երկու վեպերում երկխոսությունները ծավալվում են առավելապես խոհականության, կենսավորձի, իմաստության, բանականության, դատողականության, երբեմն նաև՝ սառը հաշվարկների միջակայքերում: **Հմնտ.**՝ «–Դիտե՛, մա՛յր, ամեն աստիճանի պաշտոններն պատասխանատուութեան մ'ենթարկուած են, նամանաւանդ գործին կարելորութեան աստիճանին կը համապատասխանեն մարդկանց ստանձնած պատասխանատուութիւնը: Թագաւորներէն անգամ համար կը պահանջուի, կ'տեսնես ուրեմն որ ուրեք կայ կատարեալ անկախութիւն դիրքի: // –Ինչ որ օրինաւոր վարձատրութիւն մ'է խղճամիտ աշխատութեան, պարտաւոր է ամեն ժամանակ յայս իմաստուն և լրջամիտ անձանց» [10, 15], «Ահա՛ քեզ ընդարձակ դաշտ գործողութեան, Մայտա՛: Ի տես ընդհանուր թշուառութեանց մոռցի՛ր քուկիներդ, ընդհանուր թշուառութեանց մոռցի՛ր քուկիներդ, ընդհանուր անիրաւութեանց առջեւ մի՛ յիշեր թէ դուն ենթակայ ես անոնց: Խեղդե՛ հեծկլտանքդ ի լուր հեծկլտանաց ընկերութեան: Սիրե՛ արտասուքդ, վե՛ր կանգնէ և քայլե՛» [9, 19]:

Միջտեքստային դրսևորումները որպէս գրի գործիքակազմ: Տրոպ [7]

Արևմտահայ կին հեղինակների երկերում *միջտեքստայնության* կիրառության լեզվական եղանակները տարաբնույթ են՝ *այլուզիաներ, ցիտատներ, մեջբերումներ, աֆորիզմներ, ոճական հնարքներ*: Այս մոտեցումները վեպերում ունեն որոշակի գործառնություններ՝ իրադարձությունների իրավիճակային նկարագրություններից, կերպարների խոսքի փոխաբերական արտահայտչականություններից մինչև պատմական որևէ իրողության, ակնարկի ոճավորումը, տեքստի հղկումը և այլ հանգամանքներ: Ռուլան Բարտը միջտեքստայնությունը դիտարկում է հետևյալ կերպ՝ «Տեքստի հիմքը կազմում է ոչ թե նրաներքին, փակ կառույցը, որ ենթակա է սպառիչ ուսումնասիրության, այլ նրա դուրս գալը դեպի ուրիշ տեքստեր, ուրիշ կողեր, ուրիշ նշաններ: Տեքստը գոյություն ունի սուկ միջտեքստային հարաբերություններում, ինտերտեքստայնության ուժով» [2, 424]: Գրաքննադատ Շենյա Քալանթարյանը այսօրինակ դրսևորումների բնութագրման համար նույնպես գործածում է *միջտեքստայնություն* եզրույթը՝ դրան զուգադրելով *ինտերտեքստ* հասկացությունը [3, 136]: Տյուսաբի և Միպիլի վեպերում ուշագրավ են նաև *միջտեքստայնության* դրսևորումները, որոնք պահանջում են տեքստային *ներդիրքների* ստեղծում, իրենց ներքին տիրույթում ամփոփում են մեջբերվող այլուզիաներ *ինտերտեքստեր* կամ որպես *ինտերտեքստ* ներգրավված առանձին *այլուզիաներ*՝ «Բայց երևակայե՛ թէ ո՛րպիսի սրտմտութեամբ գրաւուեցայ երբ հոս գալով

գտայ զինքը նոյն Ամատունի հայ գորավարին թելերուն մէջ, որ առաւել ծանօթ է իւր յաղթանակական սիրոյ աշխարհին մէջ, քան թէ պատերազմի դաշտին վրայ», «Լատիներէն տառերով գրուած արձանագրութիւն մի մանաւանդ մեր հետաքրքրութիւնը շարժեց, երբ կանանց մեծատարած վերնատան աջակողմեայ մէկ անկիւնը, գետինը մարմարիոնի վրայ, **Վէնետիկի շէնքիկոս Տանտալոյ Տոժին** անունը կարդացինք: Այս **Տոժը Կոստանդնուպոլիս եկած էր 13րդ դարուն**, ըստ ինդրանաց **Ալեքսի Անժի**, որոյ հայրը՝ **Իսահակ Անժ**, գահընկեց եղած էր իւր եղբորմէն, և բռնուելով բանտարկուած էր», «Կ'ըստի թէ Սալամինայի ծովային պատերազմէն վերջը, **Թէմիստոկլէս նուիրած է այդ սիւնը Ապոլոնին**, եւ գետեղած անոր հոշակաւոր տաճարին մէջ որ ի Դեղբիս» [9, 164, 178-179]: Մի տեքստի մէջ այլ տեքստերի առկայության խնդիրը արեւմտյան տեսաբանները քննել և քննում են տարբեր՝ լեզվաբանական, հաղորդակցական, գրական և այլ տեսանկյուններով՝ միմյանց նկատմամբ տեքստերի փոխազդեցությունը սահմանելով որպէս *միջտեքստայնություն* [5, 8-10]:

Գրական երկի թեման նյութականանում է և դառնում է նշանների համակարգ, այսինքն՝ կանացի լեզուն իր խոսքային պատկերը վերստեղծում է ոչ թէ առարկայի տեսանելիությամբ, այլ նրա հետ ունեցած իմաստային և հուզական-գգայական կապերով: Տյուսաբի «Մայտա» և «Արաքսիա կամ վարժուհի» վեպերի նյութականացումը ապահովվում է տեքստային տարբեր տարրերի և գործիքների միջոցով: Դրանք գեղարվեստական պատկերին հաղորդում են գեղագիտական ամբողջականություն և նշանակություն: Այդօրինակ հատկանիշները անհրաժեշտ են իրականում գոյություն ունեցող կերպարների և սյուժեների պատկերավորումների համար: Տյուսաբի արձակի լեզվական հնարավորությունների իրացման գործառույթը ստանձնում են նաև *տրոպները*³ կամ լեզվական պատկերավորման գեղարվեստական այլ միջոցները, որոնք օգնում են գեղարվեստական երկի արտահայտչականության հասանելի դառնալուն: Դրանք չափազանց ինքնուրույն են գեղարվեստական երկերում և, որպէս ամբողջություն, տեղորոշվում են համընդհանուր գեղագիտական գործիքակազմի և առանձին տարրերի գործառույթային հիմնավորումներով, ոճական շերտավորումներով, պատկերների իմաստներով և խորություններով:

Արտահայտչականության լեզվական տիրույթը հատկանշելով՝ *տրոպները* մշտապէս փոխառնչվում են ձևին և բովանդակությանը: Վերլուծության

³ Ժամանակակից լեզվաբանության մէջ *տրոպները* ներառում են փոխաբերությունը, մետոնիմիան, համեմատությունը, մակդիրը, հեզնանքը, հիպերբոլան, սինեկդոխը, օքսիմորոնը, լիտոտան: Բանաստեղծական տրոպները ներառում են նաև անձնավորումը, խորհրդանիշը և այլաբանությունը, ալիտերացիան, պարոնումազիան, պարաֆրազը ևն:

տվյալները թույլ են տալիս հիմնավորել, թե Տյուսաբի վեպերը ներառում են նաև *տրոպյների* համակարգը: Հմմտ.՝ «Արեգակն իբր հսկայ բոցավառ, ջրոց մեջ կ'իջնար հանգչելու համար, և ծովն թուևր իբր ոսկեփայլ մեծատարած անկողին, յարդարուած ի պետս ցերեկուան իշխանին, որ հետզհետև ամփոփուելով իւր փայլուն մեծութեան մեջ, ննջեց յետոյ ջրոցն ի գոգ, ինքզինքը ծածկելով» [10, 73], «Յուսահատութիւնը առջեւ կը կանգնի իբր անզթութեան կմախքը, և անազորոյն խնդութեամբ կը ներկայէ պատկեր մի գոր կը յափշտակէ, երբ հոգեւին կը բաղձամ անոր մօտենալ» [9, 202]:

Նշանակալից արտահայտչական միջոցներ են ներդրված նաև **ածականներով, դերանուններով և մակդիրներով** արտահայտված փոխաբերություններում՝ գերադրական աստիճանով: Կին հեղինակների արձակում *էշատիվն* ամենաարտահայտիչն է: Հմմտ՝ «Լուսինն երեւցաւ երկիւղալից, **մերթ թեթեւ և մերթ թանձր** ամպերէ քողարկուած, իբր թէ ապահովուելու համար թէ զինքը նսեմացնող իշխանն ոչ ևս յերկինս կը տիրապետեր, և թէ ազատ էր ինքն եւս **զերթ** աստեղաց թագուհի, արշաւել երկնից գիշերամաց անջրպետաց մեջ», «-Տէս, ըսաւ Արաքսիա, **որչափ** յոյսերուդ կատարման մերձենաս, **նոյնչափ** անհամբերութիւնդ կը սաստկանայ» [10, 73, 114], «Երբ նշմարեց ակնածական ընթացքս քեզ նկատմամբ, **իբրեւ** առիւծ մոնչեց, զի նախանձը կը մաշեցնէ զինքը», «Յուլիանէս ճակտին վրայ կը կրէր տասն ու վեց գարնանց անմեղութիւնն ու սէրը, նոյն օրէն ի վեր **իբրեւ** դրախտի թռչուն կ'ոստոստէ երջանկութեան ճիւղերուն վրայ...» [9, 68, 71]:

Տյուսաբի «Մայտա» և «Արաքսիա կամ Վարժուհի» վեպերում ուշագրավ են նաև **համեմատությունները, փոխաբերությունները, մակդիրները**, որոնք ընթերցողին են փոխանցում կերպարների կամ հեղինակ-պատմողի զգայական և հուզական ներքին ազդակները՝ հստակ վերաբերմունք ստեղծելով որևէ կերպարի, օբյեկտի կամ երևույթի վերաբերյալ: *Համեմատությունները, փոխաբերությունները և մակդիրները* նույնպես կանանց դիսկուրսի կարևոր գեղարվեստական միջոցներ են: Տյուսաբի և Սիպիլի վեպերում առկա են մեծ թվով համեմատություններ, փոխաբերություններ և մակդիրներ: Հմմտ.՝ «Այսպիսի՛ գիշեր մի պանիր հա՛ց ուտելու համար, աղջիկս,- գոչեց մայրը դառնութեամբ, մինչ աչերն տարօրինակ կերպի կը փայլէին, և **այտերն կարմիր էին իբր զհուր**», «-Դո՛ւ, սիրելի՛ս, պատասխանեց Արաքսիա, **դրական էակ չես, դու բանաստեղծ ես, համայն սէր ես, անձնուիրութիւն և վսեմ երագ:** Հո՛ն թիւերը ու հաշիւը գործ չունին» [10, 13], «Յուլիանէս որ թարմ գեղեցկութեամբն ու բարեբաստութեամբը կը փայլի, բարեկամութիւն հաստատեց հիւժեալ պատանուոյ մի հետ գոր կարծես թէ **մահն իբրեւ հարսն** ընտրած է անձին», «...Մինչ ծաղիկներ կ'որոնէի տեսայ յանկարծ փոս մի որ կը բացուէր ոտիցս ներքեւ, նայեցայ անդ, տեսայ **մահը**, որ **կը ծայտեր ինձ**» [9, 74]:

Օբսիմորն [7]

Մբբուհի Տյուսաբի «Մայտա» և «Արաքսիա կամ Վարժուհի» վեպերում լայնորեն կիրառվող *տրոպյների* շարքում առկա է նաև *օբսիմորնը*: Այն իմաստով հակադիր սահմանումների և հասկացությունների համակցություն է, որի կիրառության արդյունքում ստեղծվում են իմաստային նոր որակներ (երջանիկ դժբախտ սեր, ինքնավստահության մեջ միամիտ, լիակատար մենակություն՝ լիակատար երջանկությամբ, խելացի հիմար, քաղաքավարի զգվանք): Տյուսաբի նշյալ վեպերում *օբսիմորնը դիտարկվում է որպես լեզվական խաղ*: Հմմտ. «Դժբադրությունը ծերացուց զիս արդեն, զի *դժբադրությունը ծանր դպրոց մ'է*, ուր ժամանակ չկայ երագելու, և ուր *իրականութեան դասը կը տրուի* միայն: Հո՛ն *կեանքը կը ներակայանայ մեզ գուրկ իւր բոլոր զարդերէն սուկալի մերկութեամբ կմախքի կերպարանաց ներքէ*: Այդ *կմախքին երկբայութեան տեղի չտար*, զի մեր աչաց առջեւ կը պարզէ իւր ծալքերը, խռոչները ու սեւութիւնները: Հո՛ն աչքը կը վարժի այդ խիստ ու դժնդակ տեսարանին, *հոգին կ'արիանայ*, և իբր քաջ զինուոր կենաց ճակատամարտին մէջ կը յառաջանայ» [10, 28], «*Կեանքս ճերմակ էջ մ'է*, որ ո՛չ մի սիրտ անունը գծեց, այլ մահը միայն իւր սեւ դրոշմը դրաւ անդ: ...Ես ալ երիտասարդ եմ, ես ալ գիտէի սիրել, գիտէի ժպտիլ երկնիս եւ ծաղկանց: Եկայ, տխուր վկայ մի հանդիսացայ կենաց վայելից, և առանց մասնակցելու անոր, *վշտերս ուսիս վրայ բեռնաւորած՝ մահուան մութ կայանը կ'իջնամ տրտմայոյզ*» [9, 79]:

Տյուսաբի սույն երկերում օգտագործվում է նաև *հակաթեզի* [7, 18] տելինիկան: Այն ուժեղացնում է *խոսքի հուզական երանգավորումը*, ընդգծում է դրա օգնությամբ արտահայտված միտքը, և դրա *հակաթեզը* օգտագործվում է որպես լեզվական խաղի տեսակներից մեկը: Հմմտ. «Կամ *միատեղ փրկուէինք* և կամ *միատեղ մեռնինք*: Ահաւոր էր սիրոյ դաշնադրութիւնը *մահուան մէջ*», «Կեանքն ինչպէս աներակը լուսոյ ազդեցութեան կ'ենթարկուին, առաջինն առաւել *կը գեղեցկանայ կենսական հանգամանօքն*, իսկ միւսն առաւել խորհրդաւոր վսեմութեամբ *կը տարածուի իւր մահուան մէջ*» [10, 75, 119], «*Աղքատութիւնն ու տգիտութիւնը մահացու ախտեր են*, որ մարդկութիւնը կը մաշեցնեն, իսկ *աշխատութիւնն ու լոյսը* յառաջ կը մղեն զայն՝ *մեծ հանդիսացնելով*» // «Այդ ցնցոտեաց մէջ *աշխատութիւնը մտցնելու է անօթութեան վերջ տալով, այդ խաւարի մէջ լոյս ծաւալելու է...*» [9, 223]:

Որոշ դեպքերում *օբսիմորնի* իրացման արդյունքում ստեղծվում է նաև նոր իմաստ, որը կարող է լինել փոխաբերական և որը կարևոր է կանանց վեպերի սյուժեների իրացման համար՝ «Օո՛վն, որ *վայրագօրէն կը մոնչէր ու փրփուր կը ժայթքէր*, նոյն վայրկյանին *հեզահամբոյր կը մրմնջէր*, նաւուն կողերը փայփայելով, իբր թէ ի նշան զոջման իւր գործած անօրէնութեանց

համար», «Կը մտածէր, թէ տարակուսանաց պատճառ չկար այլևս, անի որ վտանգի ժամանակ նոյն իսկ երիտասարդն խոստացած էր **ապրիլ եւ մեռնիլ** իրեն հետ» [10, 75, 77-78], «Վրէժ մի կ'ուզեմ լուծել, բայց ոչ մահուամբ, որով տանջանքը կը վերջանայ, այլ կեանքով, որպէս զի մէն մի օր նոր թոյն մատռուակէ որոշած գոհիս հոգւոյն, եւ անոր մատունքն յօշոտէ անհնարին ցաւերով», «Կը սիրէ զիս անշուշտ, բայց իւր տկարութիւնը շատ աւելի մեծ է, քան սէրն, և վստահ եմ, որ նոյն ձեւով պիտի վարուէր որ և է կնոջ հետ» [9, 95]:

Հետագոտված վեպերում **հակաթեզի** գործառույթը կերպարների վարքագծին լրացուցիչ հուզական երանգավորում տալն է: Տյուսաբի արձակի բնորոշ գծերից է նաև **բացականչական** և **հարցական** նախադասությունների օգտագործումը:

Ուսումնասիրվող երկերում **հարցական, հրամայական, բացականչական, պայմանական նախադասությունները, կոչականները, ուրիշի ուղղակի խոսքը** գործածվել են հեղինակային հաղորդագրությունների հուզական ազդեցությունը մեծացնելու նպատակով: Հմմտ.՝ «**Մա՛յր**, բաւ է ինձ, որ դուք առողջ լինիք և լաւագոյն Բարեկենդան չեմ խնդրեր, քսան տարի ապրած եմ տակավին, կեանքն ինձ համար է, ժամանակ ունիմ վայելելու զայն: Բայց **դո՛ւք, հա՛յր ի՛մ**, դո՛ւք պետք ունիք կենաց վայելմանց», «**Հայրի՛կ**, փոյթ չէ եթէ մենք ևս նման մեծափարթամ սեղանն չունինք այսօր, բաւ է, որ ողջ լինինք և ամեն ինչ լաւ է ու գոհացուցիչ: Բայց **վստա՛հ եղի՛ր**, որ հետեւեալ տարին, **եթէ ապրիմ**, լաւագոյն Բարեկենդանի գիշեր մի կ'անցնես» [10, 13, 22], «**Բ՞նչպէս** մետաղը մարգարէական ոգի կրնայ ունենալ ապագայ աղէտք մի յայտնելու համար՝ և կամ **ի՞նչ** զարմանալի ազդեցութիւն՝ դէպքեր պատրաստելու և անոնց ուղղութիւն տալու» // «Քեզ վերադառնալով, **Մայտա՛**, զուցէ առարկես թէ ըրած կորուստդ այլ և այլ կասկածանաց զքեզ ենթարկէ գտնուած վիճակիդ մէջ...» [9, 89]:

Տյուսաբի վեպերը առանձնանում են նաև շարահյուսական արտահայտիչ և գործուն կառույցների կիրառություններով: Որպէս **հոնտորական հարց** լեզվաբանության մեջ այն սահմանվում է կամ որպէս **ոճական կերպավորում**, որի էությունը այն է, թէ հարցը չի տրվում պատասխան ստանալու, այլ միայն՝ ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը այս կամ այն երևույթի վրա հրավիրելու համար, կամ երևութանում է որպէս **գաղտնագրված հաստատում** կամ **ժխտում**, որը բնութագրվում է տարբեր **հուզարտահայտչական** երանգներով և ենթադրում հնարավոր պատասխան:

Հոնտորական հարցերի հուզարտահայտչական հնարավորությունները, հաղորդագրության հիմնական գաղափարը ընդգծելու ունակությունները, որոնք բացահայտվում են վերլուծված երկխոսությունների տարբերակներում՝ դրանց լայն տարածումով: Հոնտորական հարցերը Տյուսաբի արձակում

հաճախ գործածվում են որպես խոսքի ավարտը ընդգծելու առավել արտահայտիչ ձև: Այդ հարցերը ընդգծվում են նաև իրենց պատասխանների միջոցով: Նման դեպքերում դրանք դառնում են գործողության կամ ցանկացած հարցի արագ լուծում՝ «–Ո՛հ, գոչեց Վարդանոյշ, **ի՛նչու գանձեր չունիմ վրադ թափելու համար, Արաքսիա՛**» [10, 15], «**Ի՛նչ է կեանքն առանց քեզ եթէ ոչ ցամքած ովկիան մ՛որ կաթիլ մի ջուր չունի անգամ**» [9, 217]: Տյուսաբի վեպերում սեռային (իգական, թե՛ արական) հարցադրման վերագրումը հնարավոր է իրականացնել նաև շարահյուսական հատկանիշների հիման վրա: Հեղինակի վեպերի լեզվի շարահյուսական քննությամբ ընդգծվում է հանգամանքը, թե կանայք նախընտրում են պատմողի դերը: Պատմողական նախադասությունների միջոցով հստակորեն ընդգծվում են կին կերպարների էությունները՝ մի կողմից ուժը, վճռականությունը, հաստատականությունը, մյուս կողմից՝ թուլությունը, ենթարկվելը, կասկածները, անորոշությունը:

Էլիպսիսը որպես պատկերավորման միջոց

Տյուսաբի արձակում լեզվի միջոցով կերպարների հուզական վիճակը՝ հուզմունք, ուրախություն, զարմանք, հրճվանք, տխրություն, մելամաղձություն են, արտահայտելու հիմնական միջոցներից մեկը **էլիպսիսն** է [8, 43]: Այս դեպքում՝ կառուցվածքային ավարտունությունը դրսևորվում է տեքստի իմաստաբանական և ձևաբանական կառուցվածքային միավորների կորստով, օրինակ՝ **օժանդակ բայի**՝ «Բնութիւնն ուրախ լինի, թէ տխուր, այն կը փայլի անկասկած, նոյնչափ՝ կենաց, որչափ՝ աւերակաց վրայ» [10, 119], «Ուստի, այս գործատունը երկու նպատակի կրնայ ծառայել, մին՝ **աղքատութիւնը սփռիլէ** գործելու սերն ազդելով, և միւսը՝ ծուլութեան պատճառները վերջացնել» [9, 180]:

Էլիպսիսի դրսևորման այսօրինակ գործընթացը կարող է ազդել տեքստի ամբողջական բառապաշարի արժեքային բաղկացուցիչների վրա, ինչպիսիք են՝ **շարժում** արտահայտող բայերը: Հոգեկեզվաբանության տեսանկյունից **էլիպսիսը** [7, 465-466] դիտվում է որպես հույզերի անուղղակի արտահայտություն՝ «Նոյն պահուն Միսակ հագիւ քսան եւ վեց տարեկան էր, թուխ էր, ազդու և համակրական դեմք մը ուներ, **աչերը՝ հրավառ, զծագրութիւնը՝ կանոնաւոր, հասակը՝ բարձր և վայելուչ**» [10, 86], «Սակայն ծածկեցի Կոմսէն մեր Ազգին մեղադրելի անտարբերութիւնն այնպիսի սրբավայրի մի նկատմամբ, ուր **ալեւորը՝ հովանի, հիւանդը՝ բոյժ**, որբը՝ զթութիւն կը գտնայ» [9, 180]:

Էլիպսիսային արտահայտությունների շրջանակը առավել լայն է, քանի որ դրանք ներառում են արտահայտություններ և առանձին բառեր, որոնք ընդգծում են խոսքի տեղաշարժերը: Էլիպսիսը նաև իմաստային և հնչյունական իրացումների միջև ընկած անհամապատասխանությունն է: Հետևաբար, չնայած նախադասության կամ համապատասխան բառապաշարային միա-

վորի փաստացի բացակայությանը, էլիպսիսային կառույցներն ունեն հստակ մեկնաբանություն և հաճախ սահմանված են խստորեն: Այս առումով, քննարկումներ առկա են բացակայող (զեդչվող) միավորի փոխարեն առաջարկվող շարահյուսական կառույցի շուրջ [11, 572]: Մա նույնպես ճանապարհ է բառապաշարի լեզվաոճային շերտավորումների միջոցով հասնելու ուսումնասիրության ընթացքում առաջադրված նպատակներին:

Հեղինակի վեպերում էլիպսիսային նախադասությունները իրացվում են նպատակամիտված արտահայտությունների և ձևակերպումների տեսքով, թեև նախորդող թերի արտահայտություններին մշտապես կցվում են հստակեցնող պարզաբանումներ՝ ռոմանտիկական տպավորությունը ավելացնելու, ընդլայնելու և հստակեցնելու նպատակով, ուստի՝ դրանց արտահայտչականությունը և ազդեցությունը հիմնված են որոշակի մասնիկների տրամաբանական ընտրության և փաստերի իրադարձականության վրա: Մեր դիտարկած օրինակները ցույց են տալիս նաև, որ Տյուսաբի վեպերի լեզվաոճային շերտավորումների միջոցով հնարավոր է քննել նաև *կանացիություն* ֆենոմենը՝ բացահայտելով դրա առանձնահատկությունների տարաբնույթ մակարդակները:

Եզրակացություն

Տյուսաբի երկերում երկու սեռերը ընդգծող տարբերությունները ներառում են նաև գերիշխող այնպիսի հասկացություններ, որոնք բնորոշ են կոնկրետ հեղինակին կամ, ընդհանրապես, կանացի արձակյին: Ուսումնասիրության այս ձևը հիմնված է կանացի արձակյի արտալեզվական չափանիշների վրա:

Մրբուհի Տյուսաբի արձակում գոյություն ունեն գերիշխող թեմատիկ հասկացությունների որոշակի շարքեր՝ *սեք, ընտանիք, երջանկություն, աշխատանք, կանացի ճակատագիր* ևն, որոնք էականորեն տարբերվում են իրենց մշակութաբանական հենքով:

Լեզվամշակութաբանության տեսանկյունից արևմտահայ կանանց արձակի ուսումնասիրությունը և, մասնավորապես, նրանց երկերում ձևավորված ըմբռումների ուսումնասիրությունը, դրանց նույնականացումը, բովանդակությունը, լեզվական, պարալեզվական և արտալեզվական գործոնների սահմանումները, որոնք ազդում են բառապաշարի ընտրության վրա, չափազանց կարևոր և տեղին են, քանի որ հայ կին հեղինակների կողմից ստեղծվող արձակը զարգանում է, հետևաբար և՛ ներկայացնում է *աշխարհ-պատկերի* որոշակի ընկալումները:

Գրականություն

1. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, ԵՊՀ հրատ, 2004, 432 էջ:
2. Барт Р., Избранные работы: Семиотика. Поэтика, Москва, 1994, изд: Прогресс, 678 с.
3. Գրականության տեսության արդի խնդիրներ. միջտեքստայնություն: Ուսումնական ձեռնարկ. Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 330 էջ:
4. Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ, 1979, 487 էջ:
5. Landow George P., Other Convergences: Intertextuality, Multivocality, and De-centeredness, the Johns Hopkins University Press, 1992, pp. 8-10.
6. Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, մաս Ա, Երևան, Չանգակ-97, 2009, 294 էջ:
7. Словарь литературоведческих терминов:/ Ред.-сост.: Л. И. Тимофеев и С. В. Тураев. М.: «Просвещение», 1974, 509 с.
8. Merchant Jason, Ellipsis. Syntax: ed. by Tibor Kiss and Artemis Alexiadou, Berlin: Walter de Gruyter. Jason Merchant University of Chicago, 2012, 43 p.
9. Տյուսար Ս., Արաքսիա կամ վարժուհի, Կ. Պոլիս, 1887, տպ. Նշան Կ Պերպլերեան, 408 էջ:
10. Տյուսար Ս., Մայտա, Կ. Պոլիս, 1883, տպ. Չարդարեան, 249 էջ:
11. Williams Edwin, Robert Fiengo, Robert May, Indices and Identity: Language. 1995, T. 71, vol. 3, 572 p.

Лингвостилистические пласты в романах Србуи Тюсаб «Майта» и «Араксия, или Учительница»

*Наира Амбарцумян
Сирануш Парсаданян*

Резюме

Ключевые слова: *Србуи Тюсаб, «Майта», «Араксия, или Учительница», женский дискурс, тропы, интертекст, эллипс, оксюморон*

В исследовании мы проанализировали языковые и стилистические пласты, их особенности и взаимопроникновения в романах западноармянской писательницы Србуи Тюсаб «Майта» и «Араксия, или Учительница». Цель исследования – выявить лингвостилистические пласты в романах Србуи Тюсаб «Майта» и «Араксия, или Учительница» в качестве *техники женского письма* на основе изучения языковых особенностей женской прозы западноармянских авторов второй половины XIX века. Задача исследования состоит в том, чтобы по-новому интерпретировать литературную технику и инструментарий (сравнения, аллегории, метафоры, оксюморон, эллипсис, морфологические и синтаксические приемы и т.д.) в художественных произведениях западноармянских писательниц второй половины XIX века. В романах западноармянской писательницы второй половины XIX века Србуи Тюсаб ярко подчеркнуты женско-мужские мировосприятия и мирообразы.

Исследование является междисциплинарным. Материал проанализирован в контексте взаимосвязей и взаимоотношений между лингвистикой и литературоведением. Нами были применены сравнительно-сопоставительный, лингвистический и литературно-антропологические методы, которые использовались по принципу зонты: в каждом радиусе мы наблюдали языковые пласты, идентифицирующие женственность, в упомянутых романах Србуи Тюсаб. Подобное исследование проводится впервые и поэтому является беспрецедентным. Оно приобретает важность и актуальность не только с точки зрения междисциплинарности, но и в контексте анализа «женского вопроса» в арменоведении. Для сохранения оригинальности статьи, мы использовали первоисточники романов Србуи Тюсаб, а не репринтные издания.

Linguostylistic Stratifications in the Novels “Mayta” and “Araksia, or the Governess” by Srбуhi Tyusab

Naira Hambardzumyan
Siranush Parsadanyan

Summary

Key words: *Srбуhi Tyusab, “Mayta”, “Araksia, or the Governess”, feminine discourse, trope, intertext, ellipsis, oxymoron*

This article is an attempt to examine the linguistic and stylistic stratifications, their features, and interpenetrations in the novels “Mayta” and “Araksia, or the Governess” by the Western Armenian writer Srбуhi Tyusab. The *aim* of the study is to identify the linguostylistic stratifications in the novels of Srбуhi Tyusab “Mayta” and “Araksia, or the Governess” as a *female writing technique*, based on the study of the linguistic features of the prose of Western Armenian female authors of the second half of the 19th century. The *problem* of the study is to newly interpret the literary techniques and tools (comparisons, allegories, metaphors, oxymoron, ellipsis, morphological and syntactic tricks, etc.) used in the fiction works of Western Armenian women authors of the second half of the 19th century. In the novels of Srбуhi Tyusab, the female-male worldview and world-images are clearly emphasized.

The material was analyzed in the context of the reciprocal connections and relationships between linguistics and literary studies. We used the method of comparative, linguistic, and literary anthropology, which we applied by the principle of umbrella: observing the linguistic stratifications of the mentioned novels of Srбуhi Tyusab as an *identification of femininity*, in one radius. The research is unprecedented as this kind of study has been done for the first time. It acquires its importance and relevance not only in terms of interdisciplinarity, but also in the context of the analysis of «women’s problems» in Armenology. In order to be faithful to the originality of the article, we used the originals of Tyusab’s novels and not the reprints.

Ներկայացվել է 23.01.2023 թ.

Գրախոսվել է 09.03.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

An Overview of Contrastive Analysis of Intonation and Structural-Semantic Characteristics of Disjunctive (Tag Questions) and Alternative Questions in English and Armenian

Nune Marikyan

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-23>

Key words: *communication, interrogative sentences, intonation pattern, question-word, literary speech, colloquial speech, limited choice, comparative analysis*

It is generally assumed that language is a means to cooperate and determine harmoniously, or a tool for intercommunication, presumably, a medium to express thoughts, ideas, concepts, or as unlikely as it may seem – emotions. In order to communicate one should put words together so that they express relevant meanings. This connection creates a sentence which is as complete and independent that it can function as a unit of communication. Nevertheless, it can perform this function owing to definite phonetic properties which are called supra-segmental features. They bear essential information that the words of the utterance do not convey. The grammatical meanings and phonetic structures of sentences are interconnected with each other and cannot exist separately. This undisputed connection between grammatical meanings and different intonations determine different communicative types of sentences. They are the building-blocks of language, allowing us to communicate with each other. In English, not only sentence types, but also the actual meanings of two sentences belonging to the same syntactic and communicative type may be differentiated through the opposition of terminal tones. In this case, sentences have different meanings because one and the same word is pronounced with different terminal tones in them and has, therefore, different meanings, although as a vocabulary item pronounced in the citation form it has only one meaning. Both in English and Armenian the sentence is an essential speech unit, which is as complete and independent that it can function as a unit of communication.

The main communicatively-different types of sentences are those which represent statements, general, special, alternative and disjunctive questions, commands, requests and exclamations. It is important to consider each communicative subtype of utterance from the following four viewpoints which have a direct bearing on its intonation:

- a) the grammatical structure of the utterance;

- b) its connection with the preceding context;
- c) the number of times one and the same sentence is uttered;
- d) the attitudinal colouring of the utterance.

By the attitudinal colouring of an utterance is meant the sum total of its features, which besides and simultaneously with the intellectual (notional, logical, etc.) content of the sentence, tells the listener about the speaker's attitude towards this content and toward the surrounding reality, which includes the life-situation the speaker finds himself in, as well as his attitude toward the person spoken to [9, 129-130].

The interest in interrogative sentences, conditioned by the rapid development of structural grammar and the increase in examination of live speech and communication processes has been revived in recent decades. At the present stage of linguistics the study of grammatical, functional, intonation and communicative features of interrogative sentences is becoming a necessity. It is difficult to conceive our life completely lacking in questions as they make the conformation in our surroundings and conditions smoother and the intelligence-acquisition viable. There are multiple ways by which the implementation of language is accomplished but one of the most distinguished modes is apparently asking questions for the sake of information.

This research article is an attempt to reveal a number of intonation and structural-semantic characteristics of Disjunctive and Alternative questions in English and Armenian.

The present research article falls into two sections. The first section deals with the disjunctive questions in English and Armenian in terms of scope, structural types, functions, and particularly intonation and semantic characteristics. Following the same way, the second section is concerned with the alternative questions in English and Armenian, concentrating on the structural types, semantic and intonation particulars in both languages.

Disjunctive or tag questions are one of the most prominent phenomena in English. They occur in actual speech and word-for-word records of interpersonal discourse. Disjunctive or tag questions are predominantly used in verbal communication, and on account of this the predetermined connotation of a disjunctive question is greatly affected by the modulation of intonation or pitch in the voice. Question tags are a great way to add more depth and context to our conversations in English and Armenian. They help us extract more information from our conversations, build better relationships and make communications smoother.

Disjunctive questions are used with the intention of urging the hearer either to express his agreement to the statement that he has just made or to assure the

speaker that it is true. According to their grammatical structure disjunctive questions consist of two sense-groups:

- a) the first sense-group contains a statement spoken with a falling tone;
- b) the second sense-group contains a short question which requires either a confirmation or a negation: e.g.

It's 'difficult to pro,nounce| isn't it? // You are 'not ,hungry|,are you?


Utterances with this type represent a curious blend of a statement and a question. From the point of view of their grammatical structure they consist of a declarative sentence, followed by a mini-question tag. One might expect that since the final part of the structure is interrogative, the communicative aim of the utterance is also interrogative. In actual speech, however the utterance acquires its final shape and a definite aim only after a definite intonation pattern has been superimposed on it. In disjunctive questions the predominance of the declarative or of the interrogative part is finally settled by intonation [1, 52-55].

Disjunctive questions are very often used in dialogical speech. In English we distinguish the following communicative subtypes of this question: true, suppositional, certainty, stimulating.

True disjunctive questions contain 2 types of grammatical structures:

- 1) the first part coincides with a narrative-affirmative sentence and the second part is a short general question containing negation; e.g. Medicine is a kind of weapon, isn't it?

- 2) as to its grammatical form the first part coincides with a narrative-negative sentence and the second part is an affirmative general question; e.g. There is nobody in the world now but you and me, is there?

Auditory analysis has shown that while uttering true disjunctive questions, the speaker isn't confident in his utterance and wishes to get a precise answer. From the point of view of its meaning the first sense-group is more important than the second one. These questions are uttered with a sequence of rising tones []. The first sense-group is pronounced with a low rise and the second one with a high rise;

e.g. Medicine is a kind of,weapon| 'isn't it?

e.g. There is nobody in the world now but you and me| 'is there?

Suppositional disjunctive questions contain 4 types of grammatical structures:

- 1) the first part is a narrative-affirmative sentence + short general question with negation, e.g. Your name is Jane, isn't it? [13, 284].

- 2) the first part is a negative sentence + affirmative short question tag; e.g. And you won't marry him, Jane, will you? [13, 492].

- 3) both parts are characterized as affirmative; e.g. It's just nasty, is it?

- 4) both parts contain negation; e.g. You don't believe a word of it, don't you?

In suppositional disjunctive questions the speaker is confident in his utterance and supposes or anticipates the character of the answer. As to the auditory analysis, suppositional disjunctive questions are uttered in two sense-groups, where the first sense-group is more important than the second one. The first sense-group is pronounced with a falling tone and the second sense-group with a rising tone; e.g. It's nearly time for , tea| , isn't it?

Certainty disjunctive questions contain two types of grammatical structures:

- 1) the first part is narrative-affirmative in its form and the second one is a short general question with a shade of negation; e.g. That would be a pure adventure, wouldn't it?
- 2) the first part is a narrative-negative statement and the second one is an affirmative short general question; e.g. Your health is not good, is it?

In certainty disjunctive questions the speaker is certain in both the utterance and the answer. Sense-groups are pronounced with falling tones. In this case they are used with the intention of urging the hearer either to express agreement to the statement that has just been made or to assure the speaker that it is true; e.g. You will , come with us| , won't you?

Stimulating disjunctive questions have the following grammatical structures:

- 1) the first part is narrative-affirmative in its form and the second one is a short general question with a shade of negation; e.g. They'll be a bit excited, won't they?
- 2) the first part is a narrative-negative sentence and the second part is a short question tag; e.g. It wouldn't be a good lesson for me, would it?

In uttering stimulating disjunctive questions the speaker expresses his thoughts but is not sure that the listener will agree and stimulates the one to give the expected answer. In most cases the first sense-group bears Low-Rise, while the second one is used with a Low Fall; e.g. It's 'not the 'same as mine| , isn't it?

Among less common types of tag questions, one may be mentioned in which both statements and questions are positive: e.g. Your car is outside, is it? // e.g. You've had an accident, have you? This tag always has a rising nucleus, and the situation is characteristically preceded by *oh* or *so*, indicating the speaker's arrival at a conclusion by inference or by recalling what has already been said. The tone may sometimes be one of sarcastic suspicions: e.g. So that's your little game, is it? [7, 195]. According to Kirkpatrick B., we can add a positive question tag to a positive statement when we want to indicate exceptional interest, surprise, anger and annoyance:

e.g. You *have* lived here for some time, *have* you?

That *is* an apple tree, *is* it? I thought it was a pear tree.

He *has* decided he wants his job back, *has* he? Well, he's not going to get it [6, 190].

As maintained by Floris Roelofsen and Sam van Gool, syntactically, two kinds of disjunctive interrogatives are distinguished. On the one hand, there are those that consist of a single interrogative clause containing a disjunction. On the other hand, there are those that consist of two interrogative clauses, conjoined by disjunction. They refer to the first type as narrow-scope disjunctive interrogatives, and to the latter as wide-scope disjunctive interrogatives.

Some examples are given in (1) and (2) below.

(1) Narrow-scope disjunctive interrogatives:

- a. Does Ann or Bill play the piano?
- b. Does Ann love Bill or Chris?

(2) Wide-scope disjunctive interrogatives:

- a. Does Ann play the piano, or does Bill play the piano?
- b. Does Ann play the piano, or Bill?

It is possible to assume that (2b) has exactly the same underlying syntactic structure as (2a); only some material is left unpronounced [8, 5].

Disjunctive questions can be pronounced in different ways, and their interpretation is partly determined by the choice of intonation pattern. Special emphasis is put on two prosodic features that seem to have significant semantic impact. First, in the case of a narrow-scope disjunctive interrogative it is important whether the disjunction is pronounced 'as a block' or whether each of the disjuncts is given separate emphasis. Second, in case the disjuncts are given separate emphasis, it is important whether there is a rising or a falling pitch contour on the second disjunct. The different intonation patterns are given in (3) and (4), where underlining is used to represent emphasis, and ↑ and ↓ indicate rising and falling pitch.



(3) Intonation patterns for narrow-scope disjunctive interrogatives:

- a. Block intonation: Does Ann-or-Bill↑ play the piano?
- b. Open intonation: Does Ann↑ or Bill↑ play the piano?
- c. Closed intonation: Does Ann↑ or Bill↓ play the piano?

(4) Intonation patterns for wide-scope disjunctive interrogatives:

- a. Open intonation: Does Ann↑ play the piano, or Bill↑?
- b. Closed intonation: Does Ann↑ play the piano, or Bill↓? [8, 7].

Disjunctive questions may be pronounced not only with the sequences of the marked tones

 (Low Fall // Low Rise) and  (Low Fall // Low Fall), but

also with the following sequences of tones:

- a) You could , buy one,| , couldn't you? $\overline{\downarrow} \parallel \overline{\downarrow}$ (Low Rise //Low Rise; a hesitant statement is followed by an interrogative tag; final result – a question)
- b) It wasn't , my fault,| `was it? $\overline{\downarrow} \parallel \overline{\uparrow}$ (Low Rise // High Fall; a hesitant statement is followed by a statement-like tag; final result – a statement)
- c) You mean last ~March,| , don't you? $\overline{\uparrow} \parallel \overline{\downarrow}$ (Fall-Rise // Low Rise; an implicatory statement is followed by an interrogative tag; final result – a question)
- d) It's `not too , big,| `is it? $\overline{\uparrow} - \overline{\downarrow} \parallel \overline{\uparrow}$ (High Fall +Low Rise // High Fall; an emphatic, non-categoric statement is followed by a stamen-like question; final result – an emphatic statement).

Thus the tone used in the declarative part of the disjunctive question expresses the speaker's view of the situation, while the tone used in the question tag anticipates the listener's attitude [1, 53-54].

Disjunctive questions are not well-studied in Armenian. On the whole seven types of disjunctive questions are distinguished with the tags: չէ՞, այնպես չէ՞, ի՞նչ է, ճի՞շտ է, ճիշտ չէ՞, հա՞, հը՞:

When we take into consideration the meaning expressed by these question-tags, we see that questions with the tags չէ՞, այնպես չէ՞, ի՞նչ է, ճի՞շտ է, ճիշտ չէ՞ have the same meaning, namely, the speaker wishes to hear the confirmation of his/her idea expressed in the first sense-group. The question tags այնպես չէ՞, ճի՞շտ է are primarily used in literary speech, while the tags չէ՞, հա՞, հը՞ are characteristic of the informal colloquial speech. While using the question tag չէ՞, the speaker wants to know the listener's attitude toward the phenomenon, action or reality which is mentioned in the first part of the question. Usually the speaker knows that the answer would coincide with his/her opinion; e.g. Ուրեմն այս ստորագրողն սուտ է, չէ՞: The question tag այնպես չէ՞ expresses practically the same meaning as the previous one but in this case the speaker wants the listener to agree more passionately and is quite certain that their opinions will coincide. The question tags այդպես չէ՞, այնպես չէ՞ are classified under the same group; e.g. Փեսացուն կարծեմ նորավարտ մաթեմատիկոսն է, այդպես չէ՞: // Երևի դուք էլ եք լսել այդ մասին, այնպես չէ՞: The question tag ի՞նչ է expresses both surprise and bewilderment, something very unexpected. The speaker usually knows beforehand the listener's intentions and starts the conversation with the mentioned question; e.g. Որոշել էս հեռանալ մեզանից, ի՞նչ է: // Անպայման կո՞րիք եք ուզում, ի՞նչ է: The question tag ի՞նչ է can occupy an initial position; e.g. Ի՞նչ է,

քեզ արդեն երջանիկ ես համարում: In disjunctive questions with the tag ճիշտ է the speaker shows that s/he is aware of his interlocutor's actions and wants him to prove what he says, e.g. Ինքդ ես գնացել ու պատմել, ճիշտ է: // Դու էլ ես այստեղ ելույթ ունեցել, ճիշտ է: The question tag ճիշտ չէ՞ expresses the same meaning as the previous tag. In this case the speaker wants his listener to prove his opinion very strongly; e.g. Դու արդեն որոշել ես մեկնել, ճիշտ չէ՞; // Երեկ դո՛ւ էիր զանգահարում և լռում, ճիշտ չէ՞: The question tag հա՛ is used with the intention to hear one more time the information the speaker had heard before and find out whether the listener is sure of the fact or not; e.g. Միայն թե դու գնաս այնտեղ, հա՞: This type of question may also express irony; e.g. Քո երազանքների սուսերն է, հա՞: Questions with the tag հը՞ have the same meaning as those with the tag հա՞; e.g. Տեր Աստված, և ով է հնարել այս ապուշ ռեժիսը, հը՞: In some cases the speaker knows beforehand that his listener wants to say something, so he asks, in order to find out his opinion immediately; e.g. Հիմա բոլորդ էլ նույն բանն էք մտածում, ո՞ւր էի կորել այս երեք օրը, հը՞: The question tag հը՞ may also occur at the beginning of the question; e.g. Հը՞, դու դեռ քո կարծիքին ես:

The analysis of the Armenian question tags reveals the following factors: the question tags are divided into 3 groups:

- 1) tags that may occur only in a final position (այնպես չէ՞, ճիշտ է, ճիշտ չէ՞);
- 2) tags that may have final and medial positions (հա՞);
- 3) tags that may have initial, medial and final positions (ի՞նչ է, հը՞).

As to their grammatical structure disjunctive questions in Armenian may have different expressions:

- a) a narrative-affirmative or a negative sentence + a question tag; e.g. Վախենում ես զրկվել նրա բարեհաճ ուշադրությունից, այնպես չէ՞:
- b) an exclamation + a question tag; e.g. Ի՛նչ գրավիչ աղջիկ է, չէ՞:
- c) a general question + a question tag, e.g. Հայրը որդու վրա չի կարող բարկանալ, ի՞նչ է:
- d) a special question + a question tag; e.g. Ի՞նչ ես սնում այստեղ, հը՞:

According to their semantic function there is a definite correspondence between the Armenian and English disjunctive questions:

- 1) The English true disjunctive questions correspond to the Armenian disjunctive questions with the tag չէ՞. In these questions the speaker is not sure of the accuracy of the statement.
- 2) The English certainty disjunctive questions correspond to the Armenian disjunctive questions with the tag այնպես չէ՞: In both languages the speaker asks the question in order to be confident of the accuracy of the

statement which one makes; e.g. Դու կմասնակցես արարողությանը, այնպես չէ՞: // You can do it alone, can't you?

- 3) The English stimulating disjunctive questions correspond to the Armenian disjunctive questions with the tags ճիշտ է, ճիշտ չէ՞. In both languages the speaker urges the listener to give an answer.

As to its intonation peculiarities, in Armenian, the second sense-group is mainly pronounced with a rise. The character of rise may be different: Low Rise expresses uncertainty; High Rise – the wish to get a precise answer. In Armenian the tag ի՞նչ է in most cases is uttered with a Fall. Thus, summing up the results of comparative analysis, we see that:

- 1) Disjunctive questions in both languages consist of 2 sense-groups;
- 2) They express the same attitude in both languages: the speaker wants to know whether the statement he has just made is correct or not or wants to know the opinion of the hearer on some points;
- 3) In English the first sense-group may be pronounced with rising or falling tones. The second sense-group is pronounced with rising or falling tones depending on the type of the question, that is, the degree of the speaker's confidence. Accordingly, disjunctive questions are characterized by Descending or Level Scales (Heads). In Armenian the second sense-group is pronounced with rising tones, with the exception of the tag ի՞նչ է, which is pronounced with a falling tone. Accordingly Armenian disjunctive questions are characterized by Sliding and Scandent Scales;
- 4) In English there is a close grammatical connection between the first and the second parts of disjunctives, while in Armenian this phenomenon is not observed;
- 5) In English disjunctive questions of the first sense-group are always either a narrative sentence + a tag, or negative sentence + a tag. Unlike this, in Armenian we also find an exclamation + a tag: e.g.

Դու ինձ չես հավատում, չէ՞: (negation+tag) // Մեր պայմանը մոռացել էս, ի՞նչ է: (interrogation+tag) // Ի՞նչ գեղեցիկ տեսարան է, չէ՞: (exclamation+tag)

In contrast to other types of questions, alternative questions have not been under consideration which is perhaps explained by the fact that the linkage between alternative questions and the other types of questions is not often clearly or explicitly expressed and defined; moreover, detailed examination of alternative questions primarily assumes contending with divergent syntactic and semantic items, namely disjunction, coordination, syntax and semantics of interrogatives, and the application of *whether* and *if*.

In case of an alternative question, a question is the form A or B asking which

of the propositions is true. For the alternative reading, the question cannot be answered by ‘yes’ or ‘no’ and has to be answered by a sentence providing information about the truth and falsity of the respective disjuncts such as John is in London, or Mary is not in London [4, 96].

In English an alternative question is a type of question in which the interrogator proposes the hearer equitable options combined with the exclusive disjunction “or” and the response is predicted to be determined with one of the offered options.

Two types of alternative questions are distinguished in English, the first resembling a *Yes-No* question, and the second a *wh-question*:

e.g. Would you like chocolate, vanilla, or strawberry (ice-cream)? (1)

Which ice-cream would you like? Chocolate, vanilla, or strawberry? (2)

The first type differs from a *Yes-No* question only in intonation; instead of the final rising tone, it contains a separate nucleus for each alternative: a rise occurs on each item in the list, with the exception of the last one, on which there is a fall, indicating that the list is complete. The difference in intonation between alternative and *Yes-No* questions is important: ignoring it can lead to the misunderstanding – as the contrast between these replies indicates:

Alternative: A: Shall we go by BUS or TRAIN? B: By BUS.

Yes-No: A: Shall we go by bus or TRAIN? B: No, let’s take the CAR.

The second type of alternative question is really a compound of two separate questions: a *wh-question* followed by an elliptical alternative question of the first type. Thus, the alternative “Which ice-cream would you like? Chocolate, vanilla, or strawberry?” might be taken as a reduced version of “Which ice-cream would you like? Would you like chocolate, vanilla, or strawberry?” [7, 195].

The intonation pattern, used for alternative questions, is called a contrastive intonation. The first element of the disjunction rises strongly, then there is a pause before “or”, the second part of the disjunction may start a little higher and then quickly falls [5, 101-114]. Bolinger states that when asking an alternative question, the speaker is simply in search of the answer to whether A or B holds. The speaker wants to give the impression that s/he has no bias with respect to one or the other alternative as being more useful for the conversation goal [3, 152].

The most usual way of pronouncing alternative questions is to make two sense-groups and use a rising tone in the first sense-group and a falling tone in the last one: e.g. 'Would you like tea |or |coffee? The final fall shows that these are the only choices and that the list is complete. In fast colloquial speech an alternative question may be reduced to one sense-group with no rise of tone in the middle: e.g. 'Would you like 'tea |or |coffee? [1, 52]. Alternative questions express the speaker’s attitude

both toward the content of his own utterance and the life situation s/he is in. This dual attitude finds its reflection in the fact that in asking an alternative question, the speaker, under the circumstances, is made to offer the listener two kinds of choice: limited and unlimited. Non-final sense-groups in alternative questions with limited choice take the Low or the High narrow Rise which may be preceded by the Descending Stepping Scale, while the last sense-group is pronounced with a falling tone (Low or High Wide), e.g. Is 'this ex'pression 'used in 'actual s'peech, |or 'is it 'only a 'bookish ex,pression? or D'you pre'fer ,apples, |or ,pears,| or ,plums,| or `cherries?

In alternative questions with unlimited choice all the sense-groups take a rising tone (Low or High), e.g. 'Can I 'get you a 'cup of ,coffee, |an 'lice ,cream| or a ,lemonade? [9, 139]. Under this account, the final fall is what is required for an alternative question. It indicates that the list of alternatives is closed, and such a closure leads the speaker to believe that the correct answer is among the items he lists, he is not likely to close off the list, and as a result there is no comparable presupposition. When there is no presupposition, there is no an alternative question [10, 114]. Bartles points out: "In order for multi-phrasal, wide-scope disjunctive question to be interpreted as an alternative question, not only did its final phrase accent have to be falling, but also all non-final phrase accents are rising, the utterance is interpreted as a Yes//No sequence for it lacks the connotation of exhaustiveness of choices which is crucial to alternative questions. If on the other hand, non-final phrase accents are falling and the final phrase accent is rising, the resulting sequence is incoherent" [2, 178].

In Armenian, alternative questions (twofold or two-phrase and multifold or multi-phrase subtypes) have specific syntactic structures and particular communicative targeting of the speaker. In case of twofold (or two-phrase) alternative question the interrogation mark always falls on the predicate of the first syntagm of the question. The final syntagm always coincides with one of the members of the first syntagm. The interrogation mark falls on that coincident word which is taken as the first unit of the alternative question. In case of a twofold alternative question, the final item coincides with the predicate of the first syntagm, therefore the interrogation mark falls exactly on it. In twofold alternative questions, the Infinitive is frequently used. In such cases the second item of the question is the verb of the same first syntagm in a negative form, or any verb with a quite opposed meaning, e.g. Կո՞վե՞լ, թե հաճձնվե՞լ: Լի՞նե՞լ, թե չլի՞նե՞լ [12, 122]. In case of a multifold (or multi-phrase) alternative question, the question mark falls definitely on any member (with the exception of the predicate, which is matchable with the final part of the multifold question-subtype). It is important to note that Armenian-speaking learners very often put the question mark on the predicate of the first

syntagm of the multifold question-subtype, thus deviating from the set of rules, e.g. Ջրի գնա՞մ, թե հացի: The final unit of multifold question-subtype coincides with: a) the subject of the first part of the question, e.g. Դո՞ւ ես լսվ սովորում, թե ընկերոջ; b) the direct object of the first part of the question, e.g. Գի՞րք ես կարդում, թե ամսագիր; c) one of the indirect objects of the first part of the question, e.g. Ոտքո՞վ ես գնալու, թե մեքենայով; d) one of the adverbial modifiers of the first part of the question, e.g. Քաղաքո՞ւմ ես ապրում, թե գյուղում; Այսօք ես մեկնելու, թե վաղը; e) the whole first part, e.g. Աշտնեց տա՞նն ես քնելու, թե գնալու ես Սուրենեց սուս: The multifold alternative questions, as already mentioned, can have two or more interrogative units. The probability of the anticipated response is weakened and conditioned by the increase in the number of interrogative units. The speaker can assumably hear the expected answer in case of twofold alternative questions. The speaker chooses two possible answers and asks his interlocutor a question in order to find out the very answer that corresponds to the reality [12, 123-124]. According to auditory analysis, the final unit of each alternative is uttered with a rising tone in Armenian, while the final unit of the question is pronounced with a fall, e.g. Քեզ ի՞նչ դնեն՝ զաթա՞, նապրլեո՞ն, թե՞ փախլալա: The same phenomenon is observed in English, e.g. 'Would you 'like , tea| or `coffee?

In English such type of intonation is typical of questions where all the alternative units are enumerated. In cases when not all the alternative units are enumerated and the interlocutor is given a chance to choose an option which is not mentioned in the question, the final syntagm is also pronounced with a rising tone similar to the preceding syntagm, e.g. 'Would you 'like , tea| or , coffee? Such distinction is not observed in Armenian. Thus, it is possible to distinguish the basic intonation characteristics between the English and Armenian alternative questions. The first syntagm of alternative questions in both languages is uttered with a rising tone. The final syntagm of the alternative question in Armenian is always pronounced with a falling tone while in English a rising tone is also possible [11, 9]. It should be noted that for «Դպրոց գնալն՞ ևս, թե ոչ» alternative question-type, «ոչ» is used as a response, as «այո» cannot be used as a reply here and it is substituted by the answer «գնալու նս». It is explained by two reasons: a) «այո» is not used in twofold alternative questions. It is substituted by the direct form of the predicate which is used in the first syntagm and acts as the main meaningful unit; b) it is one of the units of interrogation that is given as a response to the alternative question and as the twofold alternative question does not contain the response «այո», so in place of «այո» the direct form of the predicate is used as a response which corresponds to «այո» in its meaning [12, 124]. There are subtypes of

alternative questions which act as a specific synthesis of questions formed by means of a question word or without it, e.g. «Որտե՞ր էս ապրում՝ քաղաքո՞ւմ, թե գյուղո՞ւմ»: If in terms of other types of alternative questions the speaker anticipates to hear one of the units of the question in response, the responses other than the units of the question are not excluded by the speaker.

When the relation between the principal members of the question is affirmed or negated, that is, when it is necessary to specify the relation of the predicate with the subject, thereupon the interrogation is formed by means of interrogative intonation. It should be observed that in alternative questions the interrogation can properly be expressed without interrogative intonation. Anyway, the interrogative intonation is a kind of redundancy, for example, in «Գնում էս սո՞ւմ, թե դպրոց», the interrogation is expressed via words liable to specification and the conjunction *թե*, that is, by means of a particular sentence structure. Thus, in alternative question the main reason that causes interrogation is the opposition of the members of the sentence which are liable to specification. Consequently, there are five formal means of expressing interrogation in Armenian alternative questions: 1) the availability of interrogative intonation; 2) the availability of interrogative word-order; 3) the availability of question-word; 4) the availability of question-particle; 5) the availability of interrogative opposition which is expressed by means of the conjunction *թե* [12, 126].

In conclusion, we would like to make mention of the fact that the contrastive study of intonation and structural-semantic features of Disjunctive and Alternative questions in English and Armenian enabled us to reveal some of the striking similarities and divergences that exist in these languages, namely the definite correspondence between the English and Armenian Disjunctive questions according to their semantic function, the formal means of expressing interrogation in English and Armenian Alternative questions, the attitudinal colourings, the intonation contours typical of the examined question-types, etc.

Since it is impossible to give a thorough analysis of intonation and structural-semantic peculiarities of Disjunctive and Alternative questions in English and Armenian within the bounds of one article, we tried to provide an overview of the most striking correspondences and divergences observed in these languages.

Bibliography

1. Antipova E.Ya. and others, English Intonation, Moscow, 1985, 52-55//224.
2. Bartles Christine, The Intonation of English Statements and Questions, London: Garland Publishing House, 1999, 398 p.
3. Bolinger D., Yes- No Questions are not Alternative, 1978, 152 p., 342 p.
4. Chelliah Sh., Grammar of Meithei, (Mouton Grammar Library, 17). Berlin: Mouton de Gruyter, 1997, 96 p., 143 p.
5. Han C.H and Romero. M., Negation, Focus and Alternative Questions, In K. Megerdooimian and L.A. Bar-el, 2001, pp. 101-114, 265 p.
6. Kirkpatrick Betty, How to Ask Questions, Singapore: Learner's Publishing Ltd, 2007, 190 p., 244 p.
7. Randolph Quirk, Sidney Greenbaum, University Grammar of English, Longman, 1978, 195 p., 493 p.
8. Roelofsen F. and Sam van Gool: Disjunctive questions, intonation, and highlighting. Technical report, ILLC, Univ. of Amsterdam, 2009, 11 p.
9. Vassilyev V.A., English Phonetics, Moscow, 1980, pp. 129-130, 256 p.
10. Zimmerman Th., Free Choice, Disjunction and Epistemic Possibility, Natural Language Semantics, Vol. 8, 2000, 114 p., 524 p.
11. Խաչատրյան Ա., Գալուստովա Մ., Հարցական նախադասությունների հնչերանգը հայերենում և անգլերենում, «Լրագրեր հասարակական գիտությունների», Երևան, 1982, 7, 9 էջ:
12. Ղուկասյան Ս.Վ., Ժամանակակից հայերենի հարցատեսակները, ՀՄՍՀ ԳԱ, Երևան, 1978, 122-126, 150 էջ:
13. <https://www.planetebook.com/free-ebooks/jane-eyre.pdf>

**Անգլերենում և հայերենում անջատական և ընտրանքային հարցերի
հնչերանգային և իմաստակառուցվածքային առանձնահատկությունների
ակնարկային համեմատական վերլուծություն**

Նունե Մարիկյան

Ամփոփում

*Հանգուցային բառեր. հաղորդակցություն, հարցական նախադասու-
թյուններ, հնչերանգային կադրապար, հարցական բառ, գրական խոսք, խո-
սակցական լեզու, սահմանափակ ընտրություն, համեմատական վերլուծու-
թյուն*

Հնչերանգը բոլոր լեզուներում խոսքի արտաքին երանգավորման միջոց է, քանի որ հենց հնչերանգի օգնությամբ ենք հասկանում՝ արդյոք արտաբերվածը հարց է, թե՞ պատմողական նախադասություն: Բացի այդ, հնչերանգի միջոցով կարող ենք արտահայտել ուրախություն, զարմանք, դժգոհություն և նույնիսկ զայրույթ: Օտարալեզու խոսքի ընկալման ժամանակ (նույնիսկ լեզվին բավականին լավ տիրապետելու դեպքում անգամ) ունկնդրի ուշադրությունից կարող են վրիպել անծանոթ հնչերանգային միջոցներով արտաբերված խոսքի նրբիմաստները: Բանավոր խոսքի իմաստային լիարժեք նշանակության համար անհրաժեշտ է հնչերանգի, համապատասխան քերականական կառուցվածքի և բառային կազմի գուգակցում: Հնչերանգում կարևորվում են երկու ասպեկտներ. առաջինը կարելի է անվանել հաղորդակցական, քանի որ հնչերանգի միջոցով արտահայտում ենք ավարտուն և անավարտ խոսք, պարզում ենք արդյոք արտաբերված խոսքը հարց է, թե պատասխան և այլն: Երկրորդ ասպեկտը կարելի է անվանել էմոցիոնալ-զգայական, քանի որ հնչերանգում ամփոփված է որոշակի էմոցիոնալ երանգ, որն արտահայտում է խոսողի էմոցիոնալ հոգեվիճակը, իսկ երբեմն էլ խոսողի (ընդ որում՝ նրա կողմից ոչ միշտ գիտակցված)՝ որոշակի ձևով ունկնդրի վրա ներգործելու նպատակը: Ներկայացված հոդվածում կատարվել է անգլերենում և հայերենում անջատական և ընտրանքային հարցերի հնչերանգային և իմաստակառուցվածքային առանձնահատկությունների ակնարկային համեմատական-գուգադրական վերլուծություն: Անգլերենում և հայերենում նշված հարցատեսակների հնչերանգային և իմաստակառուցվածքային առանձնահատկությունների գուգադրական քննությունն առաջին հերթին ենթադրում է խոսքային հաղորդակցական տեսակների համապատասխան ընտրություն, իսկ խոսքային հաղորդակցության այդ տեսակներն էլ իրենց հերթին սահմանում են համանման խոսքային իրավիճակների ընտրությունը: Անջատական և ընտրանքային հարցերի հնչերանգային և իմաստակառուցվածքային առանձնահատկությունների քննության և գուգադրման արդյունքում վերհանվել են հայերեն և անգլերեն լեզուներում դրանց միջև գոյություն ունեցող որոշ հիմնական տարբերություններ և ընդհանրություններ:

Краткий сравнительный обзор интонационных и структурно-семантических особенностей разделительных и альтернативных вопросов в английском и армянском языках

Нуне Марикян

Резюме

Ключевые слова: коммуникация, вопросительные предложения, интонационная модель, вопросительное слово, литературная речь, разговорная речь, ограниченный выбор, сравнительный анализ

Интонация во всех языках служит для внешней окраски речи. Именно при помощи интонации мы понимаем, является ли сказанное вопросом или повествованием, к тому же с помощью интонации можем выразить радость, удивление, недовольство или даже раздражение. При восприятии иноязычной речи (даже при довольно хорошем знании языка), от слушателя часто ускользают тонкие оттенки смысла, передаваемые незнакомыми интонационными средствами. Интонация в сочетании с соответствующей грамматической структурой предложения и его лексическим составом является важным средством выражения значения высказывания. В интонации следует различать два аспекта. Первый аспект можно назвать коммуникативным, поскольку через интонацию мы передаем, является ли высказывание законченным или незаконченным, содержит ли оно вопрос, ответ и т.п. Второй аспект можно назвать эмоциональным, поскольку в интонации заключена определенная эмоция, которая всегда отражает эмоциональное состояние говорящего, а иногда и его намерение (впрочем, не всегда осознаваемое им), которое определенным образом может воздействовать на слушателя. В данной статье проводится обзорный сравнительно-сопоставительный анализ интонационных и структурно-семантических особенностей разделительных и альтернативных вопросов в английском и армянском языках. Сопоставительное изучение интонационных и структурно-семантических особенностей упомянутых вопросов в английском и армянском языках предполагает, прежде всего, выбор соответствующих коммуникативных типов высказываний, которые в свою очередь определяют выбор аналогичных речевых ситуаций, в которых данные высказывания реализуются. В результате рассмотрения и сопоставления интонационных и структурно-семантических особенностей разделительных и альтернативных вопросов были выявлены некоторые основные различия и общие черты в английском и армянском языках.

Ներկայացվել է 14.04.2023 թ.

Գրախոսվել է 25.04.2023 թ.

Շնորհակալվել է տպագրության 25.05.2023 թ.

**Ազր(n)-, Էկ(n)-, Էն(n)- օտար բաղադրատարրերով
կազմությունները հայերենում**

Արմինե Մկրտումյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-38>

Հանգուցային բառեր. բառապաշար, տերմին, գյուղատնտեսական գիտություններ, նորակազմություն, պատճենում, կիսապատճենում, բառակազմական կաղապար

Նախաբան

Լեզվի բառապաշարի համալրումը և զարգացումը հարափոփոխ, բնականոն գործընթաց է, որը պայմանավորված է ժամանակի թելադրանքով: Բառապաշարը, լինելով լեզվի ամենագգայուն շերտը, շատ արագ է արձագանքում հասարակական կյանքում կատարվող իրադարձություններին և փոփոխություններին: Ներկայումս նոր բառերի ստեղծման և կազմության գործում մեծ ակտիվություն է նկատվում, որը հասարակության, մշակույթի, գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացման անմիջական ազդեցությունն է կրում: Բառային կազմը համալրվում է ոչ միայն համագործածական բառերով, այլ նաև տերմիններով կամ գիտաբառերով: Նոր բառերը ստեղծվում են լեզվի փոխառությունների, բառապատճենումների, բառակազմական տարբեր եղանակների, լեզվում առկա բառերի վերաիմաստավորման ճանապարհով: Դրանք թույլ են տալիս պատկերացում կազմել լեզվի տվյալ փուլի գոյավիճակի մասին:

Սույն հոդվածում քննում ենք **ազր(n)-, Էկ(n)-, Էն(n)-** օտար բաղադրիչներով կազմությունները՝ նպատակ ունենալով ցույց տալ գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի՝ նոր բառերով համալրման գործընթացը, տերմինային նորակազմությունների՝ օտար կամ հայերեն համարժեքների գործածությանն առնչվող խնդիրները և դրանց բառակազմական հնարավորությունները, որով էլ պայմանավորված է հետազոտության նորույթը: Քննությունը կատարվել է ըստ հրապարակում եղած մի շարք բացատրական, ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական, թարգմանական, օտար բառերի, նորաբանությունների բառարանների և համացանցային տվյալների:

Քննվող թեման արդիական է այնքանով, որ ցույց է տալիս գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի հարստացման և կատարելագործման միտումները: Արժարժեքավոր խնդիրները կարող են հետաքրքրել տերմինային բառապաշարը ուսումնասիրողներին, նպաստել տերմինային նոր բառարանների (այդ թվում՝ միջգիտակարգային տերմինների) կազմման աշխատանքներին, ինչպես նաև օգտակար լինել բուհերի ուսումնական գործըն-

թացնեում բառակազմություն, տերմինաբանություն, նորաբանություն, փոխառություն և օտարաբանություն թեմաներն ուսումնասիրելիս:

**Ազր(n)-, էկ(n)-, էն(n)- օտար բաղադրիչների
ծագումը և դրանցով կազմությունների բառարանագրումը**

Օտար բաղադրիչ ունեցող բառերի քննությունը հաճախ է մասնագետների ուշադրությանը արժանանում [2, 175-177], [15, 149-153], [12], [27, 243-247], [11], [8, 94-104], [29, 120-139], [26, 69-74]: **Ազր(n)-, էկ(n)-, էն(n)-**բաղադրիչներով բառերի բառարանային [28], [14], [9], [5], [1], [10], [13], [25], [7], [12], [11], [16], [17], [18], [19], [20], [21], [22] և համացանցային տվյալների ուսումնասիրությունից պարզ է դարձել, թե դրանցով կազմված քանի բառ և բառակապակցություն է առաջին անգամ բառարանային գրանցում ստացել:

ազր(n)- 8 բառ և բառակապակցություն [28]. *ազրարային ծրագրիչներ, ազրարային կրիզիս, ազրարային հարց, ազրարային շարժումներ, ազրարներ, ազրար քաղաքականություն, ազրոնոս, ազրոնոսիա,*

էկ(n)- 2 բառ [14]. *էկոնոմիա և էկոնոմիզմ,*

էն(n)- 1 բառ [5]. *էնոքիմիա:*

Է. Աղայանի նշված բառարանում **ազր(n)-** բաղադրիչը բացատրվում է որպես *նորակազմ և նորամուտ բարդ բառերի հասպավիված բաղադրիչ՝ ազրոնոմիական, իսկ ազրոնոմիականը՝ գյուղատնտեսական նշանակությամբ*: Ապա ներկայացվում է այդ բաղադրիչով շուրջ 40 բառ՝ *ազրոդասընթաց, ազրոդպրոց, ազրոժամկետ, ազրոխմբակ, ազրոկանոն, ազրոհանք, ազրոմիջոցառում, ազրոշրջան, ազրոցանց, ազրոքաղաք* և այլն: Հանդիպում են նաև *ազրիկուլտուրա, ազրիկուլտուրային* ձևերը: Ի դեպ, բառարանում ներառված է նաև *ազրար* բազմիմաստ բառը՝ *1. խոշոր հողատեր, կալվածատեր, 2. խոշոր հողատերերի ռեակցիոն կուսակցություն կապիտալիստական երկրներում* նշանակություններով, ինչպես նաև դրանով կազմված մի շարք բարդություններ՝ *ազրարագետ, ազրարային, ազրարագիտություն, ազրարահումքային* և այլն: Ա. Տեր-Ղազարեանի բառարանում ներառված է *ազրարներ* բառը՝ հոգնակի գործածությամբ (Այսպես են կոչում խոշոր հողատիրութեան պաշտպանները [28, 7]): Ըստ էության, վերոնշյալ բոլոր օրինակները կազմված են **ազր-** հիմնական բաղադրիչով և **n, ի, ար'** հավելյալ տարրերով:

Չ. Հացագործյանը և Ս. Ասլանյանն ընդունում են **ազր-** ձևը. «... Տերմինային տարրը տրված է առանց շաղկապող -օ- և -ա- ձայնավորների, որոնք տարրի բաղկացուցիչ մասը չեն, այլ կապում են այն՝ գոյացնելով ամբողջական տերմին» [13, 5]: Մոտեցումը նույնն է նաև **էկ(n)- և էն(n)-** բաղադրիչների

¹ Ըստ Հր. Աճառեանի, Մ. Մինասեանի «Հայերեն ստուգաբանական առձեռն բառարան»-ի (2004) և Գ. Զահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան»-ի (2010)՝ *ար-*ը ավանդված է *անել(ը), արարում, գործ* նշանակություններով:

համար: Հեղինակներն այդ բաղադրիչի *դաշտ* բառացի նշանակության կողքին բերում են հայերեն երեք համարժեք՝ *1. գյուղ, 2. հող, 3. ագր*, ապա յուրաքանչյուրի համար՝ տերմինի բնորոշ օրինակ.

Գյուղ. агрономия – գյուղատնտեսություն // գյուղատնտեսագիտություն,

հող. аграрный – հողային,

ագր. агрофизика – ագրոֆիզիկա:

Ա. Հայրապետյանը ևս նշում է, որ այն *բառերի հապավված բաղադրիչ է՝ ագրոնոմիական (գյուղատնտեսական)* նշանակությամբ, որը ծագել է հուն. *agros (դաշտ)* բառից: Թեև բառարանագիրը *ագրոնոմ* և *ագրոնոմիա* բառերի կողքին *հնգ.* նշումն է կատարել, այնուամենայնիվ, **ագր(ո)**- օտար բաղադրիչով նորակազմությունները մեծ ակտիվություն են ցուցաբերում թե՛ արդի բառարաններում, թե՛ գիտական գրականության մեջ:

Ի մի բերելով **ագր(ո)**- բաղադրիչի ծագման վերաբերյալ բառարանային տվյալները՝ ընդհանրացնենք, որ այն հայերեն կազմություններում ավանդված է երեք տարբերակով՝ *1. գյուղ, 2. հող, 3. բաղադրյալ բառերի բաղադրիչ:*

Էկ(ո)- բաղադրիչը նույնպես հունական ծագում ունի՝ *տուն, հայրենիք* [11], *գոյ* [12] նշանակություններով: Նրանով կազմությունները քանակապես զիջում են **ագր(ո)**-ով բաղադրություններին՝ *Էկոլոգիա, Էկոհեռախոս, Էկոոստիկան, Էկոտիպ, Էկոգյուղ, Էկոանձնագիր, Էկոլուր, Էկոկրթություն, Էկոկենտրոն, Էկոաշխարհ, Էկոմթերք, Էկոարշավ, Էկոաղետ, Էկոերկիր, Էկոլարվածություն, Էկոնշակույթ, Էկոայգի, Էկոչափանիչ, Էկոաղբաման, Էկովառելիք* և այլն: Ի դեպ, այս բաղադրիչով կազմությունների գործածությունը ակտիվացել է լեզվում: Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում հաճախակի է դարձել այս կամ այն առարկան, երևույթը, իրողությունն արտահայտել **Էկ(ո)**- բաղադրիչի հավելումով: Հավանաբար հատկանիշի կարևորությունն ընդգծելու նկատառումներով ավելացվում է այդ բաղադրիչը՝ փորձելով վստահություն ներշնչել սպառողին:

Ֆ. Հայրապետյանը *Էկոլոգիա, Էկոգարգացում, Էկոկլին, Էկոծագում, Էկոկենսաձև, Էկոհամակարգ, Էկոլոգիստիկա, Էկոոլորտ, Էկոպայքար, Էկոտեսակ, Էկոտիպ, Էկոտոպ, Էկոցիդ* բառերի համար համապատասխանաբար առաջարկում է հետևյալ հայերեն տարբերակները՝ *գոյապահպանություն, գոյազարգացում, գոյաթերում, գոյածագում, գոյակենսաձև, գոյահամակարգ, գոյապահպանաբանություն, գոյաոլորտ, գոյապայքար, գոյատեսակ, գոյատեղ, գոյատիպ, գոյասպան* [12, 46-55]: Կարծում ենք՝ կարող են կիրառելի տարբերակներ համարվել, թեև հեղինակը թերահավատորեն է վերաբերվում լեզվում դրանց մուտքագրմանը. «Առաջարկվող հայերեն տերմինները, մեզ կլանող օտարալեզու տերմինային հորձանուտում ինչպիսի սպագա կունենան, դժվարանում ենք կանխատեսել» [12, 6]:

Էն(ո)-բաղադրիչը համեմատաբար նորահայտ է: Պատճառը գյուղատնտեսության ավելի երիտասարդ և զարգացող ոլորտ լինելն է: Նրանով կազ-

մությունների քանակը խիստ սահմանափակ է: Բառարանագրված է երկու բառ՝ *էնոքիմիա* [5, 330], *էնոքիմիկոս* [22, 73]: Մյուս օրինակները համացանցային են՝ *էնոլոգ*, *էնոլոգիա* (խոսքը ֆրանսիացի *էնոլոգ* և հետազոտող Էմիլ Պիենոյի մասին է, ով հեղափոխություն է արել գինեգործության մեջ 20-րդ դարի կեսին և կոչվել «Մամանակակից *էնոլոգիայի* նախահայր» [31]), *էնոզաստրոնոմիա* (համտեւը կարելի է զուգակցել հյուրասիրության հետ: Այս դեպքում ձեզ անհրաժեշտ կլինի գործակալություն, որը կօգնի կազմակերպել *էնոզաստրոնոմիա*: Նման միջոցառում անցկացվում է ռեստորանում, և յուրաքանչյուր տեսակի գինու համար առաջարկվում են ճաշատեսակներ, որոնք օգնում են ստեղծել ներդաշնակ համ [32]), *էնոզաստրոնոմիական տուրիզմ*, *էնոզաստրոնոմիական ընթրիք*, *էնոտուրիզմ*, *էնոֆիլ*², *էնոտեկա*³ և այլն:

էն(ո) հունարենից թարգմանաբար նշանակում է *գինի*: Ուստի, խաղողից գինու ստացումը և դրան առնչվող տարբեր գործընթացները ձևավորել են *էնոլոգիա* գիտաճյուղը, որը հայերենում կարող է գործածվել *գինեգիտություն*⁴ թարգմանությամբ:

Այսպիսով՝ հունական ծագում ունեցող *ագր(ո)-*, *էկ(ո)-*, *էն(ո)-* բաղադրիչները, թեև ունեն հայերեն համարժեքներ, սակայն դրանցով կազմությունները հաճախ զուգահեռաբար գործածվում են հայերեն և օտար ձևերով:

***Ագր(ո)-, էկ(ո)-, էն(ո)-* բաղադրիչներով տերմինային կազմությունները**

21-րդ դարը բնորոշվում է գիտության տարբեր բնագավառների բուռն զարգացմամբ: Մեծ վերելք է ապրում նաև գյուղատնտեսությունը: Բազմաթիվ են գյուղատնտեսական գիտությունները (ագրոնոմիա, անասնաբուժություն, անասնաբուծություն, գինեգործություն, շոկոլադագործություն, խաղողագործություն, հողագիտություն, երկրագործություն, ծառագիտություն, սննդամթերքի անվտանգություն և այլն), որոնք անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Գյուղատնտեսության արդիականացմանն ուղղված բոլոր ջանքերը մեծապես ազդում են նաև այդ ոլորտի բառապաշարի, հատկապես տերմինահամակարգի հարստացման և կատարելագործման վրա: Ստեղծվում են

² *էնոֆիլ* անվանում են այն մարդկանց, որոնց մասնագիտական գործունեությունը կապված չէ գինու հետ, բայց նրանց կյանքում այն ունի կարևոր նշանակություն: Նրանք գինու մեծ գիտակներ են:

³ *էնոտեկան* հատուկ պայմաններով նկուղային վայրերում շշալցված գինիների կամ դրանց տեսականու համար նախատեսված պահեստ է գինեդարան:

⁴ *էնոլոգիան* (*գինեգիտություն*) երեք ճյուղից է բաղկացած՝ **1. գինեքիմիա** (ուսումնասիրում է գինու արտադրության բոլոր փուլերում տեղի ունեցող քիմիական գործընթացները), **2. գինեգործություն** (գինու արտադրություն), **3. խաղողագործություն** կամ **խաղողագիտություն** (ուսումնասիրում է խաղողի տեսակների հատկությունները) [30, 5]:

գյուղատնտեսական նոր ենթաճյուղեր ու մասնագիտություններ, ի հայտ են գալիս նոր հասկացություններ, որոնց համար էլ ստեղծվում են նոր բառեր: Գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի՝ նոր բառերով համալրման գործում հայոց լեզուն, անշուշտ, կատարում է բառաստեղծական իր բացառիկ առաքելությունը: Նոր տերմինները միաժամանակ ցույց են տալիս գյուղատնտեսության զարգացումներն ու միտումները:

Ինչպես նկատելի է, ուսումնասիրվող բաղադրիչներով կազմված վերոնշյալ օրինակների մի մասը տերմինային արժեք ունի: Բառապաշարի տերմինային շերտը շարունակ փոփոխություններ է կրում. նորերն են ավելանում, հները վերափաստավորվում են: Տերմինակերտման գործընթացը լեզվում անընդհատ է: Եթե այսօր առաջընթաց են ապրում տարբեր ոլորտներ, ավելին՝ ստեղծվում են նորերը, բնականաբար փոփոխություններ են կատարվում այդ ոլորտների բովանդակությունը ներկայացնող բառապաշարում: Է. Աղայանը նշում է. «Տերմինաբանության հարստացման այդ բուռն ընթացքին ուղեկցում են նորանոր տերմինահամակարգերի ձևավորումն ու զարգացումը՝ գիտության, տեխնիկայի և արտադրության նոր ճյուղերի առաջացման համապատասխան, և միջհամակարգերի ձևավորումն ու զարգացումը՝ գիտության, տեխնիկայի և արտադրության տարբեր ճյուղերի միջև ավելի սերտ կապերի ստեղծման, փոխադարձ ներթափանցումների ու միջգիտությունների ձևավորման համապատասխան» [3, 423-424]: Գյուղատնտեսական գիտությունների զարգացումը ևս իր կնիքն է դնում տերմինաշինության վրա, այդ թվում՝ **ագր(ո)-, էկ(ո)-, էն(ո)-** բաղադրիչներով կազմություններում: Հավելենք միայն, որ գիտության զարգացման ընթացքից դատելով՝ ներկայումս դժվար է հստակ սահմանազատել նրա խմբերն ու ենթախմբերը: Այս երևույթը տարածվում է նաև տերմինահամակարգերի վրա: Գիտության տարբեր բնագավառներ, նույնիսկ տարբեր գիտություններ օգտվում են միմյանց տերմինաբանությունից: Մեր օրերում համացանցի շնորհիվ գիտական գիտելիքը հասանելի է բոլորին, ձեռք է բերել համամարդկային արժեք, որի արդյունքում էլ տերմինները ներթափանցել են տարբեր լեզուների բառապաշար, տարբեր տերմինահամակարգեր:

Հավաքված բառանյութը փորձել ենք դասակարգել երկու բաժնում՝

1. տերմիններ, որոնք, անկախ գործառական նշանակությունից, միայն որպես տերմին են գործածվում. *ագրոգիտություն, ագրոտեխնիկա, ագրոքիմիա, ագրոֆիզիկա, ագրոհողագետ, ագրոարդյունաբերական, ագրոկլիմա-յագիտություն, ագրոբուսահամակեցություն, ագրոկենսաբանություն, ագրո-հողագիտություն, ագրոմելիորացիա, ագրոլանդշաֆտ, ագրոքիմիկատ, էկոլո-գաքաղաքագիտական, էկոլոգիացում, էկոթունաբանական, էկոնոմայգեր, էնոքիմիա, էնոքիմիկոս* և այլն,

2. տերմինային բառեր, որոնք ունեն ն՝ սովորական, ընդհանուր, և՛ տերմինային գործածություն. *ագրոշուկա, ագրոշրջան, էկոլոգիա, էկոնոմիկա,*

էկոհեռախոս, էկոցիոյ, էկոկրթութիւն, էկոխիդճ, էկոգիտակից, էկոմոտեցում, էկոպայուսակ և այլն:

Բառապաշարի, ինչպէս նաև տերմինահամակարգի զարգացումը պայմանավորված է և՛ արտալեզվական, և՛ ներլեզվական գործոններով: Արտաքին ճանապարհով զարգացումն ու կատարելագործումը դրսևորվում է գիտության, տեխնիկայի, տնտեսության, մշակույթի, հասարակական կյանքի, բարձրագոյն կրթության առաջընթացով, և հիմնական աղբյուրը փոխառություններն ու պատճենումներն (թարգմանություններ) են, իսկ ներքին ճանապարհը՝ լեզվի բառակազմական տարբեր միջոցներով նոր բառերի և տերմինների ստեղծումը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բավականին մեծ է արտալեզվական գործոնի ազդեցությունը: Օտար բառերի և տերմինների մուտքը մեր լեզվի բառապաշար չընդհատվող գործընթաց է, հայերենն էլ ցուցաբերում է փոխառությունների յուրացման ճկուն մոտեցում: Երբեմն դրանց համար ստեղծվում են հայակազմ համապատասխանները: Այստեղ շատ կարևոր է թարգմանելիության խնդիրը: Հատկապէս տերմինները հայերենացնելն այնքան էլ դյուրին չէ: Այս դեպքում առանձնահատուկ ուշադրություն են պահանջում մասնագիտական նրբանկատությունը և ոլորտային առանձնահատկությունները՝ իմաստային անճշտությունից խուսափելու համար:

Ագրոմինիմում, ագրոմաքսիմում, ագրոֆիզիկա, ագրոքիմիա, ագրոբագա, ագրոտեխնիկ, ագրոլանդաֆտ, էկոտրանսպորտ, էկոտիպ, էկոռեստորան, էկոբրիկետ, էնոլոգ, էնոլոգիա բառերը փոխառություններ են, թեև չի բացառվում, որ դրանք հայերենացվեն՝ անցնելով պատճենման (փոխառյալ բառի ամբողջական թարգմանություն) կամ կիսապատճենման (փոխառյալ բառի մասնակի թարգմանություն) ճանապարհով: Սակայն *ագրոնոմ* – *գյուղատնտես, ագրոնոմիա* – *գյուղատնտեսություն, ագրոբիոլոգիա* – *ագրոկենսաբանություն, ագրոբիոլոգիական* – *ագրոկենսաբանական, ագրոկոմպլեքս* – *ագրոհամալիր, ագրոտուրիզմ* – *ագրոզբոսաշրջություն, էկոնոմիստ* – *տնտեսագետ, էկոնոմիա* – *տնտեսում, էկոնոմիկա* – *տնտեսություն, էկոտուրիզմ* – *էկոզբոսաշրջություն* բառազույգերի հայերեն տարբերակները կարելի է հաջողված համարել, որոնք օտարաբանություն – հայերեն համարժեք «պայքարում հաղթել են» և անխոչընդոտ գործածվում են, համապատասխանում են հայերենի բառակազմական և իմաստաբանական նորմերին, համոզիչ են և ընկալելի: Նույն միտումն է նկատվում նաև *էնոլոգ* – *գինեգետ, էնոլոգիա* – *գինեգիտություն, էնոքիմիա* – *գինեքիմիա, էնոտուրիզմ* – *էնոզբոսաշրջություն* – *գինեզբոսաշրջություն* նորամուտ և նորակերտ բառերում:

Ուշագրավն այն է, որ «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանում» օտար տերմինի համար ներկայացվում են փոխառված և պատճենված, փոխառված և կիսապատճենված, պատճենված և կիսապատճենված տարբերակները (աղյուսակ 1):

Օտար տերմինի տարբերակային ձևերը

Ռուսերեն տերմին	Փոխառություն	Պատճենված	Կիսապատճենված
аграрный		հողային, հողագործական	ագրարային
агробиология			ագրոկենսաբանություն
агрогидрология	ագրոհիդրոլոգիա		ագրոջրաբանություն
агрокомплекс	ագրոկոմպլեքս		ագրոհամալիր
агроклиматология			ագրոկլիմայագիտություն
агромелиорация	ագրոմելիորացիա	հողաբարելավում	
агролесомелиорация		անտառհողա- բարելավում	
агрометр			ագրոչափիչ (մասշտաբով քանոն)
агрономия	ագրոնոմիա	գյուղատնտեսա- գիտություն	
агротехника	ագրոտեխնիկա		գյուղատնտեսական տեխնիկա
агрикультура		դաշտավարություն, երկրագործություն	
экономизатор		տնտեսիչ	
экономика	էկոնոմիկա	տնտեսագիտություն	
экономист		տնտեսագետ	
экономичность		խնայողություն	
экономичный		խնայողական	
энохимия	էնոքիմիա		գինեքիմիա

Օրինակները փաստում են, որ հայերենացված կամ կիսահայերենացված որոշ տերմիններ ակտիվ գործածություն ունեն, ինչպես օրինակ՝ *ագրարային, ագրոկենսաբանություն, գինեքիմիա*, իսկ մի մասն էլ գործածվում է համատեքստին համապատասխան առավել հարմար տարբերակով: Օրինակ՝ *ագրարային համալսարան*, բայց՝ *հողային օրենսգիրք, հողային իրավունք. ագրոնոմիական ֆակուլտետ*, բայց՝ *գյուղատնտեսական հաշվառում, գյուղատնտեսական վարկեր. էկոնոմիկայի նախարարություն*, բայց՝ *տնտեսագիտության տեսություն* և այլն:

Ըստ լեզվի բառապաշարի զարգացման օրինաչափության՝ հայերենում անհարկի օտար բառերից մաքրվելու դրական միտում է նկատվում: Բառարանային ժամանակագրական քննությունը փաստում է, որ ավելի վաղ տպագրված բառարաններում օտար բառերը կամ տերմինները տրվում են որպես փոխառություն, որոնց մի մասը հաջորդ հրատարակություններում փոխա-

րինվում է հայակազմ տարբերակներով: Իհարկե, այս գործընթացը դրական է գնահատվում լեզվի մաքրության տեսանկյունից, բայց միշտ չէ, որ հնարավոր է լինում ստեղծել ճիշտ համարժեքը: Ինչպես տեսանք, զուգահեռաբար կարող են գործածվել թե՛ օտար, թե՛ հայերեն տարբերակները: Ժամանակի ընթացքում նրանցից մեկն իր հաստատուն տեղը կարող է զբաղեցնել լեզվում՝ մյուսին դուրս մղելով գործածությունից: Որքան էլ լեզուն փորձի բոլոր բառերի համար հայերեն տարբերակները ստեղծել, միևնույն է, օտար ձևերից շատերը երկար ժամանակ շարունակելու են անխոչընդոտ գործածվել, քանի որ հատկապես մասնագիտական հարթակներում հայակազմ տարբերակները անկենսունակ են մնալու: Այդպես կարող է ստացվել անհաջող թարգմանության կամ իմաստի ոչ լիարժեք արտահայտման դեպքում:

Ընդունենք՝ ճիշտ չէր լինի, որ, «բծախնդիր մաքրամտությամբ» տարված, ստեղծվեին բոլոր բառերի, հատկապես տերմինների հայերեն համարժեքները: Այս մոտեցումը լեզուն կտաներ ինքնամեկուսացման:

«Նոր բառեր»-ի Ա-Է պրակների (2015-2022) վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման ներկա փուլում քննվող օտար բաղադրիչները բառեր կազմում են առավելապես հայերենացված բաղադրամասերով. *ագրոլրատու, ագրոշուկա, ագրոպարենային, ագրովերամշակող, ագրովերամշակուլ, էկոանձնագիր, էկոգյուղ, էկոբանտ, էկոկրթություն, էկոլուր, էկոզբոսաշրջություն, էկոերթուղի, էկոհավիկիթ, էկոտակդիր, էկոմթերք, էկոարշավ, էկոգինի, էկոգորգ, էկոթադամաս, էկոմշակույթ, էկոխիդճ, էկոդաստիարակություն, էկոդասասենյակ, էկոգյուղատնտեսություն, էկոլարվածություն* և այլն: Քիչ չեն նաև համացանցային բառագործածությունները, որոնք հայերենում դեռևս բառարանագրված չեն. *ագրոայգի, ագրոգրույց, ագրոբիզնես, ագրոբարիք, ագրոդասարան, ագրոձեռնարկություն, էկոակտիվիստ, էկոբարիք, էկոկաշի, էկոդիություն, էկոբեղմնավորում, էկոընթրիք, էնոլոգ, էնոլոգիա, էնոգաստրոնոմիա* և այլն: Այս բաղադրիչները հաճախ են հանդիպում նաև տարբեր կազմակերպությունների, բազմատեսակ ծառայություններ մատուցող ընկերությունների, որևէ գործառույթ իրականացնող մարմինների, խանութների, սրահների անվանումներում. *Ագրո – Մաշ [33], Ագրո Ֆասթ [34], Ագրոլայֆ ՄՊԸ [35], Քարդ Ագրո Կրեդիտ [36], Ագրո Մաստեր [37], Ագրո Հոլդինգ [38], Ջուլյա Ագրո [39], Էկո Ագրո ՄՊԸ [40], Էկո Ֆուդ [41], Էկոֆրուտ [42], Էկոթատուն [43], Էկոֆիշ թրեյդ [44], Էկոեգորթ [45], Էնո-Էքսպո [46], Էնոսոուլ ՄՊԸ [47]* և այլն:

**Ազր(ո)-, Էկ(ո)-, Էն(ո)- բաղադրիչներով կազմությունների
բառակազմական առանձնահատկությունները**

Ազր(ո)-, Էկ(ո)-, Էն(ո)- բաղադրիչներով բառերը կազմվում են ածանցման և բառաբարդման եղանակով: Երկու դեպքում էլ բառակազմական բաղադրիչ են դառնում թե՛ հայերեն, թե՛ փոխառյալ բաղադրատարրերը: Ուսումնասիրվող բառերի կազմությանը մասնակցում են ինչպես *-ական, -ություն, -ային, -ում, -ակ, -իք, -իկ, -ույթ, -ք, -ան, -իչ, -ոց, -արան, -ավետ, -անք, -բան, -ող* (ազրոքիմիական, էկոլոգիական, ազրոգիտություն, էկոդատախազություն, ազրոկուրային, էկոտարածաշրջանային, ազրոձեռնարկում, էկոզադուլթացում, ազրոխմբակ, էկոտնակ, ազրոտեխնիկ, էկովառեիք, էկոզբոսաշրջիկ, էկովձակույթ, ազրոհանք, էկովթերք, ազրոշրջան, ազրոչափիչ, էկոգրիչ, ազրոդպրոց, էկոարգելոց, ազրոդասարան, էկոարդյունավետ, էկոարտադրանք, ազրոկենսաբան, ազրովերամշակող և այլն), այնպես էլ *-իա, -ացիա, -իկոս, -իստ, -իզ* օտար վերջածանցները (ազրոնումիա, էկոլոգիա, էնոլոգիա, ազրոմելիոբացիա, ազրոֆիզիկոս, էնոքիմիկոս, ազրոտուրիզմ, էկոտուրիզմ, էնոտուրիզմ, ազրոպրոպագանդիստ, էկոնոմիստ և այլն): Վերջիններս հայերեն համարժեք ածանցներին համապատասխան իմաստներ և գործառնություններ ունեն, ինչպես, օրինակ՝ գործողի կամ զբաղվող անձի (*-ող*-ի արժեքով՝ *-իկոս, -իստ*), բայանունների կամ վերացական անունների (*-իզ*մ, *-իա, -ացիա*) [23, 212]: Սակայն ինչպես նկատում է Գ. Ջահուկյանը, օտար ածանցները հայերենում իսկական բառակազմական արժեք ձեռք չեն բերել. այդպիսի արժեք նրանք կարող էին ձեռք բերել միայն այն դեպքում, եթե դրվեին հայերեն հիմքերի վրա և ստեղծեին բառակազմական յուրատեսակ ենթահամակարգ [23, 208]:

Իրենց կազմությամբ բազմազան են ուսումնասիրվող բառերը: Նոր բառերի կերտմանը մասնակցում են բառակազմական ձևույթները, որոնք ավելանում են բառի հիմքին՝ «լեզվական ցանկացած մակարդակի բաղադրյալ միավորի այն հատվածը, որը մնում է, երբ նրանից անջատում ենք այդ միավորի կազմության վերջին քայլում ավելացած բաղադրիչը» [6, 107]: Տարբերակվում են բառակազմական հիմքերի մի քանի տեսակներ՝ *պարզ* և *բաղադրյալ, փոփոխվող* և *չփոփոխվող, սերող* և *բաղադրող*⁵: Այս առումով մեր հետաքրքրության շրջանակներում են *սերող* և *բաղադրող* հիմքերը: *Սերող* հիմքին բառակազմական քայլով ավելանում է այլ հիմք կամ ածանց կազմելով նոր բառ, իսկ *բաղադրողը* ավելացող հիմքն է: Իբրև կանոն՝ բարդ բառերի աջակողմյան բաղադրիչը բաղադրող հիմքն է, իսկ ձախակողմյան հիմքը՝ սերող [2, 247-278]:

⁵ Հիմքերը կարող են լինել նաև *հավելատարային*: Այս դեպքում *n* ձայնավորի հավելումով կազմվում են **ազր(ո)-, Էկ(ո)-, Էն(ո)-** հավելատարային հիմքերը:

Բառակազմական քայլերի թիվը միշտ հավասար է հիմքին հավելված իմաստակիր բաղադրիչների թվին, այսինքն՝ իմաստակիր բաղադրիչների ընդհանուր թվին՝ հանած (-, մինուս) 1 (հիմքը) [6, 113], [27, 283-284]: Դիտարկենք մի քանի օրինակների բառակազմական քայլերը՝ ըստ արդի լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքի.

ագրոկանոն, էկոլորտ՝ (ագր/ո) (կանոն), (էկ/ո) (ոլորտ) – մեկ քայլ,

ագրոժամկետ, էկոադրաման՝ (էկ/ո) [(ադր) (աման)], (ագր/ո) [(ժամ) (կետ)] – երկու քայլ,

ագրոհողագիտություն, էկոդատախազություն՝ (ագր/ո) [(հող/ա) (գիտ)]ություն, (էկ/ո) [(դատ/ա) (խազ)]ություն – երեք քայլ,

ագրոդասընթացավար՝ (ագր/ո) [(դաս) (ընթ)աց/ա]վար – չորս քայլ,

ագրոդասընթացավարային,

ագրոքադասընթացություն՝ (ագր/ո) [(դաս) (ընթ)աց/ա]վարային, (ագր/ո) [(քադաք/ա) [(ընակ)չ]ություն]) – հինգ քայլ:

Հետաքրքիրն այն է, որ **ագր(ո)-**, **էկ(ո)-**, **էն(ո)-** սկզբնաբաղադրիչներով կազմություններում օրինաչափությունը խախտվում է. որպես բաղադրող հիմք՝ դրանք գործածվում են ձախակողմյան հատվածում:

Մի քանի բառերում **էկո(ո)-** բաղադրիչն ունի բառամիջյան գործածություն՝ *ջրաէկոհամակարգ, մեզոէկոհամակարգ, միկրոէկոնոմիկա, մակրոէկոհամակարգ, տնտեսաէկոլոգիական, լանդշաֆտաէկոլոգիական*: Այստեղ այն աջակողմյան սերող հիմքում է, իսկ **ագր(ո)-** և **էկո(ո)-** բաղադրիչների համադրությամբ կազմված *ագրոէկոլոգիա, ագրոէկոնոմիկա* բառերում **ագր(ո)-**ն ձախակողմյան բաղադրող հիմքում է, **էկո(ո)-**ն՝ աջակողմյան սերող:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ **ագր(ո)-**, **էկ(ո)-**, **էն(ո)-** սկզբնաբաղադրիչներով կազմություններում սերող և բաղադրող հիմքերը կարող են փոխել իրենց տեղերը:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունից ելնելով՝ հանգում ենք հետևյալին՝

- **ագր(ո)-**, **էկ(ո)-**, **էն(ո)-**օտար բաղադրատարրերով կազմությունները մեծապես նպաստում են գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի համալրմանը, ցույց տալիս այդ բառապաշարի զարգացման և կատարելագործման միտումները, որոնք գործածվում են նաև հարակից բնագավառներում՝ ստեղծելով միջգիտակարգային տերմինա-համակարգեր,
- թեև նշյալ բաղադրիչներն ունեն հայերեն տարբերակներ, բայց երբեմն զուգահեռաբար գործածվում են դրանցով կազմությունների հայերեն և օտար ձևերը,
- **ագր(ո)-** բաղադրիչով բառերը ներկայումս հայերենացվելու փուլում

են, **ԷԿ(ո)**-ով կազմությունների գործածությունը ակտիվացել է լեզվում, քանի որ հաճախակի է դարձել այս կամ այն առարկան, երևույթը, իրողությունն արտահայտել **ԷԿ(ո)**- բաղադրիչի հավելումով, իսկ **ԷՆ(ո)**-ով կազմություններն ավելի քիչ են՝ պայմանավորված գյուղատնտեսության համեմատաբար երիտասարդ ոլորտ լինելով:

- **ագր(ո)-, ԷԿ(ո)-, ԷՆ(ո)-** բաղադրիչներով բառերը կազմվում են ածանցման (հայերեն և փոխառյալ բաղադրատարրերով) և բառաբարդման եղանակով,
- բառակազմական մեկ կամ մի քանի քայլերով կազմվող **ագր(ո)-, ԷԿ(ո)-, ԷՆ(ո)-** սկզբնաբաղադրիչներով բառերում սերող և բաղադրող հիմքերը կարող են փոխել իրենց տեղերը,
- տերմինային նորակազմությունների մի մասը բառարանային գրանցում չունի և կարող է նպաստել տերմինային նոր (ինչպես նաև՝ միջգիտակարգային տերմինների) բառարանների կազմման աշխատանքներին:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-38>

Գրականություն

1. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, 1616 էջ:
2. Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1984, 372 էջ:
3. Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, 736 էջ:
4. Աճառեան Հ. Հ., համառոտ.՝ Մինասեան Մ. Գ., Հայերեն ստուգաբանական առձեռն բառարան, Ժնև, 2004, 295 էջ:
5. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1973, 981 էջ:
6. Գալստյան Ս. Ա., Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 196 էջ:
7. Էլոյան Ս. Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատ., 2002, 492 էջ:
8. Թեյլան Լ. Գ., Բառապատճենումներն արդի հայերենի բառապաշարում // «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» հոդվածների ժողովածու, Երևան, 2020, էջ 94-104:
9. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, 1969, 601 էջ, հ. 2, 1972, 719 էջ:

10. Խլղաթյան Ֆ. Հ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Երևան, «Հայաստան» հրատ., 1982, 168 էջ:
11. Հայրապետյան Ա. Պ., Օտար բառերի առձեռն բառարան, Երևան, «Գրիգոր Տաթևացի» հրատ., 2011, 708 էջ:
12. Հայրապետյան Ֆ. Փ., Գոյապահպանություն, Հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, Երևան, Հեղինակային հրատ., 2007, 246 էջ:
13. Հացագործյան Զ. Ա., Ասլանյան Ս. Ա., Միջազգային տերմինային տարրերի ռուս-հայերեն բառարան, Երևան, ՀԻՄՀ ԳԱ հրատ., 1989, 104 էջ:
14. Մալխասեանց Ստ.Ս., Հայերեն բացատրական բառարան, Երևան, ՀՄՍՌ պետ.հրատ., հ. 1, 1944, 638 էջ, հ. 2, 1944, 517 էջ:
15. Մարտիրոսյան Ա. Ռ., Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2007, 234 էջ:
16. Նոր բառեր. Ա պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 196 էջ:
17. Նոր բառեր. Բ պրակ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2016, 184 էջ:
18. Նոր բառեր. Գ պրակ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2017, 243 էջ:
19. Նոր բառեր. Դ պրակ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2018, 172 էջ:
20. Նոր բառեր. Ե պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 175 էջ:
21. Նոր բառեր. Զ պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 221 էջ:
22. Նոր բառեր. Է պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 260 էջ:
23. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀԻՄՀ ԳԱ հրատ., 1989, 319 էջ:
24. Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ» հրատ., 2010, 820 էջ:
25. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Երևան, ՀՄՀ գլխ. Խմբ. հրատ., 1988, 672 էջ:
26. Սարգսյան Ս. Ա., Խաչիբաբյան Ն., «Կորոնա» բաղադրիչով նորակազմ բառերի քննություն // Լեզու և լեզվաբանություն, Երևան, 2021, հմ. 1(24), էջ 69-74:
27. Սուքիասյան Ա. Ս., Սուքիասյան Ք. Ա., Ֆելեբյան Մ. Հ., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 462 էջ:
28. Տեր-Ղազարեան Ա., Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի եւ գործածութեան մէջ մտած մտքերի ու դարձածքների, Թիֆլիս: «ԷՊՕԽՍ» հրատ., 1908, 308 էջ:
29. Ֆելեբյան Մ. Հ., Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնական միտումները // «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» հոդվածների ժողովածու, Երևան, 2020, էջ 120-139:

30. Герасимов М. А. Технология вина. М.: Картонажная фабрика, 1959, 642 с.
31. https://hy.wikipedia.org/wiki/Էվիլ_Պիեկնո#cite_ref-decaobit_2-0 (նիսվել է 07.02.2023)
32. <https://motherhouse.ru/hy/apartments-for-sale/veselyi-scenarii-na-novogodnii-korporativ-novogodnii-korporativ/> (նիսվել է 11.02.2023)
33. <https://www.bizratings.online/listing/agro-mash-agricultural-equipment/> (նիսվել է 12.03.2023)
34. <https://www.fastbank.am/ազրն-ֆաստ> (նիսվել է 12.03.2023)
35. <https://www.martuni.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=505#.ZBxm m3ZByUk> (նիսվել է 12.03.2023)
36. <https://banks.am/am/lending/CARD-AgroCredit> (նիսվել է 12.03.2023)
37. <https://www.spyur.am/am/companies/agro-master/37495> (նիսվել է 15.03.2023)
38. <https://www.azdarar.am/announcments/cat/278/00945795/> (նիսվել է 15.03.2023)
39. <https://www.spyur.am/am/companies/zulal-agro/50343> (նիսվել է 15.03.2023)
40. <http://www.mnp.am/announcement/public-reviews/3828> (նիսվել է 15.03.2023)
41. <https://areg.biz/firms/?id=16693&lng=am> (նիսվել է 15.03.2023)
42. <https://www.spyur.am/am/companies/eco-fruit/34785> (նիսվել է 16.03.2023)
43. <https://www.bizratings.online/listing/ecotaown-am-ecotaownam/> (նիսվել է 16.03.2023)
44. <https://www.azdarar.am/announcments/org/52/00721664/> (նիսվել է 16.03.2023)
45. <https://landofnoah.com/hy/hotel/harsnadzor-eco-resort> (նիսվել է 23.03.2023)
46. <http://www.hayary.org/wph/?m=201311> (նիսվել է 16.03.2023)
47. <https://enosoul.am/> (նիսվել է 16.03.2023)

Слова с иноязычными словообразовательными элементами

agr(o)-, эk(o)-, эн(o)- в армянском языке

Армине Мкртумян

Резюме

Ключевые слова: лексикология, термин, сельскохозяйственные науки, инновации, кальки, полукальки, словообразовательная модель

Сегодня сельское хозяйство находится на подъеме. Создаются сельскохозяйственные подотрасли и специальности; следовательно, возникают понятия, для которых создаются новые слова. Слова с иноязычными словообразовательными элементами *agr(o)-, эk(o)-, эн(o)-* способствуют пополнению сельскохозяйственной научной лексики, создавая междисциплинарные терминологические системы. Словообразовательный элемент *agr(o)-* употребляется в армянском языке в качестве компонента сложных слов со значениями *село, земля; эk(o)- дом, родина, существование, эн(o)- вино*. Лексика армянского языка постоянно пополняется новыми терминами с элементами *agr(o)-, эk(o)-, эн(o)-*. Иногда для них создаются соответствующие армянские эквиваленты, однако освоение этих слов армянским языком – процесс сложный. *Ագրոմիինիւնիւմ, ագրոմիւրիւնիւմ, էկոսրիւնիւպրստ, էկոբրիկետ, էնոլոգ, էնոլոգիա* и другие подобные слова являются заимствованиями. Не исключено, что они будут арменизированы путем полного или частичного калькирования. *Ագրոնոմիա – գյուղատնտեսություն, ագրոկոմպլեքս – ագրոհամալիր, էկոնոմիստ – տնտեսագետ, էկոնոմիկա – տնտեսություն, էկոստորիզ – էկոգրուաշրջություն* другие армянские варианты в парах слов можно считать удачными, они «победили в битве» с иноязычным эквивалентом. Подобная тенденция наблюдается и в словах *էնոլոգ – գինեգետ, էնոլոգիա – գինեգիտություն, էնոբիւիա – գինեբիւիա, էնոստորիզ – էնոգրուաշրջություն – գինեգրուաշրջություն*. Анализ выпусков 1-7 словаря «Новые слова» позволяет заключить, что на современном этапе развития языка указанные словообразовательные элементы образуют слова-полукальки: *ագրոլրատու, ագրոշուկա, էկոանձնագիր, էկոգյուղ, էկոլուր, էկոգինի* и т. д. Есть немало примеров использования в интернет-ресурсах подобных слов, еще не закрепленных в словарях: *ագրոսյոգի, ագրոբարիք, ագրոդասարան, ագրոգրույց, էկոկաշի, էկոհղիություն, էկոբնիթիք, էնոլոգ, էնոլոգիա, էնոգաստրոնոմիա* и др.

Word Formation with the Foreign Compounds

agr(o)-, ec(o)-, en(o)- in Armenian

Armine Mkrtumyan

Summary

Key words: *vocabulary, term, agricultural sciences, innovation, loan translation, partly loan translation, lexical form*

Today, agriculture is booming. Agricultural sub-branches and specialties are being created; consequently, concepts arise to describe and characterize new words. The formations with foreign compounds *agr(o)-, ec(o)-, en(o)-* contribute to the enrichment of agricultural scientific vocabulary, used in agriculture and related spheres and create interdisciplinary terminological system. In Armenian the *agr(o)-* compound is used as a *component of a compound word* or in the sense of *village, land*, while *ec(o)-* in the sense of *home, homeland*, and *existence*, and *en(o)-* *wine*. New words and terms with compounds *agr(o)-, ec(o)-, and en(o)-* are constantly entering the vocabulary of our language. Sometimes corresponding Armenian words are created for them, although it is not so easy to make Armenian terms. Due attention must be paid to the peculiarities and characteristics of the sphere. *Ագրոմինիմուն, ագրոմաքսիմուն, էկոտրանսպորտ, էկոբրիկետ, էնոլոգ, էնոլոգիա* and etc. are loanwords. It is not beyond the realm of possibility that one day they may be armenianized by semantic borrowing or partly loan translation. *Ագրոնոմիա – գյուղատնտեսություն, ագրոկոմպլեքս – ագրոհամալիր, էկոնոմիստ – տնտեսագետ, էկոնոմիկա – տնտեսություն, էկոտուրիզմ – էկոզբոսաշրջություն* and other Armenian versions of word pairs can be considered as acceptable, as they have won the battle between a foreign analog and its Armenian equivalent. The same trend is also observed in the following words *էնոլոգ – գինեգետ, էնոլոգիա – գինեգիտություն, էնոքիմիա – գինեքիմիա, էնոտուրիզմ – էնոզբոսաշրջություն -գինեզբոսաշրջություն*. The analysis of “New Words” dictionary, issues 1-7 shows that at the current stage of the language development, the abovementioned compounds form words by partly loan translation, e.g. *ագրոլրատու, ագրոշուկա, էկոանձնագիր, էկոգյուղ, էկոլուր, էկոգինի* and etc. There are also examples of the use of similar words in Internet, which haven’t been included in dictionaries yet. For example, *ագրոայգի, ագրոբարիք, ագրոդասարան, ագրոզբույց, էկոկաշի, էկոհիթություն, էկոբնութիք, էնոլոգ, էնոլոգիա, էնոգաստրոնոմիա* and etc.

Ներկայացվել է 09.04..2023 թ.

Գրախոսվել է 13.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Պարսկական փոխառությունները միջին հայերենում

Թերեզա Շահվերդյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-53>

Հանգուցային բառեր. բառապաշարի հարստացման արտաքին միջոց, ուղղակի և միջնորդավորված բառային թափանցումներ, թափանցումների հաճախականություն և ոլորտներ, համանունները՝ հայերեն-պարսկերեն և պարսկերեն-այլ լեզուներ

Նախաբան

Համահայկական բառապաշարի կարևորագույն բաղադրամասերից մեկը միջինհայերենյան շերտն է: Մեր նպատակն այդ շրջանին նվիրված երկհատորանոց բառարանում ամփոփված քանակով ամենաձավալուն փոխառությունների քննություն է: Պարզվեց, որ պարսկական ծագում ունեցող բառապաշարը թեև զգալի է, սակայն զիջում է արաբականին: Մեր խնդիրն է պարզել, թե ինչպես են հայտնվել պարսկական փոխառությունները՝ ուղղակիորեն և, թե՞ միջնորդավորված, պարզել միջնորդ լեզուների առնչությունները հայերին և պարսիկներին՝ հենվելով այն աղբյուրների լեզվական ատաղձի վրա, որոնց հիմքով են կազմվել բառարանները: Տեսականորեն հետաքրքրական են համանունները, սրանց ծագումը, գործնականորեն՝ այդ բառերի կազմությունները, հատկապես ո՞ր ոլորտին են վերաբերում դրանք: այդ հարցերի մի մասը կներկայացնենք այսուհետ:

Հոդվածի բովանդակությունը

Միջին հայերենի շրջանում հայոց լեզվի բառապաշարը հարստացել է բազմաթիվ նոր բառերով. դրանց մի մասը կերտվել է բառապաշարի հարստացման ներքին միջոցներով՝ սեփական բառակազմական տեխնիկայով կամ բառապատճենումներով, մի մասը թափանցել է փոխառություններով: Միջին հայերենի բառաքննությամբ տարբեր մոտեցումներով զբաղվել են բազմաթիվ գիտնականներ ու տարբեր արդյունքներ արձանագրել: Մույն հոդվածում փորձել ենք միջին հայերենի երկհատորանոց բառարանից [3; 4] առանձնացնել փոխառյալ բառեր, ճշտել դրանց թիվը, կազմությունը, հիշատակված աղբյուրների ժամանակաշրջանը, գործածության ոլորտները, նպատակները, անհրաժեշտության շարժառիթները, դրանց համանունները, համարժեքների առկայությունը, հնչյունափոխական օրինաչափությունները, տառադարձումները, երբեմն նաև տրվել են անհրաժեշտ բացատրություններ՝ մեր կարողությունների սահմաններում: Սակայն քանի որ վերոբերյալ հարցերի քննությունը ծավալուն է, և հնարավոր չէ մեկ հոդվածի սահմաններում սպառել, ուստի կներկայացնենք երկու հոդվածներով:

Միջին հայերենում փոխառություններ են կատարվել բազմաթիվ լեզուներից՝ արաբերենից՝ **Ախմախ** (արաբ.) – Հիմար, տխմար, տգետ, անմիտ: Խելքդ է ախմախ, միտքդ է մոլոր, ետքդ կերթայ զինչ ջաղցի սոր (ՀՄՀ, 342), պարսկերենից՝ (**Ակիշ** (պարս.) – Կրակխառնիչ: Ակիշ մի տաքացո՛ւ և պախրեի ճրագու կաթեցո՛ւ ի վերայ (ԳՎ, 213), թուրքերենից՝ (**Բարիշել** – «հաշտվել, խաղաղություն»: Բայց ինքեանց ոչ բարիշեցին, այլ մին զմիսն փախուցին (ԳԽՅ, 19), հունարենից՝ **Դիալտիկոս**- (հուն.) Տրամախոս: Քերթողն խօսի, դիալտիկոսն տրամաբանէ (ՅՔՅՔ. 193)), լեհերենից՝ **Աբելացիա**, արելացիա (լեհ. apelacja<լատ.appelatio (իրավ.) – Վճռաբեկ գանգաու: Եւ դատաստանն եթող զայս արելացիան մինչն Բ (2) շաբաթ (Կամ. Արձ. 223), լատիներենից՝ (**Ադվոգայթ** (լատ.), գ. Փաստաբան: Սա նախ ադվոգայթ էր, որ է ճարտասան (ՄԼԳԳ, 65, իտալերենից՝ **Գունդուստապլ**, **գունդուստապլ** – Սպարապետ, ավագ իշխան: Տու ք պատիւ անուանց ամիրայ... և մի՛ սիր, և պրօքսիմոս, գունդուստապլ, և մարաջախտ (ՆԼ, թղթ., 234-235), ֆրանսերենից՝ **Բրինձ 2** – Իշխան, իշխանորդի, թագածառանգ: Կործանեցաւ և աթոռ բրնձին և պատրեարգին, որ փոխեցաւ ընդ յԱնտաքու (ՄԺ, Ա, 49), գերմաներենից՝ (**Դայլառ**, **դայլար** – Արծաթե դրամ: Եւ Խաչքոն ճուար ետուր, թէ պարտ եմ նմա ԼԵ (35) դայլառ: Եհան ինձի ԿԴ (64) դայլարի ապրանք (Կամ. արձ., 216, 97), եբրայերենից՝ **Բեհեմովթ** (հին եբր.) – Գետաձի: Լկիաթանաւ որ ի ջուրս, և բեհեմովթան որ ի ցամաքային անապատս (ՎՊՏ, 6), ասորերենից՝ **Բուտ 1** (կրոն.) – Հոգևոր տեսուչ՝ վերակացու, եկեղեցական վերատեսուչ: Գիտելի է, զի քորեպիսկոպոս երկու են, մի ձեռնադրեալ և մի՛ ոչ. և պերետուտ է, որ այժմ է բուտ (ՄԳԴ, 88), ուկրաիներենից՝ **Զքադերդ** – Սփռոց, սուփրա: Դ (4) զքադերդ, չթուքայ և կէս ձվելէիս (Կամ. արձ., 287), թաթարերենից՝ **Արդուչի** – Դատավոր: Իսկ եկեալ արդուչացն հրամանաւ Մանկու գանին, արարին մեծ խուռութայ (ՄԱՊ, 29), մոնղոլերենից՝ **Արքայուն**, **արքաուն** – Քրիստոնյա: Ասացի թէ, զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն հետ քեզ լաւ են (ՎՊՏ, 207), վրացերենից՝ **Ղեղայ** – Մայր: Զի յիշատակ սա ինձ լիցի, և ծնողացն իմ գովելի՛ Աղա-Սուլդան անուն կոչի, ու մօրն իմ դեղայ մեծ Թուխթէնի (ԺԵ հձհ, Ա, 409), ռումիներենից՝ **Բրքալապ** – Բերդապահ: Եւ Թորոսն ճուար իտուր, թէ գնել է Անտրօնիկ բրքալապէն, դոր և փրկալապին մոհր այլ կա այն եղին վերայ (Կամ. արձ., 308):

Բառարանի հեղինակները գրում են. «Բառարանի հիմքում ընկած է միջին գրական հայերենի այն բառամթերքը, որն ընդգրկում է 12-16-րդ դարերի, մասամբ էլ 17-րդ դարի ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված բառերը, ոճերն ու դարձվածքները, որոնք ձևախմաստային առումով բնորոշ չեն գրաբարին և ընդհանրապես չեն հանդիպում 5-11-րդ դարերի մատենագրության մեջ: Բացի այդ, բառարանում որոշակի տեղ է հատկացված մատենագրությամբ չվկայված կամ գրավոր անհայտ հուշարձաններում գործած-

ված այն բառերին, որոնք արձանագրված են միայն միջնադարյան հին ձեռագիր բառարաններում» [3, 3]:

Փոխառությունները կատարվել են տարբեր հաճախականությամբ ու ակտիվությամբ. հատկապես մեծ թիվ են կազմում արաբական, պարսկական, թուրքական, հունական փոխառությունները, որովհետև հայերը միջնադարում գերազանցապես առնչվել են այդ լեզուները կրող ժողովուրդների հետ, և փոխառությունները անուղղակիորեն պարտադրված են եղել:

Պարսկական փոխառություններն, ըստ իմ կատարած վիճակագրության, արաբական փոխառություններից հետո ամենահաճախադեպն են: Դրանց թիվը հասնում է 1773-ի, սակայն այդ բառերը միանշանակ ուղղակիորեն պարսկերենից չեն փոխանցվել, այլ նաև միջնորդավորված՝ հատկապես արաբերենի և թուրքերենի միջոցով: Ուղղակիորեն պարսկերենից կատարված փոխառությունների թիվը 1020 է (ուղղակիորեն պարսկերենից փոխանցված բառերը տե՛ս վերջում), հին պարսկերենից՝ պահլավերենից, միջին հայերենին է անցել ևս 22 բառ. այդ մասին բառարանի հեղինակները կասկած են հայտնում՝ պարսկակա՞ն են, թե՞ ոչ: Հատկապես մեծ թիվ են կազմում արաբերենի միջոցով պարսկական փոխառությունները՝ շուրջ 400 բառ: Շատ են նաև պարսկերեն-թուրքերեն փոխառությունները. դրանց թիվը 95 է: Պարսկերեն-արաբերեն փոխառությունների թիվը կազմում է 4 բառ: Թուրքերեն-պարսկերեն՝ 19 բառ, «հավանաբար» պարսկերենից՝ 24:

Եռալեզու փոխառությունների պատկերը հետևյալն է՝ պարսկերեն-արաբերեն-թուրքերեն՝ 2, արաբերեն-պարսկերեն-թուրքերեն՝ 94, արաբերեն-թուրքերեն-պարսկերեն՝ 28, թուրքերեն-արաբերեն-պարսկերեն՝ 1:

Հետաքրքրական են ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանի դիտարկումները միջին հայերենի պարսկական փոխառությունների վերաբերյալ. «Գրաբարի իրանական բառաշերտը որակապես տարբերվում է միջին հայերենի (նաև հայ բարբառների) իրանական բառաշերտից: Վերջինս միշտ էլ գիտակցվել է օտար, գրկված լինելով լեզվում արմատավորվելու կենսունակությունից, չի ժառանգվել նաև արդի հայերենին... տարբեր են նաև գրաբարի և միջին հայերենի իրանական փոխառությունների աղբյուրները: Վերջինների փոխառության աղբյուրը նոր պարսկերենն է» [2, 5-6]:

Մեր ուսումնասիրություններից պարզվեց, որ միջինհայերենյան պարսկական փոխառությունների աղբյուրիկ շերտ կա նաև արդի արևելահայերենում, իսկ Լոռու խոսվածքում այն արդեն որակ է կազմում. սրան կանդրադառնանք հաջորդ հրապարակման մեջ:

Կան պատահական մի քանի փոխառություններ՝ թաթարերեն-պարսկերեն՝ 1, թաթարերեն-արաբերեն-պարսկերեն՝ 1, մոնղոլերեն-պարսկերեն՝ 1:

2. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» առաջին մասում [1, 221-222] հայերենի և իրաներենի նման բառերը բաժանում է 4 խմբի.

1. բառեր, որոնք հայերենը և իրաներենը հավասարապես ժառանգել են մայր լեզվից՝ հայր, մայր, տասը,
2. բառեր, որոնք հայերենը փոխ է առել պարսկերենից՝ սպարապետ, իշտրմուղ (ջայլամ): 1-ին և 2-րդ խմբի բառերը ճշտելու ամենաստույգ միջոցը ձայնական օրենքներն են. այսպես, օրինակ, նախալեզվյան *b*, *d*, *g*, *g* դառնում են՝ հայերենի մեջ՝ *պ*, *տ*, *ծ*, *կ*, իրաներենի մեջ՝ *b*, *d*, *z*, *g/j*,
3. բառեր, որոնք 2 լեզուներն էլ փոխ են առել մի 3-րդ աղբյուրից՝ աճպարար. արմատը ստուգաբանվում է տվյալ արմատով՝ աճպ-ն արաբական արմատ է,
4. բառեր, որոնք պարսկերենը փոխառել է հայերենից՝ բարեկենդան, աղյուս (հիշում եմ՝ խաչքար, շանորդի): Բնարկե, այս բառերը պետք է ստուգաբանել հայերենով:

Յր. Աճառյանը գրում է. «Իրանյան բառերի մի մասը օտար ծագում ունի... մենք այդ բառերը բնականաբար պիտի դնենք իրանյան փոխառությունների շարքում, որովհետև իրանյանների միջոցով են անցել մեզ և իրանյան ձև ունեն» [2, 304]:

Հայտնի է, որ *ձ*, *ծ*, *ջ*, *ճ* հնչյունները մայր լեզվից հնդեվրոպական ոչ բոլոր լեզուներն են ժառանգել: Հայերենի եռաստիճան բաղաձայնական համակարգի պայթաշփական հիշյալ հնչյունների առկայությունը Ղափանցյանը բացատրում է կովկասյան լեզուների ազդեցությամբ, Աճառյանը գտնում է, որ մայր լեզվից են անցել: Հավանաբար տարբեր լեզուներում դրանց հանդես գալու-չգալու հաճախականությունը տարբեր պատկեր ունի: Մեր ուսումնասիրություններում *ծ*, *ձ* հնչյուններով պարսկական փոխառություններ չկային, ձ և ջ հնչյուններով հանդես են գալիս ստորև բերված հետևյալ բառերը:

Ճահիլ, ճահար-ճամ- ճամազի-ճամիզ-ճամսաֆրամ-ճան, նան՝ ջան, ճանգ-ճապալի-ճապեստան, ճապստան, ճառահ, ճառահաթ, ճառայ, ճավզ, ճավզի սարվ, ճավզպե, ճավզպուե, ճատվար, ճարսպ, ճարատ, ճարճիր, ճերկայ, ճէնկ, ճէպ, ճէվզայ, ճէտի, ճրտամ, ճիկար, ճիհան, ճիվան, ճիտ, ճլե, ճնդպատասթ, ճոկան, ճոհար, ճուաքքար, ճուլսպ, ճուլիայ, ճուլինար, ճուլպան, ճուղսպ, ճունուն, ճուտայ, ճօհահիր, ճօշիր, ճօր:

Չաբորն, ջազայ, ջահանգիր, ջհանգիր, ջհիհանգիր, ճիհանկիր, ջահրա, ջաղջեր, ջամահաթ, ջամիհաթ, ջումիհաթ, ջան, ջանդար, ջանդիանե, ջանիշին, ջապիւր, ջատու, ջաւշիր, ջօշիր, ջաֆայ, ճաֆար, ջեւէլի, ջիլայու, ջող, ջոմախ, ջուալ, ջուլի ակ, ջուլունակ, ջուլիտ, ջուպայ, ջվալախի, ջրմի, ջրիխ:

Հայտնի է, որ մինչև 12-րդ դար հայերենը ֆ հնչյուն չի ունեցել, հետևաբար ֆ-ով բոլոր բառերը ստույգ փոխառություններ են: Ահա դրանք.

Ֆազայ, ֆաթիս, ֆաթր ասալիոն, ֆաթրասալիոն, ֆալաք, ֆէլէքֆ ալիճ, ֆախատ, ֆախրի, ֆաղթ, ֆաղտ, ֆայունիա, ֆառահ, ֆառայ, ֆառաշ,

Ֆարադաթ, ֆարանճամուշկ, ֆարասիոն, ֆարգհանդայ, ֆարխութզին, ֆարման, ֆարսախ, ֆարսահ, ֆարսանկ, ֆարսի, ֆարտ, ֆարֆիզ, ֆարֆիոն ֆարֆիր, ֆաքհայ, ֆետայ, ֆերրֆուռ, ֆել, փել, ֆրս, ֆրսուս, ֆիլ, ֆիլի, ֆիդան, ֆեդան, ֆդան, ֆրդան, ֆինջան, ֆլուս, ֆլֆուլ, ֆնտու, ֆնտուխ, ֆուլան, ֆուվախ, ֆոանկ, ֆոանկի, ֆտուլ, ֆրիաթ, ֆրիատ, ֆրիադ, ֆրեեաթ, ֆերեաթ, ֆերեադ, ֆրրաթ, ֆրրիաթ, ֆրիսայի:

Հայտնի է նաև, որ Մեսրոպ Մաշտոցը **օ** գիր չի ստեղծել, այն հետագայում փոխարինել է **աւ** երկբարբառին: Միջին հայերենում օ-ով հանդես են գալիս մի քանի բառեր: Դրանք են՝ **օլուֆայ, օշնա(յ), օշնան, օրդու:**

Մտղենա Մուրադյանը գրում է. «Միջին գրական լեզուն վկայում է դասական հայերենին անձանոթ շուրջ 600 իրանական բառեր՝ մեծ մասամբ նոր պարսկերենից եկող, ինչպես և պահլավերեն, զենդերեն հնագույն բառաձևեր, որ գրաբարի մատենագրությամբ չեն ավանդվել երբեմն պատահականորեն, երբեմն բարբառային և ոչ ընտիր դիտվելով» [5, 224-236]:

Համեմատելով «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» գրքում Մ. Մուրադյանի հիշատակած բառերը՝ նկատեցինք, որ նրանց մի մասը չկա միջին հայերենի բառարաններում:

Դրանք են՝ բույսեր – *ագատրախտ, ապրուր, ասպրամ, եղրեանի, գրիշկ, թաթրայ, թիթում, լալա, լալագար, խարաք, խերպուե, խուռամ, կնճիթ-կոկան, համիշաբանար, մահդանակ, մարանճու, մեխակ, չուքագ, պեհման, տնտար, տիտար:*

Կենդանիներ – *ըռուպահ, թեքե, թութակ, իշարմուղ, կաչաղակ-ղըրմըզ, ճուռակ, փալանիկ:*

Բնություն – *քեմար, աթաշ, սայտ, հրուանդան:*

Մարդ – *խալ:*

Պետություն, տիտղոս, պաշտոն – *խարան, ազտիհ, արգբեդ, դեհկան, քարգոն, քետխուտայ, մեծավոր, բաճղար:*

Պատերազմ, զենքեր – *ջոկ, սալար, ուրգահ, բահլիկ, ճաւշանիռու, նախմ, նաղմ, նաճակ, յաղել:*

Կրոն. – *դրուժ* (ավանդվել է հին պարսկերենից, Դրուջ աստծո անունն է, որից հայերենում մնացել են դրժել, ուխտադրուժ, դրուժան բառերը):

Առևտուր, դրամ – *ման, խալվար, վաճիպ, սանկ, յոթնոց, նոյնադրամ, դահադրամ, ներհ:*

Հագուստ – *ամլուխտ, մուճակ, բազպան, պեչալ, պլուզ, սարքուլայ, քալափուշ, շարփուշ, մենթան, սեկեք:*

Զարդեղեն – *զըպա, շաւար, պատաշխանի, պատժախ, սեյլան:*

Տնային իրեր – *ապխոր, բդուկ, դաստապրիկ, թափուր, դաւայ, սենի, կանդիս, կար, նաճայ, խալի, փարդա, բոբ, ախեստ:*

Ուտելիք, ըմպելիք – *գրտակ, կուտապ, ման, մեվգա, խմիրե, շիրախուժ:*

լեղանգ, գէրտա, խոշկար, տինար, խոշապ:

Վիճակ, տրամադրություն – *բեռումէտ, բոշխնէլ, ռնտանայ, թօնի, ժիր, ռանջ, նիազիլ:*

Վարքագիծ – *ահոկ, դրուժան, իեադ, եադ, ջասուս:*

Հարաբերություններ – *խօշեար, համռահ, տրոն:*

Մասնագիտական բառեր. ա) Արվեստ – *բամբ, դարդաբայ, շաշտա, փէշակար, տաստան, ճուհի,* կա՝ *ջուհի,* որն, ըստ բառարանի, արաբական փոխառություն է՝ *խեղկատակ:*

բ) Շինարարություն – *գաճ, շէշխանայ:*

գ) Քիմիա – *գօլգօդար, դարվազայինէ, գառինայ, սպէտրոդ:*

դ) Բժշկություն – *բուսիտ ուստատ, բրին, գոնջ, ըռուշնայիայ:*

Գյուղատնտեսություն – *չեչ, քնփուշ, ֆրնտու:*

Արհեստ – *կոռգպէտ, ուսթայ, ռէնտէ, պարպար:*

«Միջին հայերենի բազմաբնույթ գրական հուշարձաններում պարսկերեն բառերի գործածությունը միշտ նույն հաճախականությունը չունի, կան հեղինակներ, որոնց լեզվում այդ փոխառությունները շատ չեն. Ն. Շնորհալի, Սմբատ Սպարապետ, Հէթում Պատմիչ, Ն, Պոլիենց, Խ. Կէչառեցի, Ա. Բաղիշեցի, հեղինակներ էլ կան, հիմնականում բանաստեղծներ, որոնց աշխարհիկ, հատկապէս սիրային ոտանավորներում պարսկերեն բառերը, անգամ ռճերը, բավականին մեծ տեղ ունեն. Կ. Երզնկացի, Մ. Նադաշ, Հ. Թլկուրանցի, Գ. Աղթամարցի, Ն. Հովնաթան. այս բանաստեղծների սիրային բանաստեղծությունները անշուշտ հորինվել են միջնադարում լայն ժողովրդականություն վայելող գուսանական արվեստի որոշ հետևողությամբ, մի արվեստ, որը լեցուն էր պարսկերենի տարրերով» [5, 230-231]:

Միջին հայերենի բառարաններից կատարված ուսումնասիրություններից պարզվեց, որ, իմ հաշվումներով, պատկերը այլ է: Այն հեղինակները, ովքեր ամենից շատ են գործածել պարսկական փոխառություններ, հանդես են գալիս հետևյալ հաջորդականությամբ. 81՝ Նահապետ Քուչակ, 67՝ Ամիրդովլաթ Ամասիացի, 45՝ Ժողովածոյք առակաց Վարդանայ, 40՝ Բառքիրք հայոց Ալիկօնայ, 39՝ Կոստանդին Երզնկացի, 38՝ Գրիգորիս Աղթամարցի, 29՝ Ամիրդովլաթ Ամասիացի, 25՝ Ֆրիկ, Դիւան, 23՝ Հովհաննէս Թլկուրանցի, 22՝ ԺԵ դարերի հայերեն ձեռագիր հիշատակարաններ (1955 թ.), 22՝ Մարտիրոս Ղրիմեցի, 22՝ Մկրտիչ Նադաշ, 21՝ ԺԴ դարերի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, 21՝ Մխիթար Հերացի, 20՝ ԺԵ դարերի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, 1967 թ., 20՝ Հայոց նոր վկաներ:

Բառարանում մեծ թիվ են կազմում համանունները՝ *այ, գազ, դայայ, դամ, դաստան, եադի, ըռահայթ, թայիթ, թանգ, թառ, թարկ, թուխթ, լայ, խան, խում, խուպ, խօլ, կուլ, կուլակ, հասայ, հիլայթ, հու, հումայ, դազալ, դայթրան, դալէ, դայիլայ, դայպ, դուպայ, ճուտայ, մայ, միլ, յատայ, նահանկ, նայիպ.*

նշտար, շահրի, շառ, շատնաճ, շարապ, շարաֆ, շիմշիր, շմաթ, շօր, ուղուր, չանկ, պահ, պահր, պաղի, պաս, պուկ, սագ, սալամ, սալայ, սահաթ, սաղ, սանտալ, սարայ, սուք, վատայ, տապաղ, տարպ, տարֆայ, փաս, փուռ, փուր, քալ, քամ, քան, քոս (70 բառ):

Համանունները առաջանում են տարբեր եղանակներով. դրանք կարող են լինել **համարմատ, տարարմատ, փոխառյալ և սեփական**: Համարմատ համանունները համեմատաբար քիչ են, ժամանակի ընթացքում սրանք միմյանցից հեռացել են, մեծ թիվ են կազմում սեփական՝ այսինքն՝ պարսկական-փոխառյալ՝ օտար լեզուներից, համանունները, որոնք անցել են հայերենին տարբեր ճանապարհներով: Այսպես՝ դրանք բառագույգեր են, երբեմն էլ եռանդամ են: Պատկերը հետևյալն է.

Հայերեն-պարսկերեն՝ **ալ**-ը միջին հայերենում **էլ** բառի հնչյունափոխված տարբերակն է, որը ուժգին շեշտով (Էդ. Աղայան) մակբայ է: Պարսկերենից փոխառնվել է երկու իմաստով. **ալ** – 2. (պրսկ. āl). առասպելական չար ոգի, 2. (պրսկ. al) – վառ կարմիր., **թուխթ** 1. (հայ.) – փաստաթուղթ, 2. (պրսկ. tuxt) – ծանրության չափ, **խօլ** 1 (պրսկ. gōl) – գումակ, 2. (հայ.) – գլուխ, հատված, **կուլ** 1. (հայ.) – կլանելը, կուլ տալը, 2. (պրսկ. gul, gol) – վարդ, **հու** 1. (պրսկ. hü) – թարախ, **հու** 2. հայ. ով, **նշտար** 1. (պրսկ. ništār, neštār.) – վիրաբուժական դանակ, 2. տե՛ս նշատիր, նաշադիր, **թառ** 1. (հայ.) – հավի թառ, 2. (պրսկ. tār) – դալար թարմ, պարսկերեն-հայերեն – **թախթ** 1. (պրսկ. taxt)-գահ, աթոռ, 2. (հայ. **թաղթ**) – բույս, թալ, **խուպ** 1(պրսկ. xub) – գեղեցիկ, 2. (հայ.) – կափարիչ, **նահանկ** 1. (հայ.) – նահանգ, երկրամաս, 2. (պրսկ. nāhāng) (կենդ.) – կոկորդիլոս, **շարաֆ** 1. (հայ.) – թարախ, 2. (արաբ., պրսկ. šaraf) – մեծություն, փառք, պատիվ, **շմաթ** 1. (պրսկ. šāmād) – սավան, 2. (հայ.) – եկեղեցու գմբեթի նեղ պատուհան, **չանկ** 1. (հայ.)-ճանկ, 2. (թուրք. çan) – զանգ, **պահ** 1. (պրսկ. bah) – սեռական հակում, 2 (հայ.)-մերթ, երբեմն, **պուկ** 1. պրկի (կզմխս.) – բուկ, կոկորդ, 2. (արաբ. buḡ, պրսկ. buḡ)-եղջերափող, շեփոր, **սալամ** 1. (կենդբ.) – թռչուն, սալամբ, 2. (արաբ., պրսկ. salām, թուրք. selām) – բարև, ողջույն, **փուռ** – 1. հաց թխելու հնոց՝ վառարան, 2. լաստ, 3. (պրսկ. por, թուրք pür.) – փարթամ, լիքը, **փուր** 1-կեղև, 2. (պրսկ. por, թուրք. (pür) – լի, լրիվ, **փուր** 1 – կեղև, 2. (պրսկ. por, թուրք.(pür) – լի, լրիվ, **քալ** 1. – քայլ, 2. (պրսկ. kāl) – ճաղատ, քաչալ, 3. (վր. khali) – կոչական բառ **քա**, **քամ** 1. – քամվածք, 2. (պրսկ.kām) – քիչ, նվազ, **քան** 1. (պրսկ. kan), 2. պես, նման, որպես:

Պարսկերեն-պարսկերեն՝ **Գազ** – 1. (պրսկ. gāz) – ծառ, թուփ, 2. (պրսկ. gaz) – երկարության չափ, **դամ** 1 (պրսկ. dam) – ցանց, ուռկան, 2. (պրսկ. dām) – ձայնակցություն, **խում** 1. (հայ.) – խմելը, 2. (պրսկ. xom) – զինու սափոր, **թանգ** 1. (պրսկ. tang)- ոսկու և արծաթի քաշի չափի միավոր, 2. (պրսկ. tang)- թամբակալ, **թառ** 1. (հայ.) – հավի թառ, 2. (պրսկ. tār)- դալար թարմ, **խան** 1

(պրսկ. xān) – տիտղոս, 2. (պրսկ. xān, xāna) – իջևանատուն, 3. (պրսկ. xān xvān) – ափսե, պնակ, **կուլակ** 1(պրսկ. kolale) – խոպոպիք, 2.(պրսկ. kolak) – գլխի գագաթին բոլորակ ածիլված տեղ, **ջօր** 1 (պրսկ. šur) – աղի, 2.(պրսկ. šur) – իրարանցում, **սազ** 1 (պրսկ. saz), պատշաճ, հարմար, 2. (պրսկ. saz) – երաժշտական գործիք:

Արաբերեն-պարսկերեն՝ **դալալ**- 1(արաբ., պարս. dāllal)-միջնորդ. 2. (պրսկ. dālal) նագանք, պչրանք, **դաստան** 1(պրսկ. dastan)-պատմություն, հեքիաթ, 2. (պրսկ. dāstan)-դավեր, խարդավանք **լալ** 1. (արաբ., la'l, պրսկ. lāl) – թանկարժեք քար, սուտակ, 2. (պրսկ. la)l- համր, **հասայ** 1. (արաբ. hissa, պրսկ. hesse)- մաս, բաժին, 2.(պարս. hasā) -հողի շաղախ ավազի և հարդի հետ, **դուպայ** 1, տե՛ս **կուպայ** (արաբ. gubba) – գմբեթ, 2 (պրսկ. ġuba) – (բժշկ.) – ցան, **շահրի** 1(արաբ. šahriyya) ազնվացեղ գրաստ, 2. (պրսկ. šahri) – քաղաքացի:

Պարսկերեն-թուրքերեն. թուրքերեն՝ **եադի** 1 (պրսկ., թուրք. yağl) - թշնամի, 2. (թուրք. yağ) – ձեթ, **շիմշիր** 1 (պրսկ. šāmsīr, թուրք. šamsīr)- լայն թուր, սուսեր, 2. (թուրք. šimsīr)-շիմշատ, **սաղ** 1 (պրսկ. sağ) (կզմխս.), -սրունք, 2. (թուրք. sağ))-ամբողջական, լրիվ, 3. (թուրք. siğ) – ծանծաղուտ, ավազուտ:

Արաբերեն-պարսկերեն. արաբերեն՝ ձեթ, **ռահաթ** 1-(արաբ. rayāt)- հպատակ, 2 (պրսկ., արաբ. rahāt) – մխիթարիչ, սփոփիչ:

Պարսկերեն-արաբերեն. պարսկերեն՝ **թարկ** 1 (պրսկ. tark)-բազմանկյուն իրի երես, 2. (արաբ, tark, պրսկ tār.k.) – թողնել, լքել, **դաթրան** 1(արաբ, gatrān, պրսկ. ġātran.) – կուպր, ձյութ, 2 (արաբ. gatrān)- ծառ, մայրի, **դալալ** 1 (արաբ. galb, պրսկ ġalb.) – կեղծած, 2 (արաբ. galb) – սրտի միս, **տարֆայ** 1 (արաբ. tarfa, tārāfa, պրսկ. tārfe) (բժշկ.) – աչքի արյունազեղում, 2. (արաբ. tarfa) (բւբ.)- ծառ, մոշավայրի:

Արաբերեն-պարսկերեն-արաբերեն-թուրքերեն՝ **հիլաթ** 1 (արաբ., պարսիկ. hilāt, hilat)- նենգություն, խարդավանք, **հիլաթ** 2, տե՛ս **հիլաթ** (արաբ. 'illat, թուրք. illet) – հիվանդություն, ցավ:

Պարսկերեն- թուրքերեն-արաբերեն-պարսկերեն՝ **հումայ** 1-(պրսկ. homa, homay, թուրք.hüma) – փյունիկ, դրախտահավ, **հումայ** 2 (արաբ. humma, պրսկ. homma) – (բժշկ.)- ջերմ, տենդ:

Արաբերեն-պարսկերեն-թուրքերեն. պարսկերեն-թուրքերեն՝ **դազալ** 1(արաբ. gazal, պրսկ. ġāzāl) – սիրերգ, 2. տե՛ս դազլ (թուրք kazel.), 3 (պրսկ.) ġazal (կենդր.)-վիր, 4 (թուրք. kazali)- վտանգավոր,

Արաբերեն-պարսկերեն-հունարեն-թուրքերեն. **դալե** 1(արաբ. gal'a, պրսկ. ġal'e)-բերդ, ամրոց, 2 (հուն. galeā, թուրք. gali) – առագաստավոր թիանավ,

Արաբերեն-թուրքերեն-պարսկերեն՝ **դալիլայ** 1(արաբ., թուրք. galya, պարսիկ. ġālye) – կերակրատեսակ, **դալիլայ** 2 (արաբ. galya, պրսկ. ġālye) (քիմ.) – կալաքար, **դալիլայ** 3 (պրսկ. ġālye) – օձանելիք:

Պարսկերեն-թուրքերեն-արաբերեն՝ **ճուտայ**, ջուտայ, ջուդայ 1 (պրսկ. joda, թուրք. jüda) – հեռացած, անջատ, **ճուտայ** 2. տե՛ս ճատե (արաբ. ja'da) (բւբ.) – բույս, խնկոդկուզակ:

Արաբերեն-պարսկերեն-թուրքերեն-թաթարերեն. **մալ** 1(արաբ., պրսկ., թուրք., mal)-հարստություն, ունեցվածք, 2. (թթր. mal) – խոշոր եղջերավոր անասուն:

Արաբերեն-պարսկերեն-թուրք. արաբերեն-պարսկերեն **յատայ** 1, յատար, ատապ, ատաբ (արաբ. azāb, պրսկ., թուրք. azap)-տանջանք, չարչարանք, 2 (արաբ, պրսկ. adab)-քաղաքավարություն, բարեկրթություն:

Արաբերեն-պարսկերեն. արաբերեն-պարսկերեն **նայիպ** 1 (արաբ. na'ib., պրսկ.nayeb), 2.(արաբ. nōba, պրսկ. noube **շարսայ** 1(արաբ., պրսկ. šarab (գինի, խմիչք) – մրգահյութ, օշարակ 2. (արաբ., պրսկ. šarābi (գինեխում), (բժշ.) – ջրգողություն, **տապագ** 1, (արաբ. tabag, պրսկ. tābāg) – պնակ, սկուտեղ, 2.(արաբ., պրսկ. dabbağ) –կաշեգործ:

Արաբերեն-պարսկերեն-հայերեն. **շար** 1(արաբ., պրսկ. šarr, šarr) – չարիք, վնաս, փորձանք. 2. (հայ.)-մուգ կարմիր, շառագ:

Արաբերեն-պարսկերեն-պահլավերեն. նոր պարսկերեն-արաբերեն **շատնաճ** 1(արաբ. šadana, պրսկ. šādne) – արյունաքար, կարմրաքար, **շատնաճ** 2, տե՛ս **շահտանաճ** (պհլ. šahdānak, նոր պրսկ. šah-dane, արաբ. šah-dāna), (բւբ.) – շնամեռուկ, հնդկականեփ, ույն:

Թուրքերեն-պարսկերեն- թուրքերեն. **ուրուր** 1 (թուրք. uğur) – բախտ, հաջողություն. 2. (պրսկ. թուրք. uyğur) – ուլդուրերեն,

Արաբերեն-արաբերեն՝ **պահր** 1 (արաբ. bahr), (բժշկ.) – բերանի տհաճ հոտ 2. (արաբ. bahr, պրսկ. bāhr) –ծով:

Արաբերեն-պարսկերեն-թուրքերեն **պաղի** 1(արաբ., bāgi, պրսկ. baği), մնացած, մյուս, 2. (թուրք. baği) – կախարդիչ, դյութիչ:

Հունարեն-պարսկերեն **պսպ** 1 (հուն. pappas)-կաթոլիկ եկեղեցու առաջնորդ, (պրսկ. bab) (կզմխս.) – ստամոքսաելք (Pylorus):

Արաբերեն- թուրքերեն-արաբերեն. պարսկերեն-թուրքերեն **սալայ** 1 (արաբ. sala, թուրք. sele)- զամբյուղ, կողով, 2. (արաբ, պրսկ., թուրք. sal ā (t)) – մահմեդականների աղոթք, **սալայ** 1 (արաբ. sala, թուրք. Sele:

Արաբերեն-պարսկերեն. պարսկերեն **սանտայ** 1 (արաբ. sandal, պրսկ. sāndāl) -մշտադալար ծառ, (պրսկ. sāndāl)-սանդալ, մուկ, ոտնաման:

Պարսկերեն-արաբերեն. **սուք** 1. (պրսկ. suk) – վիշտ, ցավ, 2. (արաբ. sük) - պատրաստուկ՝ բաղադրված բուժիչ և անուշահոտ տարրերից:

Արաբերեն-թուրքերեն-պարսկերեն. Պարսկերեն-արաբերեն՝ **սարայ** 1, տե՛ս սարահ (արաբ., թուրք. sar'a, պրսկ. sār'), (բժշկ.) – ընկնավորություն, 2. (պրսկ. sāray, sāra)-տուն, շենք:

Արաբերեն-թուրքերեն-պարսկերեն. արաբերեն, պարսկերեն՝ **վատայ**, 1

(արաբ., թուրք., պրսկ. vāde) – ժամկետ, պայմանաժամ, 2. անստույգ նշ. բառ, տե՛ս **վատահ** (արաբ. vad', vada', պրսկ. vādā'), խեցի (կակղամորթի), 2. քաղրիջան, սմբուկ:

Արաբերեն, արաբերեն, պարսկերեն՝ **տարայ** 1. (արաբ. darb) – զարկ, հարված, 2. (աղավաղված բառ), տե՛ս **սարայ** (արաբ. surb, պրսկ. sorb) – կապար, արձիճ, **փաս** 1 (պրսկ. pas,) – հարգ, պատիվ, 2. (թուրք. pas) – ժանգ:

Պարսկերեն-թուրքերեն՝ **փաս** 1 (պրսկ. pas,)-հարգ, պատիվ, 2.(թուրք. pas)-ժանգ, **քոս** 1(պրսկ.kus. թուրք. kös)- մեծ թմբուկ, 2.(թուրք.koz)- ընկույզ:

Փոխառությունների ցանկ.

Ազար-վիշտ, **նեղություն**, **Ազարիոն-խոտաբույս**, **Ազրախ**-կապույտ, **Աթաշի-կայծոռիկ** (**Աճ՝ այթաշ-հուր**), **Աթաշփարիստ-կրակապաշտ**, **Ալ-էլ, նան այ(ք)-չար ոգի**, նան վառ կարմիր, կրակ, **Աթուե**-ուսկի, **Ալմաս**, **ալմազ**, **էմաս**-աղամանդ, ալմաստ, **Ակիշ-կրակխառնիչ**, **Ակիրբուս**-խնկեղեգ, **Ահենք**-մագնիս, **Ահմար**-կարմիր, **Ահքայ**-պղտոր, կարմիր, **Ադալ**-ունևոր, **Անգուժատ-գարշահոտ բուսական խեժ**, **Անգուման** –(ան-ը նիսծ.) – անսպասելի, անկասկած, **Անդէճ** – մտածմունք, հոգս, **Անդիշայ** – հոգս, մտածմունք, **Անդոհ** – *անհանգստություն*, *ցավ*, **Անզէնեհար** (ան-ը նիսծ.)- չխնայված, **Անթարի** – սոսկադեմ, **Անխուէշարէ** – *սեփականություն*, **Անմատաթ** (ան-ը նիսծ.) – անօգնական, **Անշարմ** (ան-ը նիսծ.) – անամոթ, **Անումէտ** (ան-ը նիսծ.) – անհույս, **Անուշատր** (քիմ.) – անուշադր, **Անսախտ** (ան-ը նիսծ.) – անթամբ, **Անտուզ** – խոտաբույս, **Անփալան** (ան-ը նիսծ) – անհամետ, **Աշհայ** – սպիտակավուն, **Աշմ** -պատվական քար, **Աշրաֆի** – ոսկեդրամ, **Աշկարա** – *ակներև*, **Ապիզար** – *անիծված*, **Ապիլայ** – պզուկ, **Ապլախ** – խայտաբղետ, **Ապուզնայ-կապիկ**, **Ապուռիշ** -ջրի առու, **Ապրահ** – թարկ, բազմանկյուն, **Ապրշում** – մետաքս, **Ապքամայ** – ձկնապուր, **Առան, արան** – հարթավայր, դաշտավայր, **Ասան** -առավոտ, **Ասախ, յասախ, իասախ** – օրենք, արգելք, **Ասիզատէ**– ազնվական, **Ասմանի** – երկնագույն, **Ասպաղույ, ասպաղոլ** – բույս, *ձիականջ*, **Ասպարիմ** – բույս (*դեղորայքի մեջ են օգտագործում*), **Աստառ** -շորի կտոր, **Ասֆանճ** – սպունգ, **Ավաջ** (հին պրսկ. պիլվ.) – աշխարհիկ երգ, տաղ, **Ավճ** – ամենահեռավոր կետը երկրագնդից, **Ավմալի** – թանձր խեժ, **Արախճին** – թասակ, գլխարկ, **Արայիշ** – *հանդես*, **Արապայ** -սայլ, **Արաստուն, արաստայ** – դեղաբույս, **Արմադան** – նվեր, ընծա, **Արայիայ** – աճուկի ուռուցք, **Աւարայ** -պարսպ, անգործ, **Աւէնդին** (բսբ.) – բույս, **Աֆարին** – գոհունակության բացականչություն, **Աֆթիոն** (բսբ.) – դադձ, **Աֆիտ** -սպիտակ, **Աֆի** – թունավոր օձ, **Բաբուճ** – հողաթափ, **Բադիան** (բսբ.) – սամիթ, **Բազար, պազար** – շուկա, **Բազի** – խաղ, **Բազրկան** – վաճառական, **Բաթ** (2) – բաղ, **Բահադուր** – քաջ, **Բահար, պահար** – զարուն, **Բահր** (1) – օգուտ, շահ, **Բահրակ** (1) – մանավանդ, առանձնապես, **Բահրակ** (2) (պիլվ.) – անասնակերի բաժին, **Բահրամայ** – բրահմայական

կրոնի հետևորդ, *Բահրայ* – հողի վարձ, տասանորդ, *Բաղ* – այգի, *Բաղամ* – բրազիլյան փայտ, *Բանկ* (բսբ.) – մոբնագգիների ընտանիքի բույս, *Բաստիկ* – երջանկություն, *Բարաթ* – մուրհակ, *Բարապար* – հավասար, *Բարդար* – հանձնարարություն կատարող, *Բարչամ* – մագափունջ, *Բեհեշտի* – դրախտային, *Բեշայ* – արհեստ, *Բեզար*, *պեզար* – ձանձրացած, հոգնած, *Բեխապար* – անտեղյակ, *Բեկուման*, *բեկուման*, *բեզուման* – անկասկած, *Բեհեշտ* – դրախտ, *Բեշքմար* – անհամար, *Բեչարայ* – անձարակ, *Բեխիֆաթ* – տղեղ, տձև, *Բեվայֆայ* – անհավատարիմ, *Բետար* – արթուն, զգաստ, *Բեց* – ծառա, *Բիմար* – հիվանդ, *Բուխտան*, *պուխտան*, *բուդտան* – զրպարտանք, *Բունիաթ* – հիմք, *Բունպան* – ձիապան, *Բուվ* (կենդր.) – բու, *Բուտֆարիստ* – կռապաշտ, դիցապաշտ, *Բրինձ* – (1) բրինձ, *Բրիշակ* – վշտացած, տխուր, ավերակ, *Բրսամ* (բժշկ.) – պլնրիտ, *Բրսի անդարու* (բսբ.) – բույս, հովվի բիր, *Բոջէ* – բոխչա, *Գանգո* – գմբեթի վերին մասը, *Գարդան* (բժշ.) – կրկնվող տենդ, *Գալ* – գինու փարջ, *Գեաշտ* – զբոսանք, *Գեհեան* – գութան, *Գգիր* – տանուտերի օգնական, *Զեշ* – կապարձ, նետ, *Գիժ* – խենթ, խելագար, *Գուկիսագնդաձև թմբուկ*, *Գոսակ* – կարձ (մորուքը գոսակ), *Գորզգան* – գայլի վագր, ունեցող (ձի), *Գուզու* – կկու, *Գուլքստան* – վարդագույն, *Գուհար* – գոհար, *Գուման* – կարծիք, *հույս*, *ապավեն*, *Գունահ*, *կունահ*, *կիահ* – հանցանք, *Գունահքար* – հանցավոր, *Գունկ* – խողովակ, *Գուրգ* – լախտ, *Գոիձ* – աղաքար, *Գորքստան* – զերեգմանատուն, *Դալալ 2* – նագանք, *Դախդա(յ)* – հատ, միավոր, *Դահան* (հնք.) – դահանակ, *Դահեկ*, *դահիակ*, *դահիաք* – վաճառքի մեկ տասներորդը, *Դահիանգոյ* – տասանորդ, *Դահնայ* (հվնբբ. պրսկ.) – ձեթ, *Դաղ*, *տաղ* – կնիք, *Դաղմաչի* – կնիք խփող, հարկեր գանձող, *Դամ 1* – Ցանց, թակարդ, *2* – Նվագակցող, *Դաման* – հովանավորություն, *Դամդայ* – մաքսատուրք, *Դանդան* – ատամ, լինդ, *Դանիշման*, *դանիշմանդ* – գիտուն, *գիտնական*, *գրագետ մոլլա*, *Դանկ* – անշարժ եկամուտի, անշարժ ունեցվածքի մեկ վեցերորդ մասը, *Դաշտ* – դաշտ, *հարթավայր*, *Դաշտիշոն* – տաշտակ, *Դասպրիկ* – կուժ, սավոր, *Դաստ* – մի ձեռք, *Դաստան 1*, *դէստան*, *տաստան* – պատմություն, հեքիաթ, առակ, *Դաստան 2* – խարդավանք, *Դաստաչար* – մահակ, *Դաստառիչ* – սկիհի ծածկոց (Աճ՝ դաստառակ), *Դաստաքար* – արհեստավոր, *Դաստէ* – դաստա, կապոց, *Դաստրոձա* – փոքր սփռոց, սկիհի ծածկոց, *Դաստուր* – իրավունք, թույլտվություն (Աճ՝ դաստրութիւն), *Դաստուրիաթ* – հրահանգ, առաջադրանք, *Դարաբ* (կենդ.) – փայտփորիկ, *Դարաձայ* – պատուհան, *Դարայ* (հվնբ. պրսկ.) – լեռների մեջ հարթավայր, *Դարդ*, *տարտ*, *դերդ*, *տէրտ* – ցավ, *վիշտ*, *Դարիձենիկ* – կինամոն, *բառարանում՝ դարիսեն*, *դարիսեն*, *Դարիձակ* – կաղապար, *Դարպանտ* – կիրձ, լեռնանցք, *Դաւեքար* – պահանջատեր, *Դափ* – թմբուկ, *Դաֆդա*, *տաֆտա*, *թաֆթայ* – դիպակ, *Դեժպուհի* – խարդախ, *Դեհմեքար* – գյուղապետ, *Դընըշի* – դամասկյան, *Դիհ* – կողմ, *Դինիմաղթում*, *դինի*

մաղթում – մատնահար կավ, *Դիան* – տուրքի տեսակ, *Դիֆար* – փեթակի միջնատախտակ, *Ղոլ* – երաժշտական գործիք, *Ղոխն* – ձագարածն փայտե արկղ, *Ղոճ* – խիժատու ծառ, *Ղուշման* – թշնամի, *Դրախտ* – ծառ, *Դրհիմ* – կշռի չափ, *Ղոլայ, սոլայ* – անիվ, *Դոստ* – բարեկամ, *Ղֆանք* – հրացան, *Շայ, յալ* – բաշ, *Շահնի* – կերակրատեսակ, *Շամանի* – եմենական, *Շասյրոն* (բւբ.) – բույս մարդախոտ, *Շասամին* (բւբ.) – հասմիկ, *Շար* – սիրուհի, *Շարաղ, եարախ, ետախ* – հանդերձանք, *Շարաղանի* – դեղնախոտով հիվանդ, *Շրիշտայ* – էրիշտա, *Շոնճայ* – առվույտ, *Չաթրլճանայ, գաթլճամ, գաթլճամբ, գաթլճան, գաթլճանբ* – լանջամիզի բորբոքում, պլրիտ, *Չաթրլոայ, գաթրլոնայ* – թոքերի բորբոքում, թոքաբորբ, *Չախմ* – *հարված* (ԱՃ՝ *գախմել*), *Չահլէ, գահլայ* – համբերություն, *Չահր, գէհր* – թույն, *Չամբաղ* (բւբ.) – հիրիկ, *Չամբուտ* (կենդ.) – *պիծակ, կրետ, Չանախ* – *դատարկախոտ, Չապատ* (կենդ.) – մշկակատու, *Չապարճաթ* (*հնք.*) – *տպադիոն, Չառ* – *նսկի* (ԱՃ՝ *գառեկ-նսկեթերթ*), *Չառնիշան* – *նսկեգոծ, Չառգառ* – եգիպտացորեն, *Չառտ* – դեղին, *Չառքաշ* – *նսկեթել, Չար* – *ողբ, հեծեծանք, Չարի* – *ողբ, հեծեծանք, Չար ու ֆիդան* – *հեծեծանք, Չարպագանգ* – *ռազմական մեքենա, Չարպայ, գարբաբ* – *նսկեխոտ, Չարտա* – *փլավ, Չարտալու* – *ծիրան, Չարտաչոպ* (բւբ.) – *կոճապղպեղ, Չաւալ* – *կործանում, Չեն* – *վնաս, Չէիադար* – *սենեկապետ, Չէրա(յ), գէրէ* – *որովհետև, քանի որ, Չէր ու գապար* – *վարուվեր, Չըխիր, գահիր* (բժշկ.) – *նքոց, Չըրվա* – *փլավի տեսակ, Չիար* – *ձիու առասանը կամ թելը, Չիլֆ* – *հյուսք, Չինահար* – *զգուշական բացականչություն, Չնտան* – *բանտ, գնդան, Չոռնա* – *զուռնա, Չուրախայ* – *ներարկում, սրսկիչ, Չո* (հավանաբար պարսկերեն) – *առարկայի տակ, Չոնէխ* (քիմ) – *գառիկի և ծծմբաթթվի խառնուրդ, Չրեհ* – *գրահ, Չրեւանք, Չրեւանտ* (բւբ.) – *բույս, գրվանդ, Չրիշկ* – *ծոր (Ասիորդ. Անասիացու մոտ), Հէղար* – *հիշատակ, Հլմ* – *խմացություն, գիտություն, Հիթիտալ* – *հավասարակշռություն, Հզվար* – *գարդ, Հոագ* – *գաղտնիք, Հոագիան* (բւբ.) – *սամիթ, Հոագին* – *ամուր, Հոագդի* (բւբ.) – *հասմիկ, Հոաթիլայ* (կենդ.) – *սարդ, Հոախաթ* – *ձիասարք, Հոախտ* – *ձիասարք, Հոահաթ* 2 – *մխիթարանք, Հոահվան* – *արագավագ, Հոամալ* – *խաբեբա, Հոաման* – *տոնենի, Հոայ* – *թոքեր, Հոանայ* – *գեղեցիկ, դուրեկան, Հոասան* – *խոտաբույս, Հոասու* (կենդ.) – *աքիս, Հոաստ գալ* – *հանդիպել, Հոաստուխ* – *այրած պղինձ, Հոաստ* – *առատաձեռն, Հոաստեհ* – *կանխող, Հոաստուն* (հվնբ. պարսկ.) – *ուղտ, Հոաւան* – *վարժ, Հոաւաշ* (թերևս պարսկ.) – *անխառն, Հոեկան* – *ձրի, Հոեւանդ, Հոեւանտ* (բւբ.) – *բույս, խաչնդեղ, Հոէհին* – *գրավական, Հոիշտայ* (թվում է՝ պրսկ.) – *նոքերի հիվանդություն, Հոիպաս* (բւբ.) – *խավարծիլ, Հոուկայայ* – *կրոնավոր, Հոումանի* – *տոնագույն, Հոումի* – *կարմրավուն, Հոուպխուս* (բւբ.) – *մատուտակ, Հոքէպրտար* – *ախոռապետ, Հոռշնայ, ըռոշնայի* – *լուսամայր (աչքի դեղ), Հրդվանի* – *ծիրանագույն, Թազի* – *քերծե, Թաթ* – *թաթերի ցեղին պատկանող, Թաթրի, թաթրու* – *սոււմախ, բույս,*

աղտոր (*Աճ՝ թաթրա*), **Թաժա**, **թաժահ**, **թաժայ** – թարմ, նոր, **Թալակ** – թակարդ, **Թախթ** 1 – գահ, **Թախթան այնել** – սրարշավ ընթանալ, **Թախտան** – սվար, **Թաճ** – թագ, **Թաճրիպայ** – փորձարկում, **Թամայ** – ագահ, **Թամաշայ** – տեսարան, **Թամաստոուտ** (բժշկ.) – ջղաձգություն, **Թամիզ** – մաքուր, **Թամղաչի** – հարկեր գանձող, **Թանազ** – երկաթի անագապատ թիթեղ, **Թանաֆ** – պարան, առասան, **Թանգ** – թամբի փոկ, **Թանզ** 1. ոսկու ն արծաթի քաշի միավոր (*Աճ՝ մեծագին*), **Թանազ** – 1. երկաթի անագապատ թիթեղ, 2. թամբակալ, թամբի գոտի, **Թանկիրայ** – կաթսա, **Թանդիայ** (բժշ.) – մաքրում, **Թանուքար** (դղճ.) – բորակ, **Թանսուխ** – արտաստվոր, **Թապար** – կացին, կացնակ, **Թապիհ** – բլուր, **Թապլի** (բժշկ.) – ջրգողություն, **Թառայ** (բար.) – կոտեմ, **Թառպազ** (անարգ.) – թառ նվագող, (փխբ.) որոգայթ լարող, **Թասու** – մի քառորդ դանդի արժողությամբ դրամ, **Թավթայ** – մետաքսե դիպակ, **Թարաճայ** – լուսամուտ, **Թարանկուպին** – մանանա, գազպե, **Թարաֆի տամն** – սաստիկ դաշտանահոսություն, **Թարլայայ**, **թառլալ** (հվբ. պրսկ.) – թառ նվագող, **Թարխան** – հարկից ազատ անձ, **Թարխանայ**, **թարխինայ**, **թարխնայ** – չորթան, **Թարխուն** (բար.) – թարխուն, **Թաւ** – ուժ, գորություն, **Թափառուճ** – զբոսանք, **Թափխալիլ** – բշտիկ, **Թաքլիս** – այրում, կրացում, **Թաքմիտ** – թրջոց, **Թեմազի** – հեծյալ գունդ, գորաբանակ, **Թեզ** – շտապ, **Թեզապ**, **թեզապի ջուր** (քիմ.) – ազոտական թթու, **Թեշ** – փոքր ճնճղուկ, **Թըւանկ** – հրացան, **Թիմար** – խնամք, **Թիննի** (բժշկ.) – կայծուռուցք, **Թիպ առ թիպ** – գունդ առ գունդ, **Թիր** – նետ, **Թիքէ** – մաս, կտոր, պատառ, **Թլայ** – ոսկի, **Թլիսմ**, **թէլիսմ** – թալիսման, **Թուայ** – թոնիր, **Թուանգչի**, **թուանգչի** – հրացանակիր, **Թութակ** – թռչուն, **Թուրի** – թուրակ (*Աճ՝ աչքի դեղ*), **Թուխթ** 2 – ծանրության չափ, **Թուխլուխ** – արքունի դրոշ, պատվանշան, **Թուխմարան** (բար.) – դանդուռ, **Թուման** – դրամի միավոր, **Թուռշի**, **թուռուչի** – թթու դրած բանջարեղեն, **Թուտարի** (բար.) – բույս, աղբաղբուկ, **Թուրունդայ** – երախայրիք, **Թուրուշ** – նեղացած, **Թուրքման** – թուրքմեն, **Թոխ** – դրոշ, **Թոնի** – տիսմար, **Ժանկառ** – ժանգառ, **Ժանկառի** – ժանգագոգույն, **Ժիվա(յ)** – սնդիկ, **Բղդար** – ասպատակ, **Բշխուն** (բար.) – խաչնդեղ, **Բշտրմուդ**, **իշտոմուդ** – ջայլամ, **Լաթ** – կտոր, **Լալ** 2 – համր, **Լալա** – դայակ (*Աճ՝ կակաչ*), **Լախլախայ** – անուշահոտ քուրք (*Աճ՝ բույս*), **Լախտ** – գավազան, գոտի, **Լական** – կոնք, **Լադիայ** (բար.) – իշակաթնուկ, **Լաճուրատ** – վառ կապույտ գույնի ներկ, **Լալիլայեայ** – օրորոցային երգ, **Լաշ** – լեշ, **Լաշքար**, **լաշկար** – բանակ, **Լաչակ** – գլխաշոր, **Լասրրդաս**, **լասիրդաս** – քնախտ, **Լոթի** – ստահակ, **Լուլայ** – խողովակ, **Խաղար** – գավաթ, **Խազիան** – պահապան, **Խաթմի** (բար.) – տուղտ, **Խալաչուրի** – դամասկյան կեռ թուր, **Խալի** – գորգ, **Խալիչայ** – գորգ, **Խալխալ** – ոտքի ապարանջան, **Խավվեթ** – դատարկ, **Խաղան** – թագավոր, **Խամ** – տամուկ, **Խանազիր**, **խանազիրայ** (բժշկ.) – խոզուկ, **Խանայ** – տուն, **Խաշխաշ** (բար.) – կակաչ, **Խառթուրթ** (բար.) – կոկոռշենի, **Խավան** – հավանգ, **Խատար խիար** –

խիարուկ, Խարազա – քարացած հյուժ եղջերավոր անասունների ստամոքսում, *Խարավզաղ* – ապօրինածին, *Խարաստին* (կենդ.) – անձրևորդ, *Խարզահրայ* (բսբ.) – դափնեվարդ, *Խար խիար* (տե՛ս խիարուկ (բսբ.)) – կատաղի վարունգ, *Խարունդայ* – ջորեպան (Աճ՝ իշավար), *Խարպիզակ* (պհլ., պրսկ.) – սեխ, *Խարպուէ* -հիլ, *Խաւանդ* – տիրուհի, *Խէրանդէճ* –բարի, *Խիարակ*-խիարուկ, *Խիշտ-նիզակ*, *Խնախ*, *խնաղ* (բժշկ.) – անգինա, *Խնդուզ*, *խնտուզ* (կենդբ.) – կուղբ, ջրշուն, *Խոնչայ* – մատուցարան, *Խոստանդկար* (պհլ.)- ավարառու (Աճ՝ խոստակդար), *Խով* (թերևս պրսկ.)- քրտինք, *Խոտրուֆ, դօտրուպ, դօտրուֆ* (բժշկ.) -խորեա, նյարդային հիվանդություն, *Խորփրքստ* (բսբ.) – խավարծիխ (Աճ՝ արնածաղիկ), *Խում* 2- սափոր, *Խույ* – բնավորություն, *Խունի* – արյունալի, *Խուշկի* – թրիք, *Խուշկիկ*, *խուշկեկ* – չորացած, *Խուշտաշ* -մտերիմ, *Խուպ* 1- խուփ, խուբ, *Խոբ* – գեղեցիկ, սիրուն, *Խուրճին* – խուրջին, *Խուրմայ* – արմավ, *Խայթի, դպտի* – քրիստոնյա եգիպտացի, *Խօլ* 1 – Գումակ, *Խօն* – խոնչա, *Խօշ* – լավ, *Խօշապ* – մրգաջուր, *Խօջայ* -վաճառական, *Կազի* – բարակ կտոր, *Կազուր* – ներկարար, *Կամկար* – կամաց, *Կանդանայ* (բսբ.) – բույս, պրաս, *Կանկալ* – կատակ, խաղ, *Կանկար* (բսբ.) – բույս, արտիճուկ, *Կասպարայ* (բսբ.) – բույս, կասպար, *Կասրցախ* (բսբ.) բույս, կասպար, *Կասլայ* (բսբ.) – դափնի, *Կավարս, կաւարս* – մաշկի հիվանդություն, *Կավզ* – ընկույզ, *Կավզաշմ, կաւզաշմ* (բսբ.) – բույս, երիցուկ, *Կարաւ* – ցուլ, *Կարքազ* (կենդ.) – թռչուն, գառնանգղ, *Կեզնել* – թեթել, *Կենտուրական* – ինկաբույր, *Կէրտան* -վիզ, *Կիլի հէքմաթ* – կավի տեսակ, *Կիւլպէտ* – մանյակ, *Կիչ* – գանգատ, *Կոնտոդ* – անդամալույծ (Աճ՝ կոնդ), *Կոտոշ* – եղջուր, *Կուլակ 1* -խոպոպներ, խոպոպիք, *Կուլակ 2*- գլխին ածիլված տեղ, *Կուլանկուպին* – վարդի մուրաբա, *Կուլապ* -վարդաջուր, *Կուլգար* – ծաղկունք, *Կուլիստան* – վարդաստան, *Կուլկուն*- վարդագույն, *Կուվանտայ, կուվադա* – գուսան, *Կօշկօշ* – երկար ականջներ, *Հագարճասան* (բսբ.) – լոշտակ, *Հագար տաստան, հագար դաստան* – սոխակ, *Հայահայի* – մահացու, *Հայիլայ, հիլիճ* – պտուղ, *Համիմաղ* (պհլ.) – ոսոխ, *Համ... համ* – ն՛...ն՛, *Համշիրակ, համշիրայ, համշիրաք* (պհլ., պրսկ.) – հայրենակից, *Հայաթ* – բակ, *Հայասայ* – գոտի, *Հայֆարիխօն, հայֆարիդոն* (բսբ.) – բույս, սրոհունդ, *Հանգամայ* – ամբոխ, *Հաշիշի* – շիայի հետևորդ, *Հաշու, յաշու* – տագնապ, *Հատի* (թերևս պրսկ.) – տոչորոդ, *Հատր պաշ* – եղի ը աչալուրջ, պատրաստ, *Հարակաշ* (պհլ.)- վարուցանքի ընկերակից, *Հաւան*- հավանգ, *Հաւիժայ* (բսբ.) – բույս, շիկատակ, *Հաւդէ* (թերևս պրսկ.) (բժշկ.) – եղնջացան, *Համիան* – քսակ, *Հէշրաթ* – խնջույք, *Հէչ* -բնավ, *Հոմնէս* – սիսեռ, *Հորդէ* – ստորաքարշ, *Հու 1* – թարախ, *Հունար* (պհլ.,պրսկ.) – հնարագիտություն, *Ղայիլայ 3* – օձանելիք, *Ղանապ* (բսբ.) – բույս, կանեփ, *Ղանդայ, ըրաթիլայ* (կենդբ.) – սարդ, *Ղասայեան* – սրտխառնուք, *Ղասիտայ* – ներբող, *Ղասուլ* (բսբ.) – բույս, օձառախոտ, *Ղասայ, դարպ* (բժշկ.) – աչքի մոտ գեղձի գերած, *Ղարանփուլ*

(բւբ.) – մեխակ, *Ղարիմ* – պարտատեր, *Ղարդարա* – խոչափողի ողողում, *Ղաֆր ըլ եահուտ, դաֆր ուլ եահուտ* – սև ձյութ, *Ղրում* – վեհափառ, *Ղիմաթ* – գին, *Ղիմաթի* – պատվական, *Ղիմայ* – լցոն, *Ղիշայ* (բժշկ.) – ոսպնյակի մթագնում, *Ղշուան* (բժշկ.) – տեսողության թուլություն, *Ղուտրուպ* (բժշկ.) – խորեա, *Ղոնձայ, դոնջայ, դոնձէ, դունջայ* – կոկոն, *Ղոշոտություն* (թերևս պրսկ.) – հաճույք, *Ճահար* – կանաչավուն աչքերով, *Ճամ* – թաս, *Ճամագի* – ուղտ, *Ճամիզ* (բւբ.) – թզենի, *Ճանսաֆրամ* (բւբ.) – բույս, ռեհան, *Ճան* – կյանք, տե՛ս նաև *Չան, Ճանգ* – ճանկ, *Ճապալի* – լեռնային, *Ճապեստան, Ճապստան* – զինանոց, *Ճատվար* (բւբ.) – բույս, օշինդր, *Ճարապ* (բժշկ.) – կեղաքոս, *Ճարասիոն* (բւբ.) – զանգակաձաղիկ, *Ճերկայ* – խումբ, *Ճէնկ* – վեճ, *Ճեղպատասթ* – կղբի ձու, *Ճոկան* – կեռ գլխով գավազան, *մական, ցուպ, ճուարքար* – պատասխանատու, *Մագարիոն* (բւբ.) – բույս, տերևատ, *Մագրերան* – գալարված, *Մաթարիս* – նիզ, *Մալամաթ* – կշտամբանք, *Մախսուտ, մահսուտ* – չարակամ, *Մակար* – մի՞թե, գուցե, միգուցե, ուր էր թե, բայց միայն, *Մահնուտայ* – խեժային թանձր նյութ բույսից, սակամոն, *Մահուտանայ* – բույս, քռեկան, *Չախրուն*, *Մադտել* – կտրել, *Մադրիպ* – մավր, *Մայայ* – թթխմոր, *խաշ (ԱՃ՝ մայա), Մայպէհ* – եփած սերկնիլ, *Մանշաղ* – ունեյի, *Մաշ* (բւբ.) – թիթեռնաձաղկավորների ընտանիքին պատկանող բույս (*ԱՃ՝ ընդդէն*), *Մաշալայ* – ջահ, *Մաշարայ* – աճու, *Մաշարի* (բժշկ.) – խոց, *Մասարիիայ* (կզմխս.) – միջընդերք, *Մաստան* – հարբած, *Մասրայ* – կարագ, *Մարամաթ* – նորոգում, *Մարգագ* 2 (հին պրսկ.) – հայկական տումարի տասնմեկերորդ ամիսը, *Մարդակ* (կզմխս.) – բիր, *Մարիս* – (բւբ.) սոճազգի ծառ, *Մարձել* – մերսել, *Մարդաշիշայ* (հնք.) – ծմբաքար, *Մարմուհրայ* – ոսկրագնդիկ օձերի գլխից իբր հմայելու գորություն, *Մարվ* – բույս, *ալվորեկ, Մարթուլ, մաֆթուլ, մէհտուլ* – մետաղալար, *Մարի* – լուրթ, *Մարուքայ, մքուքայ, մքքայ* – մաքոք, կկոց (ջուլիակի), կավվածատեր, *Մէշպահար, մէշպար, մէշպիհար* (բւբ.) – բույս, եզան աչք, *Մէստան* – խումար, *Մէստանայ* – հարբած, *Միրգայ* – արքայագն, *Մեթուր, մնփուր* (բւբ.) – բույս, *գիշերային մանուշակ, Մոմրուդան, մոմրուվան, մոմրովան* – քուրք, մումձեթ, *Մուզի* – վնասակար, *Մուշտակ* (պիլ., պրսկ.) – քուրք, *Մուշք* – յուղային նյութ, *Մուստառ* – քաղցու, *Մուրտասանկ* – կապարի օքսիդ, *Մսար* (անստույգ պրսկ.) – սեղմակ, *Յարդու* – ձիավարժ, հեծնորդ, *Յարյար* (բւբ.) – փոքր ծառ, *Յեամեկ* (բւբ.) – թուփ, *հասմիկ, Յերդնիսայ* (բժշկ.) – իշիաս, *Նալբանդ* – պայտար, *Նախ* – թել, *Նախնայ* – եղունգ, (բժշկ.) – փառ, *Նախու* – բամբակե, *Նախունօր* – մատնաշունչ, *Նահանկ* 2 (կենդ.) – կոկորդիլոս, *Նահիլ նարկիլ* (բւբ.) – ծառ, կոկոսյան արմավենի, *Նադարաճի* – դափահար, *Նադարա* – հարվածային գործիք, դափ, *Նադիպ* – առաջնորդ, *Նադմ* – *ական, Նաճախ* – սակր, *Նանխուայ, նանխուհ, նանխուայ, նանխուհ, նանխոհ* (բուս.) – բույս, հացաղեղ, *Նաշֆ* – ներծծում, *Նագարիլ* – հարկադրվել, *Նասուր* (բժշկ.) –

խլվակ, **Նավասիր** – տե՛ս նասուր, **Նատար** – չքավոր, **Նարզեզ**, **նարզիզ** – ծաղիկ, նարզես (հնարավոր է փոխառվել է հունարենից կապված Նարկիսոսի՝ Նարզիզի առասպելի հետ) **Նարդ**, **նարդին** (բւբ.) – բույս, նարդոս, **Նարինջ** – նարնջենի, **Նարի ֆարսի** (բժշկ.) – կայծուռուցք, **Նարճիլ** – կոկոս, **Նարմուլ** – փափուկ, **Նարմուշկ** – վայրի նոնենու ծաղիկ, **Նարտ 2** – նարդի, **Նարտան** – նոան հատիկներ, **Նաուոզ** – նոր տարի, **Նափաթ** – մարտ, կոճիվ, **Նաֆայ** – մշկայծյամի պարկը, **Նաֆիր** – գալարափող, **Նաֆտի** – նավթի, նավթային, **Նեհ** – սակ, սակագին, **Նեշուպայ** – ըմպելիք, **Նեսնաս** (կենդր.) – օրանգուտան, **Նեքպայ** – քամու տեսակ, **Նիազիլ** – վրդովվել, **Նիզար** – վտիտ, **Նկին** – օդ, մատանի, **Նշաստակ**, **նշաստայ** (պիլ., պրսկ.) – *ցորենի օսլա*, **Նշատիր**, **նշատր** – անուշադր, **Նշդար**, **նշդարենի**, **նշդարի**, **նշդարինի** – ծառ, եղևնի, **Նշտար 1** – վիրաբուժական դանակ, **Նուրայ** – հանգած կիր մկնդեղի հետ՝ մարմնի մազերը վերացնելու համար, **Նիատար** (անստույգ բառ, թերևս պրսկ.) – բարեկեցություն, **Նօշրպայ** – պղնձե փարչ, **Շաթիր** – սուրհանդակ, **Շալ** – բրդե կտոր, **Շալդամ** – շողգամ, **Շախ շախ** – բաժան-բաժան, **Շահ** – արքա, **Շահանճիր** (բւբ.) – թզենի, **Շահգատայ** – արքայորդի, **Շահէն** (կենդր.) – բազե, **Շահթաուճ** – ծխաբույս, **Շահի** – արծաթ դրամ, **Շահնայ** – *հարկահավաք պաշտոնյա*, **Շահնշահ** – արքայից արքա, **Շահնշի** – պատշգամբ, **Շահպալութ** – շաղգամ, **Շահ պլպուլ** – սոխակ, **Շահ ոահ**, **շահոահ** – լայն ճանապարհ, **Շահ սարի ըռուան**, **շահ սելվի րեվան** – արքայանոճի, փխբ. սլացիկ հասակ, **Շահսաֆրամ**, **շահսաֆրան** – ըռահան, ռեհան, **Շահվար** – մեծ, ազնիվ մարգարիտ, **Շահտանճ**, **շահտանայ** (պիլ., նպրսկ.) (բւբ.) – բույս, շնամեռուկ, հնդկականեփ, **Շահր** – քաղաք, **Շահրաստան**, **շահրիստան** – մեծ և շեն քաղաք, **Շահրի 2** – քաղաքացի, **Շաղաւաթ 2** – աղետ, **Շաղգամ** – շողգամ, **Շամաթ** – արծաթաթել կտոր, **Շամի** – սիրիական, **Շամիմայ**, **շամիայ** (կզմխս.) – արգանդի թաղանթ, **Շամտան** – մոմակալ, աշտանակ, **Շայիրայ** (կզմխս.) – աչքի գարեկ, **Շանկիար** (բւբ.) – բույս, **շիխար**, **Շանճար** (բւբ.) – շանիկար, շիխար, **Շանպալիթ** (բւբ.) – բույս, շնդեղ, **Շապաղ** – գթություն, **Շապաշ** – կեցցե, **Շապիար 1** – հալվե, 2. քնաբեր բուժական իյուս, **Շատի**, **շատիկ** (պիլ., պրսկ.) – ուրախություն, **Շար** – մետաքսից նուրբ գործվածք՝ կտոր, **շղարշ**, **Շարաֆխանէ** – զինետուն, **Շաւահիր** – մարգարիտ, **Շալրայ** – Սիրիուս (պայծառ աստղ), **Շաքարֆրուշ** – շաքարավաճառ, **Շաքըրլայ** – շաքարաշուրթ, փխբ. քաղցրալեզու, **Շաֆթալու** – դեղձենի, դեղձ, **Շեխզաղէ** – շէյխի որդի, **Շեշխանա** – վեցանկյունի շիւնություն, **Շերխիշտ** – մանանա, **Շերդաց(ն)** (աստղգ.) – գայլի համաստեղություն, **Շեքեր** – շաքար, **Շիւշատ** (բւբ.) – մշտադալար թումփ, **Շիշակ 1**. վեց ամսական հորթ կամ երկու տարեկան ոչխար, **Շիվայ** – պերճախոս, **Շիրամկաճ** – կաթի մեջ թրջած ամլաճ, **Շիրայ** – քաղցր հյութ, **Շիրիբախթ** – ձեթ, **Շիրին** – քաղցր, **Շիրինայ** (բժշկ.) – ցան, **Շիւան** – ողբ, **Շիֆէ** –

նազելիություն, **Շխուս** (բժշկ.) – կոմա, **Շմաթ 1** – քարակ կրծկալ (Աճ՝ գոգնոց), **Շմաս, շամաս** – արևապաշտ, **Շովին** – սպանախ, **Շոնիզ, շոնիս** (բւբ.) – բույս, արջնդեղ, **Շորայ** (բւբ.) – բույս, օշան, **Շորվայ** – ապուր, **Շուշիկիր** – հիլ, **Շայքարայ** (բժշկ.) – հավկուրություն, **Շրեշ** (բւբ.) – բույս, **շրեշտ, Շօր 1** – աղի, **Շօր 2** – մրցություն, **ՈՒնգուր** – ական փորել, **ՈՒրդգահ** – գորքի կայան՝ **ճամբար, բանակատեղի, Չալ** – խայտագորշ, **Չալիշել** – կովել, **Չախու** – դանակ, **Չախուեկ** – ծալովի դանակ, **Չահ** – հոր, **Չայշիգուրպայ** (հնք.) – կատվակն (թանկագին քար), **Չանգաւոր** (բժշկ.) – քաղցկեղ, **Չանկ 2** – տավիղ, **Չանկալաստան, չանկալիստան, չանգալիստան** – անտառներ, **Չանկի** – նվագածու, **Չաշնի** – ճաշակում, **Չատար** – հովանոց, **Չարե** – ճար, **Չարեք** – մեկ խառորդ, **Չարխ** – աղեղ (Աճ՝ չարխավոր-աղեղնավոր), **Չարուխ** – տրեխ, **Չարչի** – մանրավաճառ, **Չարտախ** – տաղավար, **Չափառ** – սուրհանդակ, **Չափոաս** – ճարմանդ, **Չեշմ** – ակնոց, **Չինար, չինարի** (բւբ.) – ծառ, արևելյան սոսի, **Չինի** – չինական, **Չնուշկ** – *ոտնաման*, **Չուգուր** – գործիք՝ ջութակի նման, **Չօպկի** – արագոտն, **Պալատի** – քաղաքային, **Պալափուշ** – թիկնոց, **Պախլաթ ըլ համլայ, պախլաթ ըլ համղայ, պախլաթուլ համղայ** (բւբ.) – բույս, դանդուռ, **Պահ 1** – հղի, **Պահրե 1** – շահ, 2 – վայելք, **Պաղան** – *համետ*, **Պաղպան** – պարտիզպան, **Պաղպանչի** – այգեպան, **Պանաւշ, պանաֆշ** – մանուշակագույն, **Պանաֆշե** (բւբ.) – մանուշակ, **Պանճանկուշտ** (բւբ.) – թփաբույս, **Պայ 2** (կզմխս.) – ստամոքսաէլք, ներքևում կրկնվում է՝ *պավայ*, **Պայպայ** – *հայր* (Աճ՝ *պայ-մեծ հայր*), **Պաջ** – *հարկ, տուրք*, **Պասղաղ** – կառավարիչ, **Պատախշի** – լեռան անունից՝ բաղախյան, բաղախչի, **Պատաշխան** – բաղախչանյան, բաղախչանի՝ լեռան անունից, **Պատի սէպահ** – մեղմ արևելյան քամի, **Պատխունամ** (թերևս՝ պրսկ.) – գրաստների հիվանդություն, **Պատմուհրա** – փագահր, փանգահր, այծյամների, վիթերի, եղնիկների լեղապարկում գոյացող ծանր նյութ՝ բնական հակաթույն, **Պատվարդ, պատվարտ** (բւբ.) – բույս, հողմածաղիկ, **Պարանճասիֆ** (բւբ.) – բույս, օշինդր, **Պարրեղ** (թերևս պրսկ.) – շողշողուն, **Պեյան** – հասկանալի, պարզ, **Պեյման** – անարգել, **Պեյեր** – անօգուտ, **Պեկեահ** – տարածամ, **Պեկուման** – անկասկած, **Պեհալ, բեհալ** – անգոր, **Պեհիսայ, պեհրսայ** – անթիվ, անհամար, **Պեղալատ** – անթերի, **Պեճատա** (հնք.) – նոնաքար, **Պեճունաթ** – ապերախտ, **Պեճուրատ** – նպատակին չհասած, **Պեճրաթ** – անգութ, **Պեշ** (բւբ.) – բույս, ընձախտտ, **Պեշմուշկ, պեշմուշ** (բւբ.) – բույս, ընձախտտ, **Պեումէտ, բեումէտ** – անհույս, **Պեուշ, բեուշ** – ուշակորույս, **Պեչայ, պեչայ** – քող, **Պեվախտ** – անպատեհ, **Պետաւ, բետաւ** – սրբնթաց ձի, **Պեումուշք** (բւբ.) ծառ, ուռի, **Պըղտ** – եփուկ, **Պըրե** – գոնե, թեկուզ, **Պիսակ** (*պիւ.*), (*բժշկ.*) – բորոտ, *պիզմենտագուրկ սպիտակ բծեր մաշկի վրա*, **Պլատիկ** – գավազան, **Պշաուու, պախուու** – շղթաներ (ձիերի), **Պորայ** (քիմ.) – բորակ, **Պուզետան, պուզետան, պուզիտան** (բւբ.) – բույս, խոլորձ, **Պուսատ** – մարջան, **Պուսիր**

(բւբ.) – բույս, խոնդատ, **Պսուր** (բժշկ.) – թարախաբշտիկ, **Պտունի տմաղ** (կզմխս.) – ուղեղաբուն, **Պօստան, բոստան, բօստան** – այգի, պարտեզ, **Ջաբբուն** (անստույգ, թերևս՝ պրսկ.) – բռնի, **Ջահանգիր, ջհանգիր, ջհիանգիր, ճհիանկիր** – աշխարհակալ, **Ջահրա** – ճախարակ, **Ջաղջեր** – *անորավարտիք*, **Ջամահաթ, ջամհիաթ, ջումհաթ** 1 – բնակչություն, 2 – ամբոխ, **Ջան** – փաղաքշական բառ, **Ջանդար** – *թիկնապահ*, **Ջանիշին** – տեղապահ, **Ջապիր** – շրջապարիսպ, **Ջատու** – կախարդ, **Ճաֆար** – գրբացություն, **Ջեւէլի** – պետությանը պարկեր մատակարարելու պարտավորություն, **Ջիլայու** – երասան, **Ջող** – ճիպոտ, **Ջոմախ** – մահակ, **Ջուալ** – պարկ, **Ջուլիակ, ջուլուիակ** – *մանածագործ*, **Ջուխտ** (*պիլ.*) – *գույգ*, **Ջվալախի** – խաբեբա, **Ջրմի, ջրի** 1 – կատաղի, 2 – աղքատ, **Ռահվար** – *հանգիստ քայլքով (ձիու մասին)*, **Ռանկ, ըռանկ, ըռանգ, ըանգ** – գույն, երանգ, **Ռանչպար** – աշխատավոր, **Ռեվան** – *ընթացք*, **սահուն քայլք**, **Ռատի** – մեծահոգություն, **Ռեյկան** – անվճար, **Ռէ** – ատամնաշար, **Ռուփիկ** – թաշկինակ, **Ռօշան** – *պարզ, հստակ*, **Սազ** – *շենքի կտուրի թեք մակարդակը*, **Սազ 1** – պատշաճ, **Սազ 2** – երաժշտական գործիք, **Սազգար** – սրտակից, **Սազել** – հարմարեցնել, **Սազեսազ** – սագական, պատշաճ, **Սազթըփել** – տեսքից զցել, **Սախտել, սախթել, սաղթել 1** – *պատրաստել, կառուցել, շինել, կերտել, ստեղծել*, 2 – *ձին հանդերձել, թամբել*, **Սախտիան** – սեկ (այժի կամ ոչխարի նուրբ կաշի), **Սակնակ** – հեկեկանք, **Սահաթիանայ** – մեծ ժամացույցի աշխատանոց, **Սահրատ, սահրաթ** – սահման, **Սաղ 1** (կզմխս.) – սրունք, **Սաղի, սախի** – մատովակ, **Սաղրխ** – փրկագին, **Սարվան, սէան, սավան** – փոքր հովանոց, վրան, **Սանդարաս, սանդարոս** – ջնարակ, **Սանիաթքար** – արհեստավոր, **Սանճատ** (բւբ.) – *ծառ, փշատենի*, **Սանտալ 2** – *հողաթափ, սանդալ*, **Սապապ, սարաբ, սաբապ, սապաբ, սէպապ, սէպէպ** -1. պատճատ, 2. պատճառով, **Սապգի** – կանաչեղեն, **Սապուսայ** – գլխի թեփ, **Սավդայ** – առևտուր, **Սարախունճ** – *գլխաշոր (ԱՃ՝ սարաղունճ)*, **Սարաղունճ** – *հերակալ, վարսակալ (Աճ՝ սարասխի-գլխագարդ)*, **Սարայ 2** – տուն, շենք, **Սարասիմայ** – շփոթված, **Սարաւոյթ** – պալատ, **Սարխօշ** – հարբած, **Սարկարտան** – մոլոր, անճար, **Սարկին** – ծերտ, **Սարմիայ** – դրամագլուխ, **Սարսամ** (բժշկ.) – մենինգիտ, **Սարվ** (բւբ.) – *ծառ, նոճի*, **Սարտար 1** – գորքի գլխավոր հրամանատար, 2 – կուսակալ, **Սարքար** – տեր, պետ, **Սաւատ** – պատճեն, **Սաւն** – նմանություն, **Սաքուլայ** – գնդակ, **Սաֆայ** (բժշկ.) – որքին՝ մաշկային հիվանդություն, մկնատամ, **Սաֆիր** – շափյուղա, **Սէրսէր** – ծայրեծայր, **Սէքպայ** – կերակուր, **Սիահ, սիհահ** – սև, սևագույն, **Սիմուրկ, սիմուրք** – փյունիկ, **Սիպայ** – պատնեշ, **Սուսամբար, սուսանպար** (բւբ.) – բույս, ուրց, **վայրի ծոթրին, Սիպախ** (հվնբ. պրսկ.) – կրակոտ, **Սիէտար** – զինակիր, **Սոնիճ** (բւբ.) – բույս, *արջնդեղ, սև գնդիկ*, **Սուլայ** (բժշկ.) – ուռուցք, **Սումպուլ** (բւբ.) – բույս, սմբուլ, **Սուռնայ** – սրինգ, **Սուսան** (բւբ.) – բույս, շուշան, **Սուսանի** – կապտավուն, **Սուսար** – նախշերով

կտոր, **Սուրխամահի** (կենդնբ.) – ձուկ, կարմրախայտ, **Սուրմայ** – ծարիր, **Սուք 1** – վիշտ, ցավ, կսկիծ, **Սպանախ** (բսբ.) – բույս, շոմին, **Սպանդ** (բսբ.) – բույս, վայրի սատապ, հարմալ, **Սպանդան** – մանանեխի սերմեր, **Սպենճ** – հարկի տուրքի տեսիկ, **Սպեղոր - սպերտ.սպեղոր** – կողով, **Սպիքայ** – ձուլ, ձուլածո կտոր, **Սպուկզուռ, սպունկզուռ** (բսբ.) – բույս, շանխաղող, **Սրահանգ, սրահանք 1** – զինակիր, **2** – զենք, բանակ, **Սքանտար, սքնտար** – սխտոր, **Սոխտայ, սոխտայ** – մահմեդական հոգևոր դպրոցի ուսանող, **Սոսմար** (կենդ.) – մողես, **Վալայ** – բրդի կտոր, **Վարալ** (կենդբ.) – թունավոր կենդանի, **Վարչամ** – փունջ-փունջ, **Վզեան, վզեն** (հին պրսկ.) – վնաս, **Տագ** – ճաղատ, **Տալիյան** – խիզախ, **Տախիս** (բժշկ.) – մատնաշունչ, **Տաճիկնակ** (պիլ., պրսկ.) – մորակ, վարոց, խարազան (ԱՃ՝ տաճկիկնակ), **Տամդա** – կնիք, **Տանկ** – ծանրության չափ, **Տապահակ** (պիլ. պրսկ.) – մսի խորտիկ, **Տապաստ** – մուլաքոր (ԱՃ՝ գորգ, գետնին ընկած), **Տապուր** – արևմտյան քամի, **Տառայպուլ** (թերևս պրսկ.) – դյուրավառ նյութ. վերջին շրջանում ճշգրտվել է բառիմաստը՝ երաժշտական գործիք, **Տաստիմալ** – թաշկիկնակ, **Տավալի** (բժշկ.) – երակների լայնացում, **Տատ 1** – արդարություն, **2** – օգնություն կանչելու ճիշ՝ աղաղակ, **Տարիայ, տարիեայ** – ծով, **Տարիչինի** – դարչին, **Տարմինայ** (բսբ.) – բույս, օշինդր, **Տարշիշան, տարշիշյան** (բսբ.) – ճանբակ, **Տեկ** – արլոր, **Տիզաճ** – մթնագորշ, **Տիլպար, տիլպեր** – գեղունի, սիրունի, **Տիսալար** (հվմբ. պրսկ.) – գյուղապետ, **Տիվան** – ատյան, **Տիվանպաշի** – դիվանապետ, **Տիրֆիլ** – սև պղպեղ, **Տիւան** – դիվան, դիվանատուն, **Տոպտոպայ** – թմբուկ, **Տորվանտակ** (պիլ. պրսկ.) – նորահաս միրգ, **Տուտարիք** (բսբ.) – բույս, դաշտային մանանեխ, **Տուտի** – թութակ, **Տուրտին** – դիրտ, մրուր, **Տրաշթայք** (թերևս՝ պրսկ.) (բսբ.) – բույս, պատատուկ, **Տրիֆիլ** (բսբ.) – ջրաժույղ, **Տրեմ-տրեմ** – կշռաչափ, **Տոչա** – փոքր դուլ, **Տիլայ** (բսբ.) – թուփ, դափնեվարդ, **Փագախ, փագահ** – անասնոց, ախոռ, գոմ, **Փագահր** – հակաթույն, դեղթափ, **Փաթերակ, փեթերակ** (պիլ. պրսկ.) – փորձանք, աղետ, չարիք. **Փայան** – համետ, **փալան, Փալանկ** (կենդբ.) – գիշատիչ գազան, ընձառույծ, **Փալանտուզ** – համետագործ, **Փալիտ** – անմաքուր, պիղծ, գոեհիկ, **Փալկալ** – կարկին, **Փալութայ** – ուտելիք պտղահյութերից, **Փահլաւան** – դյուցազն, **Փահրեզ, փահրիզ** – պաս կենալ, հրաժարվել մի բանից, **Փայիզայ** – մոնղոլ խանի անունը դրոշմած տախտակ, **Փայիկ** – հետիոտն սուրհանդակ, **Փայիփառ** – նծույգ, **Փայվանթ** (կզմխս.) – ջիլ, **Փայքար** – կոիվ, վեճ, **Փանզահր** – հակաթույն, անգեղաքար, **Փանճանկուշտ, փանճանկուշտ** (բսբ.) – բույս, արբահամաճառ, **Փանճարայ, փանջարայ** – լուսամուտ, **Փաշայ** – բարձրաստիճան զինվորական, **Փաշխտիլ** – գրգռվել, շփոթվել, **Փաշայ** – կենդանիների սրունքը, **Փառչամ** – զգեստի քղանցք, **Փաս 1** – հարգ, պատիվ, **Փասպան** – պահապան, **Փատիշահ** – արքա, **Փատշահզադայ, փատշահզատայ** – արքայադուստր, **Փարդայ** – խոսքի ձև՝ եղանակ, տոն, **Փարուարիշ** – սնունդ, խնամք, **Փարչ** – կուժ, **Փարս** – պարսկական, **Փարսի**

աուռան, փարսիեաւռան (բւբ.) – բույս, դիվաճար, *Փարտայ, փարդէ, փարտէ, փերտա, փէրտէ* – 1. վարագույր, քող, 2. աչքի թաղանթ, *Փափասի* – պարսկական արծաթ դրամ, *Փաք* – մաքուր, անաղարտ, *Փեղամբար, փեղամբեր, փեղամպար* – մարգարէ, *Փեշրաւ* – առաջընթաց, նախընթաց, նախանշան, *Փերեզիկ, փորեզիկ, փորոզուկ* – շրջիկ մանրավաճառ, *Փերուզաճ, փերուզայ, փերուժա* – փիրուզ, *Փերչինէլ* – բնեռել, գամել, *Փէշ* – զգեստի քղանցք, *Փէշայ* – արհեստ, *Փիլադիք* – գավազան, *Փիս* – պիսակ, *Փիր* – առաջնորդ, *Փոշիման* – զղջացած, *Փուխթայ, փուխտայ* – եփած, եռացրած, *Փուշտայ* – թիկնամիս, սուկի, *Փուշտրա* – կապ, կապոց, *Փուռ 3* – փարթամ, լիքը, *Փուսթայ, փուստայ* – պիստակ, *Փուր 2* – լի, լրիվ, *Փոշի* – գլխաշոր, փուշի, *Քազմազու* – կարմբանի սերմը՝ պտուղը, *Քալ 2* – ճաղատ, *Քալամ* (բւբ.) – կաղամբ, *Քալաֆ* – պեպեն, *Քալփաթուն* – արքան, *Քահրիպար* – սաթ, *Քամ 2* – քիչ, պակաս, *Քամանդար* – նետաձիգ, *Քան 1* – հանք, հանքախորշ, *Քանկար* (բւբ.) – բույս, արտիճուկ, *Քանկարգատ* – փսխեցնող խեժ, *Քանճիտայ* (բժշկ.) – սն պեպեն, *Քաշիւ* – կապտեղ, *Քաշիսի ռուսի* (բւբ.) – բույս, լեռնակարոս, *Քաշիշ, քէշիշ* – քահանա, *Քաշք* – չորթան, *Քաչալ* – ճաղատ, *Քապար* (բւբ.) – բույս, կապրցախ, *Քապիլի-քարուլի* – աֆղանական, *Քապուս* – մղձավանջ, *Քապտի* (բժշկ.) – ջրգողություն, *Քաջօլ, քաջօլ* (թերևս պրսկ.) – բարկացած, *Քասայ* – բաժակ, *Քասնի* (բւբ.) – բույս, ճաճատուկ, *Քատի* (բւբ.) – ծառ, քատար, *Քարաք* (բժշկ.) – թարախահոսություն, *Քարժանկ* (կենդ.) – խեցգետին, *Քարխանաճի* – գործատեր, *Քարխանայ* – արհեստանոց, *Քարկարտան, քարկանտան* (կենդ.) – ոնգեղջյուր, *Քարկուզարություն* – կառավարելը, *Քարստանայ* (բւբ.) – բույս, տերևատ,, մազարիոն, *Քարւան* – քարաւան, *Քարւանսարայ* – իջևանատուն, *Քարթառ* (կենդ.) – բորենի, *Քաֆշայ* – քափ, *Քաք* – չոր հաց, պարսիմատ, *Քաք* բզեզ (կենդ.) – լու, *Քաֆ* – քափ, *Քաֆուր* – քափուր (դեղ, սպեղանի), *Քենուխտ, քենուխտ* – ողորկ, բարի կաշի, *Քէմիագար* – ալքիմակոս, *Քըմնէ, քըմն, քմնէ* (բժշկ.) – աչքի եղջերաթաղանթի թարախային բորբոքում, *Քթան* (բւբ.) – բույս, կտավատ, *Քիթթայ, քիթթէ* – բույսի ցողուններից ստացվող խեժ, *Քիլայ* – գլանաձև կավե աման, *Քիմատ* (բժշկ.) – ջերմախյուս, *Քիմիայ* – փիլիսոփայական քար, *Քիմսայ* – միտաքսէ գործվածք, *Քիշնիճ, քիշնուճ* (բւբ.) – բույս, համեմ, *Քիչ* – սակալ, *Քիսէ* – քսակ, *Քիրմանի* – քիրմանյան, *Քիքք* – աչքի բիք, *Քմին* – դարան, ծուղակ, *Քնճուք* – (բւբ.) – բույս, քնջութ, *Քուլիչայ* – կարկանդակ, *Քունդուս* (բւբ.) – բույս, կեղծ դնձլամեր, *Քունջ* – անկյուն, *Քունտուր* – խունկ, *Քուշատ* – զվարճություն, ուրախություն, *Քուշտիկ* – գոտեմարտ, ըմբշամարտ, *Քուշտիկիր* – գոտեմարտիկ, ըմբիշ, *Քուշայ* – փողաց, նրբանցք, *Քուսել* – հրմշտել, *Քուստիկ, քուստիք, քուստուկ, կօստիկ* (հավանաբար պիլ. գոտի) – գոտի, *Քուֆտայ* – կոշովակ, *Քօթալ, քոթալ* – շքեղ թամբած ձի, *Քօշք* – վերնատուն, *Օլուֆայ* – թռչակ, ոռճիկ, *Օշնան* (բւբ.) – բույս, օշան, աղաբույս, *Ճաթր ասալիոն, ֆաթրասալիոն*

(բւբ.) – մաղաղանոս, **Ֆախրի** – խաղողի տեսակ, **Ֆաղթ, ֆաղտ** – ֆանճանկուշտ, ծառ, արբահամաճառ, **Ֆայունիա** (բւբ.) – քաջվարդ, **Ֆառահ** – ուրախություն, **Ֆառայ** – խոտ, խոտի ցողուն, **Ֆառաշ** – սպասավոր, ծառա, **Ֆարադաթ** – հանգիստ, հոգեկան անդորրություն, **Ֆարանճամուշկ** (բւբ.) – բույս, վայրի անանուխ, **Ֆարգհանդայ** – գույք՝ եկեղեցու համար, **Ֆարխութզին** (բւբ.) – տե՛ս մրտի տակ, թուփ, մրտենի, **Ֆարման** – հրաման, հրովարտակ, **Ֆարսանկ** – ֆարսախ, **Ֆարսի** – Պարսկաստան, պարսկերեն, **Ֆարֆիզ** (հնք.) – ծիրանաքար, **Ֆարֆիր** – բոսոր ծիրանաքար, **Ֆարֆիր** – բոսոր գույն, **Ֆերրֆուռ** – ճենապակի, **Ֆրս, ֆրսուս** – լայն, ընդարձակ, **Ֆիլի** – մոխրագույն, **Ֆիդան, ֆեդան, ֆդան, ֆրդան** – ողբ, սուգ, **Ֆլուս** – լուծողական դեղ, **Ֆնտու** – գրաստների հիվանդություն, **Ֆուվա** – հեկեկանք, հեճկլտանք, **Ֆունկի** – ֆրանսերեն, **Ֆրիաթ, ֆրիատ, ֆրիադ, ֆրեաթ, ֆերեաթ, ֆերեադ, ֆրրաթ, ֆրրիաթ** – ողբ, բողոքի ձայն, **Ֆրեսայի** (թերևս պրսկ.) – մուգ կանաչ ոսկեփայլ երանգով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-53>

Գրականություն

1. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, առաջին մաս, Երևան, 365 էջ:
2. Հովհաննիսյան Լ. Շ., Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, 303 էջ:
3. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Ս., Միջին հայերենի բառարան, հ. Ա, Երևան, 1987, 419 էջ:
4. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Ս., Միջին հայերենի բառարան, հ. Բ, Երևան, 1992, 409 էջ:
5. Մուրադյան Մ. Հ., Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, հ. Ա, 496 էջ:

Персидские заимствования в среднеармянском языке

Тереза Шахвердян

Резюме

Ключевые слова: *внешнее средство пополнения словарного запаса, прямое и опосредованное проникновение слов, частотность заимствованных слов, сферы употребления, армяно-персидские омонимы, иноязычно-персидские омонимы*

Словарный запас – это не застывшая реальность, а живой организм, который постоянно претерпевает изменения. С помощью заимствованных новых слов, обогащается словарный запас. В армянском языке, согласно «Коренному словарю» Г. Ачаряна, больше всего заимствований было из персидского языка – 1411. В статье рассматриваются персидские заимствования в среднеармянском языке по данным «Среднеармянского словаря», который включает языковой материал, засвидетельствованный в самостоятельных и переводных произведениях XII-XVI в., а отчасти XVII века. Исследования подтверждают, что арабские заимствования стоят на первом месте среди среднеармянских заимствований, хотя персидских заимствований немало, но они на втором месте – 1037. Число неофициальных заимствований из персидского – 1020, из древнеперсидского 22 слова перешли в среднеармянский язык. Впрочем, авторы словарям имеют некоторые сомнения по поводу источником заимствований. Особенно большое количество персидских заимствований осуществилось через посредничество арабского языка и составляет около 400 слов. Имеется большое число персидско-турецких заимствований, их количество составляет 96. Количество персидско-арабских заимствований составляет 13 слов, турецко-персидских – 20 слов, древнеперсидских – 22, «вероятно» персидских – 24. Схема трехязычных заимствований следующая: персидско-арабско-турецкие – 2, арабско-персидско-турецкие – 94, арабско-турецко-персидские – 28, турецко-арабско-персидский – 1. Эти заимствования были реализованы по необходимости и охватывают различные области: астрономию, медицину, ботанику, фармацию, зоологию и т. д. Интересны и омонимы – около 70 слов, которые имеют один и тот же корень, разные корни и пары слов, заимствованные из иностранных языков, иногда могут быть трехсложными.

Persian Borrowings in the Middle Armenian Language

Tereza Shahverdyan

Summary

Key words: *external means of vocabulary enrichment, direct and mediated word penetration, their frequency, spheres, homonyms in Armenian-Persian and Persian-other languages*

Vocabulary is a living organism and not a frozen reality which is constantly undergoing changes. New words are introduced and vocabulary is enriched. In Armenian, according to H.Acharyan's "Root Dictionary", a great number of borrowings were taken from Persian language – 1411. The article examines the Persian borrowings in Middle Armenian, according to the Middle Armenian dictionary, which includes the linguistic material evidenced in independent and translated works of the 12th-16th centuries, and partly of the 17th century. Studies confirm that Arabic borrowings are in the first place among Middle Armenian borrowings, although Persian borrowings are not few, but they are in the second place, they are 1037 in number. The number of informal borrowings from Persian is 1020, from Old Persian 22 words have passed into Middle Armenian. Authors express doubt about their origin of being Persian. A Particularly large number of Persian borrowings through Arabic is around 400 words. There are a large number of Persian-Turkish loanwords, their number is 96. The number of Persian-Arabic borrowings is 13 words, Turkish-Persian – 20 words, from Old Persian – 22, "probably" from Persian – 24.

The pattern of trilingual borrowings is as follows: Persian-Arabic-Turkish – 2, Arabic-Persian-Turkish – 94, Arabic-Turkish-Persian – 28, Turkish-Arabic-Persian – 1. These borrowings were made out of necessity and cover various fields: astronomy, medicine, botany, pharmacy, zoology. Homonyms are also interesting – about 70 words, have the same root, different root and word pairs borrowed from foreign languages and may sometimes be of three-syllable construction.

Ներկայացվել է 14.04.2023 թ.

Գրախոսվել է 30.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Եռաբաղադրիչ բայական դարձվածային միավորների ընդմիջարկումը

Ալբերտ Պողոսյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-76>

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մենաբառ, բազմաբառ, դասակարգում ըստ քանակի, դասակարգում ըստ շարահյուսական հարաբերության, համագոր և անհամագոր, դերբայական կառույց

Մեր նախորդ հոդվածում¹ անդրադարձել ենք ընդմիջարկություններին՝ որպես շարահյուսական համագոր (ենթակա-ստորոցյալ) և անհամագոր (լրացում-լրացյալ) կապակցությունները իրարից տրոհող մենաբառ կամ բազմաբառ միավորներ, ներկայացրել ենք հայ լեզվաբանության մեջ նրա ուսումնասիրության պատմությունը: Անդրադարձել ենք երկբաղադրիչ բայական դարձվածային միավորների ընդմիջարկությանը, ինչպիսի ուսումնասիրություն մինչև այդ չի եղել: Նշել ենք, որ հայ քերականագիտության մեջ ընդմիջարկման հարցը տրոհվող լրացումներին, միջանկյալ և ներդրյալ բառերին, բառակապակցություններին և նախադասություններին առնչվող չափով շոշափել են Վ. Առաքելյանը [1, 441-452; 2, 434-457], Ա. Մարությանը [3, 6], իսկ Էդ. Մկրտչյանը, ուսումնասիրելով գրաբարի ընդմիջարկությունները, խոսել է հարադիր բարդությունների ընդմիջարկման մասին. «Հազվադեպ ընդմիջարկվում են որոշ բարդ բառեր (հարադրական բարդություններ)» [4, 145]: Ավելացնենք, որ լեզվաբանները դարձվածային միավորների ընդմիջարկմանը չեն անդրադարձել:

Ներկա հոդվածում մեր ուսումնասիրության նյութը եռաբաղադրիչ բայական դարձվածային միավորների ընդմիջարկումն է: Այս տեսանկյունից առանձնացրել ենք վերոնշյալ կապակցությունների երկու տեսակ՝

1. մեկ ընդմիջարկումով եռաբաղադրիչ բայական դարձվածային միավորներ՝ Հայրապետը հագիվ էր կուլ տվել դերձակի հասցրած վիրավորանքը, երբ նրա *գլխին նոր փորձանք եկավ* (ԼՀՀ, 139):
2. երկու ընդմիջարկումով եռաբաղադրիչ բայական դարձվածային միավորներ՝ Մածունի *համն, այնուամենայնիվ, մնաց Կյուրոսի քերանում* (ՀԽԵՍ, 203):

¹ Տե՛ս Երկբաղադրիչ բայական դարձվածային միավորների ընդմիջարկումը, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Ա պրակ (հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկա), Երևան, 2020, թիվ 1, էջ 57-70:

Նշենք, որ մեկ ընդմիջարկումով եռաբաղադրիչ բայական դարձվածային կապակցությունները քանակական առումով գերազանցում են երկու ընդմիջարկումով եռաբաղադրիչ բայական դարձվածային միավորներին:

Մեկ ընդմիջարկումով եռաբաղադրիչ բայական դարձվածային միավորներում կարող են ընդմիջարկվել կառույցի՝

ա) առաջին բաղադրիչը երկրորդից և երրորդից, օրինակ՝ Լսո՞ւմ ես, թե՞ *ականջներդ դիտավորյալ բամբակ ես խրել...* (ԼՀՀ, 275): Այս նախադասության մեջ *ականջները բամբակ խրել* դարձվածքի առաջին (*ականջներդ*) բաղադրիչը ընդմիջարկվել է երկրորդից և երրորդից (*բամբակ խրել*):

բ) Երկրորդ բաղադրիչը առաջինից և երրորդից: Օրինակ՝ Մեկիքը երկար ժամանակ է *աչքը պահում այդ կրակին...* (ՄԱՃՀ, 111): Այս նախադասության մեջ *աչքը կրակին պահել* դարձվածքի երկրորդ (*կրակին*) բաղադրիչը ընդմիջարկվել է առաջինից և երրորդից (*աչքը պահել*):

գ) Երրորդ բաղադրիչը առաջինից և երկրորդից²: Օրինակ՝ Դու հակա ես, քեզ նմանների հետ ո՛չ թե մտրակով, այլ *արձձի լեզվով է հարկավոր խոսել* (ԶԽՄ, 296): Այս նախադասության մեջ *արձձի լեզվով խոսել* կառույցի երրորդ (*խոսել*) բաղադրիչը ընդմիջարկվել է առաջինից և երկրորդից (*արձձի լեզվով*):

Կապակցության բաղադրիչները միմյանցից ընդմիջարկող միավորը կարող է լինել՝ 1. մենաբառ, 2. բազմաբառ, 3. մենաբառ և բազմաբառ³:

1. Մենաբառ ընդմիջարկությունները լինում են.

1.1. նախադասության անդամ չհամարվող. օրինակ՝ Սա ավելի է կատաղել և *աչքերից կարծես կայծեր են ցայտում* (ՀՄԱԶՀ, 579): Մեկի կոկորդուս **ասես ջուր էր եռում**⁴ (ՄԱՃՀ, 16): – Քրդերի մեջ էլ *արյունը միայն արյունով է լվացվում*, Ավդի,– պատասխանում եմ ես (ՀՄԱԶՀ, 160):

1.2. Նախադասության անդամ համարվող. այսպես՝ Մի կտոր *ծամոն կդարձնի աղջկա անունն* ու կգցի թաղի բերանը (ԱԵ1, 388): Կնիկը որ *մտքում*

² Բաղադրիչների հերթականությունը տրվում է ըստ բառարանային դասավորվածության: Այսպես «...սարդարը ինչ-որ բան էր բզզում՝ *մտած նրա ականջի տակ* (ՄԱՃՀ, 231)» նախադասության մեջ ընդմիջարկվել են *ականջի տակ մտնել* դարձվածային միավորի երկրորդ (*տակ*) և երրորդ (*մտնել*) բաղադրիչները, իսկ «Աղջիկը անմիջապես *գտավ խոսքի կտրված թելը* (ԿՊԸԵ1, 122)» նախադասության մեջ ընդմիջարկվել են *խոսքի թելը գտնել* կառույցի առաջին (*խոսքի*) և երկրորդ (*թելը*) բաղադրիչները:

³ Այս դեպքում մենաբառ և բազմաբառ միավորները հանդես են գալիս միասին:

* Աստղանիշով նշված դարձվածային միավորները բացակայում են հայերեն դարձվածաբանական բառարաններից:

մի բան դրեց, կանխի (ՀՄԱԶՀ1, 37): *...ծարավ էր նրա հոգիմ*... անծայր ուղիներ էր երազում նրա հոգին... (ԱԻԵԺ4, 210):*

1.3. Նախադասության անդամ չհամարվող մենաբառ և նախադասության անդամ համարվող մենաբառ. օրինակ՝ Գերմանացիների *օրն էլ մի օր չի*, էնտեղ էլ ֆուրդունչի էի՝ մենակ թե գործարանի զիբիլն էի թափում, ոչինչ, գլուխս պահում էի (ՀՄԱԶՀ2, 183): Մեկ էլ մեր *արյունը հո մյուսներից կարմիր չի* (ՀՄԱԶՀ1, 73): *...քո բերանն էս ո՞վ է լեզու դրել (ԿՊԸԵ1, 201):* Համովը՝ դեռ համով է, *հավը տեսնենք երբ է դուրս գալու* (ՀՄԵ2, 78):

1.4. Նախադասության անդամ համարվող մենաբառ և նախադասության անդամ չհամարվող մենաբառ. այսպես՝ Դուք ուզում եք, որ ձեր *ջրադացին ինքս էլ ջուր ավելացնեմ* (ԱՀՇ, 296): Ճիշտն ասած, էլ լաթերի վրա ալիդարացիների *սիրտը ենքան էլ տաք չի... (ՄԳԲ, 264):* Կարող էիր ու չպահեցի՞ր, թե՞ չկարեցար ու *քթերիդ ծուխը դրանից էլ գցում է** (ՀՄԵ2 – 413):

2. Բազմաբառ ընդմիջարկությունները կարող են լինել՝

2.1. Նախադասության անդամ համարվող համագոր բազմաբառ կառույց. օրինակ՝ Քեռի Գեղամն, ասես դիտավորյալ, ամեն քայլափոխի հետևում գտնում է ինձ, որպեսզի *գլխիս զանազան քաղցրանուշ խոսքեր թափի** (ԼՀՀ, 86): *...Դանիելբեկ Փիրումյանը Սարդարապատի տակ անցել է նահանջող հայ գործի գլուխ... (ԲՈՒՍ, 181):*

2.2. Նախադասության անդամ համարվող համագոր բազմաբառ և չհամարվող մենաբառ կապակցություն. օրինակ՝ Թվում էր հրամանատարի գեղեցիկ *գլխով գեղեցիկ ու խորհրդավոր մտքեր են անցնում... (ԶԽԶՄ, 110):*

2.3. Նախադասության անդամ համարվող կայուն բազմաբառ կառույց. այսպես՝ Թե ծախեմ, շելխին կտամ, թող *դուրս գա Գևորգ աղայիդ այքը... (ԱԵ, 258):* Իմ հերն, ասում է, լուռ քարի պես ձորն ընկավ ու ինչպես երազախառն լսես մահվան ու զիշերաբուխի թրթիտը՝ *տվեց Ճզնավորի գլխին դուրս եկավ* (ՀՄԵ2, 260):

2.4. Նախադասության անդամ համարվող անհամագոր բազմաբառ կապակցություն. օրինակ՝ Բայց բինբաշին ո՞վ է կամ ի՞նչ, որ ֆերիկ մարշալին է դաս տալիս և այն էլ խայտառակ ու աննամուս պարտություն կրելուց հետո, այսպես տմարդորեն օսմանյան բանակի *անունը սարդարապատյան տափաստանում գետնով տալուց* հետո (ԲՈՒՍ, 341): Խոսքին ազդեցիկ տոն տալու համար բերանը մի կողմի վրա ծռում էր, որից այտի վարդագույն մազանոթներով մաշկը աղեղնաձև կնճռոտվում էր ու *այքը սպառնագին կկոցվում՝ ծոտ էր լինում* (ԼԶՂՄՊԲ, 159):

2.5. Նախադասության անդամ համարվող տարասեռ բազմաբառ կառույց. այսպես՝ Ես էլ տարածվեցի բարեկամիս կողքին, *ականջս տված Արաքսի խուլ շատաչին* և մտքերիս հետ գնում էի... (ԱԻԵԺ4, 136): Հավանա-

բար, նա մորս եղբայրներին հասկացնել է տվել, թե *որքան է կշռում իր յուրաքանչյուր բռունցքը*, և նրանք խելքի են եկել (ԼՀՀ, 11):

2.6. Նախադասության անդամ համարվող կապական բազմաբառ կապակցություն. օրինակ՝ *Ես ու կնիկս տրաքվում էինք, բայց, ի՞նչ կասեք, տղիս սիրտը կնկա վրա տաք էր* (ՄԽՄՍ, 169): Ավդին հասկանում է, որ իր *հաշիվը աշխարհի հետ վերջացած է* և փրկության մի վերջին փորձ է անում (ՀՄԱԶՀ1, 160):

2.7. Նախադասության անդամ համարվող դերբայական բազմաբառ կառույց. օրինակ՝ «Քեռուդ նամակ չգրեցիր» – ամեն անգամ, *աչքը հեռուստացույցին դրած լուսանկարին առնելիս*, ասում է Մետրոպը (ՎԱՁԵՏՑՎ, 174): Ամեն օրվա պես... մտերմիկ զրույց էին անում նրանք, երբ շների հաչը *ընդհատեց ընկերների մեջ մանվող խոսքի թելը* (ԱԻԵԺ4, 254):

2.8. Նախադասության անդամ չհամարվող դարձվածային բազմաբառ կապակցություն՝ Ասում էին, իբր մորական տատի *նորը մի քիչ դուրս է եղել...* (ՆՇՏՇ, 52): Միայն չեմ հասկանում, թե ինչու *են նորքերս մի տեսակ կապ ընկել* (ՀԽԵՍ, 324):

Երրորդ խմբի ընդմիջարկությունները կարող են դասակարգվել մի քանի ենթախմբերով.

3.1. Նախադասության անդամ համարվող կայուն բազմաբառ և մենաբառ անհամագոր կառույց. այսպես՝ Մարինե Մելիքյանը շուտով բարոյական ծանր *հարված հասցրեց ակադեմիկոս Վրթանեսյանի բարի անվանը...* (ՄՄԽՊԱ, 139):

3.2. Նախադասության անդամ համարվող մենաբառ և կայուն բազմաբառ կապակցություն. այսպես՝ Նրանց *աչքին, մտածում էր Մաշա Իվանովը⁴, թոզ չես փչի*, նրանք իրենց մաշկի վրա այդպիսի⁶ բաներ են զգացել (ԿՏՆ. 251):

3.3. Նախադասության անդամ համարվող մենաբառ և բազմաբառ տարասեռ կառույց. այսպես՝ *...հաջորդ պահին գլխապատտա փախա՝ շունչս գերեզմանամերձ տների մոտ տեղը բերելով* (ՆՇՏՇ, 273):

3.4. Նախադասության անդամ չհամարվող բազմաբառ և մենաբառ, համարվող մենաբառ և կայուն բազմաբառ կապակցություն. օրինակ՝ Իսկ եթե Պետրոսին թաքուն բերենք...ապա *սուր չի կախվի ոչ մեր, ոչ էլ Արևմտյան Հայաստանի գլխին* (ՄԽՄՍ, 136):

3.5. Նախադասության անդամ չհամարվող մենաբառ և համարվող բազմաբառ կառույց. այսպես՝ Մտածում էինք՝ Տիրոջ *աչքը թող մեր վրա քաղոր լինի* (ԼԶՂՄՊԲ, 7):

3.6. Նախադասության անդամ չհամարվող բազմաբառ կապակցություն՝

⁴ Սակավ հանդիպող դեպք է, երբ դարձվածային միավորը ընդմիջարկվում է նախադասությամբ:

Տերտերի հետ ունեցած խոսակցությունից հետո Հարութի *երեսի կաշին, ինչպես ասում է ժողովրդի ոճը, պատուկեց...* (ԱԻԵԺ4, 463):

Շարահյուսական հարաբերության տեսանկյունից մեկ ընդմիջարկումով եռաբաղադրիչ բայական դարձվածային միավորներում մենաբառ ընդմիջարկությունները նախադասության կազմում կարող են կատարել շարահյուսական տարբեր պաշտոններ.

ա) Ենթակա՝ Իսկ ես, որ այնքան էլ շեֆասեր չեմ և գերադասում եմ իմ *անիվը ինքս հանել ցեխից*, մի անգամ միամտություն ունեցա ընդունելություն խնդրել ընկեր Վասիլյանից... (ԱԵ1, 267): ...բայց, խոսքը մեր մեջ մնա, *աշխարհքի համը դու ես առնում...* (ԱԻԵԺ4, 190):

բ) Ստորոգյալ՝ *Վերանա՛, կարվի՛ քու տեսակը*, վերանա՛ ք դուք, չլինե՛ք, ասածու գառան աշխարհքը փչացրիք... (ՀՄՏ, 180):

գ) Բաղադրյալ բայական ստորոգյալի բաղկացուցիչ մաս՝ ստորոգելի՝ ...քո մեռնելուց հետո այդ բոլոր մարդիկ *միսյանց միսը կսկսեն ուտել...* (ՎՓԵԺ1, 57): Հարամ կաթնակեր, էդ ո՞ւմ *պատվի հետ ես ուզում խաղալ...* (ՆՇՏՇ, 24):

դ) Անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի բաղկացուցիչ մաս՝ ստորոգելի՝ Բոլշևիկները *հաշտ աչքով չեն կարող նայել* Հայաստանի այժմյան կառավարության վարքագծին (ՀՄԱԶՀ3, 278): Նրան հարևանները միխթարում էին, թե ոչինչ չի լինի, աղջիկը կգտնվի, հո *գետնի տակ չէր կարող անցնել* (ԱՀԹ, 227):

ե) Որոշիչ՝ ...մի քանի տարի անց, ես ամենքն էլ մեծ ու պստիկ մեկ դռնով *դուրս են գալու ես աշխարհքից...* (ԱԻԵԺ4, 308): Ես *քու հայրենասեր ջանին մեռնիմ*, ստացա՞ ք (ԼՋՂՄՊԲ, 74):

զ) Հատկացուցիչ՝ Գնդի հրամանատար Պողոսբեկ Փիրումյանը դիտակետում հետևում էր մարտին և *ականջը ռադիոյի ձայնին էր...* (ԲՈՒՄ, 355): –Առ,– անդաստիարակ տղամարդու պես բութը մատների արանքը անցըրեց Ադունը, և դա այն էր, ինչը *շարժում էր Սիմոնի գլխի որդերը* (ՀՄԵ2, 59):

է) Ուղիղ խնդիր՝ ...*ճակատներին են ա գրված էլել*, նրանք էլ էդ օրերը քաշել են... (ՊՊ1, 94): Էլի չհասցրինք, ուշացանք, *Աստված հետագան բարի անի* (ՎՄՏ, 298): Մի տեսնեմ, թե *ի՞նչ քամի էր նրան բերել* այստեղ... (ԱՀՇ, 73):

ը) Հանգաման անուղղակի խնդիր՝ ...թող տան երեսը չտեսնի, մինչև *աստված նրան դարձ տա* (ԱԻԵԺ4, 464): ...ես մի տեղ միխթարություն պիտի որոնեի, ուր ինձ ցնդված չանվանեն և *քաղցր աչքով երեսիս նայեն* (ԱԵ, 206):

թ) Ժամանակի պարագա՝ Մակայն, ինչ էլ աներ, որտեղ էլ լիներ, *ականջը մշտապես կանչի էր...* (ԶԽՄ, 25): Արշակը նույնպես ինձ երեխա է համարում,

աչքը միշտ վրաս պահում, որ Ղուկասը «փորձանքի մեջ չզցի», թեև ինքն էլ է սիրում նրան (ՀՄԱԶՀ, 383):

ժ) Ձևի պարագա՝ – Շնորհակալ եմ, Երեմո... – նրա *շուրթերից ինքնաբերաբար դուրս պրծավ* հեզնալի շշունջը... (ԶԴԱՎ, 88): ...թե չէ ես գիտեմ, թե դրա *բնույթը ոնց քամուն կտամ...* (ՎԱԵ4 – 90):

ժա) Չափի պարագա՝ Այդ պատանի մելիքը *քիթը շատ է բարձր պահում* (ՄԱՃՀ, 55): Միլիտոսը տասնմեկ տարվա ամուսնական կյանքում ուներ միայն մեկ զավակ, հիվանդոտ երեխա էր, *լեզուն հաճախակի կուլ էր գնում* (ԶԽԶՄ, 151): Սոնայի *օջախի մուխը տարիներով դադարել էր**, իսկ ճրագը ամուսնու կախվելուց հետո հանգել էր և չէր վառվել (ԱԵ, 358):

ժբ) Պատճառի պարագա՝ *Սեպերդ ինչի՞ էս բաց արել...* (ՀՄԵ2, 90): Արքունապետի *բերանը զարմանքից բաց մնաց*, իսկ արքան խոսքը շարունակելու նշան արեց (ԶԽԱԳ, 70):

ժգ) Տեղի պարագա՝ Նրանք պատերազմի մեջ մտան, ախպերս որ դու ես, որպեսզի առիթն օգտագործեն, բնաջնջեն մեր ժողովրդին և *սրի ծայրով մեջտեղից հանեն* Հայկական հարցը, որ այդպես մնում էր նրանց կոկորդում... (ՀՄԱԶՀ3, 296): *Մանձերդ այստեղ պինդ բռնիր*, պատասխանատու տարիք է (ՀՄԵ2, 143):

ժդ) Նպատակի պարագա՝ ...ինչպես որ փոքրավորը *մեծավորի ոտը խնդրանքի գնա՞* մեր քույրը այդպես եկավ մեր դուռը... (ՀՄՏ, 329) և այլն:

Մեկ ընդմիջարկումով եռաբաղադրիչ բայական դարձվածային միավորներում բազմաբառ ընդմիջարկությունները կարող են կազմված լինել նախադասության տարբեր անդամների գուգադրումից՝

ա) Որոշիչ, ենթակա՝ ...բոլորդ կույր ու կաղ թոշակատու եք, մեջներիդ իբր ջահելը ես եմ, ես էլ անընդունակ եմ, քաղաքում իմ *դնչին ոչ մի կնիկ քացի չի տա* (ՀՄԵ2, 67):

բ) Ենթակա, ժամանակի պարագա՝ ...թուրը, որի *պատիվը ինքը միշտ բարձր էր պահել...* մեկնեց առաջ... (ՄԱՃՀ, 69):

գ) Հատկացուցիչ, որոշիչ՝ Երբ ձմեռային *արեգակն իր հրաշեկ գլուխը հանում է* Շեյթան դադի բարձր կատարների ետևից, սրանք իսկույն սաղմուս են քաղում, և թվում է, թե օրհներգում են արևածագը (ՀՄԱԶՀ3, 253):

դ) Հատկացուցիչ, հատկացուցիչ՝ ...որ հայերեն կարդալ իմանար, հո պահեստապետ Պարույրը էն *խաղը չէր խաղա նրա հոր գլխին* (ՎԱԵ4, 199):

ե) Հատկացուցիչ, տեղի պարագա՝ ...հենց որ իմանում է, որ *ոտքս իմ երկրից դուրս եմ դրել՝* սկսում է ավերումները... (ՄԱՃՀ, 166):

զ) Ժամանակի պարագա, չափի պարագա՝ Ճիշտ էրպես, պարոն գնդապետ, և *բանս հիմի շատ խարաբ է* (ՀՄԱԶՀ2, 102):

է) Չափի պարագա, որոշիչ, ենթակա՝ Եվ արդեն մեր պատանեկան

սրտերը ամենից շատ երկու բան էր թինդ հանում – սերն ու քաջությունը (ԱԲԵԺ4, 31):

ը) Ուղիղ խնդիր, որոշիչ, անջատման անուղղակի խնդիր՝ Ի՛նչ ասեմ, ա՛յ մարդիկ, *աստված ձեզ էդ տեսակ հարսից հեռու պահի...* (ՄԽՄՄ, 169):

թ) Ժամանակի // չափի // ձևի պարագա, որոշիչ, հատկացուցիչ՝ Չեմ հիշում, նրա մասին պատմե՛լ եմ, թե՛ չէ, բայց այն նույն Հայրապետն է, որի *անունը շարունակ բոլոր շուշիքենդցիների լեզվին է* (ԼՀՀ, 134):

ժ) Հատկացուցիչ, հանգման անուղղակի խնդիր, չափի պարագա՝ *Աստված քո թև ու թիկունքին ավելի ուժ տա...* (ՄԳԲ, 145) և այլն:

Երկու ընդմիջարկումով եռանդամ բայական դարձվածային միավորները անհամեմատ սակավ են հանդիպում: Այս դեպքում երկու միջարկություններն էլ սովորաբար մենաբառ են լինում: Այսպես՝ «Ասում են, թե սա տերտերների պես աղոթում է, որպեսզի *աստված ունևորների հոգին շուտ առնի* ու ինքը հաց ունենա (ՀՄԱԶՀՀ, 237)» նախադասության մեջ *աստված հոգին առնի* դարձվածքի բաղադրիչների միջև երկու ընդմիջարկում է հանդես եկել՝ *ունևորների* և *շուտ*, որոնք երկուսն էլ մենաբառ են և նախադասության անդամ՝ հատկացուցիչ և ժամանակի պարագա: Մեկ այլ դեպքում ընդմիջարկություններից մեկը նախադասության անդամ կարող է չլինել: «Դու ուղղակի հիմար ես, ավելի ճիշտ՝ թեթևսովիկի մեկը, որի *գլխին կոպեկի խելք անգամ չկա* (ՎԲ1, 110)» նախադասության մեջ երկրորդ միջարկությունը՝ *անգամ*, նախադասության անդամ չէ:

Խիստ հազվադեպ հանդիպում են բազմանդամ ընդմիջարկություններ: Այսպես՝ «Սոնայի *օջախի մուխը տարիներով դադարել էր, իսկ ճրագը ամուսնու կախվելուց հետո հանգել էր* և չէր վառվել (ԱԵ, 358)» նախադասության մեջ *օջախի ճրագը հանգչել* բայական եռանդամ դարձվածքը ընդմիջարկվել է երկու բազմանդամ ընդմիջարկություններով:

Եզրակացություն: Ընդմիջարկությունները վերջին շրջանում են ուսումնասիրության նյութ դարձել: Նախկինում դրանք առավելապես քննվել են սրոհվող լրացումների, միջանկյալ և ներդրյալ բառերի, բառակապցությունների և նախադասությունների առնչությամբ: Դարձվածային միավորների ընդմիջարկումը ընդհանրապես չի ուսումնասիրվել:

Ներկա հոդվածում մենք քննել ենք բայական եռանդամ դարձվածքները երկու սկզբունքով՝ ըստ քանակական հատկանիշի և ըստ շարահյուսական հարաբերության:

Բայական եռանդամ դարձվածային միավորները առավել հաճախ հանդիպում են մեկ ընդմիջարկումով: Վերջիններս կարող են լինել մենաբառ և բազմաբառ, որոնք կարող են լինել նախադասության անդամ կամ չլինել որպես այդպիսին: Ընդմիջարկությունները խոսքում կարող են կատարել նա-

խաղասության գլխավոր և երկրորդական անդամների դեր:

Երկու ընդմիջարկումով դարձվածային միավորները սակավ են հանդիպում: Այս դեպքում ևս ընդմիջարկող միավորները կարող են լինել մենաբառ և բազմաբառ, կատարել նախադասության որևէ անդամի պաշտոն կամ նախադասության անդամ չլինել:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-76>

Գրականություն

1. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հատոր Ա, Երևան, 1958, 503 էջ:
2. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հատոր Բ, Երևան, 1964, 467 էջ:
3. Մարության Ա., Տրոհվող լրացումները արդի հայերենում, Երևան, 1975, 84 էջ:
4. Մկրտչյան Է., Ընդմիջարկությունները որպես քերականական կապակցությունները տրոհող կառույցներ գրաբարում, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2007, 3 (176), էջ 141-154, Առանձնատիպ, 14 էջ:

Աղբյուրների և դրանց համառոտագրությունների ցանկ

1. Աղավնի, Երկեր երկու հատորով, հատոր 1, Երևան, 1981 – ԱԵ1:
2. Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, 6 հատորով, հատոր 4, Երևան, 1975 - ԱԻԵԺ4:
3. Ատրպետ, Երկեր, Երևան, 1964 – ԱԵ:
4. Արտավազդ Հովակիմյան, Շրջադարձ, Երևան, 1976 – ԱՀԸ:
5. Բագրատ Ուլուբաբյան, Մարդարապատ, Երևան, 1988 – ԲՈՒԲՄ:
6. Զարգանդ Դարյան, Արժիվ Վասպուրականի, Երևան, 1965 – ԶԴԱՎ:
7. Զորայր Խալափյան, Ջերմանց մխիթարություն, Երևան, 1979 – ԶԽՁՄ:
8. Զորայր Խալափյան, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Երևան, 1998 – ԶԽԱԳ:
9. Զորայր Խալափյան, Միջնաշեն, Երևան, 1991 – ԶԽՄ:
10. Լեոնիդ Հուրունց, Հայրեր, Երևան, 1970 – ԼՀՀ:
11. Լևոն Ջավախյան, Ղարաբաղից մինչև պեչենու բաղերը, Երևան, 1999 – ԼՋՂՄՊԲ:
12. Կամարի Տոնոյան, Նիգուլը, Երևան, 1974 – ԿՏՆ:
13. Հայկ Խաչատրյան, Երվանդ Մակավակյաց, Երևան, 1989 – ՀԽԵՄ:
14. Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք առաջին, Երևան, 1969 – ՀՄԱՁՀ1:

15. Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք երկրորդ, Երևան, 1973 – ՀՄԱԶՀ2:
16. Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք երրորդ, Երևան, 1975 – ՀՄԱԶՀ3:
17. Հրանտ Մաթևոսյան, Տերը, Երևան, 1983 – ՀՄՏ:
18. Հրանտ Մաթևոսյան, Երկեր 2 հատորով, հատոր երկրորդ, Երևան, 1985 – ՀՄԵ2:
19. Մկրտիչ Սարգսյան, Խաղաղություն պատերազմից առաջ, Երևան, 1981 – ՄՄԽՊԱ:
20. Մուշեղ Գալշոյան, Բովտուն, Երևան, 1982 – ՄԳԲ:
21. Նելլի Շահնազարյան, Տաք շնչառություն, Երևան, 2013 – ՆՇՏՇ:
22. Սաղաթել Հարությունյան, Թներ, Երևան, 1982 – ՍՀԹ:
23. Սերո Խանգաղյան, Մխիթար սպարապետ, Երևան, 1963 – ՄԽՄՄ:
24. Սուրեն Այվազյան, Ճակատագիրն հայոց, Երևան, 1989 – ՄԱՃՀ:
25. Վախթանգ Անանյան, Երկեր 4 հատորով, հատոր 4, Երևան, 1984 – ՎԱԵ4:
26. Վահագն Մուղնեցյան, Տաբու, Երևան, 2008 – ՎՄՏ:
27. Վանո Սիրադեղյան, Ձեռքդ ետ տար ցավի վրայից, Երևան, 2000 – ՎՍՁԵՏՅՎ:
28. Վարդգես Պետրոսյան, Ընտիր երկեր 2 հատորով, հատոր 1, Երևան, 1983 – ՎՊԸԵ1:
29. Վիկտոր Բալայան, Անցյալը երբեմն մեռնում է մեզ հետ, երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1980 – ՎԲ1:
30. Վրթանես Փափազյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր 1, Երևան, 1972 – ՎՓԵԺ1:

Дисконтность в трехкомпонентных глагольных фразеологических единицах

Альберт Погосян

Резюме

Ключевые слова: *однословный, многословный, классификация по количеству, классификация по синтаксическим отношениям, равноправный, неравноправный, причастная/деепричастная структура*

Дисконтность стала предметом изучения в последнее время. В прошлом она в большинстве случаев исследовалась в связи с обособленными определениями, промежуточными и вводными словами, словосочетаниями и предложениями. Дисконтность фразеологических единиц никогда не становилась предметом исследования.

В данной статье мы исследуем глагольные трехкомпонентные фразеологизмы на основании двух принципов: по количественному признаку и по синтаксическому соотношению. Константная зависимость компонентов является наиболее распространенным типом зависимости среди субстантивных фразеологических единиц. Полная константность компонентов отнюдь не является обязательным признаком фразеологических единиц. В случае появления варианта константная зависимость может перейти в константно-вариантную. Фразеологические варианты тождественны по качеству и количеству значений, а также по стилистическим и синтаксическим функциям. Если у фразеологических единиц с частично подменяемыми компонентами имеется одинаковое число значений, но они не полностью совпадают, отличаясь оттенком, образностью, стилистической направленностью, то образуются структурные синонимы. При несовпадении числа значений при частично различном лексическом составе, при различной образной основе даже при наличии общего значения, говорить о фразеологической вариантности или о структурной синонимии не представляется возможным. Подобные обороты следует рассматривать как самостоятельные фразеологические единицы.

Глагольные трехкомпонентные фразеологизмы часто встречаются с одной дисконтной единицей. Она может быть как однословной, так и многословной и чаще всего выступает как член предложения, хотя может и не иметь подобной функции. Дисконтные единицы в речи могут выполнять роль главного и второстепенного членов предложения.

Фразеологические обороты с двумя дисконтными единицами встречаются редко. В такой ситуации они также могут быть однословными и многословными, выступая в роли любых членов предложения, впрочем, они могут быть лишены данных глоссологических возможностей.

Discontinuity of Three-Component Verbal Phrasal Units

Albert Poghosyan

Summary

Key words: *one-word, polyword, classification by quantity, classification by syntactic ratio, proportionate and disproportionated, participial structure*

Discontinuity has become material of study in recent years. Before now interjections and introductory words, phrases and sentences have been largely studied, but the discontinuity of phrasal units hasn't been studied yet.

The constant dependence of components is the most common type of dependence among substantive phraseological units. The complete constancy of the components is by no means a mandatory feature of phraseological units. If a variant appears, the constant dependence can turn into a constant-variant one. Phraseological variants are identical in quality and quantity of meanings, as well as in stylistic and syntactic functions. If phraseological units with partially substituted components have the same number of meanings, but they do not completely coincide, differing in shade, figurativeness, stylistic orientation, the structural synonyms are formed. If the number of meanings does not match, with a partially different lexical composition, with a different figurative basis, even if there is a common meaning, it is not possible to talk about phraseological variation or structural synonymy. Such turns should be considered as independent phraseological units.

In this article, we will consider discontinuity of three-component verbal phrasal units in two main ways: according to the principle of quantitative attribute and syntactic relation.

Discontinuity of three-component verbal phrasal units often occurs with one interval. These may be one-word or polyword, which may or may not be members of the sentence. Discontinuity can perform the role of main and secondary members in the sentence.

Phrasal units are rare with two intervals. In this case, intervals can be one-word or polyword, doing or not doing the position of a sentence member.

Ներկայացվել է 14.03.2023 թ.

Գրախոսվել է 24.03.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Особенности изучения наиболее употребительных русских и английских фразеологизмов в армянской аудитории

*Жанна Алоян
Нина Джагинян*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-87>

***Ключевые слова:** лингвокультурология, методический подход, интерактивный метод обучения, фразеологическая семантика, языковая среда, языковая картина мира, совокупность значений*

Введение

Владение тем или иным иностранным языком или языками, безусловно, является важной предпосылкой для создания личных, межкультурных, профессиональных и других контактов в мировом сообществе. Чтобы полностью овладеть лексикой языка, необходимо знать не только денотативные значения слов, но и значения фразеологических выражений, которые в большинстве случаев совершенно отличаются от буквальных. Фразеологизмы из-за их высокой частоты использования рассматриваются как важный аспект изучения языка в целом и приобретения и расширения словарного запаса в частности. Как правило, они специфичны как для представителей разных культур и стран, так и для разных слоев общества в рамках одной культурной общности. Во фразеологизмах находят свое отражение история народа, своеобразие его культуры и быта, его праздники, традиции и обычаи. Безусловно, знание фразеологии намного облегчает понимание как публицистической, так и художественной литературы на иностранном языке.

В последние десятилетия изучение фразеологических единиц (ФЕ) является весьма актуальным в лингвокультурологическом и когнитивном аспектах, о чем свидетельствуют работы таких известных лингвистов, как В. М. Мокиенко, В. А. Маслова, В. Н. Телия, Н. Ф. Алефиренко, Л. Г. Золотых, В. Е. Щербина и многих других. Вопросы семантики фразеологизмов, основ процесса фразеологизации, выявление общенациональной и чисто национальной специфики в устойчивых выражениях находятся в центре внимания их исследований.

В данной статье рассматриваются лингвокультурологические и семантические особенности наиболее употребительных фразеологизмов в русском, армянском и английском языках, а также некоторые методические подходы к изучению фразеологизмов в процессе преподавания русского языка армянским студентам отделения «Английский язык и литература».

Актуальность темы данной статьи обусловлена необходимостью анализа специфики изучения и употребления фразеологических единиц на занятиях по русскому языку в армянской аудитории. Актуальность данной темы обосновывается и тем, что освоение русских фразеологизмов иностранными учащимися является не только важным познавательным и общеобразовательным этапом в изучении русского языка как иностранного, но и становится одной из ступеней развития коммуникативно-деятельностного подхода в изучении лексики. Знание и понимание смысла устойчивых оборотов дает возможность обучающимся верно воспринять прочитанный отрывок текста или услышанную фразу. Сравнение фразеологических единиц русского, армянского и английского языков в рамках лингвокультурологического подхода способствует выявлению культурных и языковых особенностей разных языков и народов, что также обуславливает актуальность исследования.

Фразеологизмы являются объектом изучения лингвокультурологии. Лингвокультурология – комплексная научная дисциплина, изучающая «взаимосвязь и взаимовлияние культуры и языка в его функционировании и отражающая этот процесс как целостную структуру в единстве их языкового и внеязыкового (культурного) содержания» [6]. Появление в языке фразеологизмов связано, как известно, с различными изменениями в жизни людей, обусловленными развитием современного общества. Какое-либо новое явление, возникающее в жизни людей, всегда находит свое отражение в речи, закрепляется в языке, и, наоборот, то, что используется редко, часто забывается. В. А. Маслова отмечает, что фразеологизмы, «отражая в своей семантике длительный процесс развития культуры народа, фиксируют и передают от поколения к поколению культурные установки и стереотипы, эталоны и архетипы» [7, 82].

Цель данной статьи заключается в многостороннем изучении фразеологических единиц русского языка в процессе преподавания РКИ.

В соответствии с поставленной целью в работе ставятся и решаются следующие задачи:

- осветить основные подходы к выделению фразеологизма как особой лингвистической единицы исследователями русской и английской фразеологии;
- выявить семантические и лингвокультурологические особенности фразеологических систем русского, армянского и английского языков;
- установить наличие общечеловеческого и национально-специфического во фразеологических системах сопоставляемых языков;
- выявить наиболее общие закономерности их формирования и отражения во фразеологической системе языковой картины мира народов – носителей сопоставляемых языков;

- осветить некоторые методические подходы к изучению русских и английских фразеологизмов в армянской аудитории.

В основу исследования положены традиционные методы исследования – наблюдение, описание, сопоставление, метод выборки, а также общенаучные методы индукции и дедукции, анализа и синтеза, систематизации, сопоставительного анализа и интерпретации полученных данных.

Объектом исследования являются фразеологические единицы русского языка.

Предметом исследования в данной статье являются лингвокультурологические и семантические особенности фразеологизмов русского языка, изучаемых на уроках РКИ.

Материалом исследования являются 107 фразеологических единиц русского языка. В рамках данной статьи приводим лишь некоторые из них.

В начале нашего исследования вкратце рассмотрим понятие «фразеологическая единица», которое трактуется разными учеными-лингвистами различными способами в зависимости от аспекта исследования. В основе данного анализа находятся следующие определения: фразеологизм – это «семантически связанное сочетание слов и предложений, которые воспроизводятся в речи при фиксированном соотношении семантической структуры и определенного лексико-семантического состава» [9, 559]; фразеологические единицы (фразеологизмы) – устойчивые сочетания слов «с осложненной семантикой, не образующиеся по порождающим структурно-семантическим моделям переменных сочетаний» [4, 4]. Таким образом, фразеологизмы – это воспроизводимые в речи обороты, построенные по образцу сочинительных и подчинительных словосочетаний, обладающие целостным значением. Они являются устойчивыми в том или ином языке, не образуются, а воспроизводятся в речи в процессе общения. За ними закреплены определенные значения, сложившиеся в ходе языковых традиций. Фразеологизмы характеризуются постоянством и стабильностью структуры, которая находится в тесной связи с их значением. Фразеологизмы, как известно, играют важную роль в общении. Они могут сделать речь более эмоциональной, придать выразительность высказываниям, определенным образом направить эстетическое восприятие, обеспечить те или иные культурные и языковые ассоциации.

Что же касается методики преподавания, то специалисты, занимающиеся методикой преподавания русского языка как иностранного, все больше внимания уделяют вопросам фразеологии. Изучение и освоение фразеологизмов, которые, как известно, являются строительным материалом для языка, иноязычными, в нашем случае армянскими студентами – процесс сложный и многоаспектный, но весьма занимательный. Несмотря на то, что фразеологизмы вносят в речь неповторимый национальный колорит, они в то же время

«Ամառ առանց այգաբացի» վեպը ջերմ ընդունելության է արժանացել գրական շրջանակներում: Օտար թե հայ ընթերցողների կողմից վեպն արժանացել է բարձր գնահատանքի: Դրա մասին են վկայում այն բազմաթիվ գրախոսականները, որոնք տարբեր երկրների մամուլներում ներկայացրել են վեպը: Համահեղինակներ Հակոբ Խաչիկյանը և Ժան-Իվ Սուսին 762 էջանոց վեպում պատկերել են թուրքական պետության՝ նախապես ծրագրած և իրականացրած հայաջինջ գործունեությունը: Հայոց պատմությանը քաջատեղյակ գրողները պատմավավերագրական փաստերով կարողացել են օտար ընթերցողին հավաստի ներկայացնել 19-րդ դարավերջի և 20-րդ դարակզբի հայթուրքական հարաբերությունները, Առաջին աշխարհամարտը, Օսմանյան կայսրության և դաշնակից պետությունների վարած հայատյաց քաղաքականությունը, թուրքական կառավարությունների կողմից դարեր շարունակ հայոց պատմության նենգափոխման ջանքերը, որոնց նպատակն էր երկիրն ազատել քրիստոնյաներից, հատկապես տեղաբնակ հայերից, տիրել Հայաստանին, ինչպես ժամանակին տիրել էին Բյուզանդիոնին: Ժամանակագրական առումով վեպն ընդգրկում է գործողությունների երկար ժամանակահատված՝ արդուլիամիդյան ջարդերից մինչև եղերական հանգուցալուծումը, որը բացվում է տարաբնույթ դրվագների աստիճանական մատուցման եղանակով: Խաչիկյանը ձգտում է պահել նյութի միասնական ընկալումը, նրան հաջողվում է տալ գործողությունների տրամաբանական հաջորդականությունը: Գրողը լայն տեղ է հատկացնում պատմական տեղեկություններին և քաղաքական մեկնաբանության տարրերին, որոնք ներկայացնում է օտար լսարանին: Պատմագետի շրջահայացությամբ Խաչիկյանը պատկերում է Աբդուլ Համիդ II-ի հայաջինջ գործունեությունը, Մեհմեդ V սուլթանի Թուրքիայի տարածքներն ընդլայնելու պանթուրքիզմի քաղաքականությունը, որում իրենց առանձնակի դերն են ունեցել երիտթուրքերը, հատկապես նրանց պարագլուխներ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, որոնց գերագույն նպատակն էր հայերի բնաջնջումն ու տեղահանությունը իրենց բուն հայրենիքից՝ Արևմտահայաստանից:

Վեպը անգլալեզու ընթերցողի համար ունի պատմական ճանաչողական նշանակություն: Պատմական փաստերն ուղեկցվում են հետաքրքիր և ինքնատիպ մեկնաբանություններով:

Անցկացնելով պատմական դիսկուրս՝ ամերիկահայ գրողը վեր է հանում դարերով իրենց երկրին ամուր կառչած հայ ժողովրդի անկոտրում ոգին, վարանումները, անմիաբանությունը, պայքարի այլաձևությունը, պասսիվությունը, նոր իշխանության կեղծ խոստումներին հավատալը: Գլխավոր հերոսի և նրա ընտանիքի միջոցով Խաչիկյանը պատկերում է մի ամբողջ ազգի ողիսականը: Գիրքը լի է ողբերգությամբ և, միաժամանակ, կյանքով: Սխալ-

ված չենք լինի, եթե վեպն անվանենք հարուստ և ստույգ ժամանակագրություն: Խաչիկյանը, իր հերոսին միտումնավոր նետելով քաղաքական ասպարեզ, պատկերում է 20-րդ դարասկզբի պոլսահայ քաղաքական դաշտը, հեղափոխական խմբակների ակտիվ գործողությունները, երիտթուրքերի շարժման իդեալիստական գաղափարները, որոնք այդպես էլ մնում են որպես սուկ գաղափարներ, նրանց հայտնալած քաղաքականությունը: Պատմության կիզակետում հայտնված հերոսներին գրողն օժտել է հերոսականության ներուժով: Այսպես՝ Վարդանը Պոլսում, քեռորդու՝ Տիրանի հետ տարվելով քաղաքական գործունեությամբ, անդամագրվելով հայ հեղափոխական խմբակներին, մտերմանալով երիտթուրքերի շարժման իդեալիստ անդամների հետ, դառնալով քաղաքական լրագրող, ծավալում է հայանպաստ գործունեություն: Արտասահմանում ֆրանսիական, անգլիական և ամերիկյան պարբերականներում հրատարակում է «Հայկական հարցին» վերաբերող հոդվածներ, գրքեր՝ վերհանելով Օսմանյան կայսրությունում ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ քրիստոնյա մյուս ժողովուրդների ծանր կյանքը: «Այս աշխատությունները որոշակի արձագանք էին ունեցել քաղաքական շրջանակներում, – գրում է Խաչիկյանը, – նույնիսկ Միացյալ Նահանգներում և Ռուսաստանում: Այս գրքերի պատճառով Վարդանի անունը հայտնվել էր սուլթանի ոստիկանության վտանգավոր հեղափոխականների ցուցակներում» [2, 29]: Ի դեմս Վարդանի՝ գրողը վեր է հանում պոլսահայ քաղաքական գործիչների ընդհատակյա ազգանվեր գործունեությունը: Խուսափելով հետապնդումներից, Պոլսից իր ընտանիքի հետ հեռանալով Անատոլիայի հայաշատ Սվաս քաղաքը՝ Վարդան Պալյանը շարունակում է իր հայանպաստ գործունեությունը՝ փորձելով հայ ժողովրդին դուրս բերել ծանր կացությունից, ազատել թուրքական լծից, պարտադրել թուրքերին՝ հայությանը վերադարձնելու իրենց իրավունքները, մշակում է նաև իրավահավասար պետություն ստեղծելու ծրագիր:

Վարդանը Խաչիկյանի համար միջոց է՝ ներկայացնելու 20-րդ դարասկզբի պոլսահայոց հասարակական-քաղաքական կյանքն ու գործունեությունը: Մխավված չենք լինի, եթե վեպի մեջ շեշտենք երկու առանձնահատկություն՝ պատմության խոր ընկալումը և կերպարներն անհատականացնելու ձգտումը: Հեղինակն աշխատում է չմիջամտել գործողությունների ընթացքին, նրանց վավերական հունին համապատասխանեցնել կերպարների պարզ ներքին կյանքի ելևէջները: Երիտթուրքերի իշխանության հաղթանակից հետո Վարդանը, շատ ու շատ պոլսահայ քաղաքական գործիչների նման (Ռուբեն Զարդարյան, Դանիել Վարուժան, Սիամանթո, Ինտրա, Ահարոն Ահարոնյան և այլք) դյուրահավատ, դուրս գալով ընդհատակից, ողջունում է երիտթուրքերի հաղթանակը՝ չկանխատեսելով հետագա քաղաքական ողբերգական իրադարձությունները: Միամտորեն հավատում է, որ երկրում վերջապես կլինի հավասարություն, եղբայրություն, հանդուրժողականություն: Պատմագիտակ գրողը հանգամանորեն ներկայացրել է երիտթուրքական կառավա-

րության ողջ համայնապատկերը՝ նրա ձևավորումից մինչև եվրոպականացված ու ազատական գաղափարակիր արդիականները, որոնց նպատակն էր ստեղծել ազատ դեմոկրատական, իրավահավասար պետություն և վերացնել պահպանողականների միջև պառակտումը: «Վերջիններս էնվերի, Թալեթի և Ջեմալի ղեկավարությամբ պանթուրանիզմ էին քարոզում,– գրում է Խաչիկյանը,– որի նպատակն էր բոլոր քաղաքացիների թրքացումը և կայսրության տարածումը մինչև Կենտրոնական Ասիայի հարթավայրերը, ուր թուրքական ցեղեր էին ապրում: Մի քանի ամիս տևած ներքին պայքարից հետո ազգայնամոլները սկսեցին վերահսկել կառավարությունը, և երիտթուրքերի շարժումը վերածվեց ցուցանակի, որը քողարկում էր բռնապետության հաստատումը» [3, 30]:

Հակոբ Խաչիկյանը թուրքական կառավարության հաջողությունները, ցեղասպանության իրականացումը կապում է հայ ազգի անմիաբանության, անվճռականության հետ: Գրողի հերոսներից ոմանք գիտակցում են, որ իրենք հալածանքի և բռնության են ենթարկվում թուրքերի կողմից, սակայն բազմիցս ոտնահարվում է նրանց արժանապատվությունը, շարունակում են հաշտության եզրեր գտնել թուրքերի և թուրքական կառավարության հետ: Նրանց պասսիվությունը պայմանավորված է ոչ այնքան վախկոտությամբ ու թուլակամությամբ, որքան այն գիտակցությամբ, որ աշխարհի քաղաքական վիճակը և հայ-թուրք ժողովուրդների ուժերի հարաբերակցությունը հնարավորություն չեն ընձեռում ծավալելու ազգային-ազատագրական պայքար: Այսպես են մտածում Սվասի ուսուցիչը, հոգևոր թեմը, հատկապես պատգամավոր, բժիշկ-սպա Վարդան Պալյանը, որը փորձում է գաղտնի իր ընտանիքը դուրս բերել Սվասից և ծավալել հայափրկիչ պայքար ոտքի հանելով ամերիկյան, եվրոպական տերություններին՝ ակնկալելով նրանց ճնշումը Օսմանյան կառավարության վրա: Հայության մի մասը համարում է, որ մոտ է ազատագրական ժամը, պատրաստ է ապստամբել թուրքական իշխանությունների դեմ: Այսպես է մտածում ազգային արժանապատվությունը ամեն ինչից վեր դասող Շիրակ Թևոնյանը, որը, հանուն ազգի բարօրության, ազատության և անկախության, պատրաստ է կոպելու և զոհվելու: Մակայն գուր են Սվասի հայ բնակչությանը ոտքի հանելու, նրանց ազգային ազատագրական պայքարի մեջ ներգրավելու նրա ջանքերը, Վարդանին զինված պայքարի առաջնորդ դարձնելու փորձերը: Ըստ Շիրակի՝ Վարդանն այն միակ ազդեցիկ հայրենասեր քաղաքական գործիչն է, որին հետևելով՝ ժողովուրդը ոտքի կկանգի: Վերջինս, ինչպես տարիներ առաջ, այնպես էլ այս օրերին, դեմ է զենքով պայքարին՝ նախընտրելով գրչի պայքարը: Խաչիկյանի Վարդանի կերպարը այս առումով նույնանում է ֆրանսահայ գրող Վահե Քաչայի «Մի դաշույն այս պարտեզի մեջ» վեպի հերոս Ազատի հետ, որը ևս պայքարի միջոց էր ընտրել գրիչը և որի գրչից նույնպես թուրքերը վախենում էին:

Գերելով Շիրակին՝ նրան՝ որպես խայծի, թուրքական իշխանությունն

օգտագործում է Վարդան Պալանի վրա ճնշում գործադրելու համար: Նպատակը Վարդանին գործակալ դարձնել էր, նրա արտասահմանյան կապերը օգտագործելը՝ Թալեաթի ցուցումով աշխարհի մարդկությանը, ամերիկյան, եվրոպական տերություններին, քաղաքական առաջադեմ գործիչներին մոլորեցնելը, հայերի տարագրությունը աշխարհին իբրև մարդասիրության, բարի կամքի դրսևորում ներկայացնելը: «Դու պետք է հողվածներ գրես օտար թերթերի համար և նամակներ ուղարկես Միացյալ Նահանգներում և այլուր բարձր դիրք գրավող մարդկանց,– ասում է Գանիյ բեյը Վարդանին,– դու նրանց կբացատրես ռազմական գործողությունների թատերաբեմից ազգաբնակչությանը հեռացնելու անհրաժեշտությունը և կվկայես, որ այդ տեղահանությունները լավ են կազմակերպված, ընթանում են մարդասիրական պայմաններում, կգովերգես այն գյուղերի գեղեցկությունը, ուր տեղահանվածները պետք է բնակվեն» [3, 157]:

Ազգային արժանապատվության զգացումը ու ոգին վայրկյան անգամ չեն լքում Վարդանին: Թե՛ դաժանաբար խոշտանգումը, հուսալքելու համար աչքի առջև Շիրակ Թևոնյանին գնդակահարելը, թե՛ ընտանիքի անդամների հետ հաշվեհարդար տեսնելու սհաբեկումները չեն ընկճում հերոսին, չեն կոտրում ոգին: Միակ բանը, որ զոջում է, Շիրակի հետ չհամագործակցելն էր. դա տվյալ պահին միակ ճիշտ որոշումը կլիներ: «Վարդանը շատ աւելի յետոյ,– իրավագիտորեն նկատել է Ս. Դանիելյանը,– իր ողիսական չարչարանաց կեանքի դասերից պիտի վերաիմաստաւորէր քաղաքական կարճատես քայլերի տրամաբանութիւնը, պիտի հասկանար, որ մտաւորականն իր մէջ շատ աւելի ամուր էր նստած, քան զինուորականը, մարտնչող ոգին, որ Թեւոնեանի՝ պայքարի ելնելու պատգամը աւելի փրկարար, ճշմարիտ ելք էր, քան թշնամու ողորմութիւնը հայցելը» [1, 361]:

Խաչիկյանը Վարդանին տանում է Հոմերոսի Ողիսևսի փորձություններով լի ուղիով: Գրողը, իր հերոսին միտումնավոր դարձնելով խոսափող, ակնաստես-վկայի աչքերով պատկերում է կրակների, արկածների, արյան միջով տարագիրների անցած ճանապարհը՝ անթաղ, խոշտանգված, խեղված դիակներ, սովալլուկ մանուկներ, կմախքացած կանայք, հացի գնով վաճառվող մանկահասակ երեխաներ: Նատուրալիստական պատկերներով Խաչիկյանը հայոց տեղահանությունն ու սպանող վարպետորեն հրամցնում է օտար ընթերցողին: Թուրքական կառավարության ծրագրած հայաջինջ քաղաքականությունը ամբողջացնելու նպատակով, ֆիզիկական բնաջնջման պատկերներ տալուց բացի, Խաչիկյանը վարպետորեն ներկայացնում է նաև հայերի հոգևոր բնաջնջումը: Ի դեմս ծննդավայր Ափիոն Գարահիսարի՝ գրողը պատկերում է հայկական գյուղերի դավանափոխությունն ու թրքացումը: «Հետևելով որոշ հայրենակիցների օրինակին՝ Պարունակ Ավագյան ժամագործը ուրացել էր, փրկվելու համար հրաժարվել լեզվից և փոխել անունը՝ դառնալով Օրալ էֆենդի: Վարդանը չէր դատապարտում նրան և որոշեց

չխռովել նրա հոգեկան անդորրը, որը փուխը էր, եթե Վարդանը դատեր եկեղեցու մոտով նրա անցնելու ձևից» [2, 603]: Թրքացման վառ օրինակ են թաթար ուսուցիչ Քերիմը և նրա կինը՝ Հալիդեն, որ ծայտված հայուհի էր՝ Արուսյակ անունով: Մահվան սպառնալիքի տակ Քերիմն ու Հալիդեն ճշտում են իրենց բարոյահոգեբանական վիճակը, մտերմիկ հարաբերությունները: Գրողը մեկ առ մեկ քննում է մահվան դեմ հանդիման կանգնած հերոսների վարքագիծը: Եթե ավագյանները, հանուն իրենց անվտանգ կյանքի, արյունակցական կապերը մեկընդմիջտ խզում են հայությունից, մտքում անգամ վախենում են արտաբերել հայ բառը, ապա արուսյակները պատրաստ են իրենց կյանքը զոհաբերել հանուն ազգի: Քերիմն ու Հալիդեն, բազմիցս վտանգելով իրենց կյանքը, մահվան ճիրաններից փրկում են Վարդանին և տանայակ որբ ու անտեր երեխաների: Տարբեր ճակատագրեր են մեր առջև, ազգային և, ինչու չէ, նաև մարդկային պատասխանատվության տարբեր ընկալումներ: Լարվածության աստիճանական շիկացումը բնութագրական է վեպին: Կենաց ու մահվան ճանապարհին Վարդանը շարունակում է իր քաղաքական գործունեությունը, իր հողվածներով ակնկալում է օտար տերությունների աջակցությունը: Հերոսի խորին համոզմամբ «Գրավոր խոսքը նույնքան գործուն գենք է, որքան հրանոթները» [2, 321]:

Ապաստանելով Ամերիկայում՝ հերոսը շարունակում է իր հայանպաստ, հայապահպան գործունեությունը, լծվում է հայոց դատի պաշտպանությանը: «Վարդանը հայկական թերթի հիմնադրեց, որը ժամանակի ընթացքում ազդեցիկ դարձավ: Հարյուր հազարավոր հայրենակիցներ հաստատվել էին աշխարհի տարբեր երկրներում, և շատ կարևոր էր, որ նրանք կապ պահպանեին, չնայած նրանց բաժանող սահմաններին և օվկիանոսներին» [2, 762]: Վարդանի ընդհանրական կերպարը կերտելիս Խաչիկյանը նկատի է ունեցել ֆրանսահայ հասարակական-քաղաքական գործիչ Շավարշ Միսաքյանին, որի հիմնադրած «Հառաջ» թերթը աշխարհասփյուռ հայերին կապող օղակ էր:

Համաշխարհային ասպարեզում հաճախ զուգահեռներ են անցկացվել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» և «Ամառ առանց այգաբացի» հսկայածավալ վեպերի միջև: «Վերջապես լույս տեսավ մի վեպ, որ գերազանցում է Ֆրանց Վերֆելի հանրահայտ գործը՝ «Մուսա լեռան 40 օրը»: Հակոբ Խաչիկյանի և Ժան-Իվ Սուսիի «Ամառ առանց այգաբացի» վեպը, - գրում է Մորիս Ֆարիին, - հոմերական հղացման գործ է, արդարև, Հումերոսի «Ողիսականի» նման անքակտելի սիրո կրքոտ պատմություն, որ պատկերում է նաև ահավոր տառապանքի հանդեպ ցուցաբերված տոկունության անչափելի ուժը» [2, քաղվածքներ մամուլից]:

Ինչպես նկատել է ԱՄՆ-ի եւ Կանադայի Թեքեյան մշակութային միության վարչության փոխատենապետ Երվանդ Ազատյանը, «Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» երկը լոկ հետաքրքրություն ու ներկայացում էր 1915 թ. ցեղասպանության մի դրվագի: Հ. Խաչիկյանի գիրքը փաստագրական եւ

պատմական տվյալների հիման վրա հեղինակած անձնական եւ ընտանեկան դրամա է» [2, քաղվածքներ մամուլից]:

Թե՛ Ֆրանց Վերֆելը, թե՛ Հակոբ Խաչիկյանը քաջատեղյակ են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայոց պատմությանը, երկուսն էլ ներկայացնում են համաժողովրդական տարերքը, հայոց հոգեբանությունը, արդարության պայքարը: Ի տարբերություն Վերֆելի, որը պատկերել է Մուսա լեռան և հարակից գյուղերի կյանքը, հերոսական պայքարը, Հակոբ Խաչիկյանը պատկերել է ողջ հայոց տեղահանությունը, հայերի ողիսական ճանապարհը Սվասից մինչև Հալեպ:

Վերֆելի հերոսը մարտնչում է զենքով, Խաչիկյանի հերոսը՝ գրչով: Թեև երկուսի պայքարի միջոցները տարբեր են, սակայն նպատակը մեկն է. երկուսն էլ կրում են ժողովրդի փրկության խոր, պատասխանատու հանձնառությունը: Խաչիկյանի վեպը, ի տարբերություն Վերֆելի վեպի, աչքի է ընկնում պատմական հարուստ տեղեկություններով, պատմափաստագրական նյութերով: Խաչիկյանը միտումնավոր հաճախ քաղաքական լուսաբանումներ և մեկնաբանություններ է անում՝ օտարազգի ընթերցողին ցույց տալու համար Հայոց ցեղասպանությունը՝ որպես պատմական օբյեկտիվ իրողություն:

Եզրակացություն

Հակոբ Խաչիկյանը և Ժան-Իվ Մուսին պատմական հարուստ տեղեկություններով, պատմափաստագրական նյութերով, քաղաքական լուսաբանումներով և մեկնաբանություններով հազեցած ծավալուն վեպով ընդգծել են հայի ազգային անկոտրում ոգին, ազատատենչությունը՝ արժևորելով ազգային արժանապատվությունը: Վիլյամ Սարոյանի, Ջեք Հաշյանի նման Հակոբ Խաչիկյանը, հիմք ընդունելով 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ և թուրք ժողովուրդների փոխհարաբերություններն արտացոլող տվյալները, իր ստեղծագործությամբ ներկայացրել է ազգային-ազատագրական պայքարը, հայոց եղեռնի պատմական հայեցակերպը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-109>

Գրականություն

1. Դանիելեան Ս., Միջուկի տրոհումը: Միլոնքահայ գրականութեան պատմութիւն, Գիրք 1, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2011, 407 էջ:
2. Խաչիկյան Հ., Մուսի Ժ. -Ի., 2005, Ամառ առանց այգաբացի, Երևան, ՀԳՄ հրատ., 762 էջ:
3. Հոխիկյան Ն., Ինչպե՞ս է Թուրքիան որպես բնական պատնեշ օգտագործում քրդերին ու հայերին, <https://armeniasputnik.am/20220215/inchpes-e-turqian-vorpes-bnakan-patnesh-ogtagvortsum-qrdarin-uhajerin-38714771.html> (բեռնման օրը՝ 16. 01. 2022):

Национально-освободительная борьба как проявление сохранения национальной идентичности в романе Акопа Хачикяна и Жана-Ива Суси «Лето без зари»

Нелли Галстян

Резюме

Ключевые слова: *американо-англоязычные писатели, историческая память, сохранение армянской нации, армянская история, армянский народ, несокрушимый дух*

Роман Акопа Хачикяна и Жана-Ива Суси «Лето без зари» – единственное объемное произведение с историографическими фактами и политическими комментариями, в котором беспристрастно освещается течение времени, армянские общественно-политические отношения, борьба за существование армянского народа начала 20-го века. Также описываются армяно-турецкие отношения конца 19 – начала 20 века, Первая мировая война, антиармянская политика Османской империи и союзных государств, усилие турецкого правительства по фальсификации армянской истории на протяжении веков, стремление доминировать над Арменией. С хронологической точки зрения роман охватывает длительный период действия: от погромов Абдула-Хамида до эпической развязки, которая разворачивается в постепенном представлении различных эпизодов.

А. Хачикян и Ж.-И. Суси стремятся сохранить единое восприятие материала, им удается дать логическую последовательность действий. Писатели много места уделяют историческим сведениям и элементам политической интерпретации. Писатели, первыми в англоязычной американской литературе, поставили национально-освободительную борьбу в основу сохранения национальной идентичности. При написании романа А. Хачикян и Ж.-И. Суси обращались к исторической памяти, сохраняющей национальное сознание и самосознание народа, рассматривая ее как живучее настоящее, духовный потенциал народа и преемственность, стабилизирующую этнос. Обращаясь к национальной исторической памяти, они подняли важнейшие исторические события, попытки и борьбу армянского народа противостоять жизненным трудностям, героические эпизоды, национальный дух и достоинство. В романе мы рассмотрели проблемы, с которыми столкнулся американо-армянский англоязычный писатель: неустанные усилия по сохранению национальной идентичности и права на жизнь армян всего мира, национально-освободительную борьбу и героические усилия родного народа. В натуралистичных образах А. Хачикян и Ж.-И. Суси умело представили зарубежному читателю депортацию и резню армян. Чтобы завершить намеченную турецким правительством проармянскую политику, они, помимо изображения физического уничтожения, мастерски представили духовное уничтожение армян.

**National Liberation Struggle as a Manifestation of National Identity
Preservation in Novel “Summer Without Dawn” by Hakop Khachikyan and
Jean-Yves Soucy**

Nelli Galstyan

Summary

Key words: *American-English writers, historical memory, preservation of the Armenian nation, Armenian history, Armenian people, indestructible spirit*

The novel “Summer Without Dawn” by Hakop Khachikyan and Jean-Yves Soucy is a unique voluminous work with historiographical facts and political comments, which impartially covers the passage of time, Armenian social and political relations, the struggle for the existence of the Armenian people in the the 20th century, Armenian-Turkish relations at the end of the 19th-early 20th century, the First World War, the anti-Armenian policy of the Ottoman Empire and the allied states, the effort of the Turkish government to falsify Armenian history, the desire to dominate Armenia. From the chronological point of view, the novel covers a long period of action, from the massacres committed by Abdul-Hamid to the epic denouement, which unfolds in the gradual presentation of various episodes.

H. Khachikyan and J.-Y. Soucy strive to preserve a single perception of the material, besides; he manages to give a logical sequence of actions. The writers pay much attention to the historical data and elements of political interpretation. The writers were the first in English-language American literature to put the national-liberation struggle at the basis of preserving national identity. When writing the novel, H. Khachikyan and J.-Y. Soucy turned to historical memory, which preserves the national consciousness and self-consciousness of the people, considering it as a living present, the spiritual potential of the people and continuity that stabilizes the ethnicity. Turning to the Armenia’s National Memory, the author pointed out Armenian history’s most important historic events, attempts and fights in resisting life’s difficulties, heroic episodes, national spirit and dignity. In the novel, we studied the problems that the American-Armenian English-speaking writer faced with: unceasing efforts to preserve the national identity and the right to life for the Armenians of the whole world, the national liberation struggle, and heroic efforts of the native people. In naturalistic images H. Khachikyan and J.-Y. Soucy skillfully represented the deportation and massacre of Armenians to foreign readers. In order to complete the pro-Armenian policy planned by the Turkish government, he, in addition to depicting the physical destruction, masterfully described the spiritual destruction of the Armenians.

Ներկայացվել է 14.04.2023 թ.

Գրախոսվել է 19.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Տեսակը Վահագն Մուղնեցյանի երկերում

Մուսաննա Թումանյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-119>

Հանգուցային բառեր. կերպար, կերպարային մտածողություն, կերպար-բնավորություն, անհատ, անհատականություն, ուժ, ժառանգորդում

Ներածություն

20-րդ դարի 60-ականների գրողական սերունդը շրջադարձ կատարեց դեպի մարդու ներաշխարհ, հերոսականի հաճախ կադապարային մտածողությունը տեղի տվեց, շեշտադրվեց հատկապես անհատականը: Գրականագետ Ա. Բոչարովի ընդգծած շղթան՝ հերոս-կերպար-անհատականություն, իսկապես «օրինաչափ» էր և բերում էր գրականագիտության կարևորագույն խնդիրներից մեկի՝ գեղարվեստական կերպարի, կերպարային մտածողության զարգացման, չափումների բազմազանեցման ողջ ընթացքը՝ ընդգծելով 20-րդ դարի երկրորդ կեսին մարդ և կերպար, անհատականություն և մարդ, բնավորություն և կերպար, խառնվածք և մարդ և նմանատիպ մի շարք այլ առնչություններ: Գրական երկի համակարգում միշտ էլ կենտրոնական է եղել կերպարը. պատահական չէ, որ գրականագետների կողմից այն համարվել է երկի միջուկը, գործողությունների շարժիչ ուժը: Այնուհանդերձ 60-ականների և հաջորդած սերունդները կատարեցին ավելին՝ կերպարային մտածողության շարժումը տանելով առավելապես դեպի ներս՝ ներաշխարհ. ինքնագննումը դարձավ ոչ թե նպատակ, այլ անհատականության լինելության կերպ: Գրականություն բերվեց կերպար-բնավորություն-անհատականության մի տեսակ, որի գերագույն խնդիրներից էին և՛ ինքնագննումը, և՛ այլ կերպարների տված գնահատման գործընթացում տեղի ունեցող փոփոխությունները. փնտրվում էր մարդու տեսակը:

Տեսակ և նրա դրսևորումը Վ. Մուղնեցյանի երկերում

Վ. Մուղնեցյանի երկերում (և՛ արձակ, և՛ չափածո) անընդհատ է ներհայեցում-«ինքնահերձում»-ը, իր իսկ ձևակերպամամբ.

Հիմա գիտեմ, փորձությունն այս / պարզել է Երկինքը ինձ, – / Որպես շնորհ բացառական, / ինքնահերձման միջոց որպես, – / Հիմքից պիտի ինձ ավերեմ՝ / վերակերտեմ հիմքից նորից՝ / Մինչև ճամփան Քո ցուցանած / ինձ այցելի հեռուներից... [5, 14]:

Գրողը ինքնահերձման ճանապարհին ունի բազմաթիվ հարցումներ, որոնք ծնվում են այդ բարդ գործընթացում. նա ձգտում է իրեն՝ գրող-մարդուն ևս ճանաչել, ինչը կարող էր դառնալ ինքնության և գրականություն բերած անհատների ճանաչում-գնահատանքը: «Զոհանվերում» ընդգծելով ներսից

խաչվածների խնդիրը՝ «Չէ՞ որ բոլորս խաչված ենք ներսից» [5, 135], Ալևորից լսած լինելով իր հարցերի («Այն ո՞վ է, որ խանգարում է ժողովել մտքերը իմ, / Ո՞վ է, որ ուզում է կորցնել իմ անձը, / Ո՞վ է շարունակ պատերազմում իմ դեմ») [5, 132] պատասխանը, ինչը ուղղում է գրողին դեպի իրեն, հետագա ընթացքի շատ կարևոր ուղղորդում-ծրագիր է ստանում. «- Քո նախահայրը իմաստուն էր մեծ, / Ինչո՞ւ դու այսչափ փոքր մնացիր, / Ժամանակ դեռ կա, ներսդ բորբոքիր, / Փորձիր հասկանալ ինչ որ ասացիր» [5, 136]:

Նախահայրերի խնդիրը տարբեր կտրվածքներով կա Մուղնեցյանի երկերի միֆոլոգիզմի մեջ. բանահյուսական, էպոսային հիշատակումների (գառնարած Դավիթ, թրի թափ, Քուռկիկ Ջալալի, Առյուծ Մհեր, Մելիք...), ուժի, տեսակի, սոսիալ ժառանգական գծերի ճանաչումը դրա վկայությունն է: Մուղնեցյանի էպիկ մտածողությունը և գրողական տաղանդը դիպուկ է բնորոշել Ս. Մարիկյանը, որը, անդրադառնալով գրողի երկերում չարի և բարու (հակված ենք այն տեսնել որպես տեսակի արտահայտություն, հատկապես որ խնդիրը քննարկվում է սոցիալական ժամանակի և մարդկային կենսահոգեբանական տարերքների բացահայտման ծիրում) խնդրին, նշում է. «Նրա հերոսները լիարժեք մարդիկ են, անհատապես ընդգծված ու կամային, ֆիզիկական և հոգևոր չափազանց ուժեղ բունկումներով ու կրքերի հեթանոսական արտահայտությամբ» [7, 425]:

Մուղնեցյանը տեսակի ճանաչումը տեսնում է նաև գենեզիսի մեջ՝ «մարդու կողմն է ինքն իր մասին հավաստում» [5, 16] երկնաքարե նամակների մեջ: Իհարկե, կողի որոնումը տրված է ինքնահերձվող տեսակին: Եկվորներից մինչև իր ժամանակի մարդը, ազգ-նախահայրերից մինչև 20-րդ դարավերջ անհատը անցել է ինքնաորոնման դժվարին ճանապարհով, սակայն այլ կշռույթ են ունեցել դրանք: Գրողների՝ 60-ականների և հետագա սերունդների մոտ դիտարկվել է սեփական ես-ի ճանաչման և ներսի խնդիրը (այն փուլայնության արտահայտություն է). իր և իր միջև արգելանքի խնդիր կա Պ. Սևակի, իր և իր միջևինը՝ Ա. Այվազյանի, ներսի ներսի ներսի մարդու որոնումը կա Հ. Մաթևոսյանի, ինչպես նաև այլոց մոտ: Մարդ և աստված հարաբերության մեջ Մուղնեցյանը, փնտրելով Տիրոջը, որպեսզի խոստովանի, ի վերջո նրան գտնում է իր «ներսի ներսում»: Այս որոնումը գրողի համար ապրելու կերպ է, գիտակցականի և հոգեբանականի չափում. այդ է վկայում նրա «Զոհանվերի» «Բաց է իմ ներսը» սկսվածքով հատվածը: Գրողը անհատին, եսին և տեսակին կարող է չափել տարբեր հարթություններում. նա տարբերություն (բայց ոչ պատնեջ) է դնում իր ես-ի և իր տեսակի միջև (Ես-անհատը սոցիալական է, որը կյանքի հորձանուտում կարող է տարբերվել). «...շարունակում եմ կիսել վշտերը այլոց, / որովհետև այդ ես չեմ, - / դա տեսակն է իմ, - / որն այնուհետև, որքան էլ ցավեմ, / պիտի կրկնվի» [4, 165]:

Ժամանակների հողվույթում տեսակը կրել է բազմաթիվ փոփոխություն-

ներ, ինչը գրողի համար շատ ցավոտ բացահայտում է, իր տեսակի մարդու (տեսակի) ճանաչման դժվարին գործընթացում նա փնտրում է ընդհանրապես մարդուն և խոր ցավ ապրում, քանի որ եթե նախկինում ծախվել է մարդու մարմինը, ապա իր ժամանակներում ծախվում է մարդու խոսքը, հարբած մարդու ճիշը, խիղճը, սրտի տրոփը, և մարդն արժեք չունի («Ընթածիր»): Թե ապագայում ինչպիսին կլինի այդ վաճառքը, և ուր կտանի մարդուն, – մնում է չըմբռնված, ուստի հարց է ուղղում Տիրոջը. «Էհ, ինչ իմանամ, այսպես որ գնա, / Մի բան կարժենա՞ կյանքը իմ որդու: / Տե՛ր, գուցե թաքուն ականջիս ասես՝ / Երբ պիտի մի օր նմանվենք մարդու» [4, 234]:

Հեղինակը անսքող ցավ է ապրում մանկության հուշերից օտարման, «հեքիաթի խնձոր որոնողներից» անդարձ հեռացման (որ շատ կարևոր, ավելի շուտ գերխնդիր) «...և շատ հեռացանք – հեռու ենք մեզնից» [5, 105] իրողությունները:

Հեղինակի տեսակի ինքնաճանաչումը տարրալուծվում է ընդհանրապես մարդու տեսակի ճանաչման մեջ: Առկա է գրողական մի շատ կարևոր խնդիր. չափածոյի մեջ առաջնային է հեղինակի տեսակի հարցը, արձակում՝ անհատականության տեսակի հարցը (այստեղ «հերոս», «կերպար» եզրույթները չենք օգտագործում որոշակի նպատակադրմամբ. շեշտադրելու ենք կերպար-բնավորություն-անհատականություն-անհատ զարգացման աստիճանները):

Կա նաև երկրորդ խնդիրը. արձակում (թեկուզև մոգական) ուժեղ էպիզոնը, էպիկական կերպար-բնավորությունը նոր խնդիրներ է առաջադրում: «Ալիզ»-ում, «Եկվորներ»-ում, բերելով ընդհանրապես մարդու և անհատի տեսակի գուգորդումները, էպիզոնը խորացնում է ուժեղ, արու, տղամարդ տեսակի խնդիրները (անդրադարձ կա նաև հոգով ուժեղ լինելու խնդրին):

Մուղնեցյանի էպիզոնի ակունքները, տեսակի բնութագրումները գալիս են ազգային էպիկ մտածողությունից: Գրողը շեշտադրում է արու և ուժեղ տեսակը, հավասարություն է դնում «արու» և «տղամարդ» հասկացությունների միջև: Արուն առաջին հերթին կենսաբանականի կրող է, սակայն գրողի մոտ առկա են և՛ «քայլը արու», և՛ «թևերն իմ արու», «առնական ձեռքը», «առնական, առողջ հոգիները» (միայն վերջին բնութագրումն է, որ ուղղակիորեն չի կապվում հեղինակի և հոր հետ). «Առնական-առողջ հոգիները / Կորցրին խոսքի մուր երդման...»: Ցավոտ այս փաստը (առկա է նաև միջր. խոսք-երդումը «Մասնա ծոեր»-ում գերխնդիր է) ժամանակի՝ մարդկային էությունը ջախջախող կնիք ունի, որին երբեք չի կարող ենթարկվել գրողի ժառանգած արյունը, արու տեսակը:

«Արու» և «տղամարդ» հասկացությունները կարևոր դեր ունեն կերպարային բացահայտումների համար վերջինը հաճախ է օգտագործվում սեռը

բնութագրող չափումներով, հաճախ կենցաղային-առօրեական է, իսկ «արուն» որոշակիորեն կրում է նախնականի և միջակների կնիքը:

Կերպարների չափումների համար շատ կարևոր է կերպարի գնահատանքը այլ կերպարների միջոցով (Թագուհի, Բագո), կարևորվում է նաև ժառանգորդման խնդիրը (Մարտին, Օղբաթ, Վահրամ և այլք), վերջինիս համար ընդգծվում է «իմ ասլան տղեն, Օղբաթի տղա Օղբաթը» [1, 290], կամ գենետիկ սկիզբն ամրագրում-բացահայտում է. «Արունդ շատ ա իմը...» [1, 293], սոցիալական մարդու կտրվածքով գենը չի գործում. այստեղ հավաքականությունն է առաջնայինը: Մուղնեցյանի վեպերում կան Բոշի թաղի, Դիմացի, Մուշեղի տղեքի և Ալանի վիրուսիների տեսակները, ինչպես նաև վերջիններիս «գյաղեք» տեսակի սխալ բնութագրումը, որ տալիս է Թորգոմը. այն հասարակական-սոցիալական է. արժեքի գնահատումը փոխվել է հասարակության մի շերտի գիտակցության մեջ:

Այստեղ կերպարների բացահայտման համար կարևորվում են վարքը, արտաքին ու ներքին սոցիալական հոգեբանական առնչությունները: Դիպուկ է Ս. Փանոսյանի խոսքը. «...սոցիալական ուղղակի հիմնավորումներից Մուղնեցյանն ավելի հաճախ հրաժարվում է՝ հակադրելով հոգեբանական բացահայտումներն ու միջանձնային հարաբերությունների պատկերումը: Մասկայն բնորոշ ու գտնված թեկուզև մի շտրիխ լիովին բավարար է կեցության առանձնահատկությունների մասին պատկերացում կազմելու, գոյության զարկերակը բռնելու համար» [10, 109]:

Մուղնեցյան-գրողի, ինչպես նաև գրականություն բերած նրա անհատանհատականությունների համար որպես ինքնաչափում օգտագործվում է ուժի, ուժեղի չափումը: «Բազմաշավիղ» ժողովածուի «Խոկումներ» բաժնում նա գրում է. «Ահա հասկացա, որ ուժեղ մարդ եմ, քանի որ՝ իմ մտքի սավառնումները կարողանում եմ զսպել ճիշտ ժամանակին» [5, 321]: Կարող ենք այդ տարածել նրա կերպար-բնավորությունների մի շերտի վրա:

Կերպար-բնավորությունների մոտ կա ուժի պաշտամունքը: Բոշի թաղում, Դիմացում, Մուշեղի թաղում, Թորգոմի և Հաբեթնակի միջավայրում ուժն ընդունված է, սակայն վերջին երկուսի մոտ այլ տեսակետ կա: Բոշի թաղը հարգում է ուժեղին (անգամ ոչ իրենց ընդհանրությունից էլած միլիպետի մասին ասվում է, որ աչքերի մեջ իշխողի ուժ կար, հնազանդեցնողի հավատ կար), Փիղ Միկիչի համար ընդգծվում է ֆիզիկական ահեղի ուժը ու հորդուն էներգիան, Գրետայի համար՝ ուժեղ ներկայությունը, Գնելի «կոպիտ, ուժեղ դիմագիծը»: Ուժի պաշտամունքը ժառանգորդված է հիշողության, արյան գենով. Մուրեն-Գոնոյի ուժի նկատմամբ Գնելի երկրպագությունը դրա վկայությունն է. նա «երկրպագում էր իրենից առաջ ապրած բոլոր ուժեղ տղամարդկանց»: Մանավազը դրա մեջ տեսնում է ազգային մտածողությունը և հոգեբանությունը. Մասնա ծոերի արյունը կա. «Առյուծ Միերի գարմը հոսանհետ չկորավ» [2, 308]:

Մուշեղը և Ալանը ունեն ուժի իրենց բանաձևը: Մանավազի գնահատանքին՝ «և հոգով ուժեղ, և մարմնով» [2, 224], Մուշեղը պատասխանում է. «Դե հոգով ուժեղ ենք,– պատասխանեց Մուշեղը,– որովհետև կո՞րվ ենք տալիս ընդամենը մեր նամուսն ու պատվասիրությունը տեղը պահելու համար: Էդ դեպքում էլ գիտես, ծունկի գալ չի կարելի, էս դեպքում ծունկի գալը մեռնելու պես բան ա: Ջանի ուժն էլ, ի՞նչ ասեմ, Մանավազ ջան, եսիմ» [2, 224]: Կարևոր է Մանավազի եզրահանգում-ամփոփումը. «Էդ ասա՛ դուք ժողովրդի խասիաթին եք, էլի» [2, 224]:

Ուժի ընկալումների մեջ հասարակության շերտերի մեջ ըմբռնումների կոնֆլիկտ կա. այլ է Թորգոմի տեսակետը. իր և Հաբեթնակի անցած ճանապարհը հիշելիս, այդ թվում՝ իրենց վարպետի արհեստանոցը նրա ձեռքից թոցնելը, ժողովրդի հոգեբանության համար անընդունելի արարք կատարողներին չափում է մեր էպոսի չափումով՝ «...ուժեղ, առյուծ դարձած տղեք» [2, 412]: Սա այն դեպքում, երբ Թորգոմը և Հաբեթնակը դառնում են փողի ուժի կրողներ:

Մուղնեցյանը բերում է նաև «գոռբա» տեսակը: Այս խնդրում նկատված են Բակունցի և Մուղնեցյանի մտածողությունների աղբյուրները: Համադրելի են Փիղ Միկիչի, Օղբաթ Մարտինի, Մուշեղի, Ալանի տեսակը, «Կյորեսի» Գյուրջի Օբինի, Ղաթրինի Աղալոյի, Պարան-Պարան Ավանեսի, Յուլ Օհանի տեսակները, իսկ «Չոռբա» պատմվածքի և «Կարմրաքարի» հերոսները՝ Թորգոմի և Հաբեթնակի հետ: Ֆիզիկական և հոգեկան ուժերին հակադրվում է փողի ուժը: Այս արդեն ժամանակի փիլիսոփայությունն է, արժեքների վերագնահատում, որը որևէ կապ չունի ժողովրդի էպիկական մտածողության հետ: Ուժը կորցրել է իր նախնական իմաստը: Հաբեթնակը տալիս է այսպիսի ձևակերպում. «Կա յ, աշխարհ, մենձերից չվախեցանք, մենձանալով՝ քյորփեքի դեմ խեղճացանք: Չէ, սրանց պետք է փողով առնենք, փողի դեմ խաղ չկա»: Մուղնեցյանը Թորգոմ-Հաբեթնակ գոռբաների տեսակը միատարր չի ստեղծել: Այդ տեսակին տրված է և՛ ֆիզիկական ուժ, և՛ հաղթելու կամք, և՛ էպոսային բաց պայքարի արժանապատվություն: Թորգոմի «հաղթելու սովոր արյունը» նրան նաև արժանապատվություն է տվել. «...նա երբեք խաղի օրենքների դեմ ոտնձգություն չէր արել, երբեք չէր դրժել իր խոսքը» [2, 214]: Մուղնեցյանը գոռբաների այս տեսակը ներկայացնում է բարդ և բազմաբնույթ հատկանիշ-տրոյամբ:

Մարդկային տարբեր հարաբերությունների ծիրում նրանք կարող են փոխել իրենց վարքը. հաղթելու մոլուցք-պայքարից չիրաժարվող Թորգոմը և Հաբեթնակը, որ կյանքի խաղերի բոլոր ընդունելի և մերժելի օրինաչափություն-կանոնները լավ գիտեին, հեղինակի բացահայտմամբ, ճաճոյենց տղեքի դեմ «խաղ չունեին»:

Մաքուր ուժի և հոգևոր ուժի գոռբայությունը մաքուր ուժի արտահայտու-

թյուններն են. վեպերում սկիզբ-տերերը դրա կրողներն են, որ պաշտպանում են իրենց տարածքը (ոչ միայն աշխարհագրական-սահմանային):

«Ալիզ» վեպում հստակ գծված են Բոշի թաղի, Դիմացի, քաղաքի սահմանները: Ավտոբուսի մուտքը Դիմաց «ոտնձգություն» էր Դիմացի թաղի հեղինակությունների պատվի դեմ, ուստի ավտոբուսին վիճակված էր ծանր բախտ. «...ավտոբուսը ծածկվեց Դիմացի գոռֆաների անուններով՝ Ժելեզնի Նշան, Կառուլ Մնդե, Ստալ Դունյա...» [1, 66]: «Եկվորներ» վեպում Զոռբայի ընկալումն արդեն նոր ժամանակի սոցիալական տեսակն է ընդգծում: «Տարու» վեպի մեջ խնդիրն ավելի բարդ է. տեսակը և բնավորությունը միմյանցից տարանջատվում են (ասածը չի կապվում Բագոյի հետ):

Տիրոջ գաղափարը հայ գրականության զարգացման փուլերին հատուկ է. այն շատ խորը դրսևորվեց նաև Հ. Մաթևոսյանի մոտ: Մուղնեցյանը բերում է նաև տերերի պայքարը հոգու տիրույթների պաշտպանման համար: Զավթիչների տարատեսակությունների դեմ պայքարը «արյան հիշողության» արգասիք է, որ իր մեջ պահում է աշխարհի և հայի տեսակի արարման օրից մղած պայքարը:

Ս. Աղաբաբյանը «Անհատականության կոնցեպցիայի անկյունաքարը» հոդվածում բուշարովյան «հերոս-կերպար-անհատականություն» եռաչափությունը, ընդունելի համարելով նաև հայ գրականության զարգացման 60-80-ական փուլի համար, գրում է. «...զարգացման արդի փուլում, ինչպես երբեք, առագաստ է բացել հոգևոր կեցության հետազոտման, աշխարհի հետ նրա ունեցած կապերի քննության, բարոյական արժեքների գնահատման, անհատականության խոր ճանաչման գեղագիտությունը» [11, 191]: Մուղնեցյանը չափածոյում և արձակում անդրադառնում է այդ խնդիրներին («Զոհանվերում», չափածո այլ գործերում՝ Ալևորի, Հեռավորի, արձակում Ղարիբ ծերունու խնդիրը բավականին տարողունակ է և այստեղ չի քննարկվի):

Բարոյական արժեքներն անմիջականորեն են բնորոշում տեսակը: Մուղնեցյանը ունի իր չափումները, օգտագործում է «բնույթ», «բնավորություն», «տեսակ» եզրույթները, ինչպես նաև «խաայաթ»-ը: Գրականագիտական բառարանը «Խարակտեր» եզրույթի համար հղում է կատարում «Բնավորություն» եզրույթին. վերջինի մեջ էլ դրանք կողք կողքի են՝ նույնականությունը շեշտելով: «Բնույթ» բառը որպես գրականագիտական միավոր, բացակայում է ժամանակակից հայոց լեզվի քառահատոր բառարանում. առկա են «բնույթ» (Մուղնեցյանի մոտ կա), «բնույթ», «բնավորություն», «խառնվածք» բառերը: «Բնավորություն» բառի գլխավոր իմաստային հատկանիշը որակվում է որպես «Մարդու հոգեկան բոլոր հատկությունների ամբողջությունը, որը արտահայտված է նրա գործողությունների և վարքի մեջ, խառնվածք» [12, հ. 1, 331], իսկ «խառնվածք»-ի համար գրում է. «...նույնը բնավորության 1-ը, 3 (փխբ.) – Անձ, որ ունի այդ հոգեկան որոշ հատկանիշների ամբողջությունը»

[12, հ. 2, 492]: Մուղնեցյանը «բնույթ» և «բնավորություն» եզրույթները օգտագործում է որոշակի տարբերակմամբ: Խոսելով Ջուլումի մասին՝ նա գրում է. «...չնայած իր ցեղական բնույթին ու մարտական բնավորությանը՝ նա դեռ ոչ մի հերոսական արարք չի գործել հանուն հայրենյաց» [2, 232]:

Բնույթը և բնավորությունը Մուղնեցյանի համար անհատների և անհատականությունների ճանաչման բանալիներն են: Նրա երկերում անհատը խորությամբ ճանաչում է թե՛ տեսակը, թե՛ բնույթը, թե՛ բնավորությունը. այդ են վկայում Ցոլակի, Մոսոյի, Թորգոմի, Հաբեթնակի և այլոց մասին եղած բնորոշումները: Ընդ որում՝ անընդհատ շեշտվում է բնույթին հավատարիմ լինելու փաստը («...իր բնույթին հավատարիմ զգուշացավ» [1, 64], «...մնաց իր բնույթին հավատարիմ» [2, 239], «Մոսոն մնում էր իր բնույթին հավատարիմ» [2, 235] և այլն):

Կերպար-բնույթ-բնավորություն

Արիստոտելն իր «Պոետիկա» մեջ խոսում է բնավորության մասին («Պոետիկա»-ում կերպարը և բնավորությունը նույնաչափ են): Ընդգծվում է բարոյական սկզբունքի խնդիրը. «Բնավորություններն ընդհանրապես դրսևորվում են, երբ գործող անձերը խոսքով կամ գործով ազդարարում են իրենց բարոյական սկզբունքը» [6, 178]: Մուղնեցյանը շեշտադրում է հատկապես բնույթը: Ջուլումիին տրված հեղինակային բացահայտումից կարող ենք դիտարկել, որ Մուղնեցյանը հիմնականում տեսակը և բնույթը դարձնում է համաչափ, սակայն «Եկվորներ» երկում հանդիպում ենք Ալանի կողմից մի բացահայտում-ինքնաչափման. «Մարդու բնույթն ու տեսակը հո նոր չփոխվե՞ց. միշտ էլ ստորներ են էլել, խարդախներ, դավաճաններ, ծախու արարածներ, և նվիրյալներ, զոհաբերվելու ընդունակներ: Էս վերջին տեսակը ամենից շատ ա իր հոգու վրա ծանրություն քաշում, ուրիշների գործած մեղքերի համար էրվում ու խորովվում: Բայց որ դրանք չլինեն՝ մարդկանց հասարակության մեջ հավասարակշռությունը կխախտվի. ոնց որ պատը մենակ խիբարով շարես» [2, 20]: «Վերջին տեսակի» ընդգծումը շեշտադրում է տեսակի գերակա խնդիրը: Ակնառու է, որ Մուղնեցյանը «տեսակ» բառի բառարանային 5-րդ իմաստը նկատի ունի [տե՛ս 12, հ. 4, 486]: Սակայն հարկ է ուշադրություն դարձնել նաև լեզվական կողմին. Մուղնեցյանից վերը բերված հատվածում ունենք «բնույթ» և «տեսակ» ենթակաները, որոնց հետ «չփոխվեց» ստորոգյալը դրված է եզակի թվով: Այս հանգամանքը որոշակի ճշտում է կատարում. բերված հատվածում «բնույթ» և «տեսակ» եզրույթները նույնական են Մուղնեցյանի մոտ:

Ս. Արզումանյանն իր «Արդի հայ վեպը» աշխատության մեջ, քննելով Մուղնեցյանի վեպերի («Ալիզ», «Եկվորներ») կերպարավորման միջոցները, ճշմարտացիորեն ուշադրություն (թեև հպանցիկ) է դարձնում ինչպես հերոսների դիմանկարներին ու բնավորություններին, այնպես էլ կերպարների

բնությանը: Ս. Աղաբաբյանը բնավորության համար անհրաժեշտ է համարում իրական բախումը («Արդիականություն և գրականություն»): Պահանջվող իրական բախումն առկա է Մուղնեցյանի երկերում մի քանի կտրվածքներով ես-ը և ներքին ես-ը, մարդը և շրջապատը, ազգը և տոհմի գենը, էթնոսի գենը. բոլոր դեպքերում առկա է գեղարվեստական կոնֆլիկտը: Արձակում բավականին ընդգրկուն է սոցիալական մարդու խնդիրը: Սոցիոլոգիական հանրագիտարանային բառարանում տրված են խարակտերի և սոցիալական խարակտերի [տե՛ս 13, 398] բնութագրումները: Առաջինը բնութագրվում է այսպես. համեմատաբար կայուն հոգեկան, մարդկային հատկանիշների ամբողջություն, որոնք որոշում են տվյալ սուբյեկտի համար բնորոշ վարքի և գործունեության ձևը, նրա վերաբերմունքը աշխարհին և ինքն իրեն..., իսկ 2-րդի համար՝ բնավորության այն հատվածը, որը բնորոշ է անհատի մտերիմ միջավայրին, նրա «նշանակալի ուրիշներին», և որը ձևավորվում է սոց. դետերմինանտի ազդեցության ներքո, անհատի, խմբի, ազգի, հասարակության և այլնի բնավորությունը, որն անհրաժեշտ է որոշակի համայնքի բնականոն գործունեության համար և հանդիսանում է նրա նախագիծը: Մուղնեցյանի արձակում այդ ամենը կա:

Գեղարվեստական գրականության զարգացման արդի փուլում, ինչպես և նախորդում, ջարդվում է կերպարի կայուն/ստատիկ վիճակ-կաղապարը. այն իր պատկերային համակարգ լինելու հատկանիշով «նեղ» է մարդուն ներկայացնելու համար: Սոցիոլոգիան և հոգեբանությունը տարբերակում են մարդ, անհատ, անհատականություն, անձնավորություն և բնավորություն (характер) բազմազանությունը: Մարդը սոցիոլոգիայի տեսանկյունից ձևակերպվում է որպես Երկրագնդի կենդանի էակների զարգացման վերին աստիճանը, որը հասարակական գործունեության և մշակույթի սուբյեկտ է [տե՛ս 13, 405], անհատը՝ որպես առանձին գոյություն ունեցող օրգանիզմ և առանձին վերցված մարդ [13, 101], անհատականությունը՝ որպես առանձին վերցված մարդ: Էդ. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի գրականագիտական բառարանում տեղ է գտել միայն «անհատականացում» եզրույթը:

Կարող ենք եզրակացնել, որ վերոբերյալ եզրույթները մեզ մոտ կարևորվում են նաև նշանի և նշանակյալի տեսակետից:

Արդեն նշվել է արդի արձակի կերպարային մտածողության եռաչափությունը. պետք է նկատել, որ մուղնեցյանական մոտեցումը տեսակ-անհատականության կրողն է: Նա տեսակը դնում է բազմաբարդ հարաբերությունների հիմքում և հենց տեսակի սահմաններում կատարում բազմաշերտ խմբավորումներ:

Տեսակի կրողներ են և՛ Մարտին ապերը, և՛ Փիղ Միկիչը, Բուբուշը, Համոն, Սիմոնը, Մուշեղը, Ալանը, Թորգոմը, Հաբեթակը և այլք: Կարելի է կատարել միայն տեսակի ամենաճանաչելի գծերով խմբի ստեղծում, բայց

դրանք երբեք նույնական չեն լինի: Վերոնշյալների մոտ ընդհանուրը ուժի գնահատումն է, սակայն շատ են տարբերակումները: Գրողը, տարբեր չափումների միջոցով, հաճախ տեսակ-անհատականությունների ինքնաբացահայտմամբ, արարքով և շրջապատի գնահատող հայացքով բացելով տեսակների տարակարգությունը, Ղարիբ ծերունու տիեզերական մեկնաբանմամբ բերում է անշարժ-փոփոխականի հարցը. «...մարդու տեսակները միշտ նույնն են եղել. չեն փոխվում ու չեն փոխվի. ուժեղը կմնա ուժեղ, թույլը՝ թույլ, վախկոտը վախկոտ կմնա, անվախը՝ անվախ, բարին՝ բարի կմնա և չարը՝ չար» [2, 202]... Գրողը գեղարվեստական մտածողության պարադոքսալ վիճակներ չունի. Ղարիբ ծերունու խոսքի մեջ թվարկվածը հատկանիշների էտալոնային ըմբռնումներն են, տեսակ-անհատականությունների մեջ՝ կյանքի, հասարակական-սոցիալական գիտակցության կողմից «արբազրված» ընկալումները:

Ս. Աղաբաբյանը «Արդիականություն և գրականություն» աշխատության մեջ, խոսելով իր ժամանակի հերոսի մասին, գտնում է, որ գրական հերոսի բազմակողմանի անհատականությունը հարվածներ է կրել, մոռացության է մատնվել մարդկային բնավորության սոցիալական էությունը, նյութը չի իրացվել գեղարվեստորեն արտահայտիչ և լիարժեք, հոգեբանություն մարմնավորող բնավորությունների միջոցով: Նա ցավով նկատում է, որ «խոր չէ բնավորության վերլուծության ու ստեղծման գեղարվեստական կուլտուրան, երբեմն սխալ ու մակերեսային են բացատրության այն միջոցները, որոնք պետք է ստեղծեն հերոսների ու հանգամանքների միասնություն, երերուն են այն ներքին կապերը, որոնց միահյուսումից էլ կերտվում է բնավորությունը» [9, 62]: Այս մտահոգությունը առաջացել է ժամանակի գեղարվեստական գրականության ուսումնասիրման համատեքստում, առավելապես Շահեն Թաթիկյանի «Նրա ճանապարհը» եռագրության հերոսի՝ Սամվելի առումով: Սակայն կարևոր են բնավորության կերտման ուղիների և միջոցների թվարկումը, իրական բախումների, ներքին հակամարտությունների բազմաչափության պահանջը: Մուղնեցյանի կերտած կերպար-բնավորությունները լուծում են գրականագետի առաջադրած խնդիրները:

Հայ գրականագիտության մեջ շատ չեն բնավորության կերտմանը ներկայացվող միջոցների և եղանակների, բնավորության ճանաչման համակարգված մոտեցումները: Այնուամենայնիվ, ձեռք բերված տեսական միտքը թույլ է տալիս ասելու, որ արդի արձակը հաղթահարել է բացերը. 60-80-ական թվականների գրականության զարգացման փուլում տեսակ-բնավորությունը գեղագիտական նոր բարձունքի նվաճում է:

Այսպիսով՝ Մուղնեցյանի ստեղծագործությունները (չափածո և արձակ) գեղագիտական նոր մոտեցումներով, կյանքի առեղծվածի խոկումներով, տիեզերքի, մարդու և անհատի հերձումներով էականորեն հարստացնում են և բազմազանեցնում կերպարային մտածողությունը. բնավորությունը դառ-

նում է լիարյուն և համապարփակ: Հաճախ է միֆը տարրալուծվում կյանքի իրական պատկերների մեջ ստեղծելով բազմահամակարգ իրողություն, ինչը ուժեղ հիմք է դառնում տեսակ-բնավորության ճանաչման համար:

Հոդվածի մեջ անդրադարձ է կատարվել միայն ուժի գիտակցության տարասեռ հատումներով առանցքի շուրջ հավաքված տեսակ-բնավորություններին, կան շատ այլատեսակություններ, որոնք քննության չեն առնվել որպես տիպաբանական այլ համակարգեր:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-119>

Գրականություն

1. Մուղնեցյան Վ., Ալիզ, «Սովետական գրող», Երևան, 1986:
2. Մուղնեցյան Վ., Եկվորներ, «Սովետական գրող», Երևան, 1989:
3. Մուղնեցյան Վ., Տաբու, «Ոսկան Երևանցի», Երևան, 2008:
4. Մուղնեցյան Վ., Բազմաշավիղ, «Ոսկան Երևանցի», Երևան, 2003:
5. Մուղնեցյան Վ., Զոհանվեր, «Ոսկան Երևանցի», Երևան, 2013:
6. Արխստոտեյ, Պոետիկա, Երևան, 1955:
7. Մարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, հ. 3, «Զանգակ-97», Երևան, 2002:
8. Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, հ. 5, ՀԳՄ հրատ., Երևան, 1965:
9. Աղաբաբյան Ս., Արդիականություն և գրականություն, «Հայաստան», Երևան, 1965:
10. Փանոսյան Ս., Արդիական չափանիշներով, «Սովետական գրող», Երևան, 1988:
11. Ժամանակակից հայ արձակը, ՀԱԱՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1981:
12. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, ՀԱԱՀ ԳԱԱ հրատ., Երևան, հ. 1, 1969, հ. 2, 1972:
13. Социологический энциклопедический словарь. М.: Издательская группа НОРМА-ИНФРА, 2000.

Тип личности в произведениях В. Мугнецяна

Сусанна Туманян

Резюме

Ключевые слова: образ, образное мышление, образ-характер, личность, индивидуальность, сила, наследственность

Магистральной темой новейшей армянской литературы с 60-х годов 20 века становится, освободившаяся от бремени зачастую шаблонных образов, тема воспевания человека. Первостепенную важность приобретают проблемы индивидуализации, убедительность, оригинальность и правдивость персонажей художественного произведения.

Интерес к этим вопросам очевиден и в произведениях В. Мугнецяна: в сборниках «Многостезия» и «Приношения», романах «Ализ», «Пришлые», «Табу».

Для автора особый интерес представляет тип личности, его жизненная философия. Он неотделим от времени, среды, корней. Память предков созданных им образов-характеров стремится к детерминации генетического кода народа. Личность погружена в себя, анализирует свои поступки, «анатомирует» себя в поисках своей индивидуальности, в познании самого себя.

Герои В. Мугнецяна являются непосредственными носителями эпичности: они сильны и открыты окружающему миру, часто ощущают в себе тысячелетнее прошлое человека, с болью отмечая, что они отошли от истоков, от «сказочных похитителей яблок», от своих мифических предков (Давида, Мгера и др.). При этом автор выделяет не только естественную природу своих героев, но и их духовно-нравственные связи с первочеловеком.

Писателю удалось в своих произведениях решить непростую задачу создания образов-характеров посредством раскрытия их интуитивной природы, психологически обоснованных конфликтов, в том числе между героем и его «внутренним человеком».

Мугнецян достигает индивидуализации образов, подчеркивая тип характера, признавая важность силы (физической и духовной), приравнивая духовную силу к типу характера. Писатель ставит типы личностей в основу сложных отношений образов, их многоуровневых связей.

Personality Type in the Works of V. Mughnetsyan

Susanna Tumanyan

Summary

Key words: *image, figurative thinking, type, image-character, personality, individuality, strength, heredity.*

The newest period of the modern Armenian literature starting from the 60s of the 20th century has strengthened the vein of a person's glorification, meanwhile unchaining him from the often stereotyped images. The problems of individualization, persuasiveness, originality and truthfulness of the characters in fiction have acquired paramount importance.

The interest towards these aspects is also evident in V. Mughnetsyan's works, more particularly in his collection "Multipath" and his novels "Sacrifice-offering", "Aliz", "New Comers", and "Taboo".

In his works V. Mughnetsyan accentuates the personality type and his philosophy of life. The characters are inseparable from time, environment, and roots. The ancestral memory of the image-characters created by him seeks to determine the genetic code of the people. The person, immersed in himself, analyzes his actions, "anatomizes" himself in search of his individuality, in search of his own personality.

V. Mughnetsyan's characters are direct bearers of epicism: they are strong and open to the surrounding world. They often embrace the pain of the thousand-year old human past, painfully noting that they have departed from their origins, from the "fabulous apple snatchers", from their mythical ancestors (David, Mher, and others). Meanwhile the author highlights not only the natural essence of his characters, but also their spiritual and moral connections with the original human.

In his works the writer has managed to solve the difficult task of creating image-characters by revealing their intuitive nature, psychologically grounded conflicts, including those between the hero and his "inner character".

Mughnetsyan has achieved individualization of his characters by emphasizing the character type, recognizing the importance of strength (physical and spiritual), relating spiritual strength to the character type. The writer puts personality types at the core of the complex relationships of the images and their multi-level connections.

Ներկայացվել է 12.04.2023 թ.

Գրախոսվել է 18.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

**Ժամանակի պատմաքաղաքական դիմապատկերը
Թամար Հովհաննիսյանի պոեզիայում**

Նարինե Հովհաննիսյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-131>

Հանգուցային բառեր. քաղաքականություն-կյանքի սպանդ, կին-կյանքի արարիչ, ժամանակի դիմապատկերի պոետական հայելի, տառապագին ընդդիմախոսություն, կանացի սիրտ, աշխարհաքաղաքական կոխան

Նախաբան

Պոեզիան մշտապես եղել և մնում է ժամանակի անմիջական զգայադարանը, մարդու և ժամանակի միջև ներքին հակընդդեմ երկխոսության ձայնադարանը, քաղաքակրթության վայրիվերումներն ու անկումները չափազորող և կյանքը հունի մեջ ձգող ոգեղեն ուժը: Իսկատիպ պոեզիան բանարվեստ լինելուց առաջ և հետո իմացաբանություն է, կենսագիտություն, հոգեգիտություն ու պատմագիտություն՝ խոհազգացական ոգեղեն ոլորտում: Պոեզիան նաև ժամանակի գնացքի համանվագային երաժշտություն է, իդեալի և իրականության բախումից երևութացող ինքնաստեղծ պատկերապատում՝ բեկված անհատական կյանքի և անդրադարձված մարդկային սերունդների պատմություն վրա:

Ժամանակի լույսն ու ստվերը, ներդաշնակությունն ու վայրագությունը պոեզիայի զարկերակային լարվածությունը պայմանավորող երկբևեռ երևույթներն են, հոգեկան ապրումների մակընթացությունն ու տեղատվությունը: Այդպիսին է ժամանակակից բանաստեղծ Թամար Հովհաննիսյանի պոեզիան՝ ժամանակի պատմաքաղաքական ու պատմահոգեբանական խոր ու զգայուն ներթափանցումներով, պատկերային ուրույն համակարգով, տողի ու հանգի ինքնատիպ համաչափություններով:

1. Կին-կյանք արարող և քաղաքականություն-կյանք ոչնչացնող դիմադրությունը Թ. Հովհաննիսյանի պոեզիայում

Երկրագնդի քաղաքական պտույտը Թամար Հովհաննիսյանի պատմաքաղաքական ու պատմահոգեբանական պոեզիայում անցնում է կանացի սրտի միջով՝ ժամանակի հոգեբանական ընկալման անձնական կերպից դառնալով անանձնական, անհատական պոեզիայից՝ համընդհանրական: Այո՛, Թամար Հովհաննիսյանի պոեզիան կանացի պոեզիա է, որն իր մեջ խտացնում ու անդրադարձնում է մարդու պատճառած տիեզերական ցավը, մահվան ներխուժումը կյանքի հովիտ, դժոխքի հաղթանակը դրախտի հան-

դեպ: Կյանքի դրաման, աշխարհի վայրագ ընթացքը բանաստեղծուհին վերապրում է բազմախոց հոգու ներքին լարումներով. *«Լսելիքս խոշտանգվում է ձայնահյուսից հնչող / Ողբասաց կանանց վայնասունից հուսահատ. / Ես խլանալ եմ ուզում / Ես կուրանալ եմ ուզում, / Քանզի դժոխքը ներխուժել է դրախտ...»* [3, 117]:

Կին-կյանք արարող և քաղաքականություն-կյանք սպանող դիմադարձությունը Հովհաննիսյանի պոեզիայի ներքին դիմագիծն է, ապրումների առանցքը: Կյանքի արարիչ կինը հոգու և մարմնի բոլոր հյուլեններով շաղկապված է կյանքին, ու կյանքի կորստի հետ կորուստներ է ապրում և ինքը՝ դառնալով թեր կոտորած հրեշտակ և շագրենի կաշու պես ֆիզիկական էներգիան կորցնող ու փոքրացող երևույթ՝ կամ չորացող ծառ ու ցամաքող աղբյուր. *«Ու ը է առաջնորդում մեզ ատելությունն այս համատարած, / Ու մ որդու որդրմաթասն է պարպվելու այսօր... / Ու ճերմակ աղավնիների երանը դիվահար / Պտտվում է դժոխքի ու դրախտի սրահներում, / Ապրելը բախտախաղ է, որը չի տնօրինված վերից, / Մարդը որոշել է ստանձնել դերն Արարողի / Ու չի վախենում իր ստանձնած դերից»* [3, 117]:

Իշխանություն դարձած անտարբերության դեմ Թամար Հովհաննիսյանի պոեզիան ինքնահաստատվում է որպես գորեղ ընդդիմություն, դառնում թմրեցված խղճի վերարթնացման ճիչ, մահաբեր օրենքների դատապարտման վճիռ, միաժամանակ՝ կործանվող աստվածների և սատանաների շքերթների հուսահատ պատմագիր. *«Աշխարհը՝ չարորակ ուռուցքը ներսում, / Կեղծիքով հարդարում է ողջությունը իր սուրբ, / Լռությունը սպանում է, հզորները ձեռնպահ՝ / Եղերական անցքերը կոծկել են ուզում / Ցավակցական ուղերձներով անհոգի ու սուտ... / Ես տեսնում եմ մահը իմ ժամանակի / Պայթեցվող մանուկների ցրված փորոտիքներում, / Որոնց սարսափի պահ իսկ չի վերապահվում... / Մինչ օրենքները գրվում են ու ջնջվում են փոփոխական, / Թանաքներն անգամ չչորացած, / Երազարձությունները հերթափոխում են խելահեղ, / Մարսափի ուրվականներ են ցրել ամենուր, / Երեկվա աստվածները դարձել են խաչագող, / Ու խաչագողներն անցյալի՝ ինքնակոչ արքա...»* [3, 117]:

Երկրագնդի քաղաքական ընթացքը ձգված նյարդալարի պես Հովհաննիսյանի պոեզիայում նվվում է ձայնի ու ոճի փոփոխակներով, հոգեկան ապրումների համանվագայնությամբ: Կյանքի քառսի մեջ անորոշության ծանր վարագույրները հետ քաշելու և լուսամուտ բացելու կենսական մղումով բանաստեղծուհին կարդում է «Մթափության աղերս»՝ ուղղված նորին մեծություն քաղաքականությանը. *«Ձանգերը տազնապեցնող / Գուժկաններ են հավանական պատերազմի, / Բսկ մեր օրերում հաղթանակը ապահովում է / Տարողությունը գրպանի: / Եվ մտահոգության թուխսը հետապնդում է ինձ: /*

Կարծես սև վրան է՝ տեղից տեղ շարժվող, / Որը խլում է լուսը ազահորեն՝ վերից...» [3, 122]:

Բանաստեղծի ապրումների համանվագում հնչում է նաև մենության ու չհասկացվածության դրաման, իրադարձությունների շղթայակապում իր տեղն ու դերը վերաքննելու և վերաճշգրտելու հարցապնդումը, առկա վախի ու վաղվա կանխագագումի իրական կապի որոնումն ու որոշակիացումը. «Թվում է՝ ես շարունակ ինձ եմ որոնում / Կատարվածի ու լինելիքի միջանցքներում հսկա: / Վախը վաղվա օրվա մեռյալ ներկայություն է, / Վիճակների շրջադարձային փոխանակումներ չկան...» [3, 122-123]:

Հաջորդում է հոգու լուռ ցավի թանձրույթը ձեռքող և ձայնի փոխակերպվող ճիչ-հորդորը՝ կանխելու բարոյականության վերջնական կործանման աղետը, հաստատելու մարդկային կյանքի լինելության իրավունքն ու խառնիճադանջը տոնող բարբարոսության չքացումը. «-Հե՛յ, - ուզում եմ ճշալ,- չկան ավելորդներ, / Դադարեցնել է պետք քաջքշուքն այս անիմաստ, / Ինչ որ պատահի վաղը, բոլորիս խնդիրն է, / Ու աղետի գոտում ընտրյալներ չկան... / Մեզ գեթ մի վերջին այիք է պետք՝ / Հավաքական ազնիվ ոգեկոչումի, / Մի վերջին հրավեր ողջամտության, / Որպեսզի բոլորիս տանիքը չփլվի...» [3, 123]:

Հետզհետե որոշակիանում է նաև կանացի անգորությունից ծնված թախիծը՝ մտահոգությունների ու տարակուսյաների երևեջային մեղեդայնությամբ: Օդի մեջ առկախվում է հարցական բառերի ու մտքերի մի ամբողջ շարք՝ երևան բերելով կանացի նուրբ ապրումների ու մորմոքների ուղեծիրը. ի՞նչ են գգում կորովի զինվորները նահանջելիս, ո՞ր պետք է գնան պատերազմից փախած և նորից հետ ուղարկվող երեխաները, ինչպե՞ս է արձանագրվելու աշխարհի պատմությունը դար հետո, արդյոք մահը կյանքից երանելի՞ է դառնալու, ո՞ւմ են ծառայելու վարձու բանակների արձակված զինվորները, և անորոշության դատապարտված այլ հարցեր, որոնք մասնավորումով հանդերձ ընդհանրացնում են կյանքի դրամատիզմը. «Տեսնես ի՞նչ են գգում / Ջահել զինվորները նահանջելիս, / Եվ կամ սերմնաթափվող ծաղիկները, / Երբ շուրջը հող չկա... / Տեսնես ո՞ր են որոշում գնալ / Կրակի բերանից փախած / Ու փրկության ափից տուն / Հետ ուղարկվող / Փախստական երեխաները... / Տեսնես ո՞ւմ են ծառայելու / Վարձու բանակների / Տուն վերադարձած զինվորները, / Ու որտե՞ր, ի՞նչ դրոշներ են իջեցվելու / Նրանց մահախոսականից հետո...» [3, 120]:

Տիեզերքին հղված վերջին հարցադրումը այսպիսին է. «Տեսնես ո՞վ է կանխելու կործանումը / Խելահեղ երրորդի, / Որը երբեմն երևանվում է հորիզոնում» [3, 120]:

Երրորդը Աստված է, Սուրբ երրորդությունն ինքը, երրորդը նաև մոլո-

րակի կյանքն է, աստվածային արարչագործության երրորդ օրվա խորհուրդը. դա է գլխավոր մտահոգությունը, այդ է գերագույն տաճնապը՝ կյանքի կործանման անընդհատականությունը, մահվան երկիրը՝ առանց մարդու, կենդանության չքացումն ու անթաղ դիակների անտերությունը. *«Տեսնես ե՞րբ են հանդարտվելու / Ատելության փոթորիկները, / Ու դիապարկերը շարունակվելու՞ են / Շարվել կողք կողքի, / Մարսափից սահմուկած մանուկների / Աչքի առաջ: / Ու տերեր չեն գտնվելու, / Որ հանձնվեն հողին...»* [3, 120]:

Բանաստեղծուհու խնդրահարցերը մնում են չլուծված. օդում դարձյալ թափառում են պատերազմի ուրվականներն ու մահագույժերի նախահնչունները: Սկիզբը վերապրվում է որպես վախճանի ուրվական, լուսաբացի սպասումը նույնականանում է վախին, ու ներքին վախը, ներքին տաճնապը վաղվա հանդեպ դառնում են մշտառկա հոգեվիճակ. *«Ես վախենում եմ. / Լուսաբացներն են սկսել / Վախեցնել ինձ: / Լուրերի հեռարձակումները դիտելուց առաջ / Ես խաչակնքում եմ»* [3, 121]:

Այդպես է, որովհետև հոգին կեղեքող մուտք տարակույսներին չի հաջորդում լույսի տեսանելի շողը, սփոփանք չկա տիեզերքի ցավը լուռ սրտում կրող ու ցավի կշռից հետզհետե ճկվող-մարող կին-կյանք արարողի վշտին, քանի որ աշխարհի ուղեղը հիվանդ է, ու ապաքինումը վստահված է «հավաքական խենթությունը» կրող մի քանի տերերի. *«Թվում է, թե աշխարհը ուղեղ է հիվանդ / Եվ կամ համակարգիչ վիրուսախեղդ, / Որը փոխարինել չի լինելու նորով, / Քանի դեռ տիեզերքը չի գաղութացվել... / Հիվանդ է մոլորակը, / Ապաքինումն իր վստահած / Հավաքական խենթությունը կրող / Մի քանիսին...»* [3, 119-120]:

2. Ժամանակի դիմապատկերը պոետական հայելու մեջ

Թամար Հովհաննիսյանի պատմաքաղաքական պոեզիայի քնարական կերպարը մերթ հանդես է գալիս որպես կյանքի արարչուհի, որ անգոր կոիվ է տալիս կյանքն սպանողի՝ քաղաքականության դեմ, մերթ՝ կերպավորվում է որպես իդճի առաքյալ՝ նորին անտարբերության դեմ, մերթ՝ իբրև խաղաղության պատրանք՝ պատերազմներին դեմ հանդիման: Կերպարանափոխության հետ տարբեր փոփոխակներ է հետագծում նաև պատկերաստեղծումը: Բանաստեղծությունների պատկերային համակարգը, խոսքի գեղագիտությունը միանգամայն ներդաշնակվում են ասելիքի տրամաբանությանը, հոգեբանական հոսքին, ոճի փոփոխությունը ուղիղ համեմատական է խոսույթի էությանը, հոգեբանական ապրումի բնույթին:

Խոսքի տրամաբանության հետ ներդաշնակվում են նաև բանաստեղծության ներքին երաժշտականությունն ու տողերի ռիթմը: Ահա «Պատերազմ» բանաստեղծությունը, որի տների կառույցը թողնում է զինվորական շարասյան քայլերթի ռիթմի տպավորություն, իսկ ներքին երաժշտականությունը՝ խրոխտ ու կտրուկ ռազմերգի ազդեցություն. *«Համագգեստավորները հաշող*

շներ են կանաչ, / Ուր որ է՝ պիտի դուրս ժայթքեն էկրանից, / Այրվող տները արգանդներ են հերձված, / Եվ հուշերը ծուխ դարձած վեր են էլնում սարսափից: / Վտարանդիները քայլում են մտամոլոր, փոշոտ, / Անհովիվ մնացած հոտի նման, / Աշխարհն ասես ջնջվում է, որ գծվի նորից / Միայ ընթացած էսքիզի նման...» [2, 321]:

Ստեղծագործական տպավորության չափին նպաստում են ոչ միայն բանաստեղծության հոգեբանական խորքը, այլև անսովոր պատկերակերտման արվեստը, խոհի հայտնագործությունը, ավանդական և մոդեռն լեզվամտածելակերպերի սահուն ու նուրբ համակցումներն ու փոխանցումները. «*Ես նախանձում եմ կույրին այն / Խարխափող ու մանրընթաց / Ինձ տեսանելի դժոխքը չկիսելու համար: / Կին մի՛ ոտքը ծանր, փովել է մեջտեղում, / Խաչմերուկի կենտրոն է որովայնը պրկված. / Նրան մե՛կ, թե՞ երկու դիպարկ է հասնում / Աշխարհի ամոթը պարփակելու համար» [2, 321]:*

Աշխարհի համառ անկման ընթացքում, ուր մեկն ապրում է մյուսի մահվան հաշվին, որպես ընթացքի հետագիծ մնում են «Դիերն անդամահատ, արնաշաղախ ու թարմ» [2, 321]: Այսպես, քաղաքական խաղացողները կյանքը վերածում են սպանդանոցի՝ օրորոցների փոխարեն ցրելով դիպարկեր:

Մահվան ներկայությունը գերակա է ու տիրական ամենուրեք, օդն ինքը արտաթորում է մահահոտ, շուրջբոլորը մթագնում են մահվան գույներ, մահապատկերներ, մահվան էսքիզը երկարվում է հորիզոնից հորիզոն՝ դառնալով նաև համընդհանուր մտասևեռում. «*Մահն ապրում է իմ շուրջ, / Շունչը գինեհոտ, աչքերն արնակալ, / Խորշերը խորխոտ, հոգին մաղձապատ... / Ո՞վ է արարել գլուխգործոցն այս, / Ընձա առաքել ինձ տարտարոսից, / Քեզ վախենում է ետ վերցնել Աստվա՛ծ...» [2, 333]:*

Ժամանակի ընթացքի կառավարիչը քաղաքական իշխանությունն է, որն «...Իր ոհմակով / Անգեն ու տքնող հասարակության / Անդամներին իր գոհն է համարում / Ու կարող է ճաշակել յուրաքանչյուրին / Քիմքի քմահաճ թելադրանքով» [2, 349]: Ու այդ պայմաններում, երբ կանաչ թղթերով է որոշվում ճնշաչափը, ապրելը դառնում է «մասնագիտություն», որին տիրապետելն էլ «խաբկանք է գունազարդված»: Քաղաքական անհոգի խաբեությունը երկրներ է առաջնորդում և լքում նրանց փակուղիների առաջ: Մարդկության գոյավիճակը գաղութացված է երկրագնդի քաղաքական տերերի կողմից, ու մի գիշերվա ընթացքում ծախու իշխողները կարող են տակն ու վրա անել ամեն ինչ՝ «Պատճառը կարգին չարտաբերած» [2, 349]:

Ժամանակի պատմահոգեբանական մի ուրիշ պատկեր է «Մանկության դաժանությունը» բանաստեղծությունը: Բոլոր տեսակի անկումներին ավելանում է հոգևոր արժեքների անկումը: Մանկության դաժանությունը հաստատագրվում է համատարած առուձախով, անիմաստության իմաստավորումով, անմտության ներարկումով ու բթացումով, հավաքական մտքի չքացու-

մով, մոլախոտի պես աճող հաշվենկատ ապամշակույթով ու բազմապիսի այլ կերպարանքներով: Մնանկության այդ հաղթահանդեսի պատկերը ուղեկցվում է վաղվա օրվա կասկածի մտավախությամբ, որովհետև արժեքների ոտնահարումն ու փլուզումը սասանում են հուսալի ապագայի հիմքերը: Անփառունակ շքերթից ինքնական հրաժարված բանաստեղծուհուն ոչինչ չի զարմացնում այլևս: Կողք կողքի ապրում են ինքը և մարդկային սնանկությունը, համատեղությունը, սակայն, ֆիզիկական է միայն, մինչդեռ հոգեբանորեն ամեն պահի անհաշտություն է և անհամատեղելիություն. *«Ես տեսնում եմ, թե ինչպես / Ամբոխը քրջանոլ / Շլացած, բերանբացորեն / Իմաստավորում է անիմաստությունը, / Եվ ինչպես է միտքը հավաքական / Ներարկվում աննտության թմրադեղով... / Ես տեսնում եմ, թե ինչպես են / Խլահավերը հորջորջվում երաժիշտ / Ու պատեհապաշտները կաշուն մարզարեի / Համարում անսում է ժանազան ամբոխից...»* [2, 376-377]:

«Վաղվա անհուսությունը սարսափեցնում է», – [3, 131] արձանագրում է բանաստեղծը՝ աչքի առաջ ունենալով ժամանակի հակաբարոյական դիմապատկերը, օրենքների գաղութացումն ու կանոնների ինքնաթելադրումը: Կանացի կանխագագումով Թ. Հովհաննիսյանը պարզորոշ տեսնում է մարդկության գոյությանն սպառնացող վտանգը, «ինչպես ձագերին հսկող թռչունը» [3, 132], ու ժամանակի ողորմածությունը այս դեպքում ընդամենը «պարտք վերցված կյանք» է կամ «ապառիկով գնված ապահովություն» [3, 132]. *«Ես չապրելով եմ ապրում արդեն վերջերս / Ու պարպում ինձ ինձանից դուրս... / Ինքնահսկումի ահագնությունը / Ցավեցնում է կուրծքս...»* [3, 132]:

Համատարած մահվան մտատանջությունը հասնում է մտածական լարման մի կետի, երբ մեղավոր ու մեղսակից են դառնում երկրային սահմաններն ու տարանջատումները. «Ո՞վ է սահմանել տարանջատումն այս ահավոր // Ինչո՞ւ սահմաններ չեն գծված երկնքում» [3, 144]: Դաժանությունը դարձել է համաճարակ և տարածվում է երկրագնդով մեկ՝ թունավորելով մարդկության արյունը, քարացնելով հոգին, մարդու մեջ սպանելով մարդկայինը: «Ժամանակը սկսել է մարդուց վախենալ» [3, 143], – ահագանգում է բանաստեղծը՝ ամենուր տեսնելով դաժանության հոչակումը իբրև իշխանություն. *«Համատարած այս խեղահեղությունը մեզ ո՞ր է տանում, / Եվ ի՞նչ են ծրագրում առաջնորդները դրա, / Պատերազմները այս զանգվածային հուղարկվորումներ են, / Որոնք հնձում են զավակներին կանաչ: / Պտղաբերության երանությունը մեռնում է, / Երբ տեսնում է ուրիշների որդիներին անդամահատ... / Խաթարվել է անդորրը համամարդկային, / Ու երկինքը լվացել է ձեռքերը մեզանից...»* [3, 143-144]:

Թամար Հովհաննիսյանի պոեզիան դառնում է ժամանակի պոետական հայելին, որտեղ արտապատկերվում, բեկվում ու անդրադարձվում են նրա դիմապատկերները: Ժամանակի պոետական հայելապատկերները հաջոր-

դում են իրար շարժանկարի պես՝ փոփոխակներով ու ներքին միասնականությամբ: Ահա դրանցից մի քանիսը ևս. «...Ատելությունը շարունակական / Մեկի կործանումը դարձնում է մյուսի խնդությունը» [3, 150], «Զինվորներն ընկնում են, զորավարները՝ փրկվում» [3, 151], «Ճշմարտացված սուտը նորահայտ գյուտ է / Ու լոկ անմեղների վրա է փորձարկվելու» [3, 151]:

Ու նորից հնչում է պատերազմների հրահրիչ դարձած սահմանների տարանջատման՝ իմաստային ուժգնացում ստացած հարցը. «Ո՞ւմ են հարկավոր սահմանները երկրի / Արյունով գծված ու տարանջատված» [3, 145]: Մա մարդկության ծնող կին էակի՝ կյանքի կորուստներից մտահանգված հայացք է, կին, ում աչքի առաջ սպանվում է իր ստեղծագործության գլուխգործոցը՝ մարդ-զավակը: Միաժամանակ կա տխուր գիտակցումը, որ «Ներդաշնակությունը համակեցության հնարովի երազ է» [3, 145]: Վերստին երևան է գալիս միտքը շաղափող ծանոթ հարցադրումը.

«Ո՞վ է ղեկավարում քառսն այս մշտանորոգ, / Ո՞ւր է գիտակցությունը կույր / Առաջնորդում աշխարհը: / Տազնապնները կարկտահար են անում միտքս, / Ու գրիչս չունի՝ պատասխան դրանց...» [3, 146]:

Բանաստեղծուհու խոսքը հնչում է որպես տիեզերական մոր ձայն՝ ուղղված իր զավակ-մարդկությանը: Մարդը, որ արարչագործության գլուխգործոցն էր, և ում վստահված էր ի վերուստ ապահովել երկրի խաղաղությունն ու արարումը երկրի վրա, դարձել է վերջին ստահակ՝ չխնայելով ոչ ոքի և ավերելով շուրջբոլորը: Բանաստեղծի դրամատիկ հարցադրումները միտված են մարդու դարձին՝ մարդ տեսակին, մարդու աստվածային կերպին. «Ի՞նչ էս ուզում դու քեզ նմանից, / Ինչո՞ւ չես տեսնում ինքդ քեզ» [3, 149]:

Բանաստեղծությունից բանաստեղծություն Թամար Հովհաննիսյանի կանացի դրաման նոր խորքեր է բացում, ներքին պլեբախությունը նոր ափեր է ընդգրկում: «Մարդակերի ձեռքն ընկած մասնատված զոհի պես» [3, 147] երկիրը կտրատվում է՝ ազատության, սեփական սահմանների, կրոնի անվան տակ, մինչդեռ արդյունքը կորուստն է մարդկության, «Որը մոճավանջի պես վերջ չունի» [3, 147].

«-Ազատությունը / Համամարդկային ստերից մեկն է, / Այն ամենուր է և ոչ մի տեղ...» [3, 147]:

Մա է տառապանքից հասունացած վերջին իմաստությունը. այն, ինչին ձգտում է մարդը ծննդյան օրից և ինչի համար կռվի է ելնում, գոյություն չունի իրենից դուրս:

Եզրակացություն

Թամար Հովհաննիսյանի պոեզիան ժամանակի դիմապատկերի լակմուսյան թուղթն է՝ ճշմարիտ ու զգայուն: Դա կնոջ ու քաղաքականության բախման դրամատիկ պոեզիա է, կյանք արարող կնոջ տառապագին ընդդիմախոսություն՝ ուղղված կյանքը ոչնչացնող աշխարհաքաղաքականությանը: Այն 21-րդ դարի մի նոր «Եղիցի լույս» է՝ ժամանակի հետ դրամատիկ բախման և գեղագիտական իդեալի առումով, կանացի մի վերջին հուսահատ ճիգ՝ կասեցնելու մոլորակի վերջնական կործանման աղետավոր ընթացքը: Կյանքի սկզբնաղբյուր կինը, որ Թ. Հովհաննիսյանի պոեզիայի քնարական հերոսն է, իր առաքելությունը գտնում է նախևառաջ մարդկության վերքերը ապաքինելու և կյանքը խաղաղ ու ներդաշնակ հունի մեջ դնելու իդեալի իրագործման մեջ: Թամար Հովհաննիսյանի բանաստեղծական արվեստը ուշագրավ և ազդու պոեզիա է՝ պատկերակերտման ինքնատիպ արվեստով, տողերի առանձնահատուկ ռիթմով, խոհի ու հույզի կանացի խորքերով: Զուգակցելով Արևմուտքի և հայ գրականության առանձնահատկությունները, նրբորեն համակցելով դրանք կամ սահուն փոխանցումներ կատարելով՝ Հովհաննիսյանը ստեղծեց խորապես անհատական, բայց նաև համամարդկային պոեզիա, որի ուսումնասիրության գործը ներկա ու գալիք բանասերներինն է:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-131>

Գրականություն

1. Հովհաննիսյան Թ., Լինելության համանվագ, Ե., 2013, ՀԳՄ հրատ., 480 էջ:
2. Հովհաննիսյան Թ., Տարիքի հոգին, Ե., 2018, «Անտարես» հրատ., 424 էջ:
3. Հովհաննիսյան Թ., Սիրո պարապուրդ, անտիպ գիրք, 710 էջ:

Резюме

Ключевые слова: политика-резня жизни, женщина-творец жизни, поэтическое зеркало портрета времени, страдальческое оппонирование, женское сердце, геополитическая борьба.

Свет и тень времени, гармония и жестокость – двухполюсные явления, приливы и отливы душевных эмоций, которые определяют пульсирующее напряжение историко-политической поэзии Тамар Ованнисян. В статье ключевыми вопросами исследования являются сопротивление женщины-творца жизни политическому разрушению общества и облику времени в поэтическом зеркале. Политическое вращение земного шара в историко-политической и историко-психологической поэзии Т. Ованнисян проходит через сердце женщины, переходя от личной модели психологического восприятия времени к модели безличной, от индивидуальной поэзии к всечеловеческой. Поэзия Тамар Ованнисян – это женская поэзия, которая сгущает и отражает космическую боль, причиняемую человеком, вторжение смерти в долину жизни, победу ада над раем. В ее стихах политический курс Земли застывает подобно натянутой нервной струне, чередуясь с вариациями голоса и стиля, с гармонией душевных переживаний. Поэзия Тамар Ованнисян становится поэтическим зеркалом времени, в котором отображаются, преломляются и отражаются ее портреты. Это драматическая поэзия конфликта между женщиной и политикой, мучительное оппонирование вдохновленной женщины геополитике, губящей жизнь.

Поэтическое искусство Т. Ованнисян – это знаменательная и волнующая поэзия с самобытным искусством создания образов, особым ритмом строк, женской глубиной мысли и чувства. Сочетая черты западной и армянской литературы, тонко комбинируя их или делая плавные переходы, поэтесса создала глубоко личную, но в то же время и всечеловеческую поэзию, изучить которую подлежит настоящим и будущим филологам.

The Historical and Political Portrait of Time in Tamar Hovhannisyan's Poetry

Narine Hovhannisyan

Summary

Key words: *politics-slaughter of life, woman-creator of life, poetic mirror of the face of time, poignant peer review, a woman's heart, geopolitical warfare*

The light and shadow of time, harmony and ferocity are bipolar phenomena, the ebb and flow of spiritual emotions that determine the pulsating tension of historical and political poetry of Tamar Hovhannisyan. The main research issues in the article are the opposition of the woman-creator of life and politics-slaughter of life in Tamar Hovhannisyan's poetry and the face of time reflected in a poetic mirror. The political rotation of the Earth in the historicopolitical and historicopsychological poetry of Hovhannisyan penetrates into the heart of a woman, varying from a personal model of psychological perception of time to an impersonal model, from individual to the universal poetry. Tamar Hovhannisyan's poetry is women's poetry, which embodies and reflects the tremendous pain caused by a man, the invasion of death into the valley of life, the victory of the hell over the heaven. In her works, the political course of the Earth wails like a stretched nerve string, with variations in voice and style, with the harmony of emotions. Tamar Hovhannisyan's poetry transforms into the poetic mirror of time, in which her portraits are displayed, refracted and reflected. This is a dramatic poetry of the conflict between a woman and politics, the painful opposition of the life-giving woman to life-destroying geopolitics.

Tamar Hovhannisyan's poetry is exceptional and engrossing with its original art of creating images, a unique rhythm of lines and feminine depths of thoughts and feelings. Combining the peculiarities of Western and Armenian literature, subtly integrating them or making smooth transitions, Hovhannisyan created a deeply personal, but also universal poetry, which is the subject of study for present and future philologists.

Ներկայացվել է 22.03.2023 թ.

Գրախոսվել է 19.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Երկրնտրանքի խնդիրը Էսթետիկական և Էթիկական Էքզիստենցիայի տեսանկյունից Խ. Հոսեյնիի «Եվ արձագանքեցին լեռները» վեպում

Քրիստինա Ղազարյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-141>

Հանգուցային բառեր. *անհատ, գոհաբերություն, ինքնագոհաբերում, բարոյականություն, առաքինություն, զգացմունքներ*

Սույն հոդվածը նվիրված է մարդկային կեցության անխզելի իրողության՝ ընտրության խնդրի վերլուծությանը: Մեր առջև *խնդիր* ենք դնում քննարկվող նյութի վերլուծությունը կատարել՝ հիմք ընդունելով 19-րդ դարի դանիացի փիլիսոփա, աստվածաբան և գրող Սյոբեն Կիերկեգորի աշխատություններում արված փիլիսոփայական դիտարկումները: 2013 թվականին լույս տեսավ աֆղանական ծագմամբ ամերիկացի գրող Խալեդ Հոսեյնիի «Եվ արձագանքեցին լեռները» վեպը և կարճ ժամանակում մեծ արձագանք ունեցավ համաշխարհային գրական ասպարեզում: 2016 թվականին հայ ընթերցողի դատին հանձնվեց գիրքը՝ գրականագետ-թարգմանիչ Անուշ Սեդրակյանի փայլուն թարգմանությամբ: Թեև վեպը անմիջապես ջերմ ընդունելություն ունեցավ, այնուամենայնիվ հայ գրականագիտական մտքի կողմից դեռ պատշաճ ուշադրության չի արժանացել: Եվ մեր *նպատակն է* վերոհիշյալ ստեղծագործության սահմաններում ուսումնասիրել երկրնտրանքի հիմնախնդիրը մարդկային էքզիստենցիայի տարբեր ոլորտներում, վեպի հերոսների բարոյահոգեբանական ապրումները ընտրություն կատարելիս:

Հոդվածի *արդիականությունը* պայմանավորված է նրանով, որ մինչ այժմ վերոնշյալ խնդիրը չի դիտարկվել Խ. Հոսեյնիի «Եվ արձագանքեցին լեռները» վեպի օրինակով ոչ հայ, ոչ համաշխարհային գրականագիտության մեջ:

Սյոբեն Կիերկեգորը «Կամ, կամ» փիլիսոփայական տրակտատում ուրվագծում է մարդու գոյության երեք հիմնական աստիճանները, կյանքի երեք փուլերը՝ էսթետիկական, էթիկական և կրոնական: Համաձայն Կիերկեգորի՝ մարդու գոյության առաջին՝ էսթետիկական աստիճանում իրականության բարձրակետը էսթետիկական իրականությունն է: Այդ աստիճանը անձնական, սուբյեկտիվ ոլորտ է, որտեղ անհատը ապրում և վայելում է կյանքը՝ մեկնակետ ընդունելով միայն իր անձը (Դոն Շուան, Ֆաուստ): Հաջորդ՝ էթիկական փուլում մարդն անցնում է քաղաքացիական ոլորտ, որտեղ մարդու արժեքն ու ինքնությունը գնահատվում և արժևորվում են օբյեկտիվ աշխարհի կողմից: Կրոնական ոլորտում մարդուց պահանջվում են առավելագույն ջանքեր, և ակնկալվում է միտում առ հավատք [7, 5-16]: Կրոնական ոլորտի աշխարհայացքը հեղինակն ավելի մանրակրկիտ շարունակում է շարադրել իր «Ան և դող» փիլիսոփայական աշխատության մեջ:

Էքզիստենցիալ ընտրության ժամանակ մարդը ստիպված է վերապրել ոչ այնքան բուն երկրնտրանքի պրոցեսը, որքան նրա հետևանքները, այդ թվում՝ նաև կորուստները: Էքզիստենցիալ իրավիճակներում անհատը բախվում է հակասական արժեքների և փոխբացառող այլընտրանքների: Երկրնտրանքի ողբերգականությունը անձնական դժբախտության փորձառությունն է, անհատի երկատվածությունը, երբ փոխվում են արժեհամակարգը, ընդունված համոզմունքներն ու գնահատման չափորոշիչները [3, 72]:

«Եվ արձագանքեցին լեռները» վեպի սկզբում պատմվող լեգենդի առանցքային կերպարը՝ Բաբա Այուբը, առաջին ընտրության ժամանակ այլընտրանք չունի. այստեղ գործ ունենք պարտադրված ընտրության հետ: Ըստ էության, նա կանգնում է *Հոբսոնի ընտրության* առաջ¹: Նմանատիպ իրավիճակում է հայտնվում Վիլյամ Սթայրնի «Սոֆիի ընտրությունը» վեպի հերոսուհին: «...մի կողմից դա ընտրություն է առանց ընտրության, քանի որ այն պարտադրվում է, փաստացի հրաման է դառնում, որը պետք է կատարել երկու երեխաների մահվան սպառնալիքի տակ (Հոսեյնի վեպում՝ հինգ երեխաների – *դիտարկումը մերն է՝ Ք. Ղ.*), մյուս կողմից դա ընտրություն է երկու տարբերակների միջև, որոնցից յուրաքանչյուրն էլ հավասարապես անբավարար է և միայն տառապանքներ է բերում» [4, 22-23]: Բաբա Այուբն ընտրության հնարավորություն չունի, քանի որ ընտրությունն ակնհայտ է: Նա ստիպված է զոհաբերել մեկին՝ հանուն չորսի փրկության, բայց միևնույն ժամանակ այդ զոհաբերությունը կատարում է ինքնագոհաբերվելով: Ըստ Կիերկեգորի փիլիսոփայական հայեցակարգի՝ նա ողբերգական հերոս է, նրա ընտրությունը արդարացված է և հասկանալի, քանզի չորսին փրկելու համար զոհաբերվում է մեկը: Այս իրողությունը Կիերկեգորը նկարագրում է իր «Ան և դոդ» փիլիսոփայական աշխատության մեջ՝ հակադրելով հավատքի ասպետին և ողբերգական հերոսին²:

¹ «Հոբսոնի ընտրություն» արտահայտությունը սկիզբ է առնում է 17-րդ դարի կեսերից և կապված է Քեմբրիջում ապրող Տոբայե Հոբսոն (1554-1631) անվամբ քաղաքացու պատմության հետ: Քաղաքացին վարձով ձիեր էր տալիս, բայց մի պայմանով՝ հաճախորդը ձիերին ընտրելու հնարավորություն չունեի և ստիպված էր «ընտրել» ախոռի մուտքին մոտ կանգնած ձիուն: Այս արտահայտությունը լայնորեն կիրառվում է անգլիական մշակույթում [4, 22]:

² «Ան և դոդ» աշխատության մեջ ողբերգական հերոսի օրինակ է ծառայում Եվրիպիդեսի «Բիֆիզենիան Ավլիսում» ստեղծագործության կերպարներից մեկը՝ Ագամեմնոնը, որը Տրոյայի դեմ արշավանքից առաջ աթենական զորքի հաջողության համար աստվածների կամքով ստիպված է զոհաբերել իր դստերը: Ըստ Կիերկեգորի՝ նրա գործողությունները հասկանալի են և ընդունելի, քանի որ կատարվում է զոհաբերություն համընդհանուր բարօրության համար, և այդպիսի հերոսը արժանի է կարեկցանքի: Աստվածաշնչյան հայտնի պատմությունը նույն-

Կիբեթկեզորը առանձնացնում է ընտրության երկու տարբերակ՝ կապելով դրանք մարդկային գոյության մակարդակների տարատեսակների հետ՝ էսթետիկական և էթիկական: Առաջինի դեպքում մարդը կատարում է անմիջական ընտրություն՝ հիմնվելով ճաշակի և նախընտրությունների վրա: Էսթետիկական ընտրությունը համեմատաբար կանխատեսելի է և կարող է հեշտությանը փոխարինվել այլընտրանքով: Էթիկականի դեպքում ընտրության գործողությունը և դրա որակը վճռորոշ նշանակություն ունեն, և մարդն արդեն գիտակցում է իրեն որպես ընտրող [8, 20]: Բաբա Այուբի կինը՝ երեխաների մայրը, չի կարողանում ընտրություն կատարել, ինքնագոհել մայրականը: Թեև նա հատել է էսթետիկականի սահմանները, բայց դեռ պատրաստ չէ որոշում կայացնելու և պահի ողջ սարսափելիությունն ու պատասխանատվությունը թողնում է ամուսնու խղճին. «Բաբան հավաքեց հինգ նույն չափի ու ձևի քարեր, ամեն քարի վրա գրեցին երեխաներից մեկի անունը և հետո բոլոր քարերը լցրին մի պարկի մեջ: Երբ պարզեց պարկը կնոջը, վերջինս ընկրկեց, կարծես թունավոր օձ էր տեսել:

– Ես չեմ կարող դա անել, – ասաց նա ամուսնուն՝ գլուխը տարուբերելով: – Ես չեմ կարող ընտրություն կատարել: Չեմ դիմանա» [1, 14-15]:

Բաբա Այուբը գնում է գիտակից ինքնագոհության՝ զոհաբերելով ծնողին ի վերուստ տված զավակին պաշտպանելու բնագործ կարծես փորձելով պատժել իրեն՝ էլ ավելի սաստկացնելով առանց այդ էլ անտանելի ցավը:

Սոֆիի և Բաբա Այուբի ընտրություն կատարելու խնդիրը բարոյականփիլիսոփայության կեղծ երկընտրանք է այն առումով, որ փիլիսոփայությունը դրա պատասխանը չի կարող տալ: Կանար դա անվանում է ուղղություն տվող գաղափար: Այն միայն մատնանշում է մարդկային մտքի անգործությունը նմանատիպ խնդիրների առաջ՝ ձևավորելով իմացության սահմաններ էթիկայի ոլորտում [2, 195]:

Այլ է իրավիճակը մյուս դրվագում: Բաբա Այուբն արդեն պետք է կատարի ազատ, գիտակցված ընտրություն: Այստեղ զավակի զոհաբերության հարց չի առաջադրվում, սակայն հերոսը հերթական անգամ պիտի գնա ինքնագոհության: Նժարի մի կողմում երեխայի ապահով ապագան է, մյուս կողմում՝ զավակի նկատմամբ ծնողական զգացմունքը: «Կներե՞ս արդյոք քեզ, – հարցրեց ինքն իրեն Բաբա Այուբը, – գիտակցելով, որ, եսսփրությունից դրդված, զրկել էս նրան շքեղությամբ և բազում հնարավորություններով լի կյանքից» [1, 21]: Այստեղ նրան չեն պարտադրում. նա ինքն է հասունացել այդ

պես ներկայացնում է սեփական զավակի զոհաբերության իրողություն. հավատքի ասպետին մարմնավորող Աբրահամի գործողություններն ու լուրջությունը, համաձայն կիբեթկեզորյան փիլիսոփայության՝ աբսուրդային են, հասարակության կողմից անըմբռնելի և անբացատրելի, և միայն հավատքի ուժով, ըստ հեղինակի, նա կարող է ետ բերել կորցրածը [տե՛ս 5]:

ընտրությունն անելու համար: Եվ վերջում կատարելով իր ազատ ընտրությունը՝ Բաբա Այուբին ոչինչ չի մնում, քան սփոփվել՝ իր բոլոր դժբախտությունների մեջ մեղադրելով դևին: «Թող որ դու այրվես դժոխքի կրակներում քո արածների համար» [1, 21]:

Եթե դևի իրողությունը պայմանականորեն ընդունենք որպես ամենափրկչի պարողիա, կարելի է նկատել, որ երկրորդ ընտրությունը կատարելիս Բաբա Այուբն անցում է կատարում կրոնական էքզիստենցիայի ոլորտ, և թեև այստեղ զավակին սպանելու խնդիր չկա, միևնույն է, նրա գործողությունները հաստում են էթիկականի սահմանները (համաձայն Կանտի և Կիերկեգորի փիլիսոփայական դիտարկումների) և որոշակիորեն անբացատրելի են մնում, ինչպես Աբրահամի դեպքում³, պարզապես Բաբա Այուբի պարագայում նրա էքզիստենցիալ լուծությունը արհեստականորեն ապահովում է վեպի հեղինակը մոռացության կախարդական սրվակի օգնությամբ:

Վեպի հետագա շարադրանքում արդեն հանդիպում ենք Սաբուրի կերպարին, որը թեև լեգենդի վերոնշյալ կերպարի՝ Բաբա Այուբի վարիացիոն տարբերակն է, այնուամենայնիվ նրանց ընտրության հանգամանքները չեն նույնանում: Սաբուրի երկընտրանքի խնդիրը բավականին հակասական է: Կերպարի կատարած ընտրությունը նախ և առաջ տեղավորվում է հեզելյան բարոյականության և առաքինության էսթետիկական կոնցեպտի մեջ: Հենց Սաբուրի կատարած ընտրության օրինակով կարող ենք տարբերակել Հեզելի՝ երկու հասկացությունների ըմբռնումը: Հեզելյան փիլիսոփայության համաձայն՝ բարոյականությունը և առաքինությունը արժեքանական համակարգը ձևավորող տարբեր են, ընդ որում առաջինը թելադրվում է հասարակության կողմից, երկրորդի դեպքում անձը ինքն իր խղճի առաջ է պատասխանատու [10, 166-167]: Չոհաբերելով իր դատերը՝ Սաբուրը չի խախտում էթիկական սկզբունքը և չի կորցնում արժանապատվությունը՝ դառնալով բարոյական կերպար: Մյուս կողմից՝ զոհաբերելով իր ծնողական զգացմունքը, սակայն ապահովելով երեխայի ապագան՝ ցուցաբերում է առաքինություն:

Այլ է Կիերկեգորի մոտեցումը այս հարցին: Իր կարծիքը նա արտահայ-

³ Աբրահամի արարքի դեպքում առանձին գիտնականներ տեսնում են որոշակի հիմնավորվածություն և փորձում մեկնաբանել այն: Մասնավորապես Բյյա Շիֆմանը Աբրահամի արարքի հիմքում տեսնում է փյունիկյան և հին իսրայելական մշակույթներում տեղ գտած այն հավատալիք-պատկերացումը, ըստ որի՝ որդու, հատկապես միակ որդու զոհաբերման (ողջակեզի) ծեսն իրականացվում էր ծայրահեղ իրավիճակում՝ հանուն բոլորի բարեկեցության. «Իրականում որդուն, հատկապես միակ որդուն, զոհաբերելը բարեգործության սխրանք էր՝ հանուն աստծո իրագործվող, և որպես օրենք, հանուն ժողովրդի բարեկեցության» [11, 197-198]:

տում է՝ հիմք ընդունելով *Ավետարան ըստ Մաթևոսի 16-րդ գլխի 26-րդ կետը*. «Ինչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի: Կամ՝ մարդը իր անձի փոխարեն ի՞նչ փրկանք պիտի տայ»: Փիլիսոփան նշում է, որ մարդը կարող է կորցնել իր ունեցվածքը, պատիվը ուրիշի աչքերում, մտքի ուժը և, այնուամենայնիվ, չվնասել հոգին և, հակառակը՝ ձեռք բերել այդ ամենը և վնասել հոգին [6, 304-305]: Մաբուրը նախախնամության գոհ է, նա ի վիճակի է գոհաբերել հայրական զգացմունքը (և վաճառել աղջկան), բայց պատրաստ չէ կորցնել իր տղամարդկային արժանապատվությունը (գումար վերցնել իր աներձագ Նաբիից): Նաբիի խոսքով. «...Մաբուրը, ինչպես իմ շատ հայրենակիցները, հպարտության գոհ էր: Դա մի նախածին և անսասան հպարտություն էր, որ թույլ չէր տալիս նրան փող վերցնել ինձնից: <...> նա տղամարդ էր և պարտավոր էր հոգ տանել իր ընտանիքի մասին» [1, 104]: Մաբուրի ընտրությունը երկակի վնաս է հասցնում նրան. մի կողմից՝ դստեր անվերադարձ կորուստ, մյուս կողմից՝ հոգու անդառնալի կործանում: Բայց սա դեռ հարցի մի կողմն է: Չեն իրականանում նրա ընտրությունը արդարացնող (ըստ Մաբուրի)՝ դստեր երջանիկ ապագան ապահովելու նպատակները: Ընթերցողը ականատես է դառնում, որ վեպի հերոսներից և ոչ մեկին, այդ թվում և Մաբուրի դստերը, չի հաջողվում հասնել մարդկային լիարժեք երջանկության: Ավելին՝ թվացյալ ամենավրկիչ արևմտյան քաղաքակրթությունը (Դևի պարագայում նույնպես բացահայտ երևում է Արևմուտքի կոնցեպտը) ոչ միայն չի օգնում, այլև աղավաղում և գրեթե կործանում է մարդկային ճակատագրերը՝ խեղաթյուրելով նրանց ներաշխարհը և կանգնեցնելով ինքնության որոնումների բարդույթի առաջ: Բարեկեցիկ և ապահով կյանքով ապրող անհատների ներաշխարհին իրականում խարխիված է, և հաճախ նրանց էթիկական գոյությունը փոխակերպվում է էսթետիկականի, այնինչ մարդու բարոյական զարգացումը պետք է ընթանա հակառակ ուղղությամբ: Եվ վեպի հերոսներից ոմանք, հիմք ընդունելով էսթետիկական աշխարհայացքի գլխավոր կարգախոսը, այն է՝ *կյանքի իմաստը վայելքի մեջ է* [7, 335], միտումնավոր գնում են ինքնաքայքայման և կործանման: Եվ եթե Նիլայի դեպքում դա հանգեցնում է ինքնասպանության, Փարիին ամուսնությունից հետո մայրական բնագոր սթափ է պահում և, ի վերջո, մղում բարոյական մաքրագործման: Մաբուրի դուստրը՝ Փարին, երկու՝ արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների աշխարհայացքի կրողն է: Երկու տարբեր մշակույթների բախումը նրա կերպարում դրսևորվում է թերևս ամենաբացասական առումով: Մոր անտարբեր վերաբերմունքը, նրա կարճ, երբեմն անբովանդակ և հակասական պատմությունները Փարիի մանկության տարիներից, հոր մասին խավար հիշողությունները, նույնիսկ իր և մոր արտաքինի բացահայտ տարբերությունները տարիներ շարունակ կրծում են Փարիի հոգին և մտեցնում բարոյական անկման անդունդին: Էսթետիկական էքզիստենցիան հաղթանակ է տանում, և ինքնու-

թյան փնտրտուքի խճճված ճանապարհին Փարին տրվում է մոռացության, կորցնում ողջախոհությունը և առողջ դատելու ունակությունը, ձեռքազատվում է *բարոյականության ավելորդ չափանիշներից*⁴ խախտելով մարդկային գրված և չգրված օրենքները (սիրային կապի մեջ է մտնում մոր սիրեկանի հետ):

Նիլայի նկատառումները նույնպես բավականին հստակ ուրվագծում են նրա կյանքի կիերկեգորյան էսթետիկական հայացքների տիրույթը: Բացահայտ մարտահրավերներ աֆդանական ազգային ավանդույթին՝ շքեղ կյանք, անթաքույց արտամուսնական հարաբերություններ, ջազ, ոգելից խմիչք, ծխախոտ, էրոտիկ բանաստեղծությունների ընթերցանությամբ բռնեմական երեկոներ: Եվ ինչպես նկատում է նրա սպասավորը՝ Նաբին, «Ուղղակի իմ կյանքում ես երբևէ չեի հանդիպել Նիլայի նման երիտասարդ կնոջ: Ամեն բան՝ նրա պահվածքը, քայլվածքը, խոսվածքը, նորություն էր ինձ համար: Նիլան տապալում էր կնոջ պատշաճ վարքի իմ ունեցած բոլոր պատկերացումները...» [1, 91]:

Այնուամենայնիվ, հերոսուհու ճնշվածությունը նրա կյանքի ողջ ընթացքում անբացատրելի էր: Դա այն է, ինչ Կիերկեգորը անվանում է *nqni hhusտերիա*, երբ ոգին ձգտում է դրսևորվել գիտակից գոյության բարձրագույն ձևով, հասկանալ ինքն իրեն, ազատել մարդկային անհատականությունը երկնային կախվածությունից: Եվ եթե անգիտակցականից գիտակցականի այս անցումը չափազանց դանդաղ է ընթանում, մարդուն պատում է մելամաղձությունը [6, 267]: Ո՛չ անհոգ կյանքը, ո՛չ զվարճությունները և ո՛չ էլ նույնիսկ երեխա որդեգրելը Նիլային բավարարվածություն չեն բերում: Փոքրիկ Փարիին որդեգրելը ամենևին էլ կնոջն ի վերուստ տրված մայրանալու բնածին փափագ չէ, այլ, ինչպես հենց ինքը՝ Նիլան է ասում. «Լավ կլինի տանը երեխա ունենալ: Մի փոքր աղմուկ, փոփոխություն ու մի փոքր կյանք» [1, 50]: Եվ հետագայում գրքի հեղինակը կրկին կփաստի այս իրողությունը՝ նկարագրելով Փարիի ապրումները Նիլայի ինքնասպանությունից հետո. «Փարին երեխաներին ոչինչ չէր պատմել տատիկի ինքնասպանության մասին: Մի օր վստահ էր, որ կիմանան այդ մասին, բայց հաստատ՝ ոչ իրենից: Փարին չէր կարող թույլ տալ, որ նրանք մտածեն, թե ծնողը կարող է լքել իր երեխային՝ անուղղակիորեն ասելով նրան, թե քո գոյությունն ինձ համար բավարար չէ ապրելու համար» [1, 228]: Նիլայի քայլը էթիկայի տեսանկյունից արդարացված չէ. դա հերթական անգամ իր անհագուրդ հեղոնիստական նկատառումները բավարարելու անհաջող փորձ է: Նա տիպիկ կիերկեգորյան էսթետ է, որը չի գիտակցում իր մելամաղձության պատճառը,

⁴ Ֆ. Նիցշեն իր «Բարուց և չարից անդին» աշխատության մեջ հորդորում է մաքրել բարոյականությունը ավելորդություններից և պայքարել «բարոյական բռնակալության» դեմ բոլոր հնարավոր միջոցներով [9]:

հակառակ դեպքում այն կոչնչանա և կվերածվի մարդկային վշտի կամ տխրության [6, 267]:

Անհատի էսթետիկական զարգացումը նման է բույսի անհատական զարգացմանը, ինչի շնորհիվ մարդը դառնում է այն, ինչ բնությունը ուզում է նրան դարձնել, իսկ կյանքի էթիկական հայացքը մարդուն տանում է դեպի բարու և չարի իմացություն և բացահայտում այդ իրողությունների տարբերությունը: Բարոյապես զարգացող մարդը գիտակցաբար է դառնում այն, ինչ կա, և էթե նույնիսկ իր մեջ պահում է էսթետիկական հակումները, այնուամենայնիվ ցրում է դրանք [6, 309]:

Էսթետիկական աշխարհընկալման տեսանկյանը բնորոշ է նաև Սաբուրի կնոջ՝ Փարվանայի կերպարը: Ճակատագրի բերումով նա դեռ վաղ հասակից ստիպված է էքզիստենցյալ ընտրության խնդիրների առաջ կանգնել: Անհամակրելի արտաքինը, անպատասխան սերը, ինքնության խնդիրները նրա հոգում չարության բույն են դնում և թույլ չեն տալիս այս կերպարի հոգևոր զարգացումը՝ անցումը էսթետիկականից էթիկականի (Կիերկեգորը նշում է, որ հենց էթիկական փուլում է անհատի մոտ ձևավորվում բարին և չարը տարբերակելու ունակությունը): Եթե Նիլան «երջանկության» որոնումների ճանապարհին զոհաբերում է Աբդուլլայի և Փարիի աստվածային սերը (ընդգծելու համար եղբոր և քրոջ՝ միմյանց նկատմամբ ունեցած աներևակայելի կապվածությունը ստորև մեջբերում ենք Նաբիի հիշողությունից մի հատված)⁵, ապա Փարվանան, Նիցշեի տեսության համաձայն, թե նպատակը արդարացնում է միջոցները (նշենք, որ կիսագրագետ Փարվանան հազիվ թե ծանոթ լիներ նիցշեական փիլիսոփայության գաղափարներին և միտումնավոր առաջնորդվեր դրանցով), գայթակղվում է անձնական կյանքը դասավորելու հնարավորությամբ, զոհաբերում է հաշմանդամ քրոջը՝ լքելով նրան անապատում, մատնելով բորենիների հոշոտմանը: Էսթետիկական էքզիստենցիան իր ամենաբացասական գծերով դրսևորվում է Փարվանայի կերպարում. «Ոչ ոք չի իմանա: Չի կարող իմանալ: Դա կլինի իր անձնական գաղտնիքը, որին մեղսակից կլինեն միայն սարերը⁶: Միակ խնդիրն այն է, թե կկարողանա ինքը ապրել նման գաղտնիքի հետ: Եվ դրա պատասխանը Փարվա-

⁵ «Եթե այս ուշ ժամին փորձեի արդարացնել ինձ, պարոն Մարկոս, կասեի, որ Աբդուլլան սիրում էր իր քրոջը սովորական սիրով: Բայց այդ սերը սովորական չէր: Միայն Բարձրյալը գիտի, թե ինչու էին նրանք ընտրել մեկմեկու: Դա առեղծված էր, բայց ես երբևէ երկու էակների միջև նման զգացմունք չեմ տեսել: Աբդուլլան ավելի շուտ քրոջ հայրն էր, քան եղբայրը: Երբ Փարին գիշերը լաց էր լինում, միայն Աբդուլլան էր քնից վեր թռչում և քրոջն օրորում ձեռքերի վրա: Նա էր փոխում քրոջ կեղտոտ տակաշորերը, բարուրում և պառկեցնում քնելու» [1, 97]:

⁶ Մեջբերված միտքը և ստեղծագործության վերնագիրը ձևավորում են յուրահատուկ պայմանականություն, որ առանձին քննության նյութ է:

նան գիտեր: Նման գաղտնիքներ նա իր մեջ պահել է ամբողջ կյանքում: <....> Փարվանան քայլում էր դեպի նոր կյանք: Նա քայլում ու քայլում էր, և խավարը ցրվեց, և վաղորդյան աղջամուղջի մեջ փայլեց արևելքից ժայռին ընկնող դալուկ լույսի պատառիկը, Փարվանային թվաց, որ ծնվեց երկրորդ անգամ» [1, 76-77]:

Անդրադարձ կատարենք նաև արդեն հիշատակված Նաբիի կերպարին: Ակնհայտ են Նաբիի ընդհանրությունները ճապոնական ծագմամբ բրիտանացի գրող Կազուո Իշիգուրոյի «Օրվա մնացորդը» վեպի գլխավոր կերպար Մթիվենսի հետ: Երկուսն էլ, անմնացորդ տրվելով իրենց գործին և անվերապահորեն կատարելով իրենց՝ սպասավորի պարտականությունները, չեն էլ նկատում, որ մարդու գոյությունն արդարացնող կարևոր իմաստալից իրողություններն ընթանում են իրենց աշխարհընկալման սահմաններից դուրս, և կյանքը պարզապես հոսում է նրանց կողքով: Մթիվենսի ապրելակերպը ընկալվում է որպես սարկլագմի դրսևորում, բայց Նաբիի պարագայում իրավիճակը հիմնովին փոխվում է, երբ նա կանգնում է իր կյանքում ամենաճակատագրական երկընտրանքի առաջ: Նրա տիրոջ՝ Նիլայի ամուսնու՝ Վահդատիի անբուժելի հիվանդությունը (ուղեղի կաթված էր ստացել), նոր բացահայտված հանգամանքները, որոնք կասկածի տակ են դնում Նաբիի տղամարդկային արժանապատվությունը հատկապես աֆղանական ավանդական միջավայրի համատեքստում (Նաբին չգիտեր, որ իր տերը համասեռամուլ է, և իրենց հանդիպման առաջին իսկ պահից հենց ինքը՝ Նաբին էր դարձել վերջինիս երևակայական ընտրյալը (նրանց միջև երբեք և ոչ մի անգամ սեռական բնույթի հարաբերություններ չեն գրանցվում)) լիովին բավարար էին, որ Նաբին հեռանար այդ տնից և նոր կյանք սկսեր (հիշեցնենք, որ Մաբուրը չկարողացավ դիմադրել արևելյան աշխարհընկալման կաղապարին և հասարակության գոհ դարձավ):

Էսթետը ձգտում է իր բացառիկ անհատականության շնորհիվ հասնել մարդկային կատարելության իդեալին (Մթիվենսը դրանից ավել զարգացում չի ապրում), իսկ էթիկական սկզբունքով առաջնորդվող անհատը փորձում է դրսևորվել համընդհանուրով, համամարդկայինով, այդ անհատը ձգտում է նույնականացնել իր անմիջական «ես»-ը և համամարդկայինը: Եվ այսպիսով՝ էթիկական սկզբունքներով ապրող անհատի կյանքը իր անձի նկատմամբ ներքին պարտականությունների կատարումն է [7, 336-337]: Նաբիի կյանքում կատարված վերոհիշյալ բեկումնային իրադարձությունները անցումային կամուրջ են դառնում Նաբիի էքզիստենցիալ հարացույցում, և այդուհետ նա իր գոյության իմաստը տեսնում է համընդհանուրի (տվյալ դեպքում Վահդատիի) բարօրությանը ծառայելու մեջ:

Այսպիսով՝ Խ. Հոսեյնիի «Եվ արձագանքեցին լեռները» վեպի կերպարները իրենց կյանքում հաճախ ստիպված են կանգնել երկնտրանքի առաջ, գոհաբերել կամ ինքնագոհաբերվել, բարոյապես կործանվել կամ վերածնվել:

Սահմանային գոտում հայտնված հերոսները միևնույն իրողության պարագայում դրսևորում են բարոյահոգեբանական տարբեր ապրումներ, տարբեր վարքագծեր և մարդկային խառնվածքի տարբեր հատկանիշներ՝ մեկնակետ ընդունելով անձնական կամ համընդհանուր շահերը: Դիտարկելով խնդրո առարկան բարոյականության և առաքինության արժեքանական համակարգում՝ կարելի է եզրակացնել, որ ճակատագրական որոշումները վեպի հերոսները կայացնում են՝ համաձայն իրենց համապատասխան էրզիստենցիալ ոլորտների, այն է՝ էսթետիկականի և էթիկականի դիրքերից:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-141>

Գրականություն

1. Հոսեյնի Խ., Եվ արձագանքեցին լեռները, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2016, 400 էջ:
2. Винкельман А. Ложные дилеммы моральной философии: О романе У. Стайрона «Выбор Софи» // Философия. Журнал Высшей школы экономики. 2017, том 1, № 2, с. 187-198.
3. Касавина Н. Экзистенциальный выбор и данности существования // Человек перед выбором в современном мире: Проблемы, возможности, решения, М.: Научная мысль. 2015, том 1, с. 66-73.
4. Кузнецова А.Е., У.Стайрон: «Выбор Софи» как «Выбор Хобсона» (к семантике заглавия) // Вестник Санкт-Петербургского Университета, Сер.9, Филология. Востоковедение. Журналистика. 2007, № 1-2, с. 21-25.
5. Кьеркегор С. Страх и трепет, М.: Культурная революция, 2010, - 488 с.
6. Кьеркегор С. Наслаждение и долг, Киев, AirLand, 1994, - 505 с.
7. Кьеркегор С. Или-или, Санкт-Петербург, Амфора, 2011, - 829 с.
8. Леонтьев Д., Фам А., Овчинникова Е. Проблема выбора в науках о человеке: от рациональных моделей к экзистенциальным// Человек перед выбором в современном мире: Проблемы, возможности, решения, М.: Научная мысль, 2015, том 1, с. 18-33.
9. Ницше Ф. По ту сторону добра и зла [Электронный ресурс]. Режим доступа: URL:<https://www.labirint.ru/books/579690/>
10. Сочалин А.А. Этический смысл различения Гегелем «моральности» и «нравственности» // Этическая мысль, М., Российская Академия Наук, Институт философии, 2014, № 14, с. 160-174.
11. Шифман И., Ветхий завет и его мир, М.: Политиздат, 1987, 239 с.

Проблема выбора с точки зрения эстетической и этической экзистенции в романе Х. Хоссейни «И эхо летит по горам»

Кристина Казарян

Резюме

Ключевые слова: личность, жертвоприношение, самопожертвование, мораль, нравственность, чувства

Данная статья посвящена анализу неразделимой реальности человеческого существования – проблеме выбора. Анализ основан на философских наблюдениях, сделанных в трудах датского философа, теолога и писателя XIX века Сёрена Кьеркегора. Изучение проблематики выбора проводилось в рамках жизненного опыта героев романа «И эхо летит по горам» Х. Хоссейни. Героям произведения в течение жизни часто приходится сталкиваться с проблемой выбора: жертвовать или самопожертвоваться, нравственно погибнуть или возродиться. В пограничных ситуациях, в рамках одной и той же реальности, герои проявляют разные морально-психологические чувства, разное поведение и разные человеческие характеристики – взяв за отправную точку личные или общечеловеческие интересы. На эстетической стадии герои, в поисках идентичности, предаются забвению, теряют здравый смысл и способность трезво мыслить, нарушая писанные и неписанные человеческие законы.

Наоборот, прорывные события в жизни и проблема дилеммы становятся для некоторых героев переходным мостом в экзистенциальной парадигме: герои переживают нравственное развитие и видят смысл своего существования в служении всеобщему благу.

Рассматривая вопрос с точки зрения ценностной системы морали и нравственности, можно сделать вывод, что герои романа принимают судьбоносные решения соответственно своим экзистенциальным стадиям, то есть с эстетических и этических позиций.

The Problem of Dilemma from the Viewpoint of Aesthetic and Ethical Existence in Kh. Hosseini's Novel "And the Mountains Echoed"

Kristina Ghazaryan

Summary

Key words: *personality, sacrifice, self-sacrifice, morality, virtue, feelings*

The article is dedicated to the inseparable reality of human existence – the analysis of the problem of choice. The analysis is based on the philosophical observations concluded in the works of the 19th century Danish philosopher, theologian and writer Søren Kierkegaard. The study of the problematics of the dilemma was carried out within the limits of the heroes' life experience in the novel "And the Mountains Echoed" by Kh. Hosseini. The characters of the composition often have to face a dilemma during their lifetime, to sacrifice or self-sacrifice, to perish or be reborn morally. In the border zone, within the same reality, the heroes manifest different moral and psychological emotions, different behavior and different characteristics – taking personal or universal interests as a starting point. On their complicated path of identity search the heroes, at the aesthetic existential field, fall into oblivion, lose their common sense and the ability to judge, violating written and unwritten human laws.

On the contrary, for some heroes in the existential paradigm, life's breakthrough events and the problem of dilemma serve as a transitional bridge: they have experienced moral development and now see the meaning of their existence in serving the general welfare.

Considering the issue within the value systems of morality and virtue, it can be concluded that the characters of the novel make fatal decisions according to their respective existential spheres, i.e., from the aesthetic and ethical positions.

Ներկայացվել է 14.04.2023 թ.

Գրախոսվել է 05.05.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ЖУРНАЛИСТИКА

JOURNALISM

Զանգվածային հաղորդակցության միջոցները որպես գիտական ուսումնասիրման օբյեկտ Հայաստանի Հանրապետությունում (ատենախոսությունների օրինակով, 1991-2022 թթ.)

*Տարոն Դանիելյան
Նաղաշ Մարտիրոսյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-153>

Հանգուցային բառեր. ժուռնալիստիկա, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, առցանց մեդիա, կինո, գովազդ

Աերածուրդություն: Զանգվածային հաղորդակցության միջոցների ու ազդեցության ձևերի ուսումնասիրությունը տարեցտարի ընդլայնում է իր առարկայական շրջանակը՝ մշտապես հարստանալով տեսական ու կիրառական նոր հայեցակարգերով: Անկախության տարիներից սկսած՝ ՀՀ-ում նույնպես փոխվեցին հարացուցային պատկերացումները ՋՀՄ ոլորտի նկատմամբ: Մեդիան՝ որպես գիտական ուսումնասիրման օբյեկտ, դուրս եկավ բանասիրական ու պատմական գիտությունների ծիրից և սկսեց ուսումնասիրվել նաև այլ գիտաճյուղերի համակարգում:

Միջգիտակարգային ուսումնասիրությունները ինչպես հարստացրին մեդիային վերաբերող գիտական հավաքածուն, այնպես էլ առաջ քաշեցին որոշ խնդիրներ: Այսպես, մեդիայի տեսաբան Հ. Բայադյանն առանձնացնում է երեք խնդիր.

- ա) մինչ օրս լուծված չէ հումանիտար և սոցիալական գիտությունների համար նոր ուսումնական ծրագրերի մշակման խնդիրը,
- բ) խորհրդային ժառանգություն մնացած բուհական կառուցվածքը, որը միջգիտակարգային ուսումնասիրությունների համար միջֆակուլտետային ակտիվ փոխհամագործակցության հնարավորություն չի տալիս,
- գ) հայերեն գրքերի ու դասագրքերի բացակայությունը և կադրային ռեսուրսի սակավությունը [29, 13]:

ՋՀՄ-ի ֆենոմենի նկատմամբ ձևավորված հետաքրքրությունն ունի օբյեկտիվ պատճառներ: Տեղեկատվական դարաշրջանում մեծացել է մեդիայի դերը հանրության և քաղաքակրթությունների կյանքում, իսկ տեղեկատվական հոսքերը դարձել են անկառավարելի: Այդ տեսակետից մեդիաոլորտն ունի համակարգային ուսումնասիրման և իմաստավորման կարիք, ինչը թույլ կտա շտկումներ և որոշակի կարգավորումներ մտցնել ոլորտում ՋՀՄ-ների բնականոն գործունեության և մեդիաարտադրանք՝ սպառողների շահերի ու անվտանգության համար: Մեդիայի գիտական ուսումնասիրությունների

նկատմամբ տարբեր մոտեցումները պետք է հիմնված լինեն «ստեղծարարական, մշակութային, պատմական, սոցիոլոգիական և այլ գիտակարգերի համակարգի վրա, որը ոչ միայն պետք է ներառի պրակտիկ լրագրության ստեղծման և կառավարման շրջփափուլերը, այլ նաև պետք է արտացոլի լրագրության և հանրության փոխադարձ ազդեցությունը» [142, 301]:

Լրագրողական բարձրագույն կրթության և լրագրագիտության նկատմամբ պատմականորեն մշտապես եղել են ներհակ մոտեցումներ: ՀՀ-ում այդ հակասությունը դրսևորվում է նաև ՀՀ բուհական և հետբուհական կրթության ասպարեզներում: Մասնավորապես, ռուսական լրագրագիտության ավանդույթներով ձևավորված գիտության այս բնագավառը ՀՀ-ում մինչև օրս էլ դիտարկվում է բանասիրական առարկաների ենթախմբում. ոլորտի ուսումնասիրողներին շնորհվում է բանասիրական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան և գրականագիտության դոցենտի կոչում: Սակայն ՀՀ կառավարության 2014 թ. հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման համաձայն՝ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում «Լրագրություն» մասնագիտությունն ընդգրկված է Սոցիալական գիտությունների խմբում (032 «Լրագրություն և տեղեկատվական գիտություններ». 032101.00.6. Լրագրության բակալավր, 032101.00.7. Լրագրության մագիստրոս): Բացի դրանից՝ «Հումանիտար գիտություններ և արվեստ» խմբի (02) «Արվեստ» ենթախմբում (021) 0211 կոդով ընդգրկված են «Տեսալսողական արվեստ և մեդիաարվեստ» մասնագիտությունները (Տեսալսողական արվեստ՝ 021101.00.6. Արվեստի բակալավր, 021101.00.7. Արվեստի մագիստրոս, Մեդիաարվեստ՝ 021102.00.6. Արվեստի բակալավր, 021102.00.7. Արվեստի մագիստրոս, Կինոարվեստ՝ 021103.00.6. Արվեստի բակալավր, 021103.00.7. Արվեստի մագիստրոս) [143]:

Այս հակասությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ մեդիաոլորտը միատարր չէ. ՋՀՄ-ներն առհասարակ, իսկ լրագրությունը մասնավորապես միջգիտակարգային ուսումնասիրության կարիք ունեն, և նրանց տեսական ու գործնական հայեցակարգերի ձևակերպումները կարող են իմաստավորվել միայն այդ հանգամանքը հաշվի առնելով:

Նպատակ և խնդիրներ: Մեր հոդվածի նպատակն է ստեղծել մեդիա-ուսումնասիրությունների գիտական համայնապատկերը ՀՀ-ում և բացահայտել լրագրագիտության տեղը այդ չափումների մեջ, իսկ խնդիրն է մեդիաբնագավառին վերաբերող ուսումնասիրությունների քանակական և որակական վերլուծությունը:

Աշխատանքը արդիական է, քանի որ թույլ է տալիս պատկերացում կազմել ՀՀ-ում մեդիաոլորտի նկատմամբ ուսումնասիրությունների թեմատիկ շրջանակը, որը կարող է կողմնորոշիչ դեր ունենալ հետագա հետազոտողների համար:


Թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտագործել ենք քանակական

և որակական վերլուծության, ինչպես նաև համեմատական ու համադրական մեթոդների սկզբունքները:

Աշխատանքի աղբյուրագիտական հիմքը կազմում է ՀՀ ԲՈԿ-ի կայքում «Պաշտպանությունների արխիվ» բաժնում առկա ատենախոսությունների վերնագրերի ցանկը՝ ըստ համապատասխան մասնագիտությունների: Ցանկը կազմելիս հաշվի են առնվել բոլոր այն ատենախոսությունները, որոնց վերնագրերում առկա է զանգվածային հաղորդակցության միջոցի կամ զանգվածային հաղորդակցության ազդեցության միջոցի անվանումը: Պետք է նշենք, որ որոշ ատենախոսությունների (օրինակ՝ հասարակական մտքի զարգացման վերաբերյալ) աղբյուրագիտական հիմքը կարող է լինել ՋՀՄ-ի որոշ տեսակ, սակայն վերնագրում ՋՀՄ-ի մասին հիշատակության բացակայության պատճառով տվյալ աշխատանքները չեն ընդգրկվել մեր ցուցակում:


Հավալենք, որ չենք հավակնում մեկ աշխատանքի շրջանակում տալ սպառիչ և համակարգային վերլուծություն թեմայի վերաբերյալ, սակայն տվյալ ուսումնասիրությունը կարող է հիմք դառնալ ապագայում ավելի համակողմանի վերլուծություններ կատարելու համար:

Արդյունքներ: Ատենախոսությունների քանակական վերլուծությունը պայմանականորեն բաժանել ենք 3 շրջափուլի: Առաջին շրջափուլն ընդգրկում է 1991-2001 թթ. (11 տարի), երկրորդ շրջափուլը՝ 2002-2012 թթ. (11 տարի), երրորդ շրջափուլը՝ 2013 թ.-ից մինչև 2022 թ. նոյեմբերի 20 (շուրջ 10 տարի): Շրջափուլերի բաժանումը լոկ զարգացման համաչափությունը ներկայացնելու միտում ունի և պայմանավորված չէ այլ արտաքին գործոններով: Արդյունքում ունենք հետևյալ պատկերը: 1991-ից մինչև 2022 թ. նոյեմբեր ՀՀ-ում ՋՀՄ-ն՝ որպես գիտական ուսումնասիրության օբյեկտ, հիշատակվում է 141 ատենախոսությունների վերնագրերում (տե՛ս աղյուսակ 1):




Մեր կարծիքով վերջին տարիներին ատենախոսությունների պաշտպանության նվազումը պայմանավորված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից կատարված կանոնակարգային փոփոխություններով, որոնցով խստացվեցին պահանջները գիտական աստիճանի հայցման համար: Ենթադրում ենք, որ քանակական այս

նվագումն առկա է նաև այլ բնագավառներում: Հաջորդ աղյուսակում ներկայացված է այն հանրագումարը, թե ՋՀՄ-ի ո՛ր տեսակն է առավել հաճախ եղել ուսումնասիրության օբյեկտ (տե՛ս աղյուսակ 2):




Եթե ընդհանուր հանրագումարով առաջին տեղում են զանգվածային հաղորդակցության տեսալսողական միջոցները, ապա գիտական ուսումնասիրման օբյեկտի առումով որպես զանգվածային հաղորդակցության ազդեցության միջոց անհամեմատ գերիշխող դիրքում է մամուլը (տե՛ս աղյուսակ 3):



Եթե քանակական համեմատություն կատարենք «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ ուսումնասիրությունների և այլ մասնագիտությունների գիտական աշխատանքների միասնական թվաքանակի միջև, ապա կտեսնենք, որ 32 տարվա ընթացքում քանակական տարբերությունն ակնհայտ է. 72 աշխատանք գրվել է «Ժուռնալիստիկա» մասնագիտության գծով, 69 աշխատանք՝ այլ մասնագիտությունների: Տոկոսային հարաբերակցությունն

ունի հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 4):



Այժմ փորձենք վերլուծել «Ժուռնալիստիկա» մասնագիտության և այլ գիտական ուղղությունների հետաքրքրությունների ընդհանուր շրջանակը ՉՀՄ ոլորտում՝ պարզելով նրանց հատման կետերը:

Պատմական գիտություններ (Է. 00.00)

Պատմական գիտությունների երեք գիտաճյուղի կողմից ՉՀՄ-ն ուսումնասիրվել է հետևյալ թեմաներով:

«Ազգագրություն» (Է. 00.04) մասնագիտությամբ առանձնացրել ենք 2 ատենախոսություն, որոնցում ուսումնասիրվել է ՉՀՄ-ների դերը սփյուռքահայության կյանքում [33, 108]: **«Հայոց պատմություն» (Է. 00.01)** մասնագիտության 10 ատենախոսություններից 3-ը նվիրված են հայ պարբերական մամուլի զարգացման հարցերին [124; 103; 41], 4-ը նվիրված են հայ (այդ թվում 3-ը սփյուռքահայ [111; 57; 131]) [117], 2-ը՝ արաբական պարբերական մամուլի [54; 53]՝ հայ ժողովրդի որոշակի ժամանակաշրջանի խնդիրներին անդրադարձող հրապարակումներին, և մեկ ատենախոսություն՝ հայկական կինոյի կայացման պատմությանը [139]: **«Համաշխարհային պատմություն» (Է. 00.02)** մասնագիտությամբ առանձնացրել ենք մեկ ատենախոսություն: Այն նվիրված է արաբական մամուլում հայկական ցեղասպանության լուսաբանմանը [21]:

Նշված ժամանակահատվածում **«Ժուռնալիստիկա» (Ժ. 01.06)** մասնագիտությամբ սփյուռքահայ մամուլին վերաբերող 3 աշխատանք է գրվել [95; 2; 92]:

Հայկական ՉՀՄ-ների զարգացման պատմությանն անդրադարձ է կատարվել 11 աշխատանքի մեջ [19; 88; 48; 140; 112; 28; 36; 128; 126; 82; 81]: Հայ հասարակական մտքի զարգացմանը վերաբերող աշխատանքների թիվը 7 է [98; 120; 69; 78; 23; 60; 6]: Արտասահմանյան մեդիան լրագրագետների կողմից ուսումնասիրվել է 2 անգամ [106; 93]: Փաստորեն, **«Ժուռնալիստիկա»** մասնագիտության 22 ատենախոսություն թեմատիկ հատման կետ է ունեցել պատմական գիտությունների թեմատիկ ուղղությունների հետ:

Արվեստագիտություն (ԺԷ. 00.00)

«Արվեստագիտության» երկու գիտաճյուղի ներկայացուցիչների կողմից ՋՀՄ-ն ուսումնասիրվել է մի շարք թեմաներով:

«Թատերական արվեստ. Կինոարվեստ. Հեռուստատեսություն» (ԺԷ. 00.01) մասնագիտությամբ ներկայացված 5 ատենախոսությունն էլ նվիրված է կինոարվեստին: Դրանք անդրադառնում են ինչպես կինոյի տեխնոլոգիական [27; 123] և գեղարվեստական [38] արտահայտչամիջոցներին, այնպես էլ սոցիալ-հոգեբանական հատկանիշներին [11; 75]: **«Կերպարվեստ. Դեկորատիվ և կիրառական արվեստ. Դիզայն» (ԺԷ. 00.03)** մասնագիտության 5 աշխատանք էլ ունեն թեմատիկ տարբեր ուղղություններ՝ լուսանկարչություն [12], տպագրական գրաֆիկա [10], միջնադարյան արվեստ [43], կինոագրագիր [52], երգիծանկարչություն [59]:

«Ժուռնալիստիկա» մասնագիտության գծով արվեստի ոլորտին վերաբերող ատենախոսություններից կարող ենք առանձնացնել 4 աշխատանք [1; 17; 55; 133]:

Սոցիոլոգիական գիտություններ (ԻԲ. 00.00)

«Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» (ԻԲ. 00.01) մասնագիտության գծով ՋՀՄ-ին վերաբերող մեկ ուսումնասիրություն է կատարվել, որը ներկայացնում է Իրանի հեռուստատեսության դերը երիտասարդների արժեհամակարգի և վարքագծային դիրքորոշման ձևավորման գործում [62]:

«Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ սոցիոլոգիայի գիտաճյուղին հարաբերվող աշխատանքներից 5-ը վերաբերում են հայաստանյան իրականությունը [8; 22; 47; 65; 94], մեկը Իրանի Հանրապետությանը [85]:

Քաղաքական գիտություններ (ԻԳ. 00.00)

Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ (ԻԳ. 00.02)

Այս գիտակարգում խնդրո առարկա ժամանակահատվածում առկա է 3 աշխատանք, որոնք վերաբերում են հասարակական-քաղաքական կարծիքի ձևավորման հարցում ՋՀՄ-ների դերին [49], քաղաքական հաղորդակցման առանձնահատկությունների արտացոլմանը [113] և քաղաքական ընտրաբաշխման տեխնոլոգիաներին [26]: **«Ժուռնալիստիկա»** մասնագիտությամբ քաղաքական թեմաներով ուսումնասիրությունները 3-ն են [4; 68; 86; 118]:

Գիտություններ երկրի մասին (ԻԴ. 00.00)

Այս գիտակարգում ՋՀՄ-ները գիտական ուսումնասիրման օբյեկտ են դարձել **«Աշխարհագրություն» (ԻԴ. 03.01)** մասնագիտության ուղղությամբ: Առկա է ընդամենը մեկ աշխատանք, որը վերաբերում է ՋՀՄ-ների դերին զբոսաշրջության զարգացման հարցում [137]: Զբոսաշրջության թեմային **«Ժուռնալիստիկա»** մասնագիտությամբ ուսումնասիրությունների մեջ հանդիպում ենք մեկ անգամ: Աշխատանքը վերաբերում է ՀՀ-ում զբոսաշրջության

մեջ գովազդային-տեղեկատվական գործունեությանը [70]:

Հոգեբանություն (ԺԹ. 00.00)

«Հոգեբանություն» մասնագիտությամբ մեկ աշխատանք է ներկայացված **«Սոցիալական հոգեբանություն» (ԺԹ.00.03)** գիտաճյուղի ցանկում, որը վերաբերում է արտակարգ իրավիճակներում լրագրողների աշխատանքի սոցիալ-հոգեբանական պատրաստվածության խնդիրներին [89]: Արտակարգ իրավիճակներում լրագրողի աշխատանքի առանձնահատկություններին մեկ անդրադարձ է կատարվել նաև **«Ժուռնալիստիկա»** մասնագիտության գիտակարգում [107]:

Լեզվաբանություն (Ժ. 02.00)

Այս գիտական ուղղությամբ առանձնացրել ենք 22 աշխատանք: Նշենք, որ **«Ժուռնալիստիկա»** մասնագիտությամբ ուսումնասիրությունների մեջ չկան աշխատանքներ, որոնք թեմատիկ առումով հատման կետ ունեն լեզվաբանական ուսումնասիրությունների հետ:

Այս գիտակարգում քանակական բաշխվածությունը գիտաճյուղերի միջև ունի հետևյալ պատկերը՝ **«Հայոց լեզու» (Ժ. 02.01)**՝ 6 աշխատանք [25; 50; 83; 109; 127; 129], **«Հնդհանուր և համեմատական լեզվաբանություն» (Ժ. 02.02)**՝ 2 աշխատանք [101; 141], **«Սլավոնական լեզուներ» (Ժ. 02.04)**՝ մեկ աշխատանք [7], **«Ռոմանագերմանական լեզուներ» (Ժ. 02.07)**՝ 13 աշխատանք [9; 14; 30; 31; 32; 44; 45; 61; 63; 76; 96; 134; 141]:

Լեզվաբանական ստենախոսությունները ներառում են թե՛ գանգվածային հաղորդակցության միջոցների, թե՛ գանգվածային հաղորդակցության ազդեցության միջոցների լեզվական առանձնահատկությունները և խնդիրները: Դրանք ուսումնասիրված են ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան ՉՀՄ-ների օրինակով:

Մանկավարժություն (ԺԳ.00.00)

Մանկավարժական ոլորտի գիտական 5 աշխատանքներից երկուսը նվիրված են ուսանողների՝ ապագա լրագրողների և գովազդային մասնագետների ուսուցման խնդիրներին [97; 99], իսկ մյուս երեք աշխատանքները ՉՀՄ-ն են դիտարկել որպես ուսուցման հարթակ կամ միջոց [79; 84; 122]: Բոլոր ուսումնասիրությունները կատարվել են **«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ԺԳ. 00.02) մասնագիտությամբ:**

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում **«Ժուռնալիստիկա»** մասնագիտությամբ մանկավարժական թեմատիկայի ուսումնասիրություններ չեն կատարվել: Թերևս կարելի է առանձնացնել միայն Ս. Բրուսյանի «Արևելահայ մանկավարժական մամուլի սկզբնավորումը և զարգացման միտումները (19-րդ դարի երկրորդ կես)» աշխատանքը, որն առավելապես պատմատիպաբանական բնույթի է, քան մանկավարժական:

Իրավագիտություն (ԺԲ. 00.00)

Իրավագիտական բնագավառի աշխատանքների մեջ **«Մասնավոր իրա-**

վունք» (ԺԲ. 00.03) մասնագիտությամբ կատարվել է մեկ աշխատանք, որն անդրադառնում է գովազդային գործունեությանը՝ որպես գործարարական գործունեության տեսակի [119]:

Սակայն **«Ժուռնալիստիկա»** մասնագիտությամբ մեդիայի և լրագրության իրավական կարգավորման և ինքնակարգավորման խնդիրներին ավելի շատ են անդրադարձել: Աշխատանքների թիվը 5-ն է [34; 51; 87; 90; 116]:

Տնտեսագիտություն (Ը. 00.00)

Այս գիտակարգում ՁՀՄ-ներին վերաբերող ուսումնասիրությունները կատարվել են **«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» (Ը. 00.02)** մասնագիտությամբ: 6 աշխատանքից երեքը վերաբերում են գովազդային ոլորտին [105], մյուսները՝ հեռահաղորդակցության շուկայի [3], առողջապահության ոլորտում մեդիամարքեթինգի [115] զարգացման հիմնախնդիրներին, ինչպես նաև ՁԼՄ կառավարման և պետական կարգավորման խնդիրներին [15]:

«Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ տնտեսական թեմատիկայի և ՁՀՄ կառավարման խնդիրների ուսումնասիրությունները երեքն են [77; 91; 104]:

Գրականագիտություն (Ժ. 00.00)

Ներգիտակարգային համակարգում «Ժուռնալիստիկա» մասնագիտության և այլ մասնագիտությունների հատման կետերի հարաբերակցությունը հետևյալն է՝ **«Հայ միջնադարյան և նոր գրականություն» (Ժ. 01.01)**՝ 3 աշխատանք [35; 42; 130], **«Բանահյուսություն» (Ժ. 01.05)**՝ 1 աշխատանք [135], **«Գրադարանագիտություն. Մատենագիտություն և արխիվավարություն» (Ժ. 01.09)**՝ 2 աշխատանք [72; 102]:

Գեղարվեստական-հրապարակախոսական ժառանգությանը վերաբերող գիտական աշխատանքները **«Ժուռնալիստիկա»** մասնագիտությամբ հիմնականում կատարվել են մինչև 2010 թ.: Ընդհանուր առմամբ աշխատանքների թիվը 9-ն է [13; 18; 24; 67; 73; 80; 114; 121]:

Առանց թեմատիկ ընդհանրությունների աշխատանքների թիվը **«Ժուռնալիստիկա»** մասնագիտությամբ 16-ն է [5; 16; 20; 37; 39; 46; 56; 64; 66; 71; 74; 100; 110; 125; 132; 136]:

Այսպիսով, մեդիաուսումնասիրությունների համայնապատկերը վկայում է, որ ՁՀՄ-ն՝ որպես գիտական ուսումնասիրության օբյեկտ, միջգիտակարգային երևույթ է: ՀՀ-ում մեդիաոլորտին նվիրված ուսումնասիրությունները «Ժուռնալիստիկա» մասնագիտության և այլ մասնագիտությունների քանակական հարաբերակցության սանդղակում գրեթե հավասար են: Հայաստանի երրորդ Հանրապետության 31-ամյա պատմության ընթացքում լրագրագետները չեն անդրադարձել բացառապես լեզվաբանական խնդիրներին: ՁՀՄ-ներին ու լրագրության վերաբերող նեղ գիտական ուսումնասիրությունների թիվը 16-ն է, սակայն այդ աշխատանքների մեջ էլ, անշուշտ, կան այլ գիտություններին վերաբերող թեմատիկ տարրեր:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. Աբրահամյան Ա., Հեռուստակնարկ. Ժամանակակից դրսևորումները հեռուստաթերում, 2012:
2. Աբրահամյան Գ., Հայաստանը լիբանանահայ մամուլում 1988-1998 թթ., 2004:
3. Աղիյան Ս., Հեռահաղորդակցության շուկայի զարգացման առանձնահատկությունները և հեռանկարները ՀՀ օրինակով, 2015:
4. Ալավերդյան Դ., Տեղեկատվական պատերազմներ. լուսաբանման հայկական փորձը, 2011:
5. Ալեքսանյան Հ., ԼՂՀ տեղեկատվական դաշտի համապատկերը և խնդիրը (չճանաչված երկրի լրատվությունը), 2010:
6. Ալոյան Լ., «Մշակ» լրագրի հրապարակախոսությունը 1905-1921 թթ., 1998:
7. Այդինյան Ա., Հայաստանի ռուսալեզու մամուլի լեզվական առանձնահատկությունները, 2015:
8. Անաստասյան Ա., Հեռուստատեսությունը և դեռահասի արժեհամակարգային փոխակերպումները (ՀՀ հեռուստաընկերությունների օրինակով, 2010-2015 թթ.), 2017:
9. Ապրեսյան Ա., Լրագրային տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները հաղորդակցական լեզվառճաբանության տեսանկյունից (ժամանակակից անգլալեզու մամուլի փաստական նյութի հիման վրա), 2001:
10. Առաքելյան Ա., 1860-80-ական թթ. խորհրդահայ տպագրական գրաֆիկան, 2011:
11. Առաքելյան Ա., Հերոսի պրոբլեմը հայ կինոյում, 2003:
12. Առաքելյան Գ., Անդրանիկ Քոչարի լուսանկարչական արվեստը, 2014:
13. Առաքելյան Գ., Արդի հայ մամուլը և գրականությունը (1990-2006 թթ.), 2007:
14. Առաքելյան Հ., Ներգործումը անգլերեն գովազդային մեդիադիսկուրսում, 2022:
15. Ասատրյանց Ս., ԶԼՄ կառավարման և պետական կարգավորման խնդիրները ՀՀ-ում, 2009:
16. Ասլանյան Կ., ՀՀ հանրային և մասնավոր ռադիոընկերությունների ծրագրային քաղաքականությունը. հիմնախնդիրներ և զարգացման միտումներ, 2012:
17. Ասկարյան Շ., Մշակութային կյանքը արցախյան մամուլում (1990-2010 թթ.), 2015:

18. Ավագյան Մ., Մ.Ա. Բուլգակովի հրապարակախոսությունը, 2005:
19. Ավետիսյան Ա., Համացանցային զանգվածային լրատվամիջոցներ. ձևավորումը և զարգացումը Հայաստանում, 2016:
20. Ավետիսյան Ա., Հեռուստածրագրերի տիպաբանություն (հեռուստատեսությունը հասարակական նոր հարաբերությունների պայմաններում), 2010:
21. Արիսյան Ն., Հայոց ցեղասպանության լուսաբանումը արաբական մամուլում (1877-1930 թթ.) և դրա վերաբերյալ սիրիացի մտավորականների կարծիքը, 2001:
22. Բաբուխանյան Զ., ԶԼՄ-ների դերը Հայաստանի Հանրապետության իմիջի ձևավորման գործում, 2016:
23. Բաբուխանյան Հ., Հայ-թուրքական փոխհարաբերությունները հայ ժամանակակից մամուլում (1990-2010 թթ.) քննադատական վերլուծություն, 2012:
24. Բագրատյան Ն. Հրանտ Մաթևոսյանի հրապարակախոսությունը, 2006:
25. Բալոյան Հ., Արդի մամուլի հրապարակախոսության լեզուն, 2008:
26. Բաղդասարյան Ա., Քաղաքական ընտրարշավի կազմակերպման տեխնոլոգիան (ՀՀ օրինակով), 2003:
27. Բաղդասարյան Գ., Չայնը ֆիլմի կառուցվածքում, 2014:
28. Բաղդասարյան Ն., «Հնչակ» լրագիրը (1888-1915), 2011:
29. Բայադյան Հ., Մշակութաբանություն և/կամ մշակութային ուսումնասիրություններ // Ժուռնալիստիկա և հաղորդակցություն (Տեսության և պատմության հարցեր), 2 (14), Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 13:
30. Բարսեղյան Գ. Դիպլոմատությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները (անգլալեզու տպագիր և առցանց լրագրերի նյութի հիման վրա), 2017:
31. Բարսեղյան Գ., Սպորտային լրագրության լեզվառճական առանձնահատկությունները (անգլալեզու սպորտային ամսագրերի նյութի հիման վրա), 2005:
32. Բարսեղյան Լ., Հեռուստատեսային գովազդի լեզվագործարանական առանձնահատկությունները անգլերենում (հայերենի և ռուսերենի զուգադրությամբ), 2003:
33. Բարսեղյան Ս., Էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում, 2020:
34. Բժիկյան Պ., Տեղեկատվական իրավահարաբերությունների առանձնահատկությունները ՀՀ զանգվածային լրատվության ոլորտում, 2006:
35. Բոեհենեսիեկեր-Չաքարյան Ա., Հայ հին գրականությունը «Բազմավեպ»-ի էջերում, 2004:
36. Բրուսյան Ա., Արևելահայ մանկավարժական մամուլի սկզբնավորումը և զարգացման միտումները (19-րդ դարի երկրորդ կես), 2008:

37. Գալոյան Ա., Հետաքննական լրագրություն (ՀՀ զանգվածային լրատվամիջոցների օրինակով), 2007:
38. Գալստյան Ս., Այլաբանությունը հայ կինոարվեստում, 2007:
39. Գասպարյան Ք., Մամուլի տեղեկատվական արդյունավետ միջոցներ (Ղարաբաղյան հիմնահարցը), 2014:
40. Գերմանյան Վ., Գովազդի արդյունավետությունը կազմակերպություններում, 2014:
41. Գևորգյան Լ., Գր. Արծրունին և նրա «Մշակը», 1996:
42. Գևորգյան Մ., Գրիգոր Զոհրապը հրապարակախոս և գեղագետ, 2007:
43. Գրիգորյան Ա., Հայ միջնադարյան արվեստի պատմագրությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբի հայ պարբերական մամուլում, 2011:
44. Գրիգորյան Գ., Անձնական և անդրադարձ դերանունների գործաբանական արժևորումը ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում, 2018:
45. Գրիգորյան Զ., Գրքի գովազդի լեզվագործաբանական առանձնահատկությունները ժամանակակից անգլերենում, 2013:
46. Գրիգորյան Կ., Ամսագիրը որպես լրատվամիջոց, 2007:
47. Գրիգորյան Մ., ԶԼՄ-ի լսարանը (ՀՀ լրատվամիջոցների օրինակով), 2007:
48. Դանիելյան Տ., Ռադիոյի արդի փուլի օրինաչափությունները և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում, 2012:
49. Դավթյան Ա., ԶԼՄ-ների դերը հասարակական-քաղաքական կարծիքի ձևավորման գործընթացում, 2009:
50. Դավթյան Յ., Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, 2006:
51. Դոյրոյան Շ., Մամուլի ազատության սահմանադրական երաշխիքները, 2001:
52. Եղիազարյան Ա., Հայկական կինոագրագիր, 2011:
53. Ետյան Մ., Հայկական հարցը Սիբիրիայի արաբական մամուլում 1908-1914 թթ., 2013:
54. Երանոսյան Ն., Հայկական հարցը Եգիպտոսի արաբալեզու մամուլում 1870-1890-ական թթ. 2015:
55. Երիցյան Ս., Հեռուստատեսություն. գործառույթները, զարգացման միտումները և հեռանկարները, 2004.
56. Թադևոսյան Մ., Ժամանակակից տեղեկատվական հոսքերը Հայաստանի ԶԼՄ-ներում. Մեդիատիրության վերափոխման առանձնահատկությունները, 2021:
57. Թադևոսյան Մ., ՀՀ քաղաքական կյանքը անդրկովկասյան և սփյուռքահայ մամուլի լուսաբանմամբ (1918 թ. մայիս-1919 թ. մայիս), 2001:
58. Թամրազյան Հ., Գովազդի կարգավորման խնդիրները ՀՀ-ում, 2008:

59. Թորոսյան Ա., 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի առաջին տասնամյակի հայ երգիծանկարչությունը, 2009:
60. Թորոսյան Ս., Հասարակական-քաղաքական թեմատիկան հայ հրապարակախոսության մեջ (ըստ ՀՀ պարբերական մամուլի 1998-2009 թթ.), 2011:
61. Թութունջյան Հ., Քաղաքական գովազդի ժանրային խոսույթային առանձնահատկությունները, 2008:
62. Խալիլի Ս., Հեռուստատեսության դերը Իրանի երիտասարդության մոտ արժեքների և դիրքորոշումների ձևավորման գործում, 2018:
63. Խաչատրյան Ա., Անգլալեզու կորպորատիվ կայքերի լեզվառճական առանձնահատկությունները, 2013:
64. Խաչատրյան Ա., Կոնվերգենցիայի գործընթացը ՋԼՄ-ների համակարգում և նրա ազդեցությունը արդի հայկական լրագրության վրա, 2017:
65. Խաչատրյան Օ., Հանրային կապեր PR և ընտրություններ (ՀՀ ՋԼՄ-ների օրինակով 1998-2008 թթ.), 2010:
66. Խաչիկյան Լ., Հայաստանի Հանրապետության ավանդական զանգվածային լրատվամիջոցների գործունեության հիմնախնդիրները նոր մեդիայի զարգացման պայմաններում, 2017:
67. Խուղավերդյան Ա., Մեքսիկեցի արքեպիսկոպոս Մուրադյանցը խմբագիր և հրապարակախոս, 2008:
68. Օատրյան Հ., Մեդիան և քաղաքական տեխնոլոգիաները (ՀՀ լրատվադաշտի օրինակով), 2018:
69. Կարապետյան Մ., Հայաստան-Եվրոպա քաղաքակրթական առնչությունները 1990-ական թվականների առաջին կեսի հայաստանյան մամուլում, 2015:
70. Կևորկովա Ն., Գովազդային-տեղեկատվական գործունեությունը ՀՀ զբոսաշրջության ինդուստրիայում, 2008:
71. Կիրակոսյան Լ., Արդի հայ մամուլի ժանրային բնութագիրը (ՀՀ-ում հրատարակվող թերթերի օրինակով), 2008:
72. Հակոբյան Ա., Հայ պարբերական մամուլի հետադարձ մատենագրություն. «Ակոս», 2015:
73. Հակոբյան Գ., Սիլվա Կապուտիկյանի հրապարակախոսությունը, 2009:
74. Հակոբյան Վ., Հեռուստատեսային հաղորդակցության արդյունավետությունը, 2006:
75. Համբարձումով Ա., Ս. Փարաջանովի ստեղծագործության սոցիալ-հոգեբանական և գեղարվեստական նախադրյալները (Ս. Փարաջանովի ստեղծագործության սոցիալ-հոգեբանական, գեղագիտական ակունքները), 2011:

76. Հարությունյան Ա., Կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան մամուլում (հայերենի զուգադրությամբ), 2022:
77. Հարությունյան Ռ., Հայաստանի տնտեսական լրագրությունը. համեմատական վերլուծություն և հեռանկարներ, 2013:
78. Հարությունյան Տ., Հասարակական իդեալը և նրա փոխակերպումները հետխորհրդային հայ մամուլում, 2015:
79. Հարությունովա Լ., Լրագրային բառապաշարի օգտագործման փոխկապակցված ուսուցումը ռուսերեն և անգլերեն լեզուների գործնական պարապմունքների ժամանակ, 2013:
80. Հովհաննիսյան Ա., Հայաստանը Մարիետա Շահինյանի հրապարակախոսության մեջ, 2010:
81. Հովսեփյան Մ., ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը (1909-1915 թթ.), 2001:
82. Հովսեփյան Մ., Ռադիոշուկայի օրինաչափությունները և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում, 2003:
83. Դուկասյան Հ., Արդի հայ մամուլի լեզուն (2004-2008), 2009:
84. Մաթևոսյան Թ., Լեզվամշակութային իրազեկության զարգացումը բնագրային ֆիլմերի միջոցով անգլերենի մասնագիտական դասընթացում, 2014:
85. Մանիֆար Մ., Ռադիոլսարանի ուսումնասիրման առանձնահատկությունները Իրանի Իսլամական Հանրապետության պետական ռադիոընկերություններում, 2013:
86. Մարգարյան Է., Ռադիոն և քաղաքականությունը. 1991-1999 թ. (ՀՀ ազգային ռադիոյի օրինակով), 1998:
87. Մարոյան Գ., ԶԼՄ-ների օրենսդրական կարգավորումը և ինքնակարգավորումը ԼՂՀ-ում, 2013:
88. Մարկոսյան Ա., PR լրագրության զարգացման առանձնահատկությունները և օրինաչափությունները Հայաստանի զանգվածային լրատվամիջոցներում, 2015:
89. Մարկոսյան Դ., Արտակարգ իրավիճակում աշխատող լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստավածության հիմնախնդիրները, 2017:
90. Մարտինյան Ի. Կարգավորման և ինքնակարգավորման հիմնախնդիրները հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում (2010-2016 թթ.), 2017:
91. Մարտիրոսյան Ա., ԶԼՄ-ի մենեջմենթ (ՀՀ լրատվամիջոցների օրինակով), 2007:
92. Մարտիրոսյան Ն., «Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությունը 1920-30-ական թթ. 2003:
93. Մենեմշյան Ա., «Le Monde» -ը և հայ իրականությունը, 2006:

94. Միրաքյան Վ., Սոցիալական դիրքորոշումների ձևավորումը ԶԼՄ-ների միջոցով (ՀՀ ԶԼՄ-ների օրինակով), 2013:
95. Միրզոյան Է., Հայկական թեմատիկան «Ակոս»-ի հրապարակախոսությունում (1996-2007 թթ.), 2015:
96. Մխիթարյան Գ., Պատերազմ, խաղաղություն, վախ հասկացությունների առկայացման միջոցները ամերիկյան մամուլում, 2013:
97. Մխիթարյան Կ., Գովազդային տեքստի լեզվի և ոճի ուսուցման հիմնախնդիրը (անգլերեն նյութի հիման վրա), 2013:
98. Մկրտիչյան Ա., Ղարաբաղյան շարժման արձագանքները 1988-1994 թթ. ՀՀ մամուլում, 2022:
99. Մկրտչյան Ա., Լրագրող ուսանողների հանպատրաստի խոսքի հետախուզումների զարգացումը միջմշակութային հաղորդակցում ուսուցանելիս, 2015:
100. Մկրտչյան Ա., Նոր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները և ժուռնալիստիկան, 2004:
101. Մովսիսյան Լ., Ժամանակակից ադրբեջանալեզու մամուլի բառապաշարային առանձնահատկությունները հայերենի համեմատությամբ, 2018:
102. Մուրադյան Ա., Հայկական տպագրությունը Երուսաղեմում 19-20 դդ., 2010:
103. Յազըճյան Գ., Հայաստանի 1985-1991 թթ. պարբերական մամուլը, 2001:
104. Յանիկյան Յ., Գովազդը հեռուստատեսությունում. միջազգային փորձը և հայաստանյան իրականությունը (2010-2016 թթ.), 2017:
105. Յոլյան Ա., Գովազդային գործունեության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում, 2016:
106. Նազարյան Հ., Իրանի Իսլամական Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման առանձնահատկությունները ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցներում, 2012:
107. Նալբանդյան Ն., Լրագրողի աշխատանքը արտակարգ իրավիճակներում (ըստ ՀՀ և ՌԴ պատերազմական և ահաբեկչական իրադարձությունների), 2010:
108. Ներսիսյան Ս., Սոցիալական ցանցի դերը հայկական սփյուռքում, 2019:
109. Շալունց Ռ., ԶԼՄ-ների լեզուն և ոճը (ըստ լրագրերի և հեռուստահաղորդումների), 1994:
110. Շահբազյան Լ., Հեռուստատեսության զարգացման արդի միտումներն ու հիմնախնդիրները ՀՀ-ում, 2010:
111. Չալյան Մ., Արցախյան շարժման լուսաբանումը ամերիկահայ անգլալեզու մամուլում, 2005:

112. Չատունց Շ., «Ավանգարդ» թերթը խրուշչովյան «ձնհալի» տարիներին (1956-1964), 2012:
113. Պետրոսյան Գ., Քաղաքական հաղորդակցման առանձնահատկությունների արտացոլումը ՀՀ ՁԼՄ-ներում, 2007:
114. Պետրոսյան Դ., Գրական բանավեճերը 20-րդ դարակազմի հայ մամուլում, 2008:
115. Պետրոսյան Մ., Մեդիամարքեթինգի զարգացման հիմնախնդիրները ՀՀ առողջապահության ոլորտում, 2018:
116. Պետրոսյան Վ., Ժուռնալիստական էթիկա. հիմնախնդիրները և զարգացման միտումները արդի հայ մամուլում (1998-2008 թթ.), 2010:
117. Սահակյան Տ., Հայոց Մեծ եղեռնի արտացոլումը 1915-1916 թթ. արևելահայ պարբերական մամուլում, 2002:
118. Սայադյան Լ., Քաղաքական զարգացման գործընթացները և արդի ՁԼՄ-ը ՀՀ-ում, 2005:
119. Սարգիզով Լ., Գովազդային գործունեությունը որպես գործարարական գործունեության տեսակ ՀՀ-ում, 2016:
120. Սարգսյան Դ., Հայրենական և միջազգային առաջատար ՁԼՄ-ները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշման դիսկուրսում (2010-2015 թթ.), 2016:
121. Սարգսյան Ջ., Միֆաստեղծումը արդի հայ մամուլում (1988-1995 թթ.), 2014:
122. Սարգսյան Ի., Ռուսաց լեզվի մասնագիտորեն կողմնորոշված ուսուցում՝ ՁԼՄ լեզվի հիման վրա ուսուցման ընթացքի ինտելեկտուալիզացիայի տեսանկյունից, 1993:
123. Սարգսյան Ն., Չայնր ֆիլմի կառուցվածքում, 2013:
124. Սարգսյան Ս., Մ. Փորթուգալյանի հասարակական-քաղաքական գործունեությունը և «Արմենիա» պարբերականը, 2016:
125. Սաֆարյան Ա., Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումները և հեռանկարները (ՀՀ և ՌԴ ՁԼՄ-ների օրինակով), 2022:
126. Սաֆարյան Ա., Հայ գրախրատարակչական գործը Ռուսաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին, 2005:
127. Միրունյան Տ., Լեզվաբանական տերմինները «Հանդես Ամսօրյայում» (1887-1900), 2008:
128. Մոդոմոնյան Գ., Արևմտահայ դեմոկրատական մամուլ (XIX դ. 80-ական թթ.), 2007:
129. Մոդոմոնյան Մ., Նորաբանությունները 90-ական թվականների հայ մամուլում, 2005:
130. Ստեփանյան Ա., Գավառական գրականությունը 20-րդ դարակազմի արևմտահայ մամուլում, 2009:

131. Ստեփանյան Է., Հունահայ պարբերական մամուլը (1920-1930 թթ.), 1996:
132. Ստեփանյան Լ., Հեռուստատեսային ռեպորտաժ. զարգացման արդի միտումները, 2008:
133. Ստեփանյան Հ., Ժամանակակից վավերագրական և գեղարվեստական կինոյի ծրագրավորման և ձևաչափի առանձնահատկությունները Հայաստանի հեռուստաընկերությունների եթերում, 2018:
134. Վարդանյան Ի., Կինոգրախոսությունը որպես տեքստաբանական քննության առարկա, 2010:
135. Վարդանյան Մ., Հոգևոր հրապարակախոսությունը «Էջմիածին» ամսագրում, 2001:
136. Վարդանյան Ն., Հեռուստատեսային լրատվական ժանրեր (ՀՀ հեռուստաընկերությունների օրինակով), 2006:
137. Վարդանյան Ռ., ՁԼՄ-ների ինֆորմացիայի դերը ՀՀ զբոսաշրջային գրավչության ձևավորման մեջ, 2022:
138. Վարդումյան Լ., ՀՀ արդի գրական մամուլը, 2014:
139. Տոնոյան Ու., Խորհրդահայ կինեմատոգրաֆիայի կայացումը (1920-1930 թթ.), 2002:
140. Փաշայան Գ., Ժամանակակից հեռուստատեսային վավերագրական կինոյի զարգացման միտումները (1991-2010 թթ. հայկական վավերագրական ֆիլմերի օրինակով), 2013:
141. Ֆլջյան Լ., Անգլալեզու վիրտուալ լրագրային խոսույթի լեզվաոճական յուրահատկությունները, 2010:
142. Коротков А., Шамина О., Журналистика как наука: от предметной области к преподаванию // Вестник МГИМО-Университета. 2011; (1(16)). С. 301. <https://doi.org/10.24833/2071-8160-2011-1-16-300-308>
143. ՀՀ կառավարության որոշում N 1191 ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին, 23.10.2014.

Средства массовой коммуникации как объект научного исследования в Республике Армения (на примере диссертаций, 1991-2022 гг.)

*Тарон Даниелян
Нагаш Мартиросян*

Резюме

Ключевые слова: журналистика, пресса, радио, телевидение, онлайн медиа, кино, реклама

Изучение средств и форм воздействия массовой коммуникации с каждым годом расширяет свои предметные области, постоянно обогащаясь всё новыми теоретическими и прикладными концепциями. Начиная с периода независимости, в Республике Армения изменились научные парадигмы исследования СМК. Медиа, как объект научного изучения, вышли из традиционного поля филологических и исторических наук и стали изучаться в системе других научных направлений. Цель нашей статьи – создать научный обзор медиаисследований в Республике Армения и определить место журналистики в этих измерениях. Задача – выявить количественные и качественные характеристики исследований медиасферы. Актуальность работы обусловлена тем, что позволяет составить представление о тематических рамках исследований медиасферы в Республике Армения и может иметь ориентирующую роль для будущих исследователей. При изучении темы и для достижения поставленной задачи нами были использованы принципы количественного и качественного анализа, а также сравнительно-сопоставительный метод. Источниковедческой базой работы является перечень названий диссертаций, которые доступны в разделе «Архив защищенных диссертаций» на сайте Высшей аттестационной комиссии (ВАК) Республики Армения, по соответствующим специальностям. При составлении списка учитывались все диссертационные работы, в названиях которых присутствовало наименование средств массовой коммуникации или форм воздействия массовой коммуникации. Резюмируя аналитический обзор медиаисследований, можно сказать, что средства массовой коммуникации, в качестве объекта научного изучения, являются междисциплинарным явлением. Исследования, посвященные медиасфере в Республике Армения, по направлению «Журналистика» в соотношении с другими научными отраслями в количественном отношении практически равны. С 1991 г. по 2022 годы в Республике Армения исследователи по направлению «Журналистика» не изучали лишь темы по медиалингвистике. Количество узкопрофильных исследований, связанных со СМК и журналистикой, составляет 16 работ, но среди этих диссертаций также можно заметить тематические элементы других научных дисциплин.

**Mass Media as an Object of Scientific Research
in the Republic of Armenia (on the Example of Dissertations, 1991-2022)**

*Taron Danielyan
Naghash Martirosyan*

Summary

Key words: *journalism, press, radio, television, online media, cinema, advertising*

Every year, the study of the means and forms of influence of mass communication expands its scope, constantly enriching itself with new theoretical and applied concepts. Starting from the period of independence, the scientific paradigm of media research has changed in the Republic of Armenia. Media, as an object of scientific study, left the traditional field of philological and historical sciences and began to be studied in the system of other scientific areas. The purpose of our article is to create a scientific overview of media studies in the Republic of Armenia and determine the place of journalism in these dimensions. The task is to identify the quantitative and qualitative characteristics of media research. The relevance of the work is due to the fact that it allows us to get an idea of the thematic framework of media research in the Republic of Armenia and may have a guiding role for future researchers. In order to achieve the set task, we used the principles of quantitative and qualitative analysis, as well as the comparative method during the study of the topic. The source base of the work is the list of dissertations' titles, which are available in the relevant specialties in the "Archive of defended dissertations" section on the website of the Higher Attestation Commission (HAC) of the Republic of Armenia. When compiling the list, all those dissertations were taken into account, in the titles of which there was the name of mass communication media or forms of mass communication influence. Summarizing the analytical review of media studies, we can say that the media, as an object of scientific study, are an interdisciplinary phenomenon.

Research, devoted to the media sphere in the Republic of Armenia in the specialization of "Journalism", in relation to other scientific fields is practically equal in quantitative terms. From 1991 to 2022, in the Republic of Armenia, researchers in the direction of "Journalism" did not study only topics in media linguistics. The number of narrow-profile studies related to mass media and journalism is 16 works, but among these dissertations one can also notice thematic elements of other scientific disciplines.

Ներկայացվել է 09.03.2023 թ.

Գրախոսվել է 13.03.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

**«Միասնականության» միֆը որպես իրականության
կառուցարկման գործիք**

Լիանա Մարտիրոսյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-171>

Հանգուցային բառեր. քաղաքական միֆեր, հակադրություններ, մեծամասնություն, լռության պարույր, պայքար, քաղաքական ծրագիր, միֆաստեղծում

Նախաբան

Քաղաքական կյանքի առասպելականացումը եղել է մարդկության քաղաքակրթության պատմության անբաժան ուղեկիցը: Այսօր էլ, չնայած տեղեկատվական դետերմինիզմի կայացմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու ռացիոնալացմանը, մարդը չի ազատագրվում դիցարարության դրսևորումներից և տարբեր սոցիոմշակութային իրավիճակներում ստեղծում է նորանոր միֆեր [8, 18]: Ավելին՝ համաշխարհային հանրության զարգացման արդի փուլում տեղի ունեցած աննախադեպ իրադարձությունները՝ խոշորամասշտաբ մոդիֆիկացիաներ, տեխնոլոգիաների և ինֆորմացիոն աղբյուրների առատություն, ժողովրդավարական համակարգերի ստեղծում, անջատողականության իրարամերժ հակասություններ, ավելի են խորացնում այս իրավիճակը, քանզի, եթե բռնապետական ռեժիմում ամեն ինչ պարզ է և պարտավորված, ապա ժողովրդավարական հասարակություններում անհատն ինքն է իր ընտրության պատասխանատուն, ինչը բարդ է և ապակողմնորոշող [9, 95]:

Ժամանակակից միֆերի ստեղծման ամենից կիրառելի ոլորտը քաղաքականությունն է: Այն իր վրա է կրում սոցիոմշակութային նոր իրականության ստեղծման ողջ պատասխանատվությունը: Միֆերը ստեղծվում են քաղաքական կյանքի թատերականացման, դրան խորհրդանշական բնույթ հաղորդելու, իրականությունը չափազանցված ներկայացնելու և այլ միջոցներով, որոնք հասարակությանը կարող են ավելի արժանահավատ և իրական թվալ, քան իրականում կան [5, 61]:

Ըստ քաղաքական միֆերի մասին հետազոտությունների՝ ի տարբերություն ավանդական կամ, այսպես սասած, հարատև միֆերի, քաղաքական միֆերի նպատակները նախանշելն ավելի հեշտ է. օգտագործվելով որպես քաղաքական պայքարի գործիք՝ դրանք միտված են պաշտպանելու որևէ անհատի կամ քաղաքական խմբի նյութական շահերը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ հետազոտող Ա. Յուլաձեն քաղաքական միֆոլոգիան անվանել է կիրառական միֆոլոգիա, քանի որ այն հսկայական ազդեցություն է ունենում ամբողջ հասարակության վրա [13, 25]:

Ժամանակակից միֆերը, լինելով իրականության կառուցարկման կամ վերաիմաստավորման գործիքներ, ուսումնասիրվել են տարբեր գիտությունների շրջանակներում: Դրանց մասին կան բազում տեսություններ, որոնք այս կամ այն կերպ բացահայտում են միֆերի էությունը, առանձնահատկություններն ու գործարկման մեխանիզմները: Ամենից տարածված տարանջատումներից մեկն առաջ է քաշել ֆրանսիացի հետազոտող Ռ. Ժիրարդեն, ըստ որի, քաղաքական միֆերը չորսն են՝ դավադրություն, ոսկե դար, հերոս-փրկիչ և միասնականություն [11, 50]:

Հոդվածում մեր կողմից ուսումնասիրության է ենթարկվել միասնականության միֆը, որն այսօր համարվում է քաղաքական ուժերի զինանոցի անբաժանելի մասնիկը: Մեր կողմից իրականացված հետազոտության նպատակն է հայ իրականությունից վերցված օրինակների միջոցով բացահայտել միասնականության միֆի էությունը, ինչպես նաև դրա ազդեցությունը մերօրյա քաղաքական կարևոր իրադարձություններում: Հոդվածի խնդիրն է ներկայացնել միասնականության միֆի կիրառելիության դերը քաղաքական գործընթացներում, որն իրականացվել է միֆաստեղծման համար ամենից արդյունավետ սոցիալ-հոգեբանական հարթակ համարվող մեդիայի և դրանում տեղ գտած հրապարակումների միջոցով: Առաջին հայացքից կարող է թվալ՝ միֆերն այլևս կորցրել են իրենց արդիականությունը, սակայն մեր կողմից կատարված ուսումնասիրությունները գալիս են ապացուցելու հակառակը: Չնայած տեղեկատվական աղբյուրների և ՁԼՄ-ների առատությանը, սոցիալական մեդիայի զարգացմանը այսօր էլ անհատը ազատված չէ միֆական մտածողությունից: Ստացվում է, որ նույնիսկ լուսավորությունից սկիզբ առած, առաջադիմական գաղափարներով այրվող ժամանակակից անհատը քաղաքական երևույթները միֆականացնելու կարիք է զգում: Այս հանգամանքն էլ պայմանավորում է մեր հետազոտության արդիականությունը: Թեև միասնականության միֆը գրեթե միշտ եղել է հայ քաղաքական ուժերի զինանոցի անբաժանելի մասնիկը, այն գիտականորեն մասամբ է ուսումնասիրված: Մեր աշխատանքը միտված է բացահայտելու դրանց էությունը՝ այն արժանահավատ դարձնելով կենդանի օրինակների համադրմամբ: Այսինքն, հոդվածն իրապես իր մեջ գիտական նորույթ է պարունակում: Ինչպես նշեցինք, միֆերի ստեղծման և տարածման ամենից արդյունավետ սոցիալ-հոգեբանական հարթակը զանգվածային մեդիան է: Հոդվածը կարող է տեսական և գործնական կարևոր նշանակություն ունենալ մի կողմից քաղաքական իմիջով զբաղվող մասնագետների համար, քանի որ այն ինչ-որ առումներով բացատրում է՝ ինչպես կարելի է օգտագործել միասնականության միֆը որպես արդարացված մանիպուլյացիոն գործիք, մյուս կողմից՝ մեդիա միջոցների ներկայացուցիչների համար՝ սովորեցնելով նրանք՝ ինչպես իրենց խոսովորը չդարձնել քարոզչության գործիք ինչ-որ ուժերի ձեռքին: Հոդվածի մեթոդաբանական հիմքը կազմում են վերլուծության, համեմատության, ընդ-

հանրացման, արխիվային տեսանյութերի, ինչպես նաև այլ գիտական նյութերի համադրման մեթոդները:

Հողվածի բովանդակությունը

Միֆերի ստեղծման անհրաժեշտությունը սաստկանում է քաղաքական ճգնաժամերի ժամանակ: Անցումային հասարակություններն ավելի խոցելի են միֆականացման ենթարկվելու տեսանկյունից: Նման իրավիճակներում քաղաքական կյանքի կառուցումը կատարվում է հեքիաթների, առասպելների տրամաբանությամբ: Որպեսզի տեղի ունենա որևէ իրադարձություն, անհրաժեշտ է արհեստականորեն ստեղծել որևէ դավադիր ուժի կերպար, ով իր վրա կկրի ստեղծված ծանր իրավիճակի ողջ պատասխանատվությունը: Այս միֆը ստացել է դավադրության միֆ անվանումը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ուղին հերոսին դիմելն է, ով հանդես է գալիս որպես փրկիչ: Հերոս-փրկիչը, ըստ անհրաժեշտության, հայտնվում է ցանկալի պահին և խոստանում իր հետ բերել երկար սպասված ոսկե դարը: Որպես կանոն, նա խոստանում է կա՛մ տանել փառավոր անցյալ, կա՛մ խոստումնալից ապագա: Իր նպատակին հասնելու համար հերոս-փրկիչը դիմում է տարբեր տեխնոլոգիաների, որից մեկն էլ միասնականության միֆի ստեղծումն է: Չնայած ըստ Ժիրարդեի առաջ քաշած տեսության՝ միֆը կոչվում է միասնականություն, սակայն այն միասնականության կոչ է միայն առաջին հայացքից: Իրականում այս միֆի միջոցով քաղաքական ուժերը կատարում են հասարակության շերտազատում՝ ներմուծելով «մենք» և «նրանք» բաժանումը, որում «նրանք»-ը պատասխանատու են սոցիալական բոլոր խնդիրների և բացթողումների համար, իսկ «մենք»-ը այն մարդիկ են, որոնք միասնական են և միտված են այդ իրավիճակից հասարակությանը և պետությանը դուրս բերելու: Միասնականության միֆը ձևավորվում է հակադրությունների հիման վրա: Բարեկամ-թշնամի, մենք-նրանք, սև-սպիտակ, յուրայիններ-օտարներ հակադրությունները ուղեկցում են քաղաքական ուժին ողջ ընթացքում: Հասարակության լայն զանգվածներից չկտրվելու, «լռության պարույր»-ի մեջ չհայտնվելու համար անհատը նախընտրում է գնալ ամբոխի հետևից՝ այսպիսով դառնալով միֆի գոհ: Միասնականության միֆի կամ զանգվածի մաս կազմելու գրավչությունն ու միաչափության ընտրությունը 19-րդ դարից սկսած եղել է տեսաբանների ուշադրության կենտրոնում, քանզի այն այնքան գորեղ է, որ կարող է անհատին զրկել պատասխանատվության զգացումից և ուղեկցվել քննադատական մտածողության կորստով: Ուսումնասիրելով զանգվածային մարդու վարքագիծը՝ Խ. Օրտեգան նկատում է, որ այսպես կոչված գերժողովրդավարությունը ենթադրում է փոքրամասնության ոչնչացում սեփական ցանկություններն ու ճաշակը թելադրող մեծամասնատության կողմից, ինչի արդյունքում անհատը պարտվում է պետությանը, կորցնում է իրեն՝ դառնալով միասնականության միֆի գոհ: Նման միֆի ազդեցության տակ գտնվող

անհատին այլև անհնար է սեփական դատողությունների մասին հիշեցնելը, քանզի վերջինս արդեն գտնվում է ինֆորմացիոն թակարդում [12, 110]: Մեր-
ժեղով ամեն տեսակի այլընտրանքային տեսակետ՝ «նրանք» համոզում են, որ
իրենց հետ չլինելը հղի է բազում վտանգներով: Միասնականության միֆի
ստեղծումը, ըստ շատ տեսաբանների, անհրաժեշտություն է: Ըստ հետազո-
տող Ս. Ջաքարյանի՝ դրանք կատարում են կարևոր ինքնութենակերտ գործա-
ռույթներ. անմիջականորեն կամ միջնորդավորված մասնակցում են «մենք»-ի
ինքնության ստեղծմանը, նպաստում ինքնանույնականացման գործընթացին,
համախմբում էթնոկլիրներին, կարգավորում նրանց վարքը, որոշ դեպքերում,
հատկապես ազգամիջյան հարաբերությունների սրման պայմաններում,
«ստիպում» վերադառնալ ազգային ակունքներին ու արժեքներին, «հարկա-
դրում» առաջնորդվել ազգային սովորույթներով ու ավանդույթներով: Այս
ամենը նկատի ունենալով՝ ասվում է, որ եթե էթնոսը անգամ չունի իրական
թշնամի, ապա պարտադրաբար պետք է հորինվի նման կերպար [3, 13]:
Թշնամու կերպարը ստեղծվում է «մենք» և «նրանք» տարանջատման համար:

Այսպիսով կարող ենք տալ միասնականության միֆի ընդհանուր բնու-
թագրիչները.

- միասնականության միֆը, հիմնվելով դիխոտոմիաների՝ հակադրու-
թյունների վրա, կատարում է հասարակության շերտազատում՝ առաջ
մղելով «մենք»-ի և «նրանք»-ի գաղափարը,
- յուրաքանչյուր ուժ «նրանք»-ին վերագրում է համամարդկային բացա-
սական հատկանիշներ, որոնք հասարակության մեջ առաջացնում են
վախ, տագնապ, զզվանք, խորշանք: Դրանով այն անհատին գցում է
տեղեկատվական թակարդը և կառավարում սոցիալական վարքա-
գիծը,
- լինելով չհիմնավորված և անորոշ՝ այն աշխատում է սոցիալական մե-
կուսացման վախի և ներշնչման միջոցով,
- սեփական կարծիքը հասարակական ներկայացնելով՝ միասնականու-
թյան միֆն իրականացնում է վերկանիշների մանիպուլյացիա՝ յուրա-
քանչյուր այլընտրանքային կարծիք համարելով վտանգներով լի և մեր-
ժեղի,
- այսօր այն բավականին ակտիվ կիրառվող քաղաքական մանիպուլյա-
ցիա է, որն ազդում է հանրույթի ենթագիտակցական շերտի վրա: Դրա
ստեղծման և տարածման հիմնական աղբյուրը մեղիա միջոցներն են:

«Մենք»-ի՝ Յուրայինի, Հարազատի և «Նրանք»-ի՝ Ուրիշի, Օտարի, Թշնա-
մու կերպարների ստեղծումը ազգային ինքնության հարացույցների կառու-
ցարկման պարտադիր ու անհրաժեշտ պայմանն է, քանզի ինքնությունը
որպես հայելի արտացոլում է ոչ միայն «Մենք»-ի ինքնապատկերացումներն
ու ինքնագնահատականները, այլև «Նրանք»-ի Ուրիշի մասին իր պատկերա-

ցումները և Ուրիշի կողմից արված բնորոշումների նկատմամբ իր վերաբերմունքի ձևերը [3, 12]: Միասնականության միջին աշխատում է հենց այս սկզբունքով: Արված տարանջատումն անհատի մոտ առաջացնում է վախ սոցիալական մեկուսացումից, «ուրիշների» ցուցակում հայտնվելուց, և նա նախընտրում է գնալ ամբոխի հետևից: Այս միջոցով քաղաքական ուժերը կարողանում են տնօրինել անհատի վարքագիծը, կառավարել նրա մտքերը մղելով որոշակի գործողությունների: «Մենք»-ի և «Նրանք»-ի հարաբերությունները հաճախ թշնամական են, «նրանք»-ը հանդես է գալիս որպես հակահերոս և պարուրվում համամարդկային բացասական հատկանիշներով: Թշնամուն ներկայացնող կերպարները զուրկ են լինում դրական գծերից, հարուցում են զովանք ու խորշանք, արթնացնում վտանգի, անորոշության, տագնապի զգացողություն [3, 13]: Բնական է, որ անհատը չի ցանկանա գնալ նման մարդու հետևից և կնախընտրի դեմ գնալ սեփական սկզբունքներին կամ էլ պարզապես լռել: Այլ խոսքով՝ միասնականության միջև անհատին զցում է «Լռության պարույր»-ի մեջ՝ զրկելով ազատ և տրամաբանական ընտրության կարողությունից¹: Պատահական չէ, որ միջերն աշխատում են մարդու ենթագիտակցական շերտերի վրա: Հետազոտող Ն. Մելքոնյանը իր հոդվածում առաջ է քաշում հետևյալ տեսակետը. քաղաքականության մեջ անտագոնիստական հասկացությունների կիրառումը բավական տարածված տեխնիկա է, քանի որ մարդը մշտապես հակված է գնահատել երևույթները որպես լավ կամ վատ, ինչն էլ առասպելի ակտուալացման հիմք է դառնում: Նման առասպելներում քաղաքական իմիջը կառուցվում է՝ հիմնվելով բնալչության մեծ մասի ցանկությունների ու նախընտրությունների վրա՝ ձգտելով հասնել իմիջը կրող սուբյեկտի և ընտրողի միջև յուրահատուկ համախմբման («Մենք»-ի զգացողության), դա էլ այնուհետև հակադրել մյուս թեկնածուներին («Նրանց»): «Մենք»-«Նրանք»-ի ակտիվ և համոզիչ կիրարկումը նպաստում է հետևյալ զգացումների ձևավորմանը և արտահայտմանը. թշնամիներ հայտարարվածների նկատմամբ ցասումնալից ընկալում, ագրեսիա ու դյուրագրգռություն: Այս տեսանկյունից նման միջոցների նպատակային օգտագործումը բերում է քաղաքական պայքարի տեղավորմանը հույզերի և կրքերի իռացիոնալ դաշտ, որտեղ ռացիոնալ հիմնավորում ընդամին չի էլ ենթադրվում, որտեղ «ո՞ւմ և ինչո՞ւ ես ընտրելու» հարցերի ամենատարածված պատասխանը դառնում է՝ «որպեսզի մյուսը չանցնի»-ն [4, 101]: Ընդհանուր առ-

¹ «Լռության պարույրի» գաղափարը առաջ է քաշել գերմանացի քաղաքագետ Էլիզաբեթ Նոել-Նոյմանը: Տերմինը բացատրում է այն միտումը, որ մարդիկ նախընտրում են հրապարակավ չբացահայտել իրենց կարծիքը, երբ տեղյակ են, որ դա մերժելի է մեծամասնության կողմից: Դրանով նրանք հայտնվում են մի երևակայական պարույրի մեջ, որն ավելի է մեծանում սոցիալական ճնշումների ազդեցությամբ: Այն պայմանականորեն անվանվել է «լռության պարույր»:

մամբ միասնականության միջը, ինչպես մնացած քաղաքական միջերը, միտված են ստեղծելու նոր իրականություն: Բացի վերջինիս ստեղծումից՝ նրանք իրականացնում են նաև հասարակական դերերի բաշխում, տարանջատում են հանրության՝ դրանով դարձնելով առավել խոցելի և կառավարելի:

Միասնականության միջի դրսևորումներ կարելի է գտնել նաև հայ իրականության մեջ: Մեր ուսումնասիրության հղանքն ընդգրկում է Հայաստանի անկախության նախօրեին և դրան հաջորդած քաղաքական իրադարձությունները, քանի որ բավական է պատմական հետահայաց կատարել, և կնկատենք՝ «մենք»-ի և «նրանք»-ի բաժանման մեկնարկը տրվել է անկախության գաղափարների տարածմանը զուգընթաց: Իհարկե, ինչ-որ առումով, դա նաև պատմության թելադրանքն էր:

1987 թվականին ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի կողմից հռչակված և ԽՍՀՄ-ում քաղաքական համակարգի ազատականացմանը սկիզբ դրած «պերեստրոյկային» Լեոնային Ղարաբաղում և Հայաստանի մի շարք մարզերում հաջորդեցին ազգային-ազատագրական շարժման ակտիվացմանը միտված ցույցեր: Չնայած այդ շրջանում դրանք սքողված էին բնապահպանական խնդիրների բարձրացման քողով, սակայն իրականում ապրելու մշակույթի փոփոխություն էին նախանշում: Մարդկանց աչքի առաջ քանդվում էր հինը, վստահելին, և ասպարեզում նոր հերոսների կարիք էր զգացվում: Նախկին, արդեն իսկ սպառված կարգերի մերժումը և նորը կառուցելու հույսի փնտրտուքը մարդկանց դուրս էր բերում փողոց: Երկրում սկսել էր վստահության ճգնաժամ: Նման անցումային իրավիճակներում հասարակությունը զգում է իրական առաջնորդների կարիք, մարդկանց, ովքեր ունեն հստակ ազգային գաղափարախոսություն: Առաջին ուժը, որը պետք է հանդես գար հերոսի կերպարում, «Ղարաբաղ կոմիտեն» էր, որը հիմնադրվեց Ի. Մուրադյանի կողմից 1987 թվականին: Այն նպատակ էր հետապնդում կենտրոնական իշխանությունների ուշադրությունը բնեռել Լեոնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու հայ ժողովրդի պահանջի վրա: Երկրում տեղի ունեցող զարգացումները հանգեցրին 1991 թվականի սեպտեմբերի 23-ի ընտրություններին, երբ հասարակության մի ստվար զանգված «Այո» ասաց անկախության գաղափարին: Այս պարագայում «մենք»-ի մեջ անկախության գաղափարի տարածողներն էին, իսկ «նրանք»-ի կերպարում հանդես էին գալիս նախկին կարգերի վերականգնման ջատագովները: Պայքարը դեռևս անձնավորված չէր: Տարանջատումն ավելի շատ գաղափարական էր: Անկախականների գաղափարների տարածմանը ձեռնամուխ եղավ զանգվածային մեդիան, մասնավորապես տպագիր մամուլը: Պատահական չէ, որ այդ շրջանը համարվում է տպագիր մամուլի ոսկե դար:

Միասնականության միջի դրոշակակիրներից էր «Անկախություն» թերթը: Այն ի սկզբանե միտված էր անկախական գաղափարների տարածմանը և մերժում էր ցանկացած այլընտրանքային կարծիք, որը կարող էր հնի

վերականգման միտում ունենալ: Այդ ամենի մասին է վկայում թերթի կարգախոսը՝ «Մեր նպատակը միացյալ, ազատ ու անկախ Հայաստանն է, առաջնահերթ խնդիրը՝ Խորհրդային Հայաստանի անկախացումը»: Թերթում հրապարակված յուրաքանչյուր հոդվածում կարմիր գծի պես անցնում են Խորհրդային Միությունից դուրս գալու և ազգի փրկությունը միայն անկախության հետ կապելու գաղափարները: Նոր իրականության ստեղծման կոչերը պարուրված էին միֆերով: Միասնականության միֆը տարանջատում էր մտցրել «մենք»-ի՝ անկախականների և «նրանք»-ի՝ խորհրդային ռեժիմը սատարողների միջև: Թերթն իր համարներից մեկում գրում է. «Նրանցից մենք ոչ մի ակնկալիք չունենք, էլ ուր մնաց Հայկական հարցի կամ նրա բաղկացուցիչ մաս հանդիսացող Արցախյան հարցի լուծումը»: Երկրում տիրող իրավիճակի ողջ պատասխանատվությունը դնելով նախկին կարգերի վրա՝ հոդվածագիրները փորձում էին ստեղծել դավադիր ուժի կերպար՝ հանձին Խորհրդային Միության, որտեղ հայ ժողովուրդը կանգնած է ֆիզիկական բնաջնջման առաջ: «Ախր ո՞ր մի ժողովուրդն է բախտավորվել այս կայսրության ձեռքի տակ, որ մենք բախտավորվենք», - շարունակում է թերթը [2, 3]: Նման գաղափարների տարածումը հասարակության լայն շերտերի վրա ազդելու և ժամանակի դիսկուրսը այդ ուղղությամբ տանելու միտում ուներ: Միասնականության միֆի կայացման համար նրանք Խորհրդային Միությունը ներկայացնում էին ոչ միայն դավադիր ուժի, այլև օտարի կերպարում: Թերթն իր համարներից մեկում գրում է. «Այսօր Հայաստանը օտարների կրնկի տակ է», ազգն՝ աշխարհասփյուռ և որպես միակ միախթարություն մնացած երազը կորցնելու շեմին, փոքրիկ «ծաղկող» Խորհրդային Հայաստանը արդեն շնչահեղձ է լինում և մի ուժեղ երկրաշարժից հետո, ասես, դավադրաբար կառուցված ատոմակայանի օգնությամբ կվերանա աշխարհի երեսից» [1, 3]: Ինչպես նկատում ենք, օտարի դերում կարող է հանդես գալ ինչպես անհատը, այնպես էլ կուսակցությունը, որն է կազմակերպություն կամ քաղաքական ուժ: Հարկ ենք համարում նշել, որ թերթի հիմնական հոդվածագիրներից մեկը «Ազգային ինքնորոշում միավորում» կուսակցության առաջնորդ Պարույր Հայրիկյանն էր: Միասնականության միֆի կայացումը ինչ-որ առումներով կապվում էր նաև նրա անձի հետ, քանի որ նա դրա ձևավորմանը ձեռնամուխ եղավ նաև 1998 թվականի նախագահական ընտրություններում: Դրա նախօրյակին Ազատության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ հնչած նրա ելույթը միասնականության միֆի կենդանի օրինակ էր: «Մենք այսօր ում պետք է ձայն տանք, նրան, ով ժամանակին Ալիևների հետ մտածում էր՝ ինչպես ավելի լավ հաճոյանա Բրեժնևներին, և մրցման մեջ էին մտել Բրեժնևի կոշիկները մաքրելու հարցում, թե նրան, ով իր փոքր ու ազատ Արցախում ասում է՝ ես ունեմ իմ ինքնորոշման իրավունքը, և դրանից վեր ոչինչ չկա: Կանցնի ևս մեկ շաբաթ, և մենք կծիծաղենք ասելով՝ ով էին այդ Դեմիրճյանականները, ով էին այդ Լևոնականները,

նրանց չենք էլ հիշում» ասվում էր ելույթում [10, 38: 07-38-35]: Ի դեպ, Հայրիկ-յանի ելույթի ազդեցիկ հասվածները սկսեցին ցուցադրվել բոլոր ընդդիմադիր հեռուստատալիքներով, և կարող ենք փաստել, որ այն ազդեցություն էր ունենում հասարակության մի սովորական զանգվածի վրա:

Միասնականության միֆի կիրառումից գերծ չէր մնացել նաև «Հայքը», որը ՀՀ Կառավարության վրա ազդեցության տեսանկյունից կարող ենք առանձնացնել «Գնացքից թոչնու ժամանակը» հոդվածների շարքը, որի հեղինակը Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Մանուկյանն էր: Հոդվածում հեղինակը ներկայացնում է մի շարք փաստեր՝ ինչու է պետք դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Բացի փաստական վերլուծությունից՝ այն նաև միասնականության կոչ էր, որը կամա թե ակամա կատարում էր «մենք»-ի և «նրանք»-ի բաժանում: «...Վախկոտները և թույլերը թող հեռանան հայրենիքից, դա ազգի փոշին է, թող մնան ուժեղները, նրանք, ովքեր ձգտում են իրենց հայրենիքում մարդուն արժանավայել կյանքով ապրել, նրանք ովքեր հավատք ունեն մեր ազգի սպագայի հանդեպ...»: «Թույլեր» և «վախկոտներ» ասելով՝ հեղինակը նախանշում է հասարակության այն հատվածներին, ովքեր դեմ են նոր փոփոխություններին, այսինքն՝ անկախական գաղափարներին: «Եվ մենք ուս-ուսի տալով՝ նորից կվերականգնենք մեր նախկին հզորությունը, մեր պետությունը», ավարտում է նա [7, 15]: Ինչպես նշել ենք հոդվածի սկզբում, միասնականության միֆ ստեղծելիս «նրանց» վերագրվում են համամարդկային բացասական հատկանիշներ: Այս սկզբունքով էլ հեղինակը շարադրել է հոդվածների շարքը:

Անկախական գաղափարների տարածման համար միֆաստեղծման գործընթացին ձեռնամուխ են եղել նաև «Ազգ», «Հայաստանի Հանրապետություն», «Երկիր» և մի շարք այլ պարբերականներ:

Խորհրդային Հայաստանում առկա այլախոհական և ընդդիմադիր ուժերի համառ պայքարի արդյունքում տեղի ունեցավ երկար սպասված անկախության հանրաքվեն, որին հաջորդեցին նախագահական ընտրությունները: Հասարակությունը տոգորված էր նորը կառուցելու հույսով: Մակայն նրանք չէին կանխատեսել այն բոլոր խոչընդոտները, որ իր հետ բերեց երկար փափագելի անկախությունը: Օրեցօր վատթարացող սոցիալական պայմանները, էներգետիկ ճգնաժամը, համատարած գործազրկությունն ու տարածքային անվտանգության սպառնալիքները մարդկանց գցեցին հուսալքության թակարդը: Մի քանի տարի տևած ճգնաժամային տրամադրությունները հանգեցրին նրան, որ երկրորդ նախագահական ընտրություններում հասարակության և իշխանության միջև այլևս փոխըմբռնում չկար, ինչը հանգեցրեց նոր միֆերի ստեղծման անհրաժեշտությանը: Ի տարբերություն նախագահական առաջին ընտրությունների՝ այս անգամ պայքարն անձնավորված էր: Քաղաքական թատերաբեմում ՀՀ առաջին նախագահ Լևոն Պետրոսյանը և նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանն էին: Վերջիններս, կրկին ունենալով հասա-

րակության աջակցության կարիքը, դիմեցին միֆերի օգնությանը: Առաջինը միասնականության միֆի ստեղծմանը ձեռնամուխ եղավ գործող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Նախընտրական քարոզարշավի ընթացքում Լ. Տեր-Պետրոսյանը հրավիրված մամուլի աուլիսի ժամանակ ժողովրդին հորդորեց հավատալ միայն իրենց՝ տալով միասնականության միֆի ստեղծման մեկնարկը. «Կլինեն ուժեր, որ ձեզ կխոստանան ավելի բարձր աշխատավարձեր և թոշակներ, եթե հավատաք դրանց, ուղղակի մեղք եք, ազգովի մեղք ենք»: Ի հեճուկս նրա հորդորներին՝ ընդդիմադիր մեկ այլ թեքնածու՝ ՀՀ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդատու Աշոտ Մանուչարյանը, իր հերթին ասում էր, որ երկրում տիրող իրավիճակի համար մեկ մեղավորը երկրի բարձրագույն իշխանությունն է, ինչպես նաև նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը. «Մենք շրջում ենք Հայաստանի մարզերում, ամենուր վիճակը մեկ է, տարեցները չեն ստանում իրենց թոշակը, չեն վարձատրվում ուսուցիչները... Եվ այս ամենի համար ուրիշ անուններ չտաք, համար մեկ մեղավորը նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն է և բարձրագույն իշխանությունը»: Քանի որ հիմնական պայքարը ծավալվում էր երկու թեկնածուի միջև, շուտով բոլոր ընդդիմադիր ուժերը միավորվեցին՝ առաջադրելով մեկ թեկնածու՝ «միասնականության թեկնածու», որ Վազգեն Մանուկյանն էր: Նա էլ իր հերթին ակտիվորեն օգտագործում էր միասնականության միֆը՝ կատարելով «մենք» և «նրանք» բաժանումը: Այն ավելի ակտիվացավ ընտրություններին հաջորդած հանրահավաքների ժամանակ, քանի որ դրա արդյունքները գոհացնող չէին ընդդիմադիր կուսակցությունների համար: Երկրում տիրող իրավիճակը իր արտացոլանքն էր գտնում մեղիայում: Թերթերում, ռադիոյում և հեռուստատեսությամբ հնչող իրարամերժ կարծիքները հասարակությունը բաժանել էին երկու մեծ խմբի: Իրադարձությունները անբախում չէին ընթանում. դրանք ուղեկցվում էին հանրահավաքներով, բողոքի ցույցերով, հացադուլներով: Հասարակությունը երկփեղկված էր և խոցելի: Այս պարագայում միասնականության միֆը գործեց գործող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին, սակայն այն շուտով կորցրեց իր ազդեցության ուժը, որին հաջորդեց նախագահի հրաժարականը:

Միասնականության միֆի կիրառման բազում օրինակներ կարող ենք գտնել նաև Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած բոլոր ընտրությունների ժամանակ: Այն մասնակիորեն օգտագործվեց նաև 2013 թվականի ընտրությունների ժամանակ «Ժառանգություն» կուսակցության նախագահ Բաֆի Հովհաննիսյանի կողմից, ով պայքարը ծավալում էր գործող նախագահ Սերժ Սարգսյանի դեմ: Սակայն այն կիսատ մնաց և այդպես էլ չհասավ իր կայացման գագաթնակետին: Այս առումով միասնականության միֆը իր բազմակի և լիարժեք դրսևորումներն ունեցավ 2018 թվականի «թավշյա» հեղափոխության և դրան հաջորդած իշխանափոխության ընթացքում: «Ինչպես հաճախ է լինում անցումային և ճգնաժամային փուլերում, հանգեցվեց

դիխտոմիկ պատկերացումների՝ սևի և սպիտակի, չարի և բարու հակադրությանը. արդիականացվեց և սկսեց տարածվել «Մենք–Նրանք» առասպելալույթը քաղաքական հաղորդակցություններում արթնացնելով և ակտիվացնելով մի շարք առասպելներ, որոնց միջոցով էլ փորձ արվեց լուծելու քաղաքական միջներում սիմվոլիկայի կիրառման տեսանկյունից ևս մեկ կարևոր խնդիր՝ մեկ միասնական գաղափարի շուրջ տարբեր սոցիալական շերտերի, սեռի, տարիքի, տարբեր շահեր հետապնդող մարդկանց միավորումը և համախմբումը [6, 82]: Այս պարագայում միավորման միջը «Մենք»-ի ներքո աշխատեց հոգուտ ներքին համախմբման:

Միասնականության միջի օգնությանը դիմեց նաև Երևանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը 2018 թվականի քաղաքապետի ընտրություններին նախորդած նախընտրական քարոզարշավի ժամանակ: Նրա կողմից արված արտահայտությունը՝ «Մենք սպիտակ ուժերն ենք, մյուս բոլորը սեւ ուժերը, մեր դեմը խաղ չկա» դարձել էր թևավոր խոսք և ակտիվորեն արձարծվում էր զանգվածային և սոցիալական մեդիայում: Հակադրությունների տարանջատման փորձը միանշանակ չընդունվեց հասարակության կողմից, բայց ընտրությունների արդյունքները ապացուցեցին, որ այն ունեցավ իր ազդեցությունը:

Եզրակացություն: Մեր կողմից վերլուծված տեսական գրականությունը և իրականությունից վերցված օրինակներով դրա համադրումը մեզ հնարավորություն են տալիս հանգելու այն գաղափարին, որ միասնականության միջի դիցաբանությունը կարելի է համարել քաղաքական «լեզուներից» մեկը, որը թեև առաջին հայացքից իրականացնում է միավորման գործառնություն, իրականում ցանկանում է յուրայինի և օտարի կերպարների ներմուծման միջոցով ազդել հասարակության լայն շերտերի վրա և ստանալ նրա վստահության քվեն: Այն, ինչպես այլ քաղաքական միջերը, հանդես է գալիս որպես թիրախային լսարանի հետ արդյունավետ և համաչափ հաղորդակցություն ապահովելու մեխանիզմ, որին տիրապետելը քաղաքական առաջնորդներին և ուժերին հնարավորություն կտա հասնելու ցանկալի արդյունքի: Այս ամենը կարող է իրականացվել զանգվածային մեդիա միջոցների ճիշտ օգտագործմամբ, քանի որ վերջիններիս միջոցով է տեղի ունենում հիմնական հաղորդակցումը հասարակության և իշխանությունների միջև:

Միասնականության միջը ակտիվորեն կիրառվել և շարունակում է կիրառվել ՀՀ-ում տեղի ունեցած գրեթե բոլոր քաղաքական կարևոր իրադարձությունների ժամանակ: Պատահական չէ, որ այն համարվում է քաղաքական ուժերի զինանոցի անբաժանելի մասնիկը:

Գրականություն

1. «Անկախություն» պարբերական, Կամ այսօր կամ երբեք, Երևան, 1987, նոյեմբերի 7, թիվ 3:
2. «Անկախություն» պարբերական, Դարձի գանք, Երևան, 1988, դեկտեմբերի 7, թիվ 48 (58):
3. Ջաքարյան Ս. Ա., «Մենք»-ի և «Նրանք»-ի կերպարները հայկական էպոսում, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», «ԵՊՀ» հրատ., 2018, էջ 12-28:
4. Մելքոնյան Ն. Ար., Քաղաքական միջոլոգիան 2008-ի նախագահական ընտրությունների համատեքստում | «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 2, Երևան, 2009 թ., էջ 94-101:
5. Մելքոնյան Ն. Ար., ՋԼՄ-ում կիրառվող մանիպուլացիոն հնարներն ու սոցիալ-հոգեբանական ազդեցության մեխանիզմները, Երևան, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2015, էջ 53-74:
6. Մելքոնյան Ն. Ա., Ասրիյան Է. Վ., Հայաստանյան «Թավշյա» հեղափոխության միջերը | Բանբեր Երևանի Համալսարանի, Փիլիսոփայություն, Հոգեբանություն, «ԵՊՀ» հրատ., 2018, 3 (27), 74-83 էջ:
7. «Հայք» շաբաթաթերթ, Գնացքից թռչելու ժամանակը, Երևան, 1990, թիվ 15, 16, 18, 19:
8. Յարայան Կ. Էդ., Սոցիալական դիցարարությունը որպես իրականության կառուցարկման ձևաչափ, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», «ԵՊՀ» հրատ., 2022, էջ 18-26:
9. Շափաղաթյան Հ. Ն., Լիդեր-քաղաքական գործչի հոգեբանական բնութագրերը, Երևան, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», «ԵՊՀ» հրատ., 2015, էջ 95-105:
10. Պասկևիչյան Տիգրան, Ակնաստեսի հուշերը [/https://www.google.com/search?q vid:joV_Y6oLtHk, 38:07-38-35, \(մուտք 03.17.2023\):](https://www.google.com/search?q vid:joV_Y6oLtHk, 38:07-38-35, (մուտք 03.17.2023):)
11. Жирарде Р. Политические мифы и мифологии // Политическая наука. Теоретико-методологические и историко-культурные исследования. М.: 1996, с. 47-54.
12. Ортега-и-Гассет Х. Восстание масс, изд. «АСТ», М.: 2002, с. 108-116.
13. Цуладзе А. Политическая мифология, изд. «ЭСКМО», М.: 2003, с. 383.

Миф о «Единстве» как инструмент конструкции реальности

Лиана Мартиросян

Резюме

Ключевые слова: *политические мифы, контрасты, большинство, спираль молчания, борьба, политическая программа, мифотворчество*

В статье мы попытались исследовать архетипические основания мифа о единстве, обеспечивающие его устойчивость, основные мифологемы, составившие семантическое поле исследуемого мифа, закреплённые за ним в сознании элит и рядовых граждан. На основе данных прикладных исследований, реализованных при участии автора, делается вывод об амбивалентности мифа о единстве, ценностном расхождении элит и граждан, различных коннотациях единства в массовом и элитарном сознании, обозначившихся линиях социальных расколов, когнитивном диссонансе, фрустрациях, сдерживающих формирование целостного и непротиворечивого представления о государстве.

Статья посвящена изучению политических мифов, которые используются в политике как форма коммуникации между обществом и политическим субъектом. Эти истории играют важную роль в формировании нашей культуры и не лишены политических тем. В частности, раскрыта сущность мифа о единстве, актуальность которого возрастает в периоды социальных кризисов, когда обществу нужны новые объединяющие символы или когда у человека возникает проблема ориентации и выбора. В статье также анализируется формирование политических мифов, которые распространяются благодаря современным коммуникационным технологиям и СМИ. Утверждается, что помимо негативного влияния на общественное сознание, миф может иметь и положительный эффект, который выражается в мобилизации общества, без чего иногда невозможно преодолеть кризис. Методологическую основу статьи составляют методы анализа, сравнения, и обобщения. В ходе исследования мы также применяли методы объединения и историзации архивных видеоматериалов, а также других научных материалов. Эта статья призвана предложить новый подход к анализу мифов и той роли, которую они играют в области политических наук.

The Myth of “Unity” as a Reality Construction Tool

Liana Martirosyan

Summary

Key words. *political myths, contrasts, majority, spiral of silence, struggle, political program, myth-making*

This article is an attempt to explore the archetypal foundations of the myth of unity, which ensure its stability, the main mythologemes that form the semantic field of the myth under study, attached to it in the minds of elites and ordinary citizens. Based on the applied research data, implemented with the participation of the author, the conclusion is made about the ambivalence of the myth of unity, the value mismatch between elites and citizens, the various connotations of unity in the mass and elite consciousness, the lines of social splits that have emerged, cognitive dissonance, frustrations that hinder the formation of a holistic and consistent representation about the state.

The article is devoted to the study of political myths used in politics as a form of communication between society and a political subject. These stories play an important part in shaping our culture and are not devoid of political themes. In particular, we have revealed the essence of the myth of unity, the relevance of which grows in times of social crisis when society needs new, unifying symbols or when a person has a problem of position and choice. The article also analyzes the nature and features of the formation of political myths, which are widely used due to modern communication technologies and mass media. It is argued, that in addition to the negative impact on public consciousness, the myth can also have a positive effect, which is expressed in the mobilization of society, without which it is sometimes impossible to imagine overcoming the crisis. This paper aims to suggest a new approach towards the analysis of myths and the role they play in the field of political sciences.

Ներկայացվել է 01.04.2023 թ.

Գրախոսվել է 14.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИОВЕДЕНИЕ

HISTORICAL STUDIES

**Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը
Կ. Պոլսի կոնֆերանսում**

Յուրիկ Ղույան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-185>

Հանգուցային բառեր. *Հայկական հարց, կոնֆերանս, պատվիրակություն, բանակցություն, տարածքային հարցեր, դեսպան, անկախություն, պայմանագիր*

Նախաբան

Մերօրյա աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների, հայ-թուրքական բանակցությունների պայմաններում Հայաստանի առաջին Հանրապետության պատմության՝ մասնավորապես արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը ոչ միայն կարևոր է, այլև արդիական՝ հասկանալու համար տարածաշրջանի նկատմամբ ինչպես Թուրքիայի, այնպես էլ եվրոպական պետությունների հետաքրքրություններն ու հետապնդած նպատակները: Բաթումի պայմանագրի կնքումը տեղի ունեցավ առանց Թուրքիայի դաշնակիցների մասնակցության: Գերմանիան, կանգնած լինելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրա, հանդես եկավ Բաթումում ընդունված որոշումները վերանայելու առաջարկությամբ: Գերմանիան մտադիր չէր իր տնտեսական շահերը գոհաբերելու Թուրքիայի քաղաքական նպատակներին: Նախատեսվեց Կ.Պոլսում հրավիրել խաղաղության կոնֆերանս, որտեղ պիտի լուծվեին Թուրքիայի և Կովկասի միջև գոյություն ունեցող բոլոր չլուծված հարցերը, ինչպես նաև սահմանային հարցերը Անդրկովկասյան հանրապետությունների միջև [10, 186]: Խրախուսված այն հնարավորությունից, որ Հայաստանը ստիպված չի լինի վավերացնելու Բաթումի պայմանագիրը, Հայոց Ազգային խորհուրդը շտապ մի պատվիրակություն ուղարկեց Կ. Պոլիս [5, 8]:

ՀՀ պատվիրակության բանակցությունները Քառյակ Միության ներկայացուցիչների հետ

Հայկական պատվիրակությունը Կ. Պոլիս ուղևորվեց Օսմանյան կառավարության հրավերով [5, 8], ուր բանակցություններ էր վարելու Օսմանյան Թուրքիայի ու նրա դաշնակից պետությունների հետ: Հայկական պատվիրակության գործունեությունը նպատակաուղղված էր լինելու հայ ժողովրդի շահերի տեսանկյունից ծանր ու անընդունելի Բաթումի պայմանագրի համեմատավելի նպաստավոր պայմանագրի ստորագրումն ապահովելուն [7, 109]: Հայաստանի Հանրապետության համար կենսական էին նրա անկախության միջազգային ճանաչումը, պետության սահմանների ընդլայնումն ու դրանց

անվտանգությունը, ժողովրդի կյանքի խաղաղ պայմանների ապահովումը [7, 108]: Պատվիրակությունն ուներ հետևյալ կազմը՝ նախագահ՝ Ավ. Ահարոնյան, պատվիրակներ՝ Ալ. Խատիսյան, Մ. Պապազանյան, զինվորական խորհրդական՝ գեներալ Գ. Կորգանյան, խորհրդական քաղաքացիական և աշխարհագրական խնդիրների համար՝ Գ. Խատիսյան և Մ. Բունիաթյան, գործերի կառավարիչ և առաջին քարտուղար՝ Հ. Քոչարյան, քարտուղար և հաշվապահ, միաժամանակ և տպագրող՝ Տ. Միրզոյան, քարտուղար և թարգման՝ Ֆ. Թախթաշյան, Լ. Լիսիցյան – դիվանագիտական կուրիեր և քարտուղարի օգնական, համհարզ առաջին – գնդապետ Շահբազյան, երկրորդ համհարզ – պորուչիկ Աղաբաբյան, կուրիերի դիպլոմատիկ – Հովհ. Բերբերյան, սպասավորներ Ա. Հարությունյան և Զ. Սիմոնյան [3, 228]: 1918 թ. հունիսի 13-ին Թիֆլիսից ճանապարհ ընկած հայկական պատվիրակությունը Կ. Պոլիս է հասնում հունիսի 19-ին [3, 119]: Պատվիրակությունը հունիսի 22-ին այցելում է Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, Խալիլին, Կ. Պոլսում գերմանական դեսպան Ի. Հ. Բերնսդորֆին: Հատկապես նվաստացուցիչ էին հանդիպումները մեծ վեզիր Թալեաթի և ռազմական նախարար Էնվերի հետ: Ավ. Ահարոնյանի, Ալ. Խատիսյանի և առաքելության քարտուղար Հակոբ Քոչարյանի զեկուցագրերը նկարագրում էին նվաստացուցիչ հանդիպումները Էնվերի և Թալեաթի հետ: Աղերսարկումները այնքան նվաստացան, որ ստիպված երախտագիտություն հայտնեցին Օսմանյան կայսրությանը՝ հայկական հանրապետության հիմնադրումը թույլատրելու համար: Այս քննարկումների ընթացքում Թալեաթը հայկական աղետի մեղքը գցում էր քրդերի, զինվորական իշխանությունների և տեղական անպատասխանատու պաշտոնյաների վրա, բայց նաև դատապարտում էր հայերին օսմանյան հայրենիքի նկատմամբ անհավատարմության համար [9, 55]: Առաջին իսկ հանդիպումների ժամանակ հայկական պատվիրակությունը Թալեաթ փաշային, ապա և Էնվերին ներկայացնում են Հայաստանի ազգաբնակչության սարսափելի կացությունը, գաղթականների թշվառ վիճակը, հանրապետության սահմանափակ տարածքների պատճառով կենսագործունեության հնարավորության բացակայությունը [2, 264]: Թալեաթ փաշան առանձին կարևորություն չի տալիս Հայաստանի անկախության հռչակագրին և հայ ժողովրդին հուզող կենսական խնդիրներին: Թուրքական բարձրաստիճան պաշտոնյաները հանդիպումների ընթացքում պատվիրակների գործնական հարցադրումներին տալիս են վերացական ու խուսափողական պատասխան: Բանակցությունների ընթացքում թուրքական կողմից շողոքորթությունների պակաս չկար, սակայն գործնական քայլերը բացակայում էին: Հայ պատվիրակները այցելությունից տպավորություն են ստանում, որ թուրքերը ցանկանում են կոնֆերանսը վեր ածել հասարակ ձևականության: Թուրքերը շեշտում էին, որ Բաթումում ամեն ինչ վերջացած

է, դաշնագիրը՝ ստորագրված, ուստի պետք էր, որ միայն ձևականորեն ստորագրեին նաև տերությունները [3, 171]:

Հայ-թուրքական բանակցությունների ընթացքում քննարկվող հիմնական հարցերից մեկը վերաբերում էր Թուրքիայի ու Հայաստանի միջև միություն ստեղծելու հարցին: Դեռևս հունիսին Էնվեր փաշայի հետ հայկական պատվիրակության առաջին հանդիպման ընթացքում նա խոսակցություն է բացում Թուրքիայի ու Հայաստանի միջև միության մասին: Էնվեր փաշան հայ պատվիրակներին վերապահությամբ էր ընդունում, համակրանք չէր ցուցաբերում և կտրականապես մերժում էր Հայաստանի համեստ ընդլայնման ամեն մի խնդրանք [10, 56]: Էնվեր փաշան, հայերին կշտամբելով օսմանյան հայրենիքի նկատմամբ անհավատարմության, Ռուսաստանի և Անգլիայի հետ հույսեր կապելու համար, Հայաստանի կառավարությունից պահանջում էր Թուրքիայի հետ լինել ոչ միայն լավ հարևաններ, այլև լավ դաշնակիցներ, նրա հետ մտնել կոնֆեդերացիայի մեջ, կնքել «սրտակից համաձայնություն» [8, 110]: Էնվերի փաշայի նախագիծը Հայաստանի կառավարության մոտ ոչ մի խանդավառություն չառաջացրեց, ուստի և չէր շտապում պատասխանի հարցում: Էնվերը ավելացնում է, որ մինչ սրտակից համաձայնագրի կամ համադաշնության մասին պայմանագրի ստորագրումը ոչ մի կարևոր հարցեր – ոչ տարածքային, նույնիսկ փախստականների – չեն կարող ընդունվել քննարկման համար [20, 58]:

Անդրկովկասյան երեք հանրապետությունների սահմանային վեճերը Կոստանդնուպոլսում դրվեցին կենտրոնական տերությունների ներկայացուցիչների առջև: Այնուհանդերձ, նրանք շարունակում էին հանդիպումներ ունենալ առանձին պետական գործիչների հետ՝ ներկայացնելով նոր հուշագրեր և պահանջագրեր [10, 290]: Հանդիպումների ընթացքում հայկական պատվիրակությունը, որպեսզի սպացուցեր իր պահանջների արդարացիությունը, քննարկման ներկայացրեց աղյուսակներ, քարտեզներ և վիճակագրական տվյալներ: Եթե հանրապետությունը տարածվեր մինչև Բրեստ-Լիտովկի գծած սահմանները, կընդգրկեր շուրջ 52.000 քառակուսի կիլոմետր և կունենար գոյատևելու հնարավորություն: Բայց խնդիրը չափազանց բարդ էր, քանի որ այս տարածքի մեծ մասը՝ Երևանի նահանգը և Ելիզավետպոլի ու Թիֆլիսի նահանգների մի քանի շրջաններ, պահանջվում էին նաև կամ Վրաստանի և կամ Ադրբեջանի կողմից: Եթե անգամ Օսմանյան կայսրությունը հանձներ Բրեստ-Լիտովկի սահմաններից արևելք ընկած հողերը, Հայաստանը կընդգրկեր պարզապես Անդրկովկասի միայն 8 տոկոսը՝ հազիվ 15. 500 քառակուսի կիլոմետր տարածք՝ նաև Վրաստանի և Ադրբեջանի հավակնությունները իրագործվելու պայմաններում: Կենտրոնական տերությունները կարող էին, սակայն, արդարություն և խաղաղություն հաստատել

տարածաշրջանում՝ հավանություն տալով հայկական առաջարկին, որով Ադրբեջանին տրամադրվում էր Անդրկովկասի 38 տոկոսը, Վրաստանին՝ 33 տոկոսը և Հայաստանին՝ 29 տոկոսը: Այսպիսի լուծմանը առարկեցին Եվգենի Գեգեչկորու գլխավորած վրացական պատվիրակությունը և ադրբեջանական պատվիրակությունը [9, 57]: Ադրբեջանը նաև վիճարկում էր Վրաստանի իրավունքը Թիֆլիսի նահանգի մի զգալի տարածքի վրա՝ պահանջելով ամբողջությամբ կամ մասամբ Սդնախի, Թիֆլիսի, Բորչալուի, Ախլցխայի և Ախալքալաքի շրջանները, և քանի որ Հայաստանն էլ պահանջում էր Ախալքալաքն ու Բորչալուի կեսը, ուստի բոլոր երեք Անդրկովկասյան հանրապետություններն էլ ներքաշված էին այս մրցակցության մեջ: Ադրբեջանի տարածքային հավակնությունները, որ շատ ավելի ընդարձակ էին, քան մյուս պետություններինը, ընդգրկում էին Անդրկովկասի գրեթե երկու երրորդը, և եթե դրանք բավարարվեին, ապա Հայաստանը կսահմանափակվեր շուրջ 8.000 քառակուսի կիլոմետրով, փոքր-ինչ ավել, քան 1918 թ. հունիսին հանրապետության նախապես փրկված լեռնոտ տարածքը: Կ.Պոլսում գտնվող հայկական պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը Բաթումում գտնվող հայկական պատվիրակության ղեկավար Սամսոն Հարությունյանին հուլիսի 4-ին ուղարկված հեռագրում պահանջում էր. «հատուկ ցրիչի միջոցով մանրամասն նամակներ և Հայաստանի 20 վերստ մասշտաբով տասնյակ քարտեզներ ուղարկեք» [6, 177]:

1918 թ. հուլիսի 8-ին Կ.Պոլսի համաժողովի հայկական պատվիրակությանը ուղարկված հեռագրում ՀՀ կառավարությունը պահանջում էր ուղղում մտցնել Բաթումի պայմանագրի մեջ և Շուշիի, Կարեազինոյի, Ջիվանշիրի, Գանձակի, Զանգեզուրի, Դարալագյազի, Շարուրի և Նախիջևանի տարածքները ճանաչել որպես ՀՀ անբաժանելի մաս: Ադրբեջանն իր հերթին շտապում էր «թուրքական սվիններով գրավել Ղարաբաղը և այնտեղ նշանակել իր պաշտոնյաներին» [1, 18]:

«Ադրբեջանական պատվիրակությունը ելնելով հարցի կարևորությունից ջանք չէր ինայում չեզոքացնելու հարևան Վրաստանի ու Հայաստանի Ադրբեջանից ունեցած տարածքային պահանջները: Ադրբեջանական պատվիրակության համար ամենից շատ պրոբլեմներ ստեղծում էին հայկական պատվիրակները, որոնք փորձում էին իրենց օգտին զիջումներ ստանալ ինչպես Թուրքիայից, այնպես էլ Ադրբեջանից» [19, 138-139],– տեղեկացնում էր Սամեդ Էմին Ռասուլզադեն: Ըստ Ռասուլզադեի՝ Էնվեր փաշային ներկայացրած նախագծի՝ հայերը Թուրքիայից պահանջում էին Սուրմալուն, Նախիջևանը, Ախալքալաքը, Էջմիածինը և Երևանը, իսկ Ադրբեջանից՝ Ղազախի, Ղարաբաղի, Զանգեզուրի և Օրդուբադի գավառները [19, 138-139]: Այդ կապակցությամբ ադրբեջանական կառավարության ղեկավար Ֆ.Խոյսկին, Է.

Ռասուլզադեին հրահանգավորելով, գրում էր. «Ձեզ պետք է ամենուր պաշտպանել Ադրբեջանի սահմանները, եթե հայերը Ղարաբաղի նկատմամբ հավակնություններ հանդես բերեն, այդ դեպքում հրաժարվեք Երևանը և Ղազախի շրջանի մասը հայերին հանձնելուց, իսկ եթե հայերը կանգնած կմնան բանավոր համաձայնության վրա, ապա նույնիսկ կարելի է նրանց զիջել Երևանի գավառի մի մասը» [19, 139]: Հայաստանի հետ սահմանային վեճերում Է. Ռասուլզադեն զբաղեցնում էր բավականին կոշտ դիրքորոշում՝ հանդես գալիս հայկական կողմին որևիցե զիջում անելու դեմ: «Հայերին այդ հարցերով զիջման գնալով նշանակում է հնարավորություն տալ բորբոքելու նրանց ախորժակը» [19, 139],– ասվում էր Մ. Հաջինսկուն ուղարկած նրա հաղորդման մեջ:

Իր կենսական տարածքների ընդլայնմանը ձգտող ՀՀ պատվիրակությունը մի շարք փորձեր արեց՝ Թուրքիայի ղեկավարների մոտ արժարժեքով տարածքային հարցեր [2, 264]: Տարածքային հարցերում Թուրքիան անվերապահ աջակցում էր Ադրբեջանին ու վճռականորեն դեմ արտահայտվեց Ղարաբաղն ու Չանգեզուրը Հայաստանին տալու հարցին:

Կոնֆերանսը, որ առաջարկվել էր բացել հունիսին, հետաձգվեց երեք շաբաթով՝ կապված այն բանակցություններով, որ այդ ժամանակ անմիջականորեն տեղի էին ունենում Գերմանիայի ու Թուրքիայի միջև: Հուլիսի 4-ին Ավ. Ահարոնյանը Կ. Պոլսից հաղորդում էր, որ «Կոնֆերանսը կսկսի երկու շաբաթից» [6, 177]: Իսկ արդեն հուլիսի 23-ին նա հեռագրով հայտնում է, որ կոնֆերանսի բացման վերաբերյալ դեռևս չի հաղորդվում [11, 125]:

ՀՀ պատվիրակությունը Կ.Պոլսում հավատարմագրված դեսպանների հետ պարբերական հանդիպումների ընթացքում քննարկում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վավերացման, Բաթումի պայմանագրի անօրինականության, Հայաստան գինվորական և դիվանագիտական ներկայացուցիչներ ուղարկելու, այլ երկրների կողմից Հայաստանին ռազմական աջակցություն ցույց տալու հարցերը: Նրանց հանձնվել էին քարտեզներ, տնտեսական, պատմական, աշխարհագրական բնույթի զեկուցագրեր, տեղեկանքներ ու հուշագրեր [12, 162]: Ամփոփելով Կ.Պոլսում հանդիպումների ու քննարկումների առաջին արդյունքները՝ 1918 թ. հուլիսի 19-ին Ավ. Ահարոնյանը ազգային խորհրդին գրում է. «Ինչ էն մտածում թուրքերը դեպի Բրեստ-Լիտովսկի սահմանները գնալու մասին՝ տակավին չիմացանք, բայց բոլոր դեսպանները՝ բուլղարական, գերմանական և ավստրիական, միաբերան պնդում են, որ իբր թե Բաթումի դաշնագիրը չեն ընդունում, չեն ընդունելու և այս հայեցակետը պիտի լինի առաջիկա կոնֆերանսի հիմունքը» [13, 125]: Այսպիսով՝ Կ. Պոլսի հայկական պատվիրակության համար գնալով պարզ էր դառնում, որ խորհրդաժողովը շուտով չի կայանալու: Դա պայմանավորված էր նրանով, որ «Գերմանացիները հապաղումի պատճառը բարդում էին թուրքերի վրա, մինչ-

դեռ ենվերը և Թալեաթը իրենց հերթին պատասխանատվությունը գցում էին Բեռլինի վրա: Երկու կենտրոնական տերությունների տեսակետերն այնքան խիստ էին հակադրված միմյանց, որ երկուսն էլ չէին ուզում մերկացնել իրենց անհամաձայնությունները միջազգային խորհրդաժողովի առջև» [9, 55]: Պատճառներից մեկն էլ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի հարցում թուրք-գերմանական հակասությունն էր: Հայկական հարցի և ընդհանրապես Անդրկովկասին վերաբերող բոլոր հարցերի լուծման ծանրության կենտրոնը տեղափոխված էր Բեռլին: Կ. Պոլսում ու Բեռլինում գտնվող հայկական զույգ պատվիրակությունները հույսեր էին կապում Քառյակ դաշինքի երկրների՝ գլխավորապես Գերմանական կայսրության հետ:

Գերմանացիները աջակցության խնդրանքով Թիֆլիսում իրենց դիմած հայկական կառավարությանը պատասխանեցին, որ գերմանական ազդեցությունը միայն Վրաստանի վրա է տարածվում [20, 49]: Անդրկովկասի նկատմամբ Գերմանիայի դիրքորոշումը հանգում էր հետևյալին. «Անդրկովկասի երկու՝ վրացա-հայկական ու թաթարական մասերի բաժանման գաղափարը այժմ, երբ Անդրկովկասյան միությունը քանդվել էր, անշուշտ, հանդիսանում է միակ հնարավորը այն բանի, որ ծայրահեղ դեպքում ինչ-որ բան մեզ համար կփրկվի...» [20, 243].- ասված էր հունիսի 28-ին Կ. Պոլսի կայսերական Գերմանիայի ներկայացուցչությանը Բեռլինից ուղարկված կառավարական դիրքորոշման մեջ [7, 35]: Գերմանիան համառորեն մերժում էր Հայաստանի Հանրապետության պաշտոնական ճանաչումը՝ հայտարարելով, թե չի ընդունի Բաթումի պայմանագիրն անգամ Հայաստանի կողմից այն վավերացնելու դեպքում: Ավելին՝ ԱԳ նախարարի տեղակալ Գյոպերտը նույնիսկ հավանություն չէր տալիս Հայաստանի կառավարության ներկայացուցիչների Բեռլին գալուն՝ նշելով, թե դրանով հայերը գրգռած կլինեն տաճիկներին [14, 49, 50]: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Ի. Հ. Բերնսդորֆը հունիսի 23-ին Ավ. Ահարոնյանի և Ալ. Խատիսյանի հետ տեսակցության ժամանակ մատնանշում էր, որ Գերմանիան կանգնած է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի տեսակետի վրա՝ առաջ քաշելով Վրաստանի և Հայաստանի որևէ հիմունքներով «փոխադարձ համաձայնությամբ միանալու» գաղափարը: Ըստ դեսպանի՝ «Գերմանիան հատկապես հետաքրքրվում է Վրաստանով այն պատճառով, որ նրա և Վրաստանի միջև վաղուց ի վեր գոյություն ունեւ առանձին համաձայնություն, իսկ Հայաստանի վերաբերմամբ այդպիսի բան չկա» [2, 267]: Գերմանիան, որ պարտավորվել էր ճանաչել Վրաստանի անկախությունը, մտադիր չէր բավարարել հայկական խնդրանքներն ու ստանձնել Հայաստանի հովանավորությունը, առավել ևս՝ պաշտպանել հարևան Վրաստանի ու Ադրբեջանի տարածքային հավակնություններին: Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ի. Հ. Բերնսդորֆը Կ. Պոլսից 1918 թ. հուլիսի 8-ին Բեռլին ուղարկած

գրության մեջ, անդրադառնալով անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանային հարցի կարգավորմանը, կարծիք էր հայտնում, որ Անդրկովկասյան պետությունների սահմանների վերջնական ու բացառապես ճիշտ որոշումը պետք է պարտադիր կերպով կատարվի Կոստանդնուպոլսի կոնֆերանսի միջոցով, այնպես որ հնարավորության սահմանում պիտի պաշտպանվեն վրացական շահերը (օրինակ՝ Սուլուում, Զաքաթալա, Բորչալուի գավառ) [19, 550]: Ըստ նրա՝ Վրաստանը մտնելու էր գերմանա-ավստրո-հունգարական շահերի ոլորտը, Ադրբեջանը՝ թուրքական, իսկ Բաքուն՝ ռուսական (նկատի ուներ Խորհրդային Ռուսաստանը): Ինչպես տեսնում ենք, Հայաստանը հիշյալ ցանկից դուրս էր, և զուր էին Գերմանիայից նրա ակնկալիքները: «Վրացիք օգտվում են մեր հովանիից, թաթարները՝ թուրքերի, դուք էք, որ մնացել եք օդի մեջ, թող ավստրիական հովանին էլ ձեզ վրա լինի, նամանավանդ, որ Ավստրիան բնավ կասկածներ չի հարուցանել, թե շահեր է հետապնդում, ինչ մեզ են վերագրում» [13, 125],– ասել էր գերմանական դեսպան Ի. Ն. Բերնսդորֆը: Գերմանիայի արտաքին գործերի գծով պետական քարտուղար Պ. Ֆոն Հինցեի հետ հուլիսի 26-ին ունեցած հանդիպումից և նրա բարեհաճ համաձայնությունը ստանալուց հետո հայկական պատվիրակությունը հուշագրերով խնդրում էր ճանաչել Հայաստանի անկախությունը, շուտափույթ 3-4 հազար զինվոր ուղարկել Անդրկովկաս Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված սահմաններն ապահովելու, հայ փախստականների տունդարձը կազմակերպելու նպատակով կանխել թուրքերի կողմից հայկական գավառներին սպառնացող վտանգները, Երևանում նշանակել գերմանական դիվանագիտական ներկայացուցիչ, առևտրական կոմիսսար կամ ներկայացուցիչ՝ պարտավորվելով անմիջապես Գերմանիա առաքել պղինձ և բամբակ [16, 163-164]: Պ. Ֆոն Հինցեի հետ գրույցից ստացած ընդհանուր տպավորությունն այն էր, որ Գերմանիան հնարավորություն չպետք է ունենա Հայաստանին իրապես օգնելու՝ ստիպելով Թուրքիային հեռանալ գրաված վայրերից, որովհետև Գերմանիան շատ էր վախենում, որ Թուրքիան կարող է միանալ Անգլիային ու Ֆրանսիային:

Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի կողմից Բրեստի դաշնագրի վավերացման մասին հայ պատվիրակները տեղեկացան հուլիսի առաջին կեսին: Դաշնագրերը վավերացնելու ցանկություն էր հայտնել և Հազգը փաշան՝ վերապահումով, որ Բրեստի պայմանագիրը ընդունում են այն չափով, ինչ չափով չի հակասում Բաթումի պայմանագրին [2, 277]: Թուրքերն ամեն կերպ փորձում էին կառչած մնալ Բաթումի պայմանագրից, հատկապես այն կետերից, որոնք վերաբերում էին Հայաստանին:

Կ. Պոլսում Հայաստանի դրությունը թեթևացնելու համար գերմանական դեսպանի հետ բանակցությունները հաջողություն չունեցան: Կոմս Բենս-

դորժը, արտահայտելով իր կարծիքը, օգոստոսի 12-ին հայկական պատվիրակությանը հայտարարեց, որ ոչ մի միջոց գոյություն չունի Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար ու խորհուրդ տվեց դիմել Իսպանիային: Ըստ նրա՝ Իսպանիան, լինելով չեզոք ու Թուրքիայի վստահությանը վայելող երկիր, կարող էր օգնել Հայաստանին: Բերնսդորժը ավելացրեց, որ նրա կառավարությունը և անձամբ ինքը հանդիսանում են հայկական անկախության կողմնակիցը [20, 54], բայց չեն կարող պնդել, որ թուրքերը սահմանափակվեին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանած տարածքներով, քանի որ Գերմանիայի դրությունը այնպիսին չէ, որ նա Թուրքիայի հանդեպ չափազանց անհանդուրժող դիրք գրավի: Սակայն, երբ հերթը հասնում էր գործնական քայլերին, գերմանական դիվանագետները, մոռացության մատնելով խոստումները, հրաժարվում էին Թուրքիայի վրա ճնշում գործադրելուց: Թուրքիային պատերազմ հայտարարելը կամ ռազմական ու ֆինանսական աջակցությունից զրկելը նրանք համեմատում էին ինքնասպանության հետ՝ բացատրելով, որ Թուրքիան գերմանական զենքն ու փողը գործադրում է Միջագետքի և Պաղեստինի ճակատներում ընդհանուր թշնամու դեմ: Բացի այդ՝ Գերմանիան հրաժարվում էր Անդրկովկաս ռազմական ուժ ուղարկելուց՝ մի կողմից պատճառաբանելով, թե մարդուժի տեսակետից շատ նեղ դրության մեջ է, իսկ մյուս կողմից՝ հայ պատվիրակներին հուսադրելով, թե Անտանտի երկրները կաջակցեն, քանի որ նրանց պատերազմական նպատակներից մեկն էլ Հայաստանի ազատագրումն է թուրքերից [2, 180-181]: Հաշվի առնելով Ռուսաստանի ավանդական շահերն Անդրկովկասում և հենվելով Բեռլինում ընթացող խորհրդա-գերմանական գաղտնի բանակցություններում մշակված հիմնադրույթների վրա՝ Գերմանիայի կառավարությունը մտադիր էր ճանաչելու միայն Վրաստանի անկախությունը, իսկ Հայաստանի ու Ադրբեջանի պարագայում երաշխավորելու Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պահպանումը, այսինքն՝ այդ տարածքների անցումը Ռուսաստանին՝ Բաքվի նավթից բաժին ստանալու և Վրաստանը գերմանական ազդեցության ոլորտ ներառելու պայմանով [7, 112]:

Որքան էլ Կ.Պոլսի կոնֆերանսի շուտափույթ սկսման մասին խոսակցությունները չէին դադարում, այն որոշ ժամանակ անց կորցրեց իր օրախնդիր լինելու իմաստը, քանի որ բոլոր հարցերը, որ վերաբերում էին Կովկասի մասնակցությանը, շատ թե քիչ լուծվեցին Բեռլինում և Վիեննայում [20, 62]: Գերմանացիները՝ ի դեմս գեներալ Օտտո ֆոն Լոսսովի, խորհուրդ էին տալիս հետևողական կերպով թուրքերից խնդրել վերադարձ Բրեստ-Լիտովսկի սահմաններ, իսկ երեք պետությունների վեճերը լուծել Կովկասում դաշինքի բոլոր պետությունների միջնորդությամբ և ոչ թե միայն Թուրքիայի [2, 195]:

Հայկական հարցում ձեռքերը լվանալով՝ Գերմանիան «խղճի առաջ

հանգստանալու համար» Հայաստանի պրոտեկտորատն առաջարկեց Ավստրո-Հունգարիային [20, 55]: Վիեննայի կառավարությունը ողջամիտ չհամարեց Կովկասի ազդեցության ոլորտների բաժանումը, քանի որ Գերմանիան իր համար արդեն վերցրել էր լավագույն պատանները՝ պնդելով խառը ավստրո-գերմանական պրոտեկտորատի վրա: Արտահայտելով կայսրության կառավարության հիմնադրությունները՝ Կ.Պոլսում ավստրիական զինվորական ներկայացուցիչ գեներալ Յոզեֆ Պոմյանկովսկին հունիսի 23-ին հայ պատվիրակների հետ գրույցի ժամանակ ասել էր. «Պետք է հասկանալ հայերի հոգեբանությունը, նրանք արժանի են ազատության և լավ տարածքի» [17, 18]:

Ավստրո-Հունգարիան ցանկություն չունեւր Հայաստանի պատճառով իր հարաբերությունները փչացնել Թուրքիայի հետ, և դա էր պատճառը, որ Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու խնդրի պարզաբանման հարցում բանակցում էր Գերմանիայի հետ՝ առաջ քաշելով իր տնտեսական շահերը: Զթաքցնելով, որ Կովկաս զինվորական մասեր ուղարկելով կարելի է ապահովել հումք և առաջին հերթին՝ նավթ, Ավստրո-Հունգարիայի ԱԳ նախարար Իշտվան ֆոն Բուրիանը կարծում էր, որ ավստրո-հունգարական արշավախումբը ռազմական և քաղաքական առկա պայմաններում կարող է լինել ցանկալի, քանի որ կայսրությունը զգալիորեն կընդարձակի իր ազդեցության ոլորտները: «Կա վտանգ,– զգուշացնում էր նախարարը,– որ մեր զորքերը կգործեն հեռավոր, ճանապարհագուրկ, պարենով աղքատ, քաղաքականապես թույլ կազմակերպված Հայաստանում» [2, 280]: Այդ կապակցությամբ առաջարկվում էր լսել գլխավոր շտաբի պետին և զեկուցել Վիեննա: Օգոստոսի 11-ին ավստրիական զինվորական ներկայացուցիչ գեներալ Յ. Պոմյանկովսկին պատվիրակությանը հայտարարեց Հայաստանին օգնելու կառավարության համաձայնության մասին և հայտնեց, որ Երևան են ուղարկվելու ավստրիական երկու գումարտակ՝ կազմված լեհ զինվորներից, որպեսզի բնակչությունը զգա պաշտպանություն և հանգստանա: Թուրքիայում ավստրիական ներկայացուցիչները ընդհանրապես առաջ էին տանում Հայաստանի նկատմամբ Ավստրիայի հովանավորության գաղափարը՝ հենվելով այն փաստի վրա, որ Ավստրիան միակ պետությունն է, որ գտնվում է թուրքերի հետ բարեկամական հարաբերությունների մեջ: Մասնակի ձևով պատվիրակությանը հասկացվում էր, որ Ավստրիան լավ է տրամադրված հայերի հանդեպ, շնորհիվ Վիեննայի Մխիթարյան միաբանության գործունեության, դեմ չի լինի իր թագաժառանգներից մեկի հայկական գահի թեկնածությանը: Սակայն, կապված ավստրիացիների՝ թուրքերի հետ հարաբերությունները փչացնելու մտավախության հետ, նախագիծը շուտով թողնվեց: Ավստրիական նախագծերի ձախողմանը ավելի էր նպաստում այն հանգամանքը, որ Հայաստանում բոլոր ճանապարհներն ու հաղորդակցության միջոցները

գտնվում էին թուրքերի ձեռքում: Օգոստոսի 13-ին Յ. Պոմյանկովսկին ՀՀ պատվիրակությանը հայտնեց, որ Երևան կուղարկվի միայն մեծ միասիա՝ 100 մարդուց բաղկացած պահակախմբով, որպեսզի «թուրքերի վրա հոգեբանորեն ազդելու «հնարավորություն ստանա, իսկ զինվորական արշավախումբը չեղարկվում է»: Դրա հետ միասին ավստրիական կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում իր մոտ ունենալու հայկական ներկայացուցչի: Գեներալ Յ. Պոմյանկովսկին հետագայում աջակցեց հայերին իր կառավարության առջև հայկական անկախությունը պահպանելու անհրաժեշտության ու փախստականների վերադարձի հարցում, բայց այդ հարցերը իրենց լուծմանն էին սպասում ձգձգվող կոնֆերանսում [20, 52]:

Կ. Պոլսի բանակցություններում ՀՀ պատվիրակությունն առաջին հերթին աջակցություն էր փնտրում բուլղար պատվիրակներից՝ հենվելով այն ավանդույթների վրա, որ վաղուց կապում էր Բուլղարիան Թուրքիայի դեմ պայքարող հայկական կազմակերպությունների հետ: Օգոստոսի 14-ին պատվիրակությունը խորհրդակցություն ունեցավ բուլղարական դեսպանորդ Կուլուշևի հետ, որը, Կ. Պոլսում կոնֆերանսի հրավիրումը ծայրաստիճան կասկածելի համարելով, հայտարարեց, որ երևի թե ուրիշ միջոց չի մնում Հայաստանի հարցի լուծման համար, քան Երևանում ռուսական իշխանության վերականգնումը: Նման հանգամանքը, նրա կարծիքով, պետք է հայերին բավարարեր՝ ավելացնելով, որ Բուլղարիան որոշել է Երևան ուղարկել զինվորական առաքելություն: ՀՀ պատվիրակությունը տարբեր աղբյուրներից ստացված հաղորդումներից պարզեց, որ բուլղարական կողմն իր դիրքորոշման մեջ անկեղծ չէր և որ Հայաստանի հաշվին առևտրի մեջ էր թուրքերի հետ: Որքան էլ Կուլուշևը փորձում էր ժխտել իսկությունը, պարզվեց, որ Կարսից, Արդահանից ու Բաթումից ռուսական զորքերի դուրսբերման վերաբերյալ Բրեստ-Լիտովսկում թուրքերի կողմից առաջադրված պահանջի նախաձեռնությունը եկել էր հենց բուլղարական պատվիրակությունից, որը, այդ հարցում թուրքերին աջակցություն խոստանալով, վերջինից դրա դիմաց փոխհատուցում էր պահանջել Դոբրուջայի հարցում: Ավելին, Կուլուշևը ավստրիական դեսպանին խնդրել էր թուրքերին հասկացնել, որ Բուլղարիան նույնպես ձեռնպահ կմնա Թուրքիայի և Անդրկովկասի միջև սահմանների հաստատման հարցում ու կպնդի Բրեստ-Լիտովկսկի պարտավորվածությունների պահպանման վրա: «Բուլղարիայի մասին աւելորդ է ըսել, թէ իրական օգնութիւն մը սպասել կարելի չէր, անոր միջամտութիւնը ոչ միայն պլատոնական սիրային խօսքերէն անդին չէր անցնէր, այլև իր Թուրքիայի հետ ունեցած խնդիրներն իր շահերուն համապատասխան կերպով կարգադրելու համար պատրաստ էր նպաստելու թուրք քաղաքականութեան Կովկասում» [3, 118],– գրում է Աստվածատուր Խաչատրյանը: Բուլղարական կողմի երկա-

կի դիվանագիտությունը [20, 53] հայկական պատվիրակության մոտ մեծ հիասթափություն առաջացրեց, որի մասին պատվիրակությունը իրագեկեց ՀՀ կառավարությանը:

Բոլոր դեսպանները՝ բուլղարական, գերմանական և ավստրիական, միաբերան պնդում էին, որ իբր թե Բաթումի դաշնագիրը չեն ընդունում և չեն ընդունելու, և այս հայեցակետը պիտի լինի առաջիկա կոնֆերանսի հիմունքը: Հայոց Ազգային խորհրդի բեռլինյան պատվիրակության հետ համախորհուրդ գործող Կ. Պոլսի հայկական պատվիրակության համար գնալով պարզ էր դառնում, որ կոնֆերանսը, որին մասնակցելու համար նրանք շտապ հրավիրվել են Կ. Պոլիս, շուտով չի կայանալու: Ակնհայտ էր դառնում, որ Հայկական հարցի և ընդհանրապես Անդրկովկասին վերաբերող բոլոր հարցերի լուծման ծանրության կենտրոնը տեղափոխված է Բեռլին: Գերմանիան, չընդունելով Բաթումի պայմանագիրը, աշխատանք էր տանում Բրեստի դաշնագիրը վավերացնելու համար: Բեռլինը վեր էր ածվել Քառյակ միության երկրների դիվանագիտական հարաբերությունների կիզակետի, իսկ Կովկասի հարցում՝ նրանց հետաքրքրությունների բախման կենտրոնի: Հայկական հարցը քննարկվում էր այդ հարաբերությունների համատեքստում: Եվ քանի որ Քառյակ միության տերությունները համաձայնության չէին հասնում հիմնական հարցերի շուրջ, Կ. Պոլսում նախատեսված կոնֆերանսի հրավիրումն անընդհատ հետաձգվում էր:

Ելնելով նրանից, որ հայկական անկախության ճանաչումը կոալիցիայի ղեկավարների՝ Վիեննայի ու Բեռլինի խորհրդակցությունների ժամանակ դրական առումով չլուծվեց, Հայաստանի ԱԳ նախարար Ալ. Խատիսյանը, որը դեռ գտնվում էր Կ. Պոլսում, սեպտեմբերի 12-ին շրջաբերական նոտայով դիմեց կոալիցիայի բոլոր տերությունների ներկայացուցիչներին՝ բողոքելով չճանաչման դեմ:

Ցեղասպանության հետևանքով հայրենագրված հայ գաղթականների տունդարձը կազմակերպելու և ներքին կյանքը կարգավորելու վերաբերյալ հայ պատվիրակների՝ բազմիցս արված հարցադրումներին թուրք բարձրաստիճան պաշտոնյաները վերացական և խուսափողական պատասխան տվեցին [7, 109]: Շողոքորթությունների, կեղծ խոստումների և դիվանագիտական ճնշմանը զուգահեռ թուրքերը արգելում էին հայ գաղթականների վերադարձը գրավված հայկական տարածքներ՝ նպատակ ունենալով մինչև խորհրդաժողովը թրքացնել դրանք [7, 111]: «Թուրքերու առերևույթ ըրած խոստումը՝ հայ փախստականներն իրենց տեղերն վերադարձնելու խնդրում՝ բոլորովին գուրկ է արժեքել» [3, 119],– ասվում էր Կովկասում Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Կրեսի՝ 1918 թ. օգոստոսի 26-ի Պոլսի գերմանական դեսպան Բենսդորֆին ուղարկած հեռագրում: Հայկական պատվիրակությունը

փորձում էր նաև թույլտվություն ձեռք բերել արևելահայ գաղթականների համար՝ վերադառնալու թուրքերի կողմից գրավված Արևելահայաստանի տարածքները: Բնակչության գերձանրաբեռնվածությունը թեթևացնելը կարող էր հայկական հանրապետությանը փրկել համատարած սովից: Այդ հարցում 1918 թ. հունիսի և հուլիսի ամբողջ ընթացքում իրօթիհաղական ղեկավարները անհաղորդ էին: Որոշակի առաջընթաց նկատվեց հուլիսի վերջին: Օգոստոսի 1-ին պատվիրակությունը հեռագրով ՀՀ կառավարությանը տեղեկացրեց օսմանյան նախարարների խորհուրդի ընդունած որոշման մասին, համաձայն որի՝ փախստականները կարող էին առանց որևէ արգելքի վերադառնալ Բաթումի շրջան ու Ալեքսանդրապոլի մերձակայք: Մնացած փախստականների հարցը մնում էր բաց [20, 51]: Օգոստոսի վերջերին թուրքերը մի փոքրիկ զիջում արեցին, ըստ որի՝ թույլատրվում էր հայրենադարձություն Երևանի նահանգի կենտրոնական մասում, Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգլխից 20 կմ հեռավորությամբ [9, 56]: Հայկական պատվիրակությունը սեպտեմբերի 21-ին Էնվեր փաշայի հետ ունեցած տեսակցության ժամանակ պնդեց փախստականների՝ իրենց օջախները վերադարձի լուծման վրա, խնդրեց գերեվարված հայերի ազատ արձակման և նրանց վերադարձի և այլնի մասին: Նշված խնդրանքներից բավարարվեց միայն ռազմագերիների ու ոչ մեծ քանակությամբ տեղահանված քաղաքացիների վերադարձի խնդրանքը [20, 63]: Խնդրի վերաբերյալ Ավ. Ահարոնյանի շարունակվող խնդրանքները արդյունք չտվեցին:

Կ. Պոլսում ընթացող հայ-թուրքական բանակցությունները ավելի աշխույժ ու կոնկրետացնող բնույթ ստացան սեպտեմբերի վերջերին: Ինչքան առաջին աշխարհամարտը մոտենում էր ավարտին, այնքան թուրքական կողմը զիջող էր դառնում: Վախենալով Անգլիայի ու ԱՄՆ-ի առջև ապագա պատասխանատվությունից՝ նկատելի է դառնում հայկական հարցի նկատմամբ թուրքերի դիրքորոշման փոփոխությունը:

Սեպտեմբերին, երբ Գերմանիան և Խորհրդային Ռուսաստանը վավերացրին լրացուցիչ պայմանագիրը, որը Կովկասը բաժանում էր ազդեցության երկու գոտիների, Էնվեր փաշան Ավ. Ահարոնյանին և Ալ. Խատիսյանին ակնարկեց, որ Թուրքիան կպաշտպաներ Հայաստանի հավակնությունները Լոռու և Փամբակի նկատմամբ և կարող է, ի վերջո, թույլատրել հանրապետության ծավալումը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմաններում: Իրօթիհաղականները ավելի հակված էին այդ շրջանների ներառումը Հայաստանի, քան Վրաստանի մեջ, որը գերմանական պրոտեկտորատ էր [9, 57]: Սեպտեմբերի վերջերին Թալեաթ փաշան հայտարարեց, որ իր կառավարությունը Հայաստանին ավելի մեծ զիջումներ կչնորհի, քան այնպիսիք, որոնք փնտրում էր Ավ. Ահարոնյանի պատվիրակությունը նախորդող բանակցություններում: ՀՀ պատվիրակության առանձնահատուկ նպատակների մեջ էր մտնում Փամ-

բակից և հարավային Լոռուց օսմանյան զորքերի հետքաշումը, մի շրջան, որը բռնակցված չէր, բայց և այնպես գրավված էր Թուրքիայի կողմից: Հայաստանը պահանջում էր Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը և Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի հարակից Լոռու շրջանը: Չնայած թուրքական զորքերը դուրս բերելու վերաբերյալ օսմանյան զինվորական նախարարության բազմաթիվ հայտարարությունների՝ մինչև հոկտեմբերի կեսերը հետկանչի հրաման չարձակվեց, մինչև որ կենտրոնական տերությունների մոտալուտ պարտությունն ակնհայտ դարձավ [9, 56]:

Հայերի դիրքը գնալով բարելավվում է՝ կապված աշխարհամարտում Թուրքիայի ու նրա դաշնակիցների մոտալուտ պարտության հետ: Հոկտեմբերի 5-ին Հալիլ բեյը Ալ. Ահարոնյանին հայտնում է, որ Թուրքիան որոշել է տարհանվել մինչ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված սահմանը, և հիմա չգիտի, թե ինչպես բաժանի ազատագրված տարածքը անդրկովկասյան երեք երիտասարդ հանրապետությունների միջև: Հոկտեմբերի 15-ին պատվիրակությունը լինում է նոր մեծ վեզիրի՝ Իսմեթ փաշայի մոտ, զեկուցում հայկական կողմի բոլոր ցանկությունների, գլխավոր առմամբ՝ սահմանային հարցերի, ներառյալ Ղարաբաղի մասին [3, 197]: Հոկտեմբերի վերջերին, երբ օսմանյան պատվիրակությունը պատրաստվում էր նավարկել Լեմնոս կղզի՝ հաշտություն խնդրելու, պատվիրակության ղեկավար Հուսեյն Ռաուֆ բեյը իր մոտ է հրավիրում Ալեքսանդր Խատիսյանին՝ համոզելու ուղեկցել իրեն՝ իբրև վկայություն հայ-թուրքական ջերմ սրտակցության: «Լա նշեց, թե որպես փոխհատուցում, թուրքական կառավարությունը կհանձնի Կարսը և Արդահանը, կվերականգնի 1914 թ. սահմանները և նույնիսկ հնարավոր է՝ կհամաձայնի լրացուցիչ մանր տարածքային ճշգրտումներ կատարելու հոգուտ Հայաստանի» [4, 94],- գրում է Ալ. Խատիսյանը: Հայկական պատվիրակությունը, ենթադրյալ թուրքական զիջումները անընդունելի գտնելով [4, 94], հրաժարվեց Հուսեյն Ռաուֆի առաջարկն ընդունելուց և մնաց Կոստանդնուպոլսում, մինչև Մուղրոսի զինադադարի պայմանները հայտնի դարձան, և քառամսյա սպասումից հետո վերադարձավ Հայաստան [8, 35]:

Եզրակացություն

Ինչպես Բեռլինում ու Վիեննայում, այնպես էլ Կ.Պոլսում Քառյակ միության երկրները չցանկացան իրենց վրա վերցնել հայերին հուզող խնդիրները ու նեղացնել իրենց դաշնակից Թուրքիային: Նրանք բավարարվեցին ընդհանուր խոսքերով ու հայ ժողովրդի տառապանքների հանդեպ իրենց համակրանքների մասին հայտարարություններով, որից հայերը ոչ մի շահ չունեցան [17, 25]: Թուրքերն ամեն կերպ կառչած մնացին Բաթումի պայմանագրից, հատկապես այն կետերից, որոնք վերաբերում էին Հայաստանին: Բա-

թումի պայմանագիրը վերանայելու նպատակով Կ.Պոլսում հրավիրված կոնֆերանսը այդպես էլ չկայացավ: ՀՀ պատվիրակությունը Կոստանդնուպոլսում մնաց մինչև Մուղրոսի զինադադարի պայմանների հայտնի դառնալը և քառամյա սպասումից հետո վերադարձավ Հայաստան:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-185>

Գրականություն

1. Աբրահամյան Հ., Արցախյան հիմնահարցը Ղարաբաղի հայության համագումարի որոշումներում, Դրոշակ, թիվ 14, 1998:
2. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
3. Խաչատրյան Աստ., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010:
4. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
5. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2010:
6. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2009:
7. Հայոց պատմություն, հ. 4, մաս առաջին, Երևան, 2010:
8. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996:
9. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն., հ. 1, առաջին տարին, 1918-1919, Երևան, 2005:
10. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
11. ՀԱԱ, ֆ.200, ց. 1, գ. 657, թ.125:
12. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թ.162:
13. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ.125:
14. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 49-50:
15. ՀԱԱ, ֆ.222, ց. 1, գ. 12, թթ.103-104:
16. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80, թթ.163-166:
17. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 18:
18. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 180, թ. 25:
19. Балаев А., Мамед Эмин Расулзаде 1884-1955, Москва, 2009.
20. Туманян М., Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Ереван: 2012.
21. Армянский вопрос и геноцид армян в Турции (1918-1919) (материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии, новые документы), Ереван: 1995.

Делегация Республики Армения на Константинопольской конференции

Юрик Гулян

Резюме

Ключевые слова: *Армянский вопрос, конферанс, делегация, переговоры, территориальные вопросы, посол, независимость, договор*

Заключение договора в Батуме между Турцией и недавно провозглашенными республиками Закавказья произошло без участия Германии и Австро-Венгрии. Германия, выступавшая против расширения турецкого влияния за счет немецких интересов, предложила пересмотреть решения, принятые в Батуме. Армянская делегация прибыла в Константинополь по приглашению османского правительства. Деятельность делегации должна была обеспечить подписание более благоприятного соглашения по сравнению с Батумским договором. Турецкая сторона, не принимая во внимание декларацию о независимости Армении и документы, предъявляемые армянскими делегатами, подчеркивала, что в Батуме была заключена соответствующая конвенция, следовательно, оставалось только одно: формальные подписи мировых держав. На практические вопросы армянских делегатов турецкие высокопоставленные должностные лица отвечали абстрактно и уклончиво, а в территориальных спорах безоговорочно поддерживали Азербайджан, решительно выступая против вхождения Карабаха и Зангезура в состав Армении. Армянская делегация надеялась, прежде всего, на Германскую империю. Однако Германия не собиралась оказывать содействие Армении и тем более защищать ее от территориальных притязаний соседних Грузии и Азербайджана. Портить отношения с Турцией из-за Армении не хотела и Австро-Венгрия. Получить поддержку Болгарии также не удалось. Как в Берлине и Вене, так и в Константинополе страны Совета четырех не пожелали взять на себя ответственность за решение «армянского вопроса» и огорчить своего союзника – Турцию. Константинопольская конференция так и не состоялась. Делегация РА осталась в Константинополе до того, как стали известны условия Мудросского перемирия и после четырехмесячного ожидания вернулась в Армению.

The Delegation of the Republic of Armenia at the Conference of Constantinople

Yurik Ghulyan

Summary

Key words: *Armenian question, conference, delegation, negotiation, territorial issues, ambassador, independence, contract*

The signing of the treaty between Turkey and the newly independent Transcaucasian republics took place in Batum without the participation of Germany and Austria-Hungary. Germany, being against the increase of Turkish influence in Transcaucasia at the expense of Germany, made a proposal to review the decisions made in Batum. The Armenian delegation went to Constantinople by the invitation of the Ottoman government. The delegation's activity was aimed at ensuring the signing of a more favorable agreement compared to the treaty of Batum. The Turks, not attaching any importance to the declaration of independence of Armenia and the documents presented by the Armenian delegates, emphasized that everything came to an end in Batum, the pact was signed thus, it was only necessary for the powers to sign the document. The high-ranking Turkish officials gave abstract and evasive answers to the practical questions of the Armenian delegates, and they unconditionally supported Azerbaijan in territorial issues, resolutely opposing the issue of including Karabakh and Zangezur to Armenia. The Armenian delegation kept hope for the German Empire, but Germany did not intend to extend the patronage of Armenia, let alone protect it from the territorial ambitions of neighboring Georgia and Azerbaijan. Austria-Hungarian Empire also had no desire to spoil relations with Turkey because of Armenia. Hopes to receive Bulgarian support did not have any results either. As in Berlin and Vienna, as well as in Constantinople, the countries of the Quad Union did not want to take upon themselves the issues of the Armenians and offend their ally Turkey. Thus, the conference of Constantinople did not take place. The RA delegation stayed in Constantinople until the terms of the Mudros truce became known and returned to Armenia after a four-year wait.

Ներկայացվել է 16.03.2023 թ.

Գրախոսվել է 11.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Լեհական մամուլը Հայոց ցեղասպանության մասին 1991-2018 թթ.

Հենրի Մասինյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-201>

Հանգուցային բառեր. հայեր, Թուրքիա, Լեհաստան, Եղեռն, կոտորած, ամսագիր, ճանաչում, դատապարտում

Նախաբան

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան Թուրքիայի կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը ժամանակակից միջազգային քաղաքականության ամենից շատ քննարկված թեմաներից է: Այդ հանցագործության միջազգային դատապարտման և նմանատիպ ոճիրների կանխարգելման գործում կարևոր դեր են կատարում արդարամիտ միջազգային հանրությունն ու համաշխարհային մամուլը: Մույն ուսումնասիրության թեման արդիական է, քանի որ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը դեռևս չի ավարտվել, գլխավոր հանցագործ Թուրքիան առ այսօր չի ճանաչել իր իրականացրած ոճիրը, և Հայ դատի պահանջատիրությունը մնում է հրատապ խնդիր:

Հոդվածի գիտական նորույթը թեմայի չուսումնասիրվածությունն է հայ պատմագրության մեջ: Մույն աշխատանքում առաջին անգամ ներկայացվում է 1991-2018 թվականներին Հայոց ցեղասպանության լուսաբանումը լեհական մամուլում: Հետազոտության համար ընտրվել են լեհական բարձր վարկանիշ ու համարում ունեցող պարբերականները:

1990-ական թվականների սկզբին Լեհաստանը կոմունիստական վարչակարգի երկրից անցում էր կատարում ժողովրդավարական կառավարման: Այս շրջանում լեհական մամուլը հետզհետե ավելի հաճախակի էր անդրադառնում Հայոց ցեղասպանությանը՝ հաճախ սեփական երկրի պատմության ողբերգական էջերի հետ համեմատության համատեքստում: Լեհական պարբերականներում հոդվածներ էին հրապարակվում Հայոց ցեղասպանության դատապարտման, նմանատիպ հանցագործությունների կանխարգելման, հայերի և լեհերի բախտորոշ անցյալի ողբերգական իրադարձությունների և երկու ժողովուրդների ճակատագրերի ընդհանրությունների վերաբերյալ:

Լեհական մամուլի հրապարակումները Հայոց ցեղասպանության մասին:

Լեհական Մեմֆի դատապարտող բանաձևի ընդունումը

Հայոց Մեծ Եղեռնի մասին առաջին հրապարակումները լեհական մամուլում լույս տեսան 1990-ական թվականների սկզբին: 1991 թ. ապրիլի 17-ին «Գազետա Վիբոռչա» օրաթերթում հրատարակված «Հույները, թուրքերը, հայերը և Կիպրոսը» հոդվածում տեղեկություններ են հրապարակվում այն

մասին, որ Հունաստանի խորհրդարանի 300 անդամներից 152-ը հանդես են եկել նախաձեռնությամբ՝ Օսմանյան Թուրքիայում 1915-1922 թթ. հայերի նկատմամբ իրականացված ջարդերը ցեղասպանություն ճանաչելու վերաբերյալ [6]: Պատգամավորներն առաջարկում են ճանաչել այլ ազգերի նկատմամբ թուրքերի իրականացրած բոլոր ոճիրները, կոչ անում ՄԱԿ-ին՝ պատժամիջոցներ սահմանել Թուրքիայի նկատմամբ և վերջ դնել Կիպրոսի անօրինական բռնազավթմանը: Հաջորդիվ համառոտ ակնարկ է արվում հայերի կոտորածների վերաբերյալ, նշվում, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում թուրքերի կողմից սպանվել է ավելի քան մեկ միլիոն հայ, բայց պաշտոնական Թուրքիան ցայսօր չի ճանաչում իր մեղքը [6]: Լեհական մամուլի մի շարք հրապարակումներում տեղեկություններ են զետեղվում Հայոց Ցեղասպանության 80-ամյա տարելիցի մասին:

«Գազետա Վիբորչա» թերթի՝ 1995 թ. ապրիլի 25-ի համարում լույս տեսած «Հայկական կոտորածի տարելիցը» հոդվածում անդրադարձ է կատարվում Երևանում նախորդ օրը տեղի ունեցած սգո երթին՝ ի հիշատակ 80 տարի առաջ տեղի ունեցած անմեղ զոհերի հիշատակի: Թերթը միաժամանակ արձանագրում է, որ Թուրքիան չի ճանաչում Հայոց Ցեղասպանությունը՝ շարունակելով ավանդական ժխտողական քաղաքականությանը [15]:

«Տեչպոսպոլիտա» օրաթերթի՝ 1995 թ. ապրիլի 29-ի՝ «Ո՞վ է այսօր հիշում հայկական կոտորածները» վերտառությամբ հոդվածում, լրագրող Գժեգոժ Գուրինին գրում է, որ մինչ հրեաների կոտորածները, հայկական արհավիրքն անհասկանալի էր աշխարհին, և ինչպես էր հայ ժողովուրդը միայնակ մնացել թուրք դահիճների դեմ [29]: Ըստ հեղինակի, հայոց եղեռնագործության մասին սուկ արևմտաեվրոպական մտավորականներն էին իրենց ձայնը բարձրացնում: Նրանցից ֆրանսիացի ականավոր գրող Անատոլ Ֆրանսի կարծիքով, Հայաստանը «սպանվում է միայն այն պատճառով, որ Եվրոպայի քույրն է Ասիայում, իսկ Եվրոպան հրաժարվում է այդ հարազատությունից՝ լվանալով ձեռքերը» [29]: Մեջբերելով Հիտլերի համանուն խոսքերը 1939 թ. Լեհաստանի վրա հարձակվելուց առաջ՝ հեղինակը հռետորական հարց է ուղղում հիշողության կորստով տառապող քաղաքակիրթ աշխարհին՝ «Ո՞վ է այսօր հիշում հայերի սպանդի մասին» [29]:

«Գազետա Վիբորչա»-ի 1995 թ. մայիսի 2-ի՝ «Հայերի ջարդերի 80-րդ տարելիցը» հոդվածում ներկայացվում է «աշխարհի պատմության մեջ ամենադաժան» ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին Կրակովի Դոմինիկյան եկեղեցում հայ կաթոլիկ քահանա Յուզեֆ Կովալչիկի ձեռամբ մատուցված պատարագը [4]: Այնուհետև համառոտ պատմվում է մեկուկես միլիոն անմեղ հայերի կոտորածը օսմանյան թուրքերի կողմից, որն իրականացվեց առանց տարիքի և սեռի խտրության:

Պայմանավորված Լեհաստանում ՀՀ դեսպանության պաշտոնական բացմամբ և Հայոց ցեղասպանության հարցում պաշտոնական Երևանի ար-

տաքին քաղաքական կուրսի փոփոխություններով՝ 1998 թվականից Եղեռնի թեման ավելի հաճախ է հայտնվում լեհական պարբերականներում: 1998 թ. ապրիլի 24-ին լույս է տեսնում «Մոռացված ցեղասպանություն» հոդվածը, որտեղ ներկայացվում է «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը» թուրքական դահիճներ, էնվերի, Թալեաթի և Ջեմալի կողմից կազմակերպված սպանող քրիստոնյա հայ ժողովրդի դեմ [23]: Հեղինակն ընդգծում է, որ կոտորածների կազմակերպիչները ցանկանում էին Թուրքիայում ստեղծել էթնիկապես մաքուր պետություն, իսկ հայերի նկատմամբ առավել ընդգծված աստվությունը պայմանավորված էր առաջին աշխարհամարտի ժամանակ հայ ժողովրդի կողմից Ռուսական կայսրությանը ցուցաբերած աջակցությամբ:

1999 թ. հունիսի 15-ին լույս տեսած «Չորս էկումենիկ ժամ Հայաստանում» հոդվածում ներկայացվում է Հռոմի Հովհաննես-Պողոս Երկրորդ պապի անսպասելի այցը Հայաստան, որ տևել է ընդամենը չորս ժամ: Պատճառը Ամենայն հայոց կաթողիկոս Գաբրեզին Ա-ին տեսակցելն էր, ով ծանր հիվանդ էր կոկորդի քաղցկեղով: Ըստ հեղինակի՝ հայերն այս այցի ընթացքում հույս էին տածում բարձրացնել Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված հայերի կոտորածների դատապարտման հարցը [5]:

2001 թ. սեպտեմբերի 6-ի՝ «Ցեղասպանություն, թե՛ ոչ» հոդվածն սկսվում է Բեռնի դատարանի առջև կանգնած 17 հոգու ներկայացմամբ, որ մեղադրվում էին «ցեղասպանություն» հանցագործության ժխտման, մեղմացման կամ արդարացման համար [10]: Այստեղ «ցեղասպանություն» եզրույթի տակ հասկացվում էին այն իրադարձությունները, որ կատարվել էին օսմանյան թուրքերի կողմից 1915-1917 թթ. էթնիկ հայ բնակչության նկատմամբ: Այնուհետև ներկայացվում է Շվեյցարիայում հայ-թուրքական հակամարտությունն այդ հարցի իրավացիության շուրջ. շվեյցարահայերը պահանջում էին Շվեյցարիայի խորհրդարանից ընդունել Ցեղասպանությունը դատապարտող բանաձև, մինչդեռ տեղի թուրքական միությունները խնդրագրով խորհրդարանին տեղեկացնում էին, թե Ցեղասպանության մասին խոսելը խեղաթյուրում է իրականությունը, քանի որ Օսմանյան պետությունը երբեք չի ձգտել բնաջնջել հայերին [10]: «Գազետա Վիբորչա»-ի թղթակից Կոնստանտին Գեբերտի «Խաղեր հիշողության հետ» հոդվածում հեղինակը մեջբերում է Ադոլֆ Հիտլերի «Իսկ ո՞վ է այսօր հիշում հայերին» արտահայտությունը՝ կապված հրեական հարցի՝ ֆաշիստական լուծման վերաբերյալ հնարավոր միջազգային արձագանքների հետ [7]: Գեբերտն այս հոդվածում մերկացնում է եվրոպական տերությունների երեսպաշտ քաղաքականությունը՝ մեղադրելով հայկական հարցը աշխարհաքաղաքական շահերին ծառայեցնելու մեջ: Այնուհետև փաստում է, որ միայն 1970-ական թվականների «ԱՍԱԼԱ» կազմակերպության հայ մարտիկների (ըստ հեղինակի՝ «ահաբեկիչներ») գործունեության շնորհիվ աշխարհը կրկին հիշեց այդ ահասարսուռ միջազգային հան-

ցագործության՝ անպատիժ մնացած լինելու մասին: Այլապես կարող էր պարզվել, որ «Հիտլերը ճիշտ էր այդ հարցում, անգամ՝ գերեզմանից այն կողմ» [7]: Անդրադարձալով հայ-հրեական հարաբերություններին՝ հեղինակը եզրակացնում է, որ հայերն ավելի շատ հակված են մտերմության պաղեստինցիների հետ, իսկ հրեաները, Թուրքիայի հետ ունեցած փոխադարձ շահերով պայմանավորված, ոչ միայն զերծ մնացին դպրոցական դասագրքերում Հայոց ցեղասպանությունը ներդնելու ծրագրից, այլև չդատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: Ավելին, ըստ թերթի, «հրեական համայնքը Թուրքիայում պաշտպանում է պատմության թուրքական տեսլականը աշխարհի կարծիքի դեմ» [7]:

Լեհական «Պոլիտիկա» թերթի 2002 թ. հուլիսի 13-ի՝ «Հիշողության վերք» հոդվածում ներկայացվում է հարցազրույց «Արարատ» ֆիլմի ռեժիսոր Ատոմ Էգոյանի հետ: Հարցազրույցի հիմնական թեման թեև ֆիլմն էր, բայց հստակ ուղերձ ուներ, ըստ որի՝ Հայոց ցեղասպանությունը տեղի ունեցավ վարագույրների ետևում՝ քաղաքակիրթ աշխարհի լուր մեղսակցությամբ [25]:

Լեհական մամուլը Հայոց ցեղասպանության մասին Մեյմի դատապարտող բանաձևի ընդունումից հետո

2005 թ. ապրիլի 19-ի Լեհաստանի Մեյմի միաձայն որոշմամբ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը ազդակ հանդիսացավ Օսմանյան Թուրքիայի կողմից առաջին աշխարհամարտի տարիներին իրականացված հայերի Ցեղասպանության խնդրին լայնորեն անդրադառնալու համար: Լայնածավալ հոդվածներ տպագրվեցին ոչ միայն կենտրոնական «Փեչպոսպոլիտա» և «Գազետա Վիբորչա» թերթերում, այլև տեղական և քաղաքային մամուլում: Հոդվածների վերնագրերն արդեն իսկ կանխանշում էին բովանդակությունը. «Ժամանակը բուժում է վերքերը, հիշողությունը մնում է» [28], «Հանցագործությունը պետք է ճանաչվի» [34], «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը» [13], «Կան զոհեր, մեղավորներ չկան» [37], «Հայերի հիշատակին» [30], «Հայկական ջարդերի տարելիցը» [16], «Հայ-թուրքական հաշիվները պատմության հետ» [19], «Ո՞վ է վախենում հայոց պատմությունից» [8], «Ի հիշատակ կոտորված հայերի» [11], «Սպանված հայերի հիշատակին» [3] և այլն: Գրեթե բոլոր հոդվածներում նշվում էր, որ Օսմանյան Թուրքիայի կողմից առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, նախապես ծրագրված էթնիկ գտումների նպատակով, կոտորվել են քրիստոնյա հայեր: Հեղինակները, Թուրքիային և ամբողջ աշխարհին դիմելով, հորդորում էին առերեսվել պատմական ճշմարտությանը և ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

«Գազետա Վիբորչա» թերթին տված լայնածավալ հարցազրույցում «20-րդ դարի առաջին հոլոքոստը» գրքի հեղինակ Գեորգ Կուլսարչիկը նշում է, որ թուրքերն օգտվեցին առաջին համաշխարհային պատերազմի արդյուն-

քում ստեղծված միջազգային քառսից և փորձեցին վերջնականապես վերացնել «հայկական հարցը» նպատակադրվելով կյանքի կոչել զուտ թյուրքական պետություն ունենալու գաղափարը: Կուխարչիկը հաստատում է, որ եվրոպական հզոր տերությունները, այդ թվում՝ Գերմանիան, ոչնչով չէին խոչընդոտում թյուրքական հանցավոր ծրագրի իրականացմանը: Այս հանգամանքն էր, որ հող նախապատրաստեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրեաների հոլոքոստի իրականացման համար [13]:

Լեհական մամուլն անդրադարձավ նաև Լեհաստանի Հանրապետության նախկին նախագահ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Լեխ Վալենսայի՝ Հայաստան կատարած այցին՝ Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցին նվիրված համաժողովին մասնակցելու առնչությամբ: «Ժեչպոսպովիտա»-ի 2005 թ. ապրիլի 22-ի «Հանցագործությունը պետք է ճանաչվի» հոդվածը մեջբերում է Վալենսայի խոսքերը. «Այն ժամանակ, եթե Արևմտյան տերությունները մեղադրեին Թուրքիային և ձեռնարկեին կոնկրետ քայլեր, ապա այդ ողբերգական դեպքերը տեղի չէին ունենա: Իսկ այժմ պիտի ճանաչել պատմական ճշմարտությունը և հարգել պատմական արդարությունը» [34]: Այնուհետև ներկայացվում է ժամանակակից լեհահայ համայնքի երևելի դեմքերից Յան Աբգարովիչի խոսքերը. «Եթե Թուրքիան ցանկանում է դառնալ եվրոպական ընտանիքի մի մասը, ապա պետք է ընդունի այդ աշխարհամասի կանոնները, որոնցից մեկն էլ պատմական արդարությանն առերեսվելն է» [34]:

Հետաքրքրական են նաև գերմանական «Die zeit» և «Suddeutsche Zeitung» պարբերականներից լեհական «Ֆորում»-ում թարգմանաբար ներկայացված «Առաջին հոլոքոստը» և «Թաքնված անուն» հոդվածները [1, 84]: Դրանք կարևոր են հատկապես այն առումով, որ բացի Հայոց ցեղասպանության փաստերն ու դրվագները ներկայացնելը, հաստատվում է Գերմանիայի մեղսակցությունն այդ իրադարձություններին: Պարբերականներում մեջբերված է 1915 թ. Թուրքիայում Գերմանիայի դեսպան Պաուլ Վոլֆ-Մետերնիխի նամակը, որտեղ վերջինս նշում է, թե «գերմանացիների միակ նպատակը մինչ պատերազմի ավարտը Թուրքիային իրենց կողմում պահելն էր, առանց հաշվի առնելու՝ հայերը կգոհվեն, թե՛ ոչ» [1, 84]:

«Գազետա Վիբորչա»-ի՝ 2005 թ. սեպտեմբերի 23-ի համարում տպագրվեց Վարշավայի Արևելյան ուսումնասիրությունների կենտրոնի թյուրքական բաժնի վարիչ Ադամ Բալցերի «Հայ-թյուրքական հաշիվները պատմության հետ» ընդարձակ հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացնում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ ինչպես հայ և թուրք, այնպես էլ բրիտանացի, ամերիկացի և գերմանացի պատմաբանների տեսակետները [19]: Քննադատելով պաշտոնական Անկարայի տեսակետը՝ հեղինակը նշում է, որ, իսկապես, 1915 թ. տեղի է ունեցել հայերի ցեղասպանություն: Ըստ հեղինակի, եթե անգամ անկախ և անաչառ պատմաբանները փորձեն քննել պատմական իրա-

դարձությունները, ապա ոչինչ չեն կարող հայտնաբերել թուրքական արխիվներում, որովհետև Թուրքիայի կառավարությունը միտումնավոր ոչնչացրել է բոլոր վկայությունները: Մինևույն ժամանակ, Բալցերը քննադատաբար է վերաբերվում նաև հայկական աղբյուրներին՝ կասկածի տակ դնելով գոհերի քանակի ու ընդհանրապես Օսմանյան Թուրքիայի հայ բնակչության թվակազմի վերաբերյալ տվյալները: Համաձայնելով դեպքերը «ցեղասպանություն» որակելու հետ՝ նա համոզմունք է հայտնում, որ միայն հրեաների դեմ իրականացված ոճիրն է համապատասխանում «հոլոքոստ» անվանմանը: Ընդ որում, հեղինակը պնդում է, որ հայերը ռուսական արշավանքի ժամանակ վրեժ են լուծել մահմեդականներից, և այդ հանգամանքը ևս պիտի մատնանշվի, եթե ոչ «ցեղասպանություն», ապա գոնե որպես «պատերազմական ոճիր»:

Հոդվածի վերջում անդրադարձ է կատարվում Հայաստանում և Թուրքիայում տիրող հանրային տրամադրություններին, Եվրամիության կողմից Թուրքիային անդամագրվելու հարցում ներկայացված նախապայմաններին: Հեղինակն արձանագրում է, որ միջազգային հանրությունը և ԵՄ-ն չեն ցանկանում միջնորդ դառնալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում: Ամփոփելով հոդվածը՝ լեհ հետազոտողը ենթադրում է, որ երկու ժողովուրդների հաշտեցման ճանապարհը շատ երկար է լինելու [19]:

«Պոլիտիկա» ամսագրի 2010 թ. մարտի 12-ի՝ «Քչերի կողմից դատապարտված հայերի սպանող» հոդվածն սկսվում է մեկ ձայնի տարբերությամբ Եվեդիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը ներկայացնելով, որի արդյունքում, ըստ հեղինակ Ենջեյ Վինիեցկու, Եվեդիան միացավ քսան երկրից և յոթ միջազգային կազմակերպություններից բաղկացած այն համեստ խմբին, որ մեղադրում է Թուրքիային առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հարյուր հազարավոր հայերի սպանողի մեջ [26]: Հիշեցնելով, որ 2005 թվականից այդ խմբի մաս է կազմում Լեհաստանը, հեղինակը նշում է, որ այդ ոճիրը չի ճանաչվել աշխարհի շատ պետությունների կողմից, այդ թվում՝ Իսրայելի, Միացյալ Նահանգների, ԵՄ անդամ երկրների մեծ մասի, ամբողջ Աֆրիկա և Օվկիանիա մայրցամաքների, բացառությամբ Լիբանանի, նաև ողջ Ասիա մայրցամաքի երկրների [26]: Հոդվածում ներկայացվում է, որ պաշտոնական Թուրքիան թեպետ ընդունում է, որ հազարավոր մարդիկ են զոհվել, սակայն ժխտում է կանխամտածված սպանության մեղադրանքները՝ որպես հիմնավորում բերելով պատերազմական իրավիճակից բխած հանգամանքները: Ավելին՝ նմանատիպ հարցերի քննարկումը բացառելու համար Թուրքիայի քրեական օրենսգրքում ավելացվել է 301-րդ հոդվածը, որ պատիժ է նախատեսում թրքությունը վիրավորելու համար: Նման մեղադրանքներով բռնաճնշումների են ենթարկվում և կալանավորվում բոլոր նրանք, ովքեր հանդգնում են թուրքերին մեղադրել հայերի կոտորածները կազմակերպելու համար: Մեղադրյալների թվում է Նոբելյան մրցանակի դափնեկիր, թուրք գրող Օրհան

Փամուկը [26]: Հողվածում հեղինակը վերլուծում է նաև թուրք-շվեդա-ամերիկյան հարաբերությունները՝ կապված Շվեդիայի Ռիկստագի ընդունած բանաձևի հետ: Հեղինակը եզրակացնում է, որ բազմաթիվ երկրներ չեն հետևում Շվեդիայի օրինակին քաղաքական դրդապատճառներով, իրենց դիրքորոշումը հիմնավորելով, թե նման հարցերը պետք է քննարկվեն պատմաբանների կողմից: Մինչդեռ փորձագետների մեծ մասը հաստատում է, որ այդ իրադարձությունները ցեղասպանական գործողություններ են եղել, և միջազգային հանրության կողմից հաստատուն արձագանքի բացակայությունը հաջորդ տասնամյակների ընթացքում բազմաթիվ նմանատիպ ողբերգությունների պատճառ է դարձել [26]:

«Պոլիտիկա» թերթի 2010 թ. մայիսի 20-ի՝ «Ցեղասպանություն՝ դժվար բառ» հոդվածում քննարկվում է ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում առաջացած լարվածությունը՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հետ: ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ընդունած բանաձևը, որով Օսմանյան Թուրքիայում 1915-1923 թթ. 1,5 միլիոն հայերի նկատմամբ իրականացված գործողությունները ճանաչվեցին որպես «ցեղասպանություն», այնուհետև նախագահ Օբամայի կողմից այդ ողբերգությունը «20-րդ դարի մեծագույն սարսափներից մեկը» անվանելը (թեպետ չարտաբերվեց «ցեղասպանություն» բառը) անջրպետ էր առաջացրել թուրք-ամերիկյան հարաբերություններում: Դրա քաղաքական և ռազմական հնարավոր հետևանքների վերլուծությունը ներկայացնում է Պիտտր Չալսակին [24]: Նա մեջբերում է Թուրքիայի քաղաքական վերնախավի սպառնալիքները Կոնգրեսի դատապարտող բանաձևի ընդունման պարագայում թուրք-ամերիկյան համագործակցությունը Աֆղանստանում դադարեցնելու, ամերիկացիներին Ինջիրլիքում գտնվող թուրքական ավիաբազան օգտագործելուց զրկելու վերաբերյալ, որ կլիտջնդոտեր ամերիկյան զորքերի դուրսբերումը Աֆղանստանից: Իր հերթին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոհանն էլ սպառնացել է վտարել Թուրքիայում ապրող 170,000 հայերից 100,000-ին, որոնք Թուրքիայի քաղաքացիություն չունենին [24]:

Ավելի վաղ՝ 2010 թ. մարտի 18-ին, «Թուրքիայի վարչապետը սպառնում է արտաքսել 100 հազար հայերի» վերնագրով հոդված էր հրապարակել «Ժեշ-պոսպոլիտա» թերթը [31]: Ծարունակելով շեշտադրումներ անել ոճրի դատապարտման բարոյական կողմի վրա՝ թերթը նշում է, որ դեռևս 1987 թ. Եվրախորհրդարանի ընդունած բանաձևը սահմանել էր, որ Թուրքիայի դեմ ոչ մի քաղաքական, իրավական կամ նյութական պահանջ չէր կարող առաջանալ այդ պատմական իրադարձությունը որպես ցեղասպանության ակտ ճանաչելու արդյունքում, ուստի խոսքն առաջին հերթին բարոյական է [24]: Անդրադարձ է կատարվում նաև Թուրքիայում առկա տաբուին (հողվածի նախնական վերնագիրը «Թուրքական տաբու» է)՝ ուղղված ցանկացած այլախոհության, ովքեր կհանդգնեին այլ գնահատական տալ այդ իրադարձություններ-

րին: Իսկ տարուի պատճառը, ըստ թուրք պատմաբան Հալիլ Բերքթայի, թուրքական հանրապետության վերաբերյալ անբասիր տեսության առասպելն է, համաձայն որի՝ այն եղել է «կատարելության, անաղարտության և առաքինության մարմնացում», որտեղ բացառված են նման հանցագործությունները [24]:

2005 թ. հաջորդող տարիներին նույնպես լեհական մամուլում պարբերաբար գետնեղվում էին Հայոց ցեղասպանությանը նվիրված հրապարակումներ, հիմնականում՝ ապրիլքսանչորսյան տարելիցների և այլ երկրների կողմից դատապարտող բանաձևեր ընդունելու առնչությամբ: Հատկապես ակտիվ հրապարակումներ եղան Եղեռնի հարյուրամյա տարելիցի կապակցությամբ՝ «Հիշում ենք հայերի սպանողը» [21], «Դժվար բառ՝ «L»-ով (լեհ.՝ «ludobójstwo» - ցեղասպանություն) սկսվող» [18], «Հիշում ենք հայերի ողբերգության մասին» [12], «Հեռվից դեպի Արարատ» [23], «Հանցագործություն հանուն քաղաքականության» [27], «Հայերի կոտորածը» [17], «Հայերի հիշատակին» [9], «Սպանված հայերի տարելիցը» [20], «Թուրքիա, ընդունի՛ր» [35], «Հայերի տրիումֆը» [33], «Հայերի կոտորածը ողջ մարդկության խնդիրն է» [32] և այլն: Եթե 1990-ական թվականներին և 2000-ականների սկզբին լեհական մամուլում հարցը քննվում էր հիմնականում բարոյական տեսանկյունից, ապա այս շրջանի հողվածներում ևս ակնհայտորեն նկատում ենք համայն քաղաքակիրթ աշխարհին ուղղված կոչն ու պահանջը պատմական եղելությունը ճիշտ գնահատական տալու վերաբերյալ:

2016 թ. «Ժեչպոսպոլիտա» թերթում հրապարակվեց «20-րդ դար. առաջին մերօրյա ցեղասպանությունը» հոդվածը, որտեղ Հայոց ցեղասպանությունը ներկայացվում է որպես նորագույն պատմության մեջ օտար պետության կառույցների կողմից համակարգված և անխիղճ ձևով մի ողջ ժողովրդի սպանդի առաջին փորձ [36]: Հողվածագիր Կաթինիեթ Յաշինսկին հակիրճ ներկայացնում է Վանա և Սևան լճերով ու Արարատ լեռով հայտնի ծաղկուն հայկական պետականության պատմությունը՝ սկսած մ. թ. ա. 2-րդ հազարամյակից: Այնուհետև ներկայացնում է թուրքերի կողմից գրավվելը 14-րդ դարում, հասնում մինչ 20-րդ դար, վերլուծում երիտթուրքերի քաղաքականությունն ու դաժան հաշվեհարդարը ժողովրդավարացման նրանց խոստումներին հավատացած հայ ժողովրդի նկատմամբ՝ ծայրագույն դաժանությամբ [36]:

Նույն թվականին լեհական «Ֆորում» երկշաբաթերթը հրապարակեց հարցազրույց հայտնի թուրք մտավորական, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկի հետ: «Թուրքիայի մասին. հույսը ձայնի մեջ» հոդվածում թուրք գրողը ներկայացնում է իր գործունեությունը, որի պատճառով տարագրվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և չի կարող վերադառնալ Թուրքիա: Նա հույս է հայտնում, որ մահմեդականությունը հնարավոր է համատեղել ժողովրդավարության հետ. «Թուրքիան պետք է առերեսվի պատմական եղելությունը՝ ճանաչելով սեփական պատմությունն ու պատմական արդարությունը», իր խոսքն ամփոփում է Փամուկը [2]:

2018 թ. Լեհաստանի «Իրավունք և արդարություն» կուսակցությունը հանդես եկավ օրենսդրական նախաձեռնությամբ, որով առաջարկում էր լրացնել «Ազգային հիշողության ինստիտուտի մասին» օրենքը, մասնավորապես՝ «Լեհաստանի և լեհ ազգի բարի անունը» պաշտպանելու նպատակով արգելել գործածել «լեհական համակենտրոնացման ճամբարներ» արտահայտությունը [14]: Այս օրենքի գործածությունը, որ որոշակի լարվածություն էր հարուցել լեհ-հրեական և լեհ-ուկրաինական հարաբերություններում, հանդես էր բերել նաև լեհահայերի ակտիվությունը՝ ի աջակցություն Հայոց ցեղասպանության ժխտման դեմ օրենքի օրինագծի ընդունման: Թեպետ նման օրենք չընդունվեց, այդուհանդերձ, լեհական մամուլը պարբերաբար անդրադարձավ նաև Հայոց ցեղասպանության խնդրին՝ պահպանելով նախկինում հնչած հիմնական շեշտադրումները:

Եզրակացություն

Լեհական մամուլը 1990-2018 թվականներին Հայոց ցեղասպանության մասին հրապարակումներում արտահայտում է համակրանք և համերաշխություն հայ ժողովրդի նկատմամբ: Այս համատեքստում նկատելի է դիրքորոշման որոշակի տեղաշարժ՝ կապված Լեհաստանի քաղաքական և հանրային սրամտադրությունների փոփոխությունների հետ: Եթե 1990-ական թվականներին լեհական մամուլը գրում է գերազանցապես Հայոց ցեղասպանության ճանաչման բարոյական կողմի մասին, ապա 2000-ական թվականներին, կապված 2005 թ. Լեհաստանի Սեյմի՝ Եղեռնը դատապարտող բանաձևի ընդունման հետ, տպագրվող հոդվածները կրում են առավել սուր և քննադատական բնույթ: Դրանք կոչ են անում միջազգային հանրությանը ճնշումներ գործադրել Թուրքիայի վրա պատմական արդարությունը ճանաչելու թելադրանքով: Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ լույս տեսած մեծաթիվ հրապարակումներում առավել մանրամասն ներկայացվում և վերլուծվում է Ցեղասպանության խնդիրը հայ-թուրքական արդի հարաբերությունների համատեքստում:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-201>

Գրականություն

1. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 11, գործ № 25, 197 էջ:
2. Forum: Orham Pamuk. O Turcji z nadzieją w głosie, 2016.
3. Gazeta Wyborcza Rzeszów: Pamięci zamordowanych Ormian, 13.11.2005.
4. Gazeta Wyborcza: 80 rocznica rzezi ormian, 02.05.1995.

5. Gazeta Wyborcza: Cztery ekumeniczne godziny w Armenii, 15.06.1999.
6. Gazeta Wyborcza: Grecy, Turcy, Ormianie i Cypr, 17.04.1991.
7. Gazeta Wyborcza: Gry z pamięcią, 20.02.2002.
8. Gazeta Wyborcza: Ku pamięci Ormian, 24.04.2015.
9. Gazeta Wyborcza: Ludobójstwo czy nie, 06.09.2001.
10. Gazeta Wyborcza: Pamięci pomordowanych Ormian, 30.10.2005.
11. Gazeta Wyborcza: Pamiętają o tragedii Ormian, 24.04.2015.
12. Gazeta Wyborcza: Pierwsze ludobójstwo XX wieku, 24.04.2005.
13. Gazeta Wyborcza: Pierwsze ludobójstwo XX wieku, 24.04.2005.
14. Gazeta Wyborcza: PiS nie zrobi ani kroku wstecz, 31.01.2018.
15. Gazeta Wyborcza: Rocznic masakra ormian, 25.04.1995.
16. Gazeta Wyborcza: Rocznic ormiańskich rzezi, 25.04.2005.
17. Gazeta Wyborcza: Rzeź Ormian, 20.04.2015.
18. Gazeta Wyborcza: Trudne słowo na "L", 15.04.2015.
19. Gazeta Wyborcza: Turecko-ormiańskie rozrachunki z historią, 23.09.2005.
20. Gazeta Wyborcza: Uczczono wymordowanych Ormian, 27.04.2015.
21. Gazeta Wyborcza: Upamiętnimy rzeź Ormian, 18.04.2014.
22. Gazeta Wyborcza: Zapomniane Ludobójstwo, 24.04.1998.
23. Polityka: Daleko do Araratu, 21.04.2015.
24. Polityka: Ludobójstwo - trudne słowo, 20.05.2010.
25. Polityka: Rana pamięci, 13.07.2002.
26. Polityka: Rzeź Ormian potępiona przez nielicznych, 12.03.2010.
27. Polityka: Zbrodnia w imię polityki, 26.04.2015.
28. Rzeczpospolita: Czas leczy rany, pamięć zostaje, 22.04.2005.
29. Rzeczpospolita: Kto dziś pamięta o rzezi Ormian? 29.04.1995.
30. Rzeczpospolita: Pamięć o Ormianach, 25.04.2005.
31. Rzeczpospolita: Premier Turcji grozi deportacją 100 tysięcy Ormian, 18.03.2010.
32. Rzeczpospolita: Rzeź Ormian to problem całej ludzkości, 24.04.2015.
33. Rzeczpospolita: Triumf Ormian, 24.04.2015.
34. Rzeczpospolita: Trzeba uznać zbrodnię, 22.04.2005.
35. Rzeczpospolita: Turcjo, przyznaj się, 17.04.2015.
36. Rzeczpospolita: XX wiek: Pierwsze nowożytne ludobójstwo, 05.08.2016.
37. Tygodnik Powszechny: Są ofiary, nie ma winnych, 24.04.2005.

Польская пресса о Геноциде армян в 1991-2018 гг.

Генри Матинян

Резюме

Ключевые слова: армяне, Турция, Польша, Егерн, резня, журнал, признание, осуждение.

В статье представлено комплексное исследование публикаций о Геноциде армян в польской прессе в 1990-2018 гг. Для работы были отобраны польские журналы с самым высоким рейтингом и репутацией. Исследование показывает, что польская пресса сочувствует и солидаризируется со справедливым требованием армянского народа, подчеркивая необходимость признания и осуждения преступления. Во многих статьях польские авторы проводят параллели между трагическими страницами истории армян и поляков, подчеркивая необходимость осуждения подобных преступлений во избежание похожих случаев в будущем. Исследование доказывает, что наряду с политическими и социальными изменениями в Польше, формулировки польской прессы о геноциде имели определенное динамическое развитие. Если в 1990-х годах в основном обсуждалось моральное обязательство признать геноцид, то в 2000-х стали заметны призывы к цивилизованному миру оказать давление на Турцию и заставить ее столкнуться с криминальными страницами собственной истории. Во многих статьях критикуется политика отрицания Турции, а вопрос признания Геноцида другими странами анализируется в контексте международно-политических вопросов. Особенно активные дискуссии ведутся в польской прессе по поводу принятия резолюции об осуждении Геноцида армян Сеймом Польши в 2005 г, затем в 2015 году – в связи со 100-летием Геноцида.

Polish Press on the Armenian Genocide in 1991-2018

Henri Matinyan

Summary

Key words: *the Armenians, Turkey, Poland, Yeghern, massacre, newspaper, recognition, condemnation*

The article provides a comprehensive analysis of the coverage of the Armenian Genocide in the Polish press in 1990-2018. Polish newspapers with the highest rating and reputation were selected for the research. The study illustrates that the Polish press sympathizes with the just demand of the Armenian people, emphasizing the need to recognize and condemn the crime. In many articles, Polish authors draw parallels between the tragic pages in the history of Armenians and Poles, highlighting the need to condemn such crimes in order to avoid similar cases in the future. The framing of the Armenian Genocide has shifted over time in relation to the changing political and social context in Poland. If in the 1990s the moral imperative to recognize the genocide was mainly discussed, then in the 2000s calls for the civilized world to put pressure on Turkey and force it to face the criminal pages of its own history became noticeable. In many articles, the coverage became more critical because of Turkey's policy of denial. Additionally, the issue of recognition of the Genocide by other countries is analyzed in the context of international political issues. Particularly active discussions are being held in the Polish press about the adoption of a resolution condemning the Armenian Genocide by the Sejm of Poland in 2005, then in 2015 in the lead-up to the centennial anniversary of the Armenian Genocide.

Ներկայացվել է 13.04.2023 թ.

Գրախոսվել է 20.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

*Պատմությունը հաճախ է մոռանում
իր երկրորդական դերակատարներին*

Հանգուցային բառեր. ապարններ, քսանթիններ, պիսսուրներ, Աքեմենյաններ, Պարթևստան, Սողո, Բակտրիա, Ստրաբոն, Արշակ I, Դիոդորոս I, Եվսիդեմոս I

1. Ներածություն

Ք. ա. V դ. սկզբներին դահերի սկյութական միությունը, դուրս մղվելով Արալի ծովից հյուսիս տարածվող իր ավանդական քոչի տարածքից, միգրացվեց հարավ և ապահովություն գտավ Աքեմենյան տերության հյուսիսային շրջանում՝ Հարավարևելյան Ուստյուրթում: Աքեմենյան արքա Քսերքսես I-ի (Ք. ա. 486-465 թթ.) Պերսեպոլիսի հին պարսկերեն արձանագրության մեջ (XPh § 4), որն, ընդունված կարծիքի համաձայն, ստեղծվել է Ք.ա. 486-482 թթ., դահերը հիշատակվում են երկու այլ պարսկահայատակ քոչվոր ժողովուրդների՝ «հաումա խմոդ սակեր»-ի (Sakā Haumavargā) և «սրագագաթ գլխարկավոր սակեր»-ի (Sakā Tigraxadā) կողքին [38, 166]: Դրանից հետևում է, որ Աքեմենյան տերության հյուսիսային շրջան միգրացվելու ժամանակ դահերն արդեն եղել են սկյութական մյուս և ավելի հայտնի միություններից ինքնուրույն հանրություն [32, 22]: Այդուհանդերձ, առանձին էթնոնիմի գոյությունը բավարար չէ դահերին կայացած էթնիկական խումբ կոչելու համար: Ընդհանուր ծագման, ավանդույթների, տնտեսաձևի և, հատկապես, քոչի տարածքը մյուս քոչվորներից պաշտպանելու անհրաժեշտության հիման վրա գոյացած այս ցեղամիավորումը, անկասկած, նման է եղել անտիկ աշխարհի այն բազում կազմավորումներին, որոնք այլևայլ գործոնների ազդեցությամբ այդպես էլ կայուն էթնոսի չեն վերածվել և ասիմիլացվելով, պատմությանն են թողել սուկ իրենց ցեղային անցյալի մասին աղոտ հիշողությունները:

Հույն աշխարհագետ Ստրաբոնը, հիմնվելով Ապոլլոդորոս Արտեմիտացու տեղեկության վրա, նշում է [40, XI, 8. 2]¹. «Դահերի մի մասը կոչվում են ապարններ, որոշները՝ քսանթիններ, իսկ մյուսները՝ պիսսուրներ: Այժմ նրանցից ապարնները բնակվում են Հիրկանիային և նրան սահմանակից

¹ „και τῶν Δαῶν οἱ μὲν προσαγορευόνται Ἄπαρνοι οἱ δὲ Ξάνθιοι, οἱ δὲ Πίσσουροι. οἱ μὲν οὖν Ἄπαρνοι πλησιαιτάτα τῇ Ὑρκανίᾳ παράκεινται και τῇ κατ' αὐτὴν θαλάττῃ, οἱ δὲ λοιποὶ διατείνουσι και μέχρι τῆς ἀντιπαρηκούσης τῇ Ἀρίᾳ”.

ծովին ամենից մտտ, իսկ մյուսները (քսանթիններն ու պիստուրները – Ա.Մ.) տարածվում են մինչև Արեւային հանդիպակաց երկիրը»:

Քսերքսեսի Ք. ա. 480 թ. արշավանքի մասնակիցների շարքում դահերը չեն հիշատակվում: Դրանից հետևում է, որ քոչվորական այդ հանրությանը ներգաղթի թույլտվության տալու հարցում պարսից արքան ոչ թե նրանց ռազմական ներուժը առաջիկա արշավանքին կիրառելու, այլ հյուսիսային սահմանների և Կասպից ու Արալի ծովերի միջև ձգվող առևտրական ճանապարհների անվտանգությունը ապահովելու ռազմավարական նպատակ է հետապնդել: Սակայն Հարավարևելյան Ուստյուրթի Կասկաժու դամբարանադաշտում դահական թաղումների սակավությունից ակնհայտ է, որ նրանք այստեղ երկար չեն մնացել: Ըստ երևույթին, պայմանավորված Աքեմենյան տերության վարչաքաղաքական կյանքում կատարված տեղային փոփոխության՝ Խորեզմի առանձին սատրապություն դառնալու հանգամանքով, դահերը Ք. ա. V դ. վերջերին կամ IV դ. սկզբներին միգրացվել են Սարիղամիշ լճի ու Ամուղարյայի (Օքսուս) միջև ընկած շրջան²:

2. Դահերի միգրացիան դեպի Սողդ

Ք. ա. IV դ. սկզբներին դահերի համար նոր խնդիրներ առաջացան՝ կապված Աքեմենյան տերությունից Խորեզմի անկախանալու հետ³: Այդ իրադարձության մանրամասները տակավին անհայտ են: Սակայն կասկածից վեր է, որ դա տեղի է ունեցել Աքեմենյանների դեմ Խորեզմի հակամարտության ճանապարհով: Սրա համապատկերում դյուրին է եզրակացնել, որ պարսկահպատակ դահերը դուրս են մղվել Ամուղարիայի դելտայամերձ շրջաններից (Չախափնյա Խորեզմ): Փաստը մնում է այն, որ դահերի մի մասը Ք. ա. IV դ. սկզբներին Արտաքսերքսես II-ից (Ք. ա. 405-359 թթ.) նոր տարածք է ստացել Սողդում՝ Ամուղարյայի վտակ Ջերավշանի (*Polytimetos*) հովտում⁴:

Դահական մշակույթի ներսում ցեղային ենթամշակույթները զանազանելի չեն: Հայդ, Ք. ա. IV-III դ.դ. վերաբերող հնագիտական նյութերի միջոցով հնարավոր չէ պարզել, թե դահական ցեղերից որոնք են մնացել Ամուղարյայի

² Մերձսարիղամիշյան դամբարանադաշտերից Տուզ-գրրի 17-րդ և 19-րդ [65, 109-110], Սակար-Չագայ I-ի 42-րդ [66, 25], Տումեկ-Կիչիտժիգի 41-րդ և 50-րդ [52, 54] և Գյավուր IV-ի 2-րդ կուրգանները [49, 12; 50, 86], որոնք թվագրվում են Ք. ա. IV-III դդ., կապվում են դահերի հետ [32, 24; 57, 55]:

³ Կալալը-Գըր քաղաքատեղիի առաջին հնագիտական շերտի հետազոտությունը ցույց է տալիս, որ Աքեմենյանների կառավարումն այստեղ ավարտվել է Ք. ա. IV դ. սկզբներին [38, 511-516]:

⁴ Ակջարթեփե դամբարանադաշտի 4-րդ [60, 57-70], Կույու Մազարսկի դամբարանադաշտի 7-րդ և 19-րդ [58, 205-227], Լյավանդակի դամբարանադաշտի 7-րդ [59, 114] կուրգաններում հայտնաբերված և Ք.ա. IV-III դդ. թվագրվող նյութերն այս տարածքում դահերի երկարատև բնակության վկայություններն են:

ձախափնյակում, և որոնք են անցել Սողո: Այդ մասին ուղղակի տվյալներ չկան նաև գրավոր աղբյուրներում: Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակից հեղինակներ Պտղոմեոսը, Արիստոբուլոսը և այլք ծանոթ են եղել դահերին: Մակայն նրանք դահերին նայել են որպես Կենտրոնական Ասիայի բազում սկութական հանրություններից մեկի և իրենց ազգագրական էքսկուրսներում դահերի ցեղային կազմի և նրանց բնակության շրջանների վերաբերյալ հստակ տեղեկություններ չեն հաղորդել: Համեմատաբար ուշ շրջանի հեղինակներից միայն Ստրաբոնն է, որ, նկարագրելով Ք. ա. IV դ. վերջին քառորդին Կենտրոնական Ասիայում ստեղծված էթնոքաղաքական իրավիճակը, նշում է, որ դահական ցեղերից ապարններն են առավել մոտ գտնվել Կասպից ծովին և Հիրկանիայից, Նեսայայից, Պարթևստանից ու Արեյայից կտրված են եղել անջրդի (Կարակում – Ա. Մ.) անապատով [40, XI. 7.1, XI, 8.3]: Մերձսարիղամիշյան տափաստաններում ապարնների մնալու մասին է խոսում նաև այն փաստը, որ նրանք դեպի վերը նշված երկրամասեր իրենց հարձակումների ժամանակ ստիպված չեն եղել անցնել Ամուդարյա գետը [41, 132; 47, 34]: Վերոնշյալից հետևում է, որ Ք. ա. IV դ. առաջին կեսին Սողո միգրացվողները եղել են պիստուրներն ու քսանթիները:

Քսանթիների ու պիստուրների Սողո տեղափոխվելը բեկումնային ազդեցություն ունեցավ դահերի միության կյանքում. խաթարվեց դահական ցեղերի համատեղ միգրացիայի ավանդակարգը, իսկ նրանց երկու հատվածների հայտնվելը իրարից խիստ տարբեր վարչաքաղաքական պայմաններում փլուզեց միակենտրոն ինքնակառավարման համակարգը: Ապարնների ցեղն ազատվեց քսանթիների հեգեմոնիայից [17, 13] և, մնալով մերձսարիղամիշյան տափաստաններում, բազմապատկեց իր նշանակությունը Աքեմենյան տերության հյուսիսային սահմանների և Ամուդարյայի երկայնքով ձգվող առևտրական ճանապարհի պաշտպանության գործում [21, 238; 54, 26]: Այս տեսանկյունից լիովին իմաստավորվում է ապարնների ցեղառաջնորդ Հրիապիտեսի հետ Արտաքսերքսես II-ի խնամիանալու մասին Արրիանուսի տվյալը [25, 35-44; 35, 58]: Սողո գաղթած քսանթիներն ու պիստուրները, ընդհակառակը, կորցրին Աքեմենյան տերության պաշտպանական համակարգում իրենց երբեմնի նշանակությունը և հայտնվեցին Բակտրիայի ու Սողոյի աքեմենյան սատրապի աչալուրջ հսկողության ներքո [2, 303; 47, 34]: Երկու հատվածների միջև ընկած Կարակում անապատը նվազագույնի էր հասցնում միջցեղային կապերը՝ ստիպելով նրանց յուրովի հարմարվելու կյանքի տեղական պայմաններին:

3. Սողոական դահերը Ք. ա. IV-III դարերում

Սողոյում դահերի գրադեցրած տարածքի հարցը եղել և մնում է լուրջ բանավեճի առարկա: Ուսումնասիրողներից ոմանք այն պատկերացնում են Սիրդարյայի (*Tanais*) դելտայի շրջանում [8, 27; 64, 260, 270]: Մ. Օլբրայխտի

կարծիքով դահերն ապրել են Սիրդարյայի երկայնքով ընկած տափաստաններում՝ Հյուսիսարևմտյան Սողդից մինչև Արալի ծով (*Μαιώτιδος*) [27, 156]: Ավելի ուշ Մ. Օլբրայխտը դահերի միգրացիայի շրջանն է համարում Տրանսօքսիանան [31, 162], իսկ իր վերջին մենագրության մեջ նա գտնում է, որ դահերը Հվ. Թուրքմենստանի տափաստաններ են գաղթել Սիրդարյայի ստորին ավազանից [32, 22-23]՝ Ա. Բալխավանցը Ալջարթեփեի, Կույու Մազարսկի, Լյավանդակի դամբարանադաշտերում դահական կուրգանների առկայությունից եզրակացնում է, որ Սողդ գաղթած դահերը բնակվել են Ջերավշանի հովտում՝ Սամարղանդի և Բուխարայի միջև ընկած շրջանում [50, 80]: Թեև մյուսների համեմատ այս տեղորոշումն ավելի փաստարկված է, այնուամենայնիվ, պետք է նկատել, որ իրենց տնտեսական կացութաձևի բերումով մշտապես շարժուն քոչվորական խմբերի բնակության շրջանի տեղորոշումը կարող է միայն մոտավոր լինել: Ավելին, քոչը սեզոնային երևույթ է և ամառային հանգրվանից գատ պահանջում է նաև ձմեռանոցներ, որտեղ հնարավոր է ձմեռվա ամիսներին կերակրել հոտերին: Ուստի, սողդական դահերի համար Ջերավշանի ստորին հոսանքի շրջանը կարող էր միայն ձմեռանոց

⁵ Մ. Օլբրայխտը սողդական դահերի վերոնշյալ տեղորոշումը հիմնավորելու համար փորձում է համաձայնեցնել Կուրցիուս Ռուֆուսի [10, VII. 4.6, VIII. 1.8], Ստրաբոնի [40, XI. 9.3] և Արրիանուսի [5, III. 28.8] վկայությունները: Սակայն դա կատարում է արհեստական և կանխակալ ձևով: Իրականում դահերի վերաբերյալ Կ. Ռուֆուսի նշված հաղորդումները վերաբերում են մերձսարիղամիշյան տափաստաններում Խորեզմի և մասսագետների հարևանությամբ ապրող ապարների ցեղին, այլ ոչ թե քսանթիներին ու պիստուրներին: Տեղին չէ նաև Ստրաբոնի «Աշխարհագրության» XI. 9.3 պարբերությանը հղումը, քանզի նրանում էլ ընդամենը ներկայացվում է ապարների ծագման մասին գոյություն ունեցող վարկածները: Բայց որ կարևոր է, հույն հեղինակը **„Φασι τῆς τοῦς Ἀπάρνους Δάας ὕπερ τῆς Μαιώτιδος Δαῶν...»** – «Ասում են թե ապարն դահերը տարագիրներ են Մեովտիս լճից վերև ապրող դահերից...» նախադասության մեջ դահերին տեղորոշում է Մեովտիս լճից վերև (**ὕπερ**) այլ ոչ թե «ներքև», ինչպես ընթերցում է Մ. Օլբրայխտը: Հեղինակն իբրև փաստարկ է ծառայեցնում նաև Արրիանուսի կողմից Բեսսի աջակիցների թվում **„Δάας τοῦς ἐπὶ τάδε τοῦ Τανάϊδος ποταμοῦ ἐποικοῦντας...»** – «Տանախի այս կողմում ապրող դահեր»-ի հիշատակությունը [5, III. 28.8]: Դրա բառացի ընկալումից հետևում է, որ դահերն ապրել են Տանախ-Յաքսարտ-Սիրդարյա գետի երկու ափերին, և Բեսսին օգնել են գետի արևմտյան ափի դահերը: Սակայն, քանի որ Սիրդարյայի արևելյան ափին դահերի բնակության մասին վկայություններ չկան, ուստի **Ճիշտ կլինի Արրիանուսի «Տանախի այս կողմում ապրող դահեր» արտահայտությունը համարել սողդական դահերին (պիստուրներ, քսանթիներ) «Օքսի այս կողմում ապրող դահեր»-ից (ապարներ) տարբերելու միջոց:**

լինել, իսկ նրանց ամառանոցը պետք է որ տարածվեր Ձերավշանի վերին հոսանքի շրջանում:

Աքեմենյանները ստեղծել էին իրենց տերության նստակյաց ու քոչվոր բնակչության համակեցության բավականին արդյունավետ համակարգ, որը հիմնված էր այդ երկուսի փոխշահավետ առևտրի վրա: Բացի դրանից, Սողդում դահերի ադապտացիային պետք է որ նպաստեր նաև սողդերի (սողդերն իրենք նստակեցության անցած սկյութներ էին) հետ նրանց էթնոլեզվական ընդհանրությունները⁶: Ք. ա. IV դ. օրեցօր թուլացող Աքեմենյանների համար տափաստանների քոչվորական շարժուն խմբերի նկատմամբ վերահսկողություն պահպանելը դարձել էր լուրջ խնդիր: Այդուհանդերձ, սողդական դահերը, իրենց բնակության նոր շրջանում պարսկական վարչության աջակցության կարիքը զգալով, մինչև վերջ հավատարիմ մնացին այդ արքայատանը: Նրանք տեղի այլ քոչվորների պես ենթարկվում էին Աքեմենյանների բակտրիական սատրապին՝ կատարելով սահմանված հարկային և ռազմական պարտավորությունները: Արքիանուսը Դարեհ III-ի հրամանով Գավգամելա եկած ջոկատների թվում հիշատակում է նաև սողդացիների [5, III. 8.3], որոնց, սակայն, արդեն պարսից ռազմական դասավորության նկարագրության պարագայում կոչում է դահեր [5, III. 11.3]: Դրանից հասկանալի է դառնում, որ խոսքը հենց սողդական դահերի մասին է:

Դարեհ III-ի սպանությունից հետո սողդական դահերը ակտիվորեն աջակցեցին իրենց նախկին սատրապին՝ ինքնահռչակ արքա Բեսսին: Ք. ա. 329-328 թթ. նրանք մակեդոնացիներին համառորեն դիմադրեցին հատկապես Ձերավշանի հովտում և Մարականի մոտերքում [5, IV. 5.2-6.2; 10, VII. 7.31-39, VIII. 1.6]: Մասնավորապես Ձերավշանի ափին տեղի ունեցած մարտում Ալեքսանդրն ավելի շատ կորուստներ ունեցավ (ավելի քան 2000 մարտիկ) [10, VII. 6.24, VII. 9.21], քան Արևելյան արշավանքի ամբողջ նախորդ ժամանակահատվածում: Ալեքսանդրը ծայրահեղ դաժանությամբ ճնշեց Սողդի դիմադրությունը: Հունամակեդոնական զորքը ամայացրեց Ձերավշանի հովիտը՝ հրկիզելով բնակավայրերն ու սպանելով բոլոր չափահաս անձանց [5, IV. 5-6]: Որոշ տվյալներով մակեդոնացիներն այստեղ ոչնչացրել են 120 հազար մարդ, իսկ մյուսներին ստրկացրել են [51, 77]: Այս պատժիչ գործողությունները ընկճեցին Սողդին: Ք. ա. 327 թ. հնազանդեցվելով Ալեքսանդրին՝ սողդական դահերը ստիպված էին մասնակցել նրա Հնդկական արշավանքին [4, *Syz.* 167; 6, V. 12.2; 10, VIII. 14.5, IX. 2.24]:

Մակեդոնական տիրապետությունն արմատապես փոխեց Կենտրոնական Ասիայի նստակյաց և քոչվոր բնակչության կյանքը: Ալեքսանդրի ու նրա

⁶ Դահերի և սողդերի սերտ կապերի մասին է վկայում վաղ միջնադարի սողդական անվանաբանության մեջ պահպանված *Δαα*, *Δαᾱnānāk*, *Δαᾱč*, *Δαᾱzāte* անունները [24, 185-186; 50, 80]:

հետևորդների կողմից նոր քաղաքների հիմնումն ու դրանցում հույն գաղութարարների սովոր խմբերի վերաբնակեցումը խախտեց քոչվոր և նստակյաց բնակչության ներդաշնակ համակեցությունը⁷: Սողդի, Մարգիանայի, Արեյայի ու Պարթևստանի սահմանային գոտում պաշտպանական ամրությունների շղթայի ստեղծումը առաջացրեց քոչվորների թշնամանքը, քանի որ այն գնահատվեց որպես իրենց տեղաշարժերի վերահսկողության և օազիսների նստակյաց բնակչության հետ առևտրի սահմանափակման փորձ: Նրանց ճնշմանը դիմակայելու և տեղական բնակչության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար Ալեքսանդրը ստիպված էր Սողդում և Բակտրիայում 10 000-ոց հետևագոր և 3500-ոց հեծելագոր թողնել [5, IV. 22.3]:

Գրավոր տեղեկություններ չկան այն մասին, թե Ալեքսանդրի տերության սահմաններից անդին տարածվող քոչվորական աշխարհի նկատմամբ քաղաքականությունն ինչպես է անդրադարձել այդ տերության ներսում ապրող քոչվորների հետ հարաբերության վրա: Մակայն Ալեքսանդրի տերության «Վերին սատրապություններում» հույն գաղութարարների՝ Ք. ա. 327-325 թթ. և Ք. ա. 323 թ. ապստամբությունների վերաբերյալ գրավոր աղբյուրների վկայություններից երևում է [10, IX. 7. 1-11; 14, XVII. 99. 5-6; 15, XVIII. 7], որ տեղական բնիկ բնակչության նկատմամբ մակեդոնական իշխանությունները վարել են զուսպ և հավասարակշռված քաղաքականություն: Դիոդորոսը Ք. ա. 323 թ. ապստամբության վերաբերյալ հայտնում է, թե «*Ալեքսանդրի կողմից այսպես կոչված Վերին սատրապություններում բնակեցված հույները ցանկանում էին հունական կենսակերպ (την Ελληνικήν και διασταν)*» [13, VIII. 7.1]: «Հունական կենսակերպ» արտահայտության տակ պետք է հասկանալ համակեցության պոլիսային ձևը, որի հիմնային հատկանիշը քաղաքացու մասնակցությունն էր պետության կառավարմանը և նրա իրավական գերակայությունը ոչ քաղաքացիների նկատմամբ: Արիստոտելը հորդորում էր Ալեքսանդրին Ասիայի գաղութացումը իրականացնել պոլիսի միջոցով, որոնցում քաղաքացիական համայնքը պետք է գոյատևեր ստրկական մակարդակի իջեցված տեղական բնակչության հաշվին [55, 22-44]: Նրա համոզմամբ՝ բարբարոսները (հատկապես արևելյան բարբարոսները) ցածր են հույներից և հայրմ՝ Ասիայի բարբարոսների նկատմամբ հույների իշխանությունը բնությունից է նախասահմանված [46, VII. 6.1]: Բոլոր հիմքերը կան կարծելու, որ Բակտրիայի ու Սողդի ապստամբ հույն գաղութարարներն ավել կամ պակաս չափով տարված են եղել այս պանհելլենական գաղափարներով: Եվ թեպետ այդ ապստամբությունները ճնշվեցին, այնդուհանդերձ, հունական քաղաքաբնակչության

⁷ Ստրաբոնը հաղորդում է Ալեքսանդրի կողմից Սողդում և Բակտրիայում ութ քաղաքների և բազմաթիվ ամրությունների հիմնադրման մասին [40, XI. 11.4; Հմմտ. 20, XII. 5.13]:

վերոնշյալ տրամադրությունները շարունակվեցին նաև Ք. ա. III դ., մինչև որ Բակտրիայի արքա Եվտիդեմոս I-ը (Ք. ա. 225-մոտ 190 թթ.) մասնակիորեն քավարարեց նրանց պահանջը:

Ք. ա. 305 թ. քսանթիներն ու պիստուրները Սողդի նստակյաց և քոչվոր մյուս բնակչության հետ ճանաչեցին Սելևկյանների իշխանությունը [20, XV. 4; 4, *Syr.* 55], որին ենթակա մնացին մինչև Ք. ա. III դ. կեսերը⁸: Առաջին Սելևկյանները նույնպես մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին Սողդի և Բակտրիայի նկատմամբ: Առաջին հերթին դա արտահայտվում էր այդ երկրամասերի կառավարումը գահաժառանգներին վստահելով, դրանցում ռազմական մեծաքանակ ուժեր տեղակայելով, պաշտպանական ամրությունների ստեղծմամբ ու հունական գաղութացման թափով [40, XI. 11.4]: Ք. ա. IV դ. վերջին և III դ. սկզբներին Սելևկյանները Պատրոկլեսի և Դեմոդամոսի հրամանատարությամբ արշավախմբեր ուղարկեցին դեպի Կասպից ծովի և Տանախի ափերը [34, VI. 58]: Մ. Օլբրայխտի կարծիքով՝ դրանք հետախուզական նպատակներ են հետապնդել [28, 44]: Մինչդեռ այդ ձեռնարկները ճիշտ կլինի դիտարկել Կենտրոնական Ասիայի օազիսների նստակյաց բնակչությունից ու հելլենիստական քաղաքներից քոչվորներին վանելու և նրանց հետ սահմաններն ամրապնդելու ընդհանուր քաղաքականության ծիրում: Այն սաղորմ էր քոչվորներին, քանի որ մի կողմից խոչընդոտում էր սելևկյան նահանգների թալանին, մյուս կողմից՝ նրանց մեջ կասկածներ էր առաջացնում Սելևկյանների պաշտպանական կարողությունների նկատմամբ [18, 29; 33, 79]: Քոչվորների պատասխանը կտրուկ էր. Ք. ա. մոտ 280 թ. ներխուժելով Սելևկյանների տիրույթներ՝ նրանք հասան մինչև Մարգիանա և Արեյա՝ ավերելով Ալեքսանդրիա ու Հերակլեա քաղաքները [34, VI. 18.46-47; 34, VI. 67]⁹:

Սակայն Ք. ա. 261 թ. Անտիոքոս I-ի մահվանից հետո Սելևկյանները իրենց տերության արևմտյան մասում ծագած խնդիրների պատճառով դադարեցին մեծ ուշադրություն դարձնել Վերին սատրապություններին [62, 49]: Տարածաշրջանի քոչվորների նկատմամբ վերահսկողությունն ամբողջապես ընկավ տեղական իշխանությունների վրա: Բակտրիայի, Սողդի, Մարգիանայի և Արեյայի վերջին սելևկյան սատրապ [33, 81], ապա և ինքնահռչակ

⁸ Ըստ երևույթին, Ք.ա. VI-III դդ. սողդական դահերի վարչական ենթակայությունը Բակտրայում (*Zaprosia*) նստող պարսկական և մակեդոնական սատրապներին, իսկ ավելի ուշ՝ նաև հունա-բակտրիական արքաներին, հանդիսացել է այն պատմական հիմքը, որի վրա առաջացել է Արշակի (դահերի) բակտրիական ծագման մասին վարկածը [40, XI. 9.3]:

⁹ Ֆ. Հոլթը և այլք ներխուժողներին նույնացնում են ապարների հետ [18, 27-28; 33, 80; Հմմտ. 63, 575], ինչը Սելևկյանների սահմաններին նրանց հարևանից բնակության փաստի տեսանկյունից չի բացառվում:

արքա Դիողոտոս I-ին (Ք. ա. 246-239-235 թթ.)¹⁰ ու Սողոմուն նրա տեղապահ Եվտիդեմոսին աղբյուրները բնութագրում են քոչվորների նկատմամբ խիստ թշնամական վերաբերմունքով: Խիստ արտահայտված էր Դիողոտոս I-ի ատելությունը հատկապես ապարնների նկատմամբ: Դրա պատճառը, անկասկած, եղել է Մարգիանայի և Արեյայի վրա նրանց Ք. ա. 280-240-ական թթ. հարձակումները [33, 81; 32, 169]: Հնարավոր է, որ այդ ատելությունն ինքնաբերաբար տարածվել է նաև Սողոմուն ապրող նրանց ազգակից պիսսուրների և քսանթիների նկատմամբ: Բայց, ինչպես երևում է, սողոակյան դահերն իրենց «վաստակն» են ունեցել այդ հարցում:

Գրավոր տվյալներ չկան ապարնների ցեղառաջնորդ Արշակի Ք. ա. 247 թ. Ասասկում (Կուչանի մոտ՝ Ատրեկ գետի վերին ավազանում [30, 119]) տեղի ունեցած թագադրության [19, 11], Ք. ա. 246/245 թ. նրա՝ Մարգիանա և Արեյա [33, 81], ու Ք. ա. 238 թ. Պարթևստան ներխուժելու փաստերի հանդեպ սողոակյան դահերի վերաբերմունքի մասին: Բայց դժվար չէ պատկերացնել, որ այդ իրադարձությունները, ոգևորելով նրանց, հանգեցրել են ապարնների հետ էթնիկ նույնականության գաղափարի զարթոնքին: Արդյունքը եղել է նստակյաց բնակչության վրա պարբերական հարձակումների կենսակերպին վերադարձը [40, XI, 8.3]: Այդ հանգամանքի, ինչպես նաև ապարնների հետ իրենց ազգակցության պատճառով սողոակյան դահերը Բակտրիայի արքայի համար դարձել էին թշամական և անցանկալի տարրեր: Ըստ երևույթին, Արշակի դեմ Ք.ա. 246-245 թթ. պատերազմի ընթացքում Դիողոտոս I-ը, ի պաշտպանություն Բակտրիայի ու Սողոմի քաղաքների հելլենիստական, ինչպես նաև տեղական երկրագործ բնակչության, նույնիսկ ինչ-որ պատժիչ գործողություններ է իրականացրել սողոակյան դահերի նկատմամբ¹¹:

Դիողոտոս I-ի մահվանից հետո նրա որդի Դիողոտոս II-ը (Ք. ա. մոտ. 235-225 թթ.) հրաժարվեց դահերի նկատմամբ իր հոր թշնամական քաղաքականությունից և հաշտություն կնքեց Արշակի հետ [20, XLI, 4.9; 18, 19; 18, 25; 18, 62-64; 18, 66-69]: Դա, բորբոքելով քոչվորների նկատմամբ հույն և տեղացի նստակյաց բնակչության ատելությունը, Դիողոտոս II-ի դեմ գոյացրեց լուրջ ընդդիմություն: Վերջիններս Արշակ I-ի հետ Դիողոտոս II-ի հաշտու-

¹⁰ Դիողոտոս I-ի՝ իբրև Բակտրիայի արքայի կայացման շարժընթացի մասին տես [48, 22-27; 50, 373, սրմ. 450; 32, 45-46]:

¹¹ Ագաթոկլեսի (Ք. ա. 190-180 թթ.) թողարկած մի հուշադրամի վրա Դիողոտոս I-ին հետմահու շնորհված է *”Σοτήρ”* (Փրկիչ) պատվատիտղոսը: Ֆ. Հոլթն այս դրամները վերագրում է Դիողոտոս I-ին, իսկ դրանց առիթը համարում է մոտ. Ք. ա. 240 թ. Արշակի դեմ տարած հաղթանակը [18, 19]: Հելլենիստական արքաները սովորաբար այն ընդունում էին ներհանրության կարևոր խնդիրների լուծման առթիվ, ինչպիսին կարող էին լինել պիսսուրների ու քսանթիների դեմ ի շահ տեղական նստակյաց բնակչության ծավալած գործողությունները [Հմմտ. 33, 83]:

թյունը գնահատեցին որպես դավաճանությունն իրենց կենսական շահերի հանդեպ [62, 54]: Դիոդորոս II-ի ու նրա ողջ ընտանիքի սպանությունից հետո իշխանության եկավ հունական վերնախավի պարագլուխ և հակաքոչվորական քաղաքականության ջատագով [37, XI. 34.2-3], Մոդդի կառավարիչ Եվտիդեմոս I-ը, որը սաստկացրեց ճնշումները քոչվորների նկատմամբ [37, XI. 34.5]: Հուստինուսը ևս հաղորդում է, որ Եվտիդեմոսի քաղաքականությունն իր սուր ծայրով ուղղված է եղել հենց սողոթական դահերի դեմ: Իր «Համառոտագրության» XLI գիրքը նա սկսում է պարթևների ծագումնաբանությամբ. «Պարթևները... առաջացել են սկյութ վտարանդիներից: Դա երևում է նրանց իսկ անվանումից, քանզի սկյութական լեզվում «պարթևներ» վտարանդիներ է նշանակում» [20, XLI. 1.1-2]: Իսկ մի փոքր հետո հեղինակն ավելացնում է. «Նրանք, ովքեր ներքին խռովությունների պատճառով վտարվեցին Սկյութիայից, աննկատ (աստիճանաբար- Ս. Մ.) զբաղեցրին Հիրկանիայի, դահերի, Արեյայի, Սպարնոսի և Մարգիանայի միջև ընկած անապատը» [20, XLI. 1.10]:

Առաջին հայացքից շատ գայթակղիչ է Հուստինուսի հիշատակած «Սկյութիան» Արալի ծովից հյուսիս (*ὄπερ τῆς Μαυώτιδος*) տարածվող սկյութական տափաստանների հետ նույնացնելը, մանավանդ, որ հունական ավանդություններից մեկն այդ տարածքը համարում է դահերի բնակության նախնական շրջան [40, XI. 9. 3]: Հայդմ, դյուրին է նաև «Սկյութիայից վտարվածներին» Ստրաբոնի հիշատակած վտարանդի (*μετανάσταις*) ապարնների հետ նույնացնելը, առավել ևս, որ Հուստինուսը «Սկյութիայից վտարվածների» առաջնորդ է համարում Արշակին, որի նկարագիրը [20, XLI. 4.6-7] բավականին ընդհանրանում է Ստրաբոնի հաղորդումներին [40, XI. 9.2]: Այդուհանդերձ, դահերի, Արշակի և Պարթևական պետության ստեղծման մասին Ստրաբոնի և Հուստինուսի իմացական տարբերությունները ցույց են տալիս, որ այդ հեղինակները «Սկյութիա» և «Սկյութիայից վտարվածներ» արտահայտությունների տակ իրարից տարբեր աշխարհագրական և ժամանակային իրողություններ են նկատի ունեցել: Այսպես, Ստրաբոնն անվանապես գիտի դահերի միության երեք ցեղերին և Մեովտիսից հյուսիս տարածվող Սկյութիայից նրանց վտարվելու մասին: Ստրաբոնը գիտի նաև, որ Կասպից ծովին ամենամոտն ապրել է ապարնների ցեղը, որն էլ, իր առաջնորդ Արշակի ղեկավարությամբ նախաձեռնել է Պարթևստանի նվաճումը: Բայց նշելով, որ «*Մյժմ... մյուսները* (քսանթիներն ու պիսսուրները – Ս.Մ.) տարածվում են մինչև Արեյային հանդիպակաց երկիրը», հեղինակը լրության է մատնում այն հարցը, թե նրանք (*λοιποί*-մյուսները) երբ և որտեղից են եկել հիշյալ երկրամաս: Հուստինուսը, ընդհակառակը, անտեղյակ լինելով ապարններին, գիտի, որ «*Հիրկանիայի, դահերի, Արեյայի, Սպարնոսի և Մարգիանայի միջև ընկած անապատը*» բնակեցրել են «Սկյութիայից վտարվածները»: Երկու հեղինակների հաղորդումների համեմատությունից պարզորոշ երևում է, որ երկու

դեպքում էլ խոսքը վերաբերում է դահական միության երկու ցեղերին՝ քսանթիններին ու պիսսուրներին: Այս նույնականացումից հետևում է, որ Հուստինուսի հիշատակած «Մկյութիա» անվան տակ պետք է հասկանալ Ամուդարյայի ու Միրդարյայի միջագետքում ընկած Սողդը, որտեղ Ք. ա. IV-III դահերի բնակության մասին փաստում են ոչ միայն գրավոր աղբյուրները, այլ նաև հնագիտական նյութերը: Արտաքուստ այսպիսի տեղորոշման դեմ է խոսում այն փաստը, որ անտիկ աղբյուրները շատ հաճախ Սողդ և սկյութներ հասկացությունները ոչ թե նույնացնում են, այլ հիշատակում կողք կողքի: Մակայն պետք է հաշվի առնել, որ դրանցից առաջինը աշխարհագրական, իսկ երկրորդը՝ էթնիկական իմաստ ունի: Հայդմ, արտաքուստ տարբերվելով, գործնականում դրանք նույնանում են այն առումով, որ Սողդի բնակչությունը (նստակյաց և քոչվոր) գերազանցապես սկյութական էր: Վերոնշյալ տեղորոշումը բխում է նաև Հուստինուսի հաղորդման ժամանակագրական և աշխարհագրական համատեքստից. նախ, ակնհայտ է, որ նրա «Մկյութիայից վտարվել» արտահայտությունը ժամանակի առումով աղերսվում է ոչ թե դահերի պատմական անցյալում (Ք. ա. V-IV դդ.) տեղ գտած «վտարման» իրողություններին, այլ Արշակունիների պետության կազմավորման շրջանին [20, XLI. 4.6]: Մյուս կողմից՝ «Նրանք (վտարվածները – Ա. Մ.)... աննկատ գրադեցրին» արտահայտությունից ինքնին հասկացվում է, որ «վտարվածների» բնակության նախորդ և նոր շրջանները հարևան են եղել. փաստացի՝ այդ երկուսը բաժանված էին միայն Օքսոս գետով: «Մկյութիան» Սողդի և «Մկյութիայից վտարվածներին» քսանթինների ու պիսսուրների հետ նույնականացումները բխում են նաև Հուստինուսի հաղորդման քաղաքական համատեքստից. հեղինակը «վտարման» պատճառ է համարում «ներքին խռովությունները», մի արտահայտություն, որը լիովին համապատասխանում է Դիոդոսոսու II-ի կառավարման վերջին Սողդում ստեղծված իրավիճակին:

Նախկինում Դիոդոսոս II-ի անկումն ու Եվտիդեմոս I-ի իշխանության գալը պատկերացրել են պալատական հեղաշրջման ձևով [9, 187-188; 33, 111-112; 62, 53-60]: Մինչդեռ Այ-Խանում (Օքսոսյան Ալեքսանդրիա?) քաղաքից գտնված հնագիտական նյութերը պարզորոշ ցույց են տալիս, որ Բակտրիայի այդ խոշոր և ծաղկուն քաղաքը Ք. ա. 225 թ. ենթարկվել է պաշարման: Ֆ. Հոլթը իրավացիորեն դա կապում է Բակտրիայում կատարված իշխանափոխության հետ [18, 54-55]: Դրամագիտական տվյալները ևս ցույց են տալիս [18, 104-105], որ Եվտիդեմոսի կողմից իշխանության բռնազավթումը կատարվել է քաղաքացիական պատերազմի («ներքին խռովություններին») արդյունքում:

Դիոդոսոս II-ի և Եվտիդեմոսի միջև հակասություններում առանցքայինը քոչվորների նկատմամբ վերաբերմունքի հարցն էր: Հատկանշական է, որ Ք. ա. 209 թ. Մելևկյան արքա Անտիոքոս III-ի (Ք. ա. 223-186 թթ.) առջև իր ինքնակոչությունն արդարացնելու համար Եվտիդեմոս I-ը հայտարարում է, թե

«արքայական տիտղոսն ընդունել է քոչվորական հորդաներին զսպելու համար» [37, XI. 34.5]: Այդ պայմաններում բնական է կարծել, որ ի թիվս Սողդի ու Բակտրիայի այլ քոչվորների, քսանթիներն ու պիսուրները ևս այս կամ այն չափով աջակցել են ի շահ իրենց գործող Դիոդոտոս II-ին ընդդեմ Եվտիդեմոսի: Վերջինիս հաղթանակից հետո նրանք բնականաբար հայտնվելու էին հաղթողի վրեժխնդրության սպառնալիքի տակ: Հուստինուսի հաղորդումից երևում է, որ սողդական դահերը փրկության ելքը գտել են Սողդից հեռանալու մեջ:

4. «Սկյութիայից վտարվածները» Արշակունիների պետության հիմնադիրն է ր

Անտիկ պատմագրությունը Արշակունիների պետության առաջացման վերաբերյալ թողել է երկու ավանդություն: Առաջինը Ստրաբոնի ու Պոմպեոս Տրոգուսի/Հուստինուսի միջոցով մեզ հասածն է, որը, ընդունված կարծիքի համաձայն, հիմնված է Ապոլլոդորոսի «Պարթիկա» երկի վրա [26, 107-122; 32, 126-140]: Երկրորդը, որը ներկայացված է եղել Արրիանուսի «Պարթիկա» երկում [61, 304-314], հիմնված է մեզ անհայտ մեկ այլ պարթևահունական աղբյուրի վրա [3, 203-226; 25, 31-52]: Արդի պատմագիտությունը առաջինը գնահատում է «պատմական», իսկ երկրորդը՝ «վիպական», որը ստեղծվել է Արշակունիների տիրապետությունը գաղափարապես օրինականացնելու համար [7, 29-36: 11, 123-124; 16, 128; 26, 119; 32, 126-146; 44, 14, 39-40, 56-57; 45, 23-29, 41-44]:

Դահերի սկյութական ծագման, Արշակի քաղաքական դիմապատկերի և նրա կողմից Պարթևստանի նվաճման մասին Ստրաբոնի ու Հուստինուսի պատումները որոշակիորեն ընդհանրանում են: Բայց Արշակունիների պետության ստեղծման շարժընթացի մասին այդ երկու հեղինակների պատումների միջև առկա են սկզբունքային տարբերություններ, որոնք նույնիսկ առիթ են տալիս կարծելու, որ Պոմպեոս Տրոգուսի/Հուստինուսի աղբյուրը բնավ էլ Ապոլլոդորոսը չի եղել¹²: Մի կողմ թողնելով Ստրաբոնի պատումի համեմատ Հուստինուսի երկի պարունակած ժամանակագրական, անվանական և աշխարհագրական բնույթի տարբերությունները, հարկ ենք համարում կանգ առնել առանցքային խնդրի վրա՝ այն է՝ ովքե՞ր են նվաճել Պարթևստանը:

Ստրաբոնը Պարթևստանի նվաճումը վերագրում է Արշակի առաջնորդած ապարնների դահական ցեղին, որը, համաձայն հեղինակի, Պարթևստան ներխուժելու նախօրեին ապրում էր Օխի (Ստրեկ) հովտում [40, XI, 9.2; 50, 82; 63: 576, որ. 2]: Իսկ Պարթևստանի նվաճման գործում քսանթիների ու պիս-

¹² Հուստինուսը, XLI գրքում խոսելով պարթևների սկյութական ծագման մասին, հիշատակում է ասորեստանցիներին ու մարերին նրանց (*veluti vulgus sine nomine*) հպատակության մասին, որը պատմական չէ և չի կարող Ապոլլոդորոսի «Պարթիկայից» քաղված լինել:

սուրների մասնակցության մասին ուղիղ ոչինչ չասելով՝ հույն աշխարհագետը նշում է միայն, որ «*Մյծմ* (այսինքն՝ հեղինակի ժամանակներում – Ա. Մ.)... *մյուններն* (քսանթիներն ու պիստուրները – Ա. Մ.) *սպրում են Արեյայի դիմացի երկրունս*»: Ատրեկի և Մումբարի հովտում դահական դամբարանների առկայությունն ու Աստաունեի Ասաակ քաղաքում Արշակ I-ի թագադրության մասին Իսիդորոսի վկայությունը հաստատում են Ստրաբոնի հաղորդումների իսկությունն ու դրանցից բխող այն պատկերացումը, որ դահերի ներխուժումը Պարթևստան կատարվել է հյուսիսից: Մինչդեռ Հուստինուսը Պարթևստանի նվաճումը վերագրում է «Հիրկանիայի, դահերի, Արեյայի, Սպարնոսի և Մարգիանայի միջև ընկած անապատում» վերաբնակված «Սկյութիայից վտարվածներին»։ «*Մյնուհետև նրանք սկսեցին ընդարձակել իրենց տիրությունները՝ սկզբում առանց հարևանների խոչընդոտների, իսկ հետագայում՝ չնայած նրանց հակադեցությունը...*» [20, XLI. 1. 11]:

Ինչ խոսք, Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի հակիրճ տվյալների համեմատ Հուստինուսի հաղորդումներն ավելի մանրամասն ու համընդգրկուն են: Ուստի, զարմանալի չէ, որ շատ ուսումնասիրողներ Արշակունիների պետության կազմավորումը պատկերացրել են Հուստինուսի պատումի սցենարով [7, 29-36; 11, 123-124; 33, 85-86; 32, 126-146: Հմմտ. 8, 28-31; 22, 23-26; 43, 222-238; 44, 56-57; 53, 338-346, 357-358]: Այդուհանդերձ, ստրաբոնյան (ապոլլոդորոսյան) ավանդության հետ Պարթևստանի նվաճման գործում «Սկյութիայից վտարվածների» մասնակցության ժամանակի, դերի և չափի վերաբերյալ Հուստինուսի հաղորդման ակնհայտ հակասությունները պահանջում են քննադատաբար վերանայել հռոմեացի մատենագրի աղբյուրագիտական հիմքի ու պատմականության չափի վերաբերյալ գոյություն ունեցող պատկերացումները:

Հուստինուսի «*Epitoma Historiarum Philippicarum Pompei Trogi*» երկը, ինչպես որ նրա խորագիրն է հուշում, ոչ թե ինքնուրույն ստեղծագործություն, այլ Օգոստոս կայսեր (Ք. ա. 27-Ք. հ. 14 թթ.) ժամանակների հռոմեական պատմագիր Պոմպեոս Տրոգոսի՝ մեզ չհասած «*Historiae Philippicae et Totius Mundi Origines et Terrae Situs*» աշխատության համառոտագրությունն է [42, 358-371]: Այդ ժանրը համառոտագրողի առջև մի հիմնական պահանջ էր դնում՝ հավատարիմ մնալ բնագրին: Հետևաբար, հարց է ծագում, թե որքանով է մեր հեղինակը հավատարիմ մնացել այդ կանոնին: Դրա պարզելը բավականին դյուրին է, քանի որ մեզ է հասել Պ. Տրոգոսի երկի մոտ 300 թ. կազմված «Պրոլոգները» [20, 306-324], որոնք պարունակում են Պ. Տրոգոսի աշխատության գրքերի (գլուխների) բովանդակությունների հանգամանակից նկարագրությունները: Հակառակ սպասվածին՝ XLI գրքի «Պրոլոգում» «Սկյութիայից վտարվածների» գաղթի մասին ոչ մի խոսք չկա [20, 323]: Դրանից հետևում է, որ Պ. Տրոգոսի երկի բնագրում նույնպես այդ մասին ոչինչ չի եղել, և Հուստինուսն իր «*Epitoma*»-ի վերննշյալ մասում պարզապես ազատություն է տվել իր

երևակայությանը՝ Պ. Տրոգուսի պատումին հավելելով Պարթևստանում դահերի հաստատման մասին իրեն հայտնի կամ մտացածին տվյալները [41, 136-137]: Սակայն մյուս կողմից՝ «Սկյութիայից վտարվածների» վերաբնակման մասին հեղինակի հաղորդումը ժամանակի, հանգամանքների և աշխարհագրության առումներով բավականին ներդաշնակում է Ստրաբոնի տվյալներին, որպեսզի նրան վերաբերվենք իբրև սխալի կամ կեղծ երևակայության արգասիքի: Միանշանակ է, որ այդ ավանդությունը, որտեղ Պարթևստանի նվաճման դափնիները ապարների ցեղի փոխարեն վերագրված է քսանթիներիին և պիստուրներին, չէր կարող Ապոլլոդորոսի «Պարթիկայից» բխել: Միևնույն ժամանակ, քիչ հավանական է, որ նման ավանդություն կարող էր ձևավորվել Արշակունիների օրոք կամ էլ նրանց թագավորության անկումից հետո՝ իրենց ազդեցությունն ու դիրքը պահպանած պարթևական պահլավների միջավայրում: Փոխարենը, Պարթևական պետության ստեղծման մասին Հուստինոսի հաղորդումների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ ավանդության հեղինակը նույն ինքը՝ Հուստինոսն է: Անտեղյակ լինելով դահերի միության եռացեղ կառուցվածքին և Օխի հովտում ապարների ցեղի առանձին բնակության փաստին՝ նա դահերի հանրությանը պատկերացրել է բացառապես ի դեմս Սողո-Սկյութիայից «վտարվածների»: Ուստի, միանգամայն բնական է, որ նա Պարթևստանի նվաճումը վերագրել է վերջիններին և Արշակին էլ, որի համբավը որպես Պարթևական պետության հիմնադրի, աներեր էր, համարել է նրանց առաջնորդը:

5. Սողական դահերի գաղթի ժամանակը

Ե՞րբ է տեղի ունեցել Սողական դահերի միգրացիան: Այդ հարցի պատասխանը կարելի է գտնել Մելևկյան ու բակտրիական արքաների հետ Արշակ I-ի հարաբերությունների համատեքստում Ստրաբոնի և Հուստինոսի մի քանի ակնարկների կարևորման միջոցով: Այսպես, Ստրաբոնը Պարթևստանի Ք. ա. 238 թ. նվաճումից հետո Արշակ I-ի դրությունը նկարագրում է «սկզբում նա թույլ էր՝ մշտապես պատերազմելով նրանց դեմ, որոնց հողերը գավթել էին...» արտահայտությամբ [40, XI. 9.2]: Մեկ այլ տեղ նա վկայում է, որ Մելևկոս II-ի (Ք. ա. 246-225 թթ.) դեմ պատերազմում Ք. ա. մոտ. 230 թ. պարտվելուց [50, 33, 192-197: Հմմտ. 12, 13; 22, 33-43; 53, 344] և նվաճված տարածքները կորցնելուց հետո Արշակ I-ը ստիպված ապաստանել է ապասիակների ցեղի մոտ [40, XI. 8.8]: Այդ երկու ակնարկից հասկացվում է, որ Արշակի թուլության և պարտության պատճառը եղել է նրա իշխանության էթնոքաղաքական հենքի բացառապես ապարների ցեղից բաղկացած լինելը: Իսկ վերջինիս մարդկային և ռազմական ներուժը բավարար չէր Պարթևստանին տիրելու և հարևան հելլենիստական երկրների թշնամանքին դիմակայելու համար:


Մելևկոս II-ի հետ մոտ. Ք. ա. 230 թ. կնքած հաշտությամբ Արշակ I-ը

ճանաչեց նրա տիրապետությունն ու պարտավորվեց զինվորներ մատակարարել սելևկյան բանակին: Փոխարենը Արշակին թույլատրվեց մնալ Ատրեկի ու Սումբարի հովտում: Այդուհետ, մինչև Ք. ա. 217 թ. Ռափնեի ճակատամարտում Անտիոքոս III-ի պարտությունը, Արշակ I-ը պահպանեց հաշտության պայմանները: Անշուշտ, Արշակն այս ընթացքում հասկացել է իր ձախողման հիմնապատճառը և մտորել է իրավիճակը շտկելու ուղիների մասին: Արշակ I-ի իշխանության հենարանը տեղական բնակչության հաշվին ընդլայնելը գործնականում բացառվում էր, քանի որ նա Պարթևստանի հելլենիստական ու տեղական նստակյաց բնակչությանն ասելի էր դարձել՝ նախընթաց հարձակումների ու կարճատև տիրապետության ընթացքում իրականացրած հողազրկման և ունեզրկման պատճառով: Նման պայմաններում Արշակ I-ին իր դրությունը բարելավելու մի միջոց էր մնում՝ ազգակից ցեղերին Պարթևստանի նվաճման գործին ներգրավելը [Հմմտ. 29, 74-75; 41, 89]: Արշակ I-ի քաղաքական կացության քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սողողական դահերի միգրացիան դեպի Պարթևստանի և Արեշայի միջև ընկած կիսանապատներ սկսվել է հենց ապարնների առաջնորդի կանչով: Իհարկե, քսանթինների ու պիսսուրների գաղթի դեպքում անխուսափելիորեն պետք է գոյանար դահական միության և նրա միջցեղային հիերարխիայի (քսանթինների առաջնորդության) վերականգնման խնդիրը: Սակայն, Արշակ I-ի իրավաքաղաքական նոր (արքայական) կարգավիճակն ու Պարթևստանի նվաճման նրա նախաձեռնությունն այն գորեղ գործոններն էին, որոնց շնորհիվ Արշակը չի երկյուղել սողողական դահերին օգնության կանչելու հարցում: Մյուս կողմից, սողողական դահերի կացությունն էլ այնպիսին չէր, որ թույլ տար գաղթի հարցում նախապայմաններ առաջադրել: Բակտրիայի արքա Եվտիդեմոս I-ի հակաքոչվորական քաղաքականությունը և «հելլենական վրեժառության» մասին հիշողությունը սողողական դահերին, ըստ էության, զրկում էին այլընտրանքից: Այս պարագայում նրանց միգրացիայի միակ խոչընդոտը դառնում էր Ք. ա. 230 թ. Սելևկոս II-ի հաղթանակից հետո Պարթևստանում վերականգնված սելևկյան վարչությունը [36, V. 43.6]: Ըստ երևույթին, Արշակին ու սողողական դահերին հաջողվել է այդ արգելքը շրջանցել «աննկատ» գաղթի միջոցով: Իսկ երբ Ք. ա. 217 թ. Անտիոքոս III-ի պարտությունից հետո Արշակ I-ը կրկին նվաճեց Պարթևստանը, սողողական դահերի միգրացիայի վերոնշյալ խոչընդոտն իսպառ վերացավ:

Մասնագիտական գրականության մեջ, որպես կանոն, Արշակ I-ի կողմից Պարթևստանի կրկնակի նվաճման իրողությունն անտեսվել է: Շատ ուսումնասիրողներ, հենվելով Հուստինուսի տվյալների վրա [20, XLI. 4.9-10], համարում են, որ Արշակ I-ը Ք. ա. 230 թ. հաղթանակ է տարել Սելևկոս II-ի դեմ պատերազմում և իր ձեռքում պահել Պարթևստանը: Սակայն այս պարագայում անտեսվում է ոչ միայն Ք. ա. 222 թ. Պարթևստանում սելևկյան վարչության առկայության մասին Պոլիբիոսի վկայությունը [36, V. 43.6], այլև Ստրաբոնի

հաղորդումն այն մասին, որ Արշակը Պարթևստանին տիրել է Բակտրիայում Եվտիդեմոս I-ի իշխանության գալուց (Ք. ա. 225 թ.) հետո [40, XI. 9.2]: Դրանից ինքնին պարզ է դառնում, որ Մելիկոս II-ի կառավարման սկզբներին Արշակի ներխուժումը Պարթևստան [40, XI. 9.2] չի կարող նույնանալ Մելիկյան այդ արքայից հետո կատարված երկրորդ ներխուժման հետ, առավել ևս, որ Ստրաբոնը առաջինի ժամանակակից բակտրական արքային համարում է Դիոդոտոս I-ին, իսկ երկրորդի ժամանակակցին՝ Եվտիդեմոս I-ին:

Քսանթինների ու պիսսուրների տեղափոխվելը Պարթևստանի սահմանակից շրջան եռապատկեց Արշակ I-ի էթնոքաղաքական հենքն ու նրա ռազմական ներուժը: Արդյունքում, Արշակ I-ը կարճ ժամանակում նվաճեց նաև Հիրկանիան: Անտիկ հեղինակները հստակ արձանագրել են տարածաշրջանի ուժերի հարաբերության մեջ կատարված այդ կտրուկ փոփոխությունը: Ստրաբոնն Արշակ I-ի ձախողումների մասին ակնարկից հետո նշում է, թե «Ավելի ուշ նրանք (Արշակն ու նրա հետևորդները - Ս. Մ) այնքան զորեղացան, որ շնորհիվ պատերազմական հաջող գործողությունների, մշտապես գավթում էին հարևան տարածքները» [40, XI. 9.2]: Արշակի կողմից «մեծ զորքի ստեղծումը» փաստում է նաև Հուստինուսը, որը, շփոթելով իրադարձությունների պատճառահետևանքային կապը, ոչ թե Հիրկանիայի նվաճումն է պայմանավորում «մեծ զորքի ստեղծմամբ», այլ «երկու թագավորությունների տիրանալն» է համարում «մեծ զորքի ստեղծման» պայման [20, XLI. 4.8]: Սակայն Հուստինուսի այդ մեկնաբանությունը պետք է գնահատել որպես Արշակ I-ի նվաճողական քաղաքականության ինքնատիպ հոետորական ընդհանրացում: Ավելի վաղ՝ նա «Սկյութիայից վտարվածների» զբաղեցրած նոր տարածքի հարևան երկրներն արևմուտքից արևելք թվարկելու պարագայում Պարթևստանի փոխարեն Հիրկանիայի և Արեյայի միջև դահերին հիշատակելով [20, XLI. 1.10], անուղակիորեն փաստել էր, որ «վտարանդիներն» իրենց նոր բնակության շրջան են հասել դահերի մեկ այլ խմբի կողմից Պարթևստանը նվաճելուց հետո: Հայդմ, Հիրկանիայի նվաճումը պետք է համարել Արշակ I-ին քսանթինների ու պիսսուրների զորակցության առաջին արդյունքը: Ամեն դեպքում, Անտիոքոս III-ի Ք. ա. 209 թ. Արևելյան արշավանքի ժամանակ սողողական դահերի վերաբնակեցումը նոր երկրամասում արդեն ավարտված էր: Մելիկյան այդ արքան թեպետ կարողացավ հպատակեցնել Արշակ II-ին, ստիպված էր համակերպվել նոր էթնոդեմոգրաֆիական իրողության հետ: Սյուս կողմից Զերավշանի հովտի դամբարանադաշտերում Ք. ա. II-Ք. հ. I դ.դ. թվագրվող դահական թաղումների առկայությունը վկայում է այն մասին, որ քսանթինների ու պիսսուրների ինչ-ինչ խմբեր մնացել են Սողդում և ժամանակի ընթացքում անցել նստակյաց կենսակերպի:



- Արեւմտյան տերության սահման Քա. VI-III դդ. սկզբներին
- Տեղական տերության սահման Քա. V դ. վերջ, IV դ. սկզբներին
- Տեղական տերության առանձին երկրամասեր
- Քաղաքներ
- Ամրոցներ
- Դահերի դամբարանադաշտեր Քա. VI-III դդ.

- Դահերի թոշր Քա. VI-V դդ. սկզբներին
- Դահերի միգրացիան Քա. V դ. առաջին քարորդին
- Ապարների միգրացիան Քա. III դ.
- Քասերիների և պիստուրների միգրացիան Քա. IV-III դդ.

Քարտեզի հեղինակ՝ Ա. Ս. Մելիքյան
 Համակարգչային վերամշակումը՝ հեղինակի

Նկար 1. Քարտեզ

Գրականություն

1. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
2. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, Գյումրի, 2021:
3. Մելիքյան Ա., Արշակունիների պետության առաջացումը համաձայն Արրիանուսի «Պարթիկա» երկի առաջին գրքի սվյալների, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պր. Ա, 2, Երևան, 2021, էջ 203-226:
4. Appian's Roman Hitory, Vol. II, Translated by H. White, London, 1962.
5. Arrian, Anabasis Alexandri, with an English Translation by E. Iliff Robson, in Two Volumes, Vol. I, Books I-IV, London, Cambridge Mass, 1967.
6. Arrian, Anabasis Alexandri, with an English Translation by E. Iliff Robson, in Two Volumes, Vol. II, Books V-VII, London, Cambridge Mass, 1966.
7. Assar G., Geneology and Coinage of the Early Parthian Rulers, Part II: A Revised Stemma, Parthica 7, Pisa-Roma 2005, pp. 29-63.
8. Bivar A., The Political History of Iran Under Arsacids, In: Yarshater Ehsan (ed.), Cambridge History of Iran, Vol. 3.1, New York, 1983, pp. 21-99.
9. Bivar A., The History of Eastern Iran. In: Yarshater Ehsan (ed.), Cambridge History of Iran, Vol. 3.1, New York, 1983, pp. 181-231.
10. Curtius R., History of Alexander, Vol. I, Books 1-5, Vol. II, Books 6-10, Translated by J. C. Rolfe, Cambridge, MA: London.
11. Dąbrowa Ed., The Parthian Kingship. In: Concepts of Kingship in Antiquity: Proceedings of the European Science Foundation Exploratory Workshop Held in Padova, November 28th – December 1st, 2007, Edited by Giovanni B, Lanfranchi & Robert Rollinger, Padova, 2010, pp. 123-134.
12. Debevoise N., A Political History of Parthia, Chicago, Illinois, 1938.
13. Diodorus S., Library of History, Vol. III (Books 4.59-8), Translated by C. H. Oldfather, Harvard University Press, 1939.
14. Diodorus S., Library of History, Volume VIII, Books 16.66-17, Translated by C. Bradford Welles, Harvard University Press, 1963.
15. Diodorus S., Library of History, Volume IX: Books 18-19.65, Translated by Russel M. Geer, Cambridge, MA: Harvard University Press, 1947.
16. Gregoratti L. The Arsacid Empire, in: King of the Seven Climes, A History of the Ancient Iranian World (3000 BCE - 651 CE), Edited by Touraj Daryae, Jordan Center for Persian Studies, 2017, pp. 125-153.
17. Harmatta J., Studies in the History and Language of the Sarmatians, Szeged, 1970.

18. Holt F., *Thundering Zeus: The Making of Hellenistic Bactria*. Berkeley, CA: University of California Press, 1999.
19. Isidoros, *Parthian Stations of Isidore of Carax*, Ed. W.H. Schoff, Philadelphia, 1914.
20. Ivstinvs M., *Ivniiani Ivstini Epitoma Historiarvm Philippicarvm Pompei Trogi*. Accedvnt Prologi in Pompeivm Trogum, Stvtgardie, 1985.
21. Kidd F., *Complex Connections: Figurative Art from Akchakhan-Kala and the Problematic Question of Relations Between Khoesm and Parthia*, *Topoi* 17, 2011, pp. 229-276.
22. Lerner J., *The Impact of Seleucid Decline on the Eastern Iranian Plateau: The Foundations of Arsacid Parthia and Graeco-Bactria*, Stuttgart, 1999.
23. Lerner J., *Mithridates I and the Parthian Archer*. In: *Arsacids, Romans, and Local Elites*. Ed. by J. M. Schlude and B. B. Rubin, Oxford and Philadelphia, 2017, pp. 1-24.
24. Lurje P., *Personal Names in Sogdian Texts*. Wien, 2010.
25. Melikyan A., *The Hypothesis of the Arsacids' Descent from the Achaemenids: Myth or Reality?*, *Բանբեր Արևելագիտությունն ինստիտուտի*, ½ 2021, pp. 31-52.
26. Nikonorov V., *Apollodorus of Artemita and the Date of his Parthica Revisited*, *Electrum*, vol. 2, Kraków, 1998, pp. 107-122.
27. Olbrycht M., *Die Beziehungen der Steppennomaden Mittelasiens zu den hellenistischen Staaten (bis zum Ende des 3. Jahrhunderts vor Chr.)*. In: B. Funck (ed.), 1996, pp. 147-169.
28. Olbrycht M., *Parthia et ultiores gentes: die politischen Beziehungen zwischen dem arsakidischen Iran und den Nomaden der eurasischen Steppen*. München, 1998.
29. Olbrycht M., *Parthia and Nomads of Central Asia. Elements of Steppe Origin in the Social and Military Development of Arsacid Iran*. *Militär und Staatlichkeit, Orientwissenschaftliche Hefte* 12., Halle, 2003, pp. 69-110.
30. Olbrycht M. *Parthian Cities and Strongholds in Turkmenistan*, *International Journal of Eurasian Studies*, Vol. II, Editors in Chief Yu Taishan and Li Jinxui, English Ed. Bruse Doar, 2015, pp. 117-125.
31. Olbrycht M., *The Aparnoi in the Arsacid History*, In: *Древности Восточной Европы, Центральной Азии и Южной Сибири в контексте связей и взаимодействий в евразийском культурном пространстве (новые данные и концепции): Материалы Международной конференции, 18-22 ноября 2019 г., Санкт-Петербург*. Т. I. СПб, 2019, с. 161-165.
32. Olbrycht M., *Early Arsacid Parthia (ca. 250-165 b.c.)*. *At the Crossroads of Iranian, Hellenistic, and Central Asian History*. Leiden, Boston, 2021.

33. Overtoom N., *Reign of Arrows. The Rise of the Parthian Empire in the Hellenistic Middle East*, Oxford, 2020.
34. Pliny Natural History with an English Translation by H. Rackhem, in *Ten Volumes*, Vol. II, Libri III-VII, Cambridge Mass., London, 1961.
35. Photius, *Bibliotheca*, Ed. R. Henry, I, Paris, 1959.
36. Polybius, *The Histories with an English Translation by W.R. Paton*, in *Six Volumes*, Vol. III, Books V-VIII, Cambridge, London, 1979.
37. Polybius, *The Histories with an English Translation by W.R. Paton*, in *Six Volumes*, Vol. IV, Books IX-XV, London, New York, 1925.
38. Rapoport Y., *Chorasmia i, Archeology and Pre-Islamic History*, *Enciclopaedia Iranica*, Vol. V, Fasc. 5, 1991, pp. 511-516.
39. Schmitt R., *Die altpersischen Inschriften der Achaimeniden. Editio minor mit deutscher Übersetzung*, Wiesbaden, 2009.
40. Strabo, *The Geography of Strabo, with an English Translation by H.L. Jones*, Vol. V, Books X-XII, the Loeb Classical Library, Cambridge, Mass. – London, 1928.
41. Strootman R., *The Coming of the Parthians: Crisis and Resilience in Seleukid Iran in the Reign of Seleukos II*, in: K. Erickson ed., *The Seleukid Empire, 281-222 BC: War Within the Family*, Swansea: Classical Press of Wales, 2018, pp. 129-150.
42. Syme R., *The Date of Justin and the Discovery of Trogus*, *Historia: Zeitschrift für Alte Geschichte* Bd. 37, H. 3, 3rd Qtr., 1988, pp. 358-371.
43. Wolski J., *L'historicité d'Arsaces I*. *Historia* Bd. 8 (2), 1959, pp. 222-238.
44. Wolski J., *L'Empire des Arsacides*, *Acta Iranica* 32, Lovanii, 1993, pp. 56-57.
45. Wolski J., *Seleucid and Arsacid Studies. A Progress Report on Developments in Source Research*, Kraków, 2003.
46. Аристотель, *Политика*, См. Сочинения, том IV, Москва, 1983, с. 375-644
47. Балахванцев А., *Дахи Средней Азии в эпоху Александра Македонского: данные нарративной традиции, Восток. Афроазиатские общества: история и современность*. 2012. № 1, с. 29-36.
48. Балахванцев А., *Рождение Греко-Бактрии*, *Вестник НГУ, Серия: История, филология*, том 13, вып. 8, 2014, с. 22-27.
49. Балахванцев А., *Среднеазиатские дахи в IV–II вв. до н.э. (по данным археологии)*, *Российская археология* № 1, Москва, 2016, с. 11-24.
50. Балахванцев А., *Политическая история Ранней Парфии*, Москва, 2018.
51. Бежанова Л., *Древние авторы о Средней Азии: (VI в. до н. э.-III в. н. э.)*. *Хрестоматия*, Ташкент, 1940.
52. Вайнберг Б., *Изучение памятников Присарыкамышской дельты Амударьи в 70–80-х годах. Скотоводы и земледельцы Левобережного Хорезма*. Вып. 1 / Б.И. Вайнберг (ред.). Москва, 1991, с. 5-109.

53. Зеймаль Е., Греко-Бактрия. Парфия (III–II вв. до н.э.). См. История таджикского народа. Т. 1, Р.М. Масов (ред.), Душанбе, 1998, с. 338-346, 350, 357-358.
54. Итина М., Археологические памятники на древних торговых путях вдоль берегов Амударьи. Древности Южного Хорезма. ТХАЭ. Том XVI, Москва, 1991.
55. Кошеленко Г., Аристотель и Александр: (К вопросу о подлинности «Письма Аристотеля к Александру о политике по отношению к городам»), Вестник древней истории, - № 1 (127), 1974, с. 22-44.
56. Кошеленко Г., Гаиров В., «География» Страбона как источник по проблеме возникновения Парфянского и Греко-Бактрийского царств. См. Политика, идеология, историописание в римско-эллинистическом мире / О. Л. Габелко (ред.). Казань, 2009, с. 102-108.
57. Лившиц В., Три серебряные чаши из Исаковского могильника № 1, Вестник Древней истории № 2, Москва, 2002, с. 43-55.
58. Обельченко О., Кую-Мазарский могильник. Труды Института истории и археологии АН УзССР, Вып. 8, Ташкент, 1956, с. 205-227.
59. Обельченко О., Лявандакский могильник. История материальной культуры Узбекистана, Вып. 2, Ташкент, 1961, с. 97-176.
60. Обельченко О., Могильник Акджартепе. История материальной культуры Узбекистана, Вып. 3, Ташкент, 1962, с. 57-70.
61. Перевалов С., Из наблюдений за структурой «Парфики» Арриана: датировка и жанр произведения, Iranica: Иранские империи и греко-римский мир в VI в. до н. э. - VI в. н. э., Казань, 2017, с. 304-314.
62. Попов А., Греко-Бактрийское царство, С.-Петербург, 2008.
63. Пьянков И., Средняя Азия и Евразийская степь в древности, Санкт-Петербург, 2013.
64. Ставиский Б., Средняя Азия в Ахеменидскую эпоху. См. История таджикского народа. Т. 1 / Р.М. Масов (ред.), Душанбе, 1998. с. 250-273, 274-282.
65. Трудновская С., Ранние погребения югозападной курганной группы могильника Туз-гыр. Кочевники на границах Хорезма / М.А. Итина (ред.), Москва, 1979, с. 101–110.
66. Яблонский Л., Некрополи древнего Хорезма (археология и антропология могильников), Москва, 1999.

Согдийские дахи и формирование государства Аршакидов

Артур Меликян

Резюме

Ключевые слова: *апарны, ксантии, писсурь, Ахемениды, Парфия, Согдиана, Бактрия, Страбон, Юстин, Аршак I, Диодот I, Евтидем I*

В начале IV в. до н. э. дахские племена ксантиев и писсуров были вытеснены независимым Хорезмом из придельтовых степей Амударьи и получили от ахеменидского царя Артаксеркса II новую территорию для кочевья в Согдиане, в бассейне Зеравшана. В результате этого переселения трехплеменной, союз дахов практически раскололся на две части. Их традиционные связи и централизованная система управления были нарушены.

Согдийские дахи приспособились к сатрапской администрации Бактрии и до конца оставались верными династии Ахеменидов. Но после установления македонского владычества в Согдиане в 327 г. до н. э. их положение стало ухудшаться.

Политика жесткого контроля над кочевниками со стороны македонской администрации «Верхних сатрапий» превратила ранее нормальное и взаимовыгодное сосуществование кочевого и оседлого населения оазисов во враждебные отношения. Положение согдийских дахов особенно ухудшилось в период правления бактрийского царя Диодота I, а после прихода к власти Евтидема I (225 г. до н. э.) стало безысходным.

Важным толчком для их миграции к восточным берегам Амударьи стал призыв о помощи предводителя племени апарнов Аршаку I. После первой неудачной попытки завоевать Парфию, перед ним встала задача расширения своей социальной базы, что, по сути, он мог сделать только за счет переселения родственных дахских племен. Переселение согдийских дахов или, как их называет Юстиниан, «изгнанных из Скифии» в «Страну, расположенную напротив Ареи», началось постепенно и основная их часть обосновалась здесь после 217 г., когда Аршак I во второй раз завоевал Парфию.

После более чем столетнего раздела, две части дахского союза снова воссоединились, но уже в новых административно-политических реалиях, под царским управлением вождя апарнов Аршака I. Иммиграция ксантиев и писсуров резко увеличила военный потенциал Аршака I, благодаря чему он не только в короткий срок завоевал Гирканию, но и противостоял Греко-Бактрийскому царству. С другой стороны, участие в образовании государства Аршакидов и сохранение господства дахов над населением Парфии и Гиркании давало племенному совету ксантиев и писсуров право и возможность претендовать на высокое положение во вновь созданной общественно-политической системе государства.

Sogdian Dahai and the Formation of the Arsacid State

Artur Melikyan

Summary

Key words: *the Aparns, the Xanthi, the Pissurs, the Achaemenids, Parthia, Soghdiana, Bactria, Strabo, Arshak I, Diodotos I, Evtidemos I*

At the beginning of 4th century BC, the Dahai tribes of the Xanthi and Pissurs were ousted from the steppes of left bank of Amu Darya's delta by newly independent Khorezm. They received from the Achaemenid king Artaxerxes II a new migration area in Soghdiana, in the Zeravshan basin. As a result of this resettlement, the three-tribal union of Dahai practically split into two parts. Their traditional connections and centralized control system were broken. The Sogdian Dahai adapted to the satrapy administration of Bactria and remained loyal to the Achaemenid dynasty until the end. However, in 327 BC, after the establishment of Macedonian rule in Soghd, their condition began to deteriorate. The policy of tight control over the nomads by the Macedonian administration of the "Upper satrapies" changed the previously normal and mutually beneficial coexistence of the nomadic and settled population of the oases into hostile relations. The condition of the Sogdian Dahai especially deteriorated during the reign of the Bactrian king Diodotos I, and after the reign of Evtidemos I (225 BC) it became hopeless. An important impetus for their migration to the eastern shores of the Amu Darya was the call for help from King Arshak I, the leader of the Apars tribe. After the first unsuccessful attempt to conquer Parthia, the latter faced the task of expanding its social base, which, in fact, he could only do by resettling kindred Dahai tribes.

The resettlement of the Sogdian Dahai, or, as Justinian calls them, "the ones expelled from Scythia" to the "country opposite to Areia" began gradually, and most of them settled here after 217 BC, the period when Arshak I conquered Parthia for the second time. After more than a century of separation, the two parts of the Dahai Union reunited again, but in new administrative and political realities, under the royal rule of Arshak I, the leader of the Apars. The immigration of the Xanthi and the Pissurs sharply increased the military potential of Arshak I, due to which he not only conquered Hyrcania in a short time, but also opposed the Greco-Bactrian kingdom. On the other hand, participation in the Arsacid State formation and the Dahai's dominance preservation over the population of Parthia and Hyrcania, provided the tribal lider clans of Xanthi and the Pissurs with the right and opportunity to claim a high position in the newly created socio-political system of the Arsacid State.

Ներկայացվել է 15.04.2023 թ.

Գրախոսվել է 22.05.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

**«Եվրոպա» շաբաթաթերթը 1848-1850 թթ.
դանիա-պրուսական պատերազմի մասին**

Ֆելիքս Մովսիսյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-235>

Հանգուցային բառեր. Շլեզվիզ, Հոլշտայն, Դանիա, Պրուսիա, պատերազմ, Գերմանական միություն, զինադադար, Ֆրանկֆուրտյան խորհրդարան, «Եվրոպա»

Նախաբան

1848 թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխության հաղթանակի լուրը բարերար ազդեցություն ունեցավ եվրոպական մի շարք երկրներում, որտեղ նախ՝ հեղափոխական, այնուհետև՝ ազգային-ազատագրական շարժումներ ու պայքար ծավալվեց հանուն ազգային ինքնավարության և անկախության: Ի թիվս եվրոպական այլ ժողովուրդների՝ ազգային պայքարի ելան նաև Յուտլանդիա թերակղզու հարավում ընկած գերմանացիներով բնակեցված Շլեզվիզ-Հոլշտայնի դքսությունները, որոնք դեռևս 1460 թ. կառավարվում էին Դանիայի թագավորի կողմից: 1720 թ. Ֆրեդրիկսբուրգի պայմանագրով ամբողջ հարավային Յուտլանդիան անցավ Դանիայի տիրապետության տակ, իսկ 1721 թ. Ֆրիդրիխ IV-ը ճանաչվեց Շլեզվիզի և Հոլշտայնի ժառանգական տիրակալ: 1806 թ. Դանիան՝ որպես Նապոլոնյան Ֆրանսիայի դաշնակից, Շլեզվիզը հայտարարեց իր տիրույթը: 1815 թ. Վիեննայի վեհաժողովի որոշմամբ՝ Դանիան պահպանեց իր իրավունքը դքսությունների նկատմամբ, բայց Հոլշտայնը հայտարարվեց Գերմանական միության անդամ: 1830-ական թթ. դքսություններում ազգային շարժումը ծավալվեց ինքնավարություն ձեռք բերելու և միասնական սահմանադրություն ունենալու նպատակով:

1840-ական թթ. դքսությունների պայքարն էլ ավելի սրվեց՝ կապված սկանդինավիզմի բուրժուական լիբերալ շարժման հետ, որը հռչակում էր սկանդինավյան երեք երկրների ոչ միայն պատմական և մշակութային, այլև քաղաքական ընդհանրություն [35, 179, 218, 233, 234; 40, 119]: Դանիայում քաղաքական սկանդինավիզմը ծառայում էր Հարավային Յուտլանդիան ամբողջությամբ տիրելուն և խանգարում էր գերմանացիների ազգային միավորմանը, որին ձգտում էին նաև դքսությունները: 1848 թ. սկզբին Շլեզվիզ-Հոլշտայնի դքսություններում Գերմանական միության հետ ազգային միավորման նպատակով նոր շարժում ծավալվեց, որը հանգեցրեց դանիա-պրուսական պատերազմի: Այն լայն արձագանք գտավ ժամանակի ինչպես եվրոպական, այնպես էլ հայ պարբերական մամուլում: Դանիա-պրուսական հա-

կամարտությանն անմիջականորեն անդրադարձել է հայ ազգային-պահպանողական հոսանքի գաղափարակիր «Եվրոպա» քաղաքական շարքաթերթը: Մխիթարյանների դիրքորոշումը դքսությունների ազգային շարժման և դանիա-պրուսական պատերազմի նկատմամբ բացահայտելը կարևոր է հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության համար:

«Եվրոպա» քաղաքական շարքաթերթը

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ 1847 թ. հունիսին Վիեննայի Մխիթարյան միաբանների հրատարակած «Եվրոպա» շարքաթերթը կարևոր և ուրույն տեղ է զբաղեցնում հատկապես եվրոպական երկրներում ընթացող քաղաքական իրադարձությունների հրատապ ու բովանդակալից հրապարակումների հարցում: Պարբերականի հրատարակման նախաձեռնող և հովանավոր, պոլսահայ նշանավոր ամիրա Հակոբ Չելեպի Տյուզյանը Մխիթարյան միաբաններին պատվիրել էր հրատարակել քաղաքական բնույթ ունեցող թերթ, որն «ամփոփ տեղեկություններ» պետք է ներկայացներ ընթերցողների լայն շրջաններին Եվրոպայում կատարվող քաղաքական անցուղարձի մասին: Նա թերթի ապագա լրագրողներին հորդորում էր այդ մասին գրել «ծանրությամբ, հանդարտությամբ, ընտրությամբ և կարելի եղածին չափ մաքուր ոճով» [1, 100]:

«Եվրոպային» աշխատակցող միաբաններ Ղևոնդ վարդապետ Հովնանյանը, Փիլիպոս վարդապետ Ճամճյանը և Եփրեմ վարդապետ Չագրճյանը, առաջնորդվելով իրենց տրված պատգամով, 1848-1849 թթ. եվրոպական հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումները լուսաբանեցին հնարավորինս «չափավոր» տոնով, հիմնականում անկողմնակալ ու անաչառ դիրքերից: Մխիթարյաններն իրենց լրագրի «վախճանն ու դիտումը» համարում էին «Աստված, Հայրենիք ու գիտություն» և պարտավորվում, որ այդ «բարձր վախճանը մեր ընթերցողներուն ազնուական մտածութիւններուն ալ համաձայն ըլլալով, լրագիրներուս մշտնջենաւոր ու անկեղծ կնիքը կը մնայ»: Քաղաքական իրադարձությունները լուսաբանելու հարցում Մխիթարյանները խոստանում էին «Ժամանակիս ամէն դէպքերը, մանաւանդ հիմնական Եվրոպայի խռովութիւնները, իրենց բնական՝ աղէկ կամ գեշ գունով նկարել, որ ընթերցողները աղէկը տեսնեն ու հետևին, գեշն իմանան ու փախչին» [13, 112]:

Մխիթարյանները հավատարիմ մնացին ստանձնած այս ուղեգծին և 1848-1849 թթ. եվրոպական քաղաքական շարժումները լուսաբանեցին «Հավատարմության և ճշմարտասիրության» տեսանկյունից: Նրանք ստացված պաշտոնական և հեռագրական լուրերի ու մամուլի բազմաբնույթ հրապարակումների վերլուծության հիման վրա հանգամանորեն ներկայացնում են

եվրոպական երկրներում տեղի ունեցող քաղաքական գործընթացները: Այդ մասին «Եվրոպայի» հրապարակումները վկայում են, որ Մխիթարյան միաբանները բավական իրազեկ էին եվրոպական երկրների ժողովուրդների պայքարի մանրամասնություններին: Դրանք շատ հաճախ առանց չափազանցության սկզբնաղբյուրի դեր են խաղում: Այս իմաստով ուշագրավ են թերթի հրապարակումները բազմաթիվ քաղաքական իրադարձությունների, այդ թվում՝ 1848-1850 թթ. դանիա-պրուսական պատերազմի մասին:

«Եվրոպան» պատերազմի պատճառների մասին

Անդրադառնալով Դանիայում տիրող վիճակին՝ «Եվրոպան» գրում է, որ 1848 թ. հունվարի 19-ի առավոտյան, 62 տարեկանում, վախճանվել է Քրիստիան VIII թագավորը: Հունվարի 21-ին գահը ժառանգել է նրա որդի Ֆրեդերիկ Կարլ Քրիստիանը: Այդ մասին թագավորական պալատի պատշգամբից արդարադատության նախարար Սեդմանը բարձրաձայն երեք անգամ հայտարարեց՝ «Քրիստիան ութերորդ թագավորը մեռավ, կեցցե՛ Ֆրեդերիկ յոթերորդ թագավորը»: Ամեն անգամ այս խոսքերն արտաբերելուց հետո երաժշտական փողեր հնչեցին, այնուհետև Ֆրեդերիկ VII-ը պատշգամբ դուրս եկավ ու ժողովրդին ողջունեց [2, 22, 23]:

Ստանձնելով Դանիայի թագը, գրում է «Եվրոպան», Ֆրեդերիկ VII թագավորը ժողովրդին հղած ուղերձում հայտարարում է, որ մտադիր է իր հոր դրած կարգերն ու օրենքները հաստատուն պահել: Նա միաժամանակ խոստանում է Դանիային ու Շլեզվիգ-Հոլշտայնի դքսություններին նոր սահմանադրություն շնորհել՝ պահպանելով նրանց իշխանությունն ու իրավունքները: Այդ նպատակով «հրամայել է մասնաւոր ժողովք մը դրուի որ աս բանիս վրայ աղէկ մտածէ»:

«Եվրոպան» ճիշտ էր տեղեկացված Շլեզվիգ-Հոլշտայնի դքսություններին սահմանադրություն շնորհելու մասին Դանիայի միապետի մտադրության վերաբերյալ, որը մահվանից առաջ փորձեց իրականացնել դեռևս Քրիստիան VIII-ը: Նա ժողովրդին ուղղված բաց նամակում հայտարարեց, որ դքսություններն անքակտելիորեն կապված են Դանիայի հետ և հանդիսանում են դանիական թագավորների ժառանգական տիրույթը: 1847 թ. դեկտեմբերին նա հրահանգեց Դանիայի և դքսությունների համար միասնական սահմանադրության նախագիծ մշակել, բայց չհասցրեց պետական խորհրդում այն քննարկել, քանի որ հունվարի 20-ին հանկարծամահ եղավ: Նրա մահից ութ օր անց Ֆրեդերիկ VII-ը, կատարելով հոր կամքը, սահմանադրություն հռչակելու մտադրություն հայտնեց, որի դեմ ըմբոստացան հոլշտայնցիները, որոնք ցանկանում էին ունենալ Շլեզվիգի հետ հավասար հատուկ կարգավիճակ [45, 92; 35, 235; 36, 11; 37, 81; 42, 348]:

«Եվրոպան» Ֆրեդերիկ VII-ի առաջին քայլերի թվում հիշատակելու արժանի է համարում 1848 թ. հունվարի 26-ի հրովարտակը, որով նա իր հորեղբայր Ֆրեդերիկ Ֆերդինանդին հայտարարում էր թագաժառանգ: Թերթի հավաստի տվյալներով՝ նա թագավորից 16 տարի մեծ է և զավակ չունի, ուստի նրա մահից հետո գահը ժառանգելու է Ֆրեդերիկ VII-ի հորաքրոջ տղան: Դանիական օրենքը թույլ է տալիս գահաժառանգությունն նաև կանանց գծով, իսկ Շլեզվիգ-Հոլշտայնի դքսություններում իշխանությունը կարող են ժառանգել միայն արական սեռի ներկայացուցիչները: Քրիստիան VIII թագավորը, հաշվի առնելով, որ Ֆրեդերիկը զավակ չունի և չի կարող երկու գերմանական դքսությունները ժառանգել, որոշեց «Դանիացուց օրենքը նոյն դքսութիւններուն վրայ տարածել. Շլեյզուիկ-Հոլշտայնցիք ասոր վրայ շատ խռովեացան, անոր համար ալ մեջերնին վեճ բացուեցաւ» [3, 27]:

«Եվրոպան» ճիշտ էր տեղեկացված, որ Դանիայում և դքսություններում գահաժառանգման տարբեր կարգեր էին գործում: Սկսած 1665 թ. Դանիայում գահը, բացի տղամարդկանցից, կարող էին ժառանգել նաև կանանց գծով ներկայացուցիչները, իսկ Հոլշտայնում՝ միայն տղամարդիկ: Շլեզվիգում գահաժառանգման հարցը վիճահարույց էր: Ֆրեդերիկ VII-ը դքսությունների գահաժառանգման խնդիրը կարգավորելու նպատակով նոր սահմանադրության նախագիծ հրապարակեց, որը Շլեզվիգը և Հոլշտայնը հռչակում էր Դանիական թագավորության տիրույթ: Մարտի 18-ին դրա դեմ Ռենդսբուրգում ընդվզած դասային բոլոր խավերի ներկայացուցիչների ժողովը միաձայն որոշեց դիմել թագավորին և պահանջել Շլեզվիգ-Հոլշտայնին սահմանադրություն շնորհել, որը հնարավորություն կտար միավորվել Գերմանական միությանը: Հոլշտայնի այս քայլը քաղաքական ալեկոծություն առաջ բերեց Կոպենհագենում՝ դանիական լիբերալների շրջանում: Նրանք, ոգևորված 1848 թ. մարտի սկզբին Վիեննայում և Բեռլինում լիբերալների ունեցած հաջողություններից ու անհանգստացած Շլեզվիգ-Հոլշտայնում գերմանական հայրենասերների նախապատրաստվող ելույթի մասին տեղեկություններից, ոտքի ելան: Մարտի 20-ին, երբ հայտնի դարձավ Ռենդսբուրգի ժողովի որոշման մասին, դանիական լիբերալները մայրաքաղաքի «Կազինո» թատրոնում հավաքույթ անցկացրին: Հաջորդ օրը մոտ 20 հազար մարդ Կոպենհագենի քաղաքային վարչության անդամների գլխավորությամբ երթ կազակերպեց դեպի Քրիստիանսբուրգ՝ թագավորական պալատ, և Ֆրեդերիկ VII-ին ներկայացրին նախորդ օրը «Կազինոյում» կայացրած լիբերալների պահանջը՝ դքսությունները Դանիային միավորելու և նոր սահմանադրություն շնորհելու մասին: Թագավորը հայտարարեց, որ դանիացիների վստահության դեպքում նրանց կառաջնորդի «պատվի և ազատության ճանապարհով» ու բավարարելով լիբերալների պահանջը՝ մարտի 22-ին կազմեց նոր կառավարություն: Այն գլխա-

վորեցին լիբերալ առաջնորդներ, աստվածաբան Դիտլեվ Մոնրադը, փաստաբան Օրլա Լեմանը և զինվորական Անտոն Չերնինգը, չնայած առաջին նախարար նշանակվեց պահպանողական Ադամ Մոլտկեն: Դքսություններում վիճակը հանգստացնելու և լիբերալներին մեղմելու նպատակով Ֆրեդերիկ VII-ը խոստացավ սահմանադիր ժողով հրավիրել [35, 236-238; 40, 121; 45, 92; 36, 12; 42, 348]:

Պատերազմի արձագանքը «Եվրոպա» շաբաթաթերթում

«Եվրոպան» իրավացիորեն նկատում է, որ երբ Կոպենհագենում ժողովուրդը ոտքի էլավ, թագավորը պարտավորվեց կառավարությունը փոխել: Միաժամանակ «Շլեզվիգ-Հոլշտայնի դքսութեան բանն ալ որոշեցաւ: Աս դքսութիւնն ալ անկախ կ'ուզէ ըլլալ» [4, 59]: Միանգամայն ճիշտ ընկալելով դքսությունների պայքարի նպատակը՝ Մյնիխարյան միաբանության լրագրողները հավաստի տվյալներով գրում են, որ մարտի 24-ի առավոտյան հոլշտայնցիներն ապստամբեցին Քիլում ու ժամանակավոր կառավարություն ստեղծեցին: Ջոքքն ամեն տեղ ժողովրդի կողմն անցավ: Թերթը տպագրում է հոլշտայնցիների ժամանակավոր կառավարության հայտարարությունը, որտեղ ասվում էր, որ Դանիայի թագավորը Կոպենհագենում ժողովրդական խռովության արդյունքում «դքսութեան դէմ թշնամական կարգադրութիւն մը սկսաւ ընել: Երկրի տէրերուն կամքը ալ ազատ չէ, ու երկիրը առանց կառավարութեան է: Մենք չենք կրնար թողուլ որ Գերմանացոց երկիրը Դանիացոց յափշտակութեանը մատնուի: Մեծ վտանգները մեծ ալ որոշումներ կ'ուզեն. սահմանները պաշտպանելու եւ կարգաւորութիւն մը հարկաւոր է» [4, 59]:

«Եվրոպան» նկատի ունի դանիական արքայատոհմի Օլդենբուրգների ճյուղի տղամարդկանց գծով ներկայացուցիչ Շլեզվիգի կառավարիչ արքայազն Ֆրեդերիկ Նյորսկցու փաստացի անարյուն պետական հեղաշրջումը: Մարտի 23-ին նա հեշտությամբ գրավեց Ռենդսբուրգի ամրոցը, որի կայագորի մեծ մասն անցավ Շլեզվիգ-Հոլշտայնցիների շարժման կողմը: Մարտի 24-ին դուքս Քրիստիան Ավգուստ Աուգուստենբուրգցու՝ Քիլում ձևավորած ժամանակավոր կառավարությունը հայտարարություն տարածեց և Հարավային Շլեզվիգն ու Հոլշտայնը հռչակեց դանիական թագավորությունից անկախ՝ պատճառաբանելով, որ թագավորն իր գործողություններում ազատ չէ և գտնվում է Կոպենհագենի փողոցային ամբոխի ազդեցության տակ: Հյուսիսային Շլեզվիգը և Յուտլանդիան հավատարիմ մնացին թագավորին, ով, դքսությունների ապստամբությունից անհանգստացած, խոստացավ նրանց օգնել [45, 92; 35, 238; 40, 121]:

Այս կապակցությամբ «Եվրոպան» գրում է, որ թագավորը մարտի 27-ին Շլեզվիգ-Հոլշտայնցիներին հղած նամակում «կը յորդորեր որ ապստամբութենէ ետ կանեն հանդարտին»: Թերթի ունեցած լուրերով՝ Ֆրեդերիկ VII-ը

շլեզվիզցիներին և Գերմանական միության անդամ հոլշտայնցիներին խոստանում է «Դանիայի հետ միացեալ մնալով ու ձեր անձնական գործակցութեամբը՝ ազատ ազգային սահմանադրութիւն մը պիտի ունենաք: Թէպէտ էւ մէկ կառավարութիւն է, բայց անով ձեր անկախութիւնը ամեննին չըվնասիր, որովհետև առանձին դատաստան պիտի ունենաք: Բայց Շլեզվիզ-Հոլշտայնցիները ամենեւին չուզեցին գլուխ ծռել ու թագաւորին խոնարհիլ: Ասոր համար թագաւորը իրենց դէմ պատերազմի ելավ» [5, 71]:

Ֆրեդերիկ VII-ը, թէև դքսութիւններին սահմանադրութիւն և ինքնավարութիւն էր խոստանում, բայց դանիացիները դէմ էին ու ցանկանում էին պահպանել Հարավային Յուտլանդիան: Դանիացիների և դքսութիւնների հակամարտութիւնը հանգեցրեց պատերազմի: Հակամարտող կողմերի բանակներում տիրում էին ազգայնամոլական տրամադրութիւններ, թէև արդարութիւնը դքսութիւնների կողմն էր, որոնց գերմանացի բնակչութիւնը ցանկանում էր միանալ իրենց հայրենակիցների հետ: Ապստամբ Հոլշտայնի ժամանակավոր կառավարութիւնն օգնութիւն խնդրանքով դիմեց Գերմանական միությանը, որին անմիջապէս արձագանքեց Պրուսիան: Ֆրիդրիխ-Վիլհելմ թագաւորը երազում էր տնտեսական ու ռազմավարական նշանակութիւն ունեցող դքսութիւնները միացնել Պրուսիային, որին այդ հարցում սատարում էին Հաննովերը, Օլդենբուրգը, Բրաունշվեյգը և գերմանական այլ պետութիւններ: Գերմանական լիբերալ-բուրժուական շրջանները ձգտում էին օգտվել դքսութիւնների պայքարից, հասնել նրանց անջատմանը Դանիայից և Հոլշտայնի օրինակով Շլեզվիզը մտցնել Գերմանական միության մեջ: Առաջնորդվելով այս մտայնութեամբ՝ Պրուսիան առանց պատերազմ հայտարարելու, չունենալով որևէ տարաձայնութիւն Դանիայի հետ, ապրիլի 6-ին իր զորքերը մտցրեց Հոլշտայն [43, 17; 36, 12; 37, 81]:

«Եվրոպայի» պատմելով՝ Գերմանական միությունում որոշեցին, որ Պրուսիան օգնի դքսութիւններին, եթէ Դանիան հարձակվի նրանց վրա, ու բավական զորք ուղարկեցին: Բայց գերմանացիների «այդ որոշումները ուշացած էին», որովհետև դանիացիներն ավելի շուտ հարձակվեցին շլեզվիզցիների վրա և ապրիլի 9-ին Ֆլենսբուրգի մոտ հաղթանակ տարան, որից հետո գրավեցին Շլեզվիզ քաղաքը: Թերթը Ռենսբուրգից ստացված լուրերով գրում է, որ դանիացիները հաղթանակ տարան շնորհիվ իրենց ռազմանավերի աջակցութեան, որոնց թնդանութիւնը գնդակոծեցին շլեզվիզցիներին: Նրանք 800 զինվոր կորցրին, որոնք «սաստիկ յուսահատութեամբ կը պատերազմէին»: Թերթը դժբախտութիւն է համարում շլեզվիզցիների քիչ թվով հրամանատարներ ունենալը: Նրանցից կոմսը Պավտիսար «շատ քաջութեամբ կը պատերազմէր, բայց չկրցաւ յաղթել, 200 հոգի՝ միայն իր գնդէն մեռան» [5, 71-72]:

«Եվրոպան» հավաստի է ներկայացնում Ֆլենսբուրգից հյուսիս՝ Բոռի

մոտ, դանիական գեներալ Գեդեմանի գլխավորած 10 հազար զորքի հաղթանակը, որից հետո դանիացիները հաստատվեցին դաննեվիլիպայան դիրքերում: Բայց դքսություններին օգնության եկած 200 հազար պրուսական զորքը շուտով փոխեց իրավիճակը [35, 239]:

Այս իրողությունը հաստատում է «Եվրոպան», որի տեղեկություններով ապրիլի սկզբին հոլշտայնցիներին օգնության շտապած պրուսացիները դիրքավորվեցին Էվենշտեդդի մոտ, ապա դանիացիներին ստիպեցին ետ քաշվել իրենց դիրքերից: Ապրիլի 20-ից հետո տեղի ունեցած կռիվներում, գրում է «Եվրոպան», Պրուսիայի «հանդուգն զինվորները» հարձակեցին Կոդորբ ամուր բերդի վրա և չորս-հինգ ժամ կռվից հետո դանիացիներին փախուստի մատնեցին: Պրուսական գնդերը, հաղթականորեն առաջ շարժվելով, գրավեցին Շլեզվիգ քաղաքը: Ապրիլի վերջին ստացված լուրերով թերթը տեղեկացնում է, որ դանիացիների զորքը Շլեզվիգի դքսությունից ամբողջովին դուրս է եկել: Գերմանացիների և հատկապես պրուսացիների զորքը «հաղթանակավ կեցած են, թեպետ եւ իրենց կողմանէ ալ շատ մարդ կորսւընցուցին» [6, 76; 7, 82]:

Թերթն իրավացի է. 1848 թ. ապրիլի 23-ին պրուսական 35 հազար զորքի հրամանատար գեներալ Ֆրիդրիխ Վրանգելը Շլեզվիգ քաղաքի մոտ հաղթեց դանիացիներին, այնուհետև գրավեց Ֆրեդերիսիա ամրոցը, Ռենսբուրգ, Քրոբ, Դանեվիլի, Ֆրեդերիկսբերգ քաղաքները: Դանիացիներին ամբողջովին դուրս մղեցին Շլեզվիգից և ապաստանեցին Այլս(Ալգեն) կղզում [35, 239-240; 40, 121; 45, 93]:

Այս մասին իրագեկ «Եվրոպան» գրում է, որ Շլեզվիգում կրած պարտությունից հետո թեպետ դանիացիները ծովում պատերազմական գործողություններ սկսեցին և Պրուսիայի շատ նավեր ոչնչացրին, բայց «ասով բան մը չվաստակեցան»: Գերմանացիները ցամաքում մինչև Ֆրեդերիսիա հասան ու գրավեցին: Դանիացիները զինադադար խնդրեցին, բայց պրուսական զորքի հրամանատար գեներալ Ֆրիդրիխ Վրանգելը նրանց մերժեց: Նա հայտարարեց, որ մինչև Ալգենից ու Շլեզվիգին պատկանող մյուս կղզիներից դանիացիները դուրս չգան, զինադադարի մասին խոսք լինել չի կարող [8, 86]:

1848 թ. մայիսին դանիացիները դիրքավորվեցին Դյուպպելյան ամրություններում: Հարավային Յուտլանդիան գրաված գեներալ Ֆ. Վրանգելի հաջողությունները շուտով կասեցվեցին Շվեդիայի սպառնալից դիրքորոշման և Անգլիայի ու հատկապես Ռուսաստանի միջամտության պատճառով: Շվեդիան, առաջին անգամ առաջնորդվելով սկանդինավիզմի համերաշխության ոգով, 15 հազար օժանդակ կորպուս ուղարկեց Դանիա, որը, սակայն, պատերազմական գործողություններ չձավալեց: Շվեդիան իր բանակն ու նավատորմը մարտական վիճակում պահեց ու Պրուսիային զգուշացրեց, որ

Յուտլանդիան գրավելու դեպքում հանդես կգա նրա դեմ [39, 336]:

«Եվրոպայի» տեղեկություններով Գերմանական միության Դանիայի հետ ունեցած հակամարտության պատճառով Շվեդիան նույնպես սկսեց պատերազմական պատրաստություններ տեսնել: Շոնեն գավառում Շվեդիան 36 հազար բանակ է պատրաստել, որ երեք մասի պետք է բաժանվի՝ երեք գեներալների հրամանատարության տակ: Այս պատրաստության նպատակը թերթի կարծիով այն է, որ գերմանացիները Շլեզվիգ-Հոլշտայնի պատճառով Դանիայից տարածք չնվաճեն: Դրանով Հյուսիսային Եվրոպայի «հավասարակշռությունը կորսուելով՝ իրեն ալ վնաս մը չհասնի»: Այս մասին Բեռլինում Շվեդիայի դեսպանը տեղեկացրեց Պրուսիայի կառավարությանը և հայտնեց, որ իր «պատրաստությունը միայն ինքը զինքը պաշտպանելու համար է»: «Եվրոպայի» կարծիքով Պրուսիայի կառավարությունը Դանիան կամ Սկանդինավյան երկրները նվաճելու միտք չունի: Եթե Պրուսիան Յուտլանդիա մտնի, ապա միայն այն բանի համար, որ Դանիային ստիպի Շլեզվիգ-Հոլշտայնից հրաժարվել: «Եվրոպայի» տեղեկություններով Դանիային պատժելու նպատակով Գերմանական միության խորհրդարանում Պրուսիայի դեսպանն առաջարկեց որոշում ընդունել Գերմանիայի ու Պրուսիայի նավահանգիստներում ու գետերում դանիական որոշով նավարկող նավերն արգելափակել, մինչև որ «Դանիացիները խոնարհին ու խաղաղութիւն խընդրեն»: Թեպետ խորհրդարանն այս առաջարկությանը «կատարեալ իրավունք տվեց», բայց չցանկացավ այդ մասին օրենք ընդունել և որոշեց, դանիացիներին ստիպել վճարելու պատճառած վնասները: Թերթի տեղեկություններով, չնայած գեներալ Ֆ. Վրանգելի սպառնալիքներին, դանիական ռազմանավերը գտնվում են Բելդի նեղուցում և սպասում են շվեդների օգնությանը [9, 91; 10, 96]:

«Եվրոպան» անդրադառնում է նաև դանիա-պրուսական պատերազմի հարցում Անգլիայի դիրքորոշմանը: Թերթը նշում է, որ համայնքների պալատում մայիսի 4-ին արտգործնախարար լորդ Պալմերստոնը հայտարարեց, որ Դանիային ու Պրուսիային Շլեզվիգ-Հոլշտայնի խնդրով Անգլիայի միջնորդությունները հարգվել են: Այս հայտարարությունը խորհրդարանում «մեծ հաճութեամբ ընդունուեցավ» [9, 91]:

Անգլիան զորակցություն դրսևորեց Դանիային միայն այն պատճառով, որ չէր ցանկանում վերջինիս մասնատումը և Պրուսիայի դիրքերի ուժեղացումը Հյուսիսային ու Բալթիկ ծովերի ափերին, որը հակասում էր իր տնտեսական շահերին [43, 18]:

1848 թ. մայիսին Անգլիան ու Շվեդիան Պրուսիայից պահանջեցին իրենց զորքերը դուրս բերել Յուտլանդիայից: Շվեդական ռիկստադագի գաղտնի կուրիտեն որոշում կայացրեց, որ եթե պրուսական զորքերը սպառնան Յուտլանդիային ու կղզիներին, ապա 15 հազար զորք կուղարկի Դանիային

օգնության: Շվեդական կառավարությունը պաշտոնական Բեռլինին տեղեկացրեց, որ Յուտլանդիան գրավելու դեպքում պատերազմ կհայտարարի Պրուսիային: 1848 թ. մայիսին՝ պրուսական զորքերի՝ Յուտլանդիա ներխուժելուց հետո, Շվեդիան ռազմական դաշինք կնքեց Դանիայի հետ, իսկ հուլիսին 4500 զինվոր ուղարկեց կղզիները պաշտպանելու համար [39, 366]:

Դանիային առավել լուրջ աջակցություն ցուցաբերեց Ռուսաստանը, որի դիրքորոշմանը «Եվրոպան» չի անդրադառնում ռուսական մամուլի հրապարակումներին ծանոթ չլինելու պատճառով: Քանի որ թերթը անկողմնակալ դիրքերից է լուսաբանում դանիա-պրուսական հակամարտությունը, առանց որևէ մեկնաբանության և վերլուծության, տպագրում է ապրիլի 28-ին Համբուրգից ստացված մի տեղեկություն: Համաձայն այդ լուրի՝ Դանիան օգնություն է խնդրել Ռուսաստանից, որը պատասխանել է, թե ամենևին չի ցանկանում միջամտել այդ խնդրին [7, 82]:

Պրուսիայից ստացված այս լուրն ակնհայտ ապատեղեկատվություն էր և չէր համապատասխանում իրականությանը: Հավատարիմ մնալով 1815 թ. Վիեննայի դաշնագրության դրույթներին՝ Ռուսաստանը մի կողմից Դանիային պարտադրում էր իր մոտեցումը թագավորությունում ստատուս քվոն վերականգնելու անհրաժեշտության մասին, մյուս կողմից՝ Պրուսիայից պահանջում էր պահպանել եվրոպական քաղաքական հավասարակշռությունը: Նիկոլայ I-ը հանդիմանում էր իր աներորդուն՝ Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ IV-ին, «հեղափոխության հետ դաշինք կնքելու համար»: Ռուսաստանը հայտարարեց, որ Շվեդիա-Հոլշտայնը պատկանում է Դանիային և Կոպենհագենի պաշտպանության նպատակով մի նավախումբ ուղարկեց այնտեղ [44, 41; 43, 18]:

Նիկոլայ I-ը բազմիցս հայտարարում էր, որ եվրոպական կարգի օրինական հիմքը հանդիսանում է 1815 թ. Վիեննայի դաշնագրով սահմանված քաղաքական հավասարակշռությունը, որը փոփոխման ենթակա չէ: Առաջ քաշելով այս սկզբունքը՝ նա հասավ այն բանին, որ պրուսական զորքերը լքեցին Յուտլանդիան: Հուլիսի 2-ին Ռուսաստանը, Անգլիան ու Շվեդիան զինադադարի պայմաններ թելադրեցին Պրուսիային: Հունիսի 5-ին դանիացիները հաղթանակ տարան պրուսացիների նկատմամբ, որոնք մտադիր էին իրենց վերադարձնել Հյուսիսային: Ծովերում դանիական նավատորմը շարունակում էր գերիշխել, որովհետև Պրուսիան նավատորմ չուներ: Այդ առավելությունը չեզոքացնելու նպատակով գնե՞րալ Ֆ. Վրանգելը ներխուժեց Հյուսիսային Յուտլանդիա, բայց շուտով հարկադրված դուրս եկավ, որովհետև Ռուսաստանը սպառնաց պատերազմով, իսկ Շվեդիան ու Նավեգիան պատրաստվում էին օգնել Դանիային [35, 240; 39, 366; 40, 121]:

«Եվրոպան» տեղեկացած էր, որ Նորվեգիայի թագավորը խորհրդարանին

հորդորել է 260 հազար ռեալ հատկացնել, որպեսզի երկրի ցամաքային ու ծովային ուժերը կարողանան Դանիային օգնության հասնել՝ Գերմանական միության և Պրուսիայի նոր հարձակման դեպքում: Ըստ թերթի՝ Շվեդիան հայտարարել է, որ չի կարող «հանդարտ ու անտարբեր աչքով նայել», թե ինչպես են պրուսացիները նվաճում Դանիայի մի մասը: Դա կխախտի Հյուսիսային Եվրոպայում «քաղաքական հավասարակշռությունը», որով Շվեդիայի և Նորվեգիայի «ապագա հաջողութեան ու ապահովության համար շատ վախ կրնայ ըլլայ» [12, 108]:

«Եվրոպան» ճիշտ է ընկալում Շվեդիայի ու Նորվեգիայի անհանգստությունը, որոնց միապետերը, սակայն, հայտարարություններից այն կողմ չանցան ու չէին պատրաստվում Պրուսիայի դեմ պատերազմել [39, 366; 38, 288]:

1848 թ. հունիսի սկզբին ստացված լուրերով «Եվրոպան» ենթադրում է, որ Շվեդիա-Հոլանդիայի պատերազմը ավարտվելու վրա է, որովհետև գեներալ Ֆ. Վրանգելի ու դանիացիների միջև զինադադար կնքելու բանակցություններ են գնում: Պրուսացիները պարտավորվում են Շվեդիայի հյուսիսից ու Յուտլանդիայից իրենց գործը ետ քաշեն, թշնամությունը դադարեցնեն ու 2 միլիոն պատերազմի ծախսերը չպահանջեն: Դանիացիները խոստանում են Շվեդիա գործ չնտցնել, գերմանացիներից խլած նավերը վերադարձնել ու գետաբերանների շրջափակումը վերացնել [11, 104]:

«Եվրոպայի» դիտարկամբ՝ զինադադարի մասին բանակցությունները դանիական մամուլի հրապարակումներում թեև հույս էին ներշնչում, որ պատերազմն ավարտվելու վրա է, «բայց վերջին դեպքերը աս ուրախական լուրը չեն հաստատեր»: Հունիսի 2-ին Ֆլենսբուրգից ստացված լուրերից պարզվում է, գրում է «Եվրոպան», որ Դանիան պրուսացիներից պահանջել է 24 ժամվա մեջ իրենց գործը Ֆլենսբուրգից ետ քաշել, այլապես ամբողջ քաղաքը կայրեն: Գերմանացիներն անմիջապես սկսեցին պաշտպանության պատրաստություններ տեսնել: Հունիսի 5-ին և 6-ին Կրավեշտայնի ու Սոնտերբուրգի մոտ նոր բախումներ եղան, երկու կողմերը սաստիկ կատաղությամբ կռվեցին: Երեկոյան դանիացիները նահանջեցին, բայց «հաջորդ օրը կռիվը վերսկսվեց ու պարզ է, թե ով հաղթանակ տարավ» [12, 108]:

Հունիսի վերջին Ռենդսբուրգից ստացված լուրերով «Եվրոպան» հայտնում է, որ դանիացիները վերջերս Հադերսլեբենի մոտ պաշտպանական ամրություններ են կառուցել ու պատրաստվում են ռազմական նոր գործողություններ իրականացնել [14, 121-122]:

Միսիթարյան միաբանության լրագրողները, պատերազմի ընթացքը լուսաբանելով հիմնականում դանիական և գերմանական մամուլի հրապարակումներով, հասկանում էին, որ պատերազմը շարունակվում է, ու զինադադար չի կնքվում հակամարտող կողմերի՝ զիջումների չցնալու պատճառով:

Նրանց դիտարկմամբ՝ Դանիան, թեև պարտություն է կրում և Շլեզվիգն ամբողջությամբ զիջել է Պրուսիային, այնուամենայնիվ չի հաշտվում դքսությունների կորստի մտքի հետ: Ինչ վերաբերում է Պրուսիային, ապա նրա ռազմատենչությանը, թերթի կարծիքով, նպաստում է Գերմանական միության Ֆրանկֆուրտյան խորհրդարանը:

«Եվրոպան» անդրադառնում է 1848 թ. հունիսի 9-ի Ֆրանկֆուրտյան խորհրդարանի նիստին, որտեղ օրվա գլխավոր քննարկվող հարցը եղել է Շլեզվիգ-Հոլշտայնի խնդիրը: Ըստ թերթի տեղեկությունների՝ այդ օրվա բանախոսները նշել են, որ Շլեզվիգ-Հոլշտայնի խնդրի լուծման իրավունքը պատկանում է Ֆրանկֆուրտյան խորհրդարանին: Նրանք պնդել են, որ Գերմանիան պետք է միջամտի դքսությունների հարցին, դրանք դուրս բերի դանիական թագավորության կազմից և «բոլորովին Գերմանական դաշնակցութեան մեջ խոթե»: Նրանց կարծիքով խորհրդարանն այդպիսի որոշում կայացնելու «իշխանություն ունի», որովհետև որտեղ գերմանացիներ են ապրում կամ գերմաներեն են խոսում, «Գերմանիայի հետ պետք է որ միանան»: Գերմանական պատգամավորների այս հարցադրումից «Եվրոպայի» լրագրողները եզրակացնում են. «Ասով ուրիշ բան չեն ուզեր ըսել, բայց եթե, որն որ ավելի զօրաւոր է, իրաւունքն անոր է» [12, 107]:

Ֆրանկֆուրտյան խորհրդարանում Շլեզվիգ-Հոլշտայնի հարցում, իրոք, ազգայնամոլական տրամադրություններ կային: Դա ակնառու դարձավ, երբ դքսությունների հարցը 1848 թ. հունիսին հայտարարվեց ազգային շահ, իսկ գերմանական ժողովուրդը պատրաստ էր Գերմանական միությունում տեսնել նաև Շլեզվիգին ու կողմ էր դքսությունների միավորմանը Գերմանիային [44, 42-43; 41, 155]:

«Եվրոպան» Բեռլինի «Ազգային լրագրի» հրապարակումով գրում է, որ 1848 թ. հուլիսի 6-ին Պրուսիայի ու Դանիայի միջև պատերազմը երեք ամսով դադարեցնելու զինադադար է կնքվել [15, 130]: Այս հրապարակումից օրեր անց թերթը տեղեկացնում է, որ Պրուսիայի ազգային գործերի նախարարության պաշտոնական ծանուցմամբ՝ Դանիայի հետ Շլեզվիգ-Հոլշտայնի պատերազմը դադարեցնելու «խօսուած զինադադարը չհաստատվեց»: Հուլիսի 24-ին դանիացիները ժամանակավոր զինադադարը խախտեցին, որով նորից «թշնամութիւն սկսած է» [16, 138]:

«Եվրոպայի» հավաստի տեղեկություններով՝ հուլիսի 21-ին Գերմանական միության ու Դանիայի միջև նորից կռիվ սկսվեց: Զինադադար չկնքելու պատճառը թերթը համարում է այն, որ ներկայումս Գերմանիայի փաստացի իշխանությունը Իռհանն արքիդքսի ձեռքին է, կառավարությունը նրանից կախված է ու տեղի ունեցող գործընթացների համար ամեննին պատասխանատու չէ: Զինադադար կնքելու նպատակով բանակցություններ վարած

գեներալ Ֆ. Վրանգելը դանիացիներին հայտնեց, որ հիմա ոչ ինքը և ոչ Պրուսիայի թագավորը այդ հարցով անելիք չունեն։ Դանիացիները խնդիրը պետք է կարգավորեն Բոհանն արքիդքսի հետ, «բայց Դանիան գերմանական տեսուչը չուզեց ճանչնալ»։ Այդ պատճառով Ֆրանկֆուրտյան խորհրդարանում պատգամավոր Բայգերը հայտարարեց, որ պատերազմը պետք է շարունակել, մանավանդ որ «գերմանացիք Յուդլանդ (բուն Դանիայի մեջ) մտած են» [16, 142]:

«Եվրոպայի» լրագրողները քաջատեղյակ էին, որ 1848 թ. հունիսի 29-ին Ֆրանկֆուրտյան խորհրդարանը ավստրիական Հաբսբուրգների արքայատոհմի ներկայացուցիչ Բոհանն արքիդքսին ընտրել է Գերմանական միության կայսրի տեղապահ։ Նա ձևավորեց նոր կառավարություն, որն ի սկզբանե մնաց օդում կախված, քանի որ գերմանական միապետերը շարունակեցին պահպանել իրենց իշխանությունը։ Կենտրոնական կառավարությունն իրական որևէ հենարան, սեփական բանակ ու բյուջե չունեց և բավարար հեղինակություն չէր վայելում գերմանական պետություններում։ Այնպես որ Դանիայի հետ զինադադարի կնքումն առանձնապես կախված չէր արքիդքս Բոհաննից:

«Եվրոպայի» հավաստի տեղեկությամբ՝ Շվեդիայի թագավորի միջնորդությամբ 1848 թ. օգոստոսի 26-ին շվեդական Սայլմո քաղաքում Պրուսիան և Դանիան զինադադար ստորագրեցին։ Գերմանական միության կողմից զինադադարը ստորագրեց Պրուսիայի թագավորի ներկայացուցիչ գեներալ Պելլովը, իսկ Դանիայի թագավորի անունից՝ գեներալ Քրիստիան Ռեեցը։ Զինադադարը ստորագրվել է հետևյալ պայմաններով.

Դանիան վերացնում է Գերմանիայի նավահանգիստների շրջափակումը, երկու կողմերի զբոսայգիներն ազատ են արձակվում, առգրավված նավերը վերադարձվում են, գերմանական զորքը դուրս է գալիս Շլեզվիգ-Հոլշտայնի դքսությունից։ Կողմերի համաձայնությամբ զինադադարի ժամանակ դքսությունները կառավարելու համար ստեղծվում է 5 հոգուց բաղկացած ժամանակավոր կառավարություն։ Նրանցից երկուսին առաջադրում է Դանիայի թագավորը, երկուսին՝ Պրուսիայի թագավորը, իսկ հինգերորդ անդամին թագավորները որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

Երկու երկրներն առաջադրում են գործակալներ, որոնք զինադադարի ընթացքում դքսություններում, առանց կողմնակալության, որպես հաշտարարներ, հետևելու են օրենքների կատարման ընթացքին:

«Եվրոպան» գերմանական մամուլի հրապարակումներից գիտեր, որ Ֆրանկֆուրտյան ժողովում այս «զինադադարը շփոթութեան պատճառ եղավ», որովհետև Պրուսիայի թագավորը Գերմանական միությունից «իրեն տրված հրամանն անելի գործած է»։ Նա 7 ամիս զինադադար պահելու հրա-

ման չունի, որը կնքվել է հին Գերմանական միության անունով և ոչ ներկայիս, որտեղ անգամ նշված չէ Բոհանն արքիդքսի անունը: Բացի այդ, «զինադադարը չի պարունակում զինվորական պայմանավորվածություններ, այլ քաղաքական դաշինք է»:

«Եվրոպայի» տեղեկություններով, զինադադարի պայմաններին Ֆրանկֆուրտյան ժողովում ոչ բոլորը հավանություն տվեցին: Բայց քանի որ խնդիրն առնչվում է Պրուսիայի թագավորին, որոշեցին այն հանգիստ կարգավորել և «առանց շփոթութիւն հանելու ու Եվրոպայի մէջ խռովութեան պատճառ ըլլալու ճար մը հոգալ»: Կառավարության անդամների կարծիքով ստորագրված զինադադարը պետք է ընդունել, որովհետև ըստ Պրուսիայի պաշտոնյաների՝ Բոհանն արքիդքսին և գերմանական նոր պետությունը չհիշելու պատճառն այն է, որ «դրսի տերութիւնները դեռ գասոնք չեն ընդունած ու միայն հին գերմանական դաշնակցութիւնը կը ճանչնան, որուն անուամբը որ զինադադարը հաստատած են»: Ժողովականների մեծ մասը դրան դեմ դուրս եկավ ու որոշեցին, հակառակ զինադադարի պայմանների, գերմանական գործը Շլեզվիգ-Հոլշտայնից դուրս չբերել: Այս պայմանով զինադադարն ընդունելի չէր, ուստի պաշտոնյաները սեպտեմբերի 5-ին դրանից հրաժարվեցին [17,156]:

Թերթն իրավացի է. Ֆրանկֆուրտյան խորհրդարանում գտնում էին, որ Պրուսիան գերազանցել է իր լիազորությունները և առանց խորհրդարանի համաձայնության զինադադար է կնքել, որը վերաբերում է ամբողջ Գերմանիայի շահերին: Այդ պատճառով սեպտեմբերի 5-ին խորհրդարանը մերժեց զինադադարը, բայց գիտակցելով, որ դրանից հնարավոր չէ խուսափել, սեպտեմբերի 18-ին վավերացրեց այն [37, 81-82; 41, 155-156; 36, 18]:

«Եվրոպան» անդրադառնում է Ֆրանկֆուրտյան խորհրդարանի սեպտեմբերի 16-ի նիստին, որտեղ առավոտյան 9-ից մինչև երեկոյան 8-ը քննարկվեց զինադադարի հարցը: Շլեզվիգի և Հոլշտայնի պատգամավորներ Ֆրանկեն, Մեքելզեն և ուրիշներ ժողովին առաջարկեցին խնդիրը խաղաղությամբ կարգավորել և օգոստոսի 26-ին կնքված պայմանագիրը ուժի մեջ թողնել, որովհետև դանիացիները պատրաստ են որոշ զիջումներ անել: Ժողովն այս առաջարկությանը հավանություն տվեց, բայց այն «ազատասերների ու արմատականների համար անհաճո եղավ», որոնք որոշեցին քաղաքում «խռովութիւն ու շփոթութիւն հանել»: Երեկոյան ժամը 9-ին խռովարարները խառն բազմությամբ քաղաքի փողոցներում աղմուկ-աղաղակ բարձրացրին և սպառնալիքներ հնչեցրին: Այս «շփոթության» ժամանակ ազգային պահապանները զենք կիրառեցին, որոնց օգնության եկած Հեսսեն-Քասելի պատերազմական գործը օգնեց խռովարարներին ցրել: Թերթի տեղեկություններով սեպտեմբերի 17-ի երեկոյան ռամկապետական ընկերության անդամները

հավաքվեցին և որոշեցին զինադադարն ընդունելու օգտին քվեարկած բոլոր պատգամավորներին «մատնիչ հայրենեաց կանչուին» ու իրենց որոշման մասին տեղեկացնեն գերմանական ժողովրդին: Սեպտեմբերի 18-ի առավոտյան խորհրդարանի շենքը չորս կողմից շրջապատեցին ավստրիական և պրուսական 2400 զինվորներ: Կեսօրին խռովարարները սկսեցին պատնեշներ կառուցել: Ձինվորները պատնեշները թնդանթթներով ցրեցին ու խռովարարաներին ետ քշեցին: Սեպտեմբերի 19-ի առավոտյան ընկավ խռովարարների վերջին պատնեշը, և կոփվր դադարեց: Ձինվորներից 60-ը, ինչպես նաև պրուսացի պատգամավորներ Լիհնովսկին և Ավերսվալտը «չարաչար սպանուեցան ապստամբներուն ձեռքեն» [18, 164]:

«Եվրոպան» իրատեսորեն ներկայացնում է Ֆրանկֆուրտյան խորհրդարանում զինադադարի մասին քննարկումներն ու դրանց հետևանքները, որը չէր բխում գերմանական ժողովրդի շահերից և անորոշ ժամանակով հետաձգում էր դքսությունների միավորումը Գերմանական միությանը: Ձինադադարի վավերացումը նշանակում էր Գերմանական միության կողմից Շլեզվիգից հրաժարում, որը վիրավորում էր գերմանացիների ազգային զգացմունքները, արժանապատվությունն ու միավորման ձգտումը: Այն միաժամանակ լուրջ հարված էր գերմանական ազգային ժողովի հեղինակությանը, որը «մինչ այդ ներկայանում էր Գերմանիայի քաղաքական ճակատագրի և ժողովրդական ինքնավարության կերտող» [44, 44; 37, 81]:

Ամփոփելով 1848 թ. քաղաքական տարվա արդյունքները՝ «Եվրոպան» կանխատեսում է առաջիկա տարում «մեծամեծ ու երևելի դեպքեր գուշակել», որոնց թվում հիշատակում է նաև Շլեզվիգ-Հոլշտայնի խնդիրն ու Պրուսիայից ստացված լուրերը: Մխիթարյանների կարծիքով Եվրոպայում ընթացող քաղաքական իրադարձությունները «ամեն քաղաքականացեալ ու լուսավորուիլ բաղձացող մարդու գիտնալու հարկավոր բաներ են»: Կարևորելով դրանք՝ Մխիթարյաններն իրենց թերթի խնդիրը համարում են այդ «դեպքերը ազգին առջևը դնելը», որպեսզի ընթերցողներին «ավելի հաճոյ» լինի ու «ազգին քաղաքականութիւնն ու լուսավորութիւնը ավելի յառաջանայ» [19, 208]: Առաջնորդվելով այս մտայնությամբ՝ Մխիթարյանները շարունակեցին անաչառ, անկողմնակալ և առանց դիրքորոշում արտահայտելու լուսաբանել դանիապրուսական հակամարտության հետագա ընթացքը: Ձինադադարի ժամկետը լրանալուց հետո պատերազմական գործողությունները վերսկսվեցին, որոնք դանիացիներին հաջողություն չբերեցին ոչ Էկերնֆելդի ծովամարտում և ոչ էլ ցամաքում: Ապրիլի 23-ին Կոլդինգի տակ հարավլուտլանդացի զենեքավ Ֆրեդերիկ Բյուլովը ջախջախիչ պարտություն կրեց, որից հետո դանիացիները Ֆրեդերիկսիայի մոտ շրջապատվեցին Շլեզվիգ-Հոլշտայնցիների 15 հազար զինուժի կողմից [35, 241]:

Դանիացիների անհաջողություններին իրագել «Եվրոպան» գրում է, որ պատերազմը գնալով նրանց համար «վնասակար է դառնում»: Գերմանացիները 52 հազար զորքով շարունակ առաջ են շարժվում, անցել են Շլեզվիգի սահմանը և մտել Յուտլանդիա: Ըստ թերթի՝ դանիացիներն այս տարի Շվեդիայից օգնություն ստանալու հույս չունեն: Նրանք ծովում և ցամաքում կրած պարտություններից շատ զրգոված են, ու «ազգովին կը ջանան որ նոր պատրաստութիւններով ու աւելի բազմաթիւ զորքով հաղթեն, իրենց ազգային պատիւը տեղը բերեն»: «Եվրոպան» չի կիսում անգլիական մի քանի լրագրերի կարծիքը, որ դանիա-պրուսական պատերազմը առաջիկայում «խաղաղութեամբ պիտի վերջանայ»: Թերթը տեղեկացված էր, որ 1849 թ. մայիսին Ավստրիայի և Ռուսաստանի կայսրերը Դանիայի թագավորին ծանուցել են. «Թեպետ իր իրաւունքը կը ճանչնան, բայց իրեն անանկ յանդգնութեամբ ու յամառութեամբ պատերազմի նետուելուն չեն հաւնիր» [20, 76]:

«Եվրոպան» անգլիական «Քլոպ» պաշտոնաթերթի լրատվությամբ անդրադառնում է նաև Անգլիայի դիրքորոշմանը: Այդ լրագիրը հայտնում էր, որ մայիսին լորդ Պալմերստոնը պատերազմը դադարեցնելու վերաբերյալ Դանիայի ու Գերմանիայի կառավարություններին առաջարկություններ է արել: Դրանք Դանիայի դեսպանն ընդունել է և վստահաբար կարելի է ասել, որ Պրուսիայի դեսպանը նույնպես կընդունի: Թերթը հույս է հայտնում, որ անչափ մեծ քաղաքական թշնամություններ ու առևտրական վնասներ պատճառած պատերազմը շուտով կավարտվի: «Եվրոպան» տեղյակ չէր Անգլիայի՝ առաջարկություններին ու ենթադրում էր, որ դրանց «եական մասն ըլլայ Շլեզվիկ-Չոլշոյանի դքսութիւններուն գատ սահմանադրութիւն մը տայ» [21, 87]:

«Եվրոպայի» լրատվությամբ՝ 1849 թ. մայիսի 25-ին Պրուսիայի թագավորը դանիական կառավարությանը տեղեկացրել է, որ գերմանական բոլոր պետությունների անունից միայն ինքն է բանակցելու դքսությունների հարցով [22, 92]: Բայց բանակցություններ տեղի չունեցան. մայիսի վերջին պրուսական զորքերը հասան Ֆրիտերցիա, քաղաքը ուժակոծեցին, բայց չկարողացան գրավել: Դանիացիներն այդ ընթացքում համախմբեցին իրենց ուժերը: 1849 թ. հուլիսի 6-ին Ֆրեդերիսիի մոտ նրանք, գեներալ Ֆ. Բյուլովի զլխավորած 20 հազար զորքով, հարձակվեցին դքսությունների զորքի վրա և զգալի կորուստների գնով հաղթանակ տարան [35, 242]:

1848 թ. հուլիսի 10-ին նոր զինադադար կնքվեց, որը մի քանի անգամ երկարացվեց: Շլեզվիգում պատերազմը չվերսկսվեց: «Եվրոպան» գրում է, որ Դանիայի հետ կնքված զինադադարի պայմաններով Շլեզվիգի դքսությունը պետք է բաժանվի Չոլշտայնի դքսությունից և առանձին սահմանադրություն ունենա: Շլեզվիգը կառավարելու են երեք հոգի, որոնք ներկայացնելու են Դանիան, Պրուսիան և Անգլիան: Տեղացի պաշտոնյաները այսուհետ միայն

Հոլշտայնի և Լաուենբուրգի դքսությունները պետք է ղեկավարեն: Ջինադադարը կնքվել է 6 ամիս ժամանակով: «Եվրոպայի» դիտարկմամբ՝ շլեզվիզցիները զինադադարի պայմաններից «շատ դժգոհ են», ինչպես երևում է, Դանիայի կառավարությունը նույնպես զինադադարի պայմաններին «այնպես դիրքաւ հաւանութիւն պիտի չտայ» [23, 123-124]:

«Եվրոպայի» տեղեկություններով, թեպետ 1849 թ. զինադադարի պայմաններից երկու կողմն էլ դժգոհ են, բայց Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի դեսպանները ջանում են հասնել զինադադարի պայմանների կատարմանը: Գերմանական պետությունները հիմա իրենց գորքերը դուրս են բերում Յուլիանդիայից և Շլեզվիզից, բայց Պրուսիայի թագավորի գործողություններին հավանություն չեն տալիս: Բավարիան և Վյուրտեմբերգն արդեն բողոքել են դանիա-պրուսական զինադադարի դեմ [25, 135]:

Չնայած կնքված զինադադարին՝ Պրուսիան չարաշահում էր ռազմական գործողությունների դադարեցումը, նպաստում էր դքսությունների ժամանակավոր կառավարությունների վերազինմանը: Դա առաջ բերեց եվրոպական մի շարք պետությունների դժգոհությունը: 1850 թ. հունվար-փետրվարին Դանիան և Ռուսաստանը Պրուսիային կտրուկ բողոք ներկայացրին, որն ամեն կերպ փորձեց խուսանավել իրեն ներկայացված հարցադրումներին հստակ պատասխանելուց: «Եվրոպայի» տեղեկություններով՝ 1849 թ. հունիսի 20-ին Դանիայի կառավարությունը պրուսական արքունիքին առաջարկել է անջատ հաշտություն կնքել՝ պայմանով, որ պրուսական գորքերը դուրս գան Շլեզվիզ-Հոլշտայնից, որոնց փոխարեն դքսություններ կմտնեն դանիական գորքերը: Եթե դքսությունները հնազանդվեն Դանիայի թագավորին, ապա նա շլեզվիզցիներից, հոլշտայնցիներից ու դանիացիներից կազմված մի խառը ժողով կկազմի, որը կիրականացնի դքսությունների կառավարումը [25, 110]:

«Եվրոպայի» տեղեկությունը հավաստի էր: 1850 թ. հուլիսի 2-ին Բեռլինում Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ IV-ը իր և գերմանական միության անունից Դանիայի թագավորի հետ հաշտություն կնքեց: Պրուսիան պարտավորվում էր իր գորքերը դուրս բերել Շլեզվիզից և ճանաչել դանիական թագավորության իրավունքները դքսությունների նկատմամբ: Գերմանական միության մեջ մտնող Դանիայի տիրույթների սահմանները պետք է ճշտվեին հատուկ հանձնաժողովի կողմից: Դքսությունների ժամանակավոր կառավարությունները պետք է զենքը ցած դնեին, իսկ եթե Հոլշտայնը կշարունակեր դիմադրությունը, ապա Դանիան կարող էր Գերմանիայից դքսության դեմ օգնություն խնդրել [36, 50; 43, 19]:

«Եվրոպան» տեղեկացված էր, որ 1850 թ. հուլիսի 4-ին Լոնդոնում Շլեզվիզ-Հոլշտայնի հարցով Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Շվեդիան, Նորվեգիան և Դանիան քննարկում անցկացրին ու որոշեցին Դանիայի

«տերութեան ամբողջութիւնը պահեն»: Այս կապակցությամբ միասնական դաշինք կազմվեց, որը հրավիրեցին ստորագրել նաև Պրուսիային և Ավստրիային: Պրուսիան չցանկացավ խառնվել այդ հարցին, իսկ քննարկմանը ներկա Ավստրիայի դեսպանը հրաժարվեց ստորագրել այդ փաստաթղթի տակ [26, 118-119]:

Դքսությունների հարցը կարգավորելու նպատակով Լոնդոնում կայացած համաժողովին մասնակցում էին Անգլիայի, Ավստրիայի, Դանիայի, Ֆրանսիայի, Պրուսիայի, Ռուսաստանի և Շվեդիայի ներկայացուցիչները: Նրանք արձանագրություն ստորագրեցին, որը դանիական միապետության ամբողջականությունը համարում էր համաեվրոպական հետաքրքրություն: Համաժողովը Ֆրեդերիկ VII թագավորին առաջարկեց քայլեր ձեռնարկել, որպեսզի իր ժառանգական տիրույթը չմասնատվի: Պրուսիան այդ արձանագրությունը չստորագրեց, թեև պարտավորվեց հարգել դանիական միապետության ամբողջականությունը [36, 51]:

Դանիա-պրուսական հաշտության պայմանագրի կնքումից հետո վիճահարույց հարցերը, որոնց պատճառով պատերազմ սկսվեց, մնացին չլուծված: Դքսությունները հրաժարվեցին ճանաչել Բեռլինի պայմանագիրը և շարունակեցին պայքարը Դանիայի դեմ: Այս իրողությանն անդրադառնում է «Եվրոպան»: Թերթը գրում է, որ Շլեզվիգ-Հոլշտայնի և դանիացիների կռիվը կրկին բորբոքվեց, դքսությունները «բացարձակապես Դանիային գլուխ ծռել չեն ուզեր, և իրենց իրաւունքն առանձին իրենց գէնքովը պաշտպանել կուզեն»: Ամենուրեք մարդիկ զինվում են և ամրություններ կառուցում, որպեսզի դանիացիներին դիմադրեն: Դքսությունների բանակը հիմա 30-40 հազար է, որն ավելի է, քան դանիացիների զորքը [26, 118]:

«Եվրոպայի» պատմելով՝ Պրուսիայի և Դանիայի միջև ձեռք բերված համաձայնությամբ 1850 թ. հուլիսի 14-15-ին պրուսացիները գեներալ Հանի հրամանատարությամբ Շլեզվիգի դքսությունից դուրս եկան: Դրանցից հետո Շլեզվիգ-Հոլշտայնցիների ու դանիացիների բանակները միմյանց դեմ դուրս եկան: Դանիացիների բանակը 45 հազար է, որից 30 հազարը գալիս է Յուտլանդիայից, իսկ 15 հազարը նավատորմն է: Հուլիսի 20-21-ին երկու բանակները գտնվում էին միմյանցից 2 մղոն հեռավորության վրա: Դանիայի թագավորը Շլեզվիգ-Հոլշտայնցիներին երկու ծանուցագիր է հանձնել, որոնցում խոստանում է «պահպանել նրանց ազգությունը, կառավարությունը և աստիճանաբար լուծել նրանց բոլոր խնդիրները, եթե իրեն հպատակվեն»: Թերթի համոզմամբ՝ դքսությունները «չեն ուզեր ամենևին հաւատալ և գլուխ ծռել», քանի որ դքսությունների հետ իրենց համերաշխությունն են արտահայտել գերմանական պետություններից եկած մեծ թվով զինվորականներ, ինչպես

նան լեռ ու հունգարացի կամավորներ, որոնք պատրաստ են համալրել Շլեզվիգ-Հոլշտայնի բանակի շարքերը [27, 122]:

Թերթն իրավացի է, որովհետև Պրուսիայի աջակցությունից զրկված դքսությունները պայքարը շարունակեցին: Նրանք հավաքեցին 34 հազար զորք, որը պրուսական զեներալ Վիլլեգենի գլխավորությամբ դիրքեր գրավեց Իստեդ, Գրյոլդեսկով և Լանգ լճերի շրջանում: 1850 թ. հուլիսի 25-ին Իստեդում դանիական 39 հազար զորքը զեներալ Կրոզի գլխավորությամբ հաղթանակ տարավ դքսությունների զորքի նկատմամբ [35, 242-243; 28, 142]:

Պրուսական մամուլի լրատվությամբ «Եվրոպան» գրում է, որ Անգլիան և Ռուսաստանը համատեղ դիմել են Պրուսիային և առաջարկել զորք մտցնել Հոլշտայն ու կայունացնել այնտեղ վիճակը: Նրանք սպառնացել են, որ այս պահանջը չկատարելու դեպքում իրենց նավատորմը կմտցնեն Քիլի նավահանգիստ և կգնդակոծեն քաղաքը: Ըստ թերթի՝ Պրուսիան չի ցանկանում դա անել՝ պատճառաբանելով, որ այդ գործին «խառնվելու իրավունք չունի»: Թերթի ասելով՝ դքսությունները, օգտվելով դրանից, սեպտեմբերի 13-ին 6 հազար զինվորով հարձակվեցին դանիացիների վրա ու նրանց քշեցին մինչև Շլեզվիգի սահմանները, Գոխենդորֆի մոտ այրեցին փայտաշեն ամրությունները և ետ վերադարձան: Նրանց զորքն այժմ 35 հազար է, որովհետև կառավարությունը նորից զորահավաք է անցկացրել [29, 154]:

Ստացված նոր տեղեկություններով «Եվրոպան» պատմում է, որ Հոլշտայնի բանակը հոկտեմբերի 4-ին Ֆրիդրիշդատի վրա հարձակում սկսեց, բայց հանդիպելով դանիացիների դիմադրությանը՝ քաղաքը գրավել չկարողացավ և ետ քաշվեց: Հոկտեմբերի 10-ին նրանք, գրեթե 500 կորուստ տալով, մտան Ռենստրուրգ, որից հետո զինադադար հաստատվեց [30, 154; 31, 165; 32, 170]:

1850 թ. հոկտեմբերին Ֆրանկֆուրտյան խորհրդարանը միաձայն հաստատեց Բեռլինի հաշտության պայմանագիրը: Դրա դեմ բողոքեց Պրուսիայի արտաքին գործերի նախարար Ռադովիցը՝ խորհրդարանի որոշումը համարելով անօրինական: «Եվրոպայի» տեղեկություններով դեկտեմբերին Շլեզվիգ-Հոլշտայնի կառավարությունը Ֆրանկֆուրտյան միությանը հայտնեց, որ միության դեսպանի հետ հաշտություն կնքելու մասին կբանակցի «միայն առանց զենքի միջնորդութան» [33, 198]:

Շլեզվիգ-Հոլշտայնի խնդիրն ու դանիական գահաժառանգման խնդիրը վերջնականապես լուծվեց 1852 թ. մայիսին Լոնդոնում կայացած եվրոպական պետությունների զագաթնաժողովում, որին մասնակցում էին Անգլիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Պրուսիան, Շվեդիան և Դանիան: Մայիսի 8-ի արձանագրության առաջին հոդվածով եվրոպական պետությունները հռչակում էին դանիական միապետության տարածքային ամբողջականությունը՝ հա-

մարելով այն եվրոպական հավասարակշռության ու խաղաղության պահպանման կարևոր պայման: Դրանով դքսություններում նոր իրավական կարգ սահմանվեց: Անժառանգ Ֆրեդերիկ VII-ի մահվան դեպքում Եվրոպական պետությունները Դանիայի թագավոր ճանաչում էին թագավորի զարմիկ դուքս Քրիստիան Գյուլկսբուրգցուն [36, 66; 40, 121-122]:

«Եվրոպան» ամբողջությամբ տպագրում է Լոնդոնի գազաթնաժողովի արձանագրությունը [34, 107]:

Եզրակացություն

Վիեննայի Մխիթարյան միաբանների ընկալմամբ դանիա-պրուսական պատերազմի պատճառը Շլեզվիգ-Հոլշտայնի դքսությունների անկախության ձգտումն է, որոնք ցանկանում են միանալ Գերմանական միությանը: Դրան խոչընդոտում է Դանիան, որը ցանկանում է դքսություններին միասնական սահմանադրություն շնորհելու ճանապարհով պահպանել իր տարածքային ամբողջականությունը: «Եվրոպան» պատերազմող կողմերից ոչ մեկի պայքարը չի դրվատում, որի ընթացքը լուսաբանում է բացառապես անկողմնակալ դիրքերից:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-235>

Գրականություն

1. Գալամբեարեան Գ. Պատմութիւն հայ լրագրութեան, Վիեննա, 1893:
2. «Եվրոպա», (Վիեննա), 1848, 8 փետրվարի, № 6:
3. «Եվրոպա», 1848, 15 փետրվարի, № 7:
4. «Եվրոպա», 1848, 4 ապրիլի, № 14:
5. «Եվրոպա», 1848, 25 ապրիլի, № 17:
6. «Եվրոպա», 1848, 2 մայիսի, № 18:
7. «Եվրոպա», 1848, 9 մայիսի, № 19:
8. «Եվրոպա», 1848, 16 մայիսի, № 20:
9. «Եվրոպա», 1848, 23 մայիսի, № 21:
10. «Եվրոպա», 1848, 30 մայիսի, № 22:
11. «Եվրոպա», 1848, 13 հունիսի, № 24:
12. «Եվրոպա», 1848, 20 հունիսի, № 25:
13. «Եվրոպա», 1848, 27 հունիսի, № 26:
14. «Եվրոպա», 1848, 18 հուլիսի, № 29:
15. «Եվրոպա», 1848, 25 հուլիսի, № 30:
16. «Եվրոպա», 1848, 8 օգոստոսի, № 32:
17. «Եվրոպա», 1848, 12 սեպտեմբերի, № 37:
18. «Եվրոպա», 1848, 26 սեպտեմբերի, № 39:

19. «Եվրոպա», 1848, 12 դեկտեմբերի, № 50:
20. «Եվրոպա», 1849, 8 մայիսի, № 19:
21. «Եվրոպա», 1849, 29 մայիսի, № 22:
22. «Եվրոպա», 1849, 5 հունիսի, № 23:
23. «Եվրոպա», 1849, 24 հուլիսի, № 30:
24. «Եվրոպա», 1849, 7 օգոստոսի, № 32:
25. «Եվրոպա», 1850, 7 հուլիսի, № 2:
26. «Եվրոպա», 1850, 23 հուլիսի, № 30:
27. «Եվրոպա», 1850, 30 հուլիսի, № 31:
28. «Եվրոպա», 1850, 3 սեպտեմբերի, № 36:
29. «Եվրոպա», 1850, 24 սեպտեմբերի, № 39:
30. «Եվրոպա», 1850, 8 հոկտեմբերի, № 41:
31. «Եվրոպա», 1850, 15 հոկտեմբերի, № 42:
32. «Եվրոպա», 1850, 22 հոկտեմբերի, № 43:
33. «Եվրոպա», 1850, 10 դեկտեմբերի, № 50:
34. «Եվրոպա», 1852, 5 հուլիսի, № 27:
35. Геделундъ Л. Н. История Дании. Пер. с дат. Петербург и Москва, 1907.
36. Дебидур А. Дипломатическая история Европы 1814-1878, т. II, Ростов-на-Дону, 1995.
37. История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 5, Москва, 1938.
38. История Норвегии. Отв. ред. Кан А. С. Москва, 1980.
39. История Швеции. Ред. кол. Кан А. С. и др., Москва, 1974.
40. Кан А. С. История скандинавских стран. Москва, 1980.
41. Кан С. Б. Революция 1848 года в Австрии и Германии, Москва, 1948.
42. Революции 1848-1849. Под ред. Потемкина Д. В. и Молока А. И. т. II, Москва, 1952.
43. Роотс Л. К. Шлезвиг-Голштинский вопрос и политика европейских держав в 1863-1864 годах, Таллин, 1957.
44. Ротштейн Ф. А. Из истории прусско-германской империи, Москва, 1948.
45. Хельге Палудан. История Дании. Пер. с дат. Москва, 2007.

Резюме

Ключевые слова: Шлезвиг, Гольштейн, Дания, Пруссия, война, Германский Союз, перемирие, Франкфуртский парламент, «Европа»

В начале 1848 г. в герцогствах Шлезвиг-Гольштейна развернулось национальное движение за объединение с Германским Союзом, которое переросло в датско-прусскую войну. Оно нашло отражение в армянской периодической печати того времени, в том числе в политическом еженедельнике «Европа» – органе Конгрегации венских Мхитаристов. Мхитаристы считали основной задачей своей газеты подробное освещение политических событий, чтобы читатели сами могли разобраться в обстоятельствах и оценить их. В то же время сотрудники газеты, следуя данному курсу, стремились осветить ход датско-прусской войны «с серьезностью, спокойствием, отбором материала и как можно более чистым стилем».

Стремление короля конституционно объединить герцогства с Данией, мхитаристы считали главной причиной восстания немецких герцогств Шлезвиг-Гольштейна. Они также понимали, что Шлезвиг-Гольштейн изо всех сил пытается присоединиться к Германскому Союзу. Журналисты «Европы» отмечали, что датско-прусская война вышла за рамки конфликта двух государств и приобрела общеевропейское значение. По мнению мхитаристов, датско-прусская война нарушало резолюцию 1815 года о сохранении политического баланса в Европе, принятую на Венском конгрессе. Именно поэтому ведущие европейские страны пытались без промедления остановить военные действия и подписать перемирие. Газета отмечала, что все европейские государства, стремящиеся к перемирию, преследовали свои интересы. Газета «Европа» представляла условия перемирия, обращалась к реакции на них во Франкфуртском парламенте и обсуждала процесс ратификации. Газета называла участников сентябрьских событий «бунтовщиками».

Мхитаристы подчеркивали, что жители герцогств не хотели подчиняться Дании, против которой они возобновили войну после истечения сроков перемирия. Мхитаристы не встали ни на одну из сторон в этом конфликте и не одобряли их борьбу. Понимая цель каждой из противоборствующих сторон, мхитаристы освещали эту борьбу с позиций беспристрастности и нейтралитета.

“The Europe” Weekly on the Danish-Prussian War

Feliks Movsisyan

Summary

Key words: *Schleswig, Holstein, Denmark, Prussia, war, German Union, armistice, Frankfurt Parliament, “The Europe”*

German Union unfolded in the duchies of Schleswig-Holstein, which turned into the Danish-Prussian war. It found its response in the Armenian press of the time, as well as in “The Europe” political weekly of the Mkhitaryan Congregation in Vienna. The Mkhitaryan Congregates considered the comprehensive representation of the political events the main task of their newspaper; so that readers would be able to evaluate the facts objectively. Simultaneously, the staff of the weekly sought to cover the course of the Danish-Prussian war with “gravity, calmness, choice and distinct style”.

The Mkhitaryans considered the King’s desire to constitutionally unify the duchies with Denmark as the main reason for the German Schleswig-Holstein duchies to rise and take up arms. They also knew that Schleswig-Holstein was struggling to join the German Union. The reporters of “The Europe” noticed that the Danish-Prussian war had gone beyond the scope of the conflict between the two states and had acquired Pan-European significance. According to the Mkhitaryans, the Danish-Prussian war violated the decision of the Vienna Assembly of 1815 to maintain political balance in Europe. That’s why the leading European countries were trying to stop the war as quickly as possible and sign a truce. The weekly also stated the fact that the European states, seeking a truce, pursued their own interests. “The Europe” presented the terms of the armistice, discussed its reaction in the Frankfurt Parliament and the ratification of the armistice. The weekly called the participants of the September events “rioters”.

The Mkhitaryans noted that the population of the duchies didn’t want to obey Denmark, against which they resumed the war after the expiration of armistice. The Mkhitaryans didn’t try to praise any of the parties in the conflict. They didn’t approve their struggle either. Understanding the goal of the struggling sides, the Mkhitaryans commented on their struggle from the positions of impartiality and neutrality.

Ներկայացվել է 10.03.2023 թ.

Գրախոսվել է 07.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

**Արցախյան շարժման սկզբնավորման արձագանքը
«Ալիք» օրաթերթում**

**Ֆելիքս Մովսիսյան
Տառյանա Օհանյան**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-257>

Հանգուցային բառեր. Վերակառուցում, Լեոնային Ղարաբաղ, ազգային շարժում, միավորում, ազգային ինքնորոշում, սփյուռքահայ մամուլ

Նախաբան

1988 թվականի փետրվարը նշանավորվեց հայ ժողովրդի կյանքում արցախյան շարժումով, որն ազգային զարթոնքի արդյունք էր: Հայ ժողովրդի ազգային շարժումը պայմանավորված էր ԽՍՀՄ-ում գործաչլվյան «վերակառուցման» քաղաքականությամբ, որը նպատակ էր հետապնդում երկրում իրականացնել արմատական բարեփոխումներ, զարգացնել ժողովրդավարությունը: 1921 թ. բոլշևիկյան Անդրերկրումի անօրինական որոշմամբ Խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայության ոստան Արցախն արտահայտեց ազգային ինքնորոշման իր իրավունքը՝ Խորհրդային Միության ղեկավարությունից պահանջելով խնդրին տալ քաղաքական լուծում: Արցախյան շարժման յուրահատկությունը այն է, որ այն աննախադեպ ժողովրդական շարժում էր և միջազգային լայն արձագանք գտավ: Արցախահայության ազգային շարժմանն ակտիվորեն արձագանքել է Մերձավոր Արևելքի հայ մամուլը, որի դիրքորոշումը հայ պատմագիտության մեջ ուսումնասիրված չէ: Այս առումով սույն հոդվածը որոշակի գիտական նորույթ է: Ուսումնասիրության թեման արդիական է, քանի որ Արցախի խնդիրն առ այսօր կարգավորված չէ և բխում է ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքից: Հոդվածի նպատակն է լուսաբանել Արցախյան շարժման արձագանքն իրանահայ «Ալիք» օրաթերթում:

«Ալիք» օրաթերթը

«Ալիք» օրաթերթը լույս է տեսնում 1931 թ. մարտի 22-ից առ այսօր, Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրանում: Թերթն այս տարիներին լույս չի տեսել միայն 40 օր, այն էլ 1979 թ. իրանական հեղափոխության նախօրյակին, երբ, ի թիվս այլ թերթերի, մասնակցել է համաիրանական մամուլի գործադուլին: «Ալիք»-ը սկզբում քաղաքական-հասարակական և գրական-գեղարվեստական շաբաթաթերթ էր, Արցախյան շարժման օրերին այն պարզապես օրաթերթ էր, իսկ մեր օրերում լույս է տեսնում որպես ազգային, հասարակական, քաղաքական օրաթերթ: «Ալիք»-ի հրապարակումները հիմնականում վերաբերում են Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, Սփյուռքի, Իրանի հայ համայնքի կյանքում

տեղի ունեցող իրադարձություններին: Մփյուռքահայության լայն խավերի շահերն արտահայտող թերթում մեծ թիվ են կազմում Հայ հեղափոխական դաշնակցության կառույցների գործունեությունը լուսաբանող հրապարակումները:

Արցախյան շարժման սկզբնավորումը

Արցախյան ազգային շարժման ծավալումը պատահական չէր, ուներ խորքային պատճառներ և դրսից ուղղորդված չէր: Արցախյան շարժումը ղեկավարում էր 1986 թ. հուլիսին Ստեփանակերտում Արկաղի Կարապետյանի ղեկավարությամբ և 12 նվիրյալ հայորդիների մասնակցությամբ հիմնված «Արցախյան միություն» գաղտնի կազմակերպությունը, որը բաժանմունքներ ուներ ԼՂԻՄ-ի գրեթե բոլոր շրջաններում:

1986 թ. փետրվարին ԽՄԿԿ 27-րդ համագումարի նախօրյակին հայ հինգ ակադեմիկոսներ, երեք գեներալներ և նույնքան ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Ա. Գրոմիկոյին նամակ հղեցին՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու խնդրանքով:

1987 թ. ամռանը և աշնանը «Արցախյան միությունը» ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու պահանջով ոչ պաշտոնական հանրաքվե անցկացրեց, որը հավաքեց 80 հազարից ավելի ստորագրություն: Նոյեմբերին այդ ստորագրությունները ներկայացվեցին Մոսկվա, որտեղ ոչ մի արձագանք չգտան [5, 709-710]:

Ըստ «Ալիք»-ի՝ արցախցիների ստորագրությամբ նամակը հանձնվել է ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Ն. Յակովլևին [13, 1]:

1988 թ. փետրվարին Լեռնային Ղարաբաղում Արցախը Հայաստանին միավորելու պահանջով համաժողովրդական լայն շարժում ծավալվեց, որը, ի թիվս Մփյուռքի բազմաթիվ լրատվամիջոցների, ընդգծված արձագանք գտավ իրանահայ «Ալիք» օրաթերթում:

Թերթի առաջին հրապարակումը Լեռնային Ղարաբաղի հարցով լույս է տեսել 1988 թ. հունվարի 5-ին, նախքան փետրվարի 20-ին Ստեփանակերտում կայացած հանրահավաքը:

«Ալիք»-ի հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ թերթը պարբերաբար անդրադառնում է 1988 թ. փետրվարին Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձություններին, ազգային շարժմանը և դրանք ներկայացնում սփյուռքահայ հանրությանը: Թերթի տեղեկատվության աղբյուրը Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից ստացված լուրերն էին և օտարերկրյա տարբեր լրատվամիջոցների հրապարակումները:

«Ալիք» օրաթերթը «Հայկական պահանջատիրություն, հանուն պատմական արդարության հաղթանակի» հոդվածում նշում է, որ միջազգային մա-

մուլը վերջին ամիսներին բազմիցս անդրադարձել է Խորհրդային Միություն-նից ստացված տեղեկություններին, որոնց համաձայն, «բազմահազար հայեր պաշտոնապես դիմել են խորհրդային ղեկավարությանը և հատկապես Մ. Գորբաչովին, խնդրելով, որ պատմականորեն Հայաստանին պատկանող և դարերով հայ հոծ բնակչություն ունեցող Ղարաբաղն ու Նախիջևանը վերադարձվեն հայ ժողովրդին և միացնեն Հայաստանին»:

Իր հերթին, գրում է թերթը, հայկական մամուլը «անուղղակի արձագանք հանդիսացավ պահանջատիրական այդ շարժմանը»: «Ալիքը» վկայակոչում է նաև գրող Զորի Բալայանի հոդվածներն ու ելույթները, «որոնց միացավ հայրենի մեր մտավորականությունը: Հրապարակ է գալիս ներքին հողային մեր իրավունքներին վերատիրանալու և անարդար սահմանագծումների սրբազրության պահանջով» [6, 5]:

«Ալիք»-ն անդրադառնում է նաև ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի 1987 թ. հուլիսի 5-ի քննադատական զեկույցին, որում նա «քննադատում է պահանջատիրական այդ արդար ելույթները և նրանց հեղինակներին ասելով. «կեղծ հայրենասիրություն են դրսևորում, շահարկում ազգային զգացմունքները և պատշաճ հակահարված չեն ստանում» [6, 5]:

Թերթը գրում է, որ Կ. Դեմիրճյանի այս զեկույցման կապակցությամբ ժամանակին հնարավոր չի եղել բացահայտել, թե ի՞նչ պատճառով է նա բավական կոշտ և սուր արտահայտություններով քննադատել հայրենասիրական ելույթների հեղինակներին: Մասնավորապես նա հանդիմանել է Սուրեն Այվազյանին, ում «դիլետանտական վարժանքները պատմության անդաստանում անցել են... ընդունելիի և հանդուրժելիի սահմանները՝ յաչս խորհրդային իշխանութեանց»: Թերթը բացահայտում է, որ ներկայումս իր տրամադրության տակ է ռուսերեն այն նամակի տեքստը, որը բազմահազար հայերի ստորագրությամբ, «Ղարաբաղի և Նախիջևանի վերամիավորման պահանջով», հղվել է ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին: Այդ նամակի բովանդակությունից «Ալիք»-ը եզրակացնում է, որ այժմ հասկանալի է, թե ինչո՞ւ Կ. Դեմիրճյանն «այդ աստիճան խիստ է գտնվել Մ. Այվազյանի» նկատմամբ և նրան առանձնացրել՝ որպես իր քննադատության թիրախ: Արտասահման հասած տեղեկությունների համաձայն, գրում է «Ալիք»-ը, նամակը կազմել է Սուրեն Այվազյանը: Քանի որ նա է հեղինակը բազմահազար հայերի պահանջատիրությունը բանաձևող նամակի, ուստի «հասկանալիորեն դարձել է գլխավոր թիրախը Դեմիրճյանի դատապարտանքի խոսքի» [6, 2]:

«Ալիք»-ը նկատի ունի երկրաբան Սուրեն Այվազյանին, ով 1978-1988 թթ. նամակներ հղեց ԽՍՀՄ ղեկավարներ Լ. Բ. Բրեժնևին, Ա. Ն. Կոսիգինին ու Մ. Ս. Գորբաչովին, որտեղ նշում էր Ղարաբաղի և Նախիջևանի նույնականությունը: 1989 թ. մայիսին նա Ղարաբաղ զենք տեղափոխելու մեղադրանքով

ձերբակալվեց և մինչև 1993 թ. մնաց բանտարկության մեջ: Թերթի կարծիքով Ս. Այվազյանին քննադատելու համար Կ. Դեմիրճյանը, ԽՄԿԿ Կենտկոմ նամակ ուղարկելուց բացի, մեկ այլ պատճառ է ունեցել: Բավական է կարդալ այդ նամակը, գրում է թերթը, և պարզ կդառնա, որ նա «խորհրդային գաղափարախոսության վրա է խարսխել հայ ժողովրդի ազգային արդար պահանջատիրությունը» [6, 2]:

«Ալիք»-ի դիտարկմամբ՝ Խորհրդային Միության ղեկավարությանը հասցեագրված նամակը «ներշնչում է Լենինյան ազգային քաղաքականությունից» և այդ գաղափարախոսության հիման վրա պահանջում է Ղարաբաղն ու Նախիջևանը միավորել Հայաստանին: Հայության պահանջը համապատասխանում է նաև «Գորբաչովյան հանգրվանի տիրական մթնոլորտին», որը «Ստալինյան շրջանում գործած սխալների շարքում դասում է նաև հայության դեմ գործած այս չարիքը»: Թերթի կարծիքով՝ տեղի ունեցած պատմական այդ անարդարության լավագույն վկայությունը Խորհրդային Ադրբեջանի կառավարության որոշումն է, ըստ որի՝ «Այսօրվանից Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը մտնում են Սովետական Հայաստանի կազմի մեջ» [6, 2]:

«Ալիքը» նկատի ունի Հայաստանի խորհրդայնացման առթիվ Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի որոշույնի հեռագիրը, որտեղ ասվում էր. «Այսօրվանից Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային վեճերը հայտարարվում էին վերացած: Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մասը» [1]:

Ելնելով այն իրողությունից, որ ժամանակին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղը ճանաչել է Հայաստանի մաս՝ «Ալիք»-ը գտնում է, որ մեր օրերում Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու «ամբողջ հայության պահանջատիրությունն արդար» է, որի «ձայնի արձագանքը առկա է բազմահազար հայության վերոհիշյալ նամակում»: շեռևաբար, եզրակացնում է թերթը, «հատկապես Դեմիրճյանները իրավունք չունեն թումբ կանգնեցնել և ազգային-քաղաքական առումով և համայնավար-գաղափարախոսական ուղղությամբ այս աստիճան անխոցելի մի դիմումի առաջ» [6, 2]:

«Ալիք»-ը ռուսերենից թարգմանաբար տպագրում է Մ. Ս. Գորբաչովին ուղղված նամակը, որտեղ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու պատմությանը՝ վկայակոչում էր նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1977 թ. նոյեմբերի 23-ի նախագահության նիստի արձանագրությանը, որտեղ նշվում էր. «Անհրաժեշտ է միացնել Ղարաբաղը (Արցախ՝ հայերեն) Խորհրդային Հայաստանին և ամեն ինչ իր օրինական տեղը կդրվի»:

Նամակի հեղինակները, դիմելով Մ. Ս. Գորբաչովին, ասում էին. «Հար-

գարժան Միխայիլ Սերգեևիչ, հանուն պատմական արդարության հաղթանակի, հանուն լենինյան ավանդությունների կատարման, մենք դիմում ենք ձեզ հայկական պատմական մարզեր Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը սոցիալիստական Հայաստանի հետ վերամիավորելու թախանձալից խնդրանքով» [6, 5]:

Վկայակոչելով այս իրողությունները՝ «Ալիք» օրաթերթը հստակ դիրքորոշում է դրսևորում Լեռնային Ղարաբաղի անկախության ձգտման հարցում: Թերթն իրավացիորեն գտնում է, որ արցախահայության պահանջը բխում է լենինյան ազգային քաղաքականությունից, պատմական արդարությունը վերականգնելու և հայ ժողովրդի երկու հատվածները միավորելու անհրաժեշտությունից: «Ալիք»-ը մոռանում է ընդգծել նաև այն իրողությունը, որ Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը՝ Հայաստանի հետ միավորելու մասին, բխում էր ԽՍՀՄ սահմանադրության դրույթներից:

Խորհրդային իշխանություններին ուղված արցախցիների նամակներն անարձագանք չմնացին Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից, որին անդրադառնում է «Ալիք» օրաթերթը՝ «Խորհրդային Ադրբեջանի հակազդեցությունը Ղարաբաղը Հայաստանին կցելու պահանջին» հողվածում: Թերթը գրում է, որ Բաքվի իշխանություններն, ի պատասխան հայության «արդար պահանջատիրության», սկսել են հակաքարոզչություն: Բաքվի հեռուստատեսությամբ հայերին կոչ է արվում «կարգապահության և քաղաքացիական պատասխանատվության գիտակցության», իսկ Ադրբեջանի ղեկավարությունը շեշտում է. «Չի քննարկվում Ադրբեջանական Հանրապետության սահմանների տարածքային փոփոխության հարցը» [7, 1]:

«Ալիք»-ը քննադատում է Ադրբեջանի ղեկավարությանը, որը հայերին հիշեցնում է հավատարիմ մնալ ԽՍՀՄ միասնությանն ու ինտերնացիոնալիզմին: Հետաքրքիր է իմանալ, գրում է թերթը. թե ինչո՞ւ Ադրբեջանի ղեկավարները այդ գաղափարներին իրենք հավատարիմ չէին, երբ ժամանակին Ղարաբաղը բռնակցում էին: Մինչդեռ անտեսելով այդ իրողությունը՝ ադրբեջանական մամուլը գրում է. «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում վերջերս անհանգիստ վիճակ է տիրում, որոշ տարրեր ուզում են մարզը անջատել Սովետական Ադրբեջանից և այն միացնել Սովետական Հայաստանին: Այս հարցը չի քննարկվում, քանի որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ընդգրկվել է լենինյան սկզբունքների համաձայն, 1923 թվականին» [7, 1]:

«Ալիք»-ը, ներկայացնելով ադրբեջանական իշխանությունների արձագանքը արցախահայության պահանջին, իրավացիորեն նկատում և ընդգծում է նրանց վարած երկակի քաղաքականությունը Ղարաբաղի հարցում:

1988 թ. հունվարի 5-ին Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանի գլխավորությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին

տեղակալ Պ. Դեմիչևին հանձնեց 260 արցախցիների ստորագրությամբ մի հանրագիր և հայ բնակչության անտանելի վիճակի մասին 80-ից ավելի փաստաթուղթ: Օրեր անց Մոսկվա մեկնեց արցախցիների նոր պատվիրակություն՝ Վաչե Մարտիանյանի գլխավորությամբ: Ի պատասխան արցախահայության արդարացի պահանջի՝ Խորհրդային Միության կուսակցական ղեկավարությունը խոստացավ հանձնախումբ ստեղծել խնդիրը հանգամանորեն ուսումնասիրելու համար, բայց գործնական որևէ քայլ չարեց այդ ուղղությամբ: Հավատարմվ գորբաչովյան վերակառուցմանը և պաշտոնական Մոսկվայի սին խոստումներին՝ արցախցիները «Լենին, կուսակցություն, Գորբաչով» կարգախոսով ազգային շարժում ծավալեցին [5, 710-711: 3, 160]:

«Ալիք» թերթի տեղեկություններով՝ Ղարաբաղի պատվիրակությունները փետրվարի 17-ին Մոսկվայում մերժում ստացան և վերադառնալով Ստեփանակերտ՝ բողոքի ցույց կազմակերպեցին: Ոստիկանությունը ցուցարարների նկատմամբ ճնշումներ գործադրեց: Տեղեկանալով այս մասին՝ Երևանում բողոքի ցույցեր սկսվեցին, նախ՝ Օպերայի հրապարակում, ապա կուսակցության Կենտկոմի շենքի առջև [9, 1]:

Իրականում արցախցիների շարժումը ավելի շուտ սկսվեց: Հունվարի կեսին Արցախի ղեկավարների գաղտնի ժողովը որոշեց, որ «Ղարաբաղը պատրաստ է ելույթի» [14]: Փետրվարի 13-ին Ստեփանակերտում կայացավ առաջին զանգվածային հանրահավաքը: Փետրվարի 16-ից սկսած Ստեփանակերտի քաղաքային հրապարակում գիշեր-ցերեկ զանգվածային ցույցեր էին տեղի ունենում՝ անտեսելով ուժային կառույցների սպառնալիքը: Ստեղծվեց նախաձեռնող խումբ «Կռունկ» կոմիտեի ղեկավար Արկադի Մանուչարյանի գլխավորությամբ [3, 161]:

1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորին ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կողմից ՀԽՍՀ կողմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ հարցի դրական լուծման համար» [15]:

Արցախահայության այս որոշմանը հրատապ արձագանքած «Ալիք» թերթը 1988 թ. փետրվարի 24-ի «Հայ ժողովուրդը պահանջում է իր արդար իրավունքը՝ Ղարաբաղն իր իրավատիրոջը վերադարձնել» հոդվածում ներկայացնում է, որ փետրվարի 23-ին շուրջ 150 հազար հայեր բողոքի ցույցեր են իրականացրել Երևանում՝ պահանջելով Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին: Թերթը գրում է, որ ավելի քան մեկ շաբաթ Հայաստանում և Արցախում զանգվածային հանրահավաքներ և բողոքի ցույցեր են տեղի ունե-

նում, որի մասնակիցները վանկարկում են՝ «Առանց արդարության եղբայրություն չի լինելու», «Մեկ ազգ, մեկ հանրապետություն», «Մոսկվա, մեր արդար պահանջին պատասխանիր» և «Պատմական արդարությունը վերականգնենք»:

«Ալիք»-ի տեղեկություններով ցուցարարները հանդիպել են Կոմունիստական կուսակցության երկու պաշտոնյաների հետ, որոնք Խորհրդային Հայաստան էին գործուղվել Արցախյան խնդրի համար, և նրանք ցուցարարներին հայտնել են, որ «խորհրդային ղեկավարությունը որևէ փոփոխություն հանրապետության սահմանների ներսում չի ընդունում» [8, 1]:

«Ալիք»-ը նկատի ունի ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարներ Ա. Լուկյանովին և Վ. Դոլգիխին, որոնք այդ օրերին Հայաստան էին եկել՝ տեղում իրադրությունը հասկանալու նպատակով: Ըստ «Ալիք»-ի՝ նրանք Հայաստան էին ժամանել «Ղարաբաղի հարցի համար ստեղծված անհանդարտ կացության վերահասություն տալու համար»: Նրանք ցուցարարներին հայտնել են, որ Խորհրդային ղեկավարությունը «որևէ փոփոխություն հանրապետության սահմաններում չի ընդունում» [8, 1]:

«Ալիք»-ը ճիշտ է ներկայացնում Խորհրդային Միության բարձրագույն ղեկավարության մոտեցումը Լեռնային Ղարաբաղի հարցում: Փետրվարի 21-ին ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոն հապճեպ որոշում ընդունեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին», որով արցախահայության ազգային, ազատագրական շարժումը որակեց որպես «ծայրահեղական» և «մի խումբ անջատողականների գործողությունների արդյունք»: Դրան հաջորդած իրադարձությունների ժամանակ պաշտոնական Մոսկվան հավատարիմ մնաց այդ որոշմանը՝ փորձելով հանրությանն ամեն կերպ հիմնավորել իր դիրքորոշումը:

«Ալիք»-ն այնուհետև իրավացիորեն նշում է, որ Արցախի խնդիրը դուրս է եկել ԽՄՏՄ շրջանակներից, որի նկատմամբ հետաքրքրություն են դրսևորում բազմաթիվ լրատվամիջոցներ: Ըստ թերթի՝ Երևանում տեղի ունեցած ցույցերին անդրադարձել են ՏԱՄՄ, Ռոյտեր, Ֆրանս պրես, Ջոմհուրի Էսլամի լրատվական գործակալությունները, Ամերիկայի ձայնը, Բի Բի Սի-ն: Լրատվամիջոցները փետրվարի 24-ի առավոտյան լուրերի բաժնում Իրանի պետական ռադիոն ևս անդրադարձավ Երևանից ստացվող լուրերին, - գրում է «Ալիք»-ը [8, 1]:

Թերթը 1988 թվականի փետրվարի 25-ի՝ «Ցույցեր և գործադուլներ են տեղի ունենում Լեռնային Ղարաբաղում» հոդվածում պատմում է փետրվարի 24-ին Երևանում կայացած բազմահազար բողոքի ցույցի մասին, որի մասնակիցները պահանջել են Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին: ԽՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությունը հորդորել է բնականոն կյանքը վերականգնել Լեռնային Ղարաբաղում, իսկ Հայաստանի և Ադրբեջանի կուսակցական ղեկավարությունից պահանջել է «օգտագործել իրենց քաղաքա-

կան ազդեցությունը՝ Ղարաբաղում անդորրություն հաստատելու համար»։ Թերթի ունեցած տեղեկություններով Երևանում համընդհանուր գործադուլ է, Հայաստանի Կոմկուսը նիստ է անցկացրել իրավիճակը հանրապետությունում կարգավորելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար։

Ըստ «Ալիք»-ի՝ չնայած կուսակցական մարմինների կոչերին ու հորդորներին՝ Ղարաբաղում վիճակը մնում է լարված, ցուցարարների թիվը գնալով մեծանում է, Ստեփանակերտում առնվազն 30 հազար մարդ, առանց դադարի, գիշեր-ցերեկ շարունակում են իրենց բողոքի ցույցերը։ Փետրվարի 23-ին Ղարաբաղում ցուցարարների թիվը հասել է 100 հազարի։ Նույն օրը Ստեփանակերտում տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի Կոմկուսի մարզային պլենումի նիստ։ Պլենումը մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովին «աշխատանքներում թույլ տված թերությունների համար» հեռացրել է պաշտոնից և առաջին քարտուղար ընտրել Հենրիկ Պողոսյանին [9, 1]։

Թերթի տեղեկություններով բողոքի ցույցերը շարունակվում են նաև Երևանում։ Անվանի բանաստեղծ Միլվա Կապուտիկյանը փետրվարի 23-ին կայացած բազմամարդ հանրահավաքում հայտարարել է. «Մենք երկար ենք սպասել մեր տեսակետները արտահայտելու համար և թվում էր, թե ամեն ինչ կարգին է, սակայն այժմ պետք է համբերություն դրսևորել և չգայթակղվել հակակենտրոնական տրամադրություններով և ազգամիջյան թշնամանքներով» [9, 1]։

«Ալիք» օրաթերթը գրում է, որ նույն օրը՝ փետրվարի 23-ին, Երևանում մի քանի ձեռնարկություններ գործադուլ են հայտարարել, իսկ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն մերժել է Երևան գալ և ելույթ ունենալ ցուցարարների առջև [9, 1]։

Թերթի տեղեկությունները հավաստի էին. Երևանում և հանրապետության մյուս քաղաքներում բազմամարդ հանրահավաքներ սկսվեցին՝ ի պաշտպանություն արցախցիների շարժման։ Մոսկվա՝ Խորհրդային Միության ղեկավարությանը, ուղարկվեցին աշխատանքային կոլեկտիվների, գիտական հաստատությունների բազմաթիվ որոշումներ ու դիմումներ, պատմական տեղեկանքներ ու փաստաթղթեր, հայազգի անվանի գործիչների, մտավորականների, գիտնականների, արվեստագետների խնդրագրեր։ Դրանք միահամուռ ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությունը խնդրում էին սահմանադրական ճանապարհով արդարացի լուծում տալ արցախահայության պահանջին և ԼՂԻՄ-ը միացնել Խորհրդային Հայաստանին [4, 12-33]։

1988 թ. փետրվարի 26-ին ԽՄԿԿ ԿԿ առաջին քարտուղար Մ. Ս. Գորբաչովը հանդարտություն և զսպվածություն հանդես բերելու կոչով դիմեց Ադրբեյջանի և Հայաստանի ժողովուրդներին [16]։ Հայ ժողովուրդը նրա կոչն ընդունեց պահի լուրջ գիտակցումով, և անմիջապես դադարեցվեցին հանրահավաքները, ցույցերը, գործադուլներն ու դասադուլները։ Մինչդեռ Ադրբեյջա-

նում սկսվեցին հակահայկական ցույցեր, հանրահավաքներ, որտեղ հնչեցին քացահայտ սպառնալիքներ հայության հասցեին:

Դեպքերի նման ընթացքը հայ ժողովրդին ստիպեց կրկին հավաքվել Երևանի Օպերայի հրապարակում, Մատենադարանի առջև, Մաշտոցի պողոտայում: Ի պաշտպանություն արցախահայության՝ հանրահավաքներում ելույթներ ունեցան Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ, աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանը, արձակագիր Սերո Խանզադյանը, ժողովրդական դերասան Սոս Մարգսյանը և անվանի այլ մարդիկ:

Փետրվարի 26-ին Մոսկվայում Մ. Ս. Գորբաչովի հետ հանդիպում ունեցան Սիլվա Կապուտիկյանը և գրող, հրապարակախոս Ջորի Բալայանը: Նրանք ներկայացրեցին Ղարաբաղի խնդրի էությունը և հայ ժողովրդի անունից խնդրեցին հարցին արդարացի լուծում տալ [2, 275-293]:

«Ալիք»-ը գրում է, որ փետրվարի 27-ին Երևանում կայացած զանգվածային հանրահավաքում ելույթ ունեցած Ջորի Բալայանը և Սիլվա Կապուտիկյանը ցուցարարներին ներկայացրեցին Մ. Ս. Գորբաչովի խոստումները: Նա հայ պատվիրակներին խոստացել էր Լեռնային Ղարաբաղում ապահովել Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումներն ունկնդրելու և դիտելու հնարավորություն, դպրոցներն ու ուսումնական հաստատությունները դնել Հայաստանի լուսավորության նախարարության ենթակայության տակ, միջոցներ հատկացնել Շուշի քաղաքի ավերակները վերականգնելու համար:

Գնահատական չտալով Մ. Ս. Գորբաչովի խոստումներին, որոնք նպատակ էին հետապնդում հայությանը շեղել արդարացի պայքարից՝ «Ալիք»-ը գրում է, որ Երևանում շարժման ղեկավարները որոշել են ժամանակավորապես դադարեցնել ցույցերն ու հանրահավաքները և փետրվարի 28-ին հավաքվել Հայաստանի Գրողների միության տանը՝ մշակելու հետագա քայլերի ծրագրերը: Ըստ թերթի՝ Երևանի փողոցներում զինվորներ չեն երևում, ցուցարարների շրջանում տազնապը վերացել է, իսկ ռադիոյի և հեռուստատեսության՝ գործադուլ հայտարարած աշխատակիցները վերադարձել են իրենց աշխատանքին:

Այդ օրերին Լեռնային Ղարաբաղի կացության մասին թերթի ստացած տեղեկությունները հակասական էին. որոշ լուրերով իրադրությունը հանդարտ է, իսկ այլ լուրերով բնակչության շրջանում խուճապ կա: Ստեղծված իրադրության մասին թերթը տպագրում է Ազգային ինքնորոշում միավորում կազմակերպության ղեկավար Պարույր Հայրիկյանի կարծիքը: Ըստ նրա՝ ազգային շարժման «նախաձեռնությունը Ղարաբաղի ժողովրդինն է, նա է ինքնորոշման վճիռ կայացրել, իսկ Հայաստանը թիկունք է կանգնել նրան» [11, 3-4]:

«Ալիք»-ը գրում է, որ «Երևանում ցույցերին մասնակցողների թիվը անց

նում է մեկ միլիոնը», Երևանի ցուցարարներին միացել են մեծ թվով մարդիկ Հայաստանի տարբեր շրջաններից, Սևան, Աբովյան, Լենինական քաղաքներից: Ցուցարարների ղեկավարները սփյուռքահայերին կոչ են արել «իրենց թիկունք կանգնել»: Ցուցարարներին միացել է Վազգեն 1-ին կաթողիկոսը և հեռագրով տեղեկացրել Կրեմլին, որ ինքը լինելու է ժողովրդի կողքին ու պահանջում է Մ. Ս. Գորբաչովից «բավարարել հայության պահանջները»: Թերթը հայտնում է, որ իրեն հասած տեղեկատվության համաձայն «բանակայինները որևէ կերպ չեն միջամտում ցույցերին և Հայաստանի ոստիկանությունը բարյացակամ է տրամադրված ժողովրդի նկատմամբ» [10, 1]:

Համազգային շարժմանը կազմակերպված բնույթ հաղորդելու նպատակով 1988 թվականի փետրվարին ստեղծվեց շարժման կազմկոմիտե: Այդ կապակցությամբ «Ալիք»-ը գրում է. «ընտրվել է կազմակերպչական մի հանձնախումբ՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, մի բանաստեղծուհու (անունը հայտնի չէ), Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մայրաքաղաք Ստեփանակերտի պետական-դրամատիկական թատրոնի տնօրեն Վաչե Մարուխանյանի, հասարակական հանրահայտ գործիչ, Լեոնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության հետ միավորելու շարժման ղեկավարներից՝ Իգոր Մուրադյանի, Երևանի համալսարանի դասախոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Վազգեն Մանուկյանի, Հայաստանի պետական երգչախմբի ղեկավար Հովհաննես Չեֆիջյանի և հասարակական գործիչ Բարիստոյարյանի մասնակցությամբ» [10, 1]:

Իրականում 1988թ. փետրվարին ստեղծված կազմակերպչական կոմիտեի մեջ մտան Իգոր Մուրադյանը, Վաչե Մարուխանյանը, Մամսոն Ղազարյանը, Վազգեն Մանուկյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Սամվել Գևորգյանը, Վանո Սիրադեղյանը, Արմեն Հովհաննիսյանը, Հենրիկ Իգիթյանը և ուրիշներ: Կազմկոմիտեն շարժմանը կազմակերպված բնույթ տվեց և ղեկավարեց գործողությունները ոչ միայն Երևանում, այլև հանրապետության մյուս քաղաքներում [5, 716]:

«Ալիք»-ը նկատում է, որ փետրվարի վերջին օրերին Հայաստանում և Ղարաբաղում ընթացող իրադարձությունների մասին իրարամերժ լուրեր են ստացվում: Պետական, կուսակցական լրատվամիջոցների տեղեկություններով իշխանությունները վերահսկում են վիճակը, իսկ ընդդիմադիր քաղաքական հայացքներ ունեցող հասարակական գործիչները բոլորովին այլ բան են ասում: Թերթը, հենվելով Պարույր Հայրիկյանի ունեցած տեղեկությանը, գրում է, որ Լեոնային Ղարաբաղում շարունակվում են ցույցերն ու գործադուլները, Երևանում ստեղծվել է նոր կազմակերպություն, որը զբաղվում է Ղարաբաղին առնչվող գործերով: Կազմակերպությունը հայտարարել է, որ մինչև մարտի 26-ը կդադարեն բոլոր ցույցերն ու հանրահավաքները: Նույն որոշումը կայացրել են նաև փետրվարի 28-ին Երևանում, Գրողների

միության մեծ դահլիճում: «Ըստ «Գլասնոստ»-ի ղեկավար, խորհրդային այլախոհ Սերգեյ Գրիգորյանցի՝ Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը աշխատանքից հեռացվել է և նրա փոխարեն նշանակվել է Հարությունյան ազգանունով մի անձնավորություն» [10, 1]: Թերթը հաջորդ օրը հերքում է Կ. Դեմիրճյանի պաշտոնազրկումը՝ ըստ Պարույր Հայրիկյանի. «Մեզ հայտնի դարձավ, Կարեն Դեմիրճյանը հեռացված չէ իր պաշտոնից, հակառակ այն բանի, որ երեկ այդպիսի լուրեր էին շրջում» [11, 4]:

Թերթի տեղեկություններով Երևանում անդորր է, «Սովետսկի Կարաբախ» թերթը տպագրել է ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու մասին: Ի պաշտպանություն հայության արդար պահանջի ցույցեր են տեղի ունենում ամերիկահայերի շրջանում՝ Վաշինգտոն, Բոստոն և Նյու Յորք քաղաքներում:

«Ալիք»-ը «Մոսկվայի ռադիոն խեղաթյուրում է» փետրվարի 29-ի հոդվածում վրդովված գրում է, որ Մոսկվայի ռադիոն ամեն օր տարբեր լեզուներով իր հաղորդումներում «Հայաստանի հայության միահամուռ արդար պահանջը ներկայացնում է որպես «ազգայնական» շրջանակների կողմից հրահրվող խնդիր»: Ղարաբաղին նվիրված հեթոթական հաղորդման ժամանակ հայտարարվել է, որ ԼՂԻՄ-ը ստեղծվել է 1923 թ. Խորհրդային Ադրբեջանի կազմում, որտեղ 49 ազգությունների ներկայացուցիչներ են ապրում: Թերթը դա համարում է ապատեղեկատվություն և մեջբերում է Հայկական հանրագիտարանը, ըստ որի՝ 1976 թ. տվյալներով Ղարաբաղի բնակչության 80,5 % կազմում են հայերը, 18,1 %՝ ադրբեջանցիները և 0,9%՝ ռուսները: Հետևաբար, հարցնում է թերթը, «որտեղ են մնացյալ 49 ազգերը, որ մատնանշում է Մոսկվայի ռադիոն»: Թերթի եզրափակում է՝ կարծելով, որ Մոսկվայի ռադիոն կամ «իրապես անտեղյակ է բուն խնդրի էությանը (որ անհավանական ենք կարծում) կամ էլ միտումնավոր կերպով նենգափոխում է պատմությունն ու իրականությունը» [12, 1, 4]:

Թերթն այնուհետև գրում է, որ շարժումը գլխավորող կազմակերպությունը որոշել է զանգվածային ցույցերը դադարեցնել մինչև մարտի 26-ը: Այդ օրը Երևանի ժամանակով ժամը 2-ին, Երևանի օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքի շրջակայքում, զանգվածային հավաք է կազմակերպվելու մանրամասն ծրագիրը մշակելու համար, որտեղ ինչպես ակնկալվում է, «կընթերցվի խորհրդային կառավարության որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Խորհրդային Հայաստանի Հանրապետության վերամիավորելու վերաբերյալ» [11, 4]:

Հայ ժողովրդի ազգային պայքարը 1988 թ. փետրվարին այնքան մեծ չափերի էր հասել, որ Մ. Ս. Գորբաչովը պատրաստ էր Լեռնային Ղարաբաղին ֆինանսական մեծ աջակցություն ցույց տալ և նրանց սոցիալական, կրթական, մշակութային և այլ խնդիրները լուծելու ճանապարհով կասեցնել

ազգային վերածնության շարժումը, որպեսզի այն վարակիչ չլինի, և չտարածվի Խորհրդային Միության մյուս հանրապետություններում: Խորհրդային դեկավարությունը գնաց այդ ճանապարհով ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի որոշմամբ Լեոնային Ղարաբաղին տրամադրվում էր 400 մլն ռուբլի մարզում կուտակված սոցիալ-տնտեսական և մշակութային խնդիրները լուծելու համար [17]:

Լեոնային Ղարաբաղի իշխանություններն ու ժողովուրդը լավ էին հասկանում, որ դա իրենց պայքարից շեղելու միջոց է, ուստի «ղանայացիների նվերից» հրաժարվեցին: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ «Ալիք»-ը հերթական անգամ հղում է անում «Գլասնոստ»-ի խմբագիր Սերգեյ Գրիգորյանցին, ըստ որի՝ «հայաստանյան իրադարձությունների վերջին օրերը ցույց տվեցին, որ հայ ժողովուրդը հասել է հոգևոր վերածնունդի՝ ազգային միասնականության: Երկրում այդօրինակ կացություն չէր եղել վերջին յոթանասուն տարիներից ի վեր: Զարմանալին այն է, որ այդ ամենը ծագել է տարերայնորեն և ոչ ոքի կողմից հատուկ կերպով կազմակերպված չի եղել» [11, 1]:

«Ալիք»-ը «Ղարաբաղն է կանչում» խորագրում վերլուծում է Հովհաննես Շիրազի բանաստեղծությունը՝ նվիրված Արցախին, որտեղ Ղարաբաղը ներկայացվում էր «օտարին մեղր տվող ծաղիկ», որին խլել են իր եղբայր Հայաստանից ու բռնագավթել: Վերլուծելով Ղարաբաղի նկատմամբ անսահման սիրով ու հայրենասիրական պայծառով գրած բանաստեղծությունը՝ «Ալիք»-ը եզրակացնում է. «Մեր բռնագրավված հողերի շարքում Ղարաբաղը պիտի վերամիանա Հայաստանին և նրա հետ դառնա մեկ հողի և մեկ մարմին»: Թերթը Ղարաբաղը համեմատում է մասնատված մարմնի հետ, որն ապրելու համար պետք է ըմբոստանա ու պայքարի: Ըստ թերթի՝ «հայոց արծիվը իր արծվությունն արդեն իսկ ցուցաբերել է... արծվային խոյանքով Ղարաբաղի գավակները բարձրացրել են իրենց վեհ և համարձակ բռունցքները» [13, 1]:

«Ալիք»-ի կարծիքով ի պատասխան Ղարաբաղի կանչի՝ Հայաստանն այսօր ոտքի է կանգնել, բայց «այսօր հայությունը պիտի զգաստանա և ավելի աչալուրջ հետևի իր պահանջները իրականացնելու համար» [13, 1]:

Արցախյան շարժման հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ հայությունը զգոն լինելու և զգաստանալու թերթի ուղերձը հիմնագուրկ չէր: Մ. Ս. Գորբաչովը կեղծ խոստումներով փորձեց հանգստացնել պեկոծ հայ ժողովրդին, բայց տեսնելով, որ դա արդյունք չի տալիս, սպառնաց, որ եթե շարժումը շարունակվի, ապա այն կործանարար կլինի Ադրբեջանում ապրող շուրջ կես միլիոն հայերի համար: Մ. Ս. Գորբաչովը ադրբեջանցիներին հասկացնել տվեց, որ կարող են փակել Հայաստան տանող ճանապարհները, հանրապետությունը կտրել արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելուց և տնտեսական շրջափակման միջոցով բնակչության սովի մատնել [4, 714-715]:

Ադրբեջանի իշխանությունները կյանքի կոչեցին Մ. Ս. Գորբաչովի

սպառնալիքը և փետրվարի 27-29-ին Սումգայիթ քաղաքում պետական մակարդակով կազմակերպված հայ բնակչության զանգվածային ջարդեր կազմակերպեցին: Խորհրդային միության ղեկավարության թողտվությամբ իրականացրած այդ եղեռնագործությունը և դրան հաջորդած հայության տեղահանությունը նպատակ էր հետապնդում կանխել Արցախյան շարժումը, հայերին ահաբեկել նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով:

Եզրակացություն

Հանգամանորեն անդրադառնալով Արցախյան շարժման սկզբնավորմանը՝ «Ալիք» օրաթերթը այն համարում է ազգային ինքնորոշման և մայր Հայաստանի հետ միավորման համար արդարացի պայքար: Թերթը հայության պայքարը համարում է պահանջատիրություն՝ գտնելով, որ դրա լուծումը վերջ կդնի տեղի ունեցած պատմական անարդարությանը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-257>

Գրականություն

1. Հայաստանի ազգային արխիվ, Ֆ. 1023, ց.1 գ. 967, փ.10, թ.1:
2. Կապուտիկյան Ս., Էջեր փակ գորոցներից, Երևան 1988:
3. Հայոց պատմություն, հ. 4, գիրք երկրորդ, Երևան 2016:
4. Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար 1988-1989: Կազմեցին Հ. Աբրահամյան, Կ. Խաչատրյան, Երևան, 2014:
5. Սիմոնյան Հր., Հայոց պատմություն, Երևան, 2012:
6. «Ալիք», 1988, 5 հունվարի, № 4:
7. «Ալիք», 1988, 22 փետրվարի, № 42:
8. «Ալիք», 1988, 24 փետրվարի, № 44:
9. «Ալիք», 1988, 25 փետրվարի, № 45:
10. «Ալիք», 1988, 27 փետրվարի, № 46:
11. «Ալիք», 1988, 28 փետրվարի, № 47:
12. «Ալիք», 1988, 29 փետրվարի, № 48:
13. «Ալիք», 1988, 1 մարտի, № 49:
14. «Հայոց աշխարհ», 1988, 24 հունվարի:
15. «Սովետական Ղարաբաղ», 1988, 21 փետրվարի:
16. «Սովետական Հայաստան», 1988, 27 փետրվարի:
17. «Սովետական Հայաստան», 1988, 29 մարտի:

**Отклики зарождения арцахского движения
в ежедневной газете «Алик»**

*Феликс Мовсисян
Татьяна Оганян*

Резюме

Ключевые слова: *Перестройка, Нагорный Карабах, национальное движение, объединение, национальное самоопределение, армянская диаспора, пресса*

«Алик» – армянская ежедневная газета, выходящая в Тегеране (Иран). Она была основана в марте 1931 года. У газеты есть собственное издательство и типография, где публикуются книги на армянском и персидском языках. В газете «Алик» освещается жизнь армянских общин, особенно те события, которые носят общенациональный характер. Газета имеет большой информационный раздел, в котором размещается информация о событиях в Армении, Арцахе, Джавахке, о событиях, которые касаются всех армян. И так как Иран является сопредельной с Арменией страной, то и информация в газете, конечно, преобладает из Армении. Развернувшееся в феврале 1988 г. арцахское движение нашло широкий отклик в армянской прессе стран Ближнего Востока, в том числе в издаваемой в Тегеране ежедневной газете «Алик». Публикации в газете «Алик» свидетельствуют о том, что газета была осведомлена о подоплеке карабахской проблемы, в отношении которой она проявляет национальную и проармянскую позицию. Газета связывает подъем движения армян с политической перестройкой М. С. Горбачева. Веря в обещания решать национальные проблемы и развивать демократию, армяне потребовали самоопределения и объединения с матерью-Арменией. «Алик» считает борьбу армян справедливой, квалифицирует ее как проблему национальной идеологии, решение которой положит конец исторической несправедливости, имевшей место в 1920-е годы. Исходя из этого мышления, газета призывает объединяться в кулак, потому что пришло время бороться. В то же время «Алик» призывает армян к осмотрительности, считая, что армяне должны быть последовательными в своих требованиях.

The Response to the Initiation of the Artsakh Movement in the “Alik” Daily Newspaper

*Feliks Movsisyan
Tatyana Ohanyan*

Summary

Key words: *Perestroika, Nagorno-Karabakh, national movement, unification, national self-determination, Armenian Diaspora Press*

“Alik” is an Armenian daily newspaper published in Tehran (Iran). It was founded in March 1931. The newspaper has its own publishing house and printing premises, that publishes books in Armenian and Persian. The newspaper “Alik” covers the life of the Armenian communities, especially the events of a national character. The newspaper has a large information section, which contains substantial data about the events in Armenia, Artsakh and Javakhk, concerning all Armenians. Since Iran is a country adjacent to Armenia, the information in the newspaper, of course, prevails from Armenia. The Artsakh movement that started in February 1988, found a wide-response in the Armenian Press of the Middle East countries, as well as in the Tehran-based “Alik” Daily Newspaper. The newspaper addresses the events unfolded in Karabakh and Armenia with news information and publication from Sonet and foreign mass media. The publications of “Alik” indicate that the newspaper was aware of the background of the Karabakh problem, regarding which it shows a national and pro-Armenian position. The newspaper associates the rise of the Armenians movement with Gorbachev’s perestroika policy. Believing in the promises of solving national problems and developing democracy, the Armenians demanded self-determination and unification with mother Armenia. “Alik” considers the struggle of the Armenians fair, qualifies it as a claim of national ideology, the solution of which will put an end to historical injustice happened in the 1920s. In this respect, the paper urges the Armenians to unite and prepare for the fight, but simultaneously it calls on Armenians to be alert and careful with their demands.

Ներկայացվել է 11.04.2023 թ.
Գրախոսվել է 20.04.2023 թ.
Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

**Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված
Հայ Դատի հանձնախմբի գործունեության արձագանքը
Թեհրանի «Ալիք» օրաթերթում**

Էլեն Շարոյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-272>

Հանգուցային բառեր. Հայոց ցեղասպանություն, Հայ դատի հանձնախումբ, Մփյուռք, «Ալիք» օրաթերթ, պահանջատիրություն

Նախաբան: Ժամանակակից Մփյուռքում գործում են մի շարք կազմակերպություններ, որոնք ծավալում են հայրենասիրական լայն գործունեություն: Նրանց իրականացրած ծրագրերը կրում են ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ բարեգործական և մարդասիրական բնույթ: Այդ կազմակերպություններից Հայ դատի հանձնախմբի երկարամյա և հետևողական գործունեությունը ուղղված է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացին:

Սույն թեման արդիական է, քանի որ հատկապես վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ հայկական լրբիզմը և աշխարհում հայության ներկայացուցչությունը նոր մակարդակի բարձրացնելու կարիք է գգում: Այս հարցում կարևոր է ոչ միայն լրբիստական կազմակերպությունների գործունեության լուսաբանումը, այլև հայկական Մփյուռքում դրա մատուցման որակի և հաճախականության ուսումնասիրությունը: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը պետք է հայության ամենօրյա խնդիրը լինի:

Ուսումնասիրության նպատակն է ուշադրություն հրավիրել Մփյուռքում գործող հայկական խոշոր լրբիստական կազմակերպություններից մեկի՝ Հայ Դատի հանձնախմբի գործունեության վրա, ուսումնասիրել հանձնախմբի կատարած աշխատանքների լուսաբանման ինտենսիվությունը սփյուռքահայ, մասնավորապես Մերձավոր Արևելքում լույս տեսնող հայկական մամուլի էջերում:

Մերձավոր Արևելքի երկրներում լույս տեսնող պարբերականները թեն շատ են, բայց ոչ բոլորն են անդրադարձել Հայ Դատի գործունեությանը այս կամ այն երկրում:

Այս առումով կարևորվում է իրանահայ «Ալիք» օրաթերթը, որն ակտիվորեն լուսաբանում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտմանն ուղղված Հայ Դատի հանձնախմբի իրականացրած քայլերը:

Թեմայի նորույթը այն է, որ մինչ օրս հայ պատմագրության մեջ չեն ուսումնասիրվել Հայ Դատի հանձնախմբի գործունեության արձագանքները Մերձավոր Արևելքի հայաշատ երկրներում լույս տեսնող հայ պարբերական-

ներում: Աշխատանքը կատարելիս կիրառվել են պատմական, փաստագրական և պատմահամեմատական մեթոդները:

«Ալիք» օրաթերթը: «Ալիք» օրաթերթը լույս է տեսնում 1931 թվականից մինչ օրս Իրանի Բալանական Հանրապետության մայրաքաղաք Թեհրանում: Սկզբում այն քաղաքական-հասարակական և գրական-գեղարվեստական շաբաթաթերթ էր, իսկ մեր օրերում ազգային, հասարակական և քաղաքական օրաթերթ է: «Ալիք» օրաթերթը պաշտոնապես որևէ քաղաքական կուսակցության ձայնավողը չէ, հստակ ընդգծված քաղաքական ուղղվածություն չունի և դավանում է ազգային գաղափարախոսություն: Թերթի հրատարակումները հիմնականում վերաբերում են Հայաստանի Հանրապետությանը, Արցախին, Սփյուռքին, Իրանի հայ համայնքին և ՀՅԴ կառույցների գործունեությանը:

Հայ դատի հանձնախմբի գործունեությունը: Հայոց ցեղասպանության ոգեկոչման, ճանաչման և դատապարտման գործընթացը 1965 թվականի երևանյան իրադարձություններից հետո լայն թափ ստացավ հատկապես Հայաստանի Հանրապետության անկախության մասին 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագրի ընդունումից հետո [1, 113]: 1998 թվականից Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում հաստատուն տեղ գրադեցրեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը [1, 77]:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի վերելքը համընդհանուր ոգևորություն առաջացրեց աշխարհասփյուռ հայության շրջանում: Դրանից անմասն չմնաց նաև «Ալիք» օրաթերթը: 1988 թվականի փետրվարի 29-ի «Հայրենացնել Հայ դատի պահանջատիրությունը» ծավալուն հոդվածում թերթն անդրադառնում է հայ ժողովրդի պահանջատիրությանը, Հայ դատի պայքարին և հանձնախմբի գործունեությանը: Թերթի կարծիքով «Հայ ազգային-ազատագրական շարժումի նոր շրջանի պայքարը կարողացավ միջազգային կարծիքի ուշադրությունն իր վրա կենտրոնացնել: Կարողացավ իբրև մերօրյա խնդիր արժարժումի նյութ դառնալ և հուզել միջազգային մամուլը: Կարողացավ փշրել լռության այն պատը, որ դավադրաբար ստեղծվել էր Հայ Դատի շուրջ» [3, 2]:

Ըստ «Ալիքի» հայ ազատագրական շարժումն իր պայքարի նոր փուլը նվաճել է զինված պայքարի ու քարոզչական աշխատանքների շնորհիվ և տպավորություն թողել, որ Հայ դատի արդար լուծման պահանջը «ցեղասպանության խնդիր կամ ցեղասպանության ենթարկված ժողովրդի խնդիր» է, ուստի «ընդունակ չեղավ կամ չթույլատրեց այդքանից այն կողմ անցնելու»:

Թերթի համոզմամբ Հայոց ցեղասպանության արձարժմամբ և այն միջազգային դատապարտման արժանացնելու աշխատանքները չեն կարող ինքնանպատակ լինել: Այն «մաս է կազմում Հայ դատի պահանջատիրության և իբրև այդպիսին պետք է ընդունել տալ արտաքին աշխարհին: Եթե մեր պայքարի նորագույն զարթոնքի սկզբնական փուլում ճիշտ էր ցեղասպանության արձարժումն ու այն միջազգային ճանաչողության արժանացնելու մարտա-

վարությունը,- գրում է «Ալիքը»,- ապա «այժմ Հայկական ցեղասպանության խնդրի արձարծումը պետք է կատարել նոր բովանդակությամբ, այն կապելով հողային պահանջի հետ»: Թերթի կարծիքով հայությունն այլևս չի կարող բավարարվել և հանգիստ նայել միջազգային կազմակերպությունների երկակի վարքագծին: Նրանք մի կողմից «իբրև թե ճանաչում ու դատապարտում են Հայկական ցեղասպանությունը, մյուս կողմից մերժում են հայկական հողերի վրա հայ ժողովրդի վերադարձի և այդ հողերի ազատագրման ու ազգային ազատ ինքնորոշման իրավունքը» [3, 2]:

Թերթի դիտարկմամբ Հայ դատը մեծ պետությունների կողմից դիտվում է որպես Թուրքիայի հողային ամբողջականությունը խախտող երևույթ և որպես այդպիսին «Հայ դատի արձարծումը և արդար լուծումը չեն համընկնում նրանց շահերի հետ»: Այդ իսկ պատճառով մեծ պետությունները գործադրում են բոլոր միջոցները «հայ ազգային-ազատագրական պայքարի էությունը խեղաթյուրելու, ձախողության մատնելու, ծուռ հայելու մեջ ցույց տալու համար»: Թերթի կարծիքով՝ Թուրքիային հովանավորող ուժերն ամեն ջանք գործադրում են հայության պայքարի էությունն ու նպատակները ներկայացնելու որպես «վրեժխնդրություն և միջազգային անհաբեկչություն»: Այս իմաստով միջազգային հանրությունում թյուր տպավորություն է ստեղծվել հայերի «ազատագրական շարժումների և այդ ծիրի մեջ նաև հայկական զինյալների գործողությունների մասին»: Նման անբարենպաստ պայմաններում,- ընդգծում է «Ալիքը»,- «նպատակահարմար մարտավարություն էր Հայ Դատի հանձնախմբերի կողմից արձարծվող Հայկական ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը» [3, 2]:

Իր միտքը հիմնավորելու համար «Ալիքը» մեջբերում է Հայ դատի հանձնախմբերի 1987 թ. դեկտեմբերի խորհրդաժողովում ընդունած հայտարարությունը, որտեղ ասվում է. «Հայ դատի հետապնդման քաղաքական-քարոզչական աշխատանքների ընթացքում շեշտը պետք է դնել հայ ժողովրդի ազգային և մարդկային իրավունքների ամբողջական վերահաստատման պահանջի վրա» [23, 7]:

«Ալիքը» կարևորում է վերոհիշյալ խորհրդաժողովում առաջ քաշված այն պահանջը, որ անհրաժեշտ է հստակեցնել Հայ դատի հանձնախմբերի գործունեության առաջնահերթությունը: Մասնավորապես պետք է շեշտել, որ Հայ դատը ոչ միայն անցյալում գործված անարդարությունը ճանաչելու ու սրբագրելու հարց է, այլև «իրավագրկված ժողովրդի ազատության անժամանցելի դատն է»: Այնպես որ, եզրակացնում է «Ալիքը», «Հայ դատը մեր ժողովրդի այսօրն ու գալիքը հուզող քաղաքական հրատապ հարց է» [3, 2]:

Առաջնորդվելով այս մտայնությամբ՝ «Ալիքը» իր էջերում պարբերաբար անդրադառնում է Հայ դատի հանձնախմբի գործունեությանը՝ նպատակ հետապնդելով Հայ դատի պայքարը դարձնել համայն հայության մտահոգության խնդիրը: Թերթն առանձնապես կարևորում է Հայոց ցեղասպանության

100-րդ տարելիցի կապակցությամբ Հայ դատի հանձնախմբի գործունեության լուսաբանումը: Դրան նվիրված միջոցառումները համակարգելու նպատակով 2011 թվականի ապրիլի 23-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի որոշմամբ ստեղծվեց հանձնաժողով: Այն պետք է կազմակերպեր, աջակցեր ու համակարգեր Հայաստանում, Արցախում և Սփյուռքում կազմակերպվող Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված կրթական, գիտական, մշակութային և ճանաչողական միջոցառումները [24]:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Հայ Դատի հանձնախումբը իրականացնում էր ակտիվ քարոզչական և բողոքի գործողություններ, կազմակերպում սեմինար-քննարկումներ, խորհրդաժողովներ:

Այս հարցերին մշտապես անդրադառնում է Թեհրանում լույս տեսնող «Ալիք» օրաթերթը: Թերթը գրում է 2014 թ. հունվարին Շվեյցարիայի դեսպանի հետ Ֆրանսիայում Հայ դատի հանձնախմբի գրասենյակի ղեկավար Հրաչ Վարժապետյանի հանդիպման մասին: Նա դեսպանի հետ քննարկել է Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման դեմ ժխտողական գործունեություն ծավալող թուրք Դոդու Փերինչեք ընդդեմ Շվեյցարիայի հայցը բավարարելու վերաբերյալ դատարանի վճիռը վերանայելու հարցը [4, 3]:

Ալիքը ներկայացնում է 2013 թ. Թուրքիայում հիմնված «Կանաչների և սպագայի ձախ կուսակցության» (YSGP) համագումարում ընդունված որոշմամբ, որը 1915 թ. «հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը համարում է եղելություն» և հայտարարում, որ բոլոր ջանքերը կգործադրի «ցեղասպանության 100-րդ տարելիցը հասարակության կողմից ճշգրտորեն ըմբռնել տալու ուղղությամբ» [2, 5]:

Թերթը տպագրում է իրանահայ հասարակական գործիչ Օննիկ Հայրապետյանի առաջարկությունները Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ: Նա առաջ է քաջում այն միտքը, որ «Այսօր արդեն հրամայական պահանջ է գործնական միասնության և միաբանության՝ մեկ դատ, մեկ նպատակ, գործնականապես մեկ միասնական պայքար»: Նա առաջարկում է մինչև 2015 թ. սկզբին Հայաստանի նախագահի և կառավարության նախաձեռնությամբ ու Սփյուռքի նախարարության կազմակերպությամբ Երևանում հրավիրել վեհաժողով, որն օգտակար կլինի «հայ ժողովրդի դատին ու պահանջատիրությանը և Արցախի հանրապետության միջազգային ճանաչմանը» [5, 3]:

«Ալիքը» զետեղում է «Կալիֆորնիա կուրիեր» թերթի հրատարակիչ և խմբագիր Հարութ Սասունյանի խոսքը՝ ուղղված Կանադայի թուրքերին, որում նա կոչ է անում «դատապարտել և ոչ թե արդարացնել ցեղասպանության ժխտումը» [6, 2]:

«Ալիքը» տեղեկացնում է 2014 թ. հունվարի 18-ին Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում կայացած թուրք մտավորականների համաժողովի մասին, որի ավարտին «Անկարայի մտքի ազատության նախաձեռնության» խոսնակ

Սաիդ Չեթինօղլուն հրապարակել է մասնակիցների ստորագրությամբ հայտարարություն՝ «Առաջարկներ 1915-ի Ցեղասպանության ճանաչման, հատուցման և Թուրքիայի հասարակությանը այս ամօրից փրկելու վերաբերյալ» վերնագրով [7, 1]:

Թերթը նշում է, որ Հայ դատի ԱՄՆ-ի Արևելյան շրջանի հանձնախումբը մեծ աշխատանք է կատարել Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ Միացյալ Նահանգների Կոնգրեսում «Հայոց ցեղասպանության ճշմարտության և արդարության» բանաձևը շրջանառության մեջ դնելու ուղղությամբ: Հանձնախմբի գործադիր տնօրեն Էլեն Ասատրյանը հայտարարել է, որ բանաձևի հեղինակ կոնգրեսականները նախագահ Բարաք Օբամային կոչ են արել վերահաստատել, որ նախկինում ԱՄՆ-ը արդեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը [8, 1]:

ԱՄՆ Հայ Դատի հանձնախումբը ջանքեր է գործադրում, որ Կոնգրեսում ուսումնասիրվի Թուրքիայի մասնակցությունը 2014 թ. մարտի 21-ին Միրիայի հայաբնակ Քեսաբ ավանի վրա հարձակման գործում [9, 2]:

Այդօրինակ միջոցառումների մեկնարկը Սփյուռքում 2014 թ. տվեց Ավստրալիայի Հայ Դատի հանձնախումբը, որի գործունեությունը չվրիպեց Մերձավոր Արևելքի երկրներում հրատարակվող հայ մամուլի ուշադրությունից:

Թեհրանում լույս տեսնող «Ալիք» օրաթերթը 2014 թվականի նոյեմբերի 11-ի՝ «Ցեղասպանության 100-ամյակը մեր աշխատանքի վերջին հանգրվանը չէ, այլ մեկնակետը» վերնագրով հոդվածում անդրադառնում է հոկտեմբերի 13-26-ին Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի կազմակերպած միջոցառումների շարքին: Հոդվածում մանրամասն ներկայացվում են միջոցառումների ժամանակագրությունը և բովանդակությունը: «Ալիքը» տեղեկացնում է, որ հոկտեմբերի 13-ին մեկնարկել է Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի անդամների նախաձեռնած «պահանջատիրական շաբաթը», որի շրջանակներում նրանք հանդիպումներ ունեցան Նյու Մաութ Ուելս նահանգի խորհրդարանի անդամների և բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հանձնախմբի անդամները խորհրդարանականներին ներկայացրին Հայոց ցեղասպանության իրավական հիմքերը, քննարկեցին Ցեղասպանության 100-րդ տարելիցին առնչվող նախապատրաստական աշխատանքները [10, 3]:

«Ալիքի» տեղեկություններով հոկտեմբերի 20-ին «պահանջատիրական շաբաթի» աշխատանքների մեծ մասը տեղի ունեցավ Ավստրալիայի մայրաքաղաք Կանբերայում: Երկրորդ շաբաթվա միջոցառումներին ու քարոզչական աշխատանքներին ներկա էր նաև «գործնական առաքելությամբ» Ավստրալիա այցելած Հայ Դատի քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը: Հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ միջազգային հարցերի իրավաբան Ջեֆրի Ռոբերտսոնի «An Inconvenient Genocide» գրքի շնորհանդեսը: Նա իր խոսքում նշեց, որ «1915 թ. տեղի ունեցած ոճրագործու-

թյունները ցեղասպանություն էր և պետք է ամբողջ աշխարհը ընդունի այդ մեկը: Իրրև ավստրալացի ամոթ եմ զգում, երբ տեսնում եմ, թե իմ երկրի արտաքին գործերի նախարարը հերքում է Հայոց ցեղասպանության իրողությունը»: Ջ. Ռոբերտսոնը կոչով դիմեց ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային և Ավստրալիայի վարչապետ թոնի Ապոդին, որպեսզի «սկսեն հարգել իրենց տված խոստումները և պետականորեն ընդունեն ու ճանաչեն 1915 թվականին հայ ժողովրդի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը թուրք բարբարոսների ձեռքով»: Ջ. Ռոբերտսոնը, միաժամանակ խոսքն ուղղելով Ավստրալիայի խորհրդարանի անդամներին, նրանցից պահանջեց 2015 թ. ապրիլի 24-ին այցելել Երևան՝ նախքան Գալիպոլի (Թուրքիա) իրենց այցելությունը [10, 3]:

«Ալիքն» այնուհետև գրում է, որ նույն օրը Ավստրալիայի խորհրդարանի Հայ բարեկամության խմբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ընդունելություն՝ խորհրդարանի դահլիճում, որին ներկա էին երկու տասնյակից ավելի պատգամավորներ և կառավարական բարձրաստիճան պաշտոնյաներ: Այս երկու միջոցառումներին Հայ դատի հանձնախմբի անդամներից բացի ներկա էին նաև հայ համայնքի Առաքելական, Ավետարանական և Գաթողիկե եկեղեցիների առաջնորդները: Հոկտեմբերի 22-ին Հայ Դատի հանձնախումբը Կիրո Մանոյանի հետ միասին հանդիպումներ ունեցավ Ավստրալիայի դաշնային կառավարության անդամների և բազմաթիվ խորհրդարանականների հետ [10, 3]:

Ըստ թերթի՝ «պահանջատիրական շաբաթվա եզրափակիչ հանդիսությունը տեղի ունեցավ հոկտեմբերի 26-ին, «Miramar Gardens» սրահում՝ ավելի քան 250 հայորդիների, խորհրդարանի անդամների և պետական բազմաթիվ գրասենյակների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիսության ընթացքում ելույթ ունեցավ Նյու Սաութ Ուելս նահանգի խորհրդարանում Հայոց ցեղասպանության բանաձևի հեղինակ Ֆրեդ Նայլը: Նա բարձր գնահատեց Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի աշխատանքները և խոստացավ իր ուժերի ներածին չափով օժանդակել Հայոց ցեղասպանության պահանջատիրական աշխատանքներին: Իր ելույթում խորհրդարանի անդամ Ջոնաթան Օտելը պատրաստակամություն հայտնեց «օժանդակել Հայ Դատի հանձնախմբին՝ իրականացնելու նախատեսված բոլոր ծրագրերը» [10, 3]:

Ներկայացնելով այս միջոցառումների մանրամասնությունները՝ «Ալիքը» սույն համարում «Պատմության հետքերով» խորագրում պատմում է 1973 թ. Գուրգեն Յանիկյանի կողմից Միացյալ Նահանգներում թուրք հյուպատոսի սպանության, 1975 թվականի հոկտեմբերի 22-ին երեք հայ զինյալների կողմից Վիեննայում Թուրքիայի դեսպան Հուսեյն Դենիս Թունելչիլի և երկու օր անց Փարիզում Թուրքիայի դեսպան Իսմայիլ Էրեզի դեմ «ահաբեկչական հանդուգն գործողություն» իրականացնելու մասին, որը «ցնցեց քաղաքական աշխարհը»: Թերթը նշում է, որ «Հայոց ցեղասպանության Արդարության մար-

տիկներ» ընդհատակյա կազմակերպության իրականացրած ահաբեկումով թափ առած Հայ դատի «ուժական պայքարի շղթայագերծումը իր անմիջական պտուղները տվեց»: Մինչև 1980-ական թվականների առաջին կեսը «Արդարության մարտիկները» շարունակեցին իրենց գործունեությունը՝ «առաջացնելով միջազգային հանրության մոտ կարծիք Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ի նպաստ քաղաքական անհրաժեշտ ճնշումը» [10, 4]:

Տարիներ առաջ հայ վրիժառուների իրականացրած ահաբեկչությանը թերթի անդրադարձը անշուշտ պատահական չէ: Լուսաբանելով Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի կազմակերպած խորհրդաժողովը և այն ներկայացնելով «պահանջատիրական շաբաթ»՝ «Ալիքը» հստակ նպատակ է հետապնդում: Թերթը դրանով իր ընթերցողներին մեկ անգամ ևս հիշեցնում է, որ Հայ դատի պահանջատիրությանը հասնելու ուղիներից մեկը շարունակում է մնալ ահաբեկչությունը, եթե միջազգային հանրությունը համառորեն չի ցանկանում արդար լուծում տալ հայության պահանջին: Թերթի կարծիքով այդ ահաբեկչությունները թեև աննախընթաց չէին, բայց միջազգային կազմակերպությունները դրանից հետո սկսեցին ճանաչել Հայոց ցեղասպանությունը և քաղաքական լուծում որոնել Հայկական հարցի համար: Մյուս կողմից թուրքական հասարակությունում սկսեցին ավելի բարձրաձայն հնչել «Հայասպանության ճանաչումն ու դատապարտումը կատարելու կոչեր»: Թերթը դրա վկայություններից մեկը համարում է Թուրքիայի «Վանաչների կուսակցության» կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը [11, 1]:

«Ալիքը» անդրադառնում է 2014 թ. նոյեմբերի 14-ին Թեհրանի հայոց թեմի հանձնախմբի նախաձեռնությամբ «Արարատ» մարզավանի «Վաչիկ Ղարաբեկյան» սրահում կազմակերպված «Հայոց ցեղասպանության լուսաբանումը համաշխարհային մամուլի առաջին էջերին» ցուցահանդեսին և Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտի տնօրեն Հ. Դեմոյանի գրքի շնորհանդեսին [12, 1,10]:

Թերթը «Հայոց ցեղասպանության 100-ամյա պահանջատիրություն» նոր խորագիրը պարբերաբար անդրադառնում է այդ ուղղությամբ տարբեր երկրներում տեղի ունեցած բազմաբնույթ միջոցառումներին:

«Ալիք» օրաթերթը 2014 թվականի նոյեմբերի 22-ի համարում անդրադառնում է Թեհրանի Հայ Դատի հանձնախմբի կազմակերպած «Հայ Դատն այսօր» 11-րդ խորհրդաժողովին, որը «Ժամանակի պահանջի թելադրանքով ամեն տարի տարբեր թեմաներ է ամփոփում»: 11-րդ խորհրդաժողովը կայացավ «Միացյալ Հայաստան. Հնարավորություններ-հեռանկարներ» խորագրով, որը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շեմին հստակ նպատակ էր հետապնդում: Խորհրդաժողովի բացման խոսքում Թեհրանի Հայ Դատի հանձնախմբի գրասենյակի աշխատակից Արամ Շահնազարյանը նշեց, որ 100-րդ տարելիցին ընդառաջ «մենք ունենք նոր անելիքներ, նոր հորիզոն-

ներ, որոնք պետք է նվաճենք: Իսկ, երբ անցում ենք կատարում ճանաչումից պահանջատիրություն, ուրեմն այդ պահանջատիրությունը պետք է հստակ սահմանվի» [13, 1, 10]:

«Ալիքի» հաղորդամամբ՝ նոյեմբերի 20-21-ը Հայ ակումբի սրահում կազմակերպված խորհրդածողովին 11 զեկուցողներ՝ Հայաստանից, Լիբանանից, Սիրիայից, Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի պատասխանատուն անդրադարձան Հայ Դատի իրականացման ճանապարհին առկա մարտահրավերներին, դրանց հաղթահարման ելքերին ու հնարավորություններին, որոնք գոյություն ունեն աշխարհաքաղաքական ներկայիս բարդ իրավիճակում: Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանն իր խոսքում կարևորեց իրավական և քաղաքական դաշտում նման քննարկումների անհրաժեշտությունը: Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանը նշեց հանձնախմբերի առջև ծառայած դժվարությունները և անելիքները [13, 1, 10]:

«Ալիքը» անդրադառնում է 2014 թ. նոյեմբերի 29-30-ը Հունաստանի մայրաքաղաք Աթենքում Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ և Հունաստանի Հայ Դատի հանձնախմբի կազմակերպմամբ գումարված երկօրյա խորհրդածողովին, որը հրավիրվել էր մեկ ազգ, մեկ պայքար գաղափարական առաջադրանքով գործելու և Եվրոպայի տարածքում Հայ դատի պահանջատիրության աշխատանքները համակարգելու նպատակով: Խորհրդածողովին մասնակցում էին Հայ դատի Հունաստանի, Բուլղարիայի, Կիպրոսի, Ռումինիայի, Եվեդիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի ներկայացուցիչները: Խորհրդածողովին Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանի, Հունաստանի թեմակալ առաջնորդ Ս. Խորեն արքեպիսկոպոս Տողրամաճյանի, Հունաստանում ՀՀ դեսպան Գագիկ Ղալաշյանի և մյուսների ելույթներում շեշտվեց Հայաստան-Արցախ-Ջավախք-Սփյուռք հարցերը «ուժականությամբ առաջ մղելու եւ արդյունավետ ու համակարգված արդյունքներ ապահովելու հրամայականը» [14, 1,10]:

«Ալիքը» պատմում է Բոլիվիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի, Ուրուգվայի փոխնախագահ Դանիլո Կարասկոյի հետ Հայ դատի հանձնախմբի ներկայացուցչի հանդիպման, Հայոց ցեղասպանությանը ամերիկյան հեղինակավոր «Նյու Յորք Թայմզ» թերթի անդրադարձի, Մոնտեվիդեոյում Հայոց ցեղասպանության թանգարան բացելու, Հայ դատի Լիբանանի հանձնախմբի պատվիրակության՝ Բոլիվիայի պատվո հյուպատոսի հետ հանդիպման մասին, տպագրում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ կոնդակները [15, 3,7]:

«Ալիք» օրաթերթի 2015 թվականի հունվարի 3-ի համարում զետեղում է իրանահայ գործիչ Օննիկ (Հակոբ) Հայրապետյանի՝ «Հայոց Ցեղասպանու-

թյան ճանաչման ուղղությամբ մղվող պայքարը հետաձգում է մեր հողային պահանջը» հողվածը: Անդրադարձ կատարելով Հայ Դատի պայքարի անցած ճանապարհին՝ Օ. Հայրապետյանը ընդգծում է «Հայ ժողովրդի մեկդարյա երազանքը՝ անկախ և միացյալ Հայաստանի կերտման տեսլականը այսօր թևակոխում է աննահանջ եւ անզիջում պայքարի մի նոր ու կարևոր փուլ»: Ըստ Հայրապետյանի՝ «արդեն ժամանակն է, որ ամենայն լրջությամբ հողային պահանջի, տնտեսական ու մշակութային վնասից հատուցման ռազմավարություն կիրառվի և հետևողականորեն ու աննահանջ կերպով գործադրվի»: Նրա կարծիքով՝ նման պահանջներ առաջ քաշելու համար այսօրվա դրությամբ նպաստավոր պայմաններ գոյություն ունեն: Այդ պայմաններն են Հայաստանի Հանրապետության անկախ պետություն լինելը, ՄԱԿ-ում և Բազմաթիվ այլ երկրներում դիվանագիտական պատվիրակությունները, Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրատարակված Բազմաժողով արխիվային փաստաթղթերը, հեռագրերը, տեղեկագրերը, գրքերն ու հրատարակությունները: Երեք տասնյակից ավել երկրների, խորհրդարանների և քաղաքական կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առնչությամբ բանաձևերի վավերացումները, պաշտոնական հայտարարությունները: Այս պայմանների առկայության պարագայում «հայոց պահանջատիրությունը, անկասկած, միանգամայն տրամաբանական, իրավական ու արդար է», եթե կա հստակ ռազմավարություն, միասնական, նախաձեռնային ու թիրախային պայքար: Դրան հասնելու համար շատ կարևոր է «Հայ Դատի հանձնախմբի, նրան կից գործող գրասենյակների աշխատանքը և համայն հայության միասնական ջանքերը» [15, 6]:

«Ալիք» օրաթերթը տպագրում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի համահայկական հոչակագիրը, ընդգծում է դրա կարևորությունը Հայ դատի հանձնախմբի գործունեության համար [19, 3]:

Թերթը հավաստի լրատվությամբ տեղեկացնում է, որ Թուրքիան պատրաստվում է հակադրվել Հայ դատի հանձնախմբի գործունեությանը՝ 100-ամյակի ձեռնարկումների դեմ ակտիվ պայքար ծավալելով: «Ալիքը» նշում է, որ Թուրքիայի նախագահ Էրդողանը դա համարել է «Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը» [16, 2]: Նա 102 երկրների ղեկավարների 2015 թ. ապրիլի 24-ին հրավիրել է Թուրքիա՝ ներկա գտնվելու Գալիպոլիի դեպքերի 100-րդ տարելիցին [17, 2]:

«Ալիքը» Էրդողանի քայլը դատապարտող հողված է արտատպում անգլիական «The Independent» պարբերականից, որը Գալիպոլիի ճակատամարտի 100-ամյակը նշելը որակում է «Հայկական հողքոստը թաքցնելու ամոթալի փորձ» [18, 3]:

Թերթը գետեղում է Հունաստանի Հայ Դատի հանձնախմբի ատենապետ Հակոբ Հովակիմյանի հետ հարցազրույցը, որի ընթացքում նա ներկայացրել է

2015 թ. ապրիլին հանձնախմբի կողմից կազմակերպվելիք միջոցառումների ժամանակացույցը [20, 3]:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ «Ալիք» օրաթերթը հրապարակում է կարևոր տեղեկություն կապված Հայ Դատի հանձնախմբի հերթական հաջողության հետ: Ապրիլի 22-ի համարում «Ալիք»-ը տեղեկացնում է, որ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի ակտիվ աջակցությամբ Ավստրիայի խորհրդարանը ապրիլի 21-ին ընդունել է Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև, որը Թուրքիային կոչ է անում առերեսվել իր անցյալի սև էջերի հետ: Հայ Դատի հանձնախումբը իր տարածած հաղորդագրության մեջ ողջունում էր խորհրդարանի որոշումը [21, 1]:

«Ալիք» օրաթերթի ապրիլի 27-ի համարի «Ո՞ւմ են պատկանում դափնիները» հոդվածում շեշտվում է այն հանգամանքը, որ այսօր որպես արդյունք շատերը սեփական նախաձեռնությամբ, հաճախ նաև ինքնաբուխ ներգրավված են Հայ դատի պահանջատիրության, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին: Եթե այսօր մենք կարող ենք արժևորել գրանցած արդյունքները, ապա ճիշտ է գնահատել դրանք որպես համահայկական հավաքական պայքարի ու աշխատանքի արդյունք: Անշուշտ, պետք է արժանին մատուցել Հայաստանի Հանրապետության պետական կառույցներին՝ քաղաքական, դիվանագիտական և այլ ոլորտներում կատարած աշխատանքի համար: Թերթը կարևորում է այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում կարևոր ներդրում ունեն թե՛ հայկական լոբբիստական կազմակերպությունները, թե՛ սփյուռքահայությունը, թե՛ ՀՀ արտաքին հարաբերությունները կարգավորող գերատեսչությունները, թե՛ ՀՀ Սփյուռքի նախարարությունը: «Ալիքը» շեշտում է, որ Հայոց ցեղասպանությունը մեր ժողովրդի ընդհանուր ցավն է և դրա ճանաչման, դատապարտման և փոխհատուցման խնդիրը հոգու պարտք է անցյալի, ներկայի ու ապագայի առջև: Հաշվի առնելով բոլոր այս հանգամանքները՝ ոչ ոք անհատապես չպետք է ակնկալի ոչ գնահատում, ոչ պարգև, ոչ էլ ծափողջույններ: Թերթի համոզմամբ, «եթե հիմա փորձ արվի առանձնացնել ու կարևորել սրա կամ նրա դերակատարության չափը, անմիջական հետևանքները լինելու են միասնական բռունցքի բաժանումը առանձին մասերի, հավաքական ուժի կոտորակումը, իսկ սրան էլ անխուսափելիորեն կհետևեն ներազգային տարակարծությունները: Կվտանզվի հիմնականը՝ հավաքական տեսլականների մարմնավորմանը տանող գործընթացը» [22, 3]:

Եզրակացություն: «Ալիք» օրաթերթին ազգային գաղափարախոսության դիրքերից լուսաբանում է Հայ դատի հանձնախմբի գործունեությունը՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նշանավորելու կապակցությամբ: Թերթը հայոց պահանջատիրությունը չի դիտարկում որպես հանձնախմբի մենաշնորհ, այլ համարում է համայն հայության ամենօրյա գործունեության խնդիրը:

Գրականություն

1. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետություն, Երևան, 2013, էջ 77, 113:
2. «Ալիք», 1988, 7 հունվարի, թիվ 3, էջ 5:
3. «Ալիք», 1988, 29 փետրվարի, թիվ 48, էջ 2:
4. «Ալիք», 2014, 5 հունվարի, թիվ 2, էջ 3:
5. «Ալիք», 2014, 8 հունվարի, թիվ 4, էջ 3:
6. «Ալիք», 2014, 12 հունվարի, թիվ 7, էջ 2:
7. «Ալիք», 2014, 27 հունվարի, թիվ 19, էջ 1:
8. «Ալիք», 2014, 5 փետրվարի, թիվ 27, էջ 1:
9. «Ալիք», 2014, 7 ապրիլի, թիվ 64, էջ 2:
10. «Ալիք», 2014, 11 նոյեմբերի, թիվ 233, էջ 3, 4:
11. «Ալիք», 2014, 12 նոյեմբերի, թիվ 234, էջ 1:
12. «Ալիք», 2014, 15 նոյեմբերի, թիվ 236, էջ 1, 10:
13. «Ալիք», 2014, 22 նոյեմբերի, թիվ 236, էջ 1, 10:
14. «Ալիք», 2014, 2 դեկտեմբերի, թիվ 251, էջ 1, 10:
15. «Ալիք», 2015, 3 հունվարի, թիվ 1, էջ 3, 6, 7:
16. «Ալիք», 2015, 12 հունվարի, թիվ 8, էջ 2:
17. «Ալիք», 2015, 24 հունվարի, թիվ 18, էջ 2:
18. «Ալիք», 2015, 27 հունվարի, թիվ 21, էջ 3:
19. «Ալիք», 2015, 1 փետրվարի, թիվ 25, էջ 3:
20. «Ալիք», 2015, 11 ապրիլի, թիվ 69, էջ 3:
21. «Ալիք», 2015, 22 ապրիլի, թիվ 79, էջ 1:
22. «Ալիք», 2015, 27 ապրիլի, թիվ 83, էջ 3:
23. «Դրոշակ», 1987, 9 դեկտեմբերի, էջ 7:
24. «Հայաստանի Հանրապետություն», 2011, 24 ապրիլի, թիվ 74:

**Отголоски деятельности Армянского национального комитета,
посвященной 100-летию Геноцида армян,
в ежедневной тегеранской газете «Алик»**

Элен Шароян

Резюме

Ключевые слова: *Геноцид армян, Армянский национальный комитет, диаспора, газета «Алик», спрос*

Международное признание Геноцида армян всегда было в центре внимания армян Диаспоры, ярким доказательством чего является деятельность Армянского национального комитета. В данном контексте, Диаспора избрала верную стратегию в вопросе международного признания Геноцида армян. Принятие резолюций по Геноциду армян отдельными государствами и международными организациями является необходимым условием для убедительной и несомненной победы в Международном Суде, который не сможет проигнорировать юридические акты, официальное принятие ее членами. Также необходимо понимать, что международное признание факта Геноцида армян исходит из национальных интересов Республики Армения, следовательно, каждая принятая резолюция является уже не только моральным, но и политическим актом. В преддверии 100-летия Геноцида армян, деятельность Армянских национальных комитетов привлекла внимание армянской прессы Диаспоры: армянская пресса стран Ближнего Востока, в том числе издаваемая в столице Исламской Республики Иран, ежедневная газета «Алик». Газета регулярно подробно обсуждает требования армян всего мира, которые считает справедливыми. С этой целью многочисленные и разнообразные публикации газеты имеют национально-идеологическую направленность и ориентированы на легитимность армянских требований.

Ежедневная газета «Алик» не ограничивается предоставлением информации о той или иной деятельности комитета, и часто выражает свое мнение и отношение к инициативам комитета. «Алик» освещает деятельность комитета обширными и разноплановыми публикациями, что очень важно с точки зрения единения и консолидации всех армян. Газета подчеркивает всеармянскую структуру Армянского национального комитета и важность его деятельности в судьбе армянского народа в деле триединства Армения-Арцах-Диаспора, обсуждения, признания и утверждения Геноцида армян.

**Echoes of the Activities of the Armenian National Committee
Dedicated to the 100th Anniversary of the Armenian Genocide in Tehran’s
Daily Newspaper “Alik”**

Elen Sharoyan

Summary

Key words: *Armenian Genocide, Armenian National Committee, Diaspora, Alik newspaper, demand*

The international recognition of the Armenian Genocide has always been at the center of the attention among the Armenians of the Diaspora, a vivid proof of which is the activity of the Armenian National Committee. On the eve of the 100th anniversary of the Armenian Genocide, the activities of the Armenian National Committees attracted the attention of the Armenian press of the Diaspora: e.g. the Armenian press of the countries of the Middle East, including the daily newspaper “Alik” published in the capital of the Islamic Republic of Iran. The daily regularly discusses the demands of Armenians around the world: numerous and diverse publications of the newspaper have a national-ideological orientation and are aimed at the legitimacy of the Armenian demands.

The newspaper “Alik” is not limited to providing information about specific activities of the committee, so it often expresses its opinion and attitude towards the committee initiatives. “Alik” covers the activities of the committee with extensive and diverse publications, which is very important in terms of the unity and consolidation of all Armenians. The newspaper emphasizes the pan-Armenian structure of the Armenian National Committee and the importance of its activities in the fate of the Armenian people within the Armenia-Artsakh-Diaspora trinity, as well as in the discussion, recognition and approval of the Armenian Genocide.

**Ներկայացվել է 12.04.2023 թ.
Գրախոսվել է 05.05.2023 թ.
Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.**

Տերիկի և հարակից գյուղերի 19-րդ դարի հայ հասարակական ընկերությունները

Չոյա Չառիյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-285>

Հանգուցային բառեր. բարենորոգումներ, հասարակական, կրթադաստիարակչական, ընկերություն, նվիրատվություն, արհեստավորներ, գերդաստաններ, դպրոցներ

Նախաբան

19-րդ դարում Տերիկը Օսմանյան կայսրությունում հայտնի էր ցորենի, գարու ու բազմազան պտուղների հարուստ պաշարներով, որոնք տեղի բնակչությանը ապահովելուց գատ բավարարում էին նաև շրջակա Ակնի և Արաբկիրի բնակչության կարիքները: Դարասկզբին քաղաքն ուներ 2000 տուն բնակչություն, որից միայն 100-ն էր հայկական, նախկինում ունեցած 2000 տան (մոտ 20 հազար բնակչության) փոխարեն: Հայ բնակչության նվազման հիմնական պատճառը Օսմանյան կայսրության վարած հակահայ քաղաքականությունն էր, դրանից բխող սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, որը հաճախ տերիկահայերին ստիպում էր բռնել պանդխտություն ճանապարհը: Չնայած հայ բնակչության նվազմանը՝ 19-րդ դարի երկրորդ կեսին արդեն Տերիկի հայերը տնտեսապես համեմատաբար լավ վիճակում էին և բարեկեցիկ կենցաղով էին ապրում: Նրանք տարածաշրջանի լավ արհեստավորներն ու առևտրականներն էին [2, 763]:

Տնտեսական աշխույժ կյանքին զուգահեռ Տերիկի հայերը աստիճանաբար սկսեցին ակտիվություն ցուցաբերել նաև կայսրության հասարակական, մշակութային ու կրթական կյանքում: Դա պայմանավորված էր 1839 թ. նոյեմբերի 3-ին հռչակված բարենորոգումների ծրագրի ընձեռած հնարավորություններով, որով Թուրքիայում հիմք դրվեց Թանզիմաթի դարաշրջանին [5, 499]: 1856 թ. փետրվարի 18-ին եվրոպական մեծ տերությունների ճնշման տակ Օսմանյան կայսրությունը «եվրոպականացնելու» նպատակով սուլթան Աբդուլ Մեջիդի «Հաթիթ հումայուն» հրովարտակից հետո [1, 297] այդ ակտիվությունը առավել ակնառու դարձավ: Արևմտահայությունը, այդ թվում՝ տերիկահայերը, ոգևորված հրովարտակի ընձեռած հնարավորություններից, հիմնեցին մի շարք հասարակական, մշակութային, կրթական միություններ և ընկերություններ:

Դրանց գործունեության ուսումնասիրությունը հայ պատմագրությունում կարևոր նշանակություն ունի, որը հնարավորություն կտա բացահայտելու տերիկահայերի ընկերությունների տեղը և խաղացած դերը 19-րդ դարի

արևմտահայ հասարակական ընկերությունների ու միություններ շարքում:

Ուսումնասիրության թեման արդիական է այն իմաստով, որ կրթական, մշակութային ընկերություններ ու միություններ գործում են նաև մեր օրերում:

Տերիկի հայ հասարակական ընկերություններին համառոտ անդրադարձել է Հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանը արևմտահայ մշակութային ընկերություններին նվիրված աշխատությունում [3]: Այդ ընկերությունների գործունեության մասին հրապարակումներ կան Ժամանակի արևմտահայ մամուլում, որը հայ պատմագրության մեջ հիմնովին ուսումնասիրված չէ: Այս իմաստով տույն ուսումնասիրության գիտական նորույթն է հայ պարբերական մամուլի հրապարակումների հիման վրա հնարավորինս համակողմանիորեն ներկայացնել ու գնահատել Տերիկի հասարակական ընկերությունների գործունեությունը, անհրաժեշտության դեպքում հստակեցնել դրանց հիմնադրման տարեթիվը, գործունեության բնույթը:

Տերիկի հայ հասարակական ընկերությունները

Տերիկի մեզ հայտնի առաջին հայ հասարակական ընկերությունը «Գափամաճյան» ընկերությունն է [13], որը Ժամանակի հայ պարբերական մամուլում հիշատակվում է նաև «Կրթանվեր» [16] և «Բարեսիրական» ընկերություն անուններով [7]:

«Գափամաճյան» ընկերության հիմնադրման տարեթվի վերաբերյալ հայ պարբերական մամուլի տեղեկությունները տարաբնույթ են: Կ. Պոլսում հրատարակվող «Հայրենիք» պարբերականը ընկերության հիմնադրման տարեթիվը համարում է հրապարակումից 180 տարի առաջ, այսինքն՝ 1691 թվականը [13], իսկ Պոլսում հրատարակվող «Մանգումեի էֆքեար» պարբերականը՝ 1701 թվականը [16]:

Ըստ «Ազատամարտ» թերթի՝ ընկերությունը հիմնվել է Հայոց ՌՄԳ թվականին կամ Տաճկանց 1168 թվականին: Թերթի հողվածագիր Ե. Ռշտունին ընկերության հիմնադրման տարեթիվը համարում է 1752 թվականը՝ հիմք ընդունելով ընկերության Կ. Պոլսի գրասենյակում պահպանված գրաբարով արձանագրությունները, որոնց պատճենը պահվում էր Տերիկի առաջնորդարանում: Ընկերության արձանագրություններից պարզ է դառնում, որ այն Կ. Պոլսում ունեցած իր կալվածքների հասույթը նվիրաբերում է հայրենի Տերիկի եկեղեցուն և վարժարանին [7]:

Կ. Պոլսում հրատարակվող «Բյուզանդիոն» թերթը «Գափամաճյան» ընկերության հիմնադրման տարեթիվը համարում է 1755 թվականը [9]: Ընկերության հիմնադրման մասին բոլորովին այլ տեղեկություններ է տալիս պոլսահայ «Ժամանակ» պարբերականը: Թերթի 1909 թվականի դեկտեմբերի 12-ի համարում հայ պոլսահայ երևելի դեմքերից Գրիգոր Նորատունկյանը «Գա-

վառի հայ գյուղերի կրթական և տնտեսական վիճակը» հողվածում անդրադառնում է Տերիկի առաջին հայ հասարակական ընկերությանը: Հողվածագրի տեղեկություններով՝ 60-70 տարի առաջ, այսինքն՝ 1830-1840-ական թվականներին, Տերիկի շրջանի Խարց գյուղի ամբողջ բնակչությունը՝ շուրջ 30 տուն, գաղթել է Կ. Պոլիս, որտեղ զբաղվել է գափամամուշյամբ (մետաքսագործությամբ): Նրանց նախաձեռնությամբ Կ. Պոլսում նույն ժամանակահատվածում հիմնվել է բարեգործական ընկերություն [11, 3]:

Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանի կարծիքով՝ Տերիկի առաջին հայ հասարակական ընկերությունը հիմնվել է 1757 թվականին: Ըստ նրա՝ ընկերության հիմնադիրները եղել են ոչ թե Գափամամուշի (մետաքսագործ) արհեստավորները, որոնց անունով ժամանակի մի շարք պարբերականներ անվանել են ընկերությունը, այլ տեղի բեռնակիրները: Հետագայում մետաքսագործ արհեստավորները շարունակել են բեռնակիրների հիմնած բարերարական ընկերության գործունեությունը՝ այն անվանելով «Գափամամուշյան» [3, 251]: Հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանը հենվում է «Հայրենիք» պարբերականի տեղեկության վրա, որը, որպես Տերիկի առաջին հայ հասարակական ընկերություն, հիշատակում է «Կրթանվեր» անունը կրող ընկերությունը՝ հիմնված Կ. Պոլսի պանդուխտ տերիկեցի բեռնակիրների կողմից [13]:

Ընկերության հիմնադրման տարեթվի վերաբերյալ վերը նշված պարբերականների և Հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանի տվյալները չեն համապատասխանում միմյանց: Եթե ընկերության հիմնադրման տարեթիվը ըստ «Ազատամարտ» թերթի՝ Տաճկաց 1168 թվականն է, ապա այն համապատասխանում է 1790 թվականին, բայց ոչ 1752 կամ 1757 թվականներին: Առավել հավանական է Գ. Նորատունկյանի տեղեկությունն առ այն, որ Կ. Պոլսում պանդուխտ տերիկեցիների կողմից հայ հասարակական առաջին ընկերությունը հիմնվել է 1830-1840-ական թվականներին: Դրան, անշուշտ, նպաստել են Թանգիմաթով սկիզբ դրած բարեփոխումները, որով օսմանահպատակ ժողովուրդներին հասարակական ընկերություններ ստեղծելու, կրթադաստիարակչական գործունեություն ծավալելու և ազգային դպրոցներ բացելու իրավունք էր շնորհվել:

«Գափամամուշյան» ընկերությունը գործում էր Տերիկցի մետաքսագործ արհեստավորների գլխավորությամբ, Կ. Պոլսի ամենանշանավոր և ազդեցիկ հայ գերդաստաններից մեկի՝ կաթուղիկ Տուզյանների հովանավորությամբ: Պոլսում մեծ համբավ ունեցող Տուզյան գերդաստանը սերում էր Մեքաստիայից արևելք ընկած Տերիկ քաղաքից [4, 6]: Գ. Մենեվիշյանը չի գրում, թե Տուզյաններից ով է հովանավորել այս ընկերությունը: Ժամանակագրական առումով ընկերությանը կարող էր աջակցություն ցույց տալ Մարգիս

Տուզյանի որդին՝ Միհրան Տուզյանը (1817-1891 թթ.): Նա 1847-1880 թթ. եղել է օսմանյան դրամահատարանի տնօրեն, 1855 թ. արժանացել է բեյի աստիճանի, 1856 թվականին ընտրվել է մեջլիսի անդամ, 1857թ. նշանակվել է հանրային կրթության նախարարության խորհրդական, իսկ 1877 թ.՝ Օսմանյան խորհրդի անդամ: Մ. Տուզյանը առաջին քրիստոնյան էր, ով նշանակվել է Արդարադատության խորհրդի անդամ [4, 45-47]:

Կ. Պոլսի նշանավոր Տուզյան գերդաստանի կողմից ընկերության հովանավորությունը ստանձնելը խոսում էր այս ընկերության՝ Կ. Պոլսի հայության շրջանում ունեցած դիրքի և կարևորության մասին:

Ընկերության նպատակը հայրենի Տերիկում կրթության գործին նպաստելը, տեղի ազգային վարժարանին անհրաժեշտ պիտույքներով ապահովելն ու աղքատներին աջակցելն էր [13]: «Գափամաճյան» ընկերությունը շաբաթական անդամավճարների շնորհիվ կարողանում է կարճ ժամանակահատվածում կլորիկ գումար հավքել և Կ. Պոլսի Մեծ շուկայում կողք կողք մի քանի խանութ գնել, որոնք ընդհանրական անունով կոչվել են «Տիվրիկ Չարչըսը» [11, 3]: Ընկերության նախնական անդամավճարը կազմել է շաբաթական մեկ փարա, իսկ ընկերության անդամների մեծամասնությունը Կ. Պոլսում բնակվող հասարակ պանդուխտ տերիկցի արհեստավորներ էին [9]: 1870-ական թվականներին ընկերությունը Հարություն աղա Գափամաճյանի և նրա փոխանորդ Կարապետ էֆենդի Պարտիզպանյանի ղեկավարման շրջանում ընդլայնում է գործունեությունը [3, 253]: 1871 թվականին ընկերությունը հոգում էր Տերիկի դպրոցի ուսուցիչների ծախսերը, զբաղվում տեղի աղբյուրի կառուցմամբ և կամուրջի վերանորոգման աշխատանքներով [13]:

Գափամաճյանները Կ. Պոլսում ձեռք են բերում նաև կալվածքներ, որոնց ամբողջ հասույթը ծախսվում է հայրենի Տերիկում և հարակից գյուղերում դպրոցներ հիմնելու և ազգային կրթության գործին նպաստելու վրա: Ըստ «Ժամանակ» թերթի՝ ընկերությունը ազգանվեր ու բարերար գործը շարունակվել է մինչև Հարություն աղա Գափամաճյանի կառավարումը: 1887-1889 թվականներին արդեն ծերունագարդ Հարություն աղա Գափամաճյանը որոշում է ընկերության կալվածքների կառավարումը և քաղաքի ու հարակից գյուղերի դպրոցների մատակարարումը հանձնել Կ. Պոլսի պանդուխտ տերիկցիներին ու գյուղերի բնակիչներին:

Այդ նպատակով Հ. Գափամաճյանը կազմում է ընկերության հոգաբարձուների խորհուրդ, որին հանձնում է ընկերության ղեկավարումը: Խորհրդի անդամները, ստանձնելով ընկերության ղեկավարումը, դադարում են գյուղերի դպրոցներին վճարվելիք տարեկան սահմանված թոշակը տրամադրել: Ի պատասխան դպրոցներին հասանելիք գումարը վճարելու գյուղացիների դիմումի՝ խորհրդի անդամները պատասխանում են, որ ի վիճակի չեն

միաժամանակ ֆինանսավորել քաղաքի ու գյուղի դպրոցների կրթության գործը և առաջարկում են գյուղացիներին իրենց երեխաներին ուղարկել քաղաքի դպրոցներ: Կ. Պոլսի Հարություն պատրիարքի պաշտոնավարման ժամանակ մի քանի գյուղացիներ դիմում են պատրիարքարան՝ բողոքելով իրենց նկատմամբ անարդար վերաբերմունքից [11, 3]:

1880-ականների վերջին ընկերությունը Կ. Պոլսում բազում կալվածքներ ուներ, որը, ըստ ընկերության կանոնադրության, մասնավոր սեփականություն էր համարվում: Սակայն Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, այս հանգամանքը հաշվի չառնելով, ընկերության բոլոր կալվածքները հայտարարել էր ազգային կալվածք և իր հսկողության տակ վերցրել, որի կապակցությամբ Կ. Պոլսում ապրող տերիկցիները, որոնց մեծամասնությունը հանդիսանում էր «Գափամաճյան» ընկերության անդամ, բողոք են ներկայացնում պատրիարքարանին [3, 253]:

Կ. Պոլսում հրատարակվող հայ պարբերականների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ անդամների մի մասի մահվան կամ բնակության վայրի փոփոխության պատճառով XX դարի սկզբին ընկերությունը կազմալուծման շեմին էր: Հետագայում այս խնդրից խուսափելու նպատակով «Գափամաճյան» ընկերության անդամները հատուկ ժողով են հրավիրում՝ ընկերության 8 հոգուց բաղկացած ղեկավար մարմնի՝ Հոգաբարձուների խորհրդի կազմը փոխելու նպատակով: Ժողովի որոշմամբ այսուհետև ընկերության Հոգաբարձուների խորհրդի անդամ կարող էին ընտրվել բացառապես պոլսաբնակ տերիկցիներ: Նույն թվականին ընկերության ատենապետ է ընտրվում Միհրան Մեթյանը [16]:

Ս. Օոցիկյանը XX դարի սկզբին հիշատակում է Կ. Պոլսում բնակվող տերիկցիների կողմից հիմնված «Ուսումնասիրական» անունը կրող ընկերություն, որը Կ. Պոլսում ունեցած ամբողջ կալվածքների հասույթը հատկացնում էր հայրենի Տերիկի դպրոցներին [2, 763]:

Տերիկում գործող մյուս ընկերությունը 1868 թվականին Աստվածատուր Ս. Ֆելեկյանի ատենապետությամբ հիմնված «Անձնուէր» ընկերությունն է: Այն 1860 թվականի օգոստոսի 1-ին Կ. Պոլսում հիմնված «Անձնուէր» ընկերության մասնաճյուղն էր [19], որը ստեղծվել էր Կ. Պոլսում պանդուխտ հայերին գրել-կարդալ սովորեցնելու նպատակով [3, 256]: Ընկերության նպատակը մեծահասակների համար Տերիկում կիրակնօրյա դպրոց հիմնելն էր, տեղի մեծահասակների շրջանում կրթությանը զարկ տալը: Այն հիմնադրումից կարճ ժամանակ անց կարողացել էր հավաքել 130 բաժանորդ: Չնայած ընկերությանը հաջողվում է մեծահասակների համար նախատեսված կիրակօրյա դպրոց հիմնել, բայց այն ստիպված է լինում ժամանակավորապես դադարեցնել գործունեությունը, իսկ կիրակնօրյա դպրոցի աշակերտները ցրվում են:

Տերիկի «Անձնուէր» ընկերության հիմնադիր Ա. Ֆելէկյանը դա բացատրում է ընկերության քաղաքում ունեցած թշնամիների առկայությամբ, որոնց հաշողվում է գրպարտել ընկերությանը:

«Անձնուէրի» ատենապետ Աստվածատուր Մ. Ֆելէկյանը չի հուսալքվում և կարճ ժամանակ անց՝ 1870 թվականին, կրկին վերականգնում է ընկերության գործունեությունը: Վերակազմվալ «Անձնուէր» ընկերությունը ընթերցարան-գրադարան է հիմնում: Ընկերության գրադարանը հարուստ էր ամենօրյա ընթերցանության համար նախատեսված գրքերով, որոնց մեծ մասը նվեր էր ստացել Սեբաստիայի «Անձնուէր» ընկերության կողմից՝ շուրջ 700 դահեկան արժեքությամբ [15]: Վերակազմավորվելուց հետո էլ Տերիկի «Անձնուէր» ընկերությունը տարածայնություններ է ունեցել քաղաքի բարձր հոգևորականության հետ և 1872 թվականին տեղի հոգևոր առաջնորդ տեր Գրիգորի ջանքերով նորից ստիպված է եղել դադարեցրել գործունեությունը: Ի պատասխան դրա՝ Կ. Պոլսի 51 պանդուխտ տերիկցի գրավոր բողոք են ներկայացնում տեր Գրիգորի դեմ՝ նշելով, որ «չըկերավ, չըխմեց մինչև տեղիս Անձնուէր ընկերությունը չկործանեց» [3, 257]:

Տերիկի «Անձնուէր» ընկերության լուծարումից և մեծահասակների համար նախատեսված կիրակօրյա դպրոցի աշակերտների ցրվելուց հետո Աստվածատուր Մ. Ֆելէկյանը 1870 թվականին հիմնում է «Աղքատասիրաց» ընկերությունը: Ընկերության նպատակը աղքատների համար նախատեսված մասնավոր գանձանակ ստեղծելն էր: Ա. Ֆելէկյանին այդ նպատակով հաջողվում է 3000 դահեկան դրամագլուխ հավաքել [15]: Ի տարբերություն նախորդ ընկերության՝ չնայած տեղի հոգևոր առաջնոր տեր Գրիգորի ջանքերին, «Աղքատասիրաց» ընկերությունը 1872 թվականին դեռ շարունակում էր գործել [3, 257]:

1878 թվականին Ներսես սրբազան պատրիարքի հատուկ կոնդակով «Փոքր և Մեծ Հայաստան» տեղի դպրոցները ու եկեղեցիները հաշվառելու, բնակչության կեցության ու սովորությունների մասին տեղեկություններ հավաքագրելու նպատակով Տերիկ ուղարկված [6, 13] հայ հայտնի բանահավաք, ազգագրագետ և հասարակական գործիչ Գարեգին Սրվանձոյանցը ընկերությունը հիշատակում է «Աղքատախնամ» անունով: Նա գրում էր, որ «Աղքատախնամը» քաղաքի հնագույն ընկերություններից մեկն է [6, 210]:

Տերիկում գործել է նաև «Հայրենասիրաց» ընկերություն, որը ժամանակի հայ պարբերական մամուլում հիշատակվում է 1878 թվականին [12]: Նույն թվականին Տերիկում եղած Գարեգին Սրվանձոյանցը ընկերությունը բնորոշում է «որպես անգործ մնացած ընկերություն» [6, 210]:

1870-ականների վերջին կամ 1880 թվականի սկզբին Տերիկում հիմնադրվում է «Երիտասարդաց» ընկերությունը: 1880 թվականի դեկտեմբերին ընկերության ատենապետը Մ. Հայրապետ Մուքիասյանն էր, ատենադպիրը՝

Հարություն Թ. Վելետյանը [3, 257]: 1881 թվականին ընկերությունը հանդես է գալիս «Երից Ընկերություն Տիվրիկոյ» անունով: Նույն թվականին ընկերության ատենապետը Խ. Ա. Երելեյանն էր, ատենադպիրը՝ Հովհ. Տ. Ջարդարյանը [18]:

Տերիկի հարակից գյուղերի հայ հասարակական ընկերությունները

Տերիկի շրջանի Քիրասուն գյուղում 1874-1875 թվականներին հիմնվել է «Վարազդատյան» ընկերություն, որի նպատակը «ձրի դաստիարակությունը ընդհանրացնելն» էր: 1875 թվականի փետրվարին Քիրասունում հիմնվել է նաև ընթերցարան, որտեղ երեկոյան ժամերին հավաքվում էին տեղի բնակիչները և պանդուխտները: «Վարազդատյան» ընկերության ղեկավար մարմինը վարչությունն էր, որը գլխավորում էին ատենապետը և ատենադպիրը: Ընկերության ատենապետը Հարություն Հակովբյանն էր, իսկ ատենադպիրը՝ Խաչատուր Պատրյանը [3, 259; 14]:

1879 թվականի ղեկտեմբերին Կ. Պոլսում պանդուխտ խումբավիյցիները հիմնել են «Լուսավորչյան» ընկերություն, որի նպատակը Խումբավիլ գյուղի դպրոցին օժանդակելն էր: «Լուսավորչյան» ընկերության ղեկավար մարմինը Վարչությունն էր՝ կազմված ատենապետից և ատենադպիրից: 1881 թվականի դրությամբ «Լուսավորչյան» ընկերության ատենապետը Հարություն Խամպարեանն էր, իսկ ատենադպիրը՝ Հարություն Նալիկյանը: Ընկերությունը սեփական միջոցներով գրենական պիտույքներ ու գրքեր էր ձեռք բերում՝ հայրենի գյուղ ուղարկելու նպատակով: Գրքերի ձեռքբերումը մեծապես տեղի էր ունենում բարերարների նվիրատվությունների շնորհիվ: 1881 թվականին ընկերությանը գրականություն են նվիրաբերել Մոսկվայից Մելքոն Գասպարյանը՝ 24 կտոր գիրք, Կ. Պոլսից բժիշկ Փեշտիմալձյանը՝ 12 գիրք և Աբիկ Ունձյանը՝ 250 գիրք [3, 260]:

Ընկերությունը, հայրենի գյուղի դպրոցին գրենական պիտույքներով ու գրքերով օգնելուց զատ, ստանձնում է նաև դպրոցի համար շենք կառուցելու գործը, որը հաջողությամբ ավարտին է հասցնում 1881 թվականին: Խումբավիլի դպրոցն ուներ 8 դասարան, 95 աշակերտ և 2 ուսուցիչ: Դպրոցի տարեկան ծախսը, որի մեծ մասը հոգում էր «Լուսավորչյան» ընկերությունը, կազմում էր 85 օսմանյան ոսկի [17]:

1879 թվականին սկզբին Կ. Պոլսում դրամ հավաքելու ու Տերիկի շրջանի Զիմառա գյուղի դպրոցի համար շենք կառուցելու նպատակով հիմնվում է «Նայան» ընկերությունը [3, 261]: Ընկերության այս ազգօգուտ գործին իրենց աջակցություն են ցուցաբերում արևմտահայ գավառների և Կ. Պոլսի հայերը: Կարճ ժամանակահատվածում ընկերությունը կարողանում է բավականին գումար հավաքել: 1879 թվականի մարտի դրությամբ ընկերությունը ստացել էր հետևյալ նվիրատվությունները. Կ. Պոլսից աղաներ Դավիթ Միսաքյանը,

Մարտիկ Մարտիկյանը, Հովհաննես Միսաքյանը, Մ. Կարապետ Խաչիկյանը՝ 1000-ական դուրուշ, Արաբկիրից Մ. Բարսեղ Լուսինիկյանը՝ 500 դուրուշ, Փոքր Արմտանից՝ Խաչատուր Պողոսյանը, Սեդրաք Միսաքյանը՝ 400-ական դուրուշ, Գևորգ Միսաքյանը, Օսկեհան Վարդազարյանը, Ալիքսան Ալիքսանյանը, Ստեփան Զատյանը՝ 300-ական դուրուշ և այլք: Ընդհանուր նվիրատվությունների արդյունքում հանգանակված գումարը կազմել է 8000 դուրուշ [10]:

1884-1885 թվականների միջակայքում Տերիկի Կասմա գյուղում տեղի դպրոցին օժանդակելու նպատակով հիմնվում է «Դպրոցասիրաց» ընկերությունը: «Դպրոցասիրաց» ընկերությունը ուներ մշտական բարերար՝ ի դեմս Կ. Պոլսի Նորատունկյան դերդաստանի երևելի դեմքերից Գրիգոր Նորատունկյանի եղբայր, մեծ բարերար Հակոբ Նորատունկյանի: Ընկերության ղեկավար մարմինը Գործադիր ժողովն էր: Ընկերության ատենապետը Կարապետ Ռայիսյանն էր, ատենադպիրը՝ Աբրահամ Խ. ԽարակեաՎուրյանը [3, 262]:

Ընկերության օժանդակությունը տեղի դպրոցին հիմնականում գրենական պիտույքների և ուսումնառության համար անհրաժեշտ այլ իրերի մատակարարումն էր: Ընկերության հիմնադրման առիթով Հակոբ Նորատունկյանը «Դպրոցասիրացին» նվիրաբերում է 10 օսմանյան ոսկի, միաժամանակ խոստանում է տրամադրել նաև կալվածք, որը, ի նպաստ ընկերության հայրենավեր գործին, տարեկան 12 օսմանյան ոսկի շահույթ կբերեր: Տարեկան 12 օսմանյան ոսկի շահույթ ունենալու դեպքում ընկերության գործադիր ժողովը մտադրվել էր ապագայում գյուղի դպրոցի ամբողջ ծախսերը իր վրավերցնել [8]:

Ժամանակի հայ պարբերական մամուլում 1885 թվականին Կ. Պոլսում հիշատակվում է պանդուխտ Արամթաղցիների կողմից հիմնադրված ընկերություն, որի հիմնական նպատակը հայրենի գյուղի երիտասարդության շրջանում կրթությանը զարկ տալն էր [3, 262]:

Եզրակացություն

19-րդ դարի երկրորդ կեսին Տերիկում հիմնվել են «Գափամաճյան» կամ «Կրթանվեր», «Անձնուէր», «Աղքատասիրաց», «Հայրենասիրաց», «Երիտասարդաց» ընկերությունները: Տերիկի հարակից շրջաններում ու գյուղերում նույն շրջանում գործել են Քիրասունի «Վարազդատյան», Խուռնավիլի «Լուսավորչյան», Զիմառայի «Նալյան», Կասմայի «Դպրոցասիրաց» ընկերությունները և Արամաղթայի ընկերությունը: Ըստ հայ պարբերական մամուլի հրապարակումների այս ընկերությունները հիմնվել են կրթադաստիարակչական գործունեություն ծավալելու նպատակով, մեծամասամբ Կ. Պոլսում ապրող պանդուխտ տերիկցիների կողմից:

Գրականության

1. Ալպոյաճյան Ա., Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը, Ընդարձակ օրացոյց ՄԲ Փրկչեան հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1910, 297 էջ:
2. Օոցիկեան Ս. Ս., Արեւմտահայ աշխարհ, Նիւ Յորք, 1947, 814 էջ:
3. Հ. Եփրեմ Վ. Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ, Վիեննա, 1963, 464 էջ:
4. Մէնելիշեան Գ., Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց, Վիեննա, 1890, 50 էջ:
5. Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, 499 էջ:
6. Սրուանձտեան Գ. Թորոս Աղբար, Ա., Կ. Պոլիս, 1879, 365 էջ:
7. «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, հունվարի 29, թիվ 185:
8. «Արևելք», Կ. Պոլիս, 1885, թիվ 403:
9. «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1905, թիվ 2699:
10. «Թերճեմանը Էֆքեար», Կ. Պոլիս, 1879, թիվ 508:
11. «Ժամանակ», Կ. Պոլիս, 1909, թիվ 356:
12. «Լոյս», Կ. Պոլիս, 1878, թիվ 76:
13. «Հայրենիք», Կ. Պոլիս, 1871, թիվ 53:
14. «Հայրենիք», Կ. Պոլիս, 1875, թիվ 249:
15. «Մանգ. Էֆքեար», Կ. Պոլիս, 1870, դեկտեմբերի 15, թիվ 1428:
16. «Մանգումէի Էֆքեար», Կ. Պոլիս, 1901, թիվ 55:
17. «Մասիս», Կ. Պոլիս, 1882, թիվ 3052:
18. «Մասիս», Կ. Պոլիս, 1882, թիվ 3053:
19. «Փունջ», Կ. Պոլիս, 1867, թիվ 160:

Армянские общественные организации Теврика и прилегающих к нему сел в 19 веке

Зоя Чатинян

Резюме

Ключевые слова: реформы, общественные, учебно-воспитательные организации, пожертвование, ремесленники, носильщики, род, школы

В 50-60-х годах XIX века полным ходом развивается общественная и политическая жизнь как в Западной, так и в Восточной Армении. В социально-политической жизни шла борьба – расслаивание общественного сознания. Параллельно с активной экономической жизнью армяне Теврика и прилегающих к нему сел, принимали деятельное участие в общественной, культурной и образовательной жизни империи. В основном это было связано с возможностями, предоставленными танзиматом, объявленным султаном Абдулом-Меджидом под давлением европейских держав с целью «европеизации» Турции. С начала прошлого века, поселившиеся в Константинополе переселенцы из Теврика, 50-х годах XIX века смогли приобрести определенные средства, что было достаточно не только для достойного существования, но и для содействия в решении некоторых вопросов просвещения и образования населения родного города и окрестных деревень. В этом патриотическом деле в стороне не остались и известные армянские фамилии, такие как род Тузянц. Организации и союзы были основаны не только в Теврике, но и в окрестных селах Кирасон, Хурнавил, Зимара и Касма. Организации в 19 веке в Теврике, окрестных селах действовали в основном в двух направлениях: они занимались просветительской и благотворительной деятельностью. Значительная часть основанных в Теврике и в окрестных селах армянских общественных организаций в 19 веке прекратили свое существование в результате армянских погромов, осуществляемых султаном Абдулом-Хамидом в 1895 году в Османской империи, которые не обошли стороной Теврик и окрестные села.

19th Century Armenian Public Companies in the Villages Adjacent to Tevrik

Zoya Chatinyan

Summary

Key words: *reforms, public, educational organizations, donation, craftsmen, porters, family, schools*

In the 50-60s of the 19th century, social and political life was developing both in Western and Eastern Armenia. In the socio-political life there was a struggle – the stratification of public consciousness. Along with a lively economic life, the Armenians of Tevrik were also active in the social, cultural and educational life of the empire. It was conditioned with the opportunities provided by the Tanzimat, announced by Sultan Abdul Mecid under pressure from the great European powers with the aim of “Europeanizing” the Ottoman Empire. Since the beginning of the last century, the newcomers from Tevrik, who settled in Constantinople, in the 50^s of the XIX century, were able to acquire the means not only for a decent existence but also for the solution of some issues related to the enlightenment and education of the population of their hometown and surrounding villages. In this patriotic initiative, the well-known Armenian families settled earlier in Constantinople, such as the Tuzyants family, did not stand aside. A number of organizations were established not only in Tevrik, but also in the surrounding villages of Qirason, Khurnavil, Zimara and Kasma. In 19th century the organizations in Tevrik and the surrounding villages acted mainly in directions: they were engaged in educational and charitable activities.

In the 19th century, Armenian non-governmental organizations based in Tevrik and neighboring villages largely ceased to exist as a result of the Armenian pogroms in the Ottoman Empire in 1895, which did not bypass Tevrik and neighbouring villages.

Ներկայացվել է 13.04.2023 թ.

Գրախոսվել է 20.05.2023 թ.

Ընդունվել է սպագորության 25.05.2023 թ.

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ФИЛОСОФИЯ

PHILOSOPHY

Տեղեկատվությունը որպես իշխանության աղբյուր ու կոնֆլիկտային խոսույթի ծավալման պատճառ

Անի Հարությունյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-297>

Հանգուցային բառեր. հետաքրքրությունաբերական հասարակություն, վերահսկողություն, տեղեկատվական հոսքեր, կոնֆլիկտ, գոյաբանական փոխակերպումներ, գիտելիք

Նախաբան

Համաշխարհայնացման գործընթացները, որոնք բնորոշ են քաղաքակրթության զարգացման ներկա փուլին, աչքի են ընկնում որոշ ակնառու հատկանիշներով: Դրանցից մեկը վերաբերում է ապրելակերպի սովորական դարձած նորմերի, մեխանիզմների փոփոխությանը, մյուսը՝ տնտեսական ու քաղաքական ոլորտներում գրանցված աննախադեպ մրցակցությանը, իսկ երրորդը ու նախորդներով պայմանավորվածը՝ ժամանակակից հասարակության կոնֆլիկտածին լինելուն: Այս դրսևորումներն անմիջականորեն փոխկապված են միմյանց հետ: Նյութական ու հոգևոր արժեքների վերստեղծման առաջին փորձերից սկսած մենք վայրկենապես հանդիպում ենք ընդդիմության: Հին ու նոր կամ անցյալի ու ներկայի գաղափարախոսությունների «ծանոթությունը» միշտ բախումնաձին է. դրանում իշխանության օբյեկտն ապագան է, իսկ հակամարտության մեջ հայտնված կողմերի նպատակը՝ հետագայում դիրք, ազդեցություն ունենալը: Այս առնչությամբ մեր առջև ներկայանում է ամենամեծ կամ մասշտաբային բախումնային (կոնֆլիկտային) խոսույթը, որը ծավալվում է միայն ապագայի նկատմամբ իշխանության ու վերահսկողության հաստատման նպատակով: Իշխանություն ունենալու մղմամբ ձևավորվող կոնֆլիկտը հավերժական է իր գոյությամբ. այն առկա է մարդկային հարաբերությունների, հասարակական կեցության ամենատարբեր մակարդակներում: Ներկայիս աշխարհաքաղաքական դրությունը լավագույնս հավաստում է իշխանության հաստատման հենքով մղված քաղաքական խմորումները: Մյուս կողմից էլ, շուկայական առաջարկի բազմազանության պայմաններում, մենիշխանության հաստատումն անխուսափելիորեն կապ ունի ապրանքի/ծառայության PR-ն ապահովող տեղեկատվության գրագետ և տեղին մատուցման հետ: Եվ քանի որ տեղեկատվության սպառողն անհատն ու հասարակությունն են, առնվազն տնտեսական ու քաղաքական ոլորտներում իշխանության ձեռքբերման հիմք ունեցող կոնֆլիկտը՝ դառնում է սո-

¹ Կոնֆլիկտը սահմանվում է որպես հակասության մասնավոր դեպք, դրա ծայ-

ցիալական փոխակերպումներին հատուկ անխուսափելի մի երևույթ: Ըստ այդմ, սույն աշխատանքի առաջին հատվածում վերլուծվում են իշխանության ձեռքբերման վերաբերյալ սոցիալ-փիլիսոփայական դասական պատկերացումները, իսկ երկրորդ մասում ներկայացվում է տեղեկատվության մեծացող դերը ժամանակակից իրականության մեջ ու, ըստ այդմ, կոնֆլիկտային խոսույթի առաջացման պատճառ լինելը:

Իշխանության բովանդակության գոյաբանական փոխակերպումները

Հասարակական գիտակցության մեջ կարելի է հանդիպել «իշխանություն» եզրույթի բազմաթիվ ձևակերպումների: Իշխանությունն իր կիրառականությունն է գտնում մարդկանց միջև հաստատված հարաբերականորեն կայուն փոխհարաբերությունների առկայության պարագայում, որի իրացման համար օգտագործվում են տարբեր ռեսուրսներ: Գրեթե միշտ այն հանգում է վերահսկողության հաստատման ձգտմանը կամ գուգորդվում դրանով: Եթե, այնուամենայնիվ, ելենք սահմանման անհրաժեշտությունից, ապա իշխանությունը կարող ենք դիտարկել որպես «...մի կողմի ունակությունը, իրավունքը կամ հնարավորությունն ունենալու վճռորոշ ազդեցություն մյուս կողմի վարքագծի կամ գործունեության վրա տարաբնույթ եղանակներով» [10, 61], իսկ որպես իշխանության «այցեքարտ» էլ ընդունել «գերիշխանության ու հպատակության հարաբերակցությունը» [10, 61]: Իշխանությունն ազդեցություն գործելու մասին է. «իշխանությունը մարդկային հարաբերությունների չափորոշիչն է... այն «մարդկանց ցանկությանը հակադարձ համեմատական մեծություն է» [13, 34] ու «...այն ամենն, ինչը կարող է բավարարել այս կամ այն ցանկությունը, դառնում է իշխանատենչության հավանական աղբյուր...» [13, 64], այսինքն՝ կոնֆլիկտայնության ազդակ:

Հասարակության զարգացման բոլոր փուլերում կոնֆլիկտների ծագման գլխավոր պատճառը կամ «կոմպլիսնձորը» եղել է իշխանությունը: Հասկանալի է, որ իշխանության գաղափարը գոյություն է ունեցել ու գործնականում արտահայտչականություն է ձեռք բերել հանրույթների ձևավորման ամենավաղ շրջանից սկսած, երբ մարդկանց կյանքի կազմակերպման դեկը ստանձնում էր տվյալ ցեղի հեղինակավոր անձնավորությունը: Վերջինս, որպես կանոն, պետք է օժտված լիներ բոլորի կամ մեծամասնության համար դուրեկան որակներով (օրինակ՝ խիզախություն, իմաստություն, կենսափորձ և այլն): Այս հատկանիշների դրսևորման թուլացումը ենթադրում էր բուն իշխանության աստիճանական վերացում: Երբեմն այն համադրվել է նաև վրեժխնդրության գաղափարի հետ: Վրեժ լուծելը ևս ըմբռնվում էր որպես իշխանության

րահեղ սրացում. տե՛ս Всемирная энциклопедия: Философия, главн. науч. редактор и составитель А. А. Грицанов, М.: АСТ, Мн.: Харвест, Современный литератор, 2001, էջ 505:

ցուցաբերման դրսևորում: Քաղաքակրթական զարգացումներին համընթաց փոխվում են իշխանության բովանդակությունն ու «գործողության ժամկետը». այն դառնում է երկարակյաց կամ ավելի բանական (ռացիոնալ)՝ կախված կոնկրետ տեսակից: Եթե դիտարկենք գիտական խոսույթում շրջանառվող իշխանության տարատեսակումները, ապա ոլորտի ներկայացուցիչների (Ռ. Դալ, Ա. Կրուզյանսկի, Դ. Մանհեյմ, Յու. Ռոզենֆելդ, Վ. Կրյուգեր, Ֆ. Լորդ ի Ալայս, Վ. Պուգաչով և այլք) տեսակետների հարաբերական ընդհանրացումը կարելի է հանդիպել Դ. Պոդլեսնիի առաջարկած տիպաբանության մեջ: Նա առանձնացնում է իշխանության մի քանի տեսակ՝ հիմքում դնելով կենսագործունեությունն ապահովող համանուն ոլորտները՝ տնտեսականը, ուժային-ստիպողականը, մշակութային-տեղեկատվականը, սոցիալականը [11, 15-16]: Ելնելով այս տեսակավորումից՝ կարելի է առանձնացնել իշխանության հետևյալ աղբյուրները՝ հարստությունը, ուժը (որպես իշխանության բռնի պարտադրանք քաղաքական հավանական կամ իրական առաջնորդի կողմից), գիտելիքն ու տեղեկատվությունը և հասարակական դիրքը:

Քանի որ սույն հոդվածում իշխանությունը վերլուծվում է կոնֆլիկտի առաջացման պատճառի դիտանկյունից, նպատակահարմար է խոսել նախ քաղաքական ու տնտեսական իշխանության մասին: Իշխանության գաղափարի ուժային-քաղաքական ու փիլիսոփայական իմաստավորման հարցում նկատելի է Վերածննդի ժամանակաշրջանի մտածող Ն. Մաքիավելլիի ունեցած դերը: Նրա հայացքներում իշխանատենչությունը դիտարկվել է թե՛ քաղաքական, թե՛ սոցիալական կոնֆլիկտների ծագման գլխավոր պատճառներից մեկի համատեքստում: Քննարկելով կոնֆլիկտների՝ բնական ձևով գոյությունը մարդկանց կյանքում՝ Ն. Մաքիավելլին փորձում է ցույց տալ, որ բոլոր կոնֆլիկտներից ամենագորեղն ու, ըստ էության, հիմնայինը, իշխանության հաստատման բովանդակություն ունեցողն է. «...ցանկացած պետության մեջ օրինաչափ գոյություն ունեցողը թշնամանքն է... ժողովրդի ու ազնվականության միջև... Ժողովուրդը ձգտում է ենթարկվել օրենքներին, իսկ ազնվականությունը ձգտում է իշխել ժողովրդին, ու այդ պատճառով նրանց միջև համաձայնություն ձեռք բերելն ուղղակի հնարավոր չէ» [7, 62]: Ունենալով սահմանափակ ազատություն՝ մարդիկ ձգտում են, մի դեպքում, այն ձեռք բերել, որ իշխեն այլոց վրա, իսկ մյուս դեպքում՝ ազատություն ունենալն ուղիղ համեմատական են համարում իրենց անվտանգության ապահովման հետ [8, 413]: Կոնֆլիկտներին տալով բացառապես հասարակական-քաղաքական բնութագիր՝ Ն. Մաքիավելլին, այսպիսով, հայտ է ներկայացնում իշխանության բոլոր տեսակներից քաղաքական իշխանության գերակայության համար:

Տնտեսական իշխանության կախվածությունը տիրապետող հասարա-

կարգի տիպից քննարկվել է Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի «Կապիտալ» աշխատության մեջ²: Մասնավորապես, եթե վաշխառուական հասարակարգում հողի մշակման մեջ ներգրավված գյուղացիների քանակական առավելությունը հողատարածքի մակերեսի մեծության հետ միասին տալիս էր դրա սեփականատիրոջը՝ վաշխառուին, արտառոց դիրք (իշխանություն) հասարակության մեջ, ապա կապիտալիստական հասարակության զարգացման օրոք, սոցիալական շերտավորումների ավելի տեսանելի սրման հետևանքով, մասնավոր սեփականությունը, կապիտալի կուտակման մղումն ու ավելի շատ եկամուտ ստանալու ձգտումը դառնում են հասարակության մեջ իշխանության ձեռքբերման գլխավոր աղբյուրը ու, հետևաբար, կոնֆլիկտների առաջացման հիմնական շարժառիթը: Եվ իշխանությունն էլ համապատասխանաբար սկսում էր պատկանել նրան, ով հարուստ է³:

Իշխանության բովանդակության վերափոխության պահանջ կարելի է նկատել նաև Ֆ. Բեկոնի առաջարկած սկզբունքի մեջ, երբ ուժը սկսում է բովանդակել ոչ թե ֆիզիկական, այլ ինտելեկտուալ իմաստ: Այն կապված է ճանաչողության արդյունքում ձեռք բերվելիք գիտելիքի հետ. «Մեր հասարակության նպատակն իրերի լինելիության պատճառների ու դրանց գոյության հարցում անտես ուժերի ճանաչողությունն է և մարդու իշխանության սահմանների տարածումը բնության վրա...» [3, 509]:

Գիտելիք ու տեղեկատվություն. տեղեկատվության նոր կարգավիճակը կոնֆլիկտային խոսույթում

Ներկայումս սոցիալ-փիլիսոփայական գրականության մեջ ընդունված է խոսել աշխարհում տիրապետող երրորդ՝ հետարդյունաբերական փուլի մասին⁴: Այն առաջ է բերում հարստության, ուժի, սոցիալական դիրքի ու իշխանության մասին նոր պատկերացումներ: Գերակա նշանակություն է

² Այս տեսաբանները շրջանառության մեջ են դրել «հասարակական-տնտեսական ֆորմացիա» եզրույթը. տե՛ս Մարкс К. и Энгельс Ф., Капитал // Маркс К. и Энгельс Ф., Сочинения в тридцати девяти томах, Т. 23, 24, 25 часть 1, 25 часть 2, Москва: Государственное издательство политической литературы, 1954-1966 гг.

³ Նկատենք, որ դեռևս XVI դարում ակնարկ է կատարվել ուժի, հարստության ու իշխանության պատճառահետևանքային կապի վերաբերյալ. «...բոլոր նրանք, ովքեր ունեն շատ հարստություն կամ շատ իշխանություն, այն ձեռք են բերում ուժի ու խորամանկության միջոցով...». մանրամասն տե՛ս Макиавелли Н., История Флоренции, Издание второе, Пер. Н.Я. Рыковой, Общ. ред., послесл. и комм. В.И. Рутенбурга, Москва, изд-во «Наука», 1987, էջ 120:

⁴ Խոսքը վերաբերում է, մասնավորապես, Դ. Բելի կողմից առաջ քաշված քաղաքակրթական զարգացման փուլերին, որոնց համապատասխան առանձնացվում են երեք տեսակի հասարակություններ՝ ագրարային կամ մինչարդյունաբերական, արդյունաբերական ու հետարդյունաբերական:

ձեռք բերում տեղեկատվությունը, և կարևորություն է ստանում ծառայությունների ու հարմարությունների վրա կառուցարկված կյանքի որակը [2, 171]: Արդյունաբերական տիպի հասարակության անցումը հետարդյունաբերականին դրսևորվում է ոչ թե մասնավոր սեփականության դերի նվազեցման ու գիտելիքի՝ որպես իշխանության նոր աղբյուրի առաջնահերթության արձանագրմամբ, այլ հենց գիտելիքի բնույթի փոփոխությամբ [2, 462]: Հետարդյունաբերական հասարակությունը խորհրդանշում է «նոր առանցքային կազմավորումների ու նոր սկզբունքների առաջացում. ապրանք արտադրող հասարակությունից անցում դեպի տեղեկատվական հասարակություն կամ գիտելիքների հասարակություն» [2, 661]: Այս պայմաններում մարքսյան կապիտալը ենթարկվում է բովանդակային փոխակերպումների: Հարստությունը ու դրանով պայմանավորված իշխանությունը գրկվում են նյութական մարմնավորումից և ձեռք բերում խորհրդանշական արտահայտչականություն՝ իրեն համանման ընտրելով գիտելիքը: Սեփական հնարավորությունների ընդարձակմանը ձգտող բանական էակի համար արդեն արդիական չէ ապավինել միայն կապիտալի վրա: Նաև կարևորություն է ստանում ոչ թե աշխատուժի քանակական միավորը, այլև դրա որակական կողմի մշտական կատարելագործումը, որի պարագայում երևան են գալիս մրցունակ, բազմագիտակ մարդիկ: Նրանք հայտ են ներկայացնում գիտելիքի ու «տեղեկատվության որպես գիտելիքի հիմքի» [13, 97] նկատմամբ վերահսկողության համար մղվելիք պայքարում: Այս պարագայում, որոշակի կոնկրետություն սահմանելու համար, նպատակահարմար է հղում կատարել թեմատիկ գրականությանն ու հասկանալ, թե ինչպես է պետք հասկանալ գիտելիքն ու տեղեկատվությունը: Գիտելիքը նպատակադրված ճանաչողական նեղ ու կոնկրետ գործունեության արդյունք է. այն ենթադրում է փորձ [6, 190], իսկ տեղեկատվության հետ մարդը կարող է ծանոթանալ, բայց որը որևէ կերպ «իրենը» չդարձնել, այսինքն՝ այն չկիրառել: Գիտելիքի դեպքում հակառակ պատկերն է. այն յուրացվում է ու կիրառվում: Եվ է. Թոֆլերի վերոգրյալ ձևակերպումը հենց վերաբերում է նրան, որ հետազոտելով որևէ լայն ոլորտ՝ մարդը կարող է որոշել, թե իրեն հատկապես տվյալ ոլորտի որ բաժինն է հետաքրքրում, և սահմանելով հստակ նպատակ՝ սկսել հնարավորինս մանրամասն ու խորքային ձևով այն ուսումնասիրելը: Նաև կարևոր է շեշտել, որ գիտելիքի մյուս կարևոր հատկանիշն այն է, որ դրա ստացման ընթացքում ներդրված ջանքերը, ժամանակն ու մնացյալ ռեսուրսները նպաստում են, որպեսզի գիտելիքն ամրագրվի մեր հիշողության մեջ: Նույնը չի կարելի ասել տեղեկատվության մասին, որի հոսքային ու անընդհատյա բնույթը պարզապես

թույլ չի տալիս այդքանը մտապահել. տեղեկատվությունն առավելապես իրազեկվածության մասին է⁵:

Եվ ահա այսօր մենք արդեն գործ ունենք մարդկանց մտահայեցողական նախասիրությունների փոփոխության հետ. մարդիկ ոչ այդքան ուզում են սևեռվել առավել մանրամասն այս կամ այն գիտելիքի հասկացման ու յուրացման ուղղությամբ, այլ մտավոր իմաստով քիչ ռեսուրս պահանջող տեղեկատվության վրա: Այս մասին է, որ խոսում է Դ. Բելը. հետարդյունաբերական հասարակությանը կամ, թոֆլերյան ըմբռնմամբ, հասարակական զարգացման «երրորդ ալիքին»⁶ բնորոշ իշխանության աղբյուրը՝ փողը, հենց տեղեկատվությունն է. «...դրանք անցողիկ են.... ակնթարթորեն հայտնվում ու անհետանում են.... վերահսկվում են էկրանների մոնիտորներին» [13, 97]: Այսօրինակ պայմաններում է, որ տեղեկատվության՝ որպես սոցիոմշակութային արտադրանքի ու փոխանակության համընդհանուր արժույթ ներկայանալը դառնում է լռելյայն ընդունելի ու բոլորի համար դյուրահաս: Եթե իշխանության համար պայքարի կոնֆլիկտայնության արդեն իսկ ժամանակավերջ ցուցիչները (հողը, աշխատուժը, կապիտալը (փողը)) մշտապես եղել են միայն ընտրյալների մենաշնորհը, ապա տեղեկատվությունը հասանելի է բոլոր մարդկանց, ովքեր ներգրավված են ցանկացած տեսակի խոսույթում ու, մասնավորապես, դրա կոնֆլիկտային դրսևորման մեջ: «Արտադրության ավանդական գործոնները՝ հողը, աշխատանքը, հումքը և կապիտալը դառնում են պակաս նշանակալի, քանի որ դրանք փոխարինվում են խորհրդանշական գիտելիքներով: Մետաղական փողի (ոսկու ձուլակտորի) կամ թղթային փողի փոխարեն փոխանակության իրական միջոց է դառնում թվային՝ էլեկտրոնային տեղեկատվությունը: Կապիտալը դառնում է չափազանց

⁵ Գիտելիքի ու տեղեկատվության մասին, մասնավորապես, տե՛ս Зиновьева, Н. Б. Новый взгляд на природу информации / НТИ. Сер. 1. Орг. и методика информ. работы, 2003, №11 // Масуда, Е. Информационное общество как постиндустриальное общество, Москва, 1997. // Нестеров, А. В. Философия информации, НТИ, 2000. - № 2 // Парсонс, Т. Система современных обществ, Москва, Аспект-пресс, 1997 // Пестеров, П. Н. Философские проблемы информации: методологический аспект. Учебное пособие, Новосибирск, 2004 // Катречко, С. Л. Знание как сознательный феномен /Что значит знать? Сборник научных статей. Москва, «Центр гуманитарных исследований», 1999// Болотова, Е. А. Информация как философская категория: онтологические и гносеологические аспекты, дис. канд. филос. наук: Краснодар: 2005:

⁶ Է. Թոֆլերի տեսակետները հասարակությունների «ալիքային» զարգացումների վերաբերյալ ներկայացված են նրա «Երրորդ ալիք» աշխատության մեջ. տե՛ս Тоффлер Э. Третья волна, Пер. Бурмистрова Л. М. и др., Издательство: АСТ, 2010, 800 էջ:

շարժական...» [13, 287]: Կապիտալի ինտելեկտուալ բովանդակությունը կրում է փոփոխություններ: Նյութականացվածությունը (հողը, աշխատուժը, հումքը), թղթայնությունը (փողը) վեր են ածվում գիտելիքի, որի հիմքում ընկած է տեղեկատվությունը:

Ժամանակակից մարդը, բողոքարյան տերմինաբանությամբ, սառը գայթակղության ազդեցության տակ է, այլ կերպ ասած՝ նա հնազանդ է. «Սառը գայթակղությունը թվային ու տեղեկատվական համակարգերի նարցիսական հմայքն է <...> այն իշխում է տեղեկատվության ու հաղորդակցության ամբողջ ոլորտի վրա, և այդ սառնության մեջ այսօր սպառվում է ամեն սոցիալականը...» [4, 280-281]: «Գեղեցիկ փաթեթավորմամբ» ընթերցվող տեղեկատվությանն առանց ճշտելու հավատալու մարդկանց սովորույթն իմաստը չկարևորող աշխարհում ապրելու հատկանիշներից մեկն է, «...որում կա ավելի ու ավելի շատ տեղեկատվություն և ավելի ու ավելի քիչ իմաստ» [5, 60]: Դեռ ավելին, «Չափից շատ տեղեկատվությունը, ամեն օր ստացվող շատ տեղեկությունները, փաստերը, գնահատականները, առաջարկությունները, որոնք հաճախ հակասում են միմյանց և որոնք մարդկային գիտակցությունը չի հասցնում ճիշտ մարսել, առաջացնում է «ինտելեկտուալ խանգարում», շփոթեցնում է մարդուն և հնարավորություն չի տալիս ինքնորոշվել՝ ո՛չ մտածական, ո՛չ իմացական, ոչ էլ բարոյական իմաստով» [6, 190]: Քանի որ արդի հասարակության փիլիսոփայական բնութագիրը սպառողականությունն է, այն իր կնիքն է թողնում նաև տեղեկատվության կիրառության եղանակի վրա: Մպառողական հասարակության մեջ տեղի է ունենում նյութական արժեքների, գաղափարների անընդհատ, մեխանիկական կուտակում և վատնում՝ առանց ուշադրություն դարձնելու որակական կողմին ու բովանդակությանը: Եվ այսօր ամենից շատ սպառվողների թվում է հենց տեղեկատվությունը: «...Մպառողականությունը միաժամանակ և՛ իմաստների կորուստն է, և՛ նշանների խաղը» [12, 252]: Կարևոր չէ, թե ինչ է բովանդակում տեղեկատվությունը, ու ինչպիսին է դրա «որակը»՝ արդյոք ք հիմնավորված է, թե ոչ. այս առումով որևէ խնամք հիմա չի տաժվում: Փոխարենը հարկավոր է, որ տեղեկատվությունը պարզապես լինի: Հաճախ անտեսվում է իրականության հետ դրա համարժեք լինելու երբեմնի անհրաժեշտ պայմանը և այն մեկնաբանելու ավանդական «պարտականությունը»: Ընդամենը որքան շատ տեղեկատվություն, այնքան լավ, եթե անգամ այն հորինվում է՝ իրականության աղավաղմամբ նոր, ցանկալի դրվագներ հրապարակելով: Այս ամենով մենք արձանագրում ենք, որ տեղեկատվության միջոցով այսօր ստեղծվում են նոր իրողություններ: Տեղեկատվությունը դարձել է ոչ այնքան իշխանության օժանդակ միավորը, որքան դրա առաջացման աղբյուրը: Հրապարակվող գրավոր տեքստը որքան շատ է կրկնվում, այնքան շատ ենք սկսում վստահել դրա բովանդակությանը ու մեծամասամբ չհավաստիանալով տարածման

աղբյուրների իսկության մեջ, որովհետև հետաքրքիր կանոնության ժամանակափուլում մարդկանց պատել է անտարբերությունը. «սիմուլյատիվ-վիրտուալ իրականության մեջ տեղեկատվության առատությունը կաթվածահար է անում ժամանակակից ամբոխին, դարձնում անտարբեր ու անպատասխանատու՝ հարուցելով անորոշության, անօգնականության ու անելանելիության զգացում» [1, 40-41]: Հետևաբար, այժմ տեղեկատվական քարոզչություն իրականացնելն անհրաժեշտ հունով և՛ հեշտ է, և՛ հասանելի, և՛ արդյունավետ:

Այսօր առկա իշխանության նոր հայեցակարգի գաղտնագիրը տեղեկատվության վրա հիմնված մտածողությունն է: Դրանում արդիականացված են «իշխանության փոխակերպումները». «Իշխանության ձևափոխումները չեն ենթադրում լոկ իշխանության փոխանցում: Այն իշխանության բնույթի ու դրա բաղադրիչների՝ գիտելիքների, հարստության և ուժի հանկարծակի, կտրուկ փոփոխությունն է» [13, 56]: Ի հավելումն, որպես այս հասարակարգի գաղափարական բնութագիր, շեշտադրվում է հետևյալը. «...և՛ ուժը, և՛ հարստությունը մեծ կախվածության մեջ են ընկնում տեղեկատվությունից» [13, 39]: «Իշխանություն» հասկացության նոր իմաստավորման մեջ փաստացիորեն շեշտադրվում է իշխանության վերոնշյալ աղբյուրներից մեկի՝ տեղեկատվության նշանակության ընդարձակումը: Որոշ վերապահումով կարելի է ասել, որ երրորդ տեսակի իշխանության՝ տեղեկատվամշակութային իշխանության դերը (որի ծագման հիմքում, ինչպես նշվեց, ըստ Դ. Պոդլեսնիի, ընկած են հենց այս երկու կատեգորիաները), ծավալապես մեծացած է: Ըստ էության, տեղեկատվությունից օգտվելու ու այն գրագետ կիրառելու դեպքում իշխանություն ձեռք բերելը դառնում է իրատեսական շատ մարդկանց համար: Կարելի է ասել, որ *տեղեկատվությունը կոնֆլիկտային խոսույթում սոցիալական հավասարության ձեռքբերման ավելի արդյունավետ եղանակ է*: Ելնելով խոսույթի էության վերհանման Տ. Միլսկայայի մեկնաբանությունից այն մասին, որ խոսույթը «և՛ կյանքի մեջ ներթափանցված խոսքն է, և՛ հաղորդակցության մասնակիցների միջև տեղեկատվական հոսքի շարժը» [9, 11], վստահաբար կարելի է արձանագրել, որ ներկայումս, մասնավորապես, մեր հասարակության համար տեղեկատվության նկատմամբ հաստատվելիք վերահսկողությունը դարձել է հրատապ առավել, քան երբևէ:

Հիմա ժամանակակից մարդն ապրում է, այսպես կոչված, «համալիր հաղորդակցության» մեջ⁷. դրանում տեղեկատվության էությունը, բնույթը, յու-

⁷ Հասարակական կյանքում հաղորդակցության մեջ մարդու գտնվելու բնութենական հակվածության մասին մենք հանդիպում ենք Ն.Վիների «մարդը կառավարող էակ» է ձևակերպման իմաստային մեկնաբանության մեջ. «հաղորդակցությունը և կառավարումը կապված են մարդու գոյության էության հետ ճիշտ այնպես, ինչպես հասարակության մեջ մարդու կյանքի հետ»⁷. տե՛ս Винер Н., Человек управляющий. (Серия «Психология-классика»), СПб.: Питер, 2001, էջ 14

րացման ու մատուցման ձևն արմատապես փոխված է: Վերջինով պայմանավորված՝ հասարակական գիտակցության ձևավորման դասական մոդելը ևս ձևագեղծվել է. չունենալով կայուն «դիմագիծ»՝ այն անընդհատ ազդվում է վայրկյան առ վայրկյան հարստացող տեղեկատվական հորձանուտում՝ գտնվելով մշտական ձևավորման փուլի մեջ: Տեղեկատվությունն այլևս իշխանության աղբյուրն է և, հետևաբար, վերջինիս համար մշտապես մղվող պայքարի՝ կոնֆլիկտի առաջացման պատճառը: Այսօր առաջինի համար մրցակցությունը ինքնաբերաբար հասկացվում է որպես իշխանության հասնելու պայման, ուստի պատահական չէ, որ իշխանատենչության գործնական դրսևորումները «live» ձևաչափով, քսանչորսժամյա ռեժիմով ծավալվում են հենց ժամանակակից մեդիա հարթակներում: Այսօրվա իշխանությունը դասական իմաստով կապ չունի փողի և դրա «ալիքային» պատկերացումների հետ⁸: Սպասվելիք հաղթանակը ցանկացած ոլորտի կոնֆլիկտային խոսույթում գլխավորապես կախված է խաղասեղանին դրված տեղեկատվությունից, ոչ միայն ու ոչ այնքան թղթադրամի քանակից: Տեղեկատվության նկատմամբ ամբողջական վերահսկողության հաստատումը նշանակում է բուն իշխանության ստանձնում, և հետևաբար, այն առանձնանում է իշխանության աղբյուրների վերոնշյալ ցանկից՝ դառնալով կոնֆլիկտայնության ժամանակակից ցուցիչը: Տեղեկատվության նկատելի աննախադեպ հոսքի պայմաններում վճռական նշանակություն են ձեռք բերում ոչ միայն դասականի կարգավիճակ ունեցող զանգվածային լրատվամիջոցները (ռադիո, մամուլ, հեռուստատեսություն), այլև սոցիալական մեդիայի նորագույն տեսակը՝ համացանցն ու հատկապես սոցիալական ցանցերը: Այժմ բոլորիս համար հասանելի համացանցի միջոցով է կազմվում ու ուղղորդվում հասարակական կարծիքը, որը կարող է լինել կամ կազմաքանդող, կամ կառուցողական՝ կախված թեմատիկ նպատակից: Փոխաբերական իմաստով կարելի է անգամ ասել, որ մեզնից յուրաքանչյուրի ձեռքերում պահված բջջային հեռախոսների մեջ է գտնվում ամբողջ աշխարհը: Հիմա վիրտուալ տիրույթում տարածվող տեղեկատվությունը համարվում է գերակայության հաստատման, հոգեբանական և իմացական ճնշումներ իրականացնելու ամենաարագ, հասանելի ու արդ-

(էլ. աղբյուր՝ http://grachev62.narod.ru/wiener/the_human_use_of_human_beings.html, դիմելու ամսաթիվ՝ 28.05.2021):

⁸ Նկատի է առնվում փողի՝ հասարակության զարգացման փուլերին համապատասխան համարժեքները՝ «Առաջին ալիքի» փողը որոշվում էր քաշով (ոսկին որպես փող), «Երկրորդ ալիքի» փողը տպվածն էր, որի արժեքը պայմանավորված է տպված փողի վրա գրված բառերից ու թվերից: Բսկ սհա «Երրորդ ալիքի» փողը դուրս է մնում դասական ըմբռումներից. այն թվայնացվածն է. տե՛ս 13. Тоффлер О. Метаморфозы власти: Перевод с английского / Э. Тоффлер, Москва, изд-во АСТ, 2003, էջ 95:

յունավետ եղանակը: Մասնավորապես, այս երևույթը հատկապես ազդեցիկ է կոնֆլիկտային քաղաքական խոսույթում. քաղաքական գործունեության մեջ ներառված բոլոր կողմերի, այլ կերպ ասած, քաղաքական շուկայի օբյեկտների ու սուբյեկտների⁹ գիտակցության վրա ձեռնածուական (մանիպուլյատիվ) ազդեցություն գործելու տեսակետից տեղեկատվությունը դառնում է կենսականորեն անհրաժեշտ գործիք: Քաղաքական տարատեսակ տեխնոլոգիաների կիրառման միջոցով հասարակական կարծիքը կարող է ոչ միայն հստակ ուղղորդվել, այլև նպատակադիր կերպով ստեղծվել: Ուստի շատ ավելի կարևոր է դառնում աշխարհաքաղաքական ներկայիս պայմաններում պահպանել զգոնությունն ու հետևողականությունը տեղեկատվության հետ հաղորդակցության մեջ մտնելիս:

Արձանագրենք, որ աշխարհի կարգն այսօր անվերադարձ փոխված է: Դրանում իր գոյաբանական փոխակերպմամբ այժքի է ընկնում հարստության ժամանակակից կեղծամանակը՝ իշխանությունը: Վերջինս ներկայանում է արտառոց, այլաբանական մոդելավորմամբ: Թե՛ ուժային-քաղաքական (Ս. Մաքիավելի), թե՛ ինտելեկտուալ (Ֆ. Բեկոն), թե՛ ֆինանսատնտեսական (Է. Թոֆլեր) իշխանության լեգիտիմացման ընդհանրական զենքն այսօր դարձել է տեղեկատվությունը: Հիմա մենք առնչվում ենք տեղեկատվական մուտքերի աննախադեպ ծավալների հետ: Ժամանակակից տեղեկատվատեխնոլոգիական առաջընթացը հնարավորություն է տալիս կյանքի կոչել այն, ինչը նախկինում հնարավոր էր իրագործել միայն մեծ ֆինանսատնտեսական ու ժամանակային ռեսուրսների ներգրավվման միջոցով: Տեղեկատվական շարժն անվերջ է, և, ի տարբերություն իշխանության նախկին աղբյուրների, այն կարծես թե տնտեսում է մեր ժամանակը՝ ապագան ավելի մոտեցնելով մեզ և դրանով իսկ իր հետ բերելով կոնֆլիկտի նոր շարժառիթներ: Սա պայմանավորված է նրանով, որ տեղեկատվության նկատմամբ պահանջները բացարձակապես անկանխատեսելի են: Դեռևս գոյություն չունի համակարգչային ծրագիր, որը կարող էր ալգորիթմների միջոցով ճշգրիտ հաշվարկ կատարել, թե ինչպիսի տեղեկատվություն է պետք ժամանակակից մարդուն, կամ որն իրեն դուր կգար: Հետարդիականության պայմաններում հասարակական կեցությունն ապրելակերպի հստակ կանոններ չունի: Անբեկանելի է միայն այն, որ այսօր տեղեկատվությունը գերակա է մեր կյանքում: Այս ամենով հանդերձ՝ մենք որևէ կերպ չենք կարող պնդել մատուցվող տեղեկատվության ճշմարտացիության մասին: Այս հարցը կարծես թե մնում է ետնաբեմում: Խնդիրը գլխավորապես տեղեկատվության նկատմամբ մարդկանց մոտ ձևավորվելիք վերաբերմունքի մեջ է: Ուշադրության չափազանց կենտրոնացումը

⁹ Քաղաքական շուկայի, ինչպես նաև քաղաքական շուկայի օբյեկտների ու սուբյեկտների մասին տե՛ս Недяк И.Л., Политический маркетинг: основы теории. Весь Мир, 2008, 347 էջ:

մեծացնում է տեղեկատվության կողմից մեր գիտակցության վրա իշխանության հաստատման ծավալները: Ներկայիս դարաշրջանում փոխված է վերջինիս բովանդակային սլաքը. հիմա հարկավոր է ազդել մարդկանց գիտակցության վրա՝ իշխել, երբեմն նաև մանիպուլացնել¹⁰: Տեղեկատվությունը գերակա է ամենուր, մարդիկ ամեն կերպ փորձում են իրենց ձեռքը վերցնել տեղեկատվության տարածումը՝ միաժամանակ հաճախ անգիտակցաբար ընկնելով դրա ազդեցության տակ: Այսօր հենց տեղեկատվության տնօրինումը, դրա վրա իշխելու մղումը, դրա համար մղվող պայքարն է, որ ձևավորում է կոնֆլիկտային խոսույթ: Մարդիկ կոնֆլիկտի մեջ են ներգրավվում տեղեկատվության պատճառով ու դրա միջոցով: Ժամանակին է. Ֆրոմի կողմից կանխատեսված տեղեկատվական կայսրականության գաղափարն արդեն իրողություն է: Դրա դեմ պետք է ոչ թե պայքարել կամ առավել ևս անտեսել, այլ հաշվի նստել՝ «փորձելով բարեկամանալ»:

Եզրակացություն

Վերլուծելով իշխանության գոյաբանական փոխակերպումները պատմական կտրվածքում ու հետարդյունաբերական հասարակության մեջ տեղ գտած իշխանության նոր աղբյուրի՝ տեղեկատվության դերն ու ազդեցության ծավալները՝ կարող ենք եզրակացնել, որ

- իշխանության հաստատման երբեմնի դասական գեներն այսօր կորցրել են իրենց արդիականությունը,
- մարդկանց գիտակցության վրա իշխանության հաստատման կիրառվող ու ամենաարդյունավետ գործիքներից մեկը տեղեկատվությունն է,
- տեղեկատվական հոսքերն այսօր ստեղծում են նոր իրականություն, որը գիտական, փորձնական որևէ հիմնավորում չունի, բայց որի ճշմարտությանը մարդիկ հավատում են, քանի որ պարզապես այդ մասին շատ են հանդիպում լրահոսում,
- տեղեկատվության հետ անընդհատյա աշխատանքը դարձել է իշխանության ձեռքբերման պարտադիր բաղադրիչը՝ տեղեկատվությունն այլևս իշխանության աղբյուրն է, և վերջապես,
- տեղեկատվությունը դարձել է կոնֆլիկտային խոսույթի առաջացման պատճառը, և տեղեկատվական դաշտի անվերահսկելիության հետևանքով կոնֆլիկտային խոսույթի զարգացման կանխատեսելիությունը ևս զրկված է իր հեռանկարից:

¹⁰ Գիտակցության մանիպուլացման մասին տե՛ս Кара-Мурза С. Г., Манипуляция сознанием, Москва, Изд-во: Эксмо, 2005, 832 էջ:

Գրականություն

1. Բարաջանյան Լ., Ամբոխի մարդաբանական բնութագիրը հետադիվականության համատեքստում // Բանբեր Երևանի պետական համալսարանի, Փրիստիայություն, Հոգեբանություն, 2016 (1), էջ 34-50:
2. Белл Д., Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования/Пер. с английского, Изд. 2-ое, исп. и доп. Москва, Academia, 2004, 944 с.
3. Бэкон Ф. Новая Атлантида // Бэкон Ф. Сочинения в двух томах, Том 2, Сост., общ. ред. и вступ. ст. А. Л. Субботиной, Издательство «Мысль», Москва, 1978, 575 с.
4. Бодрийяр Ж., Соблазн, Перевод с французского Алексея Гараджи, Москва: Издательство Ad Marginem. Москва, 2000, 319 с.
5. Бодрийяр Ж., Симулякры и симуляция, Перевод с французского и вступительная статья О.А. Печенкиной, Тула: Тульский полиграфист, 2013, - 204 с.
6. Гайденко, П. П. Информация и знание / Философия науки. Москва. РАН. Институт философии, 1997. Выпуск 3: Проблемы анализа знания, с. 185-195.
7. Макиавелли Н., История Флоренции, Издание второе, Пер. Н.Я.Рыковой, Общ. ред., послесл. и комм. В.И.Ругенбурга, Изд-во «Наука», Москва, 1987, 448 с.
8. Макиавелли Н., Рассуждения о первой декаде Тита Ливия. Перевод Р. Хлодовского // Макиавелли Н. Избранные сочинения: Пер. с ит. / Вступит. статья К. Долгова; Сост. Р. Хлодовского; Комментар. М. Андреева и Р. Хлодовского. Москва: Худож. лит., 1982, 503 с.
9. Милевская Т.В. Грамматика дискурса, Ростов н/Д, 2003, 390 с.
10. Морозова Г.В. [и др.], Политология: учебник/ Казань: Казан. ун-т., 2013, 384 с.
11. Подлесный Д. В., Политология: учеб. пособие / Д. В. Подлесный; Нар. укр. акад. Харьков: Изд-во НУА, 2016, 164 с.
12. Самарская Е. А., Послесловие и примечания к книге Бодрийяр Жан /Общество потребления/ Москва, Культурная революция, Республика, 2006, 264 с.
13. Тоффлер О. Метаморфозы власти: Перевод с английского / Э. Тоффлер, Москва, Изд-во АСТ, 2003, 669 с.

Информация как источник власти и причина возникновения конфликтного дискурса

Ани Арутюнян

Резюме

Ключевые слова: *постиндустриальное общество, контроль, информационные потоки, конфликт, онтологические трансформации, знание*

В данной статье рассматривается одна из основных причин возникновения конфликтной речи в современной действительности. Основной причиной возникновения конфликтов на всех этапах развития общества была власть или стремление к установлению власти. В первой части статьи представляется краткий обзор к классическим концепциям установления власти, а также принимается историко-философский анализ концепций и взглядов некоторых мыслителей, в которых наиболее ясно и детально освещается эта тема. После этого обсуждается период постиндустриального общества с его особенностями, которые находят свое проявление в социально-экономической и политической сферах. Прежние формы приобретения власти, а именно, богатство и деньги, уступают место знаниям и информации. Однако характерное для постмодернистского этапа так называемое потребительское мышление постепенно подталкивает людей к тому, чтобы жить легче и менее осмысленно. Происходит онтологическая трансформация, и тот интерес и то значение, которое приписывалось знаниям, постепенно снижается, поскольку оно требует от человека все больших умственных и временных ресурсов, которые он уже не предрасположен предоставить. Вместо этого появляется информация, приобретение которого, кажется, не требует никаких особых усилий.

В конце второй части статьи делается вывод о том, что в новом мировом порядке появились новые представления о власти. В контексте явного преувеличения роли и значения информации она больше всего рассматривается в качестве источника завоевания власти. Установление контроля над последним воспринимается как равносильное обладанию властью. А поскольку борьба за власть во все времена предполагала возникновение различных конфликтов, то получается, что в современном мире конфликты возникают и развиваются именно благодаря информации. Учитывая распространенность социальных сетей и постоянный доступ людей к информационным потокам в круглосуточном режиме, сегодня информация, зачастую непроверенная, не основанная на фактах и научно недоказанная, считается достоверной и вполне приемлемой, потому что о ней просто слишком много говорят и пишут.

The Information as a Source of Power and a Cause of Conflict Discourse Occurrence

Ani Harutyunyan

Summary

Key words: *post-industrial society, control, information flows, conflict, ontological transformations, knowledge*

This article discusses one of the main reasons for the emergence of the conflict discourse in modern reality. Power or a desire to establish power have been the main causes of conflict at every stage of the development of society. The first part of the article provides a brief overview of the basic concepts of establishing power. Besides, it also undertakes a philosophical and historical analysis of the approaches, viewpoints of thinkers and scholars, in which this issue is highlighted in details. Thereafter, the period of post-industrial society along with its features, manifested in the socio-economic and political spheres, is discussed. The old forms of acquiring power, i.e. wealth and money, are not actual any more, and now the time has come for knowledge and information. However, the so-called consumer thinking, characteristic of the postmodern stage, gradually makes people live easier and more meaningless. An ontological transformation is taking place: the interest and importance attributed to knowledge is gradually decreasing, since it requires more and more mental concentration and time resources from a person, which s/he is no longer predisposed to provide. Instead, the internet provides access to the excessive amount of information with no special efforts to acquire.

At the end of the second part of the article, it has been concluded that a modern conception of power has emerged in the new world order. In the context of a clear exaggeration of the role and importance of information, it is mostly considered a source of power. Establishing control over information is perceived as equivalent to the possession of power. And since the struggle for power has always been assumed as the emergence of various conflicts, it turns out that in the modern world, conflicts arise and develop precisely due to information overload. In terms of the prevalence of social networks and the constant access of people to the often unverified and scientifically unproven information flows, is considered reliable and quite acceptable, just because it is simply talked and written about too much.

Ներկայացվել է 14.04.2023 թ.

Գրախոսվել է 20.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

**Հավերժական պրոբլեմները՝ որպես փիլիսոփայական գիտելիքի
զարգացման գործոն**

Գնել Տիգրանյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-311>

Հանգուցային բառեր. *աշխարհայացք, աշխարհընկալում, տեսություն, եզակի և համընդհանուր գիտելիք*

Նախաբան: Գիտական հետազոտության տրամաբանության համաձայն՝ ընդհանրապես գիտության և մասնավորաբար փիլիսոփայության զարգացման առաջնադրյուրը պետք է որոնել համակարգի բազմաբնույթ հարցերի և հիմնախնդիրների նորովի առաջադրման և լուծման մեջ: Հիմնախնդրի լուծումը ենթադրում է մի կողմից հավաստի գիտելիքների համակարգում, մյուս կողմից՝ նոր խնդիրների և հարցերի առաջադրում: Անընդհատական այս հակասությունը գիտական փիլիսոփայության ճանաչողության և զարգացման շարժիչ ուժն ու գլխավոր ազդակն է: Մինևույն հիմնախնդրի լուծումը ամենևին միարժեք քայլերի հաջորդականություն չէ: Տարբեր են պրոբլեմի առաջադրման հիմնական աղբյուրները, լուծման հիպոթետիկ գործիքակազմերը, ակնկալվող տեսական դրույթները: Արդյունքում ձևավորվում են բոլորովին տարբեր, երբեմն իրարամերժ տեսական համակարգեր:

Փիլիսոփայական պրոբլեմների գոյավորման և առաջադրման արմատները պետք է փնտրել հասարակական-տնտեսական հարաբերությունների փոփոխության և զարգացման, դրանց իմացաբանական համակարգման, էթնիկական և սոցիալական տարաբնույթ խմբերի նպատակների ու շահերի, գաղափարական հակազդեցությունների մեջ: Օբյեկտիվ այս հակասության մեջ է ստեղծվում աշխարհի, նրանում մարդու տեղի ու դերի վերաբերյալ իմացաբանական պատկերների տեսական անհրաժեշտությունը:

Փիլիսոփայական պրոբլեմների ձևավորման և լուծման յուրահատկությունը: Փիլիսոփայության ուսումնասիրության բազմանիստ հարցերի վերլուծությունը երբեմն հանգում է հավերժական պրոբլեմների առաջադրմանը: Դրանցում փորձ է արվում չափորոշել տվյալ դարաշրջանի աշխարհայացքային և հասարակական գիտակցության մակարդակը, մարդկային մտածողության սահմանները, սոցիալական խմբերի շահերն ու նպատակները: Մյուս կողմից՝ յուրաքանչյուր նոր ժամանակաշրջան իր անհրաժեշտ սրբագրումներն է կատարում, փիլիսոփայության բովանդակությունը հարստացնում է նոր խնդիրներով ու հարցերով, որոնց մի մասը համալրում է մշտապես ու հավերժ քննարկվող պրոբլեմների շարքը:

Փիլիսոփայական պրոբլեմները ծագում են այն ժամանակ, երբ մարդկային իմացությունը բախվում է հակասության. նախկինում հայտնի գաղափար-

րը, տեսությունը նորահայտ փաստերի բացահայտման շնորհիվ ինքնաբացասվում է՝ սկիզբ տալով գիտական նոր որոնումների և հեղաշրջումների: Փիլիսոփայական շատ գաղափարներ և հավաստի պատկերացումներ պրոբլեմային են դառնում, քանի որ պատմական և հասարակական ամեն մի ժամանակաշրջան դրանք փորձում է լուծել յուրովի՝ իր հասարակական-սոցիալական պայմաններին համապատասխան: Մա հանգեցնում է դարաշրջանի տեսական մտածողության համակարգված բացահայտմանն ու ամփոփմանը, կեցության համընդհանուր կողմերի ու որակների նորովի մեկնաբանմանը: Ըստ որում, իմացության ամեն մի շրջափուլ, լինելով գիտատեսական մտքի ամբողջական համադրույթ, տրամաբանական մտածողության կատեգորիալ համակարգ, դառնում է հետագա առաջընթացի հիմք և կոման [1, 46]: Ուստի փիլիսոփայական պրոբլեմներն ընդգրկում են կյանքի բոլոր բնագավառները: Փիլիսոփայական գիտելիքում առաջնահերթ քննարկման են ենթարկվում այնպիսի հարցեր, որոնք շոշափում են մարդու կեցության, իմացության, աշխարհայացքի, աշխարհընկալման համընդհանուր խնդիրները: Նման պրոբլեմները մեկուսացված չեն, դրանք միահյուսված են իբրև որոշ գերպրոբլեմների հանգուցային հարցեր: Այդպիսիք առանձնաբար և միասնաբար առաջադրվում են կոնկրետ պատմական շրջափուլերում և երբեմն ստանում են հակասական լուծումներ: Տեսական գաղափարների մշտնջենական լուծումը գիտությանը սնում է աշխարհայացքի նոր տարրերով, նորովի է մեկնաբանում մարդու էության և աշխարհի փոխհարաբերությունը:

Փիլիսոփայական պրոբլեմների հաճախակի կրկնության և լուծման հետևանքով մի դեպքում ընդգծվում է մարդկային կեցության նկատմամբ փիլիսոփայական գիտելիքի անընդհատ աճող ազդեցությունը, մյուս դեպքում՝ առաջնակարգ են դառնում իմացության խնդիրներն ու արժեքայնությունը: Այս տեսանկյունից փիլիսոփայական պրոբլեմների լուծումն զգալիորեն սնում է գիտական իմացության բովանդակությունը՝ նրան տալով կատեգորիալ և տեսական գիտելիքի այնպիսի մակարդակ, որի օգնությամբ հնարավոր է քննարկել մասնավոր գիտությունների որոշ հարցեր: Մասնավոր գիտությունների բովանդակային համակարգ թափանցելու ընթացքում զգալի է փիլիսոփայական սպեկուլացիայի հնարավորությունը, երբ վերջինիս կողմից մասնավոր խնդիրները ոչ օբյեկտիվորեն ստանում են համընդհանուր արժեքավորում: Սակայն սա չէ գիտության գլխավոր խնդիրը: Այս փոխհարաբերության մեջ պրոբլեմն ստանում է լուծումների հավասարազոր արժեքավոր երկու ուղի. մի դեպքում այն դիտարկվում է մասնավոր հարցերի շրջանակներում, մյուս դեպքում՝ ընդհանրական գիտատեսական եզրակացությունների հիմք հանդիսանում: Համադրական պրոբլեմների այսպիսի լուծումը գիտականորեն հարստացնում է գիտելիքի թե՛ մասնավոր-կոնկրետ համակարգերը և թե՛ փիլիսոփայական գիտելիքն առհասարակ:

Հավերժական պրոբլեմների բովանդակությունը ներկայացնում է տվյալ

պատմական դարաշրջանի հասարակական գիտակցության բաղադրիչը, մարդու իրականության նկատմամբ գիտական և գաղափարական արտացոլման սկզբունքները: Նման գերխնդիրների հատվածական լուծումից կախված է նաև փիլիսոփայական և աշխարհայացքային այլ գիտությունների առաջադրման և լուծման հնարավորությունը: Փիլիսոփայության գիտականության արժեքը պետք է փնտրել հենց իր անորոշության մեջ: Փիլիսոփայության մեթոդաբանությունը ուղղված է սովորական գաղափարների հիմքում ընկած անորոշություններն ու հակասությունները մեկնաբանելու և դրանք հասանելի դարձնելու մարդուն: Այն արտաքուստ չի կարող արձանագրել իր բարձրացրած գաղափարների հավաստիությունը, բայց ճշմարտության հասնելու համար առաջ է քաշում բազմաթիվ հիպոթետիկ հնարավորություններ: Հավերժ քննարկվող գերխնդիրները կանխորոշում և ազդում են համընդհանուր հարցերի առաջադրման և դրանց մեկնաբանման չափորոշիչները: Մասնավորապես, մարդկային գիտակցության ծագման, նրա գործունեության խնդիրները այստեղ մեկնաբանվում են ոչ այնքան գիտականության տեսանկյունից, որքան արժեքավորվում են աշխարհայացքային դիրքերից: Այսպիսի պրոբլեմների կառուցվածքային կատեգորիալ համակարգը «արտացոլում է օբյեկտիվ իրականության համընդհանուր կողմերը, ինչի հետևանքով դրանք դրսևորվում են որպես մտածողության ցանկացած գործընթացի անհրաժեշտ տրամաբանական տարրեր» [5, 93]:

Հավերժական պրոբլեմների ժամանակային հաղթահարումը չի սահմանափակվում միայն իրականության վերաբերյալ աշխարհայացքային գիտելիքի համակարգումով: Իբրև մտածելակերպ՝ աշխարհայացքը ոչ այնքան անհատական, որքան սոցիալական որոշակի շերտի, խմբավորման գաղափարաբանություն է, հետևաբար, այստեղ միահյուսվում և համակարգվում են ընդհանրական գիտելիքներն ու տեսությունները [4, 24]: Փիլիսոփայական պրոբլեմների առաջադրումը արդեն իսկ փոխհարաբերություն է ձևավորում իմացության սուբյեկտի և նրա կողմից արտացոլվող առարկայական իրականության միջև: Նման գործուն հարաբերությունը օբյեկտ և սուբյեկտ ենթահամակարգերի առջև բացահայտում է նոր կապեր ու հարաբերություններ, որոնք ամրագրվում են տեսապրակտիկ գործունեությամբ: Եթե տեսությունը գիտական գիտելիքի զարգացման վերջնական նպատակն է, ապա պրոբլեմի ձևակերպումը գիտելիքի ստացման նախնական փուլն է:

Պրոբլեմի բացահայտման և ամրագրման նախափուլում իմացության սուբյեկտը փորձում է այն լուծել արդեն հայտնի մեթոդներով և ստուգված գիտական համակարգերի միջոցով: Մակայն եթե լուծման համար փաստական նյութը բավարար չէ, ստեղծվում է արտաքուստ անլուծելի հակասություն: Այդ պահից պրոբլեմը արժեքավորվում է գիտականորեն, և սկսվում է նրա հիպոթետիկ հետազոտության և փորձնական հաստատման նոր շրջափուլը: Գիտելիքի ճշմարտության օգտին բերվում են ապացուցողական փաս-

տարկներ և հիմնավորումներ: Որքան ծավալուն և հիմնավոր են փաստարկները, այնքան անվիճելի է տեսության հիմնավորվածությունը: Սակայն փիլիսոփայական գիտելիքում այն առավելապես կրում է վերացարկված բնույթ, թեպետ տվյալ հակասության հաղթահարման գործում զգալի դեր են կատարում էմպիրիկ-փորձնական ծագում ունեցող հիմնադրույթները, որոնք որոշ չափով բացահայտում են պրոբլեմի երանգներն ու ծավալը: Նման պարագաներում դեռևս վաղ է արձանագրել գերխնդրի կամ պրոբլեմի միջուկի լուծման մասին: Այն պետք է անցնի հետազոտության հաջորդական փուլերով՝ անընդհատորեն հեռանալով գիտելիքի փորձնական համադրումից՝ մնալով վերացարկումների և ենթադրությունների շրջանակներում:

Փիլիսոփայական պրոբլեմները չունեն վերլուծության և հետազոտության միարժեք ընթացք: Իմացությունը հավերժական խնդիրների հակասությունները հաղթահարելու ընթացքում ոչ միայն օգտվում է արդեն հայտնի, գիտականորեն հիմնավորված մեթոդներից և հնարներից, այլև մշտապես կատարելագործում է հետազոտական իր գործիքակազմը: Հետևաբար, ամեն մի նոր պրոբլեմի կամ նույն գերխնդրի ժամանակային նորովի առաջադրումը և լուծումը որոշակիորեն կրկնում է նախորդների մոդելավորման ընթացքը և նաև՝ մերժում: Առաջին դեպքում խնդիրը քննարկվում է գիտական հետազոտության պրոբլեմ-հիպոթեզ-տեսություն շղթայի տրամաբանության մակարդակում, մյուս դեպքում հայտնի ձևաչափը այլևս անկարող է բավարարել նոր պահանջները: Հետևաբար, փիլիսոփայական պրոբլեմների շրջափուլային հաճախականությունը հարստացնում է թե՛ փիլիսոփայական գիտելիքը մասնավորապես և թե՛ մարդկային իմացության որոնողական հնարավորություններն ընդհանրապես, բացահայտում ճանաչողության հնարավորությունների նոր եզրագծերը:

Փիլիսոփայական գիտելիքի արտածումը գործընթաց է, որը ներառում է գիտական տրամաբանական հետազոտության հաջորդական փուլերը, կատարում դրանց օգնությամբ ստացած գիտելիքների տիպաբանական դասակարգում, իրականացնում է տեսությունների երբեմն վերացարկված ստուգում և արժևորում է փորձնական արդյունքները: Սկզբունքորեն գիտելիքի ճշմարտության փնտրտուքի նման ընթացքն սկսվում է փիլիսոփայական գերխնդրի ճշգրիտ առաջադրումից. արդյունքում ստեղծվում է խիստ պրոբլեմային իրավիճակ, որի լուծումը չի հանգում ո՛չ կոնկրետ գիտական հիմնադրույթներին և ո՛չ էլ գիտելիքի բացահայտման ավանդական ձևերին: Հավերժական պրոբլեմների առաջադրման ընթացքում իմացությունը հեռանում է մտածողության ստանդարտ ձևերից և որոնում է խնդրի վերլուծության նոր ընթացակարգ:

Այսպիսով, փիլիսոփայական պրոբլեմների և տեսությունների անընդհատական փոխակերպումը մշտապես նորովի է առաջադրում թե՛ բուն փիլիսոփայական գիտելիքի և թե՛ փիլիսոփայության ու հասարակական այլ գիտու-

թյունների հարաբերակցության հարցերը: Հավերժականության սկզբունքը փիլիսոփայական գիտության զարգացման յուրաքանչյուր աստիճանին ճշմարտության նոր բովանդակություն է ամրագրում, սակայն այն չի դառնում ավարտուն համակարգ: Անկարելի է ենթադրել, որ փիլիսոփայությունը կարող է լուծել բոլոր պրոբլեմային իրավիճակները և ստեղծել իրականության վերաբերյալ գիտական հավաստի, բոլոր ժամանակների համար ավարտուն պատկեր: Փիլիսոփայական տեսությունը հայացքների և գաղափարների մի համակարգ է՝ մեզ շրջապատող աշխարհի և մարդու կողմից այդ աշխարհի իմացության մասին: Հետազոտության դաշտում անսպառ են ինչպես մարդկային իմացության սահմանները, այնպես էլ նրա կողմից աշխարհի յուրացման հնարավորությունները: Ավելին՝ իրականության իմացությունը՝ իբրև հավերժական պրոբլեմ, ժամանակ առ ժամանակ մանրամասնատվում է հետազոտության մասնավոր և անկախ բնագավառների: Եվ այստեղ փիլիսոփայությունը գործադրում է բացառապես իրեն հատուկ մեթոդաբանական մի հնար ևս. նոր չափանիշով և սկզբունով համակարգում է մասնավոր գիտական և աշխարհայացքային խնդիրները:

Լուծված պրոբլեմները տեսականորեն հաստատվում են այն ժամանակ, երբ գործնականում հաստատվում են: Սակայն փիլիսոփայության պարագայում լուծվում են առավելապես հարակից հարցերը, մինչդեռ պրոբլեմի միջուկը միշտ հետագա քննարկումների համար մնում է բաց և անմեկնելի: Փիլիսոփայական գիտելիքի պրոբլեմատիկայի մեջ ազատ մուտք կարող են ունենալ բնագիտական շատ պրոբլեմներ՝ գոյի ընդհանրացման որոշակի աստիճանի բարձրացվելու դեպքում: Այդ ընթացքում պրոբլեմի կենտրոնական հարցը վերացարկվում և դառնում է փիլիսոփայական՝ չզրկվելով բնագիտական երանգից:

«Փիլիսոփայության առանձնահատկությունը և տարբերությունը այլ գիտություններից այն է, որ փիլիսոփայությունն ինքն է ստեղծում իր համար անհրաժեշտ տրամաբանական հնարներն ու միջոցները» [2, 40]: Կոնցեպտուալ այդ ապարատով են պայմանավորված գուտ փիլիսոփայական, գոյաբանական, իմացաբանական և մեթոդաբանական ելակետային դրույթներն ու հավերժական պրոբլեմները: Մեզ շրջապատող իրականության այս կամ այն մակարդակի կոնկրետ օրինաչափություններն ուսումնասիրելիս պետք է դիմել կոնկրետ գիտությունների պրոբլեմատիկ համակարգին: Սակայն մարդկային միտքը դեպի իրականություն թափանցում և զենեացվում է ոչ միայն կոնկրետ գիտությունների միջոցով: Օբյեկտիվ աշխարհը մարդկային մտածողության մեջ ընկալվում է իբրև եզակիի, հատկականի և համընդհանուրի դիալեկտիկական փոխհարաբերություն և միասնություն: Սակայն առանձինը գոյություն ունի միայն այդ կապի մեջ, իսկ ընդհանուրը եզակիների համակցված ամբողջություն է: Այս միասնության մեջ փիլիսոփայությունը կոչված է կատարելու ընդհանուրի դերը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ փիլիսոփայությունը ոչ միայն գիտություն է, այլև աշխարհայացք, անհրաժեշտ ենք համարում արձանագրել այն փաստը, ըստ որի՝ աշխարհայացքային հարցերը չունեն միանշանակ լուծումներ: Փիլիսոփայական աշխարհայացքը և դրա գործնական ստուգումն ունեն տեսական բնույթ, հետևաբար՝ այստեղ գիտելիքն ստանում է համընդհանուր տեսք և չունի միարժեք հաստատում: Ցանկացած փիլիսոփայական ուղղություն կամ տեսություն գոյություն ունի այնքանով, որքանով կա նրա հակոտնյան: Ուստի փիլիսոփայական այս կամ այն տեսական դրույթի հաստատումը հակադիր տեսության մասնակի ժխտումն է: «Փիլիսոփայության գոյության ձևը իրարամերժ փիլիսոփայական ուսմունքների պայքարն է, իսկ նրա պատմությունը՝ իրարամերժ փիլիսոփայական ուսմունքների պատմությունը» [3, 16]: Ահա թե ինչու փիլիսոփայական տարբեր ուղղությունների կողմից գիտելիքի տեսական համակարգման ժամանակ հակադիր պատասխաններ են տրվում միևնույն աշխարհայացքային խնդիրներին ու հարցերին: Սա չի նշանակում, որ հավիտենական այդ խնդիրների քննարկումն անիմաստ է: Փիլիսոփայական յուրաքանչյուր համակարգի զարգացումը, առկա տեսության նորովի մեկնաբանումը անհրաժեշտաբար ստիպում է, որ հակոտնյա ուղղությունը ևս վերիմաստավորի իր գաղափարաբանությունը: Աշխարհայացքային այսպիսի հակադրումն ու պրոբլեմային նոր իրավիճակների ստեղծումը գիտական ճանաչողության օբյեկտիվ ընթացք է, քանի որ հակասական և մերժելի գործընթացի վերջնարդյունքում կուտակվում են նոր գիտելիքներ, կամ տեսական դրույթները խարսխվում և մեկնաբանվում են նորահայտ փաստերի և գիտելիքների հենքի վրա:

Հավերժական պրոբլեմները չունեն հիմնական ավարտուն շրջանակ և քանակական որոշակի չափ: Իրականության արտացոլման երբեմն շատ «անմեղ» թվացող տեսական դրույթները կարող են ստանալ փիլիսոփայական աշխարհայացքային խնդրի արժեքավորում, եթե դրանք կատարում են փիլիսոփայական գաղափարախոսության կամ ընդհանուր համակարգի հաստատման դեր:

Եզրակացություն: Գիտական գիտելիքը կառուցվածքային, մեթոդապես համակարգված տեղեկատվությունն է, որի հավաստիությունը հաստատվում է գործնական կիրառման ժամանակ: Գիտելիքի աղբյուրը պրակտիկան է, այն նաև պրոբլեմային իրավիճակների ծագումն ու հաղթահարման նախափուլն է: Ակնհայտ է, որ բոլոր կարգի տեսական գիտելիքների հիմքը փորձնական հաստատումն է, քանի որ իրականության մասին տեղեկատվությունն ստուգվում է գործնական փոխազդեցության պայմաններում: Եթե փորձնական ստուգումը հետապնդում է մասնավոր նպատակ, ապա գերխնդիրը ծագում է համընդհանուր գիտելիքի մեկնաբանման «անգորությունից»:

Բնագիտական և մասնավոր գիտությունների պրոբլեմների լուծումը միարժեքորեն հանգում է կոնկրետ տեսությունների ձևավորման, որոնց գի-

տական ճշմարտությունը բացահայտվում է գործնական կիրառման ժամանակ: Զգայական փորձը և տրամաբանական իմացությունը հստակեցնում են երևույթների ու գործընթացների փոխկախվածությունը, նմանությունն ու տարբերությունը:

Սկզբունքորեն չկան անլուծելի պրոբլեմներ: Կան տվյալ պահին չլուծվող և կեղծ պրոբլեմներ: Առաջինները ժամանակի ընթացքում կհաղթահարվեն, մինչդեռ մյուսների համար կպահանջվեն պրոբլեմային իրավիճակի ճշգրտում և ձևակերպում: Փիլիսոփայության պարագայում, հատկապես աշխարհայացքային հիմնասխնդիրների դեպքում, պրոբլեմը մարդկությանը հետապնդում է մշտապես: Աշխարհայացքը մարդկային խմբերի հավաքական պատկերացումներն են իրականության նկատմամբ և նրանում մարդու տեղի ու դերի վերաբերյալ: Որքանով որ իրականությունը փոփոխական է, նույնքանով քարացած չէ մարդկային ապրելաձևի տեսլական պատկերացումների համակարգումը: Ուստի յուրաքանչյուր պատմական դարաշրջանի նախկինում հաղթահարված պրոբլեմները վերստին դառնում են քննարկման առարկա: Այդպիսիք են մարդկային մտածողության հավերժական պրոբլեմները: Ահա թե ինչու փիլիսոփայական գիտելիքի զարգացմանը զուգընթաց փոփոխվում է հետազոտության պրոբլեմների շրջանակը: Այն հարստանում է ոչ միայն նոր խնդիրների մուտքագրմամբ, այլև հավերժ քննարկվող հարցերի նորովի դիտարկման և լուծման սկզբունքներով: Փիլիսոփայության կանոնադրության յուրահատկությունը պետք է փնտրել հավերժական այդ «անորոշության» մեջ: Եթե այն չի տալիս ավարտուն կամ հավաստի գիտելիք, այսուհանդերձ նոր սահմաններ է բացում մարդկային մտածողության առջև: Հետևաբար, փիլիսոփայական իմացությունը սահմաններ չունի. որտեղ ավարտվում է որևէ հավաստի գիտելիքի շրջանակը, այնտեղ ծագում է բոլորովին նոր խնդիր:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-311>

Գրականություն

1. Բրուսյան Գ., Փիլիսոփայական գիտելիք, Երևան, «Գիտելիք» ընկերության հրատարակչություն, 1981:
2. Մինասյան Ս., Գիտություն և աշխարհայացք, Երևան, «Հայաստան», 1977:
3. Շաքարյան Հ., Փիլիսոփայություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005:
4. Копнин П.В. Логические основы науки. Киев: Букинист, 1968.
5. Павлов В.Т. Логические функции категорий пространства и времени. Киев: Изд-во Киевского университета, 1966.

Вечные проблемы как фактор развития философских знаний

Гнел Тигранян

Резюме

Ключевые слова: вечные проблемы, философские знания, мировоззрение, теория, уникальные и универсальные знания

Вечные философские вопросы, которые определяют характер научной мысли и смысл художественного воображения, предстают в сознании людей в виде новых (актуальных) проблем при формировании порой мистических гипотез, но чаще – строгих научных теорий. Среди множества философских проблем можно назвать наиболее интересными следующие: проблема первоначала, проблема материального и идеального, проблема души и тела, проблема свободы и творчества личности, проблема смысла жизни, проблема истины. Относительно каждой из них существует свой перечень решений, предложенных философами той или иной эпохи. Научные исследования в сфере отдельных естественнонаучных и общественных наук предполагают единообразный процесс, в котором представленная проблема подвергается гипотетическому решению и формируется ее теоретическая база. В области философии этот механизм не действует. Философия не только наука, но и мировоззрение. Мировоззренческие проблемы не имеют однозначного и конечного урегулирования. Проблемы здесь носят вечный характер. Каждая историческая эпоха создает компактную систему, соответствующую уровню развития знаний и мировосприятия своего времени.

Однако в процессе дальнейшего развития «достоверная теория» сталкивается с новой проблемой, решая которую исследование проходит новый цикл. Эти переходные этапы аккумулируют неоспоримую систему знаний, однако, главный вопрос всегда остается открытым и нерешенным. Вечные проблемы питают науку новыми теоретическими положениями и создают новые основы и возможности для ее последующего развития. Это не только логика развития философии, но и логика развития науки в целом.

Eternal Problems as a Factor in the Development of Philosophical Knowledge

Gnel Tigranyan

Summary

Key words: *eternal problems, philosophical knowledge, worldview, theory, unique and universal knowledge*

The eternal philosophical questions that determine the nature of scientific thought and the meaning of artistic imagination appear in the minds of people in the pattern of new (actual) problems within the formation of sometimes mystical hypotheses, but more often – rigorous scientific theories. The following philosophical problems can be regarded as the most interesting: the problem of the beginning, the problem of the material and the ideal, the problem of soul and body, the problem of freedom and creativity of the individual, the problem of the meaning of life, the problem of truth. For each of them there is a list of solutions proposed by philosophers of a particular era. Scientific research in the field of natural and social sciences involves a corresponding process in which the presented problem is subjected to a hypothetical solution and its theoretical base is formed. In the field of philosophy, this mechanism does not work. Philosophy is not only a science, but also a worldview. Worldview problems do not have an unambiguous and final settlement. The problems here are eternal. Each historical epoch creates a compact system corresponding to the level of knowledge and worldview development of its time.

However, in the process of further development, the “reliable theory” faces a new problem, for the solution of which the study undergoes a new cycle. These transitional stages accumulate an undeniable system of knowledge; however, the main question always remains open and unresolved. Eternal problems feed science with new theoretical propositions and create new foundations and opportunities for its subsequent development. This is not only the logic of philosophy development, but also the logic of science development as a whole.

Ներկայացվել է 14.04.2023 թ.

Գրախոսվել է 20.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ЮРИСПРУДЕНЦИЯ, СОЦИОЛОГИЯ

JURISPRUDENCE, SOCIOLOGY

Արտաքին աշխատանքային միգրացիայի պատճառների հարցի շուրջ. հասարակական կարծիքի վերլուծություն

Անդրանիկ Շահինյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-321>

***Հանգուցային բառեր.** միգրացիա, միգրացիոն շարժունություն, ժողովրդագրական պատկերի խախտում, հասարակական կարծիք, միգրացիոն տրամադրություններ*

Ներածություն: Ներկայացվող հոդվածը իր մեջ բովանդակում է ՀՀ արտաքին միգրացիոն տեղաշարժերի պատճառների ուսումնասիրություն, որն իրականացվել է սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանության միջոցով: Հոդվածի շրջանակներում իրականացված հետազոտությունը ընտրանքային է, որտեղ պահպանված են սոցիոլոգիայում ընդունված չափանիշները: Սոցիոլոգիական հետազոտության ծրագրի ընտրանքում ընդգրկվել են ՀՀ Շիրակի մարզի 14 գյուղական և մեկ քաղաքային բնակավայրեր (տե՛ս աղյուսակ 1): Հետազոտության ընտրանքը կազմվել է՝ հաշվի առնելով տարածաշրջանային, մասնագիտական, միգրացիոն միտվածությամբ աչքի ընկնելու, ինչպես նաև սեռային ու տարիքային առանձնահատկությունները, որպեսզի հնարավոր լինի վեր հանել արժեքավոր և արդի տեղեկատվություն հետազայում միգրացիոն քաղաքականություն մշակելիս նկատի առնելու և գործածելու համար: Այդ կապակցությամբ խնդիր էր առաջացել գնահատել ՀՀ Շիրակի մարզի տնային տնտեսությունների զարգացման գործում միգրանտների ունեցած դերն ու նշանակությունը: Դրա հետ մեկտեղ, հարկ էր հասկանալ, թե վերջին տարիներին Հայաստանից աշխատունակ բնակչության արտահոսքը մեր հասարակության առաջ ինչպիսի գոյաբանական խնդիրներ էր ստեղծել մասնավորապես ժողովրդագրական անկման և բնաթափման (դեպոպուլյացիայի) հետ կապված: Խնդրո առարկայի շրջանակները ընդգրկում են նաև այն հարցը, թե որտեղ են ցանկանում մեկնել հայ երիտասարդները ներկա փուլում, և որոնք են միգրացիոն միտվածության պատճառները: Աշխատանքում տեղ գտած տեղեկությունները հեղինակի անձնական ուսումնասիրությունների արդյունքներն են, որոնք ստացվել են նախապես մշակված պլանների փուլային ստուգման և վերլուծությունների արդյունքում: Հեղինակի կողմից նախապես կազմված գործիքները անցել են փորձաշրջան, ստուգվել են կրթական գործընթացներում, ինչպես նաև ՀՀ Գյումրի քաղաքի միգրացիոն միտվածություն ունեցող 18-ից բարձր քաղաքացիների շրջանակներում: Ստացված տեղեկությունները ամբողջապես արտահայտել են թեմայի բովանդակությունը և հետազոտության ընտրանքով սահմանված նպատակները: Հետազոտության ինչպես նախնական, այնպես էլ երկրորդային տվյալ-

ները եղել են չափելի, ենթարկվել են վերլուծության գործիքային չափումներին և ապահովել են գնահատելի տեղեկատվություն ներկայացվող գիտական հոդվածի համար:

Հոդվածի շրջանակներում ձեռք բերված տվյալները արժեքավոր կլինեն գիտական և հասարակական լայն շրջանակների, մասնավորապես միգրացիայի հիմնախնդիրներով զբաղվող կառույցների համար:

Հոդվածի ուսումնասիրության նպատակն է՝ սոցիոլոգիական մեթոդաբանության միջոցով վեր հանել արտաքին աշխատանքային միգրացիայի պատճառները հայ հասարակության շրջանում: Պարզել, թե որ երկրներ են ցանկանում մեկնել ՀՀ բնակիչները՝ հստակեցնելով դոնոր երկրում՝ ՀՀ-ում միգրացիան պայմանավորող հանգամանքները, հասկանալով ազգաբնակչության միգրացիոն միտվածությունը, քննարկել դրանց հաղթահարման կամ սրությունը մեղմելու հնարավորությունները, մշակել ու ներկայացնել կառուցողական առաջարկություններ: Հետազոտության նպատակն է եղել ստանալ վիճակագրական տվյալներ, որոնք ներկայացուցչական կլինեին մարզային մակարդակով: Հաշվի առնելով միգրացիոն հոսքերը չափելու ու միգրացիայի գործընթացը բացատրելու երկակի նպատակը՝ օգտագործվել է կիրառական սոցիոլոգիական միգրացիոն հետազոտություն, որով ստացվում է տեղեկատվություն անհատների ու տնային տնտեսությունների վերաբերյալ:

Նախնական հիպոթեզներ

1. վերադարձող աշխատանքային միգրանտների մրցունակությունը հայկական աշխատաշուկայում բարձրանում է,
2. միգրացիայի դիմող անձանց պատճառները հիմնականում հոգեբանական են՝ պայմանավորված հետպատերազմական վախերով և բացասական սպասումներով:

Հոդվածի հետազոտության օբյեկտ են հանդիսացել 18-55 տարեկան ՀՀ այն քաղաքացիները, ովքեր պոստենցիալ միգրանտներ են կամ ունեն ուղիղ առնչություններ՝ արտաքին աշխատանքային միգրացիայի հետ կապված: Ներկայացվող թեմայով **ուսումնասիրության անհրաժեշտություն** առաջացավ՝ վերջին շրջանում աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրներով պայմանավորված, երբ հասարակության շրջանում սկսվեց անկայուն տրամադրություններ ու վախեր տարածվել: Այդ տրամադրություններն էլ՝ ավելի սաստկացան, երբ սկսվեց և դեռևս շարունակվում է ռուս-ուկրաինական պատերազմը: Հոդվածի շրջանում հարկ ենք համարել վերհանել այն հիմնական ու առանցքային խնդիրները, որոնք հասարակությանը ճնշում են և ակամա միգրացիոն տրամադրություններ են ստեղծում: Հոդվածի **հետազոտության ընտրանքը** հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում և, առավել կոնկրետ, Շիրակի մարզի գյուղական բնակավայրերից տեղափոխությունների պատճառականության պարզմամբ: Ուսումնասիրության ենթարկված բնակչությունը դիտարկվել էր որպես հստակ սահմանված և որոշակի,

իսկ հավանական ընտրանքը կատարվել է բնակչության հենց այդ հատվածից: Այնուամենայնիվ, սույն ընտրանքային հետազոտության մեջ առկա են առանձնահատուկ ուսուժաստիքավոր խմբեր. ներկայիս միգրանտները (ներգադաժներն ու արտագաղթածները), վերադարձած միգրանտները (այն միգրանտները, որոնք նախկինում ապրել են արտերկրում, բայց վերադարձել են), ներքին միգրանտներ և անձինք, որոնք միգրացիայի ուղին երբեք չեն բռնել (տեղաշարժվելու նրանց մտադրությունը գնահատելու որպես համեմատական խումբ): Հաշվի առնելով հիմնախնդրի յուրահատկությունները՝ իրականացվել է **խառը մեթոդներով հետազոտություն՝ քանակական հարցման (դեմատոդեմ), խորին հարցազրույցի, փաստաթղթերի ավանդական վերլուծություն և փորձագիտական հարցման (կիրառվել է նաև օնլայն հարցաթերթ) մեթոդները**: Քանակական հարցման ընտրանքը քվոտային է, ըստ սեռի (արական, իգական) և տարիքի (18-25, 25-35, 35-45, 45-55), սակայն ընտրանքային համախմբության սուբյեկտների ընտրությունը իրականացվել է պատահականության սկզբունքով, ընտրանքային համախմբությունը 342 է): Ընտրվել են 14 գյուղական և 1 քաղաքային բնակավայրեր, որտեղ և իրականացվել են դեմատոդեմ հարցումներ, ինչպես նաև բնակավայրերում ձեռք բերելով տվյալներ, իրականացվել են նաև հեռախոսային հարցումներ (կրկին տեղափոխությունների պատճառների ճշգրտման նպատակով): Փորձագիտական և խորին հարցազրույցների ընտրանքը տիպային է: Ընտրվել է 14 փորձագետ՝ ըստ գործունեության ոլորտի (ակադեմիական, պետական, մասնավոր): Խորին հարցազրույցներին մասնակից միգրանտները կամ առնչակից անձինք ընտրվել են հիմնականում քանակական սոցիոլոգիական հարցման մասնակիցներից: Մասնավորապես հարցման մասնակիցների չափանիշներն են մակարդակը (ցածր, միջին, բարձր), որը գնահատվել է Լայկերտի սանդղակով, և սեռը (արական, իգական):

Հարցաթերթը հիմնականում կազմվել է բաց հարցերով՝ իր մեջ բովանդակելով նաև տոկոսային ու թվային արժեքների վերհանում: Բացի վերոնշյալից՝ մենք մշակել էինք հարցաթերթ միգրացիայի հարցերով մասնագետ 14 փորձագետների հարցման համար: Հարցման ենթարկված հայ փորձագետները հիմնականում գիտնականներ էին՝ սոցիոլոգներ, քաղաքագետներ, տնտեսագետներ, սոցիալական աշխատողներ և միգրացիոն ծառայության աշխատակիցներ: Յուրաքանչյուր փորձագետի կարծիքն անանում է: Փորձագետների հարցման ժամանակ դեմ առ դեմ հարցման տարբերակից բացի կիրառվել է հարցաթերթիկն էլեկտրոնային փոստի միջոցով ինքնուրույն լրացնելու հնարավորությունը:

Հետազոտված ընդհանուր տնային տնտեսության ժողովրդագրական պատկերը, այդ թվում՝ տնային տնտեսության կազմը, տարիքը, ծննդավայրը, քաղաքացիությունը, ընտանեկան դրությունը և կրթությունը հողվածում ներկայացված են նպաստելու տարբեր միգրանտների և միգրացիայի հետ

առնչություն ունեցող տնային տնտեսությունների ընդհանուր պատկերի ու տիպաբանության ձևավորմանը:

Աղյուսակ 1

Ընտրանքում ընդգրկված բնակավայրերը (ՀՀ Շիրակի մարզ)

	Բնակավայրեր	Հարցված ընտանիքների քանակը	Տոկոս %
1	Գյումրիի քաղաք	103	30,1%
2	Աշոցք	60	17,5%
3	Միգավետ	15	4,4%
4	Սարազյուղ	10	2,9%
5	Ղազանյի	14	4,1%
6	Զույգաղբյուր	10	2,9%
7	Կարմրավան	10	2,9%
8	Հարթաշեն	7	2,0
9	Բերդաշեն	3	0,8
10	Արեգնաղեմ	3	0,8
11	Փոքրաշեն	15	4,4%
12	Մայիսյան	25	7,3%
13	Յողամարգ	15	4,4%
14	Թորոսգյուղ	17	4,9%
15	Ագատան	35	10,2%
	Ընդամենը	342	100,0

Աղյուսակ 2

Մասնակցածների սեռը

	Սեռ	Թիվ	Տոկոս %
1	Արական	135	39,47
2	Իգական	205	59,9
3	Նշված չէ	2	0,58
	Ընդամենը	342	100,0

Աղյուսակ 3

Մասնակցածների տարիքը

	Տարիք	Թիվ	Տոկոս %
1	18-25	120	35,08
2	25-35	90	26,3
3	35-45	92	26,9
4	45-55	27	7,89
5	55 և ավելի	13	3,8
	Ընդամենը	342	100,0

Մեր կողմից կազմված հարցաթերթի առաջին հարցին, թե ո՞րն է տեղից տեղ տեղափոխվելու հիմնական պատճառը, հարցվածների մեծամասնությունը նշել է «երեխաների որակյալ կրթության պատճառով»: Նշված հարցին հաջորդում էր՝ խնդրում ենք մանրամասնեք պատճառը, որտեղ գյուղական բնակավայրերի հարցվածների ճնշող մեծամասնությունը արտահայտել է դժգոհություն առ այն, որ ծայրամասային բնակավայրերում կրթության մակարդակը գնալով իջնում է, որի գլխավոր պատճառը միավորված դասարաններում դասապրոցեսների իրականացումն է: Հետազոտության ընտրանքով պայմանավորված՝ գյուղերից երեքի հարցման մասնակիցներն ընդգծել են, որ իրենց դպրոցներում առկա են երկկուսակետ, եռակուսակետ և անգամ քառակուսակետ դասարաններ (խոսքը վերաբերում է 3 կամ 4 տարբեր տարիքային խմբերի պատկանող աշակերտների՝ նույն դասաժամի ընթացքում միացյալ դասապրոցեսների անցկացմանը):

Հարցման մասնակիցների մեջ առկա են եղել կրթական բարձր մակարդակ ունեցող մարդիկ (խոսքը դեռևս գյուղական բնակավայրերի մասին է, բարձրագույն մանկավարժական կրթությամբ մասնագիտություններով), որոնք դժգոհել են՝ այլ պատճառ նշելով, մասնավորապես ցածր վարձատրվող աշխատանք, կրկին մատնանշելով սույն հիմնախնդիրը (միավորված դասարաններ), որը ուղիղ կապով բացասական ազդեցություն է ունեցել նաև ուսուցիչների աշխատավարձերի վրա՝ շատերին զրկելով գյուղական բնակավայրում միակ աշխատատեղի հնարավորությունից, որոշների դեպքում էլ իջեցնելով դրույքաչափը: Այնուամենայնիվ, որպես արտագաղթի պատճառ, ծնողները հիմնականում նշել են երեխաների կրթության ցածր որակը, որի պատճառով շատ տնային տնտեսություններ տեղափոխվել են այնպիսի բնակավայրեր, որտեղ նմանատիպ խնդիրներ առկա չեն (պահպանված են ընդունելի կրթական միջավայրի միսիմալ պայմանները): Հարցվողները ընդգծել են նաև այլ հիասթափեցնող պատճառներ, որոնք դեմոտիվացնող նշանակություն են ունենում տվյալ տարածաշրջանում ապրելու ու կենցաղավարելու համար: Մասնավորապես՝ քարտեզագրված և վերլուծության ենթարկված խնդիրների ցանկում առավել արտահայտվածներն էին՝ ռոռզման համակարգերի կատարելագործման, արոտավայրերի ջրաբխիացման, մշակութային հաստատությունների ստեղծման, երիտասարդների զբաղվածության կազմակերպման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ կենտրոնացված պայքարի և այլ կարևոր հարցեր:

Այս կոնտեքստում հարցվողներից ոմանք առանձնացրել են նաև աշխատանքի բացակայություն, մասնագիտական աշխատանքի բացակայություն, անցանկալի բարոյահոգեբանական մթնոլորտ, անորոշության զգացում և պապայի նկատմամբ:

«Ընդօրինակո՞ւմ են արդյոք հայ երիտասարդները օտար մշակույթի

տարրերը» հարցին հիմնականում պատասխանել են այո (90 %)՝ նշելով, որ շատ բացասական ազդեցություններ են իրենց հետ բերում Հայաստանի Հանրապետություն, որոնց պատճառով մեծանում են պատանիների և երիտասարդների շրջանում ասոցիալ վարքի դրսևորումները: Մնացյալ 10 %-ը կարծում է, որ տեղի կունենա քաղաքակրթությունների երկխոսություն, որը լավագույնս կանրադառնա մեր մշակույթի և հասարակության դրական տրամադրվածության վրա: Ըստ տոկոսային հարաբերակցության գնահատեք՝ «ՀՀ վերադարձած երիտասարդները արդյոք բարձր վարձատրվությամբ աշխատանք կգտնեն, թե՞ ոչ» հարցին ի պատասխան գրանցվել են հետևյալ արդյունքները. հարցման մասնակիցներից 5 անձ (1,46 %), մտածում են, որ ՀՀ վերադարձած երիտասարդների շրջանում բարձր վարձատրվող աշխատանք կարող է գտնել 25-35 %-ը: Նույն հարցի շրջանում 27 անձ (7,8 %) կարծում են, որ բարձր վարձատրվող աշխատանք կարող է գտնել 35-50 %-ը, 45 անձի կարծիքով (13,15 %) այդ մարդիկ կազմում են 50-75 %, 145 անձի կարծիքով (42,39 %) այդ մարդիկ կազմում են 75-95 %, իսկ 120 անձի կարծիքով (35,08 %) այդ մարդիկ ամբողջությամբ (100 %) ունեն հնարավորություն բարձր վարձատրվող աշխատանք գտնելու (*տե՛ս աղյուսակ 4-ը*):

Աղյուսակ 4

Առաջարկված տոկոսային արժեքները ըստ հարցի	Հարցման մասնակիցների ընդհանուր թիվը՝ 342 և բաշխվածությունը ըստ պատասխանների քանակի	Մտացված արդյունքների տոկոսային արժեքները %
10-25%	0	0
25-35%	5	1,46
35-50%	27	7,8
50-75%	45	13,15
75-95%	145	42,39
100%	120	35,08
	342	100,0

Անդրադառնանք այն հարցին, թե աշխատանքային միգրացիան ինչ խնդիրներ է առաջ բերում ընտանիքում և ներընտանեկան հարաբերություններում: Այդ հարցի պարզաբանման համար հարցվածներին նույնպես առաջարկվել էին դատողություններ, որոնց հետ համաձայն լինելու կամ չլինելու վերաբերյալ նրանք արտահայտել են իրենց դիրքորոշումները: Այդ դիրքորոշումների մեջ առանձնակի տեղ է գրավում միգրանտի և նրա ընտանիքի վրա այդ երևույթի թողած բացասական ազդեցությունը: Ընտանիքից միգրանտի երկարատև բացակայության և տարիներ շարունակ այլ երկրներում արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով սահմանափակվում են ընտանիքի

մյուս անդամների հետ նրա շփումները, որն էլ իր հերթին առաջացնում է հոգեբանական այնպիսի երևույթ, ինչպիսին կարոտն է: Այդ մտքի հետ համաձայն է եղել հարցման մասնակիցների 97.7 %-ը: Աշխատանքային միգրացիան, հարցվածների 90.1 %-ի կարծիքով, լուրջ բացասական ազդեցություն է թողնում առողջական վիճակի վրա: Օրական միջին հաշվով 10-12 ժամ, հաճախ առանց հանգստյան օրերի, ծանր ֆիզիկական աշխատանքը, անկանոն սնվելը և ոչ ճիշտ սանիտարահիգիենիկ պայմանները մի շարք հիվանդությունների առաջացմանն են խթանում: Մյուս կողմից՝ Հայաստանում տարեցտարի ավելանում է նաև ՄԻԱՎ/ՉԻԱՀ սեռավարակակիրների թիվը, որը, մասնագետների վկայությամբ, հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի մեկնող միգրանտների վարքով: Երիտասարդ և միջին տարիքի միգրանտներն այնտեղ ձեռք են բերում սեռավարակ հիվանդություն և վերադառնալուց հետո փոխանցում ընտանիքին: Հարցվածների 89.4 %-ը կողմնակից է այն կարծիքին, որ արտագնա աշխատանքի հետևանքով ընտանիքում լարվում են ամուսին-կին հարաբերությունները, 87.7 %-ը՝ ավելանում է ամուսնալուծվողների թիվը, 87,2 %-ը տուժում է երեխաների դաստիարակության գործը: Աշխատանքային միգրացիայի պատճառով խաթարվում են ընտանիքի ձևավորման կարևոր կենսափուլերը. ամուսնանալուց անմիջապես հետո արտագնա աշխատանքի մեկնելը, առաջին կամ երկրորդ երեխայի ծննդյան ընթացքում արտագնա աշխատանքի վայրում գտնվելը, երբեմն նաև երեխաների նշանադրությանը և ամուսնությանը չմասնակցելը բացասական ազդեցություն են թողնում ընտանիքի ամրության վրա: Դրա հետևանքով համայնքներում ավելացել է ամուսնալուծված, լքված ընտանիքների թիվը (*տե՛ս աղյուսակ 5*):

Աղյուսակ 5

Բացասական ազդեցություն	Ընդհանրապես համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն եմ	Կողմին համաձայն եմ	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Տուժում են ամուսին-կին փոխհարաբերությունները	2,3	7,6	33,1	56,3	0,8	100,0
Տուժում է երեխաների դաստիարակության գործը	1,3	10,9	28,9	58,3	0,5	100,0
Տուժում է ծեղերին և հիվանդներին անհրաժեշտ խնամքով ապահովելու հարցը	6,5	20,6	27,9	44,0	1,0	100,0
Ավելանում է ամուսնալուծվողների թիվը	2,1	8,6	32,8	54,9	1,6	100,0

Ավելանում է չամուսնացածների թիվը	2,9	8,6	38,0	49,2	1,3	100,0
Տուժում են արտագնա աշխատանքի մեկնողի բարոյական նորմերը	6,5	17,4	30,2	42,2	3,6	100,0
Տուժում է արտագնա աշխատանքի մեկնողի առողջությունը	1,6	7,0	35,2	54,9	1,3	100,0
Օտար միջավայրում մեծանում է նրան սպառնացող վտանգը	1,8	7,0	34,4	55,2	1,6	100,0
Ընտանիքում ուժեղանում է միգրանտի նկատմամբ կարոտը	5	1,0	25,0	72,7	0,8	100,0

Ըստ հարցվածների՝ այդ ընտանիքներում միգրանտներն ավելի քիչ դե-րակատարում են ունենում երեխաների սոցիալականացման գործընթացներում և դաստիարակության գործում: Միգրացիան իր ազդեցությունն է թողնում այդ ընտանիքների ժողովրդագրական վարքագծի վրա, որի հետևանքով ավելանում է չամուսնացած երիտասարդների թիվը: Աշխատանքային միգրացիան երիտասարդների համար դարձել է նաև հանրապետությունից արտագաղթի կարևոր միջոց, ըստ այդմ՝ Հայաստանում շատացել է «դատարկ բունի» նմանվող տարեց ընտանիքների թիվը: Դրանից տուժում է նաև ընտանիքում ծերերին և հիվանդներին անհրաժեշտ խնամքով ապահովելու հարցը:

Հարցին, թե ՀՀ-ից արտագաղթելու պարագայում ո՞րն է ցանկալի նպատակակետ երկիրը, որտեղ կցանկանայիք հանգրվանել, ստացել են հետևյալ արդյունքները (տե՛ս աղյուսակ 6-ը):

Աղյուսակ 6

	Երկրներ	Հարցված անձանց քանակը	Մտացված արդյունքները տոկոսներով %
1	ԱՄՆ	70	20,46
2	Ռուսաստանի Դաշնություն	65	19,0
3	Գերմանիա	54	15,78
4	Ֆրանսիա	47	13,74
5	Իտալիա	25	7,3
6	Եգիպտոս	20	5,8
7	Իրան	20	5,8
8	Կանադա	15	4,3
9	Հնդկաստան	14	4,09
10	Ճապոնիա	7	2,04
11	Ալժիր	5	1,46
		342	100,0

Այսպիսով, Հայաստանից այդ երևույթի հետագա մեղմացմանը կարող է նպաստել հանրապետությունում գոյություն ունեցող միգրացիայի դրող գործոնների կարգավորումը, այն է՝ աշխատունակ բնակչության շրջանում գործազրկության մակարդակի կրճատումը և նոր աշխատատեղերի ստեղծումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը և աղքատության հաղթահարումը: Դրանք կնպաստեն միգրանտների առաջնային կարիքների բավարարմանը, տեղում զբաղվածության բարձրացմանը և հանրապետությունից միգրացիոն հոսքերի կրճատմանը: Մյուս կողմից՝ աշխատանքային միգրացիայի կարգավորումը հիմք կարող է դառնալ սոցիալական մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես ամուսնալուծված, կոնֆլիկտային և լքված ընտանիքների թվի կրճատմանը:

Հարցված տնային տնտեսության անդամներից տասից ութը ունեցել է ընկերներ և (կամ) հարազատներ նպատակակետ երկրում՝ մինչև Հայաստանի Հանրապետությունից մեկնելը: Դա շատ մեծ թիվ է և պայմանավորված է Հայաստանի՝ միգրացիային վերաբերող երկարամյա պատմությամբ նախորդ XX դարում և ներկայումս: Մեծ սփյուռքի առկայությունը և վերջին երկու տասնամյակի ընթացքում մեկնումների շարունակական հոսքերը վստահեցնում են նորեկներին միգրացիայի ցածր վտանգի մասին և բացատրում միգրանտների կողմից կոնկրետ գտնվելու վայրի վերաբերյալ որոշում կայացնելու մասին երեք ուղու միջոցով. առաջին. նրանք ներկայացնում են տեղեկատվություն հյուրընկալող երկրի (տարածաշրջանի) աշխատանքային շուկայի մասին, երկրորդ. միգրանտների կենցաղային ծախսերն ավելանում են տվյալ վայրում առկա՝ էթնիկ ապրանքների թվի հետ մեկտեղ, երրորդ. միգրանտներն ակնկալում են, որ նախկին միգրանտներն իրենց կօգնեն տեղավորվելու հարցում:

Այդ ցանցի արտաքին գործոնների ազդեցությունը կարող է տարբերվել միգրանտների տարբեր տեսակների համար: Օրինակ՝ անկանոն կարգավիճակով միգրանտները կամ ոչ պաշտոնական աշխատանքային շուկաներում աշխատող միգրանտները կարող են ավելի շատ կախված լինել միգրացիոն ցանցերից, քան օրինական կարգավիճակով միգրանտները:

Աշխատանքային միգրացիայի հոսքը հաստատվում է այն փաստով, որ արտագաղթածների 79.3 %-ը մտադիր է եղել աշխատել արտերկրում մինչև ՀՀ-ից մեկնելը: Հարցված տնային տնտեսությունների անդամներից 71.5 %-ը ստացել է աշխատանքի խոստում՝ նախքան ՀՀ-ից մեկնելը, 4.4 %-ը՝ աշխատանքային գրավոր պայմանագիր և 1.1 %-ը՝ աշխատանք ստանալու այլ պայմանավորվածություն: Հարցվածների 22.9 %-ը չի ունեցել աշխատանքի որևէ տեսակի առաջարկ կամ դրա վերաբերյալ համաձայնություն:

Թվում է՝ ապագա միգրացիոն պլանները կախված են Հայաստանի Հանրապետության և հյուրընկալող երկրի սոցիալական և տնտեսական զարգա-

ցումից: 37.8 % արտագաղթածների մոտ առկա է 2024 թվականին վերադառնալու մտադրություն, 5.1 %-ը մտադիր է վերադառնալ 2025 թվականին, 10.8 %-ն ի վերջո վերադառնալու է (անհրաժեշտ է ընդգծել, որ հարցվածների ընդհանուր թվի 54.7 %-ը վերադառնալու մտադրություն ունի): 22.7 %-ի համար դա կախված կլինի իրավիճակի զարգացումից, 12.7 %-ը դիտարկում է ՀՀ չվերադառնալու հարցը, 5.1 %-ը մտադիր է վերամիավորվել իր ընտանիքի հետ հյուրընկալող երկրում, շատ փոքր թիվ (0.2 %-ը) դիտարկում է մեկ այլ հյուրընկալող երկիր վերաարտագաղթելու հարցը:

Վերադարձի հիմնական պատճառները ընտանեկան բնույթի են. դրանք են՝ ընտանիքի վերամիավորումը (34.9 %), ամուսնությունը (5.7 %), ընտանեկան այլ հանգամանքներ (9.9 %), միգրացիոն ծրագրի ավարտը (22.8 %), հյուրընկալող երկրում աշխատանքի բացակայությունը (12.9 %), աշխատանքի առաջարկը ՀՀ-ում (3.8 %), աշխատանքային վատ պայմանները (3.7 %), կրթությունը կամ որակավորումը (0,5 %), այլ պատճառներ (5,8 %):

Մինչդեռ միգրանտների մեծ մասը չի ընդունել ներկայիս բնակության վայրի քաղաքացիությունը, վերջին շրջանում արտագաղթած բնակչության մի մասը (6.8 %) արդեն ընդունել է քաղաքացիությունը:

Նրանց գերակշիռ մեծամասնությունը ուներ օրինական կարգավիճակ. նրանց բավականին մեծ մաս (երեքից երկուսը) ուներ միայն ժամանակավոր կամ ոչ մշտական գրանցում: Հյուրընկալող երկրում հարցվածների ընդհանուր թվի 4.9 %-ը անկանոն կարգավիճակ է ունեցել հյուրընկալող երկրում:

Տնային տնտեսության արտագաղթածները սովորաբար բնակվում են վարձակալած բնակարաններում/տներում (34.5 %), վարձակալած սենյակներում (23.7 %), հարազատի կամ ընկերոջ տանը (15.6 %), հանրակացարաններում (11.5 %), ոչ բնակելի կացարաններում (8.2 %) և առանձնատներում (5.1 %):

Ինչ վերաբերում է առողջության ապահովագրությանը, ապա նույնականացված արտագաղթածների ընդհանուր թվի 76.7 %-ի դեպքում այն բացակայել է, 6.1 %-ը ունեցել է մշտական ապահովագրություն, իսկ 12.6 %-ը՝ ժամանակավոր ապահովագրություն:

Ամփոփելով հոդվածի վերլուծության փուլը՝ նշենք, որ սույն հոդվածը մշակելու համար օգտագործվել է բազմափուլ վերլուծական շրջանակ: Տվյալների վերլուծությունը պարունակել է մեթոդների հավաքածու՝ հետազոտության միջոցով ստացված տվյալների (տեղեկատվության) հետ աշխատանքի համար: Տվյալների վերլուծության նպատակն ու խնդիրն է եղել՝ ստանալ ուսումնասիրվող հարցին վերաբերող այնքան տեղեկատվություն, որքան հնարավոր է: Արդյունքների մեծ մասը ստացվել է՝ կիրառելով վիճակագրական աղյուսակավորումներ, տրամադրելով ամփոփ վիճակագրական տվյալներ:

Հետազոտության արդյունքներով հաստատվել են **նախնական հիպոթեզները**՝ 1. վերադարձող աշխատանքային միգրանտների մրցունակությունը հայկական աշխատաշուկայում բարձրանում է, 2. միգրացիայի դիմող անձանց դրդապատճառները հիմնականում հոգեբանական են՝ պայմանավորված հետպատերազմական վախերով և բացասական սպասումներով:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների մասին հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս բնորոշելու վերջերս տեղի ունեցած միգրացիոն հոսքերը: Հայաստանի քաղաքացիների մեծածավալ արտահոսք է նկատվում տարբեր նպատակակետ երկրներ, չնայած որ Ռուսաստանի Դաշնությունը համարվում է գերակշռող նպատակակետը տասը միգրանտից իննի դեպքում: Ի տարբերություն դրան՝ Եվրոպական միության երկրներին բաժին է ընկնում միգրացիոն արտահոսքի 5 %-ից պակաս: Առկա փաստերը վկայում են, որ Հայաստանը երկու տարբեր միգրացիոն համակարգերի խաչմերուկում է՝ եվրոպական միգրացիոն համակարգի ու եվրասիական միգրացիոն համակարգի, այսինքն՝ պատկանում է երկուսին էլ, սակայն ներգրավման տարբեր չափերով:

Եզրակացություններ

Այսպիսով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի վերաբերյալ բարելավված տվյալների երկարամյա պահանջը՝ վերևում նշված գյուղական և քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների միջոցով փոքրիկ, սակայն արդյունավետ հնարավորությունն է ստեղծվում երկրում ճշգրիտ ու ներկա պահին անհրաժեշտ տվյալների հավաքման համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով տնային տնտեսությունների հետազոտության մասով արևկա սահմանափակումները՝ ծախսատարությունը և բարդությունը, Հայաստանի Հանրապետության շահերից է բխում՝ փորձել ու ավելի լավ զարգացնել իր տնօրինման տակ եղած վարչական տվյալների աղբյուրները: Այդուհանդերձ, հաշվի առնելով երկրում չգրանցված արտագաղթի գերակշռությունը՝ դա կարող է սահմանափակ լինել, քանի դեռ չկա նպատակակետ երկրների հետ համագործակցությունը: Լայնածավալ մասնագիտացված միգրացիոն հետազոտություններ անցկացնելուց բացի, պետք է կանոնավոր և հետևողական կերպով որոշակի միգրացիոն տեղեկատվություն ձեռք բերել տնային տնտեսություններում ընթացիկ հարցումներ անցկացնելու միջոցով: Անհրաժեշտ են հետազոտության որակյալ ընտրանքն ու հարցաշարի կառուցվածքը, ինչպես նաև այդ որակն ու մասնագիտական ուսումնասիրությունն ամրապնդելու համար անհրաժեշտ գործիքակազմի կիրառելիությունը: Առանց ամբողջ տարածքից ստացված միգրացիոն տվյալների ու ստանդարտացված վիճակագրության ամբողջական պատկերը կշարունակի աղոտ լինել, իսկ միգրացիոն տվյալ-

ների մասին արդյունավետ կերպով տեղեկացնելու կարողության մակարդակը՝ ցածր: Հաշվի առնելով նաև հողվածի շրջանակների սահմանափակությունը, մեր կողմից իրականացված աշխատանքի բովանդակությունը հնարավորին չափ ներկայացրինք սեղմված ձևաչափով, հետագայում կիրառելու նպատակով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-321>

Գրականություն

1. Մարգարյան Հ., Մարկոսյան Ռ., Խաչատրյան Ն., Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, ԵՊՀ հրատ., Երևան, 2016, 140 էջ:
2. Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունը Հայաստանում, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ), Հայաստան, ԵՊՀ հրատ., Երևան, 2016, 112 էջ:
3. Հարությունյան Մ., Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Երևան, Նաիրի, 2014, 648 էջ:
4. Պողոսյան Գ. Ա., Սոցիոլոգիական դեմոսկոպ, Հայաստանը հասարակական կարծիքի հայելում: Երևան, Լիմուշ, 2016, հատր 1, 840 էջ:
5. Погосьяна Г. А. Интеграция Репатриация: социально-экономический потенциал армянской диаспоры России: Ер.: Изд-во «Гитутюн» НАН РА, 2022, 196 с.

Изучение причин иностранной трудовой миграции РА в контексте анализа общественного мнения

Андралик Шагинян

Резюме

Ключевые слова: миграция, миграционная мобильность, демографическая разбивка, общественное мнение, миграционные настроения

Представленная статья содержит исследование причин внешних миграционных движений РА, проведенное с использованием методологии социологического исследования. Исследование, проведенное в рамках статьи, является выборочным, в котором сохранены стандарты, принятые в социологии. В выборку программы социологического исследования были включены 14 сельских и одно городское поселение Ширакской области РА. Выборка исследования составлена с учетом региональной, профессиональной, миграционной направленности, а также половозрастных особенностей, чтобы можно было извлечь ценную и актуальную информацию для дальнейшего рассмотрения и использования при разработке миграционной политики. В связи с этим возникла проблема оценки роли и значения мигрантов в развитии домохозяйств Ширакской области в РА. Вместе с тем необходимо было понять, какие экзистенциальные проблемы создал отток трудоспособного населения из Армении в последние годы, в частности, из-за демографического спада и депопуляции. В рамки этой темы входит и вопрос о том, куда хочет идти армянская молодежь на данном этапе и каковы причины склонности к миграции.

Информация, которая нашло место в работе, это результаты собственных исследований автора, полученные в результате поэтапной проверки и анализа заранее разработанных планов. Предварительно составленные автором инструменты прошли испытательный срок, были проверены в образовательных процессах, а также у граждан города Гюмри старше 18 лет, имеющих миграционную тенденцию. Полученная информация полностью отражала содержание темы и поставленные цели. Как предварительные, так и вторичные данные исследования были измеримыми, подверглись инструментальным измерениям анализа и предоставили оценочную информацию для представленной научной статьи.

Данные, полученные в рамках статьи, будут ценны для научных и общественных кругов, в частности для структур, занимающихся вопросами миграции.

Study of Foreign Labor Migration Causes of the RA within the Framework of Public Opinion Analysis

Andranik Shahinyan

Summary

Key words. *migration, migration mobility, demographic image violation, social opinion, migratory sentiments*

The article deals with a study of the causes of external migration tendencies of RA conducted in accordance with the methodology of sociological research. This research has a selective nature that preserves the standards used in Sociology. 1 urban and 14 rural settlements in Shirak Marz of RA were included in the sample of the sociological research. The sample survey is compiled with regional, professional, migration as well as gender and age characteristics so that valuable and relevant information could be extracted for further study and usage in the development of migration policy. In this regard, there was a problem of assessing the role and importance of migrants in the development of households in Shirak Marz. At the same time, it was necessary to understand what existential problems were formed by the outflow of the workable population from Armenia in recent years, particularly due to the demographic decline and depopulation. The scope of this topic also covers the question of where the Armenian youth currently wants to go and what are the reasons for the migration trend.

The outcomes of the author's empirical investigation, as mentioned in the document, were derived through systematic validation and analysis of pre-designed protocols. The instruments, crafted by the author, underwent rigorous testing and authentication in educational settings and among the population of 18-year-old migrants domiciled in the city of Gyumri, RA, as well as among the elderly. The report incorporates a comprehensive exposition of the pertinent issue and the delineated objectives of the research. The primary and secondary research data were subjected to instrumental measurements, systematically analyzed, and generated insightful inferences, paving the way for a thought-provoking scientific exposition.

The data, obtained in the framework of the article, will be valuable for scientific and public circles, for institutions dealing with migration issues.

Ներկայացվել է 26.03.2023 թ.

Գրախոսվել է 19.05.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЭКОНОМИКА

ECONOMICS

**Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի
«Տոհմային կայան» ՓԲԸ-ի անասնաբուժական արտադրանքի
արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության
բարձրացման հնարավորությունները**

*Սուսաննա Հարությունյան
Իրենա Հարությունյան
Լյուդմիլա Բարսեղյան
Գյուլչարա Գալստյան
Ռոզա Ավագյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-336>

Հանգուցային բառեր. *ինտենսիվության մակարդակ, համախառն արտադրանքի արժեք, համախառն արտադրանքի ելք, շահույթ, աշխատանքային ծախսեր, ֆոնդահատույց, շրջանառու միջոցների շրջանառելիության գործակից, կերային ռացիոն*

Նախաբան: Անասնաբուծությունը Արցախի հանրապետության գյուղատնտեսության ոլորտի առաջատար ճյուղերից է: Դրա զարգացումը կարևոր դեր ունի Արցախի տնտեսության զարգացման, երկրի պարենային անվտանգության ապահովման գործում:

Անասնաբուծությունը առանցքային նշանակություն ունի զբաղվածության, գյուղական բնակչության եկամուտների ձևավորման, ինչպես նաև երկրի արտաքին ու ներքին ապրանքաշրջանառությունում:

Հաշվի առնելով անասնաբուժական արտադրանքների արտադրության կարևորությունը՝ որպես հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքի կենսականորեն կարևոր օղակ՝ ներկայումս հրատապ է անասնաբուժական արտադրանքների արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացումը: Հետևաբար, հողվածի հետազոտության նպատակը ԱՀ Ասկերանի տոհմակայանի անասնաբուժական արտադրանքի արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացումն է:

Առաջարկված նպատակին հասնելու համար կարևոր են հետևյալ խնդիրների լուծումը.

- բացահայտել անասնաբուժական արտադրանքների արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները,
- վերլուծել տոհմակայանի անասնաբուժական արտադրանքների արտադրության ներկա վիճակը,

- բացահայտել թույլ տրված բացթողումները, ներկա պայմաններում անասնաբուժական արտադրանքների արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության անկման պատճառները,
- մշակել ու հիմնավորել տոհմակայանի անասնաբուժական արտադրանքների արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

1.1. Ընկերության բնակլիմայական պայմանների համառոտ բնութագիրը

Ընկերությունը գտնվում է Ասկերանի շրջանում, որը զբաղեցնում է ԱՀ տարածքի կենտրոնական մասը, ընդգրկում է հիմնականում Կարկառ գետի ու դրա վտակների ավազանը: Շրջանի մակերևույթը լեռնային է: Համարյա ամբողջապես անտառածածկ է, ցածրադիր մասերում՝ թփուտածածկ:

Ասկերանի շրջանը գյուղատնտեսության զարգացման համար առավել նպաստավոր կլիմայական պայմաններ ունեցող շրջաններից է: Ունի բազմաճյուղ գյուղատնտեսություն՝ հացահատիկային, բանջարաբոստանային մշակաբույսերի մշակություն, այգեգործություն, անասնաբուծություն:

Կլիման չոր մերձարևադարձային է: Կլիմայի ձևավորման վրա ազդող հիմնական գործոններն են. դրա տարածքի աշխարհագրական լայնությունը, դրա հետ կապված արեգակի բարձրությունը, որն Արցախում կազմում է 73-74 աստիճան ամռանը և 27-28 աստիճան՝ ձմռանը: Շրջանի կլիմայի վրա առավել ներգործուն ազդեցություն են թողնում հատկապես Քուռ-Արաքսյան միջագետի հարթավայրային չոր մերձարևադարձային և Հայկական լեռնաշխարհի չոր ու ցուրտ օդային հոսանքները: Ջերմաստիճանի վրա ազդում են նաև լանջերի ու հովիտների դիրքը, քամիների ուղղությունը: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +16 աստիճան: Տեղումների միջին տարեկան քանակը 560 մմ է:

Ընկերություն են ներկրվել տարբեր ցեղատեսակների անասուններ, որպեսզի ֆերմերները հնարավորություն ստանան ընտրելու կաթնատու, մսակաթնատու կամ մսատու ցեղատեսակներ (ելնելով բիզնեսի ուղղություններից): Ներկրված կովերի միջին կաթնատվությունը իրենց հայրենիքում կարող է անցնել օրական 25-30 լիտրից՝ տարեկան ապահովելով 7500-8500 լ կաթ: Մեզ մոտ այդքան չի ապահովվում: Արդեն ներմուծված անասունները հարմարվողականության շրջան են անցնում, իսկ նման գործընթացում չեն կարող բարձր կաթնատվություն ապահովել:

1.2. Ընկերության արտադրատնտեսական ռեսուրսային ներուժը և արտադրատնտեսական գործունեության հիմնական ցուցանիշները

Նյութական բարիքների ստեղծման կարևորագույն նախադրյալը հողային ռեսուրսն է: Ուսումնասիրվող տոհմային կայանի հողային ֆոնդի կազմն ու կառուցվածքը ներկայացնենք աղյուսակով (աղյուսակ 1):

ԱՀ Ասկերանի շրջանի «Տոհմային կայան» ՓԲԸ-ն հողային ֆոնդի կազմն ու կառուցվածքը

Հ/հ	Ցուցանիշները	Տարիներ					
		2019 թ.		2020 թ.		2021 թ.	
		Հա	%	Հա	%	Հա	%
1	2	3	4	5	6	7	8
1.	Ընդամենը	136.94	100	136.94	100	136.94	100
2.	Որից գյուղատնտեսական նշանակության	131.5	96	131.5	96	131.5	96
3.	Խոտհարքներ	116.5	85	116.5	85	116.5	85
4.	Բնական արոտավայրեր	15	11	15	11	15	11

Աղյուսակից երևում է, որ գյուղատնտեսական հողերի շուրջ 85 %-ը խոտհարքներ են, որոնք հնարավորություն են տալիս մասամբ ապահովել կենդանիների կերի պահանջը, իսկ 15 հա արոտավայրերը օգտագործվում են արոտային շրջանում կենդանիների արածեցման համար: Ինչպես երևում է աղյուսակից, հողային ֆոնդի կազմն ու կառուցվածքը 2019-2021 թթ. փոփոխության չեն ենթարկվել:

«Տոհմային Կայան» ՓԲԸ-ն գործունեության հիմնական նպատակը շրջանում տոհմային տավարաբուծության զարգացումն է: Ներկայումս ընկերությունում բուծվում են ֆլեգվի, շվից և ջերսեյ տեսակի անասուններ:

Կովերի գլխաքանակի շուրջ 63 %-ը կաթնամսատու *ֆլեգվի* ցեղատեսակի կովեր են. այս ցեղատեսակի կովերի կաթնատվությունը բավականին բարձր է և կարող է անցնել 7500-8500 կգ սահմանը, իսկ միջին օրական քաշաճը հասնում է մինչև 1350 գրամի:

Սրանք լավ հարմարվում են ցանկացած կլիմայական պայմաններին, պահվում են արոտային և անկապ եղանակներով:

Ուսումնասիրվող ընկերությունում կովերի գլխաքանակի 33.6 %ը անգլիական ծագում ունեցող կաթնատու *ջերսեյ* ցեղատեսակի կովեր են. այս ցեղատեսակի կովերի տարեկան միջին կաթնատվությունը կարող է հասնել 5500 կգ-ի, իսկ կաթի յուղայնությունը 7 %-ի:

Ընկերությունը ձեռք է բերել նաև 12 գլուխ շվեյցարական ծագում ունեցող կաթնամսատու *շվից* ցեղատեսակի երինջներ: Սրանց տարեկան միջին կաթնատվությունը հասնում է 4500 կգ-ի, իսկ կաթի յուղայնությունը բավականին բարձր է: Ընկերությունում տոհմային գործի դրվածքը շատ խիստ է, չնայած նրան, որ չունի արտադրող ցուլեր, այդ կովերի բեղմնավորումը կատարվում է միայն արհեստական ճանապարհով և արտասահմանից ներկրվող բարձր-

որակ սերմնահեղուկով: Արդյունքում կովերի ստերջության մակարդակը բավականի ցածր է. ծնելիության միջին մակարդակը 95 % է:

Բացի կաթի վաճառքից՝ տնտեսությունը զբաղվում է մինչև 1 տարեկան մատղաշ և 1-2 տարեկան երինջների կենդանի վաճառքով: Տարեկան միջին հաշվով ստացվում են 40-50 գլուխ մատղաշ և 10-15 գլուխ երինջներ: Ցուլիկներին և էգ մատղաշի մի մասը վաճառում են մինչև 1 տարեկանը, երբ դրանց կենդանի քաշը հասնում է մինչև 160 կգ-ի, իսկ երինջների կենդանի քաշը հասնում է 300 կգ-ի:

Ընկերությունում բուծվող կովերի կաթնատվությունը բավականին բարձր է, ինչը պայմանավորված է կովերի ցեղատեսակներով, մարգագետինների առկայությամբ և օպտիմալ կերային ռացիոնով կերակրմամբ: Մեկ գլխի միջին կաթնատվությունը տատանվում է 74-80 ց սահմաններում:

Ընկերությունում խոշոր եղջերավորները պահվում են արոտամսուրային եղանակով. 6 ամիս կենդանիները գտնվում են արոտային, իսկ մյուս 6 ամիսներին՝ մսուրային շրջանում: Մսուրային շրջանում կովերին և երինջներին պահում են անկապ բոքսային պահվածքով, իսկ մատղաշները մշտապես գտնվում են բացօթյա եռապատ պահոցներում:

Կթի աշխատանքները կատարվում են անմիջապես անասնագուրմի ներսում՝ DeLaval MMU – 2 կթի ագրեգատների միջոցով:

Մսուրային շրջանում կենդանիներին անհրաժեշտ կերերը կուտակվում են ամռան ամիսներին: ԽԵԱ կերաբաժինը բաղկացած է չոր խոտից, սիլոսից և համակցված կերերից: Չոր խոտը և սիլոսը կուտակում են ընկերության տրամադրության տակ եղած գյուղալիտան հողատարածություններից, իսկ համակցված կերերը ձեռք են բերում տեղական շուկայից: ԽԵԱ օրվա կերաբաժինը մսուրային շրջանի 6 ամսվա ընթացքում տարբեր սեռահասակային խմբերի համար կազմված է տարբեր քանակի կերերից:

Գյուղատնտեսական արտադրության հիմքը և զարգացման կարևոր նախապայմանը հանդիսանում է ճյուղին անհրաժեշտ նյութադրամական ռեսուրսների առկայությունը: Դրանց մեջ գլխավոր տեղը պատկանում է արտադրության միջոցներին:

2021 թ. դրությամբ ընկերությունը իր տրամադրության տակ ունեցել է 2 միավոր USS 82 մակնիշի տրակտոր, ԿՍԼ 2.1 մակնիշի մեկ միավոր խոտհնձիչ: Դրանք բավարար են գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին կատարելու համար:

Բացի հիմնական միջոցներից՝ կայանը իր տրամադրության տակ ունի նաև 316.0-380.0 մլն դրամի շրջանառու միջոցներ, որոնց մեջ մեծ մասնաբաժին են կազմում մատղաշները (42-50 %) և կերերը (38-48 %):

Ընկերությունում հիմնական և շրջանառու միջոցների առկայության մասին պատկերացում կազմելու համար ներկայացնենք աղյուսակ 2-ը:

Խնայատի «Տոհմային կայան» ՓԲԸ –ում առկա հիմնական միջոցները

Հ/հ	Անվանումը	Չափ. միավ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.
1.	Անվավոր տրակտոր՝ MT3 82	հատ	2	2	2
2.	Խոտհնձիչ՝ KCL 2.1	հատ	2	2	2
4.	Գոմաղբի հեռացման ագրեգատ՝ TCH-2Ե	հատ	1	1	1
5.	Կթի ագրեգատ՝ DeLaval MMU 2	հատ	14	14	14
6.	Պահեստարաններ, ընդամենը	խոր. մ	4239.75	4239.75	4239.75
	որից՝ համակցված կերերի	խոր. մ	550.21	550.21	550.21
	կոշտ կերերի (խոտ)	խոր. մ	1782.24	1782.24	1782.24
	հյութալի կերերի (սիլոս)	խոր. մ	1907.3	1907.3	1907.3
7.	Անասնաշենքեր, ընդամենը	քառ. մ	4737.26	4737.26	4737.26
	որից՝ կովանոց	քառ. մ	2045.22	2045.22	2045.22
	հորթանոց	քառ. մ	878.3	878.3	878.3
	մատղաշի բացօթյա եռապատ պահոցներ	քառ. մ	215.28	215.28	215.28
8.	Ընդամենը	մլն դր.	1834.1	1834.1	1829.0

Աղյուսակով ներկայացնենք արտադրության միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակը ուսումնասիրվող ընկերությունում (աղյուսակ 3):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընկերությունը ապահովված է արտադրության հիմնական միջոցներով և շրջանառու միջոցներով: Ինչ վերաբերում է դրանց օգտագործման արդյունավետությանը, ապա կարող ենք ասել, որ հիմնական միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ ֆոնդահատույցը, բավականին ցածր է՝ 100 դրամ հիմնական միջոցների հաշվով ստացվել է 14.62-19.57 դրամի համախառն արտադրանք: Համապատասխանաբար բավականին բարձր է ֆոնդատարության ցուցանիշը. 100 դրամ համախառն արտադրանքի ստացման համար ծախսվել է 510-683 դրամի հիմնական միջոց: Հաշվարկները վկայում են այն մասին, որ հիմնական միջոցների օգտագործման արդյունավետությունը բավականին ցածր է: Ի տարբերություն հիմնական միջոցների՝ շրջանառու միջոցների օգտագործման ցուցանիշները համեմատաբար բարձր են:

**Հիմնական և շրջանառու միջոցների օգտագործման մակարդակը
«Տոհմային կայան» ՓԲԸ-ում**

Հ/հ	Ցուցանիշներ	Չափ. միավ.	Տարիներ			2021 թ. 2019 թ. նկ.-մբ, %
			2019 թ.	2020 թ.	2021 թ.	
1	Համախառն արտադրանքի արժեքը	մլն դր.	268.2	359.0	279.1	104.06
2	Հիմնական միջոցներ, որից՝	մլն դր.	1834.0	1834.0	1829.0	99.73
	գյուղ նշանակության արտադրական միջոցներ	մլն դր.	1705.6	1705.6	1701.0	99.73
3	Շրջանառու միջոցների տարեկան արժեքը	մլն դր.	380.1	330.8	315.8	83.08
4	Ֆոնդապահովվածություն	մլն դր.	12.97	12.97	12.94	99.77
5	Ֆոնդազինվածություն	մլն դր.	56.85	56.85	56.70	99.74
6	Ֆոնդահատույցը 100 դրամի հաշվով	դր.	14.62	19.57	15.26	104.38
7	Ֆոնդատարություն 100 դրամի հաշվով	դր.	683.82	510.86	655.32	95.83
8	Շրջանառու միջոցների շրջանառելիության գործակից	գործ.	0.706	1.085	0.884	125.21
9	Շրջապտույտի տևողությունը	Օր	517	336	413	79.88

Հաշվարկները ցույց են տալիս, որ շրջանառու միջոցների շրջանառելիության գործակիցը տատանվել է 0.7-1.1 սահմաններում, այսինքն՝ շրջանառու միջոցների շրջապտույտի տևողությունը բավականին երկար է և տատանվել է 336-517 օրվա սահմաններում: Անասնաբուժական ուղղվածություն ունեցող տնտեսության համար արտադրության միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշները բավականին ցածր են:

Աղյուսակով ներկայացնենք ընկերությունում առկա աշխատանքային ռեսուրսները, աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդի օգտագործման, աշխատավարձի ֆոնդի և միջին ամսական աշխատավարձի ցուցանիշները (աղյուսակ 4):

Աշխատանքային ռեսուրսների կազմն ու կառուցվածքը

Հ/հ	Ցուցանիշներ	Չափման միավոր	Տարիներ		
			2019 թ.	2020 թ.	2021 թ.
1.	Ընդամենը աշխատանքային ռեսուրսներ	մարդ	30	30	30
	որից գյուղատնտեսությունում	մարդ	26	26	26
	այդ թվում անասնաբուծությունում	մարդ	23	23	23
2.	Տարվա ընթացքում նրանք աշխատել են ընդամենը	մարդ-օր	8640	8400	6600
	Որից գյուղատնտեսությունում	մարդ-օր	7488	7280	5720
	Այդ թվում անասնաբուծությունում	մարդ-օր	6624	6440	5060
3.	Մշտական մեկ աշխատողը տարեկան աշխատել է	մարդ-օր	288	280	220
4.	Աշխատողների կազմը`				
	- բանվորներ (մշտական)	մարդ	26	26	26
	- կառավարման ապարատի աշխատողներ	մարդ	4	4	4
5.	Տարեկան աշխատավարձի ֆոնդը	մլն դրամ	61.1	61.1	72.6
6.	Միջին ամսական աշխատավարձը	հզ. դրամ	169.7	169.7	201.6

Անասնաբուծությունում աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդը կարող է հասնել մինչև 300 օրվա: Սակայն ընկերությունում աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդի օգտագործումը բավականին ցածր է և տատանվում է 73-96 % սահմաններում:

լեռնավահանների և սարավանդների լեռնագրական մարզերի միջև [2]: Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզը հիմնականում համընկնում է Փոքր Կովկասի կենտրոնական հատվածին, որը բաժանվում է երկու շարի՝ արտաքին և ներքին: Արտաքին շարի լեռնաշղթաներից Լոռու տարածքում են գտնվում Վիրահայոց և Գուգարաց լեռները, իսկ ներքին շարի լեռնաշղթաներից՝ Բազումի և Փամբակի: Սրանք իրենցից ներկայացնում են գեղատեսիլ զբոսաշրջային օբյեկտներ՝ հանգստի ակտիվ և պասսիվ ձևերը կազմակերպելու համար: Լոռու մարզի հյուսիսային, հյուսիսարևելյան և կենտրոնական շրջանները մտնում են ՀՀ հրաբխային լեռնավահանների և սարավանդների լեռնագրական մարզի Աշոցք-Ջավախքի ենթամարզի մեջ, որտեղ լեռնագրական կարևոր միավորներ են Ջավախքի լեռնաշղթան ու Լոռու գոգավորությունը: Այդ լեռնագրական հիանալի պայմանները էկոտուրիզմի, բեյսջամփինգի, բանջի ջամփինգի, գորբինգի կազմակերպման գործընթացի հիմք են հանդիսանում:

Լոռու մարզի աշխարհագրական նպաստավոր դիրքը, լեռնային ռելիեֆը, լեռնային ջրագրությունը, առանձնահատուկ հողաբուսական ձևերը նպաստավոր պայմաններ են ստեղծում նաև պասսիվ, առողջարարական, մարդու ուժերի վերականգնման ու հանգստի համար: Վայրի զբոսաշրջությունը, երբ զբոսաշրջիկը շրջապատված է բացառապես բնական բաղադրիչներով ու լանդշաֆտներով, ուրույն զբոսաշրջության կազմակերպման ձևերի հնարավորություն է ստեղծել, որից օգտվում են տեղի և օտարերկրյա զբոսաշրջիկները՝ սեփական նախաձեռնողական զբոսաշրջային գործունեությամբ:

Լեռնագնացությանը նպաստում են նաև լեռնային ավտոճանապարհները, որոնք ավելի հետաքրքիր են դարձնում ճանապարհագրերին կառուցված պատմական և իրադարձային զբոսաշրջային օբյեկտները: Դրանցից ամենահայտնին Պուշկինի լեռնանցքն է, որը կապում է Վանաձորը Ստեփանավանի հետ՝ անցնելով Բազումի լեռնաշղթայի ոլորապտույտ հատվածով: Այդ ճանապարհի վերջնահատվածում է գտնվում Պուշկինի հուշարձանը, որն իրենից ներկայացնում է պատմամշակութային կոթող, այն կարճատև հանգստի ու ճանաչողական զբոսաշրջության մի եզակի համալիր է՝ հարակից լանդշաֆտի հետ միասին:

Ֆիզիկաաշխարհագրական պայմանները Լոռիում բազմազան են, հաշվի առնելով ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները և հնարավորությունները՝ առանձնացրել ենք զբոսաշրջային հետևյալ ենթաշրջանները.


- I.** Ջավախքի լեռնամարգագետնային զբոսաշրջային ենթաշրջան,
- II.** Վիրահայոց լեռների,
- III.** Լոռվա տափաստանային, անտառամարգագետնային,
- IV.** Փամբակ-Դեբեդի հովտա-սարավանդային, անտառա-տափաստանային,

V. Բագում-Փամբակի լեռնահովտային տափաստանամարգագետնային:

Ջավախքի լեռնավահանը 3000-3300 մ բարձրությամբ ասիմետրիկ զանգված է՝ զառիթափ լանջերով: Չնայած բարենպաստ խոնավությանն ու ամառային ոչ շատ ցածր ջերմաստիճաններին՝ Ջավախքի լեռնավահանը միանգամայն զուրկ է անտառներից, սակայն լանջերը հարուստ են փարթամ մարգագետիններով: Մարգագետնային բուսականությունը գրավիչ է դարձնում Ջավախքի լեռնավահանի տարածքում զբոսաշրջության կազմակերպումը:

Վիրահայոց լեռներում լեռնագբոսաշրջային պայմաններով կարելի է առանձնացնել երկու գոտիներ՝ արևելյան և արևմտյան, որոնք բաժանվում են Լոքի լեռնանցքով: Արևելյան հատվածը՝ Լավվար-Լեջանի զանգվածը՝ Վիրահայոց լեռների ամենաբարձր մասն է [2]: Այդ լեռներն իրենցից ներկայացնում են հետաքրքիր երկրաբանական կառուցվածքներ՝ զառիթափ լեռնալանջերով, և գրավիչ են դարձնում զբոսաշրջության կազմակերպումը:

Հետազոտելով Լոռու մարզի ռելիեֆը, լեռնագրությունը՝ առանձնացրել ենք զբոսաշրջային հինգ ենթաշրջանները՝ հիմք ընդունելով ռելիեֆի բացարձակ բարձրությունները, լանդշաֆտային առանձնահատկությունները և բնական համակարգերը: Մշակել ենք դրանց ենթաշրջանային առանձնացման գոտիները և կազմել բացարձակ բարձրությունների ու ընդգրկման տարածքների գրաֆիկ՝ նկար 1:



Նկար 1. Լոռու մարզի լեռնագրական զբոսաշրջային ենթաշրջաններ

Վերլուծելով նկար 1-ում պատկերված զբոսաշրջային ենթաշրջանների առանձնահատկությունները՝ նկատում ենք, որ 5 ենթաշրջանների մեջ 3-ը զբաղեցնում են բարձր լեռնային գոտիներ, որոնց բացարձակ բարձրությունները տատանվում են 1500 մ-ից մինչև 3000 մ: Իսկ 3-րդ և 4-րդ ենթաշրջաններն աչքի են ընկնում համեմատաբար ավելի ցածր բացարձակ բարձրության նիշերով: Հաշվի առնելով ռելիեֆի և բացարձակ բարձրությունների բնութագիրը, դրանց հաղթահարելու հնարավորությունները՝ մշակել ենք լեռնագրական զբոսաշրջային արդյունավետ երթուղիներ:

Երթուղի 1. Վանաձոր-Բովաքար-Պաղակն (2073)-Ցիցքար (2133)-Դիդ 1. (1272 մ)-Արջազուխ (1911 մ),


Երթուղի 2. Վանաձոր-Դերակլի-Մայմեխ-Թեժ 1.,

Երթուղի 3. Վանաձոր-Պուշկինի 1-ք-Արջասար-Ուրասար-Լեջան-Առաքել,

Երթուղի 4. Վանաձոր-Զքնաղ 1.-Գոգարան-Գայլաքար-Աչքասար,

Երթուղի 5. Վանաձոր-Սպիտակ 1.-Ծիլքար-Կամար-Փամբակի 1.ք.[3]:

Մեր կողմից մշակած երթուղիների հիման վրա կազմել ենք Լոռու մարզի լեռնագրական զբոսաշրջության երթուղիների քարտեզ (տե՛ս նկար 2):



Նկար 2. Լոռու մարզի լեռնագրական զբոսաշրջության երթուղիների քարտեզ

Երթուղիների մշակման ժամանակ հաշվի ենք առել բացարձակ բարձրությունները, լեռնալանջերի դիրքադրությունները, երթուղիների անցանելությունը, զբոսաշրջային տարածքների տեղադիրքը, զբոսաշրջային հետաքրքրությունները, լանդշաֆտային գրավչությունն ու բնական տեսարանները: Կարևորել ենք նաև այցելությունների հաջորդականությունը նախապես ընտրած օբյեկտների համար և բազմաթիվ այլ առանձնահատկություններ որպես զբոսաշրջության սկիզբնավայր ընտրելով Վանաձոր քաղաքը:

Դրանք գրավիչ, մատչելի, հետաքրքիր, ճանաչողական են դարձնում լեռնագրական զբոսաշրջության կազմակերպումը՝ ստեղծելով առանձնահատուկ և գեղագիտական առաջնային տպավորություններ զբոսաշրջիկների մոտ Լոռու մարզի լեռնագրության նկատմամբ:

Լոռու մարզի լեռնագրական զբոսաշրջության կազմակերպումը հնարավորություններ է ստեղծում այդ ծառայությունների ապրանքայնացման ու վաճառքի համար: Լեռնագրական զբոսաշրջության կազմակերպումը կարող է լուրջ խթան հանդիսանալ այդ ոլորտի բիզնես միջավայրի ձևավորման գործընթացում: Մեր կողմից մշակված երթուղիների հիման վրա պետք է ձևավորել զբոսաշրջային փաթեթներ, որոնց վաճառքը կհանգեցնի բիզնեսի կազմակերպմանը զբոսաշրջության ոլորտում: Լեռնագրական զբոսաշրջությունը համեմատաբար ավելի քիչ է հայտնի զբոսաշրջիկներին, սակայն նախապես ներկայացվող լեռնագրական միավորներն ու բնական լանդշաֆտներն ավելի գրավիչ են դարձնում այդ զբոսաշրջային տեսակը: Այդ համատեքստում կարևոր նշանակություն ունեն գիտական հետազոտություններն ու գովազդը: Գիտական հետազոտությունները պետք է ամփոփվեն ժամանակակից թվայնացած քարտեզների ստեղծմամբ: Զբոսաշրջային բիզնեսի զարգացման ընթացքի վրա էականորեն ազդում են զբոսաշրջային ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցները, սննդի կազմակերպման ձևերը, քեմպինգները, ճանապարհային սանհանգույցների առկայությունը և այլն: Ակնհայտ է, որ այդ ենթակառուցվածքների կատարելագործումը դրականորեն է ազդում զբոսաշրջային բիզնեսի զարգացման ընթացքի վրա:

Կարելի է նշել նաև, որ զբոսաշրջային բիզնեսի զարգացման գործընթացում մեծ դեր է խաղում այդ ոլորտում դրսևորվող պետական քաղաքականությունը:

Ժամանակակից զբոսաշրջային շուկան խիստ հագեցած է, և անընդհատ ավելացող մրցակցությունը կարող է հսկայական ազդեցություն ունենալ զբոսաշրջության բիզնես միջավայրի վրա: Զբոսաշրջային բիզնեսի կառավարման և ապրանքի առաջխաղացման համար կարևոր է հասկանալ այն առանձնահատկությունները, որոնք գրավում են հյուրերին, ինչպես նաև վերլուծել բոլոր այն գործոնները, որոնք ազդում են մատուցվող ծառայությունների որակի վրա: Ներկայացված ուղիների ընտրությունը և դրանց արդյունավետ օգտագործումը կարող է դառնալ Լոռու մարզում զբոսաշրջային բիզնեսի կարևոր բաղկացուցիչ մաս և մարզում նոր հեռանկարներ բացել լեռնագրական զբոսաշրջության հետագա զարգացման համար: Մարքեթինգի ժամանակակից գործիքների կիրառությունը հնարավորություն է տալիս վաճառել ապրանքներ և ծառայություններ: Առավել արդյունավետ թիրախավորման և հաղորդակցման համար անհրաժեշտ է մշակված երթուղիները սոցիալական ցանցերի միջոցով ներկայացնել հաճախորդներին, որի արդյունքում նրանք կարող են կատարել ավելի տեղեկացված ընտրություն: Ուսումնասի-

րելով հաճախորդների նախասիրությունները՝ որակյալ և անվտանգ ծառայություններ մատուցելու արդյունքում հնարավորություններ կստեղծվեն իրականացնելու ծառայությունների օնլայն վաճառք: Լեռնագրական զբոսաշրջության զարգացումը Լոռու մարզի համար կարող է ունենալ սոցիալ-տնտեսական նշանակություն և ապահովել բնակչության զբաղվածության, ենթակառուցվածքների զարգացումը: Պետական և մասնավոր հատվածի համագործակցության, որակյալ կադրերի առկայության և որոշակի ներդրումների իրականացման արդյունքում Լոռու մարզը կարող է դառնալ ՀՀ լեռնագրական զբոսաշրջության ամենագրավիչ կենտրոններից մեկը:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ Լոռու մարզի լեռնագրական զբոսաշրջության բիզնեսի կազմակերպման հաջողությունները պայմանավորված են մի շարք ներքին ու արտաքին գործոններով: Ներքին գործոններից կարևոր նշանակություն ունի Լոռու մարզի 2017-2025 թթ. Ջարգացման ռազմավարության իրականացումը զբոսաշրջության բնագավառում [4]:

Արտաքին գործոնների շարքից հատկապես տարածաշրջանային ռազմական լարվածությունները, գործողությունները անվտանգային մարտահրավերներ ու ռիսկեր են պարունակում օտարերկրյա զբոսաշրջիկների այցելությունների տեսանկյունից: Անհերքելի փաստ է, որ մեր երկրի քաղաքական կայունությունը և տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական հավասարկշռությունը լուրջ հիմքեր կստեղծեն զբոսաշրջային բիզնեսի զարգացման հեռանկարների համար:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-417>

Գրականություն

1. Բաղդասարյան Ս., Խոեցյան Ա., Լոռու մարզի լանդշաֆտային պլանավորում և կառավարում, Երևան, 2021, 228 էջ:
2. Հայկական ՄՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971, 470 էջ:
3. Հայաստանի ազգային ստլաա, հատոր Ա, Երևան, 2007, 232 էջ:
4. <http://lori.mtad.am/files/docs/48282.pdf>

Туристический бизнес-анализ орографии Лорийского региона

*Сасун Багдасарян
Виктория Арутюнян*

Резюме

Ключевые слова: *орографический объект, рельеф, абсолютная высота, разработка маршрутов, подрайон, ландшафтная привлекательность, туристический бизнес*

Подводя итоги исследования, можно сделать вывод, что туризм стал одним из самых прибыльных видов бизнеса в мире. Он составляет около 10% всего мирового дохода. Количество туристов постоянно увеличивается: по данным Всемирной туристической организации (UNWTO), в 2022 году их количество составило более 900 млн. человек. Благополучие многих стран обусловлено развитием туризма. С этой точки зрения Республика Армения, взявшая курс на развитие туризма, не является исключением. Надо отметить, что в этом отношении Лорийский регион занимает лидирующие позиции. Развитие горного туризма в данной области способствует развитию туристического бизнеса РА. Согласно докладу статистического управления Министерства торговли и экономического развития РА, каждый турист, находящийся на территории Республики Армения в течение семи дней, включая авиаперевозки, оставляет в Армении приблизительно от 800 до 1000 долларов США. Если умножить это число на количество туристов (75 000), то получится около 75 миллионов долларов США. Оценивая влияние туризма на экономику страны, можно отметить, что удельный вес туризма в ВВП Армении колеблется от 6% до 8%. Доля Лорийского региона здесь довольно велика. Лорийский регион может увеличить рост доходов бюджета от туризма. Экспертные исследования подтверждают, что доходы от туризма могут увеличиваться примерно на 20% ежегодно. Однако туристический сектор Лорийского региона сталкивается с серьезными проблемами. Особое внимание уделяется решению этих проблем при разработке и реализации программ, предусмотренных государственной концепцией развития туризма в Армении. На сегодняшний день часть проблем успешно решена, в частности, решены острые транспортные проблемы, улучшилась ситуация в гостиничном секторе. Только за последние годы в РА восстановлено и открыто около 20 крупных гостиниц, серьезная конкуренция наблюдается и в ресторанном секторе.

Tourism Business Analysis of the Mountainous Topography of Lori Region

Sasun Baghdasaryan
Victoria Harutyunyan

Summary

Key words: *mountain-geographical object, relief, absolute height, routing, subdistrict, landscape, landscape landmark, tourism business*

Summarizing the results of the work, we can conclude that tourism has become one of the most profitable types of business in the world, it accounts for about 10% of the total world income. The number of tourists is constantly increasing, according to the World Tourism Organization (UNWTO), in 2022 their number will be more than 900 million people.

Many countries owe their prosperity to the development of tourism. From this point of view, the Republic of Armenia is not an exception in the direction of tourism development, where the Lori region occupies a leading position. The development of mountain tourism in the Lori region will stimulate the tourism business of the Republic of Armenia.

As we are informed from the statistical department of the Ministry of Trade and Economic Development of the Republic of Armenia, including the air cargo, each tourist who stays in the Republic of Armenia for seven days leaves Armenia for about 800 to 1000 US dollars. If we multiply this number by the number of 75,000 tourists, we get about \$75 million. Assessing the impact of tourism on the country's economy, it can be noted that the specific (unit) weight of tourism in Armenia's GDP ranges from 6% to 8%. From this perspective, the share of Lori region tourism is quite large.

Lori region can increase the growth of budget revenues from tourism. Expert studies prove that the revenues from tourism have tendency to increase by about 20% annually. However, the tourism sector of Lori region is facing serious problems. Special attention is paid to the solution of the problems in the development and implementation of tourism programs in Armenia planned by the state concept of tourism development. Today, some of the problems are being successfully solved, in particular, the acute transport problems have been solved, the situation in the hotel sector has improved. Only in recent years, about 20 large hotels have been restored and opened in RA, besides a serious competition is also observed in the restaurant industry.

Ներկայացվել է 27.03.2023 թ.

Գրախոսվել է 03.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Լոռու մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքների վերլուծություն

Գոհար Եղյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-427>

Հանգուցային բառեր. *հյուրընկալության ոլորտ, տեղավորման օբյեկտներ, վրանային հանգիստ, տրանսպորտային ծառայություններ*

Զբոսաշրջային ենթակառուցվածքը զբոսաշրջության կազմակերպման և սպասարկման, զբոսաշրջային ինդուստրիայի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ բոլոր տարրերի (կառույցներ, ցանցեր, համակարգեր և այլն) ամբողջությունն է:

Բնականաբար, որքան արդիական են ենթակառուցվածքները, այնքան ավելի հարմարավետ է զբոսաշրջիկն իրեն զգում ճանապարհորդության ընթացքում՝ ակտիվորեն օգտվելով հյուրանոցային տնտեսության և սննդի օբյեկտներից, կապի և հաղորդակցության արդի միջոցներից, ինչպես նաև սպասարկման ոլորտի բոլոր այն ծառայություններից, որոնք մատուցվում են տվյալ երկրում կամ տարածաշրջանում՝ ըստ պահանջարկի:

Հողվածն արդիական է, քանզի զբոսաշրջությունն այսօր Լոռու մարզի տնտեսական զարգացման գրավականներից է, ուստի անհրաժեշտ է առաջնահերթ ուսումնասիրել և գնահատել զբոսաշրջային ենթակառուցվածքների ներկայիս վիճակը, զարգացվածության և հագեցվածության աստիճանը, օգտագործման հնարավորությունները:

Նպատակը և խնդիրները. ուսումնասիրել և բացահայտել զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը խոչընդոտող գործոնները, վեր հանել հիմնախնդիրները, տալ լուծման ուղիներ և գործնական առաջարկություններ ներկայացնել համապատասխան մարմիններին:

Բնականաբար, Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման համար կարևոր նախապայման է զբոսաշրջային ամբողջական ենթակառուցվածքների առկայությունը: Ամբողջական ենթակառուցվածքներն իրենց մեջ ներառում են հյուրանոցների և տեղավորման այլ օբյեկտների, տրանսպորտային միջոցների, սննդի, առողջարանային, հանգստի, ժամանցի օբյեկտների, զբոսաշրջային օպերատորների և գործակալությունների գործունեությունն իրականացնող, ինչպես նաև գիղ-էքսկուրսավարների, էքսկուրսավար-թարգմանիչների և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունները:

Լոռու մարզում կան բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ու ռեսուրսները մարզում զբոսաշրջության զարգացման համար: Այն աչքի է ընկնում այցեքարտ հանդիսացող ինքնատիպ բնաշխարհով և պատմամշակութային

հարուստ ռեսուրսներով, որոնք զբոսաշրջային գրավչության հսկայական ներուժ ունեն: Մակայն անբավարար լուսաբանման և ենթակառուցվածքների թույլ զարգացվածության պատճառով երկար տարիներ մնացել է որպես զբոսաշրջային պասսիվ գոտի:

Վերջին տասնամյակում ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Լոռու մարզում, զբոսաշրջիկների ավելացող թվաքանակը խոսում է զբոսաշրջության աճող տեմպերի մասին, ինչին մեծապես նպաստել է նաև այդ ընթացքում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը:

ԼՄ զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի աջակցությամբ կատարվել է զբոսաշրջային ենթակառուցվածքային առաջնային տարրեր համարվող հյուրընկալության, հանրային սննդի կետերի, տրանսպորտային տնտեսության և զվարճանքի օբյեկտների արդի վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հյուրընկալության տնտեսությունը. զբոսաշրջության զարգացման համակարգում հյուրընկալությունը համարվում է կարևոր կառուցվածքային բաղադրիչներից մեկը: Հյուրանոցների արդյունավետ գործունեությունը որոշիչ է զբոսաշրջության զարգացման համար:

Լոռու մարզում հյուրընկալության օբյեկտների շարքին են դասվում հյուրանոցները, մոթելները, հյուրատները, հանգստյան տները, առողջարանները, մասնագիտացված ճամբարները, պանսիոնները, զբոսաշրջային, մանկապատանեկան և ճամբարային բնակատեղիները, զբոսաշրջային տները:

Մարզում ներկայումս գործում են մոտ 234 հյուրանոցային տնտեսություններ, որոնց շնորհիվ Լոռին կարող է գիշերակացով օրական ապահովել 3383-ից ավելի զբոսաշրջիկ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Լոռու մարզի հյուրանոցային տնտեսությունը (ըստ Լոռու մարզի ՁՄՎ բաժնի՝ 2022 թ. ներկայացրած պաշտոնական տվյալների)

Տեսակը	Քանակը	Մենյակների թիվը	Ննջատեղերի թիվը
Հյուրանոց	23	272	690
Հյուրատուն	167(9 բի ենդ բի)	461	1084
Հանգստյան տուն	29	496	1178
Վրանային (քեմպինգ, գլեմփինգ)	14	75	186
Առողջարան	1	120	245
Ընդամենը	234	1424	3383

Ըստ 2022 թ. ԼՄԶԾՎ բաժնի ներկայացրած տվյալների՝ զբոսաշրջային ակտիվ կիսամյակում (մարտից օգոստոս ամիսների 184 օրերում) մարզի հյուրանոցային տնտեսությունները կարող են գիշերակացով ապահովել ավելի քան 622472 զբոսաշրջիկի:

Իհարկե, այս տվյալները և դրանցով գնահատելը ամբողջական չեն, քանի որ ոչ բոլոր հյուրանոցային տնտեսություններն են պատասխանել հարցումներին (օրինակ, մարզի 23 հյուրանոցից հարցմանը պատասխանել են 21-ը): Մյուս կողմից էլ՝ զբոսաշրջիկների մի մասը գերադասում է գիշերել հարազատների, ընկերների կամ վարձակալած տներում:

Լոռու մարզում գործող հյուրանոցները հիմնականում գտնվում են բարձր վիճակում, սակայն հյուրընկալվողների համար խնդիր են բարձր գները:

Ինչպես մյուս մարզերում, Լոռիում նույնպես հյուրանոցային տնտեսության օբյեկտները մասնավոր տնտեսվարող սուբյեկտներ են, այսինքն՝ ձեռներեցներն իրենք են որոշում հյուրանոցային սակագները, որոնք շատ բարձր են:

Լոռու մարզի հյուրընկալման ինդուստրիայի հիմնախնդիրներից է հյուրանոցների մեծ մասի մոտ գովազդի և տուրօպերատորների հետ համագործակցության անբավարարությունը: Եզակիներից է Թուֆենկյան հյուրանոցային համալիրի՝ մարզում միակ չորս աստղանի Ավան-Չորագետի մասնաճյուղը, որն առաջատարն է թե՛ ննջատեղերի թվով՝ 110, թե՛ համացանցում իր ներկայացվածությամբ, թե՛ մատուցած ծառայությունների բազմազանությամբ և թե՛ զբաղվածության մեծ մասնաբաժնով: Այսպես, ըստ մեր կողմից կատարած հարցումների, եթե զբոսաշրջային պասսիվ սեզոնին հյուրանոցն ունենում է միջինը 20 % զբաղվածություն, ապա ակտիվ սեզոնին այն գերազանցում է ավելի քան 60 %-ը: Հյուրանոցին առավելություն են տալիս Դեբեդ գետի և շրջակայքի հրաշագեղ բնությունը, ձեռագործ զարդարանքներով ձևավորված հարմարավետ և նրբաճաշակ սենյակները, ռեստորանում մատուցվող տեղական մթերքներով պատրաստվող ազգային համեղ ուտեստները, բարձրակարգ սպասարկումը, ինչպես նաև ծառայությունների վաղ-օրոք ամրագրման ցանցերին ինտեգրվածությունը:

Ներկայումս հյուրանոցներին լուրջ մրցակից են հյուրատները՝ տնային պայմաններին ավելի մոտ իրենց կենսապայմաններով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին զբոսաշրջիկները գերադասում են հանգրվանել հյուրատներում (գիշերակացով հանգստի մեկնած զբոսաշրջիկների մոտ 1/3-ը [2]), որտեղ նրանք վայելում են բացարձակապես տեղական թարմ և որակյալ մթերքից պատրաստվող հայկական ազգային գյուղական ուտեստները և ջերմ ընտանեկան միջավայրը: Հարցումները փաստում են, որ զբոսաշրջիկները հիմնականում գոհ են հյուրատներում մա-

տուցվող սննդից, սպասարկման որակից, շենքային պայմաններից և սենյակների հարմարություններից: Սակայն, նրանց բացարձակ մեծամասնության համոզմամբ, խնդիր են հյուրատների բարձր գները և ժամանցի հնարավորությունների բացակայությունը [2]:

Հյուրատների թվաքանակով աչքի է ընկնում հատկապես Թումանյանի ենթաշրջանը, մասնավորապես՝ Դսեղի, Օձունի, Հաղպատի և Սանահինի համայնքները, որտեղ կենտրոնացած է ենթաշրջանի հյուրատների 80 %-ը (65 հյուրատնից՝ 52-ը) (ըստ Լոռու մարզի ԶԾՎ բաժնի՝ 2022 թ. ներկայացրած պաշտոնական տվյալների): Հյուրատների մեծ կենտրոնացումն այստեղ մեկնաբանվում է զբոսաշրջային մեծ հոսքերով, ինչը պայմանավորված է գեղատեսիլ բնությամբ և մեծ թվով պատմամշակութային կոթողների առկայությամբ:

Հյուրանոցների նման հյուրատների մեծ մասը ևս լիարժեք չի ներկայացված համացանցում, այդ իսկ պատճառով շատ քիչ տեղեկատվություն կա մարզի հյուրատներում տրամադրվող ծառայությունների տեսակների և որակի վերաբերյալ: Այսինքն՝ մարզում գործող հյուրատները ևս ունեն իրենց զբոսաշրջային արտադրանքը ճիշտ ներկայացնելու և ՀՀ զբոսաշրջային ոլորտում ճանաչելի դառնալու խնդիր [2]:

Ըստ ԼՄ զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի՝ հյուրատնային տնտեսությունների սպասարկման որակի և առհասարակ զբոսաշրջությանը հարող ոլորտների զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր են իրականացվում Գերմանական զարգացման գործակալության և Եվրամիության ջանքերով, ինչը կյուծի համայնքային ենթակառուցվածքների խնդիրները, որոնք դեռևս բազմաթիվ են՝ սկսած անանցանելի ճանապարհներից մինչև կոյուղու բացակայություն [2]:

Մարզում գնալով մեծ տարածում է գտնում վրանային հանգիստը՝ (քեմփինգ) հատկապես Ստեփանավանում, Ալավերդիում, Դսեղում (ՏՈւԿ), Հաղպատում (ԿԱՆԶԱՔԱՐ ՔԵՄՓՁՈՆԸ) և այլուր, ինչպես նաև գլեմփինգը (նույն վրանային հանգիստը, բայց հյուրանոցային մակարդակի սպասարկմամբ)՝ Վանաձորում (բուսաբանական այգու տարածքում), Շահումյան համայնքում, Դսեղում, Վահագնաձորում և այլուր:

Լոռու մարզը, շնորհիվ իր բնական և մարդածին ռեկրեացիոն բազմաթիվ ռեսուրսների, նպաստավոր տարածաշրջան է առողջարանային զբոսաշրջության զարգացման համար: Այդ գործում իր անգնահատելի տեղն ու դերն ունեն Վանաձորի «Հայաստան» առողջարանը՝ 120 սենյակով և 245 ննջատեղով, POTTERY HOUSE ARMENIA կավաբուծության կենտրոնը՝ Սանահինում, մեղվաբուծության կենտրոնը՝ Ալավերդիում:

Մարզում ներքին զբոսաշրջիկների թվաքանակի ավելացման արդյուն-

քում վերագործարկվել են մի շարք հանգստյան տներ, հանգստյան գոտիներ, պանսիոններ, ճամբարներ՝ Ստեփանավանում, Գյուլագարակում, Օձունում, Վահագնաձորում, Շահումյանում և այլուր (թվով 29, որից 22-ը՝ միայն Ստեփանավանի ենթաշրջանում, ինչը մեկնաբանվում է բարենպաստ բնակլիմայական պայմաններով):

Հասարակական սննդի ենթակառուցվածքները: Գաղտնիք չէ, որ ազգային խոհանոցը ժողովրդի յուրօրինակ այցեքարտն է, և զբոսաշրջիկները սնունդը համարում են հյուրընկալող երկրի ժողովրդի մշակույթին և ավանդույթներին ծանոթանալու միջոց:

Սննդի կազմակերպման առումով ևս Լոռու մարզում ավելացել է հանրային սննդի՝ ռեստորանների, բարերի, սրճարանների, արագ սննդի կետերի, սննդի այլ օբյեկտների քանակը, բարձրացել է նրանցում մատուցվող ծառայությունների որակը:

Լոռու մարզում գործում են 130 սննդի օբյեկտներ, այդ թվում՝ 45 ռեստորան (որից 21-ը՝ մարզկենտրոն Վանաձորում և նրա շրջակայքում), 39 արագ սննդի կետեր, 21 սրճարան, 25 ճաշարան և սննդի այլ օբյեկտներ (ըստ Լոռու մարզի ԶԾՎ բաժնի՝ 2022 թ. ներկայացրած պաշտոնական տվյալների), որոնք, հիմնականում պահպանելով ազգային խոհանոցի ավանդույթները, վերաթարմացնելով հին ու մոռացված ուտելիքները, զբոսաշրջիկներին առավելապես առաջարկում են հետաքրքիր ու համեղ ազգային ավանդական կերակրատեսակների լայն ընտրանի՝ դրանով նաև զարկ տալով գաստրոնոմիական զբոսաշրջության զարգացմանը:

Ըստ ՏԶՀ Կենտրոնի հարցումների արդյունքի՝ զբոսաշրջիկները հիմնականում գոհ են մնում մատուցվող սննդի որակից, սակայն այստեղ ևս խնդիր է գների բարձր մակարդակը:

Տրանսպորտային տնտեսությունը: Տրանսպորտը նույնպես զբոսաշրջության ծառայությունների կարևոր ենթակառուցվածքներից է, քանի որ ապահովում է զբոսաշրջիկների տեղաշարժն ըստ նպատակի:

ՀՀ Լոռու մարզի մրցակցային առավելությունն են դեպի Վրաստան տանող երկու միջպետական՝ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման և Մ3 Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհները և մարզի տարածքով անցնող Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը [2]:

Լոռու մարզի տրանսպորտային ենթակառուցվածքը ներառում է 891,1 կմ երկարությամբ ավտոմոբիլային ճանապարհներ, այդ թվում՝ 218,9 կմ՝ միջպետական, 264,3 կմ՝ հանրապետական, 407,9 կմ՝ մարզային (տեղական) նշանակության [3]:

Երկար տարիներ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Լոռու մարզում ավտո-

պարկը հիմնականում հնացած էր, իսկ ճանապարհները՝ խիստ անմխիթար վիճակում: Հարկ է նշել, որ վերջին շրջանում այս բնագավառում ևս զարգացման միտում է նկատվում. վերանորոգվում են ճանապարհները, ստեղծվում են ավտոմեքենաների վարձույթի ծառայություններ, որոնք իրենց պատկանող շարժակազմը համալրում են բարձրակարգ ավտոմեքենաներով, միկրոավտոբուսներով և զբոսաշրջային ավտոբուսներով՝ կահավորված որակյալ սպասարկման համար անհրաժեշտ հարմարություններով [1]:

Սակայն այս ոլորտում ևս կան բացեր: Թեպետ Վանաձոր քաղաքից Լոռու մարզի գյուղեր և քաղաքներ տանող տրանսպորտն աշխատում է բավականին լավ, սակայն դեռևս անբարեկարգ են մնում տեղական՝ միջհամայնքային ճանապարհները, ինչը դժգոհությունների տեղիք է տալիս ինչպես տեղի բնակիչների, այնպես էլ պատմամշակութային կոթողներ (որոնք առավելապես գյուղական համայնքներում են) այցելողների և հատկապես վերջին տարիներին մեծ մասսայականություն ստացող գյուղական զբոսաշրջիկների շրջանում: Բոլոր համայնքներում հիմնախնդիր է նաև ներհամայնքային ճանապարհների լուսավորության հարցը:

Հանգստի և զվարճության ենթակառուցվածքները: Մարզում այս բնագավառում ևս նկատվում է առաջխաղացում: Զբոսաշրջիկների ժամանցն ապահովելու, սուր զգացողություններ, դրական հույզեր և անմոռանալի տպավորություններ ապահովելու համար ստեղծվում են զվարճության օբյեկտներ, կազմակերպվում տարբեր միջոցառումներ:

Զվարճությունների արդյունաբերությունում ընդգրկված են ինչպես այցելություններ թանգարաններ (Հովհ. Թումանյանի տուն-թանգարան, Ստ. Զորյանի տուն-թանգարան), պատկերասրահներ, պատմամշակութային վայրեր, այնպես էլ հետաքրքիր ժամանցների մասնակցություն՝ ժամանցային կենտրոններում և մեծ հետաքրքրություն առաջացնող օբյեկտներում: Դրանց շարքին են դասվում ՏՈՒԿ-ը (Դսեղ), Գեղագիտության ազգային կենտրոնը (Վանաձոր), վարպետ Բոգդանի արվեստանոցը (Վանաձոր), կավի տունը (Մանահին), Կժեր գեղարվեստի սրահը (Վանաձոր), Հեքիաթի տունը (Փամբակ), Զարնի-Պարնին (Հաղպատ), Մենձ Էրի քարայրը (Ալավերդի) և այլն: Կազմակերպվում են մեծ հետաքրքրություն ներկայացնող տարբեր միջոցառումներ և ավանդական փառատոներ («Լոռվա ձմեռ» մարզատնահանդեսը, «Բերքի տոն», «Խորովածի փառատոն», «Օաղկի տոն», Վարդավառի արարողություն և այլն), ցուցահանդեսներ և այլն:

Այս ամենով հանդերձ՝ ըստ Լոռու ՏՀՀ Կենտրոնի կատարած հետազոտությունների, Լոռու մարզում չկան հետաքրքիր ժամանցի վայրեր հատկապես երեկոյան ժամերին: Մասնավորապես՝ մարզկենտրոն Վանաձորում չկան հետաքրքիր, գեղեցիկ, երիտասարդական ժամանցի վայրեր, կենտրոն-

ներ: Այգիները աղտոտված են, և առաջարկվող ոչ մի ծառայություն չկա զբոսայգիներում, այցելուները երեկոյան ժամերին չգիտեն ուր այցելել, ինչով զբաղվել, այդ իսկ պատճառով երկար չեն մնում հյուրաստներում, հյուրանոցներում, միջինը՝ 3-5 օր [2]:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրածը, կարող ենք միանշանակ շեշտել, որ Լոռու մարզն ունի լուրջ հեռանկարներ զբոսաշրջության զարգացման առումով: Իր աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, յուրահատուկ ռելիեֆով, մարդկային ռեսուրսներով և պատմամշակութային հուշարձանների հարուստ ժառանգությամբ իրատեսական հնարավորություններ ունի դառնալու Հայաստանի և տարածաշրջանի զբոսաշրջության կենտրոններից մեկը:

Ուստի մարզի տնտեսական զարգացման գերակա խնդիրներից է վերականգնել, պահպանել և բարձրացնել մարզի զբոսաշրջային հետաքրքրությունը, զբոսաշրջային ոլորտում իրականացնել նոր հեռանկարային ծրագրեր, որոնք կներառվեն մարզի տնտեսության զարգացման ռազմավարության մեջ:

Լոռու մարզում զբոսաշրջության կայուն զարգացման և հայկական զբոսաշրջային արտադրանքի որակի շարունակական ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել ոլորտը սպասարկող ենթակառուցվածքներ՝ միջպետական նշանակության ավտոմայրուղիներ, դեպի զբոսաշրջային գրավչության օբյեկտներ տանող բարեկարգ ավտոճանապարհներ, զբոսաշրջային երթուղիներ և դրանց ապահովում սանիտարական պայմաններով, մատչելի հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, մինևույն ժամանակ՝ բարձրակարգ հյուրանոցներ, դրանց ինտեգրում համաշխարհային համապատասխան ցանցերին, զբոսաշրջային կլաստերների ձևավորում և զարգացում [1]:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման համար մարզում լուրջ ներդրումներ են հարկավոր: Թեպետ վերջին տարիներին զգալի տեղաշարժեր կան այդ ուղղությամբ՝ բարեկարգվել են ավտոճանապարհներ, կառուցվել են նոր հյուրանոցներ, սննդի օբյեկտներ, շատ մասնավոր տներ վերածվել են հյուրաստների, սակայն այդ ամենը դեռևս բավարար չեն զբոսաշրջիկների բարձրակարգ սպասարկման համար:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների անբավարարության ցուցանիշներ են նաև համացանցում հյուրանոցային տնտեսությունների վերաբերյալ ոչ լիարժեք և բարձր որակի տեղեկատվության, զբոսաշրջային վայրերի մասին պատմող գովազդի, տեսարժան վայրեր տանող ճանապարհային ցուցանակների բացակայությունը: Բացառությամբ մի քանի հանրահայտ տեսարժան վայրերի՝ բացահայտված և քարտեզագրված չեն մարզի զբոսաշրջային

նշանակության օբյեկտները: Զբոսաշրջային համալսարանի Բարձրագույն համար հարկավոր է քարտեզագրել Լոռու մարզի գեղեցիկ վայրերը և ակտիվացնել այնտեղ առաջարկվող ծառայությունների մասին գովազդը:

Անհրաժեշտություն է զբոսաշրջային վայրերում ավտոկայանատեղերի, հանրային սանհանգույցների, հուշանվերների խանութների, տեղեկատվական տաղավարների կառուցումը, աղբամանների տեղադրումը, սանիտարական պայմանների բարելավումը և պահպանումը:

Մարզում զբոսաշրջության և ենթակառուցվածքների զարգացման կարևոր խթան կարող է հանդիսանալ Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա զբոսաշրջային-լեռնադահուկային համալիրի ստեղծումը, ինչպես նաև Մայմեխ լեռան ստորոտում ճոպանուղու կառուցումն իր անհրաժեշտ ենթակառուցվածքներով (հյուրանոցներ, ավտոկայանատեղեր, դահուկների վարձույթի կայաններ, ռեստորան, սրճարան և սպասարկման ոլորտի այլ կառույցներ): Վերջինս կլինի համալիր կառույց և խթան կհանդիսանա Վանաձոր համայնքի տնտեսական զարգացման գործում, ինչի հետևանքով նոր աշխատատեղեր կստեղծվեն ոչ միայն ճոպանուղու շահագործման և հետագա սպասարկման համար, այլ նաև հյուրանոցային և սպասարկման այլ ոլորտներում:

Մարզում զբոսաշրջության զարգացման հեռանկարները լիարժեքորեն կյանքի կկոչվեն միայն ենթակառուցվածքային ցանցի՝ տրանսպորտի, կապի, հյուրանոցների համակարգերի, տեղաբաշխման ու սպասարկման այլ օբյեկտների կատարելագործման դեպքում:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-427>

Գրականություն

1. Զբոսաշրջության մրցունակությունը և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, Երևան, «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատ., 2014:
2. Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն, Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն, 2019-2020:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն, Լոռի, 2017:

Анализ туристической инфраструктуры Лорийского региона

Гоар Егян

Резюме

Ключевые слова: индустрия гостеприимства, объекты размещения, туристическая привлекательность, транспортные услуги

В статье представлены современное состояние и анализ туристической инфраструктуры Лорийского региона как важного фактора развития туризма.

Поскольку туризм сегодня является одним из ключевых факторов экономического развития региона, необходимо прежде всего изучить и оценить современное состояние туристической инфраструктуры, степень ее развития, возможности использования.

Регион выделяется своей уникальной природой и богатыми историко-культурными ресурсами, которые представляют собой огромный потенциал для привлечения туристов, но из-за недостаточного охвата и слаборазвитой инфраструктуры долгие годы оставался пассивной туристической зоной.

Однако постоянно увеличивающееся количество туристов в Лорийском регионе свидетельствует о растущих темпах туризма, чему в немалой степени способствовало развитие туристической инфраструктуры, особенно в последнее время. Значительно улучшилось качество гостиничных комплексов, пансионатов, объектов общественного питания, транспортных услуг и дорог.

Произведен подробный анализ и оценка туристической инфраструктуры объектов гостеприимства, транспорта и предприятий общественного питания, отдыха и развлечений, их деятельность, значение и местонахождение.

В работе представлены как положительные стороны деятельности туристической инфраструктуры, так и выявленные пробелы. Приведены рекомендации по устранению различных недостатков.

В результате анализа делается вывод о необходимости серьезных инвестиций для развития туристической инфраструктуры в регионе, что будет способствовать устойчивому развитию туристической отрасли в области Лори.

Analysis of Tourism Infrastructures of Lori Region

Gohar Yeghyan

Summary

Key words: *hospitality industry, accommodation facilities, tourist attraction, transport services*

The article represents current state and analysis of tourism infrastructures in Lori Region as an important factor in the development of tourism.

Since tourism is one of the important keys to the economic development of the region now, it's quite necessary to study and evaluate the current state of tourism infrastructures, the degree of their development as well as the possibilities of use.

Lori Region is famous for its unique nature and rich historical and cultural resources, which have great potential as a tourist attraction. However, because of insufficient coverage and weak development of those infrastructures it has remained a passive field of tourism for a long time.

At the same time, it should be noted that the constantly increasing number of tourists in Lori Region indicates the growing pace of tourism, which has been greatly facilitated by the recent infrastructure development. The quality of hotel resorts, guest houses, public foodservice, transport services and roads has improved significantly.

We've analyzed and assessed the hospitality industry, transport and ublic catering industry services, entertainment facilities and their activities, significance and location.

In our study, we highlighted both the advantages and the gaps in the operation of the tourism infrastructures, and offered several recommendations for their regulation.

Having analyzed the subject matter we came to the conclusion that the region needs serious investments for the development of tourism infrastructures.

Only if the infrastructure network, which includes hotels, restaurants, transportation, communication, and other service facilities, is upgraded can the region's tourism development prospects be fully realized.

Ներկայացվել է 14.04.2023 թ.

Գրախոսվել է 28.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ПСИХОЛОГИЯ

PSYCHOLOGY

**Վերահսկողության լոկուսի ազդեցությունը
ուսուցիչների քոֆինգ-ռազմավարության ընտրության մեջ**

*Հայկ Ավագիմյան
Անահիտ Ստեփանյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-438>

Հանգուցային բառեր. *հաղթահարող և ինքնավերահսկող ռազմավարություն, ինտերնալ, էքստերնալ, սթրես, քոֆինգ-վարք, քոֆինգ-ռեսուրսներ, քոֆինգ-մեխանիզմներ*

Նախաբան: Կյանքի ժամանակակից պայմաններն անխուսափելիորեն առաջացնում են իրադրություններ, որոնք սուբյեկտիվորեն ապրվում են որպես դժվարին ու սթրեսային: Այդ պատճառով կյանքի դժվարին իրադրությունների հաղթահարմանն ուղղված վարքի ուսումնասիրությունը արդիական թեմա է:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ քոֆինգ ռազմավարությունների կապը անձնային առանձնահատկությունների, հատկապես վերահսկողության լոկուսի հետ բավարար չափով չէ ուսումնասիրված:

Քոֆինգի տեսությունը՝ որպես կյանքի անբարենպաստ իրադրությունների հաղթահարման տեսություն, առաջացել է 20-րդ դարի կեսին: Առաջիններից մեկը «քոֆինգ» հասկացությունը օգտագործել է Լ. Մերֆին, որն ուսումնասիրում էր երեխաների հոգեկան զարգացման ճգնաժամերին հարմարման եղանակները: Ավելի ուշ այդ հասկացությունն օգտագործել է Ա. Մասլոուն [4]:

Քոֆինգի հիմնական մեթոդաբանությունը և տեսությունը մշակվում էր Ռ. Լազարուսի, Ս. Ֆոլբմանի, Ռ. Մուսի, Ա. Բիլինգսի, Ջ. Սմիթսանի, Կ. Նականոյի, Հ. Վերերի, Մ.Պետրովսկու և այոց կողմից [7; 8; 9]:

Քովանդակությունը: Քոֆինգի մեկնաբանության մեջ գոյություն ունի երկու հիմնական ուղղություն: Առաջինն ուսումնասիրում է միջավայրը՝ որպես անձ զարգացման գործոն, և դիտարկում է դժվարությունների հաղթահարման եղանակներ: Երկրորդը կապված է Ռիչարդ Լազարուսի անվան հետ, որը անձնային ռեսուրսները դիտարկում է որպես առողջության հոգեբանության մաս: Ռ. Լազարուսը նկարագրել է քոֆինգի երկու հիմնական գործառնություններ.

1. խնդրի վրա կենտրոնացման, որն ուղղված է մարդու և միջավայրի նեգատիվ կապի քայքայման,

2. հույզերի վրա կենտրոնացում, որն ուղղված է հուզական դիսթրեսի կառավարման [19]:

Քոփինգի տարբեր կողմեր ուսումնասիրվում էին Վ. Ա. Բոդրովի, Ս. Կ. Նարտովա-Բոչավերի, Բ. Անցիֆերովայի, Վ. Մ. Յալտոնսկու, Տ. Լ. Կոյուկովայի կողմից [21]:

Քոփինգ հասկացությունն առաջացել է անգլերեն *to cope* – հաղթահարել բառից: Քոփինգի տեսության մեջ առանձնացնում են երեք հիմնական հասկացություններ՝ քոփինգ-վարք, քոփինգ-ռեսուրսներ, քոփինգ-ռազմավարություններ:

Քոփինգ-վարքը սեփական խնդիրները լուծելու մարդու պատրաստակամությունն արտացոլող վարքի ձև է: Այն իրագործվում է քոփինգ-ռեսուրսների հիման վրա՝ քոփինգ-ռազմավարությունների կիրառությամբ:

Ռ. Լազարուսն առանձնացնում էր ակտիվ և պասսիվ քոփինգ-վարք: Ակտիվ քոփինգ-վարքը վերացնում կամ փոփոխում է նեգատիվ գործոնի ազդեցությունը: Պասսիվ քոփինգ-վարքը նեգատիվ գործոնի հաղթահարման, հուզական լարվածությունը նվազեցնող ներքին հոգեբանական ձևերն են [9]:

Քոփինգ-ռեսուրսները մարդու և սոցիալական միջավայրի առանձնահատկություններն են, որոնք թույլ են տալիս օպտիմալ կերպով հարմարվել նեգատիվ իրադրություններին: Դրանց մեջ են մտնում ֆիզիկական ռեսուրսները (առողջությունը, ֆիզիկական ուժը), սոցիալական ռեսուրսները (տարբեր սոցիալական խմբերի, հանրությունների անդամությունը), հոգեբանական ռեսուրսները (ինքնագնահատական, շփվողականություն, ինտելեկտ, հումոր), նյութական (ֆինանսներ, սեփականություն):

Հարմարման մեխանիզմի էական առանձնահատկություններից է համարվում այն պայմանների և գործոնների որոնումը, որոնք նվազեցնում են հնարավորին դաժան սթրեսային հարվածների ազդեցությունը մարդու վրա: Միջավայրի գործոնները ուղղակիորեն չեն որոշում հաղթահարման ուղիների ընտրությունը: «Անձ-միջավայր» հարաբերությունների միջնորդ են մարդկանց անհատական-հոգեբանական տարբերությունները և առանձնահատկությունները: Դրանով է պայմանավորված, որ միևնույն դժվարին իրադրությունը տարբեր կերպ է ընկալվում և անհատականորեն է լուծվում: Միջավայրի կարևոր ռեսուրսներից է սոցիալական աջակցությունը:

Քոփինգ-մեխանիզմները անբարենպաստ իրադրությունը, վտանգը հաղթահարելու կոնկրետ եղանակներ են: Այդ եղանակների օգնությամբ և առկա քոփինգ-ռեսուրսների հիման վրա իրագործվում է քոփինգ-վարքը:

Գոյություն ունեն հաղթահարող և ինքնավերահսկող վարքի տարբեր ռազմավարություններ. դրանց ընտրությունը և կիրառությունը կախված է և՛ մարդու անհատական առանձնահատկություններից (խառնվածքի հատկություններ, տազնապայմության մակարդակ, ինքնավերահսկողության առանձ-

նահատկություններ, բնավորության գծեր և այլն), և՛ նեգատիվ իրադրության առանձնահատկություններից:

Քրփինգ-ռազամավարությունները դասակարգվում են երեք խմբի՝ հարմարվողական (խնդրի ակտիվ լուծում), մասնակի հարմարվողական (որևէ պատճառաբանությամբ խնդրի լուծումից մասնակի խուսափում) և ոչ հարմարվողական (խնդրի լուծումից ամբողջական խուսափում) [10]:

Կառուցվածքային տեսանկյունից քրփինգ-ռազամավարությունների կազմում առանձնացնում են երեք բաղադրիչներ.

1. **կոզնիտիվ**՝ որպես խնդրի ներքին, մտովի լուծում: Այդ ոլորտում քրփինգ-մեխանիզմները կարող են դրսևորվել որպես շեղում կամ մտքերի փոխանցում այլ ավելի նշանակալից ոլորտներ, անբարենպաստ իրադրության որպես անխուսափելի ընդունումը, վտանգի աստիճանի անտեսում կամ նվազեցում, տվյալ խնդրին վերաբերող ինֆորմացիայի որոնում, սեփական անձի համեմատություն այլ մարդկանց հետ, նեգատիվ իրադարձության հատուկ իմաստի հաղորդում և այլն,

2. **հուզական**՝ որպես խնդրի հուզական լուծում: Այդ ոլորտում քրփինգ-մեխանիզմները կարող են դրսևորվել որպես հուզական հակազդում, հնազանդություն, ճակատագրապաշտություն, վերագրում, պատասխանատվության փոխանցում այլ մարդկանց, ինքախարազանում, ինքնավերահսկողություն և այլն,

3. **վարքային**՝ կոնկրետ արարքներ և գործողություններ խնդրի լուծման համար: Այդ ոլորտում քրփինգ-մեխանիզմները կարող են դրսևորվել որպես փոխարինող կամ շեղող վարք, փոխանցում այլ գործունեության, հոգատարություն այլ մարդկանց նկատմամբ, խուսափում նմանատիպ իրադրություններից, մեկուսացում, համագործակցություն, օգնության ակտիվ որոնում և այլն [6, 12]:

Քրփինգ ռազամավարությունները դրսևորվում են հոգեկանի տարբեր մակարդակներում՝ և՛ ենթագիտակցական, և՛ գիտակցական, ու չեն վերաբերում ախտաբանական գործընթացներին:

Տեսականորեն քրփինգը դիտարկվում է երեք մոտեցումներով.

1. որպես հոգեբանական պաշտպանության անհատական եղանակ,

2. միջանհատական մոտեցում, որտեղ քրփինգը համարվում է մարդու կայուն նախատրամադրվածություն՝ որոշակի ձևով հակազդելու անբարենպաստ պայմաններին,

3. ներանհատական մոտեցում, որտեղ քրփինգն ընկալվում է որպես գործընթաց, դինամիկ երևույթ [14, 35]:

Չնայած նրան, որ կյանքի դժվարությունների հաղթահարող և ինքնավերահսկող վարքի ուսումնասիրության նվիրված են բազմաթիվ աշխատանքներ. հետազոտություններում շեշտը դրվում է հիմնականում քրփինգ-ռազամ-

վարությունների տարիքային առանձնահատկությունների և ռիսկի խմբին պատկանելության վրա: Դրա հետ միասին գործնականում չեն ուսումնասիրվում ռիսկի խմբերում չընդգրկված պատանեկության և միջին տարիքի մարդիկ: Աճող ակադեմիական հասարակական հետաքրքրությունը անհատական հոգեբանական ռեսուրսների և սթրեսների ու ճգնաժամերի հաղթահարման մեխանիզմների կիրառության նկատմամբ նկատվում է տվյալ թեմայով մեծ քանակությամբ հետազոտությունների և հրապարակումների մեջ, չնայած որ ծանրաբեռնվածությունների ներգործության հոգեֆիզիոլոգիական վնասին անձի հակազդելու ընդունակությունը միշտ էլ եղել է գիտնականների ուշադրության կենտրոնում:

Տվյալ խնդրին նվիրված հոգեբանական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ անձնային առանձնահատկությունները կարող են ազդել կյանքի դժվարությունների հաղթահարման անձնային ռեսուրսների որակի վրա, որոնց մեջ առանձնացվում են՝ խառնվածքի տեսակը, հաջողության հասնելու մոտիվացիան, նաև վերահսկողության լոկուսը: Հեռանկարային է կոնկրետ անձնային գծերի որոնումը, որոնց ձևավորման մակարդակը անձի մոտ ապահովում է ինքնուրույն և արդյունավետությամբ հաղթահարել դժվար իրադրությունները՝ սահմանելով սեփական անհրաժեշտ վարքի ռազմավարությունը:

Վերահսկողության լոկուս հասկացությունը հոգեբանության մեջ մտցվել է Ջ. Ռոտերի կողմից, որը վերահսկողության լոկուսը սահմանում էր որպես որակ, որը բնութագրում է մարդու հակվածությունը սեփական գործունեության արդյունքների համար պատասխանատվությունը վերագրել արտաքին կամ ներքին ուժերին: Ելնելով բիհեյվորիզմի մեթոդաբանությունից, որի կողմնակիցն էր Ջ. Ռոտերը, վերահսկողության լոկուսը նաև սեփական վարքային ռեակցիաների ամրապնդման անձի ընդհանրացված սպասելիքն է որպես սեփական վարքի ու նպատակին հասնելու միջև պատճառական կապերի մարդու ընկալման աստիճան: Ջ. Ռոտերի ենթադրության համաձայն՝ սուբյեկտիվ վերահսկողությունը կայուն անձնային հատկություն է, իսկ անհատական տարբերությունները վերահսկողության լոկալիզացման մեջ պայմանավորված են առաջին հերթին ընտանիքում սովորեցման գործընթացով: Այսպիսով, վերահսկողության լոկուսն առաջանում և ձևավորվում է անձի սոցիալականացման պրոցեսում՝ աստիճանաբար դառնալով կայուն հատկություն, որը կանխորոշում է անձի վարքի որոշակի կողմեր: Կախված նրանից, թե որտեղ է լոկալիզացվում վերահսկողությունը կյանքի նշանակալից իրադարձությունների նկատմամբ, Ջ. Ռոտերն առաջարկում է առանձնացնել ինտերնալ (ներքին) և էքստերնալ (արտաքին) վերահսկողության լոկուսով մարդկանց: Դրա հետ միասին վերահսկողության լոկալիզացիայի տեսակը կանխորոշում է վարքային հակազդման առանձնահատկությունները սոցիա-

լական ներգործության լայն համատեքստում, կապված է անձի ակտիվության և պատասխանատվության զգացման մակարդակի հետ, ուղղակիորեն ազդում է կյանքի իրադարձությունների «վերահսկելիության» զգացողության վրա: Ջ. Ռոտերի կարծիքով, վերահսկողության լոկուսը համընդհանուր, կայուն բնութագիր է և անփոփոխ է ցանկացած տեսակի իրադարձությունների և իրավիճակների նկատմամբ, որոնց հանդիպում է անձը [18]:

Դ. Ռիսմենն առաջարկեց սոցիալական բնավորության տիպաբանություն, որն իր տեսամեթոդաբանական հիմքերով մոտ էր Ջ. Ռոտերի հայեցակարգին: Նա առաջարկում էր առանձնացնել բնավորության հետևյալ տիպերը՝ «ներսից ուղղորդվող» և «ուրիշների կողմից ուղղորդվող»: Դ. Ռիսմենի կարծիքով, «ներսից ուղղորդվող մարդկանց» վարքը կարգավորվում է ինտերնալացված, ներքին նպատակներով և արժեքներով, իսկ «ուրիշների կողմից ուղղորդվողների» վարքը կառավարվում է իրենց համար արտաքին արժեքներով և նպատակներով [13]:

Նման տեսակետ արտահայտել է նաև Ս. Ռոզենցվեյզը ֆրոյստրացիոն տեսության շրջանակներում, որի համաձայն՝ մարդիկ հակված են տարբեր կերպ հակազդելու դժվարություններին հաղորդակցման և կենսագործունեության լայն համատեքստում: Ս. Ռոզենցվեյզն առանձնացնում է հակազդման երեք տեսակ.

1. ինտրապունիտիվ հակազդում՝ մարդը մշտապես իրեն է մեղադրում,
2. էքստրապունիտիվ հակազդում՝ պատասխանատվության վերագրում արտաքին հանգամանքներին,
3. իմպունիտիվ հակազդում՝ հաշտվողական դիրքորոշում, որը չի հիմնվում ո՛չ ինքնամեղադրանքի, ո՛չ էլ ուրիշներին մեղադրելու վրա [15, 8-9]:

Հ. Մ. Լեֆթուրթն ընդգծում էր վերահսկողության լոկուսի ուսումնասիրությունը մարդու տարիքի և գործունեության համատեքստում՝ այլ անձնային բնութագրումների հետ սերտ կապի մեջ [17]:

Ջ. Բիրն իր աշխատություններում դիտարկում էր կոգնիտիվ վերահսկողության հարցը և հանգեց այն եզրակացության, որ վարքի բաց եղանակը ազատության աստիճանների մեծ քանակությամբ, սոցիալական ճկունությամբ և վարքային լայն խաղացանկով բնորոշ է կոգնիտիվորեն բարդ (ինտերնալ) վերահսկողությամբ մարդկանց [16]:

Ֆ. Ու. Վեսսմանը, Մ. Թայերը և Դ. Ս. Գորմանը իրենց հետազոտության մեջ վերլուծել են վերահսկողության տարբեր լոկուսով մարդկանց ժամանակային հեռանկարները և պարզել են, որ ինտերնալները ավելի շատ կողմնորոշված են ապագայի, ավելի լավ են ընդունակ հայեցակարգել ժամանակային հատվածները, քան վերահսկողության էքստերնալ լոկուսով մարդիկ: Ինտերնալ լոկուսով մարդկանց մոտ ժամանակային հայեցակարգը իրադար-

ձային տեսանկյունից ավելի հագեցած է, քան էքստերնալ վերահսկողության լոկուսով մարդկանց մոտ [20]:

Ռուս ժամանակակից հոգեբանները «վերահսկողության լոկուս» հասկացությունը բացահայտում են «հատուկ աշխարհայացքային դիրքորոշում» [5], «որոշակի անձնային պատերն, ամբողջական անձնային համադրություն» [12] հասկացությունների միջոցով: Ա. Ա. Ռեանը վերահսկողության լոկուսը դիտարկում է որպես սոցիալապես հասուն անձի չափորոշիչ և առանձնացնում է առաջին տիպի պատասխանատվություն (ինտերնալ վերահսկողության լոկուս) և երկրորդ տիպի պատասխանատվություն (էքստերնալ վերահսկողության լոկուս): Նա ինտերնալությունը դիտարկում է որպես անձնային պատասխանատվության ցուցանիշ, որը հարաբերակցվում է պրոսոցիալական վարքի և անձնային հասունության հետ [12]:

Ս. Վ. Բիկովը վերահսկողության լոկուսը համարում է սեփական անձի և շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունքի ցուցանիշ: Նա գտնում է, որ էքստերնալությունը նաև ավելի շատ բնորոշ է վարքի դեյինկվենտ ներուժով դեռահասներին, քան պրոսոցիալ հակումներով դեռահասներին [2]:

Տ. Ա. Պոպովան վերահսկողության լոկուսն անվանում է բարենպաստ ծերացման անձնային պաշարներից մեկը: Նրա հետազոտություններում ցույց է տրվել, որ տարիքի հետ կարող է ուժեղանալ էգոիստեգրման, սեփական կյանքի նշանակալիության և նրա վրա վերահսկողության մեջ պահանջմունքը [11]:

Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցիչների վերահսկողության լոկուսի ազդեցությունը վարքի քոփինգ ռազմավարության ընտրության վրա:

Հետազոտության ընտրակազմի մեջ ընդգրկված էին Վանաձորի տարբեր դպրոցների 82 ուսուցիչներ (52 կանայք և 30 տղամարդիկ)՝ 30-50 տարեկան:

Կիրառվել են երկու մեթոդիկաներ.

1. Ջ. Ռոտերի սուբյեկտիվ վերահսկողության մակարդակի (ՄՎՄ) հարցարանը, որը բաղկացած է 7 սանդղակներից՝ ընդհանուր ինտերնալության (ԻԸ), նվաճումների ոլորտում ինտերնալության (ԻՆ), անհաջողության ոլորտում ինտերնալության (ԻՄ), ընտանեկան հարաբերություններում ինտերնալության (ԻԸՀ), արտադրական հարաբերությունների ոլորտում ինտերնալության (ԻԱՀ), միջանձնային հարաբերությունների ոլորտում ինտերնալության (ԻՄՀ), առողջության և հիվանդության նկատմամբ վերաբերմունքի ինտերնալության (ԻԱՀՎ) [1]:

2. Դ. Սմիրխանի «Քոփինգ ռազմավարությունների ինդիկատոր» հարցարանը, որը բաղկացած է երեք սանդղակներից՝ խնդիրների լուծման քոփինգ (ԽԼ), սոցիալական աջակցության որոնման քոփինգ (ՍԱ) և խնդիրներից խուսափման քոփինգ (ԽԲ) [3, 416-419]:

Քուփինգ ռազմավարությունների սուբյեկտիվ վերահսկողության մակարդակի հետ համահարաբերակցության մատրիցա

Քուփինգ	ՄՎՄ-ի սանդղակներ						
	ԻԸ	ԻՆ	ԻԱ	ԻԸՀ	ԻԱՀ	ԻՄՀ	ԻԱՀՎ
ԽԼ	0,25*	0,09	0,13	0,05	0,14	0,05	0,38*
ՍԱ	0,09	0,14	-0,12	0,04	0,03	0,02	0,05
ԽԽ	-0,05	-,0,21*	-0,11	0,14	0,15	-0,07	-0,04

Ինչպես երևում է աղյուսակից, նշանակալից կապեր են բացահայտվել.

1. ուղիղ համեմատական կապ խնդիրների լուծման քուփինգ ռազմավարության և սուբյեկտիվ վերահսկողության երկու սանդղակների միջև՝ առողջության և հիվանդության նկատմամբ վերաբերմունքի ինտերնալության և ընդհանուր ինտերնալության,

2. հակադարձ համեմատական կապ խնդիրներից խուսափման քուփինգ ռազմավարության և նվաճումների ոլորտում ինտերնալության միջև,

3. ըստ սեռի նշանակալից տարբերություններ չեն գրանցվել:

Ելնելով կատարված հետազոտության արդյունքներից՝ կարելի է հանգել հանգել հետևյալ եզրակացությունների.

1. առողջության ոլորտում ինտերնալության ավելացման հետ ավելի հաճախ կիրառվում է խնդիրների լուծման քուփինգ ռազմավարությունը, այսինքն՝ առողջության ոլորտում ինտերնալությամբ ուսուցիչները փորձում են ակտիվորեն ազդել սեփական առողջական վիճակի վրա, այլ ոչ թե դիմում են արտաքին օգնության կամ խուսափում են խնդիրներից առողջության ոլորտում, ինչի վրա, մեր կարծիքով, մեծ ազդեցություն է ունեցել վերջին համավարակը,

2. նվաճումների ոլորտում ինտերնալության բարձր մակարդակի դեպքում հազվադեպ է կիրառվում խնդիրներից խուսափման քուփինգ ռազմավարությունը: Դա նշանակում է, որ նրանց մոտ բարձր է սուբյեկտիվ վերահսկողության մակարդակը հուզականորեն դրական իրադրությունների նկատմամբ. նման մարդիկ համարում են, որ իրենք սեփական ուժերով են հասել այն ամենին, ինչ ունեն ներկայում, և ընդունակ են հետագայում հաջողությամբ հասնել իրենց առջև դրված նպատակին,

3. ընդհանուր ինտերնալության բարձր մակարդակի դեպքում նույնպես ավելի հաճախ կիրառվում է խնդիրների լուծման քուփինգ ռազմավարությունը: Ինտերնալները խնդիրների լուծման դեպքում դժվարին իրադրություններում փորձում են կիրառել ակտիվ հաղթահարող վարք: Նրանք ունեն սուբյեկտիվ վերահսկողության մակարդակ ցանկացած կարևոր իրադարձությունների նկատմամբ, իրենց կյանքի կարևոր իրադարձությունների մեծա-

մասնությունը իրենց սեփական գործողությունների արդյունք են, և նրանք պատրաստ են դրանք կառավարել ու պատասխանատու են դրանց համար:

Ելնելով Ջ. Ռոտերի տեսության մեջ վերահսկողության լոկուսի և Դ. Ամիրխանի մեկնաբանությամբ քոփինգ ռազմավարության իմաստային նշանակությունից՝ կարելի է ենթադրել, քանի որ վերահսկողության լոկուսը ավելի հիմնարար անձնային առանձնահատկություն է, քան հաղթահարող վարքի իրադրային ռազմավարությունը, ապա վերահսկողության լոկուսն է ազդում ռազմավարության ընտրության վրա:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-438>

Գրականություն

1. Бажин Е. Ф., Голынкина Е. А., Эткинд А. М. Опросник уровня субъективного контроля (УСК). Москва: Смысл, 1993. - 16 с.
2. Быков С. В., Алашеев С. Ю., Диагностика локуса контроля личности в асоциальных подростковых группах // Социологический журнал. 2003. № 1. URL: <https://cyberleninka.ru/article/n/diagnostika-lokusa-kontrolya-lichnosti-v-asotsialnyh-podrostkovyh-gruppah> (дата обращения: 13.03.2023)
3. Ильин Е. П., Психология индивидуальных различий. Санкт-Петербург: Питер, 2004. - 701 с.
4. Исаева Е.Р. Копинг-поведение и психологическая защита личности в условиях здоровья и болезни / Е. Р. Исаева. СПб.: Издательство СПбГМУ, 2009. - 136 с.
5. Кондаков И. М., Нилопец М. Н. Экспериментальное исследование структуры и личностного контекста локуса контроля // Психологический журнал. Том 16. № 1, 1995, с. 43-52.
6. Крюкова Т.Л. Методы изучения совладающего поведения: три копинг-шкалы / Т. Л. Крюкова. Кострома: КГУ им. Н.А. Некрасова – Авантитул, 2010. - 64 с.
7. Крюкова Т.Л. Психология совладения в разные периоды жизни / Т.Л. Крюкова. Кострома: КГУ им. Некрасова, Костромаиздат, 2010. - 380 с.
8. Купрене Е.В. Современное состояние и методы копинг-стратегий в психологии / Е. В. Купрене. СПб.: Изд-во СПбГМУ, 2011. - 71 с.
9. Лазарус Р. Стресс, оценка и копинг / Р. Лазарус. М.: Медицина, 2008. - 218 с.
10. Останина Н. В. Теоретические основы формирования копинг-поведения учащихся / Н. В. Останина. Вестник ЧГПУ, 2009. - 120 с.
11. Попова Т. А. Смысложизненные ориентации и локус контроля личности

- как ресурсы благополучного старения// Вестник Пермского государственного гуманитарно-педагогического университета. Серия № 1. Психологические и педагогические науки. 2019. № 1, с. 49-58.
12. Реан А. А. Проблемы и перспективы развития концепции локуса контроля личности // Психологический журнал. Том 19. № 4. 1998, с. 3-13.
 13. Рисмен Д. Некоторые типы характера и общество / Д. Рисмен // Социологические исследования. 1993. № 3, с. 121-129.
 14. Сергиенко Е.А. Субъектная регуляция совладающего поведения: Современное состояние и перспективы / Е. А. Сергиенко. Москва: Изд-во «Институт психологии РАН», 2008. - 273 с.
 15. Фрустрация: Понятие и диагностика: Учеб.-метод. пособие: для студентов специальности 020400 «Психология» / Сост. Л.И. Дементий. Омск: Изд-во ОмГУ, 2004. - 68 с.
 16. Bier G. Cognitive complexity-simplicity and predicative behavior // J. of Abnormal and Social Psychology. 1955. V.51
 17. Lefcourt H. M. Locus of control. In J. P. Robinson, P. R. Shaver, & L. S. Wrightman (Eds.), Measures of personality and social psychology attitudes London: Academic Press Ltd. 1991, pp. 413-425.
 18. Rotter J. B. Generalized expectancies for internal versus external control of reinforcement // Psychol. Monogr. 1966. vol. 80. № 1, pp. 1-28.
 19. Skinner E.A. Perceived control, coping, and development / Skinner E. A., Zimmer-Gembeck M.J. Oxford Handbook of Stress, Health, and Coping. Oxford, Great Britain: Oxford University Press, 2010, - 359 p.
 20. Thayer S, Bernard S. Gorman, Alden E. Wessman, Gertrude Schmeidler & Elinor G. Mannucci. The Relationship between Locus of Control and Temporal Experience, The Journal of Genetic Psychology: 126:2, 1975, pp. 275–279.
 21. Zinchenko E. Coping behavior strategies of Russian urban students due to their social and personal frustration state / Zinchenko E., Belova E. // WCPBS.: Barcelona, 2016, - 186 p.

Влияние локуса контроля в выборе копинг-стратегий учителей

*Айк Авагимян
Анаит Степанян*

Резюме

Ключевые слова: стратегия совладания и самоконтроля, интернальные экстернальные процессы, стресс, копинг-поведение, копинг-ресурсы, копинг-механизмы

В статье рассматриваются теоретические подходы копинга, копинг-поведения, копинг-стратегий и локуса контроля. Дан краткий теоретический анализ теории совладания, компонентов стратегий совладания, определения и роли локуса контроля.

В условиях модернизации образования и интенсивного поиска новых технологий в образовательной практике, вопрос о сохранении психологического здоровья школьного учителя становится вопросом чрезвычайной важности. Существует положительная связь между наличием тех или иных копинг-стратегий и степенью эмоционального выгорания педагогов, а именно у педагогов со сформированной фазой эмоционального выгорания доминируют неадаптивные копинг-стратегии, тогда как у педагогов с несформированной фазой эмоционального выгорания доминируют неадаптивные копинг-стратегии. Также представлены данные нашего эмпирического исследования и их анализ на основе выборки учителей, где выявлена зависимость копинг-стратегий от локуса контроля. Особую категорию ресурсов стрессоустойчивости и совладания представляют характер и способы преодоления стрессовых ситуаций – стратегии и модели преодолевающего поведения или копинг-стратегии. Непродуктивные копинг-стратегии, включающие использование неадаптивных мыслительных схем, непродуктивных эмоциональных и поведенческих способов реагирования, являются предпосылками к формированию синдрома эмоционального выгорания.

Нами были обнаружены значительные взаимосвязи между стратегиями преодоления проблем при их решении, и двумя шкалами субъективного контроля: интернализацией и общим интернализирующим отношением к здоровью и болезни, а также обратная связь между копинг-стратегиями избегания проблем и интернализацией достижений.

Исходя из смыслового значения локуса контроля в теории Дж. Роттера и копинг-стратегии в трактовке Д. Амирхана, можно предположить, что локус контроля является более фундаментальной личностной характеристикой, чем собственно стратегия копинг-поведения и именно локус контроля влияет на выбор стратегии.

The Influence of Locus of Control in the Choice of Coping Strategies for Teachers

Hayk Avagimyan
Anahit Stepanyan

Summary

Key words: *strategy of coping and self-control, internal external processes, stress, coping behavior, coping resources, coping mechanisms*

The article discusses the theoretical approaches of coping, coping behavior, coping strategies and locus of control. A brief theoretical analysis of the theory of coping, the components of coping strategies, the definition and role of locus of control is presented.

In the context of the modernization of education and the intensive search for new technologies in educational practice, the issue of maintaining the psychological health of a school teacher becomes a matter of extreme importance. There is a positive relationship between the presence of certain coping strategies and the degree of emotional burnout of teachers, namely, teachers with a formed phase of emotional burnout are dominated by non-adaptive coping strategies, while teachers with an unformed phase of emotional burnout are dominated by non-adaptive coping strategies. Also the article presents the data of our empirical study and their analysis based on a sample of teachers, in which the dependence of coping strategies on the locus of control was revealed. The nature and method of overcoming stressful situations is a special category of resources for stress resistance and coping techniques, which includes strategies and models of coping behavior or coping strategies. The preconditions for the formation of a burnout syndrome, requires the use of unproductive coping mechanisms, such as the non-adaptive mental processes and unproductive emotional and behavioral responses.

We revealed significant relationships between coping strategies in problem solving and two scales of subjective control: internalization and general internalizing attitudes towards health and illness, as well as an inverse relationship between problem avoidance coping strategies and internalization of achievements.

Based on the semantic meaning of the locus of control in the theory of J. Rotter and the coping strategy in the interpretation of D. Amirkhan, it can be assumed that the locus of control is a more fundamental personal characteristic than the strategy of coping behavior itself, and it is the locus of control that influences the choice of strategy.

Ներկայացվել է 12.04.2023 թ.

Գրախոսվել է 14.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Պատերազմի մասնակից կամավորների արժեհամակարգի և հաղթահարող և ինքնավերահսկող վարքի ռազմավարության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները

*Հայկ Ավագիմյան
Լիլիթ Մտեփանյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-449>

Հանգուցային բառեր. *մարտական սթրես, քոփինգ ռազմավարություն, մարտական իրադրություն, արժեքներ, պատերազմ, կյանքի նպատակ, խնդիրների լուծում*

Մարտական գործողությունների մասնակիցների հաղթահարող վարքի ուսումնասիրության խնդիրը արդիական է՝ 2020 թ. պատերազմից հետո Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրադրությամբ և Արցախի հանրապետությունում մինչ օրս պարբերաբար շարունակվող մարտական բախումներով պայմանավորված: Մարտական գործողություններին մասնակցությունը երկարատև ազդեցություն է գործում մարդու հոգեհուզական վիճակի վրա, դժվարությունները հաղթահարելու, առօրյա կյանքի պայմաններին նորից հարմարվելու, սթրեսում դրսևորվող հակազդման նրա ընդունակության վրա:

Պատերազմը մարդկային համակեցության արտակարգ եղանակ է: Անսպասելիորեն ներխուժելով մարդականց առօրյա կյանք՝ այն իր հետ բերում է մահ, ցավ, զանգվածային ավերածություններ, վիշտ և տառապանքներ, խաթարում է անձի սովորական կենսակերպը և առօրյա վարքի ձևերը, վերափոխում է նրա մոտիվացիոն, արժեքային և բարոյական-իմաստային ոլորտը, սեղմում է ժամանակային հեռանկարը մինչև ակտուալության կետ, արգելափակում է դուրիանստ կյանքի նպատակները, նեղացնում է դրական հուզական դրսևորումների ոլորտը, փոխում է անձնային և սոցիալական նույնականությունը:

Պատերազմը ձևավորում է անձի հատուկ տեսակ, հոգեբանության հատուկ տեսակ, որը կարելի է սահմանել որպես մարտական գործողությունների մասնակցի հոգեբանություն: Բազմաթիվ գրկանքների ենթարկվելը, տարբեր տեսակի վտանգների կամ դրա վրա հասնելու սպասումը, անձնական ազատության կորուստը և վարքի հարկադրված բնույթը,– պատերազմի և մարտի այդ բոլոր գործոններն ազդում են մարտիկի հոգեկանի վրա: Մշտապես ու անդադար գործելով՝ դրանք աստիճանաբար վերափոխում են մարտիկի հակազդման բնույթը շրջապատող աշխարհին, առաջացնում են նոր

հակագրումներ, ստեղծում են մի շարք պայմանական ռեֆլեքսներ, մի խոսքով, ձևավորում են փոփոխությունների շարք, որոնք վերջին հաշվով ներկայացնում են ձևափոխված հոգեկանի պատկերը, որը բնորոշ է մարտիկին՝ հասարակ մարդու համեմատությամբ [1, 160]:

Ձևավորվելով և առավել ցայտուն դրսևորվելով պատերազմի ընթացքում՝ այդ հոգեբանությունը շարունակում է իր գոյությունը նաև նրա ավարտից հետո՝ թողնելով իրեն բնորոշ դրոշմը հասարակության կյանքի վրա ընդհանուր առմամբ: Մարդու զգացմունքները և վարքը վտանգի պահին օժտված են նշանակալից առանձնահատկություններով առօրյա կյանքի իրադրություններում դրսևորվող հույզերի և գործողությունների համեմատությամբ և կարող են բացահայտել նրա անձի հատկությունները լիովին անսպասելի կողմից:

Մարդ-մարտիկի գործունեությունը պատերազմի ընթացքում կրում է հատուկ բնույթ: Այն ընթանում է քրոնիկ վտանգի պայմաններում, այսինքն՝ առողջություն կամ կյանք կորցնելու մշտական վտանգի տակ, իսկ մյուս կողմից, ոչ միայն իր նմանների անպատիժ ոչնչացման պայմաններում, քանի որ նրանք թշնամի են, այլև դա կատարելու ուղղակի անհրաժեշտության և խրախուսվող ցանկությամբ հանուն սեփական ժողովրդի ընդհանուր բարեկեցության, նաև սեփական ինքնապահպանման նպատակով զինված պայքարի պայմաններում [1, 159-160]:

Ըստ էության, մարտական գործողությունների մասնակցի դերում հայտնված մարդու հոգեբանության բոլոր հիմնական, բազիսային տարրերը ձևավորվում են դեռևս խաղաղ շրջանում, իսկ պատերազմը միայն բացահայտում է դրանք առավելագույն որոշակիությամբ, շեշտադրում է այս կամ այն հատկանիշները, որոնք կապված են ռազմական ժամանակի պայմանների հետ: Դրա հետ միասին, այդ պայմանների յուրահատկությունը կյանքի է կոչում նոր հատկանիշներ, որոնք չեն կարող առաջանալ խաղաղ պայմաններում, իսկ ռազմական ժամանակաշրջանում ձևավորվում են բավականին կարճ հատվածում:

Մարտական գործողությունների մասնակիցների մեծամասնությունն ունենում է խնդիրներ՝ կապված սոցիալական կյանքին հարմարվելու հետ, և հոգեբանական վերականգնման կարիք ունեն, ինչի հետ կապված մեծանում է նրանց հաղթահարող և ինքնավերհսկող վարքի և նրանց կողմից որոշակի ռազմավարությունների նախընտրության գործոնների ուսումնասիրության կարևորությունը:

«Coping» հասկացությունը առաջացել է անգլերեն «to cope with something» («հաղթահարել ինչ-որ բան, նախևառաջ դժվարություններ») բառակապակցությունից, երբեմն այդ հասկացությունը գիտակցվում է որպես

հոգեբանական հաղթահարում, ադապտիվ վարք, հաղթահարող և ինքնավերահսկող վարք: Վարքի քոփինգ ռազմավարության էության ընկալման մեջ մեծ ներդրում մտցրին արտակարգ, այդ թվում նաև մարտական սթրեսին մարդու հակազդեցության եղանակների ուսումնասիրությունները: Տարբեր պատերազմների վետերանների սոցիալական և հոգեբանական դեադապտացիայի բազմաթիվ դեպքերը հիմք հանդիսացան դրանց ակտիվ ուսումնասիրության և հոգեբանական օգնության կազմակերպման համար:

Քանի որ մարդու հաղթահարող վարքը սոցիալական վարք է [2] և միաժամանակ նրա անձի դրսևորում է, ապա մարդու կողմից յուրացված արժեքները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի վիճակի «պատշաճ մոդելի» ընդհանրացված պատկեր են [4], խթանում են անձի ակտիվությունը տվյալ մոդելների առարկայական մարմնավորման, ընդունակ են պայմանավորել հաղթահարման այս կամ այն ռազմավարությունների նախընտրությունը:

Մարտական իրադրության առանձնահատկությունը նշանակալիորեն պայմանավորում է որոշակի արժեքների ձևավորումն ու ամրապնդումը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ մարտական գործողությունների վետերանները տարբերվում են այն մարդկանցից, որոնք չեն մասնակցել մարտական գործողություններին, յուրահատուկ արժեքներով, որոնք կանխորոշում են վարքի ընդհանուր ուղղվածությունը իրադրությունների լայն շրջանակում, այդ թվում՝ սթրեսային:

Դժվար իրադրությունների հաղթահարումը կենսագործունեության փոփոխվող պայմաններին մարդու հարմարման գործընթաց է: Քոփինգ ռազմավարությունների ընտրությունը կանխորոշվում է դժվար իրադրությունների սուբյեկտիվ գնահատականով [3] և մարդու մշակութային պատկանելությամբ [6]:

Նրա իմացությունը, թե որ արժեքային կողմնորոշումներն են գերակա վետերանների համար և որ արժեքներն են կապված հաղթահարող ու ինքնավերահսկող վարքի այս կամ այն ռազմավարությունների հետ, թույլ է տալիս կառուցել վետերանների հոգեբանական և սոցիալական աջակցության ռազմավարությունը կյանքի դժվար իրադրություններում և հարմարեցնել նրանց հետ աշխատանքի մեթոդիկաները նրանց համար առավել բնորոշ վարքի մոդելների հետ:

Այդ կապակցությամբ արդիական է մարտական գործողությունների մասնակիցների քոփինգ ռազմավարության առանձնահատկությունների հետազոտությունը:

Մեր հետազոտության նպատակն է մարտական գործողությունների մասնակիցների վարքի քոփինգ ռազմավարության ուսումնասիրությունը նրանց արժեհամակարգի համատեքստում:

Հետազոտության ընտրակազմի մեջ ընդգրկված էին մարտական գործողությունների 35-50 տարեկան 57 մասնակիցներ՝ կամավորության սկզբունքով՝ փորձարարական խումբ (ՓԽ), նաև մարտական գործողություններին չմասնակցած 50 անձ՝ ստուգիչ խումբ (ՄԽ):

Հետազոտության մեթոդիկաներն են.

1. Դ. Ա. Լեոնտի «Կենսաիմաստային կողմնորոշումներ» թեստը [4], որն ընդգրկում է «Կյանքի նպատակներ» (Նպատակներ), «Կյանքի հուզական հազեցվածություն» (Գործընթաց), «Արդյունավետություն» (Արդյունք), «Ես-ի լոկուս վերահսկողություն» (Ես-ԼՎ), «Կյանքի լոկուս վերահսկողություն» (Կ-ԼՎ), «Կյանքի ընդհանուր իմաստավորվածություն» (ԿԸԻ) բաղադրիչները:

2. Ս. Նորմանի, Դ. Ֆ. Էնդլերի, Դ. Ա. Ջեյմսի, Մ. Ի. Պարքերի «Քոփինգ վարքը սթրեսային իրադրություններում CISS» մեթոդիկայի Ս. Ա. Կրյուկովայի կողմից ադապտացված տարբերակը, որը չափում է հաղթահարող և ինքնավերահսկող վարքի երեք հիմնական ռազմավարություններ՝ խնդրին լուծման կողմնորոշված քոփինգ (ԽԼԿՔ), հուզականորեն կողմնորոշված քոփինգ (ՀԿՔ), խուսափման կողմնորոշված քոփինգ (ԽԿՔ), որն ընդգրկում է շեղման (Շ) և սոցիալական շեղման (ՄՇ) ենթասանդղակներ:

3. Տվյալների վիճակագրական մշակման համար կիրառվել են նկարագրական վիճակագրության միջոցները և Սպիրմենի համահարաբերակցային վերլուծությունը:

Արդյունքներ. Երկու ընտրանքներում էլ «Կենսաիմաստային կողմնորոշման» սանդղակները ուղղակիորեն կապված են խնդրի լուծմանը կողմնորոշված քոփինգի (ԽԼՔԿ) հետ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ խնդրի լուծմանը կողմնորոշված քոփինգը պատերազմի մասնակիցների (ՓԽ) մոտ ավելի նշանակալից կապի մեջ է գտնվում «Կյանքի նպատակներ» (Նպատակներ), «Ես-ի լոկուս վերահսկողություն» (Ես-ԼՎ) և «Կյանքի ընդհանուր իմաստավորվածություն» (ԿԸԻ) ինտեգրալային ցուցանիշի հետ, քան պատերազմին չմասնակցածների հետ:

Պատերազմի մասնակիցների և չմասնակցածների ընտրանքներում «Կենսաիմաստային կողմնորոշման» սանդղակները հակադարձ համեմատական են հուզականորեն կողմնորոշված քոփինգի (ՀԿՔ) հետ: Հակադարձ համեմատական նշանակալից կապեր են արձանագրվել պատերազմի մասնակիցների մոտ «Կյանքի նպատակներ» (Նպատակներ), «Կյանքի հուզական հազեցվածություն» (Գործընթաց), «Կյանքի լոկուս վերահսկողություն» (Կ-ԼՎ), «Կյանքի ընդհանուր իմաստավորվածություն» (ԿԸԻ) բաղադրիչների հետ, իսկ պատերազմին չմասնակցածների մոտ՝ «Կենսաիմաստային կողմնորոշման» մեթոդիկայի բոլոր սանդղակներով: Խուսափման կողմնորոշված քոփինգի հետ «Կենսաիմաստային կողմնորոշման» թեստի սանդղակների հետ կապ է հաստատվել միայն «Ես-ի լոկուս վերահսկողություն»

(Ես-ԼՎ) հետ պատերազմի մասնակիցների մոտ: Երկու ընտրանքներում էլ չկա կապ շեղման (Շ) ենթասանդղակի հետ: Սոցիալական շեղման (ՄՇ) ենթասանդղակի հետ հակադարձ համեմատական կապ գոյություն ունի «Ես-ի լոկուս վերահսկողություն» (Ես-ԼՎ) և «Կյանքի ընդհանուր իմաստավորվածություն» (ԿԸԻ) սանդղակների հետ պատերազմի մասնակիցների մոտ (ՓԽ) (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Քոփինգ ռազմավարությունների կապը անձի արժեքամաստային կողմնորոշումների հետ ընտրանքներում (ըստ Սպիրմենի)

Չափորոշիչներ	ԽԼԿՔ		ՇԿՔ		ԽԿՔ					
					Ընդհանուր միավոր		Շ		ՄՇ	
	ՓԽ	ՍԽ	ՓԽ	ՍԽ	ՓԽ	ՍԽ	ՓԽ	ՍԽ	ՓԽ	ՍԽ
Նպատակներ	0,45	0,31	-0,3	-0,29	0,07	0,01	-0,03	-0,02	0,15	0,03
Գործընթաց	0,12	0,42	-0,28	-0,25	0,04	0,09	-0,12	0,06	0,14	0,11
Արդյունք	0,33	0,34	-0,36	-0,27	0,02	0,1	-0,06	0,07	0,06	0,08
Ես-ԼՎ	0,37	0,16	-0,18	-0,28	-0,2	0,04	0,05	-0,02	0,3	0,05
Կ-ԼՎ	0,11	0,26	-0,27	-0,19	0,07	-0,03	0,01	-0,04	0,14	0,03
ԿԸԻ	0,36	0,25	-0,29	-0,24	-0,08	0,05	-0,07	-0,02	0,23	0,05

Կյանքի իմաստավորվածության և քոփինգների կապերը վկայում են այն մասին, որ պատկերը գրեթե նույնական է, սակայն պատերազմի մասնակիցների մոտ՝ ի տարբերություն չմասնակցածների, որքան բարձր է կյանքի իմաստավորվածությունը, այնքան ավելի հաճախ է կիրառվում խնդրի լուծմանը կողմնորոշված քոփինգը և ավելի հազվադեպ՝ հուզականորեն կողմնորոշված քոփինգը: Նշանակալից են նաև սոցիալական շեղման (ՄՇ) ենթասանդղակի ուղիղ համեմատական կապը պատերազմի մասնակիցների մոտ «Կյանքի ընդհանուր իմաստավորվածություն» (ԿԸԻ) սանդղակի հետ, ինչը վկայում է, որ պատերազմի մասնակիցներն աշխատում են ավելի շատ շփվել մարդկանց հետ, հատկապես պատերազմի մասնակիցների, հաղորդակցվել նրանց հետ, որ հաղթահարեն սթրեսային իրադրությունները: Եվ վկայում է սոցիալական հանրության նշանակալից դերի մասին սթրեսի և դժվար իրադրությունների հաղթահարման մեջ՝ ի տարբերություն 44-օրյա պատերազմին չմասնակցած մարդկանց:

Ստացված տվյալները կարելի է ամփոփել հետևյալ եզրակացություններում.

1. Պատերազմի մասնակիցների մոտ խնդրի լուծման կողմնորոշված քոփինգը՝ ակտիվ վարքային ռազմավարությունը, երբ նրանք փորձում են

իրենց ունեցած անձնային բոլոր հնարավոր պաշարներն օգտագործել խնդրի արդյունավետ լուծման ընթացքում, վկայում են ապագայի՝ կյանքում ունեցած նպատակների հետ կապված ավելի սերտ կապի մասին, որոնք կյանքին հաղորդում են իմաստ, ուղղվածություն և ժամանակային հեռանկար: Դրա հետ միասին նրանց մոտ դա համապատասխանում է ուժեղ անձնավորության՝ սեփական անձի մասին պատկերացմանը, որն օժտված է բավականին ազատությամբ սեփական կյանքը իր նպատակներին և խնդիրներին ու նրա իմաստի վերաբերյալ պատկերացումներին համապատասխան կառուցելու համար: Պատերազմի մասնակիցները որոշումների ընդունման մեջ քիչ են առաջնորդվում հույզերով, սակայն միևնույն ժամանակ բավարարված չեն իրենց ապրած կյանքով: Աշխատում են ավելի շատ շփվել մարդկանց հետ, հատկապես պատերազմի մասնակիցների, հաղորդակցվել նրանց հետ, որ հաղթահարեն սթրեսային իրադրությունները և օգտագործեն սոցիալական գործունեությունը:

2. Պատերազմին չմասնակցածների համար ավելի կարևոր է կյանքի հուզական հագեցվածությունը: Կյանքի իմաստն ըմբռնում են որպես հետաքրքիր, հուզականորեն հագեցած և իմաստալից. կա այն համոզմունքը, որ իրենք կարող են վերահսկել սեփական կյանքը ու ազատ որոշումներ կայացնել: Իրադրության հաղթահարման համար ընդունված որոշումների դեպքում նրանք ունեն ինքնիրացման գործընթացի բավարարման միտում:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-449>

Գրականություն

1. Дрейлинг Р. Военная психология как наука // Душа армии. Русская военная эмиграция о морально-психологических основах российской вооруженной силы. Москва, 1997.
2. Крюкова Т.Л. Психология совладающего поведения в разные периоды жизни: монография. Кострома: КГУ им. Н.А. Некрасова, 2010. - 380 с.
3. Лазарус Р. Теория стресса и психофизиологические исследования / Р. Лазарус // Эмоциональный стресс. Медицина, 1970.
4. Леонтьев Д.А. Тест смысложизненных ориентаций (СЖО). Москва: Смысл, 1992. - 16 с.
5. Холодная М. А. Структура стратегий совладания в юношеском возрасте: к проблеме валидности опросника «Юношеская копинг-шкала» / М. А. Холодная, О. Г. Берестнева, Е. А. Муратова // Вопросы психологии. 2007. № 5. С. 143-156.
6. Lazarus R. S. Cognitive theories of stress and the issue of circularity / R. S. Lazarus, S. Folkman // Dynamics of stress: physiological, psychological and social perspectives / Ed. by M. N. Appley, R. Trumbull. [S. l.], 1984, pp. 63-79.

Социально-психологические особенности аксиологической системы добровольцев-участников войны и стратегии совладания и самоконтроля их поведения

*Айк Авагимян
Лилит Степанян*

Резюме

Ключевые слова: боевой стресс, копинг-стратегия, боевая ситуация, ценности, война, цель жизни, решение проблем

В настоящее время проблема психического здоровья участников локальных войн (комбатантов) относится к ряду социально значимых для здравоохранения. Ее научно-практическая актуальность заключается в необходимости усовершенствования системы психологической помощи участникам локальных войн с целью их адаптации в послевоенный период. Если абстрагироваться от политических аспектов, при рассмотрении вопроса о психологических последствиях войн, то по данным исследований видно, что воздействие на психику человека во время боевых действий и, особенно, в период послевоенной адаптации в этих случаях сходно. Об этом свидетельствуют близкий возраст воевавших, быстрый и контрастный переход от боевой обстановки к мирной жизни и особенно отношение окружающих к участникам боевых действий. В статье описаны социально-психологические особенности аксиологической системы и копинг-стратегий участников боевых действий. Их психология, которая сформировалась и ярко проявилась во время войны, выражается и после ее окончания, оставляя свой характерный след в жизни общества в целом. Чувства и поведение человека в момент опасности имеют свою специфику по сравнению с эмоциями и действиями, которые проявляются в бытовых жизненных ситуациях, и могут раскрыть особенности данной личности с совершенно неожиданной стороны. Специфика боевой обстановки существенно обуславливает формирование и закрепление тех или иных ценностей, что позволяет предположить, что ветераны боевых действий отличаются от людей, не участвовавших в боевых событиях, уникальной аксиологической системой, которая определяет общую направленность поведения в широком диапазоне ситуаций, в том числе стрессовых. Нами было выявлено, что участникам боевых действий свойственны проблемно-ориентированный копинг и активная поведенческая стратегия, при которой они стараются использовать все возможные личностные ресурсы для эффективного решения проблем. Это свидетельствует о более тесной связи с намеченными на будущее целями, которые придают жизни смысл, направленность и хронологическую перспективу.

Socio-Psychological Features of the Value System of Volunteers Participating in the War and Strategies for Coping and Self-Control of Behavior

Hayk Avagimyan

Lilit Stepanyan

Summary

Key words: *combat stress, coping strategy, combat situation, values, war, life purpose, problem solving*

Currently, the problem of mental health of participants in local wars (combatants) is one of the socially significant issues for health care. Its scientific and practical relevance lies in the need to improve the system of psychological assistance to participants in local wars for their adaptation in the post-war period. When examining the psychological effects of war, if we set aside political considerations, it is evident from research data that the impact on the human psyche during hostilities and, particularly, during the time of post-war adaptation, is similar in various situations. This is demonstrated by the same age groups of the fighters, the swift and striking transition from the battlefield to civilian life, and most importantly, the attitude of people toward combatants. The article describes the socio-psychological features of the value system and coping strategies of combatants. Formed and more clearly manifested during the war, their psychology changes after its end, leaving its characteristic mark on the life of society as a whole. The feelings and behavior of a person in a moment of danger demonstrate their specificity in comparison with the emotions and actions of everyday life situations, revealing the characteristics of one's personality from a completely unexpected side. The specificity of the combat situation significantly determines the formation and consolidation of certain values, suggesting that combat veterans differ from people who did not participate in hostilities by a particular system of values that discover the general direction of behavior in a wide range of situations, including stressful ones. It was revealed that combatants are characterized by problem-oriented coping, active behavioral strategy in which they try to use all possible personal resources to effectively solve problems. The latter indicates a closer connection with future life goals that enrich life with meaning, guidance, and chronological perspective.

Ներկայացվել է 02.04..2023 թ.

Գրախոսվել է 14.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Էթնիկական ինքնագիտակցության հիմնախնդիրը հասարակության ճգնաժամային, հարափոփոխ պայմաններում

Գարիկ Հովակիմյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-457>

***Հանգուցային բառեր.** Էթնիկական նորմեր, էթնիկական արժեքներ, սթրեսային իրողություններ, ինքնագիտակցության կառուցվածք, ազգային ինքնագիտակցություն, էթնիկական նույնականություն*

Մեր հասարակության մեջ պատերազմից և համաճարակից հետո ստեղծված իրավիճակը, սոցիալ-տնտեսական, ֆինանսական, ինֆորմացիոն, բնապահպանական արագ ընթացող փոփոխությունները հանգեցնում են էթնիկական ինքնագիտակցության փոփոխության: Դրան նաև անհրաժեշտ է ավելացնել ներկա ժամանակաշրջանում էթնոմշակութային արժեքների վերափոխման և գլոբալիզացման գործընթացները, որոնք նույնպես մեծ դեր են խաղում երիտասարդ սերնդի էթնիկական ինքնագիտակցության ձևավորման վրա:

Սակայն մինչ ճգնաժամային և հարափոփոխ պայմաններում էթնիկական ինքնագիտակցության հիմնախնդիրների տեսական վերլուծության անցնելն անհրաժեշտ է անդրադառնալ էթնոհոգեբանության շրջանակներում տրված էթնիկական ինքնագիտակցության մի քանի բնորոշումներին:

Ա. Ռ. Լուրիան կուլտուր-պատմական մոտեցման շրջանակներում ինքնագիտակցության ուսումնասիրության մեջ նկատում էր, որ «Առավել կարևոր է այն փաստը, որ այդ ուղին չի սպառվում միայն գիտակցության բովանդակության վերափոխումով և կյանքի այլ ոլորտների գիտակցական վերլուծության՝ սոցիալական փորձի ոլորտի և սեփական անձի նկատմամբ որպես հասարակական կյանքի մասնակցի վերաբերմունքի բացահայտումով: Խոսքը գնում է ավելի հիմնարար տեղաշարժերի՝ նոր հոգեբանական համակարգերի ձևավորման մասին, որոնք ընդունակ են արտացոլել ոչ միայն արտաքին իրողությունը, այլև սոցիալական հարաբերությունների աշխարհը, և, վերջին հաշվով, այլ մարդկանց նկատմամբ ձևավորված սեփական ներաշխարհը» [5, 72]:

Էթնիկական ինքնագիտակցության կառուցվածքում բազմաթիվ հետազոտողներ առանձնացնում են երկու հիմնական բաղադրիչներ՝ կոգնիտիվ (պատկերացումներ սեփական խմբի առանձնահատկությունների վերաբերյալ և սեփական անձի գիտակցումը՝ որպես նրա անդամ էթնոդիֆերենցող հատկանիշների հիման վրա) և աֆեկտիվ (խմբին պատկանելության զգա-

ցում, նրա որակների գնահատում, վերաբերմունքը նրան անդամության նկատմամբ):

Լ. Մ. Դրոբիժևան էթնիկական ինքնագիտակցության կառուցվածքում՝ անձնային մակարդակում, ավելացնում է նաև կարգավորիչ տարր՝ հասկանալով այն ոչ միայն որպես գիտակցության իրական մեխանիզմ, այլև որպես որոշակի խմբի անդամի սեփական վարքի կարգավորման մեխանիզմ [2]: Կ. Ն. Խարիբուլինը համարում է, որ ազգային ինքնագիտակցությունը կատարում է հարմարվողական (որպես անհատի տվյալ ազգի նորմերի և արժեքների համակարգին ադապտացիա), պաշտպանական (որպես ազգային արժեքների, շահերի պաշտպանություն ազգի բոլոր ներկայացուցիչների վարքին ներկայացվող պահանջների միջոցով), արժեքային-արտահայտիչ, ճանաչողական (որպես ազգային հատկանիշներով իր նմանների հետ նմանության հաստատում, էթնոսի բարոյական հատկանիշների յուրացում, նրա արժանիքների ու թերությունների, իդեալների յուրացում) գործառույթ, նաև ինքնավերահսկողության և պատասխանատվության գործառույթ [9, 71]:

Էթնոսի կառուցվածքում էթնիկական ինքնագիտակցության հատուկ տեղն ընդգծում է Դ. Ե. Կրասնյանսկին՝ առանձնացնելով նրա կառուցվածքում մի քանի շերտեր.

1. խորքային շերտ. դա առօրյա կեցության մակարդակն է (ավանդույթներ, բարքեր, սովորություններ, կենցաղի և վարքի կարծրատիպեր, ճաշակ),
2. միջուկ՝ լեզուն,
3. բարձրագույն մակարդակ՝ ինքնանույնականացում, որն անխզելիորեն կապված է նյութական և հոգևոր մշակույթի հետ, և հենց այստեղ են գտնվում նույնականացման և ինքնագիտակցության չափորոշիչները և հիմքերը [7, 100]:

Մ. Ն. Կուչուկովը էթնիկական ինքնագիտակցության կառուցվածքի մեջ ընդգրկում է հետևյալ բաղադրիչները.

1. էթնոսի պատմությունը որպես ժողովրդի պատմական պատկերացում սեփական անցյալի, ներկայի և ապագայի մասին,
2. ավանդույթներ, որոնք խաղում են սոցիալական արժեքների պահպանողի դեր,
3. էթնիկական պատկերացումները, որոնք բովանդակային տեսանկյունից կազմված են «Մենք» և շրջապատող «Նրանք» գիտելիքների կարգավիճակի էթնիկական յուրահատկության մասին պատկերացումներից [4, 111]:

Դիտարկելով էթնիկական ինքնագիտակցության տարբեր սահմանումները՝ այժմ շատ կարևոր է այն հարցը, թե ճգնաժամային և հարափոփոխ

պայմաններում ինչպես է կատարվում այդ նորի ներգրավումը մեր ժողովրդի կենսագործունեության ավանդական ձևերի մեջ և արտացոլվում նրա նյութական ու հոգևոր մշակույթի վրա, ու ինչպես է դա ազդում էթնիկական ինքնագիտակցության վրա: Կենսական միջավայրի տարրերի բազմազանությունը, դրանց ներգործության փոփոխության, նորության և հաճախականության բարձր աստիճանը էթնոսի անդամների վրա իրենից ներկայացնում է յուրատեսակ օբյեկտիվ կառուցվածքային բնութագրումներ, որոնք առաջադրում են էթնոսի կենսագործունեության համակարգի դինամիկայի չափորոշիչները:

Մարդիկ, գտնվելով այդ համակարգի «ներսում», իրենց առօրյա կյանքում այն ըմբռնում են որպես «որոշակի հարաբերությունների և հոգեվիճակների բազմազանություն, երբեմն որպես «քառասյին պատկերացում» [8, 29]: Այդ կապակցությամբ շատ կարևոր է սահմանել էթնոսի անդամների հոգեբանական հակազդումների ուղղությունները կատարվող փոփոխություններին:

2020 թ.-ի պատերազմից և համավարակից հետո ստեղծված հասարակական ճգնաժամը ազդել է ազգային և էթնիկական գիտակցության բոլոր ձևերի վրա, պայմանավորել է նրա սթրեսային վիճակը և՛ անձի, և՛ ընդհանուր ասմամբ էթնոսի մակարդակում:

Նշված գործոնների ներգործությանը մարդու համարժեք հակազդելու հնարավորություններն անսահմանափակ չեն: Որոշակի պահին փոփոխված պայմաններին հակազդումների անհամապատասխանությունը սուբյեկտիվորեն ընկալվում է որպես վերահսկողության կորուստ կատարվող իրադարձությունների նկատմամբ, որոնք ուղեկցվում են տագնապի և անհանգստության զգացումով, իրադրության նոր ընկալման անհրաժեշտությամբ: Նման պայմաններում մարդիկ մասամբ դրանք հարմարեցնում են իրենց, մասամբ էլ ստեղծում են փոփոխություններ, որոնք վերջին հաշվով չեն հանգեցնում հարմարվողական հետևանքների:

Այդ բոլոր գործընթացների կազմակերպումը ժամանակի և սոցիոմշակութային տարածության մեջ առաջացնում է մարդկանց կենսառճի և դրանց պայմանների այն կայուն մշակութային կազմավորումները՝ վարքի ձևերը, արժեքները, նորմերը, որոնք կարգավորում են մարդկանց գործունեությունը, վարքը և փոխգործողությունը ժամանակակից սոցիոմշակութային իրադրության մեջ [1, 59]:

Խնդրահարույց իրադրություններում մարդկանց հակազդումների տեսակները սերտորեն կապված են միջավայրի վրա վերահսկողության եղանակի հետ: Անհատական և խմբային մակարդակներում նման վերահսկողության մեխանիզմը կառուցվում է շրջապատող աշխարհը և մերթ ընդհանուր, մերթ մանրամասնություններով ընկալելու մարդկանց բնորոշ ընդունակության վրա, այսինքն՝ ուշադրությունը կենտրոնացնել երբեմն կայուն, երբեմն

փոփոխական կողմերի վրա, փոխանցվել իներցիայի վիճակներից միմյանցից տարբերվող կարճատև ապրումների:

Էթնոսի մակարդակում դա արտահայտվում է մշտապես երկու՝ զուգահեռաբար ընթացող գործընթացների գոյության մեջ, որոնք իրագործվում են առօրյա իրականության մեջ. մի կողմից՝ էթնոսի կենսակերպի տարրերի հնապաշտեցման մեջ և վերարտադրում է հաստատված նորմերը, սովորական գնահատականները, գործողությունները, վարքը, մյուս կողմից՝ դրանց մշտական տատանումը՝ կապված կյանքի իրադրությունների յուրահատկության հետ, մշտապես փոփոխում է էթնոսի անդամների հոգեբանական դիրքորոշումների սահմանները կատարվող իրադարձությունների նկատմամբ:

Վերը նշված երկու հակադարձ, բայց զուգահեռաբար ընթացող գործընթացները հիմք են նախապատրաստում շրջապատող աշխարհի երկատված ընկալման, սոցիալական իրողության փոփոխությանը արագ հարմարվելու ընդունակության բացակայության համար:

Սթրեսային իրադրությունները էթնիկական գիտակցության մեջ պայմանավորված են նաև նրանով, որ այն իրական սոցիալական միջավայրի փոփոխությունների արագությունը, որտեղ սոցիալականացվում է անձը որպես էթնիկական գիտակցության կրող, բավականին բարձր է հարմարվողական հակազդումների արագությունից, որոնք հաստատվել են էթնիկական զարգացման նախորդ փուլերում:

Սթրեսային իրադրություններում էթնոսի անդամների վարքը տարբեր է, սակայն սկզբունքորեն կարելի է հանգեցնել երեք հիմնարար եղանակների.

1. դա փորձ է ձեռքբերել ստեղծված իրադրությունը, քայքայելու այն՝ ակտիվորեն ներգործելով արտաքին հանգամանքներին, որ չեզոքացնեն դրանց ազդեցությունը՝ արմատականորեն փոխելով դրանք: Որոշակի հանգամանքներում նման վարքը կարող է արդյունավետ լինել, եթե մարդ ունի նոր պայմանների կառուցման և դրանցում գործողության ծրագիր: Սակայն, եթե բարդ միջավայրում գործունեությունն ուղղված է միայն քայքայման կամ ամբողջական քայքայման, ապա մարդկանց գործողությունները միայն բազմապատկում են խնդիրները: Պայմանների փոփոխությունը նշանակում է ստեղծված իրադրության նորից հարմարվելու անհրաժեշտություն, իսկ դա խնդիր է, որի լուծումը պահանջում է նոր ուժերի և ջանքերի գործադրում: Ստեղծված պայմանների քայքայումը իրադրության մեջ մտցնում է նաև անորոշություն և ոչ կանոնակարգվածություն, հետևաբար, բարձրացնում է նրա մասնակիցների հոգեկան լարվածությունը,

2. հակազդման մյուս տեսակը պասսիվ հեռացումն է խնդիրների լուծումից: Մարդը հաշտվում է այն մտքի հետ, որ իրադրությունն անլուծելի է, և հրաժարվում է նրա փոփոխության հետ կապված գործողություններից: Նման

իրադրություններում մարդիկ հակված են երևակայության գիրկն ընկել, մտորել հեռավոր անցյալի և ապագայի մասին և այլն: Նման վարքը մարդուն թույլ է տալիս զբաղեցնել սպասողական դիրքորոշում. անբարենպաստ հանգամանքները ժամանակի ընթացքում կարող են վերացվել, նաև խնայել ուժեր. դրանք կարող են անհրաժեշտ լինել, եթե հարմար առիթ լինի: Մակայն դրանով մարդը պահպանում է խնդրահարույց իրադրությունը, զգում է այն գոնե անգիտակցորեն, այսինքն՝ լարվածությունը լիովին չի վերանում: Բացի դրանից՝ ինքնամեկուսացումը մարդուն չի փրկում արտաքին աշխարհի ներգործություններից, որը շարունակում է զարգանալ «առանց նրա»: Իսկ դա նշանակում է, որ դինամիկ պայմաններում միջավայրի տարրերը բազմապատկվում և փոփոխվում են, սակայն մարդը չի վերահսկում դրանց տեղը իրադրության մեջ, և այդ պատճառով այն կորցնում է իր իմաստը նրա համար,

3. վարքի երրորդ տեսակը բնորոշ է մարդկանց, որոնց համար իրադրությունը սուբյեկտիվորեն լարված է, բայց տանելի է, և նրանք կողմնորոշված են ոչ թե քայքայման կամ խուսափման, այլ ուսումնասիրության և «երկ-խոսության» դրա հետ: Այդ դեպքում ակտիվացնող ուշադրությունը և հետաքրքրությունը խնդրի լուծման նկատմամբ մարդկանց թույլ է տալիս վերահսկել սեփական շրջապատի բավականին լայն դաշտ ու միննույն ժամանակ շեղվել ավելորդ կասկածներից ու ազդեսիվ մղումներից: Ի տարբերություն նախորդ երկու տիպերի՝ այս տեսակի անհատները չեն փորձում խուսափել ստեղծված իրադրությունից և մտադրություն են դրսևորում փորձել ապրել այդ իրադրության մեջ: Մարդը փորձում է հնարավորություն գտնել «կառուցելու» իր հարաբերությունները շրջապատի առկա տարրերի հետ՝ առանձնացնելով դրանցից «խաղի կանոնները», որոնք անհրաժեշտ է ընդունել որպես ելակետային տվյալներ, այլ ոչ թե փորձել դրանք անմիջապես քայքայել կամ անտեսել [3, 30-33]:

Մթերային իրադրությունների աճը էթնոսի անդամների գիտակցության մեջ բնորոշ է բոլոր ժողովուրդներին. այն կապված է և՛ ներքին, և՛ արտաքին գործոնների հետ: Ներքին գործոնները կապված են սոցիալական և էթնոմշակութային անհավասարության աճի հետ էթնոսի ինքնագիտակցության կրողների միջև, դեհումանիստական միտումների հետ:

Էթնիկական ինքնագիտակցության սթրեսային վիճակի հիմնական պատճառներից է անվտանգության խնդիրը՝ էթնիկական և անձնային մակարդակում, հատկապես պատերազմական և հետպատերազմական ժամանակաշրջանում, երբ բավականին սուր են դրված սեփական պետականության և ազգի պահպանման հարցերը:

Էթնիկական հոգեբանության մեջ ընդգծվում է, որ էթնիկական ինքնագի-

տակցությունը պաշտպանում է անձին անորոշությունից՝ իրենից ներկայացնելով հաստատուն կառույց, որը կապված է սոցիալականացման և մշակութային փորձի յուրացման հետ: Սակայն փոփոխվող աշխարհում, որտեղ տարբեր մշակույթների կանոններն ու նորմերը միաժամանակ են շերտադարսվում և յուրացվում, իսկ էթնոսը հանդես է գալիս որպես բազմաթիվ և տարբեր էթնոմշակութային ավանդույթների կրող, մարդը ձեռք է բերում քայքայման, սեփական իրական էթնիկական նույնականության կորստի փորձ, որն առավելագույնս համապատասխանում է ստեղծված իրադրությանը: Արդյունքում էթնիկական ինքնագիտակցությունը ձեռք է բերում նոր որակներ, այլ կերպ է գործում բազմաթիվ մշակույթներում, ժողովուրդների, կրոնական ուղղությունների, պատմական ավանդույթների մեջ կատարվող փոփոխությունների ճնշման տակ:

Այսպիսով, էթնիկական ինքնագիտակցությունը՝ էթնոսի կողմից սեփական էթնիկական միասնության, էթնիկական հանրության ինքնորոշման և այդ տեսակի այլ հանրությունների մեջ սեփական տեղի գիտակցման հետ կապված գաղափարների, հայացքների և զգացմունքների հանրագումար է: Դա էթնիկական խմբի՝ իր մասին, էթնիկորեն գիտակցված շահերի, արժեքային կողմնորոշումների, էթնիկական նույնականության և այլ էթնոսների ներկայացուցիչների վերաբերյալ պատկերացումների համախումբ է:

Հասարակական զարգացման ստեղծված իրողությունը հանգեցրեց նրան, որ էթնիկական հանրության էթնոդիֆերենցող սիմվոլների և պատկերացումների համակարգի հատկանիշներից, ըստ էության, միայն էթնիկական ինքնագիտակցությունն է հանդիսանում որոշակի էթնոմշակութային խմբի նշագիծ: «էթնիկական ինքնագիտակցությունը էթնիկության պահպանման յուրատեսակ «վերջին ուղեկալն» է, քանի որ պատմական զարգացման ընթացքում հնարավոր է կորցնել և՛ լեզուն, և՛ ընդհանուր տարածքը, և՛ նույնիսկ մշակութային ավանդույթները, սակայն քանի դեռ պահպանվում է էթնիկական ինքնագիտակցությունը, չի մարում նաև «մենք»-ի կերպարը» [10, 99]:

Ստեղծված իրողություններն անհրաժեշտաբար կանխորոշում են մարդու ինքնագիտակցությունը և կառուցվում են դրանց ազդեցության տակ, որոնք գիտակցվում են մարդու կողմից և դրսևորվում են ճգնաժամային, սթրեսային և հարափոփոխ իրավիճակներին համապատասխան նրան բնորոշ անհատական հակազդումներին:

Վ. Ս. Մուլինայի կողմից տրվել է այն իրողությունների դասակարգումը, որոնք կանխորոշում են անձի զարգացման և կեցության պայմանները: Այդ իրողությունները, նրա կարծիքով, այսօր կանխորոշվում են շրջապատող աշխարհի և նրա պահանջմունքների նկատմամբ ավանդական և նոր վերաբերմունքի համադրության առանձնահատկություններով.

1. բնական գործոնների իրողություններ, որոնք այսօր կտրուկ փոփոխվում են՝ դրսևորելով ռեգրեսի միտում,

2. պատկերանշանային համակարգերի իրողություններ, որոնք ներկայումս ենթակա են ինտեգրացիոն գործընթացների և այդ գործընթացների ինտենսիվացման ազդեցության տակ հիմնականում վերաճում են միջազգային պատկերանշանային համակարգերի (ոչ միայն համացանցի տարածությունում, այլև միջանձնային և միջէթնիկական հաղորդակցման ոլորտում),

3. սոցիալ-նորմատիվային տարածության իրողությունները, որտեղ ներկայացված են և՛ ավանդական բարոյական արժեքները, և՛ միջազգային կապերի միջոցով ինտեգրվող արժեքները: Այդ տարածության մեջ առաջանում են նոր միտումներ տարբեր գաղափարախոսությունների, նաև տնտեսական հարաբերությունների փոփոխության ազդեցության տակ, որոնք առաջացնում են անհավասարություն և այլն,

4. կոնկրետ մարդու՝ որպես անձնավորության ներքին դիրքորոշման իրողություններ [6, 15]:

Յուրաքանչյուր էթնոս ունի բնության, պատմության կողմից և հոգեպես ստեղծված սեփական հատուկ իրողությունները, որոնք գոյություն ունեն նյութական, հոգևոր և պատկերանշանային մարմնավորման մեջ և որոնք անհատական առանձնահատկությունների հետ համակցության մեջ կարող են տարբեր կերպ դրսևորվել ճգնաժամանյին իրավիճակներում:

Այսպիսով, էթնիկական իմաստը առաջանում է գիտակցության և ինքնագիտակցության տարածության մեջ, քանի որ իմաստ ձեռք բերելու համար անձը դիմում է ոչ թե անմիջականորեն էթնիկական աշխարհի օբյեկտներին, այլ դրանց նշանակություններին, պատկերացումներին նրանց մասին: Եվ այստեղ շատ կարևոր են անձի կոգնիտիվ պատկերացումները սեփական խմբի առանձնահատկությունների վերաբերյալ և սեփական անձի գիտակցումը որպես նրա անդամ էթնոդիֆերենցող հատկանիշների հիման վրա ու աֆեկտիվ ապրումները՝ խմբին պատկանելության զգացումը, նրա որակների գնահատումը ու վերաբերմունքը նրան անդամության նկատմամբ, որի հիման վրա դրևորվում են նրա վարքային հակազդումների եղանակները ճգնաժամային և հարափոփոխ պայմաններում:

Գրականություն

1. Григорьян Б.Т. Человек: Его положение и признание в современном мире. М., 1986.
2. Дробижева Л.М. Этническое самосознание русских в современных условиях: идеология и практика // Советская этнография. 1991. № 1, с. 12.
3. Китаев-Смык Л.А. Психология стресса. М., 1983, с. 368.
4. Кучуков М.Н. Национальное самосознание: дис. д-ра филос. наук. Ростов н/Д., 1993.
5. Лурия А.Р. Мозг и психические процессы. М., 1963, Т. 1; М., 1970. Т. 2.
6. Мухина В.С. Личность в условиях этнического возрождения и столкновения цивилизации: XXI в. // Развитие личности. 2000. № 1. - 19 с.
7. Накохова Р.Р. Психологические особенности системы ценностных ориентаций личности представителей этносов Северного Кавказа. М.: Линкор, 2007. - 271 с.
8. Орлова Э.А. Динамика городской культуры об условиях ускорения социально-экономического развития: Автореф. докт. дис. М., 1987.
9. Хабибуллин К.Н. Самосознание и интернациональная ответственность социалистических наций. Пермь: Изд-во Пермского ун-та, 1974. -107 с.
10. Хотинец В. Ю. Этническое самосознание. СПб.: Алетейя, 2000, 240 с.

Проблема этнического самосознания в кризисных и постоянно изменяющихся условиях общества

Гарик Овакимян

Резюме

Ключевые слова: этнические нормы, этнические ценности, стрессовые реалии, структура самосознания, национальное самосознание, этническая идентификация

Ситуация, сложившаяся в нашем обществе после войны и эпидемии, стремительные социально-экономические, финансовые, информационные, экологические изменения приводят к изменению этнического самосознания. Необходимо также добавить процессы трансформации и глобализации этнокультурных ценностей в современный период, которые тоже играют большую роль в формировании этнического самосознания подрастающего поколения.

Сложившиеся реалии обязательно предопределяют самосознание человека и строятся под их влиянием, которые осознаются человеком и проявляются в кризисных и стрессовых ситуациях в соответствии со свойственными ему индивидуальными реакциями.

Этнический смысл возникает в пространстве сознания и самосознания, поскольку для обретения истины человек обращается не к предметам этнического мира, а к их значениям и представлениям о них. И здесь очень важны когнитивные представления человека об особенностях собственной группы и самоидентификация как члена данного этноса на основе своих этнодифференцирующих признаков и аффективных переживаний – чувство принадлежности к группе, оценка своих качеств и своего отношения к ней, вследствие чего определяются способы его поведенческих реакций на кризис в изменяющихся условиях. Исследование этнического самосознания в настоящее время таит в себе новые возможности объяснения объективно существующих взаимоотношений личности с окружающим миром. Ведь именно этничность, в условиях современного кризиса, признается учеными исторически актуальной «точкой отсчета» поведения человека, а этнология – базовой наукой в методологии анализа и прогноза этого поведения. Необходимо признать, что пришло время глобальной переоценки данного сложного психологического феномена в связи с осознанием реальной полиэтничности мира, идеей формирования универсальной картины мира и планетарного мышления. Все эти обстоятельства приводят к возрастанию необходимости осмысления происходящих изменений в этническом самосознании личности в поликультурном мире.

The Problem of Ethnic Self-Consciousness in the Crisis and Post-Changing Conditions of Society

Garik Hovakimyan

Summary

Key words: *ethnic norms, ethnic values, stressful realities, structure of self-consciousness, national self-consciousness, ethnic identity*

The situation formed in our society after the war and the epidemic, the socio-economic, financial, informational, and environmental rapid changes lead to a change in ethnic self-consciousness. It is also necessary to add the processes of transformation and globalization of ethno-cultural values in the current period, because they also play a major role in shaping the ethnic self-consciousness of the younger generation.

The established realities necessarily predetermine a person's self-consciousness and, shaped under their influence, realized by a person, and manifested in crisis and stressful situations in accordance with the characteristic individual reactions.

The ethnic meaning emerges in the space of consciousness and self-consciousness, because in order to gain truth, a person does not directly refer to the objects of the ethnic world, but to their meanings, ideas about them. And in this situation, a person's cognitive ideas about the characteristics of his/her own group, as well as self-consciousness as a member based on his/her ethnodifferentiating characteristics and affective experiences, are very important. These ideas include a person's sense of belonging to the group, an assessment of his or her personal qualities, and an attitude toward membership, all of which are used to determine the types of behavioral responses to a crisis under changing conditions. Currently, the study of ethnic self-consciousness conceals new possibilities for explaining the objectively existing relationship of the individual with the outside world. After all, it is the ethnicity that in the conditions of the current crisis is recognized by the scientists as a historically relevant "reference point" of human behavior, while ethnology is perceived as a basic science in the methodology of analysis and forecasting of this behavior. It must be acknowledged that the time has come for a global reevaluation of this complex psychological phenomenon regarding the realization of the world's true multi-ethnicity, the idea of forming a world community and planetary thinking. Under these circumstances, it is increasingly important to realize the ongoing changes in the ethnic self-consciousness of an individual in a multicultural world.

Ներկայացվել է 15.04.2023 թ.

Գրախոսվել է 27.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Ազրեսիան որպես հետպատերազմական պաշտպանական մեխանիզմ

Վահան Մելիքսեթյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-467>

Հանգուցային բառեր. *ազրեսիվ վարքագիծ, հետպատերազմական ազրեսիա, ազրեսիվության պաշտպանիչ գործառույթ, ֆիզիկական և հոգեբանական հետտրավմա*

Ներածություն

Պատերազմը հակամարտող կողմերի նպատակների և դիրքորոշումների անողորմ պայքար է, երբեմն էլ՝ ազգերի համար կենաց և մահու հարց, ապրելու և մեռնելու երկընտրանք:

- 7) ապահովում է հաստատության գործընթացին վերաբերող զարգացման ծրագրի, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան աշխատանքային պլանի և այլն նորմատիվային փաստաթղթերի պահանջների կատարումը.
- 11) ապահովում է սկսնակ ուսուցիչներին մասնակցությունը մասնագիտական աջակցություն ստանալու գործընթացին» [3]:

Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հավաստագրման հարցաշարում ընդգծվում է, որ դպրոցի տնօրենը կառավարման ձևերի մեջ պիտի ընտրի կառավարման ժողովրդավարական սկզբունքը, սակայն ելնելով սեփական փորձից՝ ընդգծում ենք, որ հաճախ նման ոճը հանգեցնում է ղեկավարի նկատմամբ որոշ անվստահության դրսևորումների: Քիչ չեն դեպքերը, երբ ուսուցիչները տեղյակ չեն դպրոցավարության սկզբունքներին, նորմատիվային փաստաթղթերին, կառավարման ձևերից բխող մանկավարժական գործունեության առանձնահատկություններին, ինչի արդյունքում ավելի հաճախ հանդիպում ենք այնպիսի ուսուցիչների և մանկավարժական աշխատողների, ովքեր ուղղակի կատարում են այս կամ այն հրահանգը՝ առանց դրա իրական իմաստն ըմբռնելու: Դրա արդյունքում ունենում ենք ոչ մտիվացված, չպրպտող, շատ բաների նկատմամբ անտարբեր ուսուցիչ:

Նշենք որ Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանվում են իրավունքներ, որոնք ենթադրում են համագործակցային փոխհարաբերություններ:

Այսպես, իրավունք ունի՝

- «1) մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.
- 2) ընտրելու և ընտրվելու համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում. <...>
- 4) բողոքարկելու ուսումնական հաստատության ղեկավար մարմինների հրամանները, որոշումները և կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով. <...>
- 10) իր շահերի պաշտպանության նպատակով ստեղծելու կազմակերպություններ, արհմիություններ կամ անդամակցելու դրանց՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով...» [4]:

Այդ վիճակի պատճառներն են.

1. մանկավարժական և վարչական աշխատողների հետ միաժամանակյա վերապատրաստումների բացակայությունը,
2. դպրոցի կադրերի վերապատրաստման ծրագրերի ոչ լիարժեքությունը,
3. մանկավարժական կադրերի ընտրության ոչ կատարյալ լինելը (մասնագիտական մակարդակի ստուգում գոյություն չունի):

Վերոբերյալի հետևանքով դպրոցի աշխատակիցները լիարժեք պատրաստ չեն մասնակցելու դպրոցի կառավարման գործընթացին, նրանց մոտ ձևավորված չեն համագործակցային հմտությունները և կարողությունները, նրանք ի վիճակի չեն ադեկվատ գնահատելու վարչական աշխատողներին, ինչը խոչընդոտ է հանդիսանում համագործակցությունն իրականացնելիս:

Կառավարումը գործունեություն է, որն ուղղված է որոշումների կայացմանը, կազմակերպմանը, վերահսկմանը, նպատակին համապատասխան կառավարման օբյեկտի կարգավորմանը, հուսալի տեղեկատվության հիման վրա արդյունքների վերլուծմանը և ամփոփմանը, տարբեր մարդկանց ղեկավարմանը՝ պահպանելով գործունեության ռեժիմը, կառուցվածքը, նպատակի և ծրագրի իրականացումը [3, 14]:

Հետևաբար, միասնական մոտեցումների բացակայությունը խաթարում է ղեկավարման ժողովրդավարական ոճը, ինչը հանգեցնում է փոխվստահության կորստի և ոչ ցանկալի վերջնարդյունքի: Հարկ է նշել նաև, որ ուսուցիչների սոցիալական վիճակը (չնայած այն հանգամանքին, որ այժմ փորձ է արվում ուսուցիչների կամավոր ատեստավորման, տարակարգի շնորհման ներդրման միջոցով այն բարելավվելուն) ևս խոչընդոտում է լիարժեք համագործակցությանը: Նշված հանգամանքներում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 05.12.2022 թ. N 76 հրամանից բխող կատարողականների ապահովման խնդիրը ավելի ակնհայտ կդարձնի խնդրառու հարցը: Ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան համադպրոցական պլանը նպատակառոտված է դպրոցի գործունեության լիարժեք կազմակերպմանը: Այն արդյունավետ կլինի, եթե տեղի ունենա աշխատանքի հստակ բաժանում տնօրենի տեղակալների, ԴԱԿ-ի, առարկայական մեթոդական միավորման նախագահների, դաստեղների և այլ մանկավարժական աշխատողների միջև, ինչպես նաև առանձին ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանները պիտի համաձայնեցված լինեն միմյանց հետ: Սակայն վերլուծելով «lib.armedu.am» կայքում հասանելի աշխատանքային պլանները՝ ակնհայտ կդառնա, որ դրանք գրեթե նույնաբովանդակ են, չունեն

չափելիության որևէ մեխանիզմ: Այնինչ դրանք պիտի բխեն ինչպես ամեն մի դպրոցի զարգացման հեռանկարային, ինչպես նաև համադպրոցական տարեկան աշխատանքային պլաններից: Ներկա վիճակը ոչ արդյունավետ փոխհամագործակցության արդյունք է: Բոլոր փաստերը հաստատում են այն կարծիքը, որ մանկավարժական աշխատողներն իրենց հուզող հարցերի պատասխանները գտնելու նպատակով շատ դեպքերում ապավինում են սոցիալական ցանցին: Սակայն այն պատասխանները, որոնք կարող ենք տեսնել սոցիալական հարթակներում, միշտ չէ, որ ճշմարիտ են:

Ուստի՝ խիստ կարևորելով՝ հարկ է նշել, որ մենեջմենթը մարդկանց հետ վարվելու միջոց է, ձև, կառավարման արվեստ և հեղինակություն, պահանջում է հատուկ հմտություն, ինչպես նաև վարչական հմտություններ [2, 15]:

Վերոբերյալից կարելի է հանգել այն գաղափարին, որ ներդպրոցական վերահսկողական մեխանիզմների մշակման, ներդրման և վերլուծության տեսանկյունից այդ համագործակցային աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ընտրել այնպիսի գործիքակազմ, որը հնարավորություն կտա ոչ միայն զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացի վերահսկմանը, այլև լուրջ խթան կհանդիսանա հաշվետվողականության բարձրացման համար: Այդպիսով կխթանենք նաև S2S գործիքակազմի արդյունավետ ներդրմանը և կիրառմանը, ինչպես նաև վերահսկողական աշխատանքների թվայնացմանը (այդ թվում՝ արխիվացմանը): Վերջինս կարելի է պահպանել նաև աշխատողի անձնական աշխատանքային թղթապանակում՝ որպես աշխատանքային պարտականությունների կատարման արդյունք, որը կարող է կիրառվել որպես աշխատողների աշխատանքային բնութագրի կազմելու և տրամադրելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու միջոց: Այնուամենայնիվ, առողջ համագործակցության պարագայում կբարելավվի ոչ միայն մարդկային շփումների մշակույթի մակարդակը, այլ նաև կբարձրանան փոխվստահության մթնոլորտը և արդյունավետ աշխատանքային գործունեությանը: Հետևաբար՝ նման մեխանիզմների ներդրումը ոչ միայն կնպաստի մանկավարժական աշխատողների աշխատանքային գործունեության և առկա իրավիճակի հստակեցմանը, այլև դրանց հիման վրա տարեկան և զարգացման հեռանկարային ծրագրերի կազմման և այդ ծրագրերով նախատեսված աշխատանքների կատարողականի, ներդպրոցական վերահսկողության աշխատանքների կազմակերպման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Խնդիրը լուծելու համար ղեկավար աշխատողներին առաջարկում ենք նաև մեր փորձը.

- որոշումների կայացման տարբեր եղանակներ.

- ✓ միանձնյա,
- ✓ կոլեկտիվի հետ համատեղ,
- ✓ նախագիծ պատրաստել, ապա ներկայացնել քննարկման,
- ✓ առաջարկել, որ մյուս աշխատակիցներն իրենց նախագիծը ներկայացնեն քննարկման,
- կազմակերպել փոխադարձ դասալսումներ ուսուցիչների և համատեղությամբ ուսուցիչ աշխատող վարչական աշխատողների միջև. այն ոչ միայն դիդակտիկական, այլև հոգեբանական նշանակություն ունի (դասալսումն իրականացնում է տնօրենն ուսուցչի մոտ և հակառակը),
- լինելով մասնակիցը՝
 - ✓ հրավիրել կլոր սեղաններ,
 - ✓ կազմակերպել կոլեկտիվի ժամանցը, հանգիստը (այցելություններ, ճանապարհորդություններ, էքսկուրսիաներ և այլն),
 - ✓ կազմակերպել հասարակական հանրագուտ աշխատանքներ:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-488>

Գրականություն

1. Ասատրյան Լ., Կարապետյան Ա. Ս., Ասատրյան Մ. Ա., Յուլյան Թ. Ֆ., Կրթության համակարգի կառավարման հիմունքները, Երևան, «Զանգակ-97», 2003, 224 էջ:
2. Байтасов Р., Управление образовательным учреждением, 2017. - 330 с.
3. Зайцев В.С., Управление образовательными системами. Краткий курс лекций для студентов заочной формы обучения: учебное пособие. Челябинск: Изд. ЗАО «Библиотека А. Миллера», 2019. - 90 с.
4. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=174349>
2. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165006>

Необходимость эффективного сотрудничества между педагогическим и управляющим персоналом в государственных образовательных учреждениях

Гагик Эминян
Лилит Багдасарян

Резюме

Ключевые слова: *внутришкольный контроль, эффективность, культура сотрудничества, совместное мероприятие, взаимное прослушивание уроков, общешкольная работа*

В статье затрагивается вопрос необходимости эффективного сотрудничества между педагогическим и управляющим персоналом в государственных образовательных учреждениях. Подчеркнута важность эффективного управления человеческими ресурсами, повышение подотчетности обучающихся и воспитательных работ, а также необходимость сохранения демократических принципов в этих работах. Подчеркивается содержание правовых требований, вытекающих из прав и обязанностей педагогических работников, с точки зрения повышения качества эффективности и подотчетности образовательного процесса. Одновременно указывается на внедрение механизма взаимного доверия и создание здоровой рабочей атмосферы, а также на необходимость приобретения информации, ее подлинности и оказания педагогической поддержки в учебно-педагогическом процессе, направленной на планирование работы, выполнение и повышение подотчетности. Подчеркивается необходимость организации совместных семинаров и тренингов административно-педагогических работников, а также осуществления внутришкольного надзора, разработки, и внедрения необходимых инструментов для этих работ – овладение инструментарием ИКТ и процессами проведения анализов в процессе отчетности, хранение информации и сравнительных анализов. Развитый педагогический коллектив ставит перед собой цели трех типов: собственно образовательные (текущие цели образовательной деятельности), цели развития учебно-воспитательной деятельности, цели саморазвития коллектива. Такой коллектив способен эффективно наращивать образовательный потенциал организации за счет освоения новых технологий, повышения профессионального уровня каждого педагога. Организованность коллектива – его способность выстраивать рациональную структуру совместной деятельности и гибко перестраивать ее в меняющихся условиях. Организованность определяется ответственностью членов коллектива, их сработанностью и включенностью в управление. Сплоченность коллектива отражается в способности противостоять внутренним и внешним воздействиям, отрицательно влияющим на эффективность совместной деятельности.

The Need for Effective Cooperation between Teaching and Administrative Staff in Public Educational Institutions

*Gagik Eminyan
Lilit Baghdasaryan*

Summary

Key words: *intra-school control, effectiveness, culture of cooperation, joint event, peer lesson observations, school-wide work*

The article touches upon the issue of effective cooperation between pedagogical and administrative staff in public educational institutions. An emphasis has been placed on the importance of effective human resource management, the increase of responsibility for teaching and training activities as well as the need to preserve democratic principles. The content of the legal requirements arising from the rights and obligations of teaching staff is emphasized in terms of improving the quality, efficiency and accountability of the educational process. It also highlights the introduction of a mechanism of mutual trust and the creation of a healthy working atmosphere. In addition, it emphasizes the need to acquire information, ensure its accuracy, and provide methodological and pedagogical support in the educational processes aimed at work planning, accountability implementation, and enhancement. The necessity of organizing joint seminars and trainings for administrative and pedagogical staff, as well as the implementation of intra-school supervision and development, the introduction of the necessary tools for these works – mastering ICT tools, conducting analysis in the process of accountability, storing of information and comparative analyzes are highlighted. A developed pedagogical team sets goals of three types: actual educational (current goals of education), goals for the development of educational activities, goals for the self-development of the team. The organization of the team is its ability to form a rational structure of joint activities and flexibly rebuild it under the changing conditions. The cohesion of the team reflects the ability to withstand internal and external influences that adversely affect the effectiveness of joint activities.

Ներկայացվել է 12.04.2023 թ.

Գրախոսվել է 26.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

Ուսանողակենտրոն և խնդրակենտրոն ուսուցման ազդեցությունը անգլերեն լեզվի բուհական դասընթացների վրա

**Մանանա Դալայան
Լուիզա Մարաբյան**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-496>

Հանգուցային բառեր. *նորարարական մոտեցում, խնդիր, լեզվի ուսուցում, նկարագրական մեթոդ, կրթության որակ, տեսական և էմպիրիկ մեթոդ, լեզվի մակարդակ*

Հատկապես վերջին տարիներին արագընթաց կերպով կրթական բարեփոխումներ են իրականացվում, որտեղ կիրառվում են նորարարական մոտեցումներ: Լեզվի դասավանդման նոր մոտեցումներ փորձարկելու անհրաժեշտությունը և կրթության որակի բարձրացման խնդիրը հրատապ և արդիական է դարձել կրթական համակարգում: Ուստի, ուսումնական գործընթացի մշակման ծրագրերը միանշանակորեն պետք է որդեգրեն ու կիրառեն խնդրի վրա հիմնված ուսուցումը (PBL)՝ որպես բուհական կրթության ռազմավարություն: Հետազոտության նպատակը նշված մեթոդը կիրառելն ու ինտեգրելն է, ինչը կխթանի ուսումնական գործընթացը՝ բարելավելով ուսանողների լեզվի մակարդակի բարձրացումը: Հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են ուսանողակենտրոն դասավանդման և խնդրի վրա հիմնված ուսուցման փոխհարաբերությունները լեզվի ուսուցման համատեքստում: Խնդրի վրա հիմնված ուսուցումը մեթոդ է, որտեղ իրական, մեթոդա աշխարհի բարդ խնդիրները օգտագործվում են որպես միջոց՝ նպաստելու ուսանողների մտածողության մակարդակի բարձրացմանը և քննադատական մտածողության ձևավորմանը: Բացի դասընթացի բովանդակությունից՝ խնդրի վրա հիմնված ուսուցումը կարող է նպաստել անալիտիկ մտածողության հմտությունների, խնդիրներ լուծելու կարողությունների և հաղորդակցման հմտությունների զարգացմանը: Ստացված արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ այլ հետազոտողների համար՝ իրականացնելու իրենց կողմից ծավալված ուսումնասիրությունները:

Խնդրի վրա հիմնված ուսուցումը նաև հնարավորություն է ընձեռում ուսանողներին խմբերում աշխատելու, հետազոտական նյութեր գտնելու, ինքնավերահսկելու և ինքնագնահատելու համար:

Ուսումնասիրությունը կատարվել է տեսական և փորձարարական հետազոտական մեթոդներից դիտման, նկարագրական, համեմատության, հակադրության և վերլուծության մեթոդներով: Արդյունքում եզրահանգվել է, որ ուսանողները դրսևորել են սովորելու շահադրդման ավելի բարձր աստիճան և ձեռք են բերել ուսուցման ավելի տպավորիչ արդյունքներ: Մասնավորապես, տվյալ ուսումնասիրությունը ընդգծում է ուսանողների ուսուցման

կարողությունների համապատասխանեցման կարևորությունը ուսումնական գործունեության տեսակների հետ: Նշված հանգամանքն էլ կարևորում է աշխատանքի գործնական նշանակությունը:


Ներածություն: Խնդրի վրա հիմնված ուսուցումը (PBL) ուսանողակենտրոն մոտեցում է, որը նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը: Այն կարող է ներառվել ուսումնական տարբեր իրավիճակներում և կիրառվել ամբողջ կիսամյակի ընթացքում՝ որպես դասավանդման առաջնային մեթոդ: Կրթական այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բացահայտման ուսուցումը, փորձառական ուսուցումը և ուսանողակենտրոն ուսուցումը, հստակ առաջարկում են ձևավորել հետաքրքրասիրություն և ինքնորոշման զգացում [2, 4]: Խնդրակենտրոն ուսուցումը համեմատաբար վերջերս է ի հայտ եկել, որի տարածման մեջ էական դեր են խաղացել Բարոուզը և Թեմբլինը՝ ընդգրկելով խնդիրների լուծման գործում ուսանողների ակտիվ և անկախ պրակտիկ գործունեությունը [1, 7]: Ավելի ուշ Դոն Ուոդսը ստեղծեց «խնդրի վրա հիմնված ուսուցում» տերմինը, երբ նա Կանադայի ՄաքՄաստերի համալսարանում քիմիա առարկան էր դասավանդում [4, 19]: Դոկտոր Դոն Ուոդսի դիտարկմամբ՝ տվյալ մեթոդը շահադրդում է ուսանողներին: Խնդրի վրա հիմնված ուսուցման ժամանակ ստեղծվում է մի խնդրահարույց իրավիճակ, իսկ ուսանողներից պահանջվում է մտածել, քննարկել և որոնել խնդրի լուծումը: Իր հերթին, դասախոսը հանդիսանում է ուղղորդող, ով համակարգում, շահադրդում և վերահսկում է այդ գործընթացը: Այս մեթոդը ոչ միայն կենտրոնանում է խնդիրների լուծման վրա, այլև զարգացնում է մի շարք հմտություններ և հատկանիշներ հատկապես բարձրագույն ուսումնական հաստատություններում լեզվի ուսուցման գործընթացում: Այն հնարավորություն է ընձեռում ուսանողների մոտ ձևավորելու հաղորդակցման հմտություններ՝ օգտագործելով լեզուն որպես իրական գործիք՝ հաղորդակցման գործընթացը իրականացնելու համար: Համաձայն Լինդա Նիլսոնի՝ լավ մշակված խնդրի վրա հիմնված մեթոդը ուսանողներին հնարավորություն է տալիս զարգացնել հմտություններ, ինչպիսիք են՝ թիմային աշխատանք, նախագծերի կառավարում և առաջնորդական հմտությունների ձևավորում, բանավոր և գրավոր հաղորդակցություն, խմբային գործընթացների ինքնագիտակցում և գնահատում, ինքնուրույն աշխատանք, քննադատական մտածողություն և վերլուծություն, հասկացությունների բացատրում, ինքնուղղված ուսուցում, դասընթացի բովանդակության կիրառում իրական աշխարհի օրինակների վրա, հետազոտություն և տեղեկատվական գրագիտություն [3, 18]: Այս մոտեցման կարևոր և առանցքային կետն այն է, որ ուսանողները պատասխանատու են իրենց ուսուցման համար՝ սովորելով, թե ինչպես կիրառել ձեռք բերված նախնական գիտելիքները և ինչ մեթոդով ձեռք բերել նոր գիտելիքներ:

Խնդրի վրա հիմնված ուսուցման գործընթացը: Խնդրի վրա հիմնված

ուսուցման լսարաններում և՛ դասախոսների, և՛ ուսանողների դերերն ու պարտականությունները տարբերվում են ավանդական ուսուցման տեսակներից: Դասախոսը պարզապես տեղեկատվություն չի ներկայացնում կամ ուղղակիորեն չի վերահսկում աշխատանքի գործընթացը: Փոխարենը՝ դասախոսը ուսանողներին տալիս է համապատասխան խնդիրներ աշխատելու համար, օգնում է նրանց գտնել անհրաժեշտ նյութեր, տալիս է անհրաժեշտ դիտարկում և աջակցություն խնդիրների լուծման գործընթացում, գնահատում ուսանողների մասնակցությունը՝ զարգացնելով նրանց լեզվական և գրագիտության հմտությունները: Այս գործընթացը ընդհանուր առմամբ ներառում է չորս հիմնական քայլ (տե՛ս գծապատկեր 1)։

1. ծանոթանալ խնդրին,
2. ուսումնասիրել խնդիրը,
3. հնարավոր լուծումներ առաջարկել,
4. հաշվի առնելով յուրաքանչյուր լուծման հետևանքները՝ ընտրել առավել կենսունակ լուծում,
5. կիրառել նկարագրական և համեմատական, հակադրության մեթոդներ:

Դասախոսի դերը խնդրի վրա հիմնված ուսուցման մեջ ներառում է հետևյալ քայլերը (տե՛ս գծապատկեր 1)։



Գծապատկեր 1. Ուսանողի և դասախոսի դերերը խնդրի վրա հիմնված ուսուցման մեջ

1. Նախապես ներկայացնել խնդիրը՝ օգտագործելով նկարներ, տեքստեր, տեսանյութեր և խնդրին առնչվող բառապաշար:

2. Բաժանել խմբերի և տրամադրել ռեսուրսներ (համոզվել, որ ուսանողները հասկանում են խնդիրը, բացատրել, թե ինչ է նրանցից ակնկալվում, ընդգծել՝ որ պատասխանները կամ լուծումները կարող են բազմապիսի լինել, իրենք պետք է ընտրեն առավել կենսունակ լուծումը և հիմնավորեն, թե ինչու են ընտրել այդ լուծումը: Անհրաժեշտ է ուսանողներին հասանելի դարձնել ժամանակակից ռեսուրսները՝ համացանցը, գրքերը, ամսագրերը, թերթերը, հեռուստատեսությունը և հեռախոսները: Դասախոսը պետք է վստահ լինի, որ ուսանողները տեղյակ են ռեսուրսների շրջանակի մասին և գիտեն՝ ինչպես օգտագործել դրանք):

3. Կառավարել և աջակցել (հետևել ուսանողներին և անհրաժեշտության դեպքում աջակցել, նշումներ կատարել և արձագանքել ուսանողների մեկնաբանություններին՝ զերծ մնալով լուծումներ տալու առաջարկներից):

4. Հետևել և գնահատել (ուսանողներին հնարավորություն ընձեռել ներկայացնել և կիսվել իրենց աշխատանքների արդյունքներով; ապահովել դիտարկումների հիման վրա հետագա գործողությունները՝ օրինակ, քերականության, արտասանության կամ բառային քննարկումներ; գնահատել ուսանողների մասնակցությունը և հաջողությունը գործունեության մեջ):

5. Կիրառել փորձարարկան-հետազոտական, ինչպես նաև դիտման և վերլուծության մեթոդներ:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրության նպատակն է դիտարկել ուսանողների ընկալումները և պարզել ուսանողակենտրոն և խնդրակենտրոն ուսուցման ազդեցությունը ուսանողների լեզվական հմտությունների զարգացման և կատարողականության վրա:


Հետազոտության նորայթը: Հանգամանորեն ներկայացնելով խնդրակենտրոն ուսուցման առանձնահատկությունները՝ առաջին անգամ վեր են հանվել խնդրակենտրոն ուսուցման միջոցների կիրառման առանձնահատկությունները, խնդրակենտրոն իրավիճակների ստեղծման տարբեր եղանակները անգլերենի բուհական դասընթացում՝ մեթոդական նպատակային ու հաջորդական քայլերի իրացմամբ:


Հետազոտության մեթոդները: Ուսումնասիրությունը կատարվել է տեսական և փորձարարական հետազոտական մեթոդներից դիտման, նկարագրական, համեմատության, հակադրության և վերլուծության մեթոդներով: Տվյալները վերլուծվել են հիմնականում քանակական մեթոդով՝ հարցումների վիճակագրական վերլուծությամբ:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտության մեջ ընդգրկվել են ՀԵՀ-ի (Հայաստանի Եվրոպական Համալսարանի) առաջին և երկրորդ կուրսի 50 ուսանողներ, որոնցից 15-ը կառավարման ֆակուլտետի ուսանողներ են, 18-ը՝ իրավագիտության, իսկ 17-ը՝ գրաֆիկ-դիզայն բաժնի ուսանողներ:

Օտար լեզվի (անգլերենի) ուսուցման մեկ կիսամյակի (16 շաբաթ) համար հատկացվում է 90 ժամ, յուրաքանչյուր դասապրոցեսը տևում է 80 րոպե: Քննարկումները, լսարանային աշխատանքները և խմբային ներկայացումները անցկացվել են սովորական լսարաներում՝ օգտագործելով գրատախտակ, համակարգիչ և պրոյեկտոր:

Գծապատկեր 2-ում թվարկված են խնդրի վրա հիմնված դասավանդման ձևաչափը՝ ըստ լեզվական 4 հմտությունների (ընթերցանություն, ունկնդրում, բանավոր խոսք, գրավոր խոսք):





Գծապատկեր 2. խնդրի վրա հիմնված դասավանդումը՝ ըստ լեզվական չորս հմտությունների իմացության

Հետազոտության արդյունքները: Կատարված հետազոտությունից կարելի է արձանագրել, որ ուսանողները դրական արձագանք են տվել նոր մեթոդի կիրառմանը: Ըստ հաճախելիության սանդղակի՝ կարելի է ենթադրել, որ նրանք եղել են բավականաչափ ոգևորված ու հետաքրքրված և բարձրացրել են լեզվի իմացության մակարդակը: Լեզվական իմացությունից գատ ուսանողները ձեռք են բերել վերլուծելու, համադրելու, փաստարկներ ներկայացնելու, լավագույն լուծումների համար որոշումներ կայացնելու հմտություններ: Առանձին իրականացված հարցումները ցույց են տվել, որ խնդրի վրա հիմնված ուսուցումը նպաստել է ուսանողների միջանձնային հաղորդակցու-

թյան ձևավորմանը, ինչպես նաև օգնել է զարգացնելու խմբի դինամիկան: Աղյուսակ 1-ում պատկերված է ուսանողների հարցման արդյունքները 1-ից 5 սանդղակով (1 – առավել բացասական, 5 - առավել դրական): Ընդհանուր առմամբ, ուսանողները շատ դրականորեն էին ընկալել խնդրի վրա հիմնված ուսուցման մեթոդը:

Աղյուսակ 1

Ուսանողների ընկալումը խնդրի վրա հիմնված ուսուցման մեթոդի վերաբերյալ

Խնդիրները թույլ տվեցին ուսուցումը կիրառել իրական, մերօրյա աշխարհի իրավիճակներում	Առավել դրական
Խնդիրները նպաստեցին խմբային աշխատանքին	Առավել դրական
Խնդիրները նպաստեցին հաղորդակցական հմտությունների անկաշկանդ ձևավորմանը	Առավել դրական
Ես մոտիվացված էի սովորելու և օգտագործելու անզլերեն լեզուն խնդիրների լուծման ողջ ընթացքում	Առավել դրական
Ես կարող էի գտնել խնդրի լուծման համար համապատասխան նյութեր	Դրական
Ես բավականաչափ ժամանակ ունեի խնդիրների լուծումը գտնելու համար	Դրական
Խնդիրները թույլ տվեցին զարգացնել լեզվի իմացության 4 հմտությունները	Դրական
Խնդիրները ձևավորեցին քննադատական մտածողություն	Առավել դրական

Ուսանողների մեծամասնությունը (90 %) առավել դրական է արձագանքել այն հարցին, թե խնդիրները թույլ տվեցին ուսուցումը կիրառել իրական աշխարհի իրավիճակներում և նպաստեցին միմյանց հետ համագործակցությանը: Բացի այդ՝ խնդրակենտրոն մոտեցումը խթանեց նաև նոր և համապատասխան գիտելիքների ձեռքբերմանը՝ ձևավորելով ազատ և անկաշկանդ մթնոլորտ: Նրանք ակտիվորեն մասնակցել են խմբային քննարկումներին դրսևորելով քննադատական մտածողություն և վերլուծական միտք: Ուսանողները համաձայնեցին (89 %), որ նրանք շահադրդված էին սովորելու և օգտագործելու անզլերեն լեզուն որպես հաղորդակցման իրականացման գործիք: Այնուամենայնիվ, որոշ ուսանողներ (60 %) պնդել են, որ բավարար ժամանակ չի հատկացվել խնդրի լուծմանը, և երբեմն դժվարություն են ունեցել համապատասխան նյութեր գտնելու ընթացքում: Տվյալ մեթոդը ժամանակատար է, այդ իսկ պատճառով նախնական հենքային պատրաստվածություն է պահանջում թե՛ ուսանողի և թե՛ դասախոսի կողմից: Մեթոդի կիրառումը

ենթադրում է նաև տեխնիկական հագեցվածություն: Սպասվող թերացումներին գերծ մնալու և անզլերեն լեզվի դասավանդմանը խոչընդոտող հանգամանքներից խուսափելու համար նախապես ընտրվել է ՀԵՀ-ի տվյալ մասնագիտությանը և խմբի մակարդակին համապատասխան նյութ, թեմա և բառապաշար՝ լեզվի յուրացման չորս հմտությունները հնարավորինս մատչելի դարձնելու նպատակով:

Չորս հիմնական լեզվական հմտությունների առումով հարցվողները ընթերցանության հմտությունները խնդրակենտրոն ուսուցման մեջ գնահատել են որպես ամենաարդյունավետը: Դրան հաջորդում են խոսելու, լսելու և գրելու հմտությունները: Նրանք համաձայնել են նաև, որ խնդրակենտրոն ուսուցումը արդյունավետ ազդեցություն է ունեցել նաև իրենց բառապաշարի զարգացման և քերականության վրա:

Եզրակացություն: Մույն ուսումնասիրությունը փաստում է, որ խնդրի վրա հիմնված ուսուցումը նպաստում է լեզվի բուհական դասընթացների զարգացմանը: Այս մեթոդը ոչ միայն բարելավում և բարձրացնում է լեզվի իմացության մակարդակը, այլև խթան է հանդիսանում բարձրացնելու ուսանողի շահադրդումը և ինքնուրույնությունը: Լեզվի բուհական դասընթացում ուսանողակենտրոն և խնդրակենտրոն ուսուցումը ենթադրում է նոր գիտելիքների, հմտությունների մշակում և ամրապնդում, ուսանողների քննադատական մտածողության, համագործակցության և խնդիրների լուծման հմտությունների զարգացում: Նախ՝ անհրաժեշտ է հստակորեն ներկայացնել խնդրի վրա հիմնված ուսուցման սկզբունքը և համոզվել, որ ուսանողները ակտիվորեն մասնակցում են ուսուցման գործընթացին: Խնդրի վրա հիմնված ուսուցման առաջադրանքները օգտագործվել են որպես խնդիրների լուծման հմտություններ ձեռք բերելու գործընթաց, որոնք անհրաժեշտ են իրենց առաջադրանքների ուժեղ և թույլ կողմերը վերլուծելու համար:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-496>

Գրականություն

1. Barrows, H.S. and Tamblyn, R.M. Problem-based learning, an approach to medical education. New York: Springer, p. 224, 1980.
2. Kolb, D.A. Experiential learning. Experience as the source of learning and development. New Jersey: Prentice Hall, p. 377, 1984.
3. Nilson, L. B. Teaching at its best: A research-based resource for college instructors (2nd ed.). San Francisco, CA: Jossey-Bass, p. 375, 2010.
4. Woods D. R., Problem-based Learning for Large Classes in Chemical Engineering,” in “Bringing Problem-based Learning to Higher Education: Theory and Practice,” Wilkerson L., Gijsselaers W.H., eds., New Directions for Teaching and Learning, No. 68, pp. 91-99, Jossey-Bass Publishers, San Francisco., p. 103, 1996.

**Влияние студентно-ориентированного преподавания
английского языка и проблемно-ориентированного обучения
на университетских языковых курсах**

*Манана Далалян
Луиза Марабян*

Резюме

Ключевые слова: *инновационный подход, проблема, обучение языка, качество образования, теоретический и эмпирический метод, уровень языка*

За последнее время образовательные реформы и методы были стремительно и целенаправленно реализованы с использованием инновационных подходов. Необходимость применять новые подходы к обучению языкам и вопрос повышения качества образования становятся все более актуальными. Следовательно, программы разработки учебных планов определенно не могут упускать проблемно-ориентированное обучение (PBL) в качестве стратегии высшего образования. Цель данного исследования состоит в исследовании взаимосвязей между студентно-ориентированным подходом преподавания к проблемно-ориентированному обучению в контексте преподавания языка. Проблемно-ориентированное обучение – метод, при котором сложные реальные задачи используются как способ содействия на развитие мышления учащихся. Проблемно-ориентированное обучение может стимулировать навыки критического мышления, способности решения проблем, коммуникативные навыки. Оно также открывает возможности коллаборации работать в группах, находить исследовательские материалы, осуществлять самоконтроль и самооценку. Исследование проводилось с использованием теоретико-эмпирических методов исследования наблюдения, описания, сравнения, анализа сопоставления. В результате студенты продемонстрировали более высокий уровень мотивации к обучению и достигли более впечатляющих результатов обучения. В частности, данное исследование подчеркивает важность сочетания способностей учащихся к обучению с правильными видами учебной деятельности. Отзывы большинства студентов (90 %) были положительными на счет задач позволяющие применить обучение к реальным ситуациям.

Проблемно-ориентированный подход также способствует получению новых и актуальных знаний, создавая свободную и непринужденную атмосферу. Студенты активно участвовали в групповых дискуссиях, демонстрируя критическое и аналитическое мышление. 89 % студентов согласились, что они были заинтересованы в изучении и использовании английского языка. Однако некоторые учащиеся (60 %) утверждали, что на решение задач не хватает достаточного времени, и они иногда испытывают трудности с поиском соответствующих материалов.

The Impact of Student-Centered Teaching and Problem-Based Learning on University English Language Courses

Manana Dalalyan

Luiza Marabyan

Summary

Key words: *innovative approach, problem, learning a language, quality of education, theoretical and empirical method, level of language*

Over the last few years, educational reforms have been rapidly implemented using innovative approaches. The need to try new approaches to teaching languages and the issue of improving the quality of education, have become increasingly urgent. Therefore, programs in curriculum development can definitely not adopt Problem-Based Learning (PBL) as a higher education strategy. The purpose of the present study was to investigate the relationship between student-centered teaching approach and problem-based learning in the context of language teaching. Problem-based learning is a method where complex, contemporary problems are used as a way to lead students develop their critical thinking. In addition to the content of the course, problem-based learning can stimulate critical thinking skills, problem-solving abilities and communication skills. It also gives students opportunity to work in groups, find research materials, as well as develop skill in self-monitoring and self-evaluation. The study was conducted using theoretical-empirical research methods of observation, description, comparison, contrast and analysis. As a result, students demonstrated a higher level of motivation to learn and achieved more impressive learning outcome. In particular, this study highlights the importance of combining students' learning abilities with the right types of learning activities.

The problem-centered approach also promoted the acquisition of new and relevant knowledge, creating free and relaxed atmosphere. Students agreed that were motivated to learn and use the English language (89 %). However, some students (60 %) claimed that they lacked time to spend on problem solving and sometimes they had difficulty in finding relevant materials. Among the four basic language skills, respondents rated reading skills as the most effective in problem-based learning and accepted that problem-based learning had a moderate effect both on their vocabulary and grammar.

Ներկայացվել է 27.02.2023 թ.

Գրախոսվել է 26.03.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.

**Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական
ակտիվությունը ձևավորող մանկավարժական պայմանները**

**Քարմիրե Վիրաբյան
Արմինե Մանուկյան**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-506>

***Հանգուցային բառեր.** մտավոր զարգացում, մանկավարժական պայման, նախադպրոցական տարիք, սոցիալական միջավայր, խաղային գործունեություն, հնարավորություն, կրթական գործընթաց*

Նախաբան

Մանկավարժական գիտության և պրակտիկայի ժամանակակից վիճակը բնութագրվում է արմատական փոփոխություններով, որն էլ խնդիր է դնում ձևավորել նոր անհատականություն՝ սոցիալապես ակտիվ, ստեղծագործ, փոխակերպող գործունեության ընդունակ, անկախ որոշումներ կայացնելու պատրաստ: Հասարակության կողմից դրված այս պահանջները վերաբերում են նաև ժամանակակից նախադպրոցական կրթությանը: Նրանք առաջնահերթ են համարում բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը անձնավորության կրթության համար, որն ուղղված է շրջակա միջավայրի հետ լիարժեք փոխգործակցությանը՝ տարիքային և անհատական առանձնահատկություններին, հնարավորություններին համապատասխան:

Հետազոտության գիտական նորույթը այն է, որ ստեղծել ենք մանկավարժական նոր պայմաններ, որոնք ապահովում են երեխաների սոցիալական ակտիվության համար անհրաժեշտ գործառնական դաշտ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նախադպրոցական տարիքը համարվում է ամենաբարենպաստ շրջան սոցիալական ակտիվության զարգացման համար: Այն պայմանավորված է մի կողմից սոցիալական ազդեցությունների նկատմամբ ունեցած բարձր զգայունությամբ, մյուս կողմից՝ կամայականության, ինքնագիտակցության, ներքին էթիկական տարրերի զարգացմամբ, շարժառիթներով, փորձի ընդհանրացմամբ, որն ապահովում է երեխայի գիտակցության և անկախության որոշակի մակարդակ (Շ. Ա. Ամոնաշվիլի, Լ. Ս. Վիգոտսկի, Ա. Լ. Վենգեր, Լ. Ի. Բոժովիչ, Մ. Ի. Լիսինա, Վ. Ս. Մուխինա և այլք): Հոգեբանական և մանկավարժական գրականության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անձի սոցիալական ակտիվության ձևավորման տարրերը միշտ եղել են սոցիալական և բարոյական կրթության կարևորագույն մաս: Այնուամենայնիվ, սոցիալական ակտիվության խնդիրը, նրա դրսևորումները և դինամիկան նախադպրոցա-

կան տարիքում գործնականում լիարժեք ուսումնասիրված չեն: Նախադպրոցական տարիքի երեխայի սոցիալական ակտիվության ուսումնասիրության մոտեցումների որոնման ընթացքում հարց առաջացավ այն մանկավարժական պայմանների կիրառման մասին, որում սոցիալական ակտիվությունը կարող է առավել արդյունավետ ձևավորվել: Ուստի մեր առջև նպատակ ենք դրել բացահայտել այն մանկավարժական պայմանները, որոնք հնարավորություն կտան ձևավորել նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական ակտիվությունը գործունեության տարբեր տեսակներում:

Սոցիալական ակտիվության ձևավորման մանկավարժական պայմանները

Հայտնի է, որ մարդու ցանկացած գործունեություն տեղի է ունենում արտաքին աշխարհի, հասարակության, սոցիալական միջավայրի հետ նրա փոխգործակցության ընթացքում: Մարդու և հասարակության փոխազդեցության ձևերից մեկը սոցիալականացման գործընթացն է: Մարդը սովորում է հասարակության նորմերը, կանոնները, պահանջները՝ դառնալով նրա լիիրավ անդամ, և այդ գործընթացը պայմանավորված է անհատի ակտիվ գործունեությամբ, նրա ակտիվ ընդգրկմամբ սոցիալական միջավայրում: Իսկ առաջին պլան է մղվում նախադպրոցական տարիքի երեխային սոցիալական աշխարհին ծանոթացնելու խնդիրը, ինչը նրա համար նշանակում է «ճանապարհներ բացել հասարակության նորմերի օպտիմալ զարգացման համար և, որ ամենակարևորն է, ընդլայնել նրա ինքնազարգացման կարողությունները» (Դ. Բ. Ֆելդշտեյն):

Ինչպե՞ս կարող ենք ձևավորել նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական ակտիվությունը:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացի առաջատար նպատակը յուրաքանչյուր երեխայի անձնավորության ձևավորումն ու զարգացումն է: Անձնավորությունը՝ որպես անձի սոցիալական հատկանիշ, չի կարող զարգանալ առանց նրա մեջ սոցիալական ակտիվության ձևավորման:

Սոցիալական ակտիվությունն ինքնաբերաբար չի առաջանում: Ձևավորումը նպատակաուղղված աշխատանք է պահանջում՝ սկսած նախադպրոցական տարիքից, քանի որ այստեղ դրվում է անհատականության հիմքը, զարգանում են տարբեր հարաբերություններ միջավայրի հետ: Երեխայի զարգացման գործընթացում յուրացվում են սոցիալական նորմեր ու կանոններ, բարելավվում է նրա վարքը, և նրա գործողությունները ստանում են սոցիալապես որոշված ձև: Ջարգացման գործընթացը պասսիվ չէ, այլ իրականացվում է սոցիալական միջավայրի հետ երեխայի ակտիվ փոխազդեցության արդյունքում: Անհրաժեշտ է, որ հենց սկզբից նման գործունեությունը ստանա ընդգծված սոցիալական բնույթ:

Սոցիալական ակտիվությունը ձևավորվում է երեխայի գործունեության ընթացքում: Ավագ նախադպրոցականներն ակտիվորեն շփվում են իրենց հասակակիցների հետ ինչպես ազատ, այնպես էլ կազմակերպված գործունեության տարբեր տեսակներում: Նախադպրոցական տարիքի երեխայի գործունեության բոլոր ոլորտներում կոլեկտիվ գործունեությունը նրանց մեծ մասի կողմից դիտվում է որպես գրավիչ, օգտակար և նախընտրելի: Համատեղ գործունեությունը և հասակակիցների հետ շփումը հիմք են հանդիսանում դրական, ընկերական հարաբերությունների զարգացման, փոխօգնության համար, երեխաների մոտ առաջացնում են միմյանց նկատմամբ կարեկցանքի զգացում, ինչը անհրաժեշտ հիմք է հանդիսանում սոցիալական ակտիվության զարգացման համար:

Սոցիալական ակտիվությունը՝ որպես անձի համալիր կրթություն, ներառում է գործունեության տարբեր տեսակների կարևորության գիտակցումը, դրան մասնակցելու պատրաստակամությունն ու ցանկությունը, ինքնուրույն գործելու կարողությունը, նախաձեռնողականությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը և այլն: Երեխան սպունգի նման կլանում է իր հետ աշխատող դաստիարակի գիտելիքները, կարողությունները, վարքառճը: Ուստի և՛ ինքնուրույն, և՛ հատուկ կազմակերպված ուսուցումն ու դաստիարակությունը մեծապես նպաստում են նրա բազմակողմանի զարգացմանը: Պատշաճ կազմակերպված ուսումնադաստիարակչական միջավայրը ծառայում է որպես լիարժեք զարգացման աղբյուր, որի ընթացքում երեխան մեծահասակի օգնությամբ ձեռք է բերում անհրաժեշտ որակներ և անհատականության գծեր:

Սոցիալական ակտիվությունը հասկացություն է, որն արտացոլում է հասարակության մեջ անհատների և սոցիալական խմբերի գործունեության բնույթը:

Սոցիալական ակտիվության առանձնահատկությունն այն է, որ այն դրսևորվում է գործունեության մեջ: Այնուամենայնիվ, ակտիվությունը պարզապես գործունեությունն չէ, այն անհատի կյանքում արտաքին և ներքին միտումների արտացոլման, արտահայտման և իրականացման միասնությունն է: Ակտիվությունը այն առանձնահատկությունն է, որը դրսևորվում է պահանջմունքները բավարարող օբյեկտների և ինֆորմացիայի որոնումներում: Նրա վերջնական նպատակն է պահանջմունքների բավարարումը և միջավայրի վրա վերահսկողություն սահմանելը [4, 8-9]: Ակտիվությունը մարդկային գործունեության, հաղորդակցման և վարքի մոդելավորման, կառուցվածքի և ինքնիրացման արժեքավոր միջոց է: Սոցիալական ակտիվությունն անձնավորության այն հատկությունն է, որն արտահայտվում է գոր-

ծունեության տարբեր ձևերով՝ խաղերի, ուսումնական, սպորտային, կերպարվեստային և հասարակական գործունեության մեջ: Սոցիալական ակտիվությունն ուղղված է շրջապատող աշխարհի վերափոխմանը և սեփական անձնավորության ձևավորմանը: Այսինքն՝ սոցիալական ակտիվության արդյունքն ինքը՝ մարդն է. այն ուղղված է մարդու կենսագործունեության ապահովմանը [2, 107-108]: Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական ակտիվության ձևավորման կարևոր առանձնահատկություն է նաև այն, որ նրա գործունեության նպատակային կողմնորոշումը մեծապես պայմանավորված է նախադպրոցականի հիմնական գործունեության բնույթով և այն դիրքորոշմամբ, որը ճիշտ է իր համար:

Մեր ուսումնասիրության մեջ ենթադրում ենք, որ մանկավարժական որոշակի պայմանների պահպանման դեպքում սոցիալական ակտիվության ձևավորումը ավելի արդյունավետ կլինի ավագ նախադպրոցական տարիքում:

«Մանկավարժական պայմաններ» հասկացության սահմանումը հիմնարար նշանակություն ունի մեր ուսումնասիրության համար, քանի որ ցանկացած կրթական համակարգ չի կարող կատարելագործվել առանց այդ պայմանների կիրառման: Մանկավարժական պայմաններն այն հանգամանքներն են, որոնք նպաստում են ուսումնական գործընթացում նպատակին հասնելուն [1, 316]:

S. Լևկինան կարծում է, որ մանկավարժական պայմանները նպատակին հասնելուն ուղղված բովանդակության, ձևերի, մեթոդների, տեխնիկայի, նյութական և տարածական միջավայրի օբյեկտիվ հնարավորությունների ամբողջությունն են [6, 94]: Միննույն ժամանակ, մանկավարժական պայմանների փաթեթը պետք է լինի ամբողջական, քանի որ պատահական պայմանները չեն նպաստում արդյունավետության բարձրացմանը: Այդ մասին է վկայում նախադպրոցական կրթության համակարգում տիրող իրավիճակը:

Երեխայի մոտ ակտիվությունը ի հայտ է գալիս տարբեր տեսակի գործունեության մեջ՝ խաղ, աշխատանք, ուսուցում: Գործողություններից յուրաքանչյուրն ուղղված է որոշակի կարիքների բավարարմանը. խաղային գործունեությունն իրենից ներկայացնում է ինքնարժեք գործունեություն, որը նախադպրոցականին շնորհում է ակտիվության, ներքին ազատության և ինքնուրույնության զգացողություն, ցանկալին իրողություն դարձնելու վստահություն, իրականության իր տեսանկյունից նշանակալի կողմերը կրկին վերապրելու, հաճույք և բավարարվածություն զգալու հնարավորություններ [3, 213-214]: Աշխատանքի միջոցով նախադպրոցականն ավելի է մտերմանում մեծահասակի հետ, ճանաչում սեփական հնարավորությունները, ձեռք է բերում

կյանքի հմտություններ, փորձում ինքնահաստատվել: Ուսուցումը բավարարում է երեխայի հետաքրքրությունները ուսումնական գործունեության նկատմամբ (գիտելիք, կարողություն և հմտություն):

Ակտիվությունը գործունեության խթանն է: Բայց եթե գործունեությունը կազմակերպված չէ, չի ապահովվում նրա զարգացումը, ապա ակտիվությունը դեռ «ելք է փնտրում» և կարող է ընդունել անցանկալի ձևեր:

Առանց մեծահասակի երեխան չի կարող գոյատևել որպես կենդանի օրգանիզմ և չի կարող զարգանալ որպես սոցիալական անձնավորություն: Շատ բան կախված է նրանից, թե արդյոք մեծահասակը երեխայի կողքին է: Եթե երեխան շրջապատված է բարի, սիրալիք, զուսպ մարդկանցով, եթե նրանք աշխատասեր են և կենսուրախ, ապա նրա սոցիալական փորձը լի է մարդկային փոխազդեցության հենց այդպիսի օրինաչափություններով: Եթե երեխան ապրում է նյարդայնության, թշնամանքի, կոպտության միջավայրում, ապա նա ձեռք է բերում համապատասխան սոցիալական փորձ: Իհարկե, սրանից չի բխում, որ միայն այս փորձով երեխան կապրի իր կյանքը, բայց նման պայմաններում հակասոցիալական դառնալու հավանականությունն ավելի մեծ է: Նաև անհնար է երաշխավորել բարեկեցիկ ընտանիքում դաստիարակության լիովին հաջող արդյունք: Ցավոք, անձնավորություն դառնալու գործընթացը շատ բարդ է և ենթակա է բազմաթիվ անտեսանելի ազդեցությունների:

Սոցիալական ակտիվությունն իր կառուցվածքում ներառում է.

1. ինքնուրույն նպատակներ դնելու և հասնելու դրանց իրականացմանը,
2. գործունեության ընթացքում մեթոդներ ընտրելու և դրանցով գործելու կարողություն,
3. գործունեության արդյունքներն ինքնուրույն վերահսկելու և գնահատելու կարողություն:

Նախադպրոցականների սոցիալական ակտիվությունը առարկայական գործունեության մոտեցման տեսանկյունից սահմանվում է որպես անձի գործունեության ձև, որը որոշում է անձնավորության գիտակցության և սոցիալական իրավասության զարգացումը, որը դրսևորվում է հետևյալ տեսանկյուններով.

1. ճանաչողական տեսանկյուն (դրսևորվում է ցանկության, հետաքրքրության, գործունեության, աշխատանքի, խաղի, մարդկանց փոխհարաբերությունների դիտարկման, նրանց կոնֆլիկտների լուծման, բանակցելու, վարքագծային խնդիրներ քննարկելու ունակությամբ և այլն),
2. հուզական և մոտիվացիոն տեսանկյուն (կապված մեծահասակների և

հասակակիցների հետ շփվելու անհրաժեշտության, նրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի, նրանց հետ փոխգործակցությունը պահպանելու և զարգացնելու պատրաստակամության և ցանկության հետ),

3. գործնական տեսանկյուն (կապված մեծահասակների և հասակակիցների հետ անմիջական փոխգործակցության հետ):

Այս տարիքի երեխաների մոտ արդեն կարելի է տեսնել սիրելիների հանդեպ անկեղծ մտահոգության դրսևորումներ, գործողություններ, որոնք ուղղված են նրանց անհանգստությանը և հոգատարությանը: Երեխան ձեռք է բերում զգացմունքների բուռն, սուր դրսևորումները որոշ չափով զսպելու կարողություն, 5-6 տարեկան երեխան կարող է զսպել արցունքները, թաքցնել վախը և այլն: Նա սովորում է զգացմունքների «լեզուն», հայացքների, դեմքի արտահայտությունների, ժեստերի, կեցվածքների, շարժումների, առողջանության օգնությամբ զգացմունքների ամենանուրբ երանգներն արտահայտելու ձևերը:

Առաջատար գործունեությունը սյուժետադերային խաղն է: Հենց խաղում երեխան ստանձնում է չափահասի դերը՝ կատարելով իր սոցիալական գործառույթները: Ավելին, ավագ նախադպրոցական տարիքի երեխան կարող է նախ ընտրել բոլոր այն իրերը, որոնք իրեն անհրաժեշտ են վարսավիր խաղալու համար, և միայն դրանից հետո սկսել խաղը: Սյուժետադերային խաղի հետ մեկտեղ նախադպրոցական տարիքի վերջում երեխաների մոտ ի հայտ են գալիս կանոններով խաղեր («Պահմտոցի», «Սագեր-կարապներ»), որոնք ձևավորվում են կանոններին ենթարկվելու կարողություն: Նախադպրոցական տարիքի ավարտին խաղերում ձևավորվում են այն որակները (նորագոյացություններ), որոնք հիմք են հանդիսանում կրտսեր դպրոցական տարիքում ուսումնական գործունեության համար:

Այսօր նախադպրոցական ուսումնական հաստատությունում ուսուցումը դիտվում է ոչ թե որպես նախնական փուլ դպրոցից առաջ, այլ որպես երեխայի կյանքի ինքնուրույն, կարևոր շրջան, որպես մարդու կյանքում շարունակական կրթության ճանապարհին կարևոր հանգրվան:

Հայտնի է, որ մարդու ցանկացած գործունեություն տեղի է ունենում արտաքին աշխարհի, հասարակության, սոցիալական միջավայրի հետ նրա փոխգործակցության գործընթացում: Մարդու և հասարակության փոխազդեցության ձևերից մեկը սոցիալականացման գործընթացն է: Մարդը սովորում է հասարակության նորմերը, կանոնները, պահանջները՝ դառնալով նրա լիիրավ անդամ, և այդ գործընթացը պայմանավորված է անհատի ակտիվ գործունեությամբ, սոցիալական միջավայրի ակտիվ ընդգրկմամբ:

Այսպիսով, ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական ակտիվության ձևավորման համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ մանկավարժական պայմանները, որոնց տեսական հիմնավորումը ներկայացված է սույն կետերում.

- կրթական միջավայրի ամբողջականությունը, որն արտահայտված է մանկապարտեզի ողջ թիմի ընդհանուր արժեքային կողմնորոշումներում (սոցիալական և բարոյական նորմեր, որոնց հիման վրա կառուցվում են բոլոր մասնակիցների միջև վարքն ու գործունեությունը),
- ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական ակտիվության զարգացման վերաբերյալ մանկավարժական առաջադրանքների, սկզբունքների և մոտեցումների միասնական պահանջ,
- նախադպրոցական հաստատության երեխաների և մեծահասակների միավորումը համատեղ, սոցիալապես նշանակալի գործերով, ավանդույթներով, տոներով և այլն,
- համագործակցության և փոխադարձ օգնության վրա ուսուցման և դաստիարակության գործընթացի իրականացում,
- հասկանալի մանկապարտեզի կյանքը որպես ամբողջություն, որն էլ հնարավորություն է տալիս բավարարել իրենց անհատական կարիքներն ու շահերը՝ հաշվի առնելով գործունեության ընդհանուր նպատակը և այլ մասնակիցների տեսակետները:

Սոցիալական ակտիվությունը ձևավորող առաջադրանքներ

Ուսումնասիրության ընթացքում երեխաների սոցիալական ակտիվության հաջող ձևավորման համար մենք օգտագործել ենք խաղերը: Ի վերջո, բոլորը գիտեն, որ նախադպրոցական տարիքում առաջատար գործունեությունը խաղն է: Ահա մի քանի խաղերի օրինակներ.

Շարժական խաղ՝ «Ցույց տուր երաժշտություն»

Նպատակը – ընդհանուր ֆիզիկական զարգացում, ուղիղ խաղի, արտահայտիչ շարժումների և երաժշտական լսողության զարգացում:

Խաղի ընթացքը – երեխաները բաժանվում են խմբերի, ամեն մի խմբի առաջարկվում է լսել երաժշտությունը, այնուհետև պատկերել այդ մեղեդու բեմականացումը շարժումներով, նրբագեղությամբ, դեմքի արտահայտությամբ: Կարող են ստեղծել փոքր սյուժե: Գնահատվում է նրբագեղությունը, ուղիղական, արտահայտչականությունը, ստեղծագործական մոտեցումը:

Խաղ «Ով ի՞նչ է անում»

Նպատակը – երեխաներին սովորեցնել փոխկապակցել տարբեր մասնագիտությունների տեղ մարդկանց գործողությունները:

1. Ո՞վ է սովորեցնում երեխաներին – ուսուցիչը, դաստիարակը,

2. Ո՞վ է բուժում հիվանդին – բժիշկը,
3. Ո՞վ է ներկում պատերը – ներկարարը,
4. Ո՞վ է հարդարում վարսերը – վարսավիհը,
5. Ո՞վ է թխվածք պատրաստում – խոհարարը,
6. Ո՞վ է բուժում կենդանիներին – անասնաբույժը:

Հարցերը պետք է տրվեն արագ՝ մեկը մյուսի հետևից: Պատասխանները պետք է լինեն կարճ և հստակ:

Պատասխանն ուշացնողը տուգանվում է (երգում կամ արտասանում է):

Խաղ – «Մեղա տիկնիկը թեյում է»

Նպատակը – երեխաներին սովորեցնել սպասքաղրման կանոնները.

1. ստեղծել սննդից օգտվելու համար պայմաններ,
2. սպասքը դասավորել որոշակի կարգով,
3. ապահովել համապատասխան սպասքով:

Դաստիարակել մարդկային զգացմունքներ և ընկերական հարաբերություններ:

Խաղի ընթացքը – Դաստիարակչուհին խմբասենյակ է մտնում գեղեցիկ հագնված տիկնիկի հետ: Երեխաները դիտում են տիկնիկին, անվանում հագուստի անունները: Դաստիարակչուհին հայտնում է, որ այսօր տիկնիկի ծննդյան օրն է: Մեղա տիկնիկը հյուրեր ունի: Պետք է օգնել տիկնիկին տոնական սեղան պատրաստել (օգտագործվում են խաղի համար նախատեսված կահույք և սպասք): Դաստիարակչուհին երեխաների հետ լվանում է ձեռքերը, սեղանին փռում է սփռոցը, կենտրոնում դնում ծաղկաման, ծալադրում և տեղադրում է անձեռոցիկները, պատրաստում թեյի բաժակները և ափսեները, կողքին՝ պատառաքաղներ, գդալներ, դանակներ: Այնուհետև հյուրընկալում են հյուրերին, և տիկնիկները նստում են իրենց տեղերում:

Մեղանի շուրջ հարմարավետ զգալու համար մեծ նշանակություն ունի սպասքից օգտվելու իմացությունը: Յուրաքանչյուր մարդ դեռ վաղ տարիքից պետք է ծանոթ լինի բարեկիրթ վարվելակերպի ոսկե կանոններին:

Եզրակացություն

Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական ակտիվության զարգացման համար ուսումնական հաստատություններում ստեղծված մանկավարժական պայմանների վերլուծությունը ցույց տվեց, որ դաստիարակները ունեն մեծ հնարավորություն նախադպրոցականների սոցիալական ակտիվության զարգացման գործում: Ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ նրանց սոցիալական ակտիվության դրսևորման մակարդակը որոշվել է արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական ակտիվության զարգացումը մանկապարտեզի կրթական համակարգում հաջող է ընթանում այս գործընթացի փուլային կառուցմամբ, որն ապահովում է սոցիալական ակտիվության հիմնական բաղադրիչների զարգացումը և ենթադրում է նախադպրոցականների աստիճանական ներգրավմամբ սոցիալական ուղղվածություն ունեցող գործունեություն՝ անկախություն, նախաձեռնություն և ստեղծագործականություն դրսևորելու հնարավորությամբ:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-506>

Գրականություն

